

ISSN 0321-0340

**ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՈՆԵՐԻ**

**N 1 (107)
2006**

ԲՈՒՆԻՔԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՈՎԵՐԻ

Գիտահանրամատչելի հանգես

**Вестник архивов
Армении**

Научно-популярный журнал

**Bulletin of Armenian
Archives**

Scientific practical journal

1 (107)

2006

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

YEREVAN

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ
ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ**

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վերաբյան

Խմբագրական խորհուրդ

**Արմեն Բաղալյան (պատասխանատու քարտուղար)
Ալբերտ Կիրիմյան, Ավագ Հարությունյան, Էմմա Հովսեփյան,
Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան**

© Բանբեր Հայաստանի արխիվները, 2006թ.

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՐՑԱԽԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ԱԲԲԱՍ-ՄԻՐՉԱՅԻ
1826թ. ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

1826թ. հուլիսին պարսկական մեծաքանակ զորքերը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, ներխուժում են Արցախ եւ պաշարում Շուշի բերդաքաղաքը: Շուշիի ուղևորական կայազորը, գնդապետ Ի.Ռեուտի հրամանատարությամբ, եւ տեղի հայ բնակիչները հերոսական դիմադրություն են ցույց տալիս ահեղ թշնամուն: Ականատես պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը այդ մասին գրում է. «Քաղաքի հայ բնակիչները ամեն հարցում ուղևորների հետ միասնաբար գործելով՝ ճիգ ու ջանք չէին խնայում նրանց նվիրված կերպով ծառայելիս... Այն աստիճան, որ որոշ ժամանակ անց հայերի վրա բարկացած Աբբաս-Միրզան հրամայում է, որ ով որ հայի գլուխ բերի, 10 աշրաֆի կստանա: Այդ պատճառով հայերից շատերն են սպանվում»¹:

Արցախահայություն համար օրհասական այդ օրերին Աբբաս-Միրզայի բարկությունը ամոքելու նպատակով նրան են ներկայանում երեք հայ երեւելիներ՝ Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը, Ջրաբերդ գավառի տիրակալ Մելիք-Վանի Աթաբեկյանը եւ Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանը: Մելիք-Վանին եփրեմ կաթողիկոսին ուղղված նամակում այսպես է ներկայացնում Աբբաս-Միրզայի մոտ գնալու շարժառիթները. «Եթէ ոչ գնացիրք եւ ես առ նոսա, ժողովուրդ իմ առ հասարակ մատնին ամենայն ընչիւք ի կորուստ: Ջայս միայն զմտաւ ածեալ թէ ես միայն մատնեցայց, որով ժողովուրդ պարեցուցիր ի գերութենէ անօրինաց: Ջիս եւ եթ կորուսից գնալով առ նոսա, զի զհազարաւոր անձինս ժողովրդոց իմոց գտիրք եւ կեցուցիրք. աշխարհն ամենայն գնաց, ապա եւ ես ընդ նոսա: Վերջապէս գնալն իմ առ պարսիկսն, եղեւ առ օգտի հասարակ ժողովրդոց ինձ յանձնեալ հայոց»²:

Արցախի երեւելիներին հաջողվում է ամոքել Աբբաս-Միրզայի բարկությունը: «Այն ժամանակ էլ հետեւում է հրաման, որ ոչ ոք չգիպչի հայերին, եւ իսկապես կոտորածին վերջ տրվեց, քանի որ թագաժառանգը հայտարարել էր, թե այսուհետեւ հայերի գլխի համար ոչ թե թուժանով կվճարի, այլ նրանց գլխով, ովքեր կբերեն հայերի գլուխներ»³:

Սակայն, երբ Շամխորի եւ Գանձակի ճակատամարտերում ջախջախված Աբբաս-Միրզայի բանակը չպրտվում է Արաքսից այն կողմ, պարսկական սուլթը արցախահայություն գլխից հեռացրած հայ երեւելիների մեջքին իջնում է ուղևորական խարազանը: Չեն օգնում անգամ Ներսես Աշտարակեցու հավաստիացումները կուսակալ Ա.Երմոլովին, «թէ գնալն նորա (իմա՝ նրանց -Ա.Մ.) եթէ իցէ ճշմարիտ ոչ կարէ լինիլ առանց յատուկ շահաւէտութեանց վասն պահպանելոյ զժողովուրդն հայոց կողմանցն այնոցիկ»⁴: Ա.Երմոլովի հրամանով հայ երեւելիները Ռուսաց կայսրության նկատմամբ անհավատարմության մեղադրանքով ձերբակալվում են եւ ութ ամիս մնում կալանաված: Սարգիս մետրոպոլիտը՝ Թիֆլիսում, իսկ մելիքները՝ Բաքվում: Ի վերջո, Ռուսաստանի վաղեմի ախոյանի հետ ընդհանուր լեզու գտած հայ երեւելիները անմեղ են ճանաչվում՝ եւ, Միբիր աքսորվելու փոխարեն, վերադառնում հայրենիք:

Այս դեպքին առնչվող երկու վավերագիր ժամանակին հրատարակել է Ալ.Երիցյանն իր «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում» գրքում (Թիֆլիս, 1894, էջ 253-256): Սույն փաստաթղթերը հրատարակվում են առաջին անգամ եւ, որպես հավաստի սկզբնաղբյուրներ, ավելի ամբողջական պատկերացում են տալիս նշված դեպքի եւ դրան հաջորդած իրադարձությունների մասին: Նշենք միայն, որ թիվ 1 վավերագրից երկու փոքրիկ հատված օգտագործել է

¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Երեւան, 2000, էջ 123-124:

² ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց.1, գ.10, էջ 1բ:

³ Վ.Պոստո, Ղարաբաղի առաջին կամավորները, Երեւան, 1974, էջ 53:

⁴ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 614:

Վ. Դիրոյանն իր «Արեւելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին եւ հայ-ուսական հարաբերութիւնները» գրքում (Երեւան, 1989, էջ 286-287):

Հրապարակվող վավերագրերից առավել ուշագրավ է Մէլիք-Վանու նամակը Եփրեմ կաթողիկոսին, որն ամբողջ կյանքը ուսական գեների հաղթանակներին նվիրաբերած, սակայն անհարկի ամբաստանվող մարդու սրտի խոսքն է: Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Խաչատուր Լազարյանի նամակը Ներսես Աշտարակեցուն եւ նրա պատասխանը, որտեղ վերջինս հանգամանորեն ներկայացնում է արցախցի երեւելիների ձերբակալութեան հետ կապված երմոլովյան բանասարկութիւնները եւ բացահայտում մեղադրանքների անհիմն լինելը: Առհասարակ, այս փաստաթղթերը Արցախի մեկլիքութիւնների պատմութեան ուշագրավ էջերից են, արժանի դուրս ելնելու սովորից:

Սույն փաստաթղթերը պահվում են Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում եւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի արխիվում (ՀՀ ԳԱԱ ՊԻԱ), ընդ որում, Մատենադարանի Ն.Աշտարակեցու արխիվում պահպանվում են Արցախի գործիչներին ուղարկված նրա նամակների երկրորդ օրինակները: Հավաքածուն կազմված է պատմական փաստաթղթերի Հրապարակման գործող կանոններին համապատասխան: Պահպանել ենք Հրապարակվող փաստաթղթերի լեզվական ու ոճական առանձնահատկութիւնները, միայն բացել ենք հապավումները եւ հանել ի նախդիրից առաջ գրված ապաթարցները:

Արտակ Մաղալյան

N 1

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

28 Հուլիսի 1826 թ.
Թիֆլիս

Մեծարու Մէլիք Յովհաննէս Յարութիւնեան¹

Սիրեցեալ ի Քրիստոս

Գիտէք ամենեքեան զի ո՛չ յամենայն ժամանակի կարողանան ծառք բերել զծաղիկս եւ զպտուղս, այլ ժամանակ դարնան բողբոջէ զծաղիկս, եւ ժամանակ ամռան հասուցանէ զպտուղս:

Այնպէս եւս ժամանակին ներգործութիւն յաջողէ մարդկանց ցուցանել զծաղիկս եւ զպտուղս իւրեանց:

Գիտէս դու, զի կեանք քո մինչեւ ցայսօր վայելչացեալ քոյով առաջին հաւատարիմ ծառայութեամբք, եւ ահա նոյն է այժմ ժամանակս այս, որ ունի վայելչացուցանել ձեզ եւ ամենեցուն զժամանակս ապագայից կենաց իւրաքանչիւրոց:

Գրեմ ձեզ ուրեմն՝ զնոյն հոգի հայկական հաւատարմութեան ունիլ նոյնպիսի ջերմեռանդութեամբ վառեալ, եւ ջանալ նորոգել կամ առաւել եւս հանդիսացուցանել զլիշատակ հաւատարմութեանց հայրենի ազգի հայոց արժանաւոր գործովք ամենայն հասարակութեան ազգի մերոյ եղելոյ ընդ ամենայն տեղիս ի ներքոյ փառաւոր դրօշակի իւրոյ Կայսերական Մեծութեան ամենայն Ռուսաց:

Մի՛ տարակուսեցուցին զմիտս մերագանց՝ մերձեցուցանելն զօրաց ուսաց ի սահմանաց իւրեանց հեռաւորաց, այլ հաւատարիմ լիցեն բանք իմ այտքիկ ձեզ, զի շուտով անդրէն դառնան նոքա յիւրաքանչիւր տեղիս հզօր զօրութեամբ իւրեանց, եւ թշնամիք առ հասարակ զարհուրեալք յերեսաց սրոյն անպարտելի զինուորութեանց ուսաց, թողցեն իսկոյն ո՛չ միայն զսահմանս տէրութեանց Ռուսաց, այլ եւ զամենայն զկալուածս բնակութեանց եւ իշխանութեանց իւրեանց եւս:

Ապաքէն որպէս եւ ընթեռնուցուք զգրեալսն իմ առ ամենայն ժողովուրդս Հայոց, այնպէս ջանասջիք հոգևով արիական ցուցանել զձեզ ցամենայն ժամանակի ծառայ հաւատարիմ եւ հպատակ ամենահարազատ Քրիստոսագօր Կայսերութեան Ռուսաց:

Ո՛ղջ լեր եւ զողջոյն իմ տուր ամենայն մեծի եւ փոքու ժողովրդեան մերում, եւ ես եմ եւ մնամ ձեզ ամենեցուն միշտ բարեացակամ:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ.166, վավ.604, թ.12:
Բնագիր: Զեռագիր:

N 2
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ-ՀՈՎՍԵՓ
ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ

9 օգոստոսի 1826թ.
Թիֆլիս

Քաջազգի Մէլիք Յովսէփ Փիրիտոնեան²

Ողորմած տէր իմ

Յէտ փակելոյս զգրութիւն իմ առ քէզ, լուր է՛հաս առ կուսակալն որպէս թէ հաւատարիմն մեր մէլիք Վանին գնացեալ է առ Մէհտի Ղուլի³ խանն՝ այլ ես միամտեցուցի զնորին բարձր գերագանցութեանն թէ գնալն նորա եթէ իցէ ճշմարիտ ոչ կարէ լինիլ առանց յատուկ շահաւէտութեանց վասն պահպանելոյ զժողովուրդն հայոց կողմանցն այնոցիկ: Այլ այնուամենայնիւ զգիր, զոր կամէի յղել առ մէլիք Վանին, վասն ջանալոյ հասուցանել ի քաղաքն Շուշու առ բարձր բարեձնունդ Ռէուտն⁴ եւ զպատասխանի այնորիկ ստանալոյ ի նմանէ եւ հասուցանելոյ առ մեզ այսր, անարժան համարեցայ ուղղակի յղել առ նա ինքն՝ մէլիք Վանին՝ այլ լաւ համարեցայ առաքել առ ձեզ, զի դուք թէ արժան համարես ջիք յղելն առ նա, յղես ջիք հանդերձ գրութեամբ իմով առ նա, իսկ թէ ոչ կամ յղես ջիք առ սրբազան Սարգիս արքեպիսկոպոսն⁵ ընդ գրոյն իմոյ, որ առ նա, եւ կամ դուք ձեր հաւատարիմ մարդով ջանաս ջիք հասուցանել առ Ռեուտն եւ զպատասխանի նորա յանձնել զբարբերի մերում կամ ձերով մարդով հասուցանել առ մեզ կանխաւ:

Գիտէս դու թէ ցաւակից եմ ես ամենայն ազգին իմոյ, եւ առաւելապէս ձեզ եւ տան հօր ձերոյ, այս ամենայն մրրիկ ունին անցանել մինչեւ ցլրումն այսմիկ ամսոյ օգոստոսի, յէտ որոյ ոչ եւս լինիցի այսպիսի հարկաւոր ժամանակ յայտնելոյ տէրութեանն Ռուսաց զհաւատարմութիւն եւ զարժանաւոր ծառայութիւն, ուրէմն մի բնաւ ունիցէս դու խնայել զամենայն զկարէլիսն ձեզ, այլ ջանասցես զհարազատութիւն քո յայտնել յայսմիկ հարկաւորեալ ժամանակի:

Եւ թէ հարկաւորեսցի քեզ ծախս վասն առաքելոյ զգիրն Ռեուտի առ ինքն՝ զայն գումար ծախուց հասուցից քեզ ես ինքն, եւ զոհունակութիւն կուսակալին եւս շահեցայց վասն քոյ եւ վասն եղբարց քոց եւ ամենայն ազգատոհմի:

Դու թէ չիցես գնացեալ առ Մէհտի Ղուլի խանն մինչեւ ցայժմ, մի եւս յօժարեսցիս գնալ այժմ, եւ միամիտ լիցիս, զի զկնի չորից եւ հնգից աւուրց գտանի մերձ առ ձեզ զօրօք բազմօք կնեազ Մատթիովն⁶ եւ Մէհտի Ղուլի խանն հալածեսցի անդրէն իբրեւ զժուխ առաջի հողմոյ սաստկագունի:

Ողջ լեր եւ ես եմ եւ մնամ ձեզ ի սրտէ բարեացակամ:

Համար 151

Արքեպիսկոպոս հայոց Վրաստանու Ներսես

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.614, Թ.16բ:
Բնագիր: Զեռագիր:

N 3
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻՆ

9 օգոստոսի 1826թ.
Թիֆլիս

Բարձր սրբազան Մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս

չնորհազարդ հովիւ եւ ծերունազարդ հայր իմ

Ի սոյն կէտ լուր է՛հաս առ կուսակալն որպէս թէ մէլիք Վանին գնացեալ է առ Մէհտի Ղուլի խանն:

Ես լուեալ զայս, զարհուրեցայ, թէ զիա՞րդ կարելի եղեւ առն այնպիսւոյ բեկանել զիւր բազմաժամանակեայ արեամբ չափ հաւատարմութիւնն. եւ երգմամբ իմով կարօղ եղէ հաւանեցուցանել զկուսակալն, թէ ի ստոյգ լինիլն գնալոյն նորա, հարկաւ լինելոց է վասն օգտակարութեան իրիք ազգին հայոց՝ զի կարօղ լիցեն ապահովացուցանել զբազմութիւնն նոցա:

Ջծանօթութիւնսն տպեալս, զորս առաքեալ եմ առ ձեզ. առաքեալ եմ եւ առ

նա եւ սրբազան Մարտիրոս արքեպիսկոպոսն Տաթեւայ, զորս ի Հասուեցանելն առ ձեզ Հարազատից մերոց թէ արդարեւ մէլիք Վանին լինիցի կասկածելի ի Հաւատարմութեան իւրում դուք ջանասջիք մահուամբ չափ Հասուեցանել զփոքր գիրն առ բարձր բարեծնունդ Ռէուտն ի բերդն եւ զպատասխանի այնորիկ ընկալնուլ ի նմանէ եւ Հասուեցանել առ մեզ օր եւ ժամ յառաջ, եւ Հարկաւոր լիցի առ այն զծախս դրամոց ծախեա առանց խնայելոյ եւ ընկալցիս յինէն բազում շնորհակալութեամբ իմով:

Մի անհոգացիս վասն գրելոցս, քանզի չէ պարտ կորուսանել զժամանակն թանկագին՝ որպիսի է այժմ, եւ յետ Հնգետասան աւուրց բազումք ցանկացիս ծառայել տէրութեան ռուսաց, այլ ոչ կարողանան նոքա նազելի կացուցանել զծառայութիւն իւրեանց:

Սրբազնագոյն Կաթողիկոսն եւս Հարկեաց ինձ ի դիմաց իւր գրել առ սրբութիւն ձեր փութալ, ջանալ եւ զպատասխանի փոքրիկ գրոյն ստանալ եւ Հասուեցանել օր եւ ժամ յառաջ ի պարծանս ազգի մեր:

Համար 157

Բարձր սրբազնութեան ձեր
Խոնարհ ծառայ
Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.617, Թ.17 եւ շրջերես: Բնագիր: Զեռագիր:

N 4

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՑԱՆԻՆ

9 օգոստոսի 1826թ.
Թիֆլիս

Բարեծնունդ մէլիք Վանի Աթաբէկեան

Ողորմած տէր իմ

Մինչդեռ պատրաստել էի զգրութիւնս Հասուեցանելիս յամրոցն Շուշուայ առաքել առ ձեզ, ահա էհաս լուր առ Կուսակալն, թէ դուք գնացեալ էք առ Մէհտի Ղուլի խանն, եւ զարմանք կալան զամէնեսին առ Հասարակ, յորժամ ես այսպէս ապահովացուցի զմիտս կուսակալին եւ ամենայն լսողաց թէ Հաւատարմութիւն ձեր Կայսերութեանն Ռուսաց է անբեկանելի մինչեւ ցմահ ձեր, եւ թէ գնալն ձեր իցէ Հաւաստի, լինելոց է այն յաղագս օգտի Հասարակութեան ժողովրդոց:

Այլ զի այս գերագոյն տգէղութիւն ի մասին ձեր ի բաց ընկեսցի ի ձեռն յառաջի նորին բարձր գերագանցութեանն, եւ ես մի՛ ստեցայց ի վկայութեան իմում յաղագս ձեր անբեկանելի Հաւատարմութեանն, գրեմ ձեզ, զի թէ մէլիք Յովսէփն յղէլ ունիցի առ ձեզ զփոքրիկ փակէթն Հասանելի առ բարձր բարեծնունդ Ռէուտն յամրոցն Շուշուայ, դու ինքն մահու չափ Հարազատութեամբ ջանացես որպէս եւ իցէ Հասուեցանել առ նա, եւ զպատասխանի այնորիկ ընկալնուլ եւ Հասուեցանել առ մեզ օր եւ ժամ յառաջ:

Թանկագին է Հաւատարմութիւնն յայսմիկ ժամանակի, որ զկնի Հնգետասան աւուրց այլ ոչ եւս կարացէ կորուսանողն գտանել միւս անգամ:

Կաթողիկոսն եւս, բազում տրամութեամբ իւրով ի մասին այսր լրոյ, յանձնեաց ինձ գրել ձեզ, յայտնել միւս անգամ զՀաւատարմութիւն ձեր իբրեւ զառաջինն, եւ ոչ թողուլ զայս կեղտ անուն ի վերայ ձեր:

Եւ եթէ շնորհն Աստուծոյ յաջողել ունիցի, զի Հասուեցանել կարողասջիք ինձ զպատասխանի Ռէուտին, յուսամ Աստուծոյ թէ նա ինքն վկայեսցէ սրտի Կուսակալին անարատ պահել առ ձեզ զկարծիս իւր վասն ձերոց վկայեալ Հաւատարմութեանց:

Ողջ լեր եւ ես եմ եւ մնամ ձեզ ի սրտէ բարեացակամ:

Համար 158

Խոնարհ ծառայ
Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.618, Թ.17բ: Բնագիր: Զեռագիր:

20 սեպտեմբերի 1826թ.
Թիֆլիս

*Բարձր պատուոյ արժանաւոր Միքայէլ շնորհաւատ վարդապետ
սիրեցեալ ի Քրիստոս*

Ի 23 յուլիսի եւ ի 13 օգոստոսի գրութիւնսդ ստացեալ եւ ծանուցեալ զորս ի նոսին, ուրախ եմ ի վերայ սիրեցեալ առողջութեան ձեր...

Եւ դուք ներեցէք ինձ, զի կասկած կարծութեան աւուրց կենաց իմոց ոչ ներէ ինձ տարեւոր ժամանակաց գտեղի տալ յերկայնմտութեան յիրս Հարաւորագոյնս:

Շնորհօք Աստուծոյ Հանդիսացեալ Հզօրապէս բարձր փառաւորագոյն զօրաց ոռուսաց՝ յ3 ամսոյս ի սկզբնամարտութեան իւրեանց յաւուր ուրբաթով ի Շամքօր սասցեալ տեղւոյ ընդ կառավարութեանց կենեալ Մատաթեանց բեկեալ զառաջնագունդն պարսից ընդառաջ ելեալս նոցին առաջնորդութեամբ Ամիր խան սարտար քեռւոյն Ապպաս Միրզա արքայորդոյ⁸, սատակեն ի նոցունց զինն Հարիւրսն յուրեալ զօրաց սարպազ անուանելոց Հանդերձ զօրապետաւն իւրեանց յիշեալ Ամիր խան սարտարիւն, եւ գերեն զ67 զինուորս, զմի թնդանօթ եւ գերեքտասան զամպարակս, որ է ուբաձիգ եւ կամ փոքրաթօփ գետեղեալ ի վերայ ուղտուց:

Այլեւ ի 13 ամսոյս յաւուր երկուշաբաթի ի լինիլ զօրաց ոռուսաց մերձ յելիսայէտապօլ, իբրեւ 3 կամ 4 վերստ ճանապարհաւ, ի մէջ գիշերի եղբայր Շամիրխանի՝ մէլիք Յովսէփ Փիրիզոնեան Բէկլարեանց, եւ այլ ոմն յազգէ Հայոց թարգման Ապպաս Միրզայի՝ ոռուսաց լեզուի, փախուցեալ ի բանակէ նոցին, փութան ժամանեն ի բանակ ոռուսաց, ուր զենարալ Պասքեւիչն¹⁰ էր Հրամանատար, եւ ազգէն նմա վասն ի նմին գիշերի յասնելոյն բանակի պարսից ի վերայ բանակի ոռուսաց, ընդ առաջնորդութեամբ իւր ինքեան Ապպաս Միրզայի, եւ երկուց կամ երից այլոց եղբարց իւրոց, եւ Ալլահեար խան փեսայի շահին եւ ընդհանրական Հրամանատարի դրան նորին, յորժամ զենարալ Պասքեւիչն կարգադրեալ զզօրս իւր եւ զաջ թեւն յանձնեալ կենեալ Մատաթովին, սպասին ամենապատրաստ, այլ ոչ յարուցեալ ի խաւարչտին գիշերի, յասնեն ընդ լուսանալ առաւօտուն փաղանգք ամբարշտացն երեսուն Հազար Հեծելագօրօք, եւ տասն եւ եօթն Հազար սարպազօք ըստ բանի բանաբերաց, թեպէտ եւ կառավարութիւնն տեղւոյս սակաւ նուազութեամբ տպեալ Հոչակեաց, եւ ամենակարօղ օգնականութեամբ Աստուծոյ բարձրելոյ Հազիւ ուրեմն Համար գտեալ պատերազմն իբրեւ կէս ժամ, ահա փոխեան անպարտելի յառաջագեր Հանդիսացեալ երեք բատալեօն աջոյ թեւին, շարժեն խուճապեն ի շամփուր Հարեալ գլուսայի գունդն պարսից, անդէն իսկոյն զբազմութիւն տապաստ արկեալ, զզօրսն առհասարակ Հանդերձ նշանակեալ զօրապետօք նոցին իբրեւ զփոշի առաջի Հողմոյ ընդ օդս ցնդեցուցեալ Հայաստանի կորուսանին. երկուց բանակաց նոցին եւ ամենայն աւարաց տիրեալ պանծալի յաղթանակն, գերելով եւ զարիական գունդն անձնապահ Ապպաս Միրզայի աւելի քան ինն Հարիւր՝ Հանդերձ այլովք զինուորականօք, որոց թիւ առ ժամն իսկոյն ժամանեալ ի 1100 այր, որպէս եւ նշանակեալ լինի ի տպեալն, յընթացս արեւու աւուրն մինչեւ ցմուտն նորին ժամանէ ի 1700, եւ որպէս Հաւաստի Համարի, թէ գտցի այժմ ժամանեալ մերձ երեք Հազար: Քանզի բեկումն նոցա ահաբեկեալ զնոսա մինչ իսպառ, փախուստ նոցա ըստ իւրաքանչիւր երեսաց՝ զբազումս մատնէ Հետզհետէ ի գերութիւն՝ մոլորեցուցեալ զնոսա ընդ անել շաւիղս, ի դաշտս կամ ի խորածորս, յորս գտանին որսացեալք ի զինուորաց եւ ի սոսկականաց Հպատակաց Հաւատարմոց իւրոյ Կ.Մեծութեանն:

Գերեալ լինին եւ երկու գնդապետք սարվազաց ուսեալ զօրաց՝ սարհանկ անուանեալք, երեք դրօշակք նոցա արժաթեայ ձեռք Այլուոյ՝ անձեռնկալու պաշտպանի նոցին, մի թնդանօթ ի քսան եւ երկուց եղելոց ընդ նոսա, եւ ամենայն վառօթ եւ գնդակք բոլոր թնդանօթիցն ութսուն արկեղք:

Լուր տակաւին ոչ է Հաս յաղագս փախստէիցն պարսից անարեաց՝ թէ ուր արդեօք վստահացան նոքա զկայ առնուլ յետ ամօթապարտ Հալածանաց իւրեանց, եւ ոչ իսկ յաղագս կատարելութեան Հանգամանացն յաղթութեանց, կամ չափու աւարացն եւ թուոյ գերեաց կամ մահացելոց:

Երեւելի դիմագրաւ եղեւ արշաւանաց պարսից ի ժամանակի յաջողութեանց

նոցին ամբողջ Շուշի քաղաքին, ուր զբաղեալ երկամսեայ միջոցաւ նշանակեալ բազմութիւն զօրաց նոցա երկայն յուսով տիրելով նմին, չարիք նոցա հպատակաց իւրոյ Կ.Մեծութեան կամ մանաւանդ մերազանց անկելոց ի ներքոյ անօրէն բռնակալութեան իւրեանց՝ կամ ապրելոցն ի զանազան նահանգս, ամփոփեցան անդէն ի խորշն լեռանց Արցախու, յորս կացին մնացին յորջացեալք խափանօք անխորհուրդ խորհրդածութեան իւրեանց՝ մինչեւ հատուցանել ինքեանց տեսուն զօրութեանց զայսպիսի հատուցումն առ ի մէնջ յուսացեալ ինքեանց անակնկալ: Եւ գովեսցեն յայսմ հետէ հայք մերազնեայք, որք եղական հաւատարմութեամբ առանձնացեալք յամենայն բազմութեանց ապստամբելոց հեթանոսաց, հոգեխառն դաշնակցութեանք զինուորեալք ընդ սակաւաթիւ զօրս ոռուսաց վերաբնակեալս անդ ի բուն բանակաց իւրեանց, մարտ եղեալ հանդերձ նօքօք արիացան քաջաբար՝ հայկազունք զինուորեալք իբրեւ երեք հազարք աւելի կամ պակաս, որոց յիշատակն եղիցի փառաւոր՝ ի փառս հաւատոց եւ հայրենեաց համազգեաց...*

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.642, Թ.27բ-28բ: Բնագիր: Զեռագիր:

N 6

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻՆ

8 հոկտեմբերի 1826թ.
Թիֆլիս

*Բարձր սրբազան Մետրապօլիտ Աղուանից Սարգիս արքեպիսկոպոս
Գերապատիւ Հայր եւ եղբայր իմ ի Քրիստոս*

Գիր ձեր առ իս ի 25 անցեալ ամսեանն սեպտեմբերի ի ձեռն Հարազատի ձերոյ Յովսէփ շնորհունակ վարդապետի ստացայ յամսոյս 5 եւ ծանեայ վասն նախանցեալ որպիսութեանցն նշանակելոց ի նմին:

Գիտէ բարձր սրբազնութիւն ձեր զԱւետարանն Քրիստոսական, թէ չի՞ք ոք բարի, բայց միայն Աստուած, եւ հաւատացեալ եմք, թէ նա միայն է անյիշաչար, մարդասէր, ողորմած, զթած եւ աղբիւր ամենայն բարեաց: Սակայն ի վերայ այնր ամենայնի հաւատացեալ եմք դարձեալ եւ գիտեմք, զի զնշանախեց (գրախեց-Ա.Մ.) մի իւրոց օրինաց ոչ արկանէ երբէք, եւ ձայն ահագին բարբառոյ նորա լսեմք բարձրացեալ յարարչական բերանոյ նորին, որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ, եւն:

Գեղեցիկ են առ նոյն օրինակ մեզ եւ մարդկայինքս, որոց միջէն ականատէս լինիմք այժմ եւս ահաւասիկ, զի ամենայն բազմութիւնք զօրաց եւ երեւելի երեւելի զօրապետաց առ հասարակ ի մահ զանձինս նուիրեալք, կամակար յօժարութեամբ արիաբար շահատակեալ ի հանդէս կատարելագոյն Հարազատութեանց՝ կառուցանեն զմարմին մահկանացու յանդիման սրոյ եւ հրոյ թշնամեաց թագաւորին իւրեանց եւ Կայսեր՝ հաստակազմն իմն աշտարակ՝ պաշտպան յաւերժական յիշատակ անբեկանելի Հարազատութեանց իւրեանց:

Գիտեմք եւ զգրեալն առ հրեշտակ եկեղեցւոյն. «Միւսն ացւոց լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ առցես զպսակն կենաց յայդ». 2. 10, իսկ եւ վճռոյ Հաւատոց մեք իսկ գտանիմք քարոզ, որ իսպառ համբերեսէ, նա՛ կեցցէ**:

Ապաքէն տարաբախտութիւն ազգային ի սմին պատահման համարեն մեզ տկարութիւնք հոգեւորականաց կամ մարմնաւորականաց մերազանց ի պարտաւորական հաւատարմութեան իւրեանց, եւ աթոռ բարեբախտութեանց նեղութիւնք նոցա եւ անձկութիւնք բազմօրինակք մահուամբ, գերութեամբ, եւ կորուսմամբ

* Փաստաթղթում, երբ խոսքը վերաբերել է թեմային չառնչվող Հարցերին, կատարել ենք կրճատումներ, որոնք նշել ենք բազմակետերով -Ա.Մ.:

** Մատթէոս, ԻԴ, 13 -Ա.Մ.:

կայից գոյից եւ բնաւից բարեաց անձնականաց անխարդախ եւ անարատ Հաւատարմութեամբ:

Գոհանամ զԱստուծոյ, զի ձեռնկալու եղեւ բազմաց մերազանց՝ եւ կարգեաց զՀավատարմութիւն նոցա ի պարծանք Հասարակաց ազգի Հայոց՝ ընդ կողմանս կողմանս Հանդիսացուցանելով զնոսա, արժանաւորօքն կարեւորօք եւ երեւելի յոյժ արիական Հոգևով յատկացելոցն անձնանուէր առաքինասիրութեամբ ի Շուշի քաղաքի, ի Շամշազի, ի Ղազարի, ի Փամբակաձոր եւ ի Շիրակ գաւառ՝ եզերս սահմանաց ընդ նախադրուես մտից յանդուզն արշաւանաց ահեղահոգակ բազմաթիւ զօրաց թշնամեաց Հոգւոյ եւ մարմնոյ իւրեանց:

Իսկ զի սրբութիւն ձեր յիւրումն արհիական դիտապետութեան գտանի ըստ գտեալ այժմ, քննեա՛ եւ տե՛ս, թէ գուցե՞ն իրաւունք մեղադրելոց զվերակացուսն Կառավարութեանց Տէրութեանն Հօր եւ բարձր ինքնակալի ամենայն ուսուսաց: Նամանաւանդ՝ յորժամ ժողովուրդք Հօտի ձերոյ՝ ինքեանք իսկ գտանին ձեզ բազմօք բանակաւ:

Յաւիմ ես՝ զի զայսպիսիս արդ զյանդիմանութիւնս իրաւանց պարտաւորիմ գրել ձերում ծերունագարդ մեծանձնութեան, այլ զի Հրաման է բնական. եղիցի ձեր բանն այսն այս, եւ ոչն ոչ, աղաչեմ լինիլ ներողամիտ ինձ առ սոյն: Եւ Հաւատարմացուցանիմ զսրբութիւն ձեր զի Կայսր ամենայն ուսուսաց՝ ամէնողորմած կրէ զիւր մականուն, եւ ողորմութիւն նորա կամ նորին Կուսակալաց եւ գործավարաց յառաջացին եւ առ ձեզ Հանդերձ Աստուծով. այլ զի գրեալ իսկ է. «Փախի՛ր եւ թագի՛ր առ ժամանակ մի, մինչեւ անցցէ բարկութիւն Տեառն»: Ըստ այնմ ուրէմն երկայնամտեսջիք եւ դուք ի ձերում լուութեան, մինչեւ անցցէն բարկութիւնք եւ երազեցեն ձեզ ներողութիւնք եւ ամէնայոյս մարդասիրութիւնք Իւրոյ Կայսերական Մեծութեանն եւ Նորին Բարձր Գերագանցութեան Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովի¹¹ եւ այլոց ամենեցուն Հետեւեցելոց նոցին:

Եւ ես բոլորեալ կամօք իմովք յարգելով զպատիւ մեծութեան անձին ձեր եւ կոչման կամ եւ մնամ ձեզ մաքուր վշտակցութեամբ եւ իսկական մտերմութեամբ այժմ եւ միշտ:

Համար 186

Բարձր Սրբազնութեան ձեր
խոնարհ ծառայ
արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ.166, վավ.647, թ.32բ-33: Բնագիր: Ձեռագիր:

N 7

ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

29 Հոկտեմբերի 1826թ.
Կուսապատ

Երիցս երանեալ ամենաբարձր սրբազնասուրբ վեհապետի
Տեառն Եփրեմի Ամենայն Հայոց կաթողիկոսի

Ձուրբ եւ զմաքուր դարձապարսն
Ղերմ սիրով Համբուրեմ

Ձորպիսութիւն ձերդ բարձրութեանն՝ յառ ձեզ առաքեալ Յօսէփ վարդապետին լուեալ մեր, ոչ սակաւ ուրախութիւն եւ զուարճութիւն եղեւ մեզ, զի բիւրապատիչ տրտմութիւնն, որ ի թշնամեաց ի ներկայս դիպեցաւ մեզ, այնու անցուցար բերկրեցեալ յուրախութիւն մեծ:

Քանզի յամենայն ուստեք սիրտ իմ բանիւք բերանոյ թշնամեաց տխրի յայժմու ժամանակի, եւ զոխս՝ գորս ընդ իս ի վաղնջուց եղեալ էին ի մտի կատարել, զարդիս իբր պահս գտեալ պարապորտ՝ զայնուիկ զբաղնուն՝ զամենայն ճիգս Հոգւոց իւրեանց ի նոյն թափեալ, իսկ ես ի Տէր Յիսուս Քրիստոս եւ ի Հաւատարմութիւնն իմ յառաջմէ առ Նորին իսկ Կայսերական բարձրութիւնն, եւ մանաւանդ թէ

առ ձեզապիսի խնամածու ընդ Հոգևոյ Հարս յուսացեալ՝ չունիմ բնաւ զերկիւղ ինչ յումեքէ:

Վասն զի գնալն իմ առ պարսիկսն՝ յիրաւի է որպէս եւ լուել է ձերդ բարձրութիւն, բայց յերեւիլ յանկարծակի չարաթոյն թշնամւոյ Հաւատոյ եւ անձանց՝ որդւոյ շահին յերկիր մեր, ամենայն մահմետականք գաւառիս մերոյ ապստամբեալք, յոժարութեամբ մատնեցին զգօրսն ուսաց որ ի Գորիս՝ եւ գերի վարեալ¹², ընտանիք մեր եղեն մեզ թշնամիք, յաղագս որոյ՝ Հայք գավառացս ոչ կարողացեալ տոկալ յոխորդ յարձակմանց բազմաթիւ գօրաց նորին առ Հասարակ առ երկիւղի, ի փրկութիւն անձանց իւրեանց ակամայ դիմեցին առ նոսա անճար եւ անհովիւ մնացեալ: Այլ ես մերձ ամրոցին Ձերմուկայ ամրացայ Հանդերձ ժողովրդեամբ իմով: Իսկ մեծ վտանգ մեզ այն եղեւ, ամենայն անցից եւ ճանապարհաց յանկարծ կապիւն, ուստի անկարացաք մեզ Հաց եւ գիւլլայ պարութ պատրաստել, որովք կարէ՛ք ընդգրկմանալ նոցա ցկատարած իրին: Թողում եւս զգնալն իշխանաւորաց եւ սոսկանաց առ նոսա՝ յառաջ քան զիս: Մտաբերեալ եմ զայս, եթէ ոչ գնացից եւ ես առ նոսա, ժողովուրդ իմ առ Հասարակ մատնին ամենայն ընչիւք ի կորուստ: Չայս միայն զմտաւ ածեալ՝ թէ ես միայն մատնեցայց, որով ժողովուրդ ապրեցուցից ի գերութենէ անօրինաց: Զիս եւ եթ կորուսից գնալով առ նոսա, զի զՀազարաւոր անձինս ժողովրդոց իմոց գտից եւ կեցուցից. աշխարհն ամենայն գնաց, ապա եւ ես ընդ նոսա: Վերջապէս գնալն իմ առ պարսիկսն, եղեւ առ օգտի Հասարակ ժողովրդոց ինձ յանձնեալ Հայոց:

Իսկ ով գորովագուծ սրբազնասուրբ Հայր Հասարակաց՝ եւ իմ յատուկ՝ թշնամիք իմ բազումք են, որպէս եւ բարձր սրբազնութիւն ձեր տեսանէ եւ գիտէ, գրեթէ Համայն Արցախ, թէ Հայք եւ թէ տաճիկք, ոչ են իմ բարեկամ եւ ոչ մի, այլ ես ձեռք եւ եթ պարծիմ, եւ յուսամ թէ կարօղ իցէք յաղթօղ գտանել աղօթիւք առ Աստուած, եւ բանիւք առ պայծառափայլ կուսակալն:

Այժմ ամենայն ոք Հաւատարիմ երեւի տէրութեանն ուսաց՝ ես, որ նովիմք եմ տիրացեալ կտոր միոյ Հացի, երեւիմ թշնամի: Ամենքն, որք ապստամբք էին ի նմանէ, յանմեղութեան կացուցին զանձինս, իսկ ես յառաջագոյն ջատագով եւ Հաւատարիմ եղեալ նորին տէրութեան, ի սատակել զնորին թշնամիսն եւ Հեղուլ գարիւն իմ վասն նորին Կայսերական Բարձրութեան, գտանիմ այժմ թշնամի եւ ապստամբ յայնմանէ:

Վասն որոյ եւ եմ տիրեալ եւ տրտմեալ բոլոր անձամբ իմով վստահանամ եւ դիմեմ առ ամենաբարձր սրբազնութիւն ձեր, եւ միայն զվտանգս եւ զանցս անձին իմոյ խոնարհաբար յայտնեմ ի ձեռն գրութեանս, եւ յուսով սպասեալ մնամ շնորհի ստացման պատճենի կրկին նամակիս:

Ձերդ բարձր սրբազնութեան ամենախոնարհ ծառայ
Մէլիք Վանի Յարութիւնեան Աթաբեկեանց

ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի Ֆոնդ, ց.1, գ.10, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 8

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

4 դեկտեմբերի 1826թ.
Թիֆլիս

Բարեպաշտութեամբ հռչակեալ Մէլիք Յովհաննէս Յարութիւնեան
ի Քրիստոս Յիսուս սիրեցեալ արգոյ

Գիր ձեր առ իս յերկուցն հոկտեմբերի ընկալայ ի 19 ամսոյս եւ ծանուցեալ վասն առողջութեան ձեր գոհացայ զԱստուծոյ:

Գանկատ ձեր ի բերելոյ ժամանակին՝ չեն առանց իրաւանց, այլ զի կանգուն չափուն գտանի յինքեան իրեն իսկութեամբ միշտ, իսկ ի նկատօղսն ամենեւին առանց իսկութեան եւ զանագանեալ բազմօք, այն է՝ զի որքան անձինք են աշխարհի, այնքան եւ իւրաքանչիւրոց նոցա կանգուն առանձին առանձին՝ զանագանեալ

ի միմյանց, յորոց յառաջանան բողոքք եւ գանկատք անհամաձայնք, որպէս եւ յայտ է՝ զի հակառակորդք ձեր դատեն զձեզ այլապէս, եւ դուք բողոքէք զնոցունց այլապէս, իսկ ունկնդիրք հետեւօղբ լրոյ մի ոմն կամ միւս ոմն, եւ դատաւորք ըստ այլայլութեանց լրոյ եւ զօրութեան կարծեաց իւրաքանչիւրոց:

Գիտելով եւ իմ զայս ամենայն, իմ եւս դատողութիւնք մնան դարձեալ ի նմին անհամաձայնութեան, այն զի լաւ էր ձեզ տառապանք առ ժամանակեայ՝ ըստ այլոցն հակառակամարտից թշնամեաց տոկացելոց յիւրաքանչիւր անձկութեան իւրեանց ի յամրոցն եւ յայլ ուր, քան խառնիլ կամաւ ի թիւս թշնամեաց: Իսկ զի ահագին էր վտանգն վերահասեալ, եւ ակնկալութիւն հեռացեալ յամենայն մտաց յաղագս վերադարձի զօրաց ոռուսաց յամենայն կողմանց, քաջայայտ է՝ թէ աւելի քան զայն՝ անմարթ էր տկար ազգաց լինիլ ձեռնամուխ յայս պատկանեալս հաւատարմութեանց:

Ապաքէն ի վերայ այսր ամենայնի իրաւունք առ ժամանակաւս ի մասին ձեր ընկալարուք դուք զուք զձեզ բազում երկայնմտութեամբ, եւ յոյս ձեր եղիցի ի ձեզ աներկուանալի՝ զի Կայսր Մեր ամէնողորմած է, եւ գրութիւն նորա առաւել է քան զվրէժխնդրութիւն ըստ մարդութեան, եւ հաւատարմութիւնք ձեր վկայեալ վաղագոյն՝ գործովք եւ արդեամբք, ոչ թողացուցանեն զձեզ առանց արժանաւորացն ինքեանց, եւ մեք գիտեմք զձեզ եւ հասարակեալ հաւատարմութիւնն ազգական զօրէ արդարացուցանել զձեզ կանուխ կանուխ եւ անագան:

Ողջ լեր եւ ողջոյն տուր մօրդ, իւզպաշի աղայ եղբօրդ եւ ամենայն մեծի եւ փոքու տան ձերոյ եւ ես եմ եւ մնամ իսկական հարազատութեամբ հոգւոյ եւ մտաց եւ կամաց միշտ ձեզ ի սրտէ բարեացակամ

Եւ մեծանձնութեան ձեր
խոնարհ ծառայ

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.571, Թ.182բ-183: Բնագիր: Զեռագիր:

№ 9

ԻՇԽԱՆ Վ. ՄԱԴԱԹՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՆՐԱ ՄՈՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒՄԱՍԻՆ

12 դեկտեմբերի 1826թ.
Շուշի

Ваше Высокопреосвященство

Милостивый Архипастырь!

Во исполнение воли Главноуправляющаго въ здешнемъ крае г. Генерала отъ Инфантеріи и Кавалера Ермолова, имею честь препроводить къ Вашему Высокопреосвященству Архiepископа Саркиса. О поступкахъ его за которыя онъ препровождается къ Вамъ, г. Главноуправляющій принялъ на себя уведомить Ваше Высокопреосвященство. Я же вменяю себе въ обязанность доложить, что поведение его столько было непозволительно, что Его Высокопревосходительство приказалъ мне въ препровождении иметь за нимъ строгій присмотръ съ сохранениемъ впрочемъ всего должнаго уваженія къ его высокому сану, что мною въ точности и исполнено.

Поручая себя Святымъ молитвамъ Вашимъ, съ достодолжнымъ уважениемъ имею честь быть

№ 790

Милостивый Архипастырь!
Вашего Высокопреосвященства
Всепокорнейшій слуга
Князь В.Мадатовъ.

Մատենադարան, Լազարյանների արխիվ, Թղթ.106, գ.51, վավ.113, Թ.1:
Պատճեն: Զեռագիր:

ԳՆԴԱՊԵՏ Ի. ՌԵՆՈՒՏԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ԹԻՖԼԻՍ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՆՐԱ ՎՐԱ
ՍԱՀՄԱՆՎԵԼԻՔ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

27 դեկտեմբերի 1826թ.
Շուշի

Приказъ

По воле Его Высочайшего Представительства Главноуправляющего въ Грузии гос-подина Генерала отъ Инфантерии и Кавалера Ермолова, отправляющагося съ симъ вместе въ Тифлисъ посредствомъ Казачьихъ постовъ къ Первенствующему надъ Армянскимъ Духовенствомъ Архиепископу Нерсесу Архиепископа же Саркиза, имеютъ казачьи посты по тракту къ Тифлису находящиеся, препровождать отъ одного до другого съ приличнымъ и безопаснымъ конвоемъ, наблюдая строгий присмотръ и вместе съ темъ храня все должное уважение къ Высокочайшему Его сану, по прибытии же въ Тифлисъ доставить его къ Архиепископу Нерсесу съ конвертомъ за N 790^ш на имя Его Высочайшего Представительства при семъ прилагаемымъ.

N 225^ա

Командиръ 42^{го} Егерскаго Полка и
управляющий Карабахскою
Провинциею Полковник Реуттъ.

Մատենադարան, Լազարյանների արխիվ, Թղթ.106, դ.51, վավ.114, Թ.1:
Պատճեն: Զեռագիր:

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ՀԱԿՈՒ ԱԹԱՔԵԿՅԱՆԻՆ

24 հունվարի 1827թ.
Թիֆլիս

*Մեծարու աղայ Յակոբ Յարութիւնեան¹³
եւ որք ընդ յարկաւ ձեր են ընտանիք եւ ժառանգաւորք
Հարազատք սրբոյ եկեղեցւոյ եւ սիրեցեալք մեր*

Գիր ձերում գերդաստանի խնդրամատոյց առ իս՝ ընկալայ ի ձեռն Հաւատարմի ձերոյ պարոն Յակոբի եւ ծանեայ գորս ի նմա, եւ գորս պատմեաց ինքն յիշեալ գրաբերն:

Յաւակից եմ ոչ միայն ձեզ, այլ Համօրէն ազգի իմոյ՝ Հայկազանց Հարուածելոց ի թշնամեաց եւ ի բարեկամաց, ի հեռաւորաց եւ ի մերձաւորաց, յօտարաց եւ յիւրոց, այլ զի չեմք անծանօթ ցաւոց մարմնոյ մերոյ՝ զի պատահեն բազմիցս ներքին եւ արտաքին պատճառանօք, այսինքն ի խառնուածոց իրիք՝ մաղձի կամ այլոց, եւ կամ ի ցրտանալոյ կամ ի Հարուածոց տօթօյ արեւոյ, եւ բազմիցս եւ ի սայթաքելոյ ստից եւ այլոց յանկարծադէպ պատահարաց, որոց յետ Հանգիպմանցն պիտոյանան միշտ տանելութիւնք ցաւոցն ժամանակաւոր, եւ գործադրութիւնք բժշկական օգնականութեանց:

Այսպէս ուրեմն, երբ Հոգի Հայկազանց քրիստոնէից խառնեալ գտանի ընդ Հոգիս գորաց ոռւսաց, եւ սեւեռեալ է ընդ աթոռ տէրութեան եւ Կայսերութեան ինքնակալի ամենայն ոռւսաց որպէս ընդ օծելոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, զիարդ մարթ իցէ կարծել, թէ վկայեալն յիւրումն Հաւատարմութեան մէլիք Յոհաննէս կամ Վանի Յարութիւնեան եղիցի այժմ անՀաւատարիմ տէրութեան ոռւսաց եւ գորաց նորա, եւ Հարազատ թշնամեաց Հոգւոյ եւ մարմնոյ եւ Հաւատոյ Համօրէն ազգի իւրոյ եւ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի:

Այլ զի բերմունք ժամանակին որպէս բազումս անակնկալս, նոյնպէս եւ զայդ

անակնկալ բերին ըստ համազգային տարաբախտութեանց, ի միտ առէք, թէ որքան են յագգէ հայոց անմեղ մահացեալքն յայդր եւ ընդ ամենայն սահմանս ոռուսաց՝ ի Ղարաքիլիսայն որ ի Շիրակ գաւառի եւ ի շրջակայս նոցին, որքան են գերիք արք եւ կանայք, երիտասարդք եւ կուսանք, ծերք եւ տղայք եւ մանկուհիք ստնդեայք, եւ որքա՞ն կողոպտեալք, հարուածեալք, նեղեալք եւ վշտացեալք, եւ ըստ այնմ՝ զչափ առեալ վասն այդոցիկ պատահմանցն ձեզ եւ մէլիք Վանիին, գոհացարուք զԱստուծոյ եւ խնդրեցէք զողորմութիւն նորա, եւ հաւատացեք մեզ, զի Կայսր մեր եւ կառավարութիւն նորա ողորմած է մինչեւ յոյժ, եւ ոչ անագան ողորմութիւն նորա միւրեմբսցէ զձեզ ազատութեամբ մէլիք Վանիին եւ ամենայն ցանկացեալ ապահովութեամբ ձեր, առաւել քան որքան ակնկալութիւն մեր ամենեցուն կարէ շօշափել:

Ամենեւին անհոգ լինիցիք, զի մէլիք Վանիին՝ որպէս մէլիք Վանի եւ որպէս հայ, ոչ կարէ ի թիւս թշնամեաց տէրութեան ոռուսաց մտանել ի համար, զի եւ ոչ իսկ տէրութիւնն կարէ հաւատար, թէ ունիցի ինքն զհայ ոք անհաւատարիմ ինքեան, գոյով ի հարիւրաւոր ամաց հետէ փորձառու բնաւորութեանց նոցին:

Ողջ լերուք եւ ես անմոռաց ունելով զմէլիք Վանիին եւ զձեզ ամենեսեան, կամ եւ մնամ ընտանի հարազատութեամբ միշտ ի սրտէ բարեացակամ ձեզ:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Սրբազնագոյն տէր մեր ծերունագարդ Կաթողիկոսն ամենայն Հայոց մատուցանէ զողջոյն իւր եւ օրհնութիւն ձեզ ամենեցուն, համարելով եւ վասն ինքեան միեւնոյն զայս մեր գրութիւն, ըստ որում եւ մեք եմք նորին Վեհափառութեան ծառայ եւ պաշտօնատար առաւել քան զորդի:

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ.166, վավ.571, թ.183:
Բնագիր: Զեռագիր:

N 12

ԽԱԶԱՏՈՒՐ ԼԱԶԱՐՅԱՆԻ¹⁴ ՆԱՄԱԿԸ
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ

16 մարտի 1827թ.
Սանկա Պետերբուրգ

Աստուածարեալ սրբազան Հայր (առ Ներսէս)

ամէնողորմ հովուապետ

Ի 23էն անցեալ ամսոյ զգրեալ նամակ Ձեր ընկալեալ ընդ նմին եւ զօրինակ բարձրագոյն ընկրիպտի յանուն սրբազնութեանդ պարգեւելոյ յոյժ ուրախացաք, զի այս ողորմութիւն Կայսեր է իբր նշան առաջիկայ բարօրութեան եւ բարեբախտութեան ազգիս Հայոց. ի վաղուց հետէ գիտելով զարժանաւորութիւն Ձեր մեծամեծ պարգեւաց ի տրիտուր անխոնջ վաստակոցդ՝ ի դէպ ժամուս յարմար յօրինեցաք վասն Ձեր զապիսկ իմն յընդունելութիւն սիրելի Հայրութեանդ սրբոյն Վլատիմիրի ասպետի երկրորդ կարգի. զորպիսի ընկալեալ է Գրիգոր արհիւն. եւ մատուցաք մեծերախտ օգնականի ազգիս տեղւոյս գեներալ Պենկկենտօրֆի, որոյ ընկալեալ ի մէնջ զայն յարգութեամբ խոստացաւ առաջարկել Կայսեր եւ արժանի առնել զՁեզ նամանօրինակ շնորհաց իւրով բարեխօսութեամբ առ նորին Կայսերական Մեծութիւնն, տացէ Տէր յաջողել այսմ, զի եւ մեք բաժանորդ գտցուք Ձերդ ուրախութեան: Հետեւեալիք Հայր Սրբազան յամենայնի մերձաւորիլ իշխան Դիբիչի¹⁵ եւ շահեսլիք զսէր նորին, զի զամենայն ինչ առնել կարէ յօգուտ ազգիս, որոյ եւ վիճակն զնմանէ կախի ըստ մեծի մասին: Նաեւ կամիմ զպարգեւեալ Ձեզ ընկրիպտն տալ հրատարակել ի գազեթի, զի գիտասցեն ամենեքեան եւ ծանիցեն ի ձեռն այնր զհաւատարմութենէ Հայոց առ Գահն Ռուսաց:

Մատուցեալ խնդրագիրքն ի մէնջ եւ ի Սրբազան Հայր վասն Հայոց հասարակութեանց բազում աշխատանք եւ հոգացողութեամբ մեր հազիւ թէ ի բարեբախտութիւն մեր ազգին կալան ի կօմիտետի մինիստրաց զբարուք ընթացս եւ ըստ երեւութիւն վախճան լինիցի ի բարին. քանզի բոլոր մինիստրք բաց յերկուց ֆինանս-

սովէ եւ յայլոց ումեմնէ շարժեալ ի բազմադիմի խնդրուածոց մեր եւ ամենակերպ հետեւողութեանց խոստացան վճռով կօմիտետի զամենեյն փութով վճռել օգտաւէտ վարձանաւ, եւ զպրիվիլէյն Հայոց ի բարեպաշտ Կայսերաց պարգեւեալն կրկին Հաստատել ի դիւրութիւն ողորմելեաց, որոյ ի կատարելութիւն նախ ժամանեցէ Համայնահաս օգնութիւն բարձրելոյն եւ ապա Ձերդ սրտաբուլիս մազթանք:

Թեպէտ եւ ես ի մտի ունէի փոքր ժամանակ աստ մնալ եւ վերադառնալ ի Մոսկով, սակայն ըստ մեծ եւ յատուկ հարկաւորութեանց մնամ աստ, առաւել վասն օգտի եւ աւարտման Հասարակութեան գործոյ, նաեւ մասնաւոր վասն առաջադիմութեան կանոնադրութեան մերս ուսումնարանի, զոր ունի Տէրութիւնն ապագային պարգեւել ի բարօրութիւն վիճակի Հայկազուն մանկանց. ըստ պաշտօնի իմոյ աստ տեղեկանամ որպիսութեանց Վրաստանու, զորս գլխաւոր կառավարիչքն Հասուցանեն այտի, բայց ի միջի միում յայտարարութեան, որ էր այտի, ընթերցեալ տեսի գիմն եւ ցաւեցայ, զի զա՞րդ այդ այսպէս եղեւ, այն է. ի դալ Ապպաս Միրզայի գօրօք ի վերայ քաղաքին Ղարաբաղու առ ի առնուլ զբերդն, ընդդիմացեալ են նմա Հայ բնակիչք եւ գտեալ ի պատրաստի ի մարտ մտանել ընդ նմա, զայս տեսեալ նորին իսկոյն կոչեալ է առ ինքն տեղւոյն զարքեպիսկոպոսն Սարգիս եւ խոստացեալ է նմա եթէ յորդորեսցէ զժողովուրդն յետս կալ եւ Հնազանդել կամաց իւր, բարձրացուցանել զնա յաստիճան Կաթողիկոսութեան, ուստի եւ սա այսպէս Հաւատալով բանիցն, զիսչ եւ զաւետարան ի ձեռին քարոզութեամբ յորդորեալ է զժողովուրդն ի տալ զբերդն Ապպաս Միրզային եւ կալ ի Հնազանդութիւն նորին, որոյ վասն աղաչեմ զՁեզ Հայր Սրբազան զայսմանէ Հաւաստի ծանուցանել մեզ, ընդ որ եւ զզանազան պարագայից որպէս ի մասին պատերզմի նոյն եւ քաղաքական կառավարութեան եւ այլ եւ այլ որպիսութեանց բարեհաճեալիք տալ ինձ փութով Հաւաստի ծանօթութիւնս, որով ինձ եւ տեղւոյս մեծ գեներալ Պենկկենտօրֆին տալիք բաւականանալ, զի ի ստանալն նորին ի մէնջ զայսպիսի ծանօթութիւնս Հասուցանէ Կայսերն: Խնդրեմ Ձեր գեներալ Պենկկենտօրֆին⁶ զխոնարհ ծառայութիւն մեր մատուցանել եւ ասել, զի որդին նորա առողջ է, զամենայն օր տեսանեմ զնա. եւս եւ Ձեզ բերեմ նամակաւս ի շնորհաւորել զկենսաձիր յարութիւն միածին Յիսուսի, որոյ շնորհօքն ցանկամ յաջողել պիտոյից Ձեր ի բարին եւ բարեկենդանութեան Սրբազան Հօրդ ի Հովուել զամենեսեան ընդ Հովանաւորութեամբ Ձեր գտեալս միանգամայն*:

Մնամ վերապատուութեամբ Ձերդ
բարձու Սրբազնութեան
ամենախոնարհ ծառայ
Խաչատուր Եղիազարեանց

Մատենադարան, Ալ.Երիցյանի արխիւ, Թղթ.156, վավ.50, Թ.1 եւ շրջերես:
Պատճեն: Ձեռագիր:

N 13

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ԽԱԶԱՏՈՒՐ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ

11 մայիսի 1827թ.
Էջմիածին

Վեհազնեայ աղայ Խաչատուր Յովակիմեան

Ողորմած տէր իմ

Աստէն յաթոս սուրբ Էջմիածնի ընկալեալ զգրութիւն ձեր առ իս ի 16 մարտի այնպիսի ջերմեռանդութեամբ հոգւոյ ձեր բոցափայլեալ. այդ պարտաւորիմ մատուցանել ձերում Վեհազնութեան զգերագոյն շնորհակալութիւն իմ մշտնջենաւոր շնորհապարտութեամբ հանդերձ, այլեւ հանդերձ այնուամենայնիւ իսկական ճշմարտաբանութեամբ ըստ աւետարանի Տեառն մերոյ՝ ոչ անդէպ Համարիմ յայտնել իսկութեամբ, զի ոչինչ իմ անձնական չէ ինձ փափագելի ի սրտէ, բայց միայն երջանկական մասն Համազգային: Ապաքէն ջանք ձեր պսակեսցեն զուրախութիւն

* Փաստաթղթի սկզբում նշված է. «17 ապրիլի ընկալայ, 11 մայիսի պատասխանեցաւ»-Ա.Մ.:

Հոգևոյ իմոյ երկասիրութեամբ անձին ձերոյ վասն ազգի, ոյր վասն եւ խնդրեմ ամենեւին զանց առնել յապալս վասն անձնականաց ինձ պատկանելոց եւ Հոգ ունի վասն Հարկաւորացն ազգական բարեմասնութեանց, որում եւ ես եւ դու Համանգամայն գտանիմք ժառանգակիցք:

Գրութիւնք վասն Սարգիս արքեպիսկոպոսին սուտ են բոլորովիմք եւ անհիմն ըստ ամենայնի վասն խաչին եւ աւետարանին, եւ յորդորելոյ զժողովուրդն Հայոց յանհաւատարմութիւն իւրոյ Կ. Մեծութեանն, եւ են այնքիկ պատրանք ստաբանից, որով նորին բարձր գերագանցութիւնն Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովն ըստ Հասարակ սովորութեան իւրում պատրեալ այնպէս, նախ գրեալ էր առ իս, եւ Հրամայեալ էր Կառավարութեան Ղարաբաղու յղել զնա առ իս վասն դատապարտութեան, որոյ առ իս գրութեան զօրինակն ունիմ զկնի յղել ձեզ ընդ այլոցն Հանգամանաց, յորժամ ապացուցական վճռադատութեամբ վասն ամբաստանութեանցն զնմանէ տարապարտ գրպարտութեամբ այսպիսեօք կատարեսցին քննութիւնքն ի մասին նորա, քանզի մինչդեռ երկայնմտութեան ակնկալեալ այցելութեանց իւրոյ Կայսերական ողորմութեանն՝ սպասէաք, զի մի անախորժ իւրումն Հաճոյից զանմեղութիւն յիշեալ արքեպիսկոպոսին ներկայացուցանել ունիցիմք իւրոյ բարձր գերագանցութեան յիշեալ Կոստակալին: Եղեւ զի վասն տարաբախտութեանց Հասարակութեան Վրաստանու եւ այլոց երկարեցաւ փոխարկութիւնն, եւ Հազիւ ուրեմն ի 29 մարտի վախճան առեալ գործն վասն Կոստակալութեան անդ Տփիսիս¹⁷. մեք յերկու ապրիլի ելաք անտի, եւ ընդ մեզ առեալ զգործն, ունիմք մատուցանել գրով նորին բարձր գերագանցութեան նորոգ Կոստակալի ի ժամանել նորա աստ թերեւս ի սմին եօթնեկի (չաբաթ- Ա.Մ.), յետ որոյ առաքեսցուք զվախճանականն ձեզ, որով եւ դուք Հաւաստի գտանիք Հանդերձ աստուծով. թէ ոչ արքեպիսկոպոս, այլ թէ եւ ոչ իսկ յետինն ի խաժամուժից Հայոց ունի երբեմն յայտնել իւրեք զայնպիսի անարժանաւ ամէնողորմած Կայսերութիւն ամենայն ոռուսաց:

Ընդ նորին սրբազնութեան դատապարտեալ էին ի զուր նաեւ զմէլիք Վանի, որ երբեմն յաւուրս Կնեազ Յիցիանովի¹⁸ թիկամբ իւրով եւ իւրոցն զՀաց Հասուցեալ մնացորդացն ի Հինգ Հարիւրոց ոռուսաց՝ պաշարելոց ի նոյն Ապպաս Միրզայ շահ-գատայէ մերձ ի Շուշի՝ ձեռնտուութեամբ մթութեանց զիշերոյ, եւ ի վախճանի եւս՝ ինքն իսկ լծեալ ի թօփ, եհան զնոսա զանխուլ ի միջոյ երեսուն եւ 40 Հազարաց պարսից՝ եւ տարեալ յամուրս բնակութեանց իւրոց՝ ապրեցոյց զգունդն բոլոր Հանդերձ Գարեագին պօրկովնիկան¹⁹, իսկ այժմ գայր այնպիսի ոչ խղճահարեալ դատապարտեալ ի զուր, առաքեալ էր զնա ի Բաքու յաքսուրս, ոյր վասն յաւէտ՝ եւ կործ յիշեալ արքեպիսկոպոսին մնաց յարածգեալ, փոխանակ զի լուաք թէ զնա իսկոյն Հրամայեալ էր դարձուցանել յետս ի տուն իւր եւ ազատ կացուցանել, զորմէ չեղեւ իսկոյն կարելի մեզ ստուգելն առանց Հարցանելոյ ցնա ինքն Երմոլովն, եւ Հարցանելն Համարէաք անպատշաճ, ըստ որում յոյս մեր Հաստատուն էր վասն փոփոխմանցն եւ սպասէաք ժամ առ ժամ:

Այլ զի մի լինիցի ձեզ զարմանալ առ այնպիսի մասնաւոր գրպարտութիւնս նորին բարձր գերագանցութեան նախանցեալ Կոստակալ Երմոլովի, մատուցանեմ ահա ընդ այսմ զօրինակ վճռագրութեան ներսնային միւնիստրի անցեալ 1826 սեպտեմբեր 28 Համար 1673, որով գտցես զազգն Հայոց առ Հասարակ չարաբանեալ, եւ մեզ իսկ անբացայտապէս ի նմին անողորմ դատափետեալ, յորժամ եւ ոչ մի ինչ յամենայն գրելոց նորա ոչ գտանի ճշմարիտ, որպէս եւ յայտնիսցի ըստ ժամանակի Հանդերձ աստուծով:

Ես իսկոյն ընդ ընկալնուլս զօրինակ իմն այնմ գրոյ, օրինակեալ մատուցի նորին գերագանցութեան Բէկէնդօրֆի, զի Հասու լինիցի, թէ գտանի իմն յամենայն գրելոց անտի ճշմարտութեամբ յառաջագրեալ, եւ ցկնի խնդրեցի նորին բարձր գերագանցութեանն Իւան Ֆէդրիչ Պասքելիչի, յորժամ դեռ նա չէր կուսակալ, եւ եղէ բողոքաւոր բանիւ առ նորին բարձր գերագանցութիւնն Իւան Իւանիչ Դիպիչն, առ որ եւ նա խոստացաւ տալ փոխել զայն, ըստ որում գտանի այն Հակառակ զրամոտի Կաթուղիկոսացն, ուր Հրամայեալ լինի զՀոգեւորականս Հայոց ընկալնուլ պաշարթիւ պատրիարքին Արարատեան աթոռոյ, եւ յետ այսորիկ ի դադարիլ պատերազմութեանց ունիմ օրինաւոր խնդրագրով իմով մատուցանել զօրինակ առ նորոգ կուսակալն, զի քննեսցէ եւ վկայեսցէ վասն իսկութեանց եւ անխուլութեանց վկայելոցն Երմոլովն զի չկամիմ ես կորուսանել զաշխատութիւն իմ վասն բարեկարգու-

Թեանց իմում վիճակի ի գուր գրպարտութեամբ առն անխնամակալի Հասարակաց բարւոյն:

Եւ այլով եմ եւ մնամ կատարեալ վերապատուութեամբ միշտ:

Վեհազնութեան ձեր խոնարհ ծառայ արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.768, Թ.36բ-37բ: Բնագիր: Զեռագիր:

N 14

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՁԱՊԵՏ Ի.ՊԱՍԿԵՒԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱԶԱՏ
ԱՐՁԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

15 Հունիսի 1827թ.
Էջմիածին

Ваше Высокопреосвященство

Милостивый государь!

Основываясь на удостоверении Вашего Высокопреосвященства, о невинности Армянскаго Архиепископа Саркиза, который по поводу обвинения его во измене и во склонении кь тому же Карабагских Армянъ, по распоряжению предместника присланъ былъ въ Тифлисъ, и принимая при томъ во уважение ходатайство Ваше за сего Архиепископа я разрешаю возвратиться ему на место жительства его въ Карабагъ и предписалъ уже о семъ г. Тифлискому Военному Губернатору.

Уведомляя о томъ Ваше Высокопреосвященство въ следствие почтеннейшаго отношения Вашего отъ 14 дня N 89 съ совершеннымъ почтениемъ и преданностию честь имею быть

N 76

Вашего Высокопреосвященства
Покорнейший слуга
Иванъ Паскевичъ.

Մատենադարան, Լազարյանների արխիվ, Թղթ.106, դ.51, վավ.111, Թ.1: Պատճեն: Զեռագիր:

N 15

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻՆ

17 Հունիսի 1827թ.
Ա.Էջմիածին

Գերապատիւ Սրբազան Սարգիս արքեպիսկոպոս

առաքելապատիւ Հովիւ

Աշխարհն ըստ իւրում սովորութեան կամեցաւ թէպէտ դատապարտել զձեզ, այլ արդարութիւն աստուածային իրաւանց յաղթող գտեալ աշխարհի՝ արդարացոյց զձեզ վկայել ճշմարտութեանց ձերոց ի ներգործութիւնս սրտի եւ մտաց նորին բարձր գերազանցութեան նորոգ կուսակալի ղենարալ ատիւտանտ Իւան Ֆէդրիչ Պասքելիչ իրաւասէր գորապետի եւ գլխաւոր կառավարչի, որպէս ունիք նկատել յօրինակի գրութեանն նորին մեծանձնութեան:

Այսուհետեւ ընդարձակ են ձեզ ճանապարհք ձեր, եւ ըստ համաձայնութեան Հաճոյից իւրոյ սրբազնագոյն օծութեան Վեհափառ տեառն մերում յորժամ եւ կամք իցեն ձեզ վերադառնալ յաթոռ ձեր՝ կարօղ էք ճանապարհորդել ազատօրէն, եւ վասն Հարկաւորացն ճանապարհորդութեան ձերոյ յայտնեալ եմ ամենախոնարհաբար սրբազնագոյն տեառն մերում եւ յանձնեալ Հարազատի մերում պատուարժան

տէր Յարութիւն աւագ քահանայի Մանուկեանն²⁰ հոգ կայնուլ՝ եւ տնօրինել զարժանաւորն առ ապահովելոյ զճանապարհորդութիւն ձեր:

Գրեալ եմ եւ առ Հասարակութիւն ամենայն ժողովրդեանն Աստուածապահ վիճակի ձերոյ, զոր ոչ ունիք ընկալնուլ ի սրբազնագոյն տեառնէ մերմէ:

Լեր Հաւատարիմ, զի որպէս կամք են իւրոյ սրբազնագոյն Օծութեանն յարգել միշտ զձերութիւն ձեր, այնպէս եւ ես պատրաստ եմ ամենայօժար կամօք յարգել զկամս Վեհափառութեան նորին եւ զՀայրապատիւ արժանանձնութեան ձեր, առ որ որպէս այժմ, նոյնպէս եւ յայսմ՛հետէ յամենայն Հարկաւորսն ձեզ՝ ցանկամ լինիլ ըստ կարի նպաստ բարի ձերում սրբազնութեան, եւ կամ մնամ կատարեալ վերապատուութեամբ միշտ:

Համար 91

Առաքելապատիւ սրբազնութեան ձեր
խոնարհ ծառայ
արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, Թղթ.166, վավ.778, Թ.45:
Բնագիր: Զեռագիր:

N 16
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ
ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

17 հունիսի 1827թ.
Ա.Էջմիածին

Պատուելի Հասարակութեան Հայոց բնակելոց ի Շուշի քաղաք եւ յամենայն նահանգս եւ ի գիւղօրայս սահմանաց Ղարաբաղայ վիճակեցելոց Գանձասարու եւ սուրբ Գրիգորիսի Աթոռոցն, գերապատիւ իշխանաց, քաջազուն մէլիքաց, մեծարու վաճառականաց, Հասարակաօգուտ քէվխայից եւ առաջաւոր անձանց, բազմահմուտ արհեստաւորաց եւ քրտնաջան երկրագործաց եւ առ Հասարակ սուրբ լուսաւորչանբամ ժողովրդոց, արանց եւ կանանց, մեծաց եւ փոքունց, ողջոյն Քրիստոսաւանդ նուիրեմ բազմապատիկ օրհնութեամբ խնդալ ի տէր ի Քրիստոս Յիսուս յոյսն Հաւատացելոց:

Առաքելական է բան, եթէ բարիս գործիցէք՝ տանջիցէք եւ Համբերիցէք, այն շնորհք Աստուծոյ են: Ոչ զի Աստուած սիրօղ է նեղութեանց կամ տանջանաց մարդկան, այլ զի Աստուած մեր եւ տէր մեր Յիսուս Քրիստոս փրկիչ մեր զամենայն զբարիս գործելով վասն փրկութեան աշխարհի տանջեալ, չարչարեցաւ եւ Համբերեալ մահու եւ խաչի՝ այնպէս փառաւորեաց զԱստուածութիւնն իւր սուրբ, ըստ այնմ ուրեմն եւ մարդիկք բարեգործք եթէ Հանդիպեսցին տանջանաց եւ չարչարանաց եւ Համբերեսցին, լինիցին Աստուածանման ոմանք, եւ ահա այն է նոցա գերագոյն շնորհ Աստուծոյ, ոյր վասն քարոզէ սրբազան Առաքեալն:

Ապաքէն մինչ յանցելումն ամի ի յառնել յանկարծակի պատերազմութեանց պարսից ընդ այլ բազմապատիկ վնասուց զորս կրեցին Հայք բնակեալք յամենայն սահմանս Ղարաբաղայ եւ այլոց նահանգաց՝ երեւելի վնաս մեծ եւս այն էր վասն ամենայն Հայոց, զի ի վերայ հրատարակեալ Հասարակական Հաւատարմութեանն իւրեանց առ տէրութիւն ռուսաց, եւ առ քրիստոսազօր զինուորութիւնսն նորին՝ զրպարտեալ եղեւ ի զուր սրբազան Սարգիս վիճակաւոր արքեպիսկոպոսն, որպէս ոչ միայն անհարազատ տէրութեան, այլեւ անհարազատ Հաւատոց քրիստոնէութեան անգամ, այլ զի քրիստոսական է հրաման, թէ ծանիջիք զճշմարտութիւնն եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ՝ ահա գոհանամք զԱստուծոյ, զի յիշեալ արքեպիսկոպոսն գոլով զրպարտեալ ի վերայ հարազատութեանց եւ Հաւատարմութեանց իւրոց առ Ամէնօրհնեալ տէրութիւնն ռուսաց, եւ առ սուրբ Հաւատն Քրիստոնէական եւ առ Հասարակութիւն ժողովրդեան Հաւատացելոց, ճշմարտութիւն նորա վկայեաց արդարութեան նորին, եւ ազատեսց զնա ի դառնալուր զրպարտութեանց անտի, որ անարժան է ոչ միայն արքեպիսկոպոսութեանց եւ Հաւատարմութեան քարոզչաց սուրբ Հաւատոյ, այլ թէ անարժան է եւ վասն յետնագունին ի Հաւատացելոց, մանաւանդ վասն ամենայն ազգի Հայոց, որոց պարծանք առաջի իշխանութեանց եւ պետութեանց ընդ ամենայն տեղիս է ազգական Հասարակական Հաւատարմութեանց:

իւնն սեպհական նոցին ազգի հայոց:

Ապաքէն վերադարձուցեալ գնորին սրբազնութիւնն արդարադատութեամբ Կառավարութեանն յաթոռ իւր:

Ծանուցանեմք բարեպաշտ սիրելեացդ մերոց՝ յուրախութիւն ձեզ ամենեցուն, եւ առաջի առնեմք պարտաւորական հարազատութեամբ մերով, զի ընկալջիք զնա առաւելապատիկ վերապատուութեամբ, եւ յարգեսջիք զնա ըստ իւրումն արժանաւորութեանց որպէս զծառայ Քրիստոսի, եւ որպէս զհայր ձեր հոգեւոր եւ որպէս զարքեպիսկոպոս վիճակաւոր: Եւ քրիստոնեական բարեպաշտութեամբ ձեր փոյթ կալջիք փոխանակ ամենայն նեղութեանց նորա եւ վշտաց մատուցանել սրբազնութեան նորին զմխիթարութիւն ըստ հաճոյից կամացն Աստուծոյ, եւ հաւատարիմ լինիջիք, զի նովաւ բազմացուցանել ունիք ձեզ զմխիթարութիւնն Աստուածային ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ. եւ մեք յատուկ պարտաւորութեամբ եմք եւ մնամք վասն ձեր ամենեցուն:

Համար 92

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ.166, վավ.779, թ.45բ-46: Բնագիր: Զեռագիր:

Ծանոթագրութիւններ

1. Մելիք-Վանի Աթաբեկյան (1766-1854) - Զրաբերդ գավառի վերջին տիրակալը, մասնակցել է 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմին եւ աչքի ընկել ռուսական կորպուսին մատուցած բազմաթիվ ծառայութիւններով (նրա մասին տես Վ. Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները Կովկասում ռուսական տիրապետութիւն հաստատման դարաշրջանում, Երեւան, 1974):

2. Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյան (մահ. 1843) - Մելիք-Ֆրեյդունի որդին, եղել է Գյուլիստան գավառի վերջին տիրակալը:

3. Մեհտի Ղուլի խան - Ղարաբաղի խան, Իբրահիմ խանի որդին: 1806թ., Իբրահիմ խանի սպանութիւնից հետո, Ռուսաստանի կառավարութեան հրամանով հոր փոխարեն խան է նշանակվել, սակայն հետագայում դավաճանել է ռուսներին:

4. Իոսիֆ Ռեուտ - գնդապետ, Շուշիում պաշարված 42-րդ եգերյան գնդի հրամանատար:

5. Սարգիս Հասան-Ջալալյան (մահ. 1828) - արքեպիսկոպոս, Գանձասարի կաթողիկոս 1792-1798 եւ 1812-1815թթ.: 1815-ին, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան միջնորդութեամբ եւ ռուսական կառավարութեան հրամանով, վերացվեց Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսութիւնը, եւ նրա փոխարեն հաստատվեց մետրոպոլիտութիւն, Սարգիս արքեպիսկոպոսը 1815-ից մինչեւ իր մահը եղավ մետրոպոլիտ (նրա մասին տես Բ. Ուլուբաբյան, Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Երեւան, 1998, էջ 246-255):

6. Վալերիան Մադաթով (Ռոստոմ Գրիգորի Մադաթյան, 1782-1829) - գեներալ-լեյտենանտ, ծնվել է Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում: 1816-ին նշանակվել է Արցախում տեղավորված ռուսական զորքերի հրամանատար, իսկ 1817-ից՝ Ղարաբաղի, Շիրվանի եւ Շաքիի խանութիւնների զինվորական-նահանգային կառավարիչ: Նրա զորքերը 1826-ի աշնանը Արցախը մաքրեցին պարսիկ նվաճողներից (նրա մասին տես Կեանք գեներալ-լեյտենանտ կնեազ Մատաթովին, Շուշի, 1870, Жизнь генерал-лейтенанта князя Мададова, СПб, 1874, Վ.Թերզիբաբյան, Գեն. Վ. Մադաթով, Երեւան, 1942):

7. Միքայել Սալլանթյան (1782-1851) - լեզվաբան, մանկավարժ, եկեղեցական գործիչ:

8. Աբբաս-Միրզա (1783-1833) - Իրանի պետական եւ ռազմական գործիչ, Ատրպատականի նահանգապետ, Ֆաթալի շահի որդին: Գլխավորել է Իրանի ներքին ու արտաքին քաղաքականութիւնը:

9. Շամիրխան Մելիք-Բեգլարյան (1790-1850) - Մելիք-Ֆրեյդունի որդին: Պատանգ է եղել Շուշիի Իբրահիմ խանի մոտ եւ սովորել պարսկերեն: Հետագայում ծառայել է Կովկասյան գլխավոր հրամանատարութեան զինվանագիտական գրասենյակում թարգմանի պաշտոնով: Մասնակցել է 1817թ. Երմոլովի առաքելութեանը

Թեհրան, այնուհետև ուսական դեսպան Մազարովիչի թարգմանն էր Թեհրանում (տես Մ.Թադիրադյան, Ուղեգրություններ, Հոգվածներ, նամակներ, վավերագրեր, Երեւան, 1975, էջ 164, 553-554, նաև՝ Մատենադարան, Ն.Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 1302, թ. 22):

10. Իվան Պասկելիչ (1782-1856) - գեներալ-ֆելդմարշալ, 1826-1828թթ. ուսուցարսական պատերազմի ժամանակ մասնակցել է Գանձակի ճակատամարտին: 1827թ. մարտից եղել է Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, ապա նաև Կովկասի կառավարչապետ:

11. Ալեքսեյ Երմոլով (1777-1861) - ուս գինվորական եւ պետական գործիչ, գեներալ: 1816-ին նշանակվել է Առանձին կովկասյան կորպուսի հրամանատար, Կովկասի գլխավոր գորահրամանատար եւ կառավարիչ: 1817-ին դիվանագիտական հանձնարարութեամբ մեկնել է Իրան: Կովկասում իրականացրել է դաժան դաղու-թային քաղաքականություն, ղեկավարել Հյուսիսային Կովկասի նվաճումը: Դեկաբրիստների հետ կապի պատճառով 1827-ին ետ է կանչվել Կովկասից եւ պաշտոնաթող արվել:

12. Խոսքը փոխգնդապետ Նազիմկայի ջոկատի ոչնչացման մասին է (այդ մասին տես Акты Кавказской Археологической Комиссии (AKAK), т.6, ч.2, Туфлус, 1875, с.357, Մ.Յ.Ներսեսով, նշվ. աշխ., էջ 114):

13. Հակոբ Աթաբեկյան (մահ. 1844) - յուզբաշի (հարյուրապետ), Մելիք-Վանուկ կրտսեր եղբայրը, որը նրա հետ միասին մասնակցել է ուսուցարսական 1804-1813թթ. պատերազմին:

14. Խաչատուր Լազարյան (1789-1871) - հայ ազգային-ազատագրական շարժման եւ մշակութային գործիչ, ուսական պետական խորհրդական, Լազարյան ճեմարանի հոգեբարձու:

15. Իվան Դիրիչ (1785-1831) - գեներալ-ֆելդմարշալ, կոմս: 1815-ից եղել է առաջին բանակի շտաբի պետ, 1823-ից՝ Գլխավոր շտաբի պետ:

16. Կոնստանտին Բենկենդորֆ (1785-1828) - ուսական ռազմական գործիչ, դիվանագետ, գեներալ-լեյտենանտ, կոմս: 1826-1828թթ. ուսուցարսական պատերազմի ժամանակ գրավել է էջմիածինը:

17. Գեո. Պասկելիչը Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար եւ քաղաքացիական մասի կառավարիչ է նշանակվել 1827թ. մարտի 28-ի հրամանով (տես AKAK, т. 7, Туфлус, 1878, с. 1):

18. Պավել Յիցիանով (1754-1806) - ուս ռազմական գործիչ, հետեւագորի գեներալ: 1725-ին Վախթանգ VI-ի հետ Ռուսաստան տեղափոխված Յիցիչվիլի իշխանական տոհմից: 1802թ. սեպտեմբերից Վրաստանի կառավարչապետ: 1806թ. փետրվարի 8-ին դավադրաբար սպանվել է Բաքվի խանի հետ բանակցությունների ժամանակ:

19. Պավել Կարյազին (մահ. 1807) - գնդապետ, 1805-ին Ասկերանում եւ Շահ-բուլղում պարսկական զորքերով շրջապատված Կարյազինի ջոկատը պաշարումից դուրս է բերել Մելիք-Վանին:

20. Հարություն Ալամդարյան (1795-1834) - հայ բանաստեղծ, մանկավարժ, հասարակական-քաղաքական եւ եկեղեցական գործիչ:

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՀՕՄ)
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

1910 թվականի հունվարի 1-ին, Նյու-Յորքում, ՀՀԴ գործիչ Խաչատուր Մալումյանի (Է.Ա.Կնունի) նախաձեռնությամբ եւ ջանքերով, ԱՄՆ-ի Հայ տիկնանց տարբեր կազմակերպությունների միավորմամբ, հիմնադրվում է համայն հայությանը ծառայող նպաստամատույց մի կառույց՝ ՀՕՄ-ը (Հայ օգնություն միություն):

Հայ կանանց այս մարդասիրական ու բարեգործական կազմակերպության նպատակն է եղել իր անձնիկեր, հայրենանիկեր գործունեություններ, հայ կնոջը հատուկ կամքով, անձնուրացություններ, խելամուռությամբ ու հմայքով նպաստել հայապահպանությանը, դիմակայել ու օգնել աշխարհասփյուռ հայությանը օրհասական պահերին՝ ջարդերի, կոտորածների, բռնաճնշումների ու բնական աղետների ժամանակ: Ստեղծման օրից մինչեւ 1919թ. կոչվել է ՀՀԴ Կարմիր խաչ*:

1919թ. Հայաստանի առաջին Հանրապետության օրոք ստեղծված Հայաստանյան Կարմիր խաչի հետ գործել է համատեղ, մինչեւ Հանրապետության անկումը: Համագործակցել է նաեւ Խորհրդային Հայաստանի Կարմիր խաչի հետ, մինչեւ բռնաճնշումների տարիները: Այնուհետեւ, տարիների ընթացքում կրելով այլ անվանափոխություններ, շատ անգամ գործելով անանուն, երբեք չի փոխել իր ազգային ավանդական դիմագիծը, օգնելով ու նեցուկ հանդիսանալով հոգեւոր, ֆիզիկական ու նյութական օգնության կարոտ հազարավոր Հայ կարոտյալների:

ՀՕՄ-ը կենտրոնը պահպանելով Նյու-Յորքում, իր մասնաճյուղերն ունի աշխարհի բոլոր հայաշատ վայրերում, որոնց միջոցով ու աջակցությամբ իրականացնում է բազմաթիվ մարդասիրական ծրագրեր:

ՀՕՄ-ի Հայաստանյան մասնաճյուղը կարողացավ կայանալ ու լծվել ազգանվեր գործունեության միայն Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո: Այդ ժամը ու դժվարին տարիներին ՀՕՄ-ի Հայաստանյան միավորը կարողանում է կայանալ ու ծավալել կենարար գործունեություն՝ օգնելով որբ երեխաներին ու ծեղերին, փախստական Հայ ընտանիքներին, Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, երկրաշարժից տուժածներին եւ այլն: Հոմուհիները ակտիվ գործունեություն են ծավալել նաեւ Հայաստանի տարբեր շրջաններում, ստեղծելով շրջանային մասնաճյուղեր:

1998 թվականից Հայ կանանց բարեգործական այս կազմակերպությունը՝ ՀՕՄ-ը ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի անդամ է: Համագործակցում է միջազգային ու արտասահմանյան կազմակերպությունների հետ, ինչի շնորհիվ բազմաթիվ ծրագրեր է մշակում ու իրականացնում Հայաստանում ու Արցախում, որոնցից 16-ը մնալու են:

Ընթերցողին ներկայացվող փաստաթղթերը մարդասիրական կառույցի պատմության մի չնչին մասն են կազմում այն բազմաթիվ արժեքավոր փաստաթղթերի, որ պահվում են Հայաստանի ազգային արխիվի մի շարք ֆոնդերում:

Փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ եւ ներկայացնում են կազմակերպության միայն սկզբնական տարիների գործունեությունը: Աշխատանքը նվիրվում է ՀՕՄ-ի Հայաստանյան ճյուղի ստեղծման 15-ամյակին:

Փաստաթղթերը տպագրվում են բնագրին հարազատ, չնչին ուղղադարձական ու կետադրական ճշգրտումներով: Արխիվի անվանումը տողատակերում չի նշված, քանի որ բոլոր փաստաթղթերը պահպանվում են ՀԱԱ ֆոնդերում:

Մարինե Մարտիրոսյան
ՀԱԱ բաժնի վարիչ

* 1946 թվականից՝ ՀՕՄ:

ԱՄՆ-ի «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ» ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՏԹԵՈՍ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ ՕՐ ՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ԻՐԵՆՑ ՓԱՓԱԳԻ ՄԱՍԻՆ

2 հունիսի 1910թ.
Նյու Յորք

Վեհափառ Տէր.

Սոյն նամակով կուգանք Ձեր Վեհափառութեան Հայտնելու թէ Նիւ-Եօրքի մէջ Հայ կիներ, նկատի ունենալով տաճկահայ զինուորագրութիւնը, կազմակերպուեցանք «Կարմիր խաչի» անունին տակ, եւ մեր ծրագրի գլխաւոր կէտերնին հետեւեալ 7 հօդուածները:

յօդ. 1. Կազմակերպուել եւ պատրաստ դառնալ, դեղով, դրամով եւ հիւանդապահներով պատերազմի պահուն Հայրենիքի Համար ծառայող զինուորներուն օգնելու անխտիր:

յօդ. 2. Օգնելու նմանապէս Հայ ինքնապաշտպանութեան խնդիրներուն (եթէ պատահի) մէջ իյնող զինուորներուն եւ անոնց այրիներուն, եթէ պետք ունենան:

յօդ. 3. Օգնել նաեւ անակնկալ պատահարներու զոհերուն ինչպէսին հետադիմական շարժում, հով, հեղեղ, երկրաշարժ եւ այլն:

յօդ. 4. Օգնել ազգային հանրօգուտ ունէ Հաստատութեան՝ հիւանդանոց, որբանոց, աշխատանքի տուն եւ այլն (կրթանոց հասարակաց օգնութեան կարօտին)

յօդ. 5. Խաղաղ շրջանի մէջ ընկ[երութեանը] կաշխատի հիւանդապահներ պատրաստել, անոնց բոլոր ծախքերը հոգալով:

յօդ. 6. Փոխարէն այս զոհողութեան, հիշեալ հիւանդապահները պարտաւոր են երթալ հոն, ուր աղետ մը տեղի կունենան:

յօդ. 7. Լուծման պարագային, իր բոլոր ստացուածքները Պօլսո Ազգային պատրիարքարանին սեփականութիւնը կը դառնան:

Այս բոլորի հետ եւս կուզինք շարունակելու Հայ իգական սեռի զարգացման գործը Մայր երկրին մէջ, ինչ որ ամէնակարեւոր կը դասինք մեր ազգի առաջաման:

Այժմ մեր անդրանիկ հանդէսի Հասույթը Հատկացուցենք Տալվորիկի մէջ, նոր բացուելիք վարժարանի մը (50 յիսուն) օսմանեան ոսկի, որու նկատմամբ արդէն գրած ենք Գերապատիւ Ներսէս եպիսկոպոս Խարախանյանի՝ ի Մուշ:

Արդ, Վեհափառ Տէր, եթէ այս նորակազմ կանանց ընկերութեանը առաջանա, լիալոյս ենք, թէ աւելի մեծ բարեգործութիւններ պիտի կատարէ ապագային:

Ուստի մեր այս բարձր նպատակը իրագործելիս փափագով կուգանք խնդրել որդիաբար Ձեր Վեհափառութենէ չի զլանալ Ձեր օրհնութեան գիրը, որով մեծապէս քաջակերած պիտի ըլլաք մեր այս նորակազմ ընկերութիւնը:

Մնամք Ձերդ Վեհափառութեան
խոնարհ Հարգանք ի դիմաց Հայկական Կարմիր խաչի

Ատենապետուհի Տիկին Մարօ Փափազյան
Ատենադպրուհի Տիկին Զապել Երկանյան

Ֆ. 57, ց.2, գ. 1217, թ. 1-3: Բնագիր: Զեռագիր:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՓԹԵՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՏԹԵՈՍ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՄՆ-Ի «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ» ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՆՐՄԱՏԵՂԾ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՐ ՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

4 հունիսի 1910թ.
Նյու Յորք

Վեհափառ Տէր.

Տարւոյս Նյու Եօրքի Հայ տիկիներէ ոմանք հաւաքուելով ի մի՝ կազմեցին եռանդեամբ Կարմիր խաչի ընկերութիւն մը ազգօգուտ նպատակներով: Տեղւոյս

Ազգային քաջալերեցին զիրենք եւ քննադատեցին անոնց աշխատութիւնը: Արդ, ներփակ գրութեամբս կը դիմեն խոնարհաբար Ձերդ Վեհափառութեան, կը պարզեն նպատակներն եւ կը հայցին որ օրհնութեան հատուկ գրով մը քաջալերէք սուլն ձեռնարկին:

Գովելի գտնելով իրենց եռանդը եւ քաջալերութեան արժանի նպատակներն, կը դիմիմ եւ ես Ձեր Մ.Օծութեան եւ կը խնդրիմ որ բարեհաճեիք խրախուսել զիրենք Հայրապետական օրհնութեամբ՝ վաստակելու եւս աւելի եռանդամբ եւ արդիւնաւորելու ազգօգուտ գործունէութիւններն, ույր վասն մատչելով ի համբույր Աստուածածայլ Ս.Աջոյդ մնամ Վեհափառ Տեառնդ Խ.Որդի

Պողոս վրդ. Գափթյան

Ֆ. 57, ց. 2, դ. 1217, թ. 4: Բնագիր: Ձեռագիր:

N 3

ԱՄՆ-ի «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ» ՀԱՅՈՒՀՅԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա.ԷՋՄԻԱՄՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՎՈՐԳ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻՆ՝ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ
ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԵՆՅ ՈՒՂԱՐԿԱԾ
ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

1 փետրվարի 1911թ.
Նյու Յորք

Ամենապատիւ

Տէր Գէորդ Ս.Արքեպիսկոպոս Սուրէնեան,

Կաթողիկոսական Տեղապահ Ամենայն Հայոց Ի Ա.Էջմիածին

Նիւ Եօրքի Հայուհեաց Կարմիր Խաչի ընկերութիւնը լսելով մեր Կովկասահայրապետարկեալ եղբարց ընտանքոց եւ զաւակաց նիւթական դառն վիճակն, այս նամակաւ կուղարկէ Ձեր Ամենապատուութեան, Ամերիկայան դրամ յիսուն (50) տուար:

Շնորք ըրէք հատկացնել այս տրամը բաղձացեալ նպատակին: Մենք ամենախոնարհ զաւակներդ, մեր վշտակցութեան բաժինը այս չափով կրցինք ներկայացնել:

Խնդրելով թախանձագին՝ որ տարման մը գտնէք ուղարկելու այդ դառն վիճակին մատնուած մեր հեռաւոր քոյրերուն ամուսինները եւ եղբայրները:

Համբուրիւ Ս.Աջոյդ մնամք ամենապատիւ ի տիմաց Հայուհեաց Կարմիր Խաչի ընկերութեան

Ատենադպրուհի

Տիկ.Վ.Անդրեասյան

Ատենապետուհի

Տիկ. Զ.Երկանյան

Ֆ. 57, ց. 2, դ. 1894, թ. 7: Բնագիր: Ձեռագիր:

N 4

ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՀԱՅՈՒՀՅԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻՆ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿԱԾ ԻՐԵՆՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

25 ապրիլի 1911թ.
Նյու Յորք

Գերապատիւ Տէր.

Սյուս նամակաւ կուգանք խնդրել՝ թէ Նիւ Եօրքի Հայուհեաց Կարմիր Խաչի ընկերութիւնը «յիսուն տուար \$ 50» ամերիկայան դրամ ճամբած էր ի նպաստ կովկասահայրապետարկեալներու ընտանքաց 1911 փետր.1, ին: Այս մասին ոեւէ տեղեկութիւն մը չըստանալով՝ հարկադրուած ենք գրել եւ իմացնել Ձեր գերապատուութեան, որ բարեհաճեիք գանձուելու մասին հրամանագրելու տեղեկացնել ընկերութեանս:

Մնամք ամենախոնարհ Համբուրիւ Ձեր Բարձր Սրբազնութեան ամենահնազանդ զաւակներ
Ի դիմաց Հայուհեաց Կարմիր խաչի ընկերութեան

Ատենադպրուհի Վերգին Անդրեասյան
Ատենադպրուհի Զապել Ա.Երկանյան

Ֆ. 57, ց. 2, գ. 1228, թ. 3: Բնագիր: Ձեռագիր:

N 5

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ» ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱԼԷԲՍԱՆ ԴՐՒԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՄՆ ԶԱՅՈՑ
ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆՆ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿԱԾ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ
ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

29 մարտի 1916թ.
Ալեքսանդրիա

Վեհափառ Տէր.

Աղէքսանդրիո Հայուհեաց Կարմիր խաչը՝ կազմուած անցյալ 1915 տարուայ փետրուարէն ի վեր, առաջին օրէն իսկ, փափաքն էր իր Համեստ միջոցներու ներած չափով՝ ուշադրութեան եւ գուրգուրանքի առարկա ընել այն ազնիւ Հայ կտրիճները, որոնք Հայկական ռազմաճակատին վրա ռուսական զինուորներուն հետ կողք կողքի, հանուն Հայրենիքի ազատութեան կը մարտնչին մեր դարաւոր թշնամիին դէմ:

Այս նպատակաւ բաւական թուով հանդերձեղեններ եւ այլ պիտույքներ պատրաստած էինք արդէն եւ միջոցներ կը խորհէինք ճամբա հանելու դէպի Կովկաս, երբ անցյալ սեպտեմբերին Բօրդու-Սաիդ Հասան 4000 է աւելի Կիլիկիցի դադթականներ, որոնք ինչպէս ծանօթ է Ձերդ վեհափառութեան, Հայտնի կոտորածի եւ բնաջնջումի վտանգին դէմ հերոսաբար պաշտպանաբ է վերջ՝ շնորհիւ Փրանսական նաւատորմիղին, ասպետական պաշտպանութեանը, ազատած եւ Եգիպտոսի հիւրընկալ փերը բերուած էին եւ որոնք, ապրուստի եւ պատսպարումի ամէն միջոցներէ զուրկ, ամիջական օգնութիւն կը կարօտէին:

Բնականաբար Եգիպտոսի ազգային իշխանութեանց եւ բոլոր բարեսիրական Հաստատութեանց հետ Կարմիր խաչի Եգիպտոսի Հայ մարմիններու վրայ եւս պարտականութիւն կը ծանրանար ամիջական օգնութիւն հասցնել մեր այս Կիլիկիցի բազմակարօտ հիւրերուն: Ուստի ստիպուեցանք մեր պատրաստած հանդերձեղէնները, ինչպէս նաեւ մեծ թուով անկողիններ, վերմակներ եւ ծածկոցներ անոնց տրամադրել:

Հիմա սակայն, որ անոնց կարիքները բաւականաչափ լրացուած են, պարտք կը զգանք մեր ուշադրութիւնը կրկին անգամ դարձնել դէպի Հայաստանի մէջ կռուող մեր կամաւոր եղբայրները: Ան այս, իբրեւ առաջին առաքում, վերջերս մեր կողմէ պատրաստուած առարկաները ըստ ներփակ ցուցակի, 3 սնդուկի մէջ ամփոփուած այսօր ճամբա կը Հանինք Ռուսական իշխանութեան խնամքով պիտի փոխադրուին մինչեւ Ա.Էջմիածին՝ տրուելու Համար Ձերդ Ա.Օծութեան տրամադրութեան տակ:

Խոնարհաբար խնդրելով, որ Ձերդ Վեհափառութիւնը բարեհաճի Հրամայել առ որ անկէ, որպէսզի, Կարմիր խաչի այս տոյգն եւ աննշան նուէրը Հասցուի Հայ կամաւորներուն, կանխաւ կը Հայտնինք մեր ամենախորին երախտագիտութեան Հաւաստիքը եւ որդիական խոնարհ Հարգանք մատչիմք ի Համբոյր Ա.Ա.Ղոյ մեծի Հայրապետիդ ազգիս:

Ի դիմաց Աղէքսանդրեո Հայուհեաց Կարմիր խաչի

Ատենադպիր Բ.Ատենապետ
Թիւրապեակ Զ.Արապեան

Ֆ. 57, ց. 2, գ. 1299, թ. 1-4: Բնագիր: Ձեռագիր:

«ՀԱՅԱԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ» ՄԻՈՒԹՅԱՆ ՆՅՈՒ-ՋԵՐՍԻԻ ՃՅՈՒՂԻ
ՀԱՅՈՒ ՀԻՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿԱԾ ԴԵՂՈՐԱՅՔԸ
ՆԻՎԱՆ ԴՆԵՐԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

4 դեկտեմբերի 1916թ.
Նյու Ջերսի

Վեհափառ Տէր.

Վէսթ Հոփօքընի Հայ ազգային Կարմիր Խաչի ընկերութիւնը, Հայրենիքի մեր դժբախտ ու անկար գաղթական եղբայրներուն եւ քոյրերուն ցաւքերովը մտահոգուած՝ եւ ամենանուիրական եւ սրբազան պարտականութիւնն եր մղուած եւ մեր փոթորկող սիրտերն ու խղճերը Հանդարտեցնելու Համար, ընկերութիւնը, ըստ իւր առաքելութեան նիւ եօրքի Հայուհեաց Կարմիր Խաչի Հետ Համագործակցարար, Հարգելի բժիշկ Մ. Հովսէփյանի անուան կը ղրկէ 500 տոլար արժողութեամբ դեղորեայք, որուն 200 տոլարը մեր ընկերութիւնը իսկ 300ը Նյու եօրքի Հայուհեաց Կարմիր Խաչը տրամադրած է գործածելու Համար մեր հիւանդ եղբայրներու եւ քոյրերու դարմանումէն:

Եթէ պատահի որ դեղորայքը Ձեզ Հասնելէ առաջ Հարգելի բժիշկ Մ. Հովսէփյանի մեկնած ըլլայ Ամերիկա, այդ պարագային կը խնդրենք Ձերդ Վեհափառութենէն, որ բարեհաճէիք այդ դեղորեայքը ըստ Ձեր կամաց Հատկացնել բոլոր այն գաղթականական հիւանդանոցներուն, ուր անմիջական կարիք կա:

Խոնարհաբար Համբուրելով Ձերդ Վեհափառութեան Ա. Ա. Ձը
Վէսթ Հոփօքընի Ազգային Կարմիր Խաչի կողմէ

Ատենադպրուհի	օր. Վիքթորիա Մարաջանյան
Ատենապետուհի	տիկ. Թագուհի Սարգիսյան
Գանձապահուհի	տիկ. Նուարդ Չանգալյան

Ֆ. 57, ց. 2, դ. 1271, թ. 4: Բնագիր: Ձեռագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

20 մարտի 1920թ.
Երեւան

1) Կարմիր Խաչի Ընկերութիւնը գտնուում է Հայաստանի կառավարութեան անմիջական հովանաւորութեան տակ:

2) Կարմիր Խաչի Ընկերութեան նպատակն է՝ ա) պատերազմի ժամանակ խնամել Հայրենիքի հիւանդ ու վիրաւոր զինուորականներին, ինչպէս եւ դաշնակից ու թշնամի զօրքերի բոլոր հիւանդներին ու վիրաւորներին, որոնք կը գտնուեն ընկերութեան գործունէութեան շրջանում, բ) խաղաղ ժամանակ ընկերութիւնը իր հիմնարկութիւններէ միջոցով ամեն տեսակ օգնութիւն է ցոյց տալիս Հաշմանդամ զինուորականներին, օգնում է ընդհանուր աղէտներից վնասվածներին եւ օտար պետութիւնների իրար դէմ մղած պատերազմի ժամանակ օգնութեան է գալիս նրանց բանակներին:

3) Այդ նպատակներին Հասնելու Համար Ընկերութիւնը մշակում ու Հաստատում է կանոններ ու Հրահանգներ, բաց է անում հիւանդանոցներ, Հանրակացարաններ գիւղերի քոյրերի Համար, բժշկա-առողջապահական դասընթացներ, միջերանոցներ եւ այլ Հաստատութիւններ:

4) Ընկերութեան միջոցներն են կառավարութեան օժանդակութիւնները, միանակ նպաստները դրամով ու նիւթերով եւ ամեն տեսակ Հանգանակութիւններ:

5) Ընկերութիւնը իրաւունք ունի ձեռք բերելու եւ վաճառելու ամեն կարգի շարժական ու անշարժ կայք*:

* Անշարժ կայք ձեռք բերելու եւ վաճառելու իրաւունք ունեն Ընկերութեան բոլոր ճիւղերի վարչութիւնները, միայն զինուոր վարչութեան Համաձայնութեամբ եւ Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերութեան անունով: Ծանոթագրութեանը փաստաթղթինն է -Մ.Մ.:

6) Ընկերութիւնը եւ նրա բոլոր Հաստատութիւնները ազատ են ամեն տեսակի պետական, քաղաքային եւ տեղական մաքսերից, հարկերից, տուրքերից այլ եւ պոստային ու հեռագրական վճարումներից:

7) Ընկերութեան խորհրդանշանն է Հաւասարածայր Կարմիր խաչ՝ սպիտակի վրա, որը Հաստատուած է ժընեւի կոնվենցիայում: Այդ խորհրդանշանը գործածելու իրաւունքը Հայաստանում պատկանում է միայն Կարմիր խաչի Ընկերութեան, որի գլխաւոր վարչութիւնը սակայն կարող է արտօնել կողմնակի անհատներին ու հիմնարկութիւններին օգտելու նրանից, Կարմիր խաչի նպատակներին ծառայող ձեռնարկութիւնների մէջ: Այդ խորհրդանշանն է կրում Ընկերութեան կնիքն ու դրոշմը, պահեստների, տրանսպորտների, հիվանդանոցների դրոշակները, ինչպէս եւ ընկերութեան անդամների ու պաշտօնեաների ձախ թեւակապը:

8) Ընկերութեան գործերի ընդհանուր ղեկավարն է գլխաւոր վարչութիւնը, որ գտնւում է Հայաստանի մայրաքաղաքում:

Տեղական գործերը վարում են տեղական վարչութիւնները: Գլխաւոր եւ տեղական վարչութիւնների բոլոր անդամները իրենց պարտականութիւնները կատարում են ձրի:

9) Գլխաւոր վարչութիւնը բաղկացած է ոչ պակաս քան 11 անդամներից եւ 5 փոխանգամից: Վարչութիւնը իր միջից ընտրում է նախագահ եւ երկու օգնական:

Գլխաւոր վարչութիւնն է, որ ա) կնքում է պայմանագրեր, բ) պահանջատէր է հանդիսանում եւ պաշտպանում ընկերութեան շահերը գ) անում է անհրաժեշտ որոշումներ պետական, ինքնավարական եւ Հասարակական հիմնարկութիւններին, դ) Հաստատում է գլխութեան քոյրերի, սանիտարների, ապաստարանների, հիւանդանոցների, որբանոցների եւ այլ նման Հաստատութիւնների կանոնադրութիւնը, ե) հիմնում է ճիւղեր եւ Հաստատում է վարչութիւններին եւ զ) գործադրում է ընդհանուր ժողովների որոշումները:

10) Գլխաւոր վարչութիւնն ունի իր կնիքը, իսկ տեղական վարչութիւններին ուղարկում է թէ կնիքի օրինակները, թէ Հաշւական մատյանները:

11) Եթէ տեղական ճիւղը դադարեցնում է իր գործունէութիւնը, իր բոլոր գործերը շարժական եւ անշարժ կայքը անցնում է գլխաւոր վարչութեան: Այդ բոլորը կրկին ետ է տրւում նոյն ճիւղին, եթէ վերջինս իր դադարման օրից երկու տարւա ընթացքում վերսկսում է իր գործունէութիւնը: Հակառակ դէպքում նրա բոլոր կայքն ու դրամագլուխը մնում է գլխաւոր վարչութեան:

12) Գլխաւոր եւ տեղական վարչութիւնների գումարները բաժանւում են 4 կարգի. ա) ծախսերի գումար՝ Ընկերութեան ընթացիկ ծախսերի համար, բ) պահեստի դրամագլուխ, պատերազմի պէտքերի համար, գ) Հաշմանդամ գիւնորականներին նպաստի դրամագլուխ, դ) Հատուկ նպատակների համար Հաւաքած կամ ներաբերած գումարներ: Վերջին կարգի գումարների շարքին են պատկանում գլխութեան քոյրերի կենսաթոշակի համար Հատկացւած գումարները:

13) Գլխաւոր եւ տեղական վարչութիւնների գումարները պահւում են պետական գանձարանում, կամ նրա մի որեւէ բաժանմունքում՝ ցպահանջ կամ ընթացիկ Հաշուով:

Ընկերութեան եւ իր հիմնարկութիւններին պատկանող բոլոր դրամագլուխները Հնարաւորութեան առջին դէպքում, վերածւում են պետական տոկոսաբեր թղթերի եւ պահւում պետական բանկում կամ նրա բաժանմունքներից մէկում: Եթէ մօտակա տեղերում այդ բաժանմունքը չկա, կամ որեւէ դժւարութիւն կա հիշեալ դրամագլուխները նրան յանձնելու, դրանք տրւում են գլխաւոր վարչութեան, որ եւ այդ գումարները պետական արժէթղթերի է վերածում եւ պահ տալիս պետական բանկին:

14) Տեղական վարչութիւնները բոլոր տեսակի դրամական եկամուտների 25%ը, բացառութեամբ Հատուկ նպատակի համար եղած նւէրների, ուղարկում են գլխաւոր վարչութեան, Ընկերութեան ընդհանուր ծախսերի համար, մնացած 75%-ից հանւում է վարչութեան տարեկան ծախսերը, իսկ մնացած գումարը, որի մէջ մտնում է նաեւ նախահաշի մնացորդը, բաժանւում է չորս Հաւասար մասերի, երկու մասը Հատկացւում է պահեստի դրամագլխին պատերազմի պէտքերի համար,

* Յատուկ նպատակների համար ներաբերած գումարները գործադրւում են նւիրողի կամքի համաձայն: Ծանոթագրութիւնը փաստաթղթին է -Մ.Մ.:

մի մասը՝ ընդհանուր աղէտներից վնասւածների օգտին:

15) Ընդհանուր ժողովի զբաղմունքներն են.

ա) Հաստատել ընկերութեան, գլխաւոր վարչութեան եւ տեղական վարչութիւնների համար կանոնադրութիւն:

բ) Քննել գլխաւոր վարչութեան ընդհանուր հաշւետւթիւնը Ընկերութեան գործունէութեան եւ միջոցների մասին:

գ) Ստուգել գլխաւոր վարչութեան ելքի եւ մուտքի գումարները եւ նրա հսկողութեան տակ գտնւած դրամագրութիւնները.

դ) Քննել եւ լուծուծն տալ այն խնդիրներին, որ առաջարկուծ են գլխաւոր եւ տեղական վարչութիւնները.

ե) Ընարել գլխաւոր վարչութիւն.

զ) Հաստատել անշարժ կայքերը գնելու կամ վաճառելու որոշումները.

է) Վաւերացնել գլխաւոր վարչութեան եւ Ընկերութեան բոլոր հիմնարկութիւնների ծախսերի նախահաշիւը:

16) Պատերազմի վայրում գլխաւոր վարչութիւնը ունի.

ա) Ամեն մէկ գործող բանակում գլխաւոր լիազօր, եւ

բ) Շրջանային լիազօրներ, համապատասխան ռազմաճակատի զինւորաշրջանների թւին:

Լիազօրները ընտրուծ են գլխաւոր վարչութիւնից: Ոչ ռազմաճակատում գլխաւոր վարչութեան ծրագրերը իրականացուծ են կամ տեղական հիմնարկութիւնների, կամ գլխաւոր վարչութեան ընտրած լիազօրների միջոցով:

17) Գլխաւոր լիազօրների տրամադրութեան տակ են տրուծ գլխաւոր վարչութեան կողմից ուղարկած սանիտարական խմբերը, գումարները եւ նիւթերը: Ոչ միայն Կարմիր խաչի խմբերը, այլ նաեւ միւս բոլոր սանիտարական խմբերը, ուծ կողմից էլ որ կազմուծ լինեն նրանք, հայերից՝ թէ օտարազգիներից, առանց բացառութեան ենթարկուծ են գլխաւոր լիազօրին:

Փոխնախագահ Պարլամենտի
Աւագ քարտուղար

Լեւոն Շանթ
Յ.Տէր-Յակովբեան

Ֆ. 154, ց. 1, գ. 20, թ. 4-6: Տպագրական օրինակ:

N 8

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐ ՀՆՈՒԹՅԱՆ
ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

1 ապրիլի 1920թ.
Վաղարշապատ*

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ Ե ՊԻՍԿՈՊՈՍԱ ՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷՋՄԻԱԾՆԻ Աստուածահաճո «Կարմիր խաչի ընկերութեան» Հայաստան
աշխարհի Հայրապետական օրհնութիւն.

Յօրէ հաստատման է Հանրապետութեան Հայաստան աշխարհիս պարտիք ի վերա ամենեցուն կար խնամել, մխիթարել եւ սփոփել զսիրեցեալ զորդիս մեր զգօրականս եւ զգօրս մեր, որք զօրհանապազ գանձինս իւրեանց ի պաշտպանութիւն Հայրենեաց ոչ խնայեն, թողեալ զսիրասուն զաւակունս, զխնամարկու ծնողս եւ զընտանիս իւրեանց:

Արդ՝ գոհութեամբ սրտի եւ խնդութեամբ հոգւոյ իրագեկ եղաք ի կազմել «Ընկերութիւն Կարմիր խաչի» Հայաստան աշխարհի ի տիպ օրինակի այլոց նմանօրինակ ընկերութեանց, որք ի սփիւռս աշխարհին վասն խնամարկութեան եւ բժշկ-

* Այժմ՝ Էջմիածին:

ութեան վիրաւոր եւ հիւանդ գօրաց:

Ընկերութիւնդ այդ, որ ի վերայ դրօշի իւրօյ զնշան խաչին կրէ եւ ցանկայ զհետ երթալ պատուէրի խաչեցելոյն՝ «սիրեսցիս զընկեր քո իբրեւ զանձն քո» զինչ առաւել գործ բարի գործեսցէ, բայց եթէ ըստ առակին Աւետարանի Սամարացւոյ Ողորմածի խնամս տանել ի վերայ հիւանդաց եւ վիրաւորաց:

Հրաւեր եւ հորդոր կարգամբ մերագնեցից եւ սիրեցիալ զաւակաց մերոց, արաց եւ կանանց սատար լինել ընկերութիւնդ, զի եւ ողորմութիւնք անսպառ եւ զթութիւնք աննուազ եղեցին:

Օրհնեմք զընկերութիւնդ ընդ բարեջան նախագահիւդ եւ անդամոց դորին, մաղթելով ի Տէառնէ կար եւ ոյժ անբասիր մնալ ի կոչմանդ որ կոչեցաքդ եւ լինել մշակք առանց ամօթոյ առաջի Հայագն գօրաց եւ զօրականաց մերոց:

Ողջ լերուք, գօրեացալք շնորհօք Ս. Հոգւոյն եւ օրհնեալք ի մէնջ Ամէն:

Ֆ. 154, ց.1, գ. 20, թ. 7: Բնագիր: Ձեռագիր:

N9

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ» ՄԻՈՒԹՅԱՆ ԲՐՈՒԿԼԻՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆԱՆՑ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ
Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

[1922թ.]

Բրուկլին

Վեհափառ Տէր,

Հեռու այս օտար հորիզոններուն տակ, Ամերիկայի Հայաշատ գաղթականութեան մէջ ապրող տարագիր Հայ տիկիներս եւ օրիորդներս՝ տասն երկու տարիներ առաջ Համախորհուրդ կազմեցինք Հ.Յ.Դաշնակցութեան Կարմիր խաչի ընկերութիւն մը՝ օժանդակելու Համար Հայկական մեծ եւ աննախընթաց աղետներէն առաջ եկած մեր տարաբաղդ արիւնակիցներուն:

Տարիէն աւելի է արդէն, որ Միացեալ Նահանգներու մէջ գտնուող բոլոր մասնաճիւղերս ալ աւելի եռանդուն կերպով եւ ամենայն ոգեւորութեամբ գործին փարած ենք եւ մեր պարտականութիւնը կատարել կը ջանանք ամէն կարգի զոհողութիւններով՝ Հայկական ամենամեծ եւ ամենաանախընթաց աղետէն առաջ եկած մեր տարաբաղդ արիւնակիցներուն օգնելու Համար: Մեր առաջադրված նպատակին աւելի յաջողութեամբ ծառայելու Համար պարբերաբար կը սարքենք Հանդէսներ, ներկայացումներ, խնջոյքներ եւ հրապարակային ժողովներ:

Մեր այս աշխատութիւններուն իբր արդիւնք արդէն Հաւաքած ենք մօտ 30.000 ռուբլի յօգուտ Հայ փախստականներուն, վիրաւորներուն եւ որբերուն:

Հասարակութեան ցոյց տուած ոգեւորիչ վերաբերումէն քաջալերուած պիտի շարունակենք մեր գործունէութիւնը, այսպիսով մեր նուիրական պարտականութիւնը կատարելու:

Մեր գործունէութեան մէկ մասն եղաւ այս շրջանին, դիմել տունէ տուն, քաղաքէ քաղաք, եւ հաւաքել զանազան կարգի գործածուած եւ նոր զգեստեղէններ զրկելու Համար Կովկաս ապաստանած մեր արիւնակից փախստականներուն եւ կարօտեալներուն:

Արդէն մօտաւորապէս չորս ամիս առաջ, Թիֆլիս, Մեսրոպ եպիսկոպոսի Հասցեով մօտ 20.000 Հագուստեղէններ զրկեցինք: Անկէ երկու ամիս յետոյ, յիշեալ Հասցէին զրկեցինք միջին Հաշուով 20.000 կտոր եւս:

Վեհափառ Տէր, այս փոքրիկ Հաշուետուութիւնը ձեզի ցոյց պիտի տայ, որ մեր գործունէութիւնը ուղիղ է, ազգօգուտ եւ ամէն քաջալերութեան արժանի: Սակայն վիրաւոր սրտով կուզենք Ձերդ Վեհափառութեան տեղեկացնել, որ մեր թեմի հոգւոր հովիւներէն, Հայ Առաքելական Եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեայ մը, Մուշեղ եպիսկոպոս Սերոբեանը, փոխանակ խրախուսելու մեզ մեր ձեռնարկներուն մէջ, մեր դէմ նորանոր արգելքներ կը հարուցանէ: Ան այցելելով ամէն տեղ կը ձգտի վարկաբեկել մեր ընկերութիւնը, եւ որ ամենէն ցաւալին է, մեզ մամուլի էջերուն մէջ անարգական ամենամեծ խօսքերով կ'նուաստացնէ:

Մեր ընկերութեան Պօսթօնի մասնաճիւղը, անցեալ հոկտեմբերին Հանդէս-

զար մը սարքած էր ի նպաստ Կովկաս ապաստանած մեր արիւնակիցներուն, որուն ընթացքին եղան նաեւ քանի մը ընտանեկան պարեր, Հանդէս-պագարն աւելի արդիւնաւոր դարձնելու համար: Մուշեղ եպիսկոպոս Սերոբեանը, այդ Հանգամանքն առիթ ընտրելով, Ֆրէզոն հրատարակուող «ՆորԿեանք» շաբաթաթերթին թիւ 36ին մէջ հրատարակեց հօդուած մը, որուն մէջ մեր Կարմիր Խաչի ընկերութիւնն անուանեց «Կարմիր Մահիկ» եւ անոր անդամներն ալ «Իգային լրբեր»: Ներփակ կը գտնէք այն նախատական գրութիւնը, որ կը կրէ վերոյիշեալ եկեղեցւո պաշտօնէային ստորագրութիւնը:

Մենք՝ Հայ Եկեղեցւո բարձրաստիճան պաշտօնեայի այս անվայել Հայտարարութիւնը անարգանք մը կը նկատենք ոչ միայն մեզ ուղղուած, այլ Հայ մօր, դարերու բարի եւ առաքինի Հայ մօրն ուղղուած:

Մենք Հաստատապէս վճռած ենք՝ վերջին Հինգ տարիներու ընթացքին Ձերդ Վեհափառութեան թեմի Հայ գաղութին կեանքը խռովող Հայ եպիսկոպոսը այլեւս մեր Հարկերուն տակ չընդունիլ, ան կ'նունքի եւ պսակադրութեան արարողութիւններուն չհրաւիրել, եւ նոյնիսկ աւելին՝ չյաճախել այն եկեղեցին, ուր այդ անբարոյական եպիսկոպոսը պաշտամունք կը կատարէ:

Արդ՝ դիմելով Ձերդ Վեհափառութեան, որու սրտին այնքան մօտ է իր որդիներու հոգեւոր դաստիարակութեան գործը՝ մենք, ստորագրեալներս, կուգանք խոնարհաբար խնդրելու, որ բարեհաճիք այս անարժան պաշտօնեան Հեռացնել Ամերիկայի թեմէն, որպէսզի գաղութիս հոգեւոր եւ ազգային գործերն ընթանան խաղաղ եւ Հանգիստ:

Կուգենք տեղեկացնել նաեւ, որ Ամերիկահայոց Առաջնորդն անզօր է եպիսկոպոսին վրա աղբերու: Կարգադրութիւնը պէտք է ուղղակի Ձեր կողմէն ըլլա:

Վստահ Ձեր արդար դատաստանին, կսպասենք, Վեհափառ Տէր, Ձեր Հայրական օրհնութեան եւ քաջալերանքին:

Համբուրելով Ձեր Սուրբ Աջն, մնանք որդիական խոնար ակնածանքով:

Պրուքլինի Կարմիր Խաչի խումբ *

Ֆ. 57, ց. 2, դ. 1894, թ. 1-2: Բնագիր: Մեքենագիր:

N 10

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ե.ԿԱՐԻԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՆ
ՕԳՆԵԼՈՒ ԵՆ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 օգոստոսի 1923թ.

Փարիզ

Մեծահարգ Տիար,

Հոկտեմբերի մէկին Երեւան գումարուելիք Հայաստանի օգնութեան մարմիններուն Համաժողովին մէջ, որուն աշխատութեանց պիտի մասնակցիք յանուն Փարիզի Հայ Խաչին, կը խնդրենք տեղեկանալ այն պէտքերուն որոնց կարող է գոհացում տալ մեր կազմակերպութիւնը:

Այս առիւ կը խնդրենք Ձեզմէ Երեւանի կառավարութեան ուղարկութիւնը հրաւիրել սա Հարցին վրա, որու մասին ասկից առաջ արդէն գրած էինք իրենց: Օտար երկիրներու մէջ առանձին Կարմիր Խաչեր կրնան գոյութիւն ունենալ միայն այն պարագային, երբ իրենց երկրին կառավարութիւնը պաշտօնապէս Հարի ժընեւի Կարմիր Խաչի Միջազգային քօմիթէին եւ իւրաքանչիւր երկրի Կարմիր Խաչի Կեդրոնական քօմիթէին: Հետեւաբար լաւ կը լինէր, որ Երեւանի կառավարութիւնը կամ Երեւանի Կարմիր Խաչը այդպիսի դիմում մը ընէր ժընեւ եւ բոլոր այն երկիրներու Կարմիր Խաչերուն, ուր կը գտնուին Հայ Կարմիր Խաչեր:

Միանգամայն ի նկատի առնելով Փարիզի կեդրոնական Հանգամանքը եւ Հաղորդակցութեանց դիւրութիւնը, լաւ էր որ Փարիզի մարմինը ճանչցուէր իբր գլխաւոր մարմին, որուն կցուած ըլլային արտասահմանի միւս Հայ Կարմիր Խաչերը իբրեւ քոյր ընկերութիւններ ու միաձայնութեամբ աշխատէին, որպէսզի իրենց գո-

* Հաջորդում է 20 ստորագրութիւն -Մ.Մ.:

րծունէութիւնը զիրար չխաչաձեւէր:

Խնդրելով Ձեռնէ որ բարեհաճիք ընթացք տալ այս հարցերուն, մնամք անկեղծ հարգանօք.

Ի դիմաց Փարիզի Կարմիր Խաչի Վարչութիւնի Տօք. Քօլոլյան

Ֆ. 178, ց.1, գ. 390, թ. 33: Բնագիր: Մեքենագիր:

N 11

ԱՄՆ-ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՒՔ ԵՎ Ս ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ
ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 սեպտեմբերի 1923թ.
Նյու Յորք

Հարգելի ներկայացուցիչներ,

Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի կեդրոնական վարչութիւնը՝ Հայաստանի օգնութեան կոմիտէի երրորդ Համագումարին առիթով, իր քրոջական ողջոյնները կը զըրկէ անոր մասնակցող Հարգելի պատգամաւորներուն եւ հաջողութիւն կը ցանկաւ անոնց վերաշինական ծրագիրներու լիակատար իրականացման:

Կը ցաւենք, որ հակառակ մեր բուռն ցանկութեան, տեղւո հեռաւորութեան եւ ժամանակի սղութեան պառճառաւ, ի վիճակի չենք մեր ներկայացուցիչներու միջոցաւ մասնակցելու ժողովիդ աշխատութեանց, որոնք այնքան մօտ են մեր սրտին եւ սիրելի մեր հայրենաբաղձ հոգիին... Սակայն, կը վստահեցնենք պատաւոր Համագումարդ, թէ Ամերիկայի Հայ Կարմիր Խաչը, հաւատարիմ իր անցելոյն, այսուհետեւ այ պիտի շարունակէ օգնութեան ձեռք տալու մեր ժողովուրդի անպատում ցաւերու ամոքման ի նպաստ:

Այս անվերապահ հաւաստիացումով, կը փութանք հայտնել, թէ շնորհապարտ պիտի թողուք զմեզ, եթէ բարեհաճիք տեղեկացնել մեզ՝ այն անմիջական պետքերը եւ պահանջները ու միջոցները, որոնցմով հնարաւորութիւն պիտի ունենանք օգտակարապէս ծառայել մեր բազմաչարջար ժողովուրդի վերաշինական հսկայական երկունքին, որոց բերկրալից արձագանքները՝ դոհութեամբ կը լսենք Նոր-Աշխարհի այս հեռաւոր ափերէն...

Կը փափաքինք հաւելուլ, ի տեղեկութիւն պատաւոր Համագումարիդ, թէ Հայ Կարմիր Խաչի կեդրոնական վարչութիւնները, թէ նախորդ եւ թէ ներկայ կառավարութեանց մօտ կատարած է դիմումներ, իր վաւերացումը ստանալու համար, որպէս Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի ընկերութիւնը: Մեզ անհայտ պատճառներով, անպատասխանի մնացած է մեր դիմումները եւ մեր բաղձանաց իրագործումը:

Մեր վերջնադոյն դիմումը, ուղղուած Հայաստանի Հանրապետութիւնի, կատարուած է 1923 օգոստոս 14-ին, թիւ 3284 ընդարձակ նամակով մը, որում հարեւանցի կերպով տեղեկագրուած են այն օժանդակութիւնները, որոնք մատուցուած են Հայ Կարմիր Խաչի կողմէ՝ Հայաստանի դժբախտ, բայց արի ժողովուրդին, որ արժանի է ամէն օգնութեան եւ մարդավայել կեանքի բոլոր օրհնութեամբ եւ բարյաց:

Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի գործունէութեան լիակատար պատկերը կը վերաբերի Ամերիկահայ տարեգրութեանց, ի վեր հանելու անոր կատարած նախախնամական դերը ի Կիլիկիա, ի Հայաստան, ի Կ.Պօլիս, ի Յունաստան, ի Պուլկարիա, ի Սուրիա եւ այլն:

Սպասելով անհամբերութեամբ պատաւոր Համագումարիդ լիակատար ատենագրութեան եւ սերտ գործակցութեան մը մշակման, կը մնամք քրոջական սիրալիր բարեկենդրով:

Ի դիմաց Հայ Կարմիր Խաչի կեդրոնական վարչութեան

Ատենագրութի Տիկին Եւտաքսի Քացախյան
Ատենագետութի Բժշկուհի Լուսի Է.Գիւլէզյան

Ֆ. 178, ց. 1, գ. 390, թ. 20-22: Բնագիր: Ձեռագիր:

ՀՕԿ-Ի ԵՎ ԱՄՆ-Ի ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ
ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼԻՔ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

20 ապրիլի 1926թ.
Նյու Յորք

Յարգելի Հայրենակից,

ՀՕԿ-ի եւ Պետական Հայ Կարմիր Խաչի Կենդրոնական վարչութիւնը սարքած են հրապարակային մեծ ժողով մը, որ տեղի պիտի ունենա ապրիլ 25-ին կիրակի օր, իրիկունս ժամը 7.30-ին Washington Irving Higt School-ի ժողովասրահին մէջ, 40 Irving Place, 17-րդ փողոցի անկիւնը, Նիւ Եորք:

Այդ օր Հայաստանէն եկած ՀՕԿ-ի եւ Կարմիր Խաչի պատուիրակութիւնը կազմուած Գրիգոր Վարդանեանէ, Կարէն Միքայէլեանէ եւ Բժիշկ Ս.Կամսարականէ, մեր պատու հիւրերը պիտի ըլլան ու զեկուցումներ պիտի ընեն Հայաստանի մասին:

Վստահ ենք թէ ամէն Հայ մեծ շահագրգռութեամբ կը փափաքի լսել լուրեր Հայրենիքի արդի իրական կացութեան մասին:

Ուստի կը հրաւիրենք զձեզ ներկա գտնուիլ այս պատմական ժողովին Հարգանք մը ընծայելու համար Հայրենի ամերէն եկող մեր հարգելի հիւրերուն եւ լսելու Հայաստանի մէջ կատարուած վերաշինական հսկա աշխատանքներու մասին:

Հարգանք

ՀՕԿ-ի եւ Պետական Կարմիր Խաչի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՔ

Ֆ. 178, ց. 1, գ. 420, թ. 21: Տպագրական օրինակ:

ՉԻԿԱԳՈՅԻ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԻՐԵՆՑ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ
ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

22 մայիսի 1926թ.
Չիկագո

Ուրախութեամբ կիմանանք Ձեր Ամերիկայի ժամանումը: Բերկրանք եւ հաճոյք է մեզ համար Ձեր գալուստը:

Լսել Հայաստանի պատգամաբերները, կենդանի խօսքով այս օտար հօրիզոններում, եւ տեսնել ազատագրութեան կենդանի վկաները, դարերով տառապող ու հիւժող Հայաստանի, համարիա զգլխիչ տպաւորութիւններ առաջացնող վայրկյաններ են մեզ համար:

Մեր երկար սպասումը իրականացած է այսօր եւ բաղձանք ունինք պատեհութիւն ունենալ անձամբ ու մօտէն լսել աշխատանքի վերաշինութեան ցնծացնող լուրերը:

Աւելորդ չենք նկատեր հիշեցնել Ձեզ, որ սիրահօծար եւ լաւ տրամադրութիւններով կփափաքինք Ձեզ աջակցել, հաջողցնելու Ձեր մտադրութիւնները այս գաղութների մէջ:

Մասնաճյուղս չէ գլացած անցյալին մէջ եւ հիմակ ալ լաւ տրամադրութիւններ եւ պատրաստակամութիւն առաջացնել ու ստեղծել կարեկցութեան գոհաբերութեան ոգի դէպի մեր Հայրենի բնագավառը եւ անոնց հալածուած ու խոշտանգուած բեկորները:

Մասնաճյուղս անվերապահորէն կուգա Ձեզ ըսելու ողջոյն Ձեզ ազատ Հայաստանի աւետաբերները եւ կը բաղձա ու պատրաստ է եւ հօծար աջակցելու Ձեր առաքելութեանը հաջողութիւն:

Ձերդ Հարգանք Պետական Հ.Կ.Խաչի Չիկագոյի մասնաճիւղ

Ատենադարուհի Վէրժին Վարդապետյան
Ատենապետուհի Արուսիակ Պոյսեճյան
Ֆ. 178, ց. 1, գ. 420, թ. 24-25: Բնագիր: Ձեռագիր:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՀԱՎԱՔՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ
ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

19 Հոկտեմբերի 1926թ.
Փարիզ

Ազնուամեծար
Տիար Կարէն Միքայէլեան
Փարիզի Հայ Տիկնանց Միութեան կազմակերպած փարիզահայ ակումբի Ձորորդ հավաքոյթը տեղի պիտի ունենա առաջիկա 26 Հոկտեմբերի, երեքշաբթի իրիկուն, ժամ 9-ին Hotel Lutetia ի սրահին մէջ, 43: 13d Raspail Paris 6e:
Միութիւնս չափազանց ուրախ պիտի ըլլա՝ եթէ Ձեր ազնուութիւնը նույն իրիկունն հաճի հետաքրքրական բանախօսութեամբ մը աւելցնել փայլը սույն հավաքոյթին եւ ընդունել մեր կանխադաս շնորհակալութիւնները:
Սպասելով Ձեր նպատատուոր պատասխանին, կը մնանք հարգալիբ զգացմամբ ի Դիմաց Հայ Տիկնանց Միութեան Փարիզի

Ատենադպրուհի Է. Էսմիրյան
Ատենապետուհի Զ. Ճիվանիրյան

Ֆ. 178, ց. 1, գ. 385, թ. 17: Բնագիր: ձեռագիր:

ՂԵՎՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻՆ՝
ՄԱՆՁԵՍՏՐԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

20 նոյեմբերի 1926թ.
Մանչեսթեր

Շիրակի երկրաշարժի ահաւոր աղետէն առթիւ տեղւոյս երեսփոխանական ժողովը արտակարգ նիստ մոռնեցաւ եւ որոշեց կազմել մեր նախագահութեան ներքո հանձնախումբ մը հետեւեալները, որկ են,
Պր. Հրանտ Պավրճյան
,, Գառնիկ Ֆնտլլյան
,, Ստեփան Իփլիկճյան ,
,, Արտաշ Օտապաշյան
Նաեւ տեղւոյս Հայ Տիկնանց միութեան մեր նախագահութեամբ ժողով գումարելով կազմեց իրեն մասնաճիւղ մը Հայ Կարմիր Խաչի եւ ընտրեց ատենապետ Տօկթ.Մեսրոպ Բարսեղեան եւ ատենադպիր օր.Պալապանյան
Երեսփոխանական ժողովի ընտրած հանձնախումբը արդէն գործի ձեռնարկած եւ աւարտելու վրա է: Նույն ուղղութեամբ նորընտիր Հայ Կարմիր Խաչը պիտի դիմէ օտարներու եւ պիտի հանգանակէ դրամ ու պիտի ընդունի ապրանք եւ հագուստ:
Որոշած ենք հանգանակուած դրամը եւ հաւաքուած ապրանքներն ու հագուստեղեններն ուղղակի դրկել Հայաստան: Արդ՝ հաճելով մեզ տեղեկացնել թէ որմու- հասցեին հարկ է դրկել որպէսզի ապահով հասնի իր նպատակին:
Յառաջ անվեհեր եւ անայլայլ, վստահ եմ որ նույն որակով կշարունակենք Ձեր նուիրական ու սրբազան գործը Հօգուտ բազմաչարչար Հայութեան:

Ողջագուրանքներով մնամ ազովարար Ղեւոնդ եպիսկոպոս Դուրյան

Ֆ. 178, ց. 1, գ. 385, թ. 4 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ԱՄՆ-Ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

13 Հունիսի 1928թ.
Նյու Յորք

Մեր վերջնագոյն շրջաբերականի հրատարակումէն ի վեր, Պետական Կարմիր խաչը ունեցած է հետեւեալ գործունէութիւնը:

Միլիոնքի ճիւղի մեր ազնիւ անդամուհիներէն Mrs. John Aramian, որ պատուական ամերիկուհի մըն է, եւ նախանձախնդիր Պետական Կարմիր խաչի ծաւալման, եւ որ յաճախ վարած է գանձապետի, ատենադպրի, հագուստի հաւաքիչի եւ ուրիշ պատասխանատու պաշտօններ, իր անձնական ծախսով ճաշկերոյթ մը տուած է Միլիոնքի անդամներուն եւ համակիրներուն, ուր խօսած է Տիար Հ.Խօճասարեան, ապահովելով ներկաներու գործակցութիւնը յօգուտ Պետական Կարմիր խաչին:

Միլիոնքի ճիւղը կազմակերպած է ճաշկերոյթ մը, որմէ զուտ շահ մնացած է \$ 137.19, որ բաղդատմամբ գաղութի թիւին խիստ քաջալերական է:

Ա.Լուրիգի, Իսդ Ա.Լուրիգի ճիւղը, Կրանիդ Սիգիի մեր համակիրներու գործակցութեամբ ունեցած է Զատիկական յաջող հանդէս մը զատ թէյասեղան մըն ալ, ուր խօսած է մեր գործիչը:

Տէլրէյի, Փօնդիաքի, Նիակարաֆօլսի մէջ կազմակերպուած են հասութեաբեր ձեռնարկներ, ուր խօսած է մեր գործիչը, ապահովելով տեղական գաղութներու համակրութիւնը՝ դէպի Պետական Կարմիր խաչը:

Սիրաքիւզի մէջ տեղի ունեցած է հրապարակային ժողով մը հոժ բազմութեամբ: Խօսած է մեր գործիչը:

Նիակարա Թօլսի ճիւղը իր գոհողութեան, ճշտապահութեան եւ արդիւնաւոր գործունէութեան համար շնորհաւորելի է:

Յիշատակութեան արժանի են նաեւ Սըմըրվիլի, Բիշմընտի, Հարթֆըրտի, Գլիվլէնտի, Եունիւրն, Սիգիի, Լինի, Լօվէլի, Մօլտընի, Սիրաքիւզի, Թրօյի, Հուայթի-նսուիլի, Ֆրէզնօյի, Պրէնդֆըրտի, Սէնդ Քաթէրինսի եւ Կօլդի ճիւղերու ցոյց տուած եռանդուն գործունէութիւնը:

Գլիվլէնտի ճիւղը ունեցած է հրապարակային ժողով-թէյասեղան մը, ուր խօսած է տիար Խօճասարեան:

Լօս Անճէլլոսի ճիւղը, որ մեծամասնաբար կը բաղկանայ լենինականցիներէ, հաւաքած է \$1300.00 որով պիտի գնենք էմպիլէնս մը Լենինականի Կարմիր խաչին համար:

Տիգրօիգի մէջ խնամօք մշակուած ծրագրի մը համեմատ, արդիւնաւոր գործունէութիւն մը կը հետապնդուի, շնորհիւ նորընտիր վարչութեան: Ընտրուած են զանազան յանձնախումբեր, որոնք պաշտոն ունին անդամներ արձանագրել, հագուստ հաւաքել, պարբերաբար ժողովներ սարքել, ուր կը հրաւիրուին բանախօսներ, այժմեական նիւթերու շուրջ խօսելու: Կը սարքուին նաեւ կար կարողներու հաւաքոյթներ (sewing circle), որոնք կզբաղին փոքրիկներու զգեստուց եւ հիւանդանոցային պիտոյքներու պատրաստակամութեամբ:

Պօսթընի, Մէտֆըրտի, Ութթըրթաունի եւ Հէյվըրհիլի ճիւղերը ցոյց կուտան ուժեղ գործունէութեան մը գրական ապացոյցները:

Թրօյի մէջ տեղի ունեցած է անդամական համակրական ժողով եւ թէյասեղան, ուր խօսած է տիար Խօճասարեան:

Քէյմպրիճ՝ կը պատրաստուի մօտ օրէն հանդէս-պար մը տալ:

Զըլսի, Մէտֆըրտ, Պրաքթըն, Թրօյ, Սըմըրվիլ, Սէյլըմ Տէփօ-Մէդիւն, Լօրէնս, Լօվէլ, Սիրաքիւզ եւ Ուստր պիտի սարքեն դաշտահանդէսներ, որոնց պիտի հետեւին ուրիշներ ալ:

Ֆրէզնօ-Ֆաուլըր-Րիտլիի միացեալ դաշտահանդէսը տեղի պիտի ունենայ Յունիս 24-ին:

ՆԻԻ ԵՈՐՔԻ ԾԻՒՂԸ

Նիւ Եորքի մեր մասնաճիւղը՝ գունագեղ շրջանակի մէջ առնելով «Աեւանայ Վանքերու» բազմագոյն նկարը, իւրաքանչիւր օրինակը կը ծախէ մէկ տոլարի, որ շատ ատան է: Գնելու փափաքողներ, դիմելու են Կեդրոնական վարչութեան ներ-

փակեալով իրենց հանձնարարութեան համապատասխան գումարը:

«Սեւանի Վանքերն ու Լիճը» Պետական Կարմիր Խաչի 1925 տարւոյ օրացոյցի նկարն է, որ մեծ ընդունելութիւն գտաւ բոլոր հայ խաւերէն: Ահա լաւ առիթ մը, որով մէկ տղարի չնչին գումարով պիտի ապահովէք Հայաստանի ամենագեղեցիկ բնակարաններէն մին:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՕՐԻՈՐԴՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ

Նիւ Եորքի Մասնաճիւղի օրիորդներու խումբին անդամական թիւը հասած է 23-ի, որ խիստ քաջայերական երեւոյթ մըն է...

.... Ընկերուհիներ եւ ընկերներ,

Կազմակերպութեան մը կեանքին մէջ, պատգամաւորական ժողովները, ինքնամփոփման պատեհութիւններ են, ուր յետադարձ ակնարկով մը պիտի քննենք անցնող շրջանի մեր գործունէութեան իսկական պատկերը, եւ իրատես աչքերով պիտի առաջնորդուինք յառաջիկայ մեր գործունէութեան մէջ:

Տարակոյս չունինք, որ այս ըմբռնումով պիտի հաւաքուին բոլոր պատգամաւորներն ի Հարթֆրա, կատարելու համար իրենց վստահուած պատասխանատու պաշտօնը:

Թող իւրաքանչիւր մասնաճիւղ մշակէ շինարար ծրագիրներ եւ ներկայացնէ պատգամաւորական ժողովին ի նկատառութիւն: Ասով՝ պիտի կատարենք արդիւնաւոր աշխատանք, տալով մեր հասուն դատողութեան ապացոյցը:

Խոյս տանք ապարդիւն յօգնութիւններէ եւ խնդիրներէ ու մեր ճիգերը կեդրոնացնենք մեր նպատակի իրագործման մէջ:

Մեր ջերմագին բաղձանքները յայտնելով պատգամաւորական ժողովի աշխատանքի արդիւնաւոր պսակումին համար, կը մնանք,

Հրաժեշտի բարեկենդիվ,

Ի Դիմաց Պետական Հայ Կարմիր Խաչի Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան

Ատենադպրուհի

Աննա Թէրզյան

Ատենապետուհի

Աղաւնի Պուճրգանյան

Ֆ. 154, ց. 3, գ. 7, թ. 13-ի շրջ. -14: Բնագիր: Մեքենագիր:

N 17

**ԱՄՆ-Ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՕԳՆԵԼՈՒ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

10 սեպտեմբերի 1928թ.

Նյու Եորք

Յարգելի ընկերուհիներ եւ ընկերներ,

Անշուշտ ստացած էք Ութերորդ Պատգամաւորական ժողովի ատենագրութիւնը, ուր պիտի գտնէք մեր յառաջիկայ գործունէութեան համար որոշումներ, զորս հաւատարմօրէն պէտք է գործագրենք:

Որպէսզի ձեր առջեւ ունենաք ընդհանուր գործունէութեան նախագիծ մը, ստորեւ կը դնենք ձեր կատարելիք աշխատանքները:

1. Ձեր սեփական ուժերուն վստահելով, նուիրել աշխոյժ գործունէութեան, անկախ որեւէ տարրէ կամ կազմակերպութենէ:

2. Այժմէն կազմել 1928-1929 տարեշրջանի գործունէութեան ծրագիրը եւ որոշել ձեր հասութեաբեր եւ հրապարակային ձեռնարկներու թիւը, բնոյթը եւ ժամանակը ու անոր համեմատ վարձել հանդիսասրահներ եւ դաշտավայրեր:

Մօտաւոր վայրերու մեր մասնաճիւղերը կրնան գործակցաբար մեծ ձեռնարկներ սարքել, որոնք թէ տպաւորիչ եւ թէ արդիւնաւոր կրնան լինել:

3. Գործօն եւ օժանդակ անդամներ արձանագրել: Իւրաքանչիւր մասնաճիւղ կարող է որոշել ժամանակ մը յատկացնել անդամագրական աշխատանքի:

Եթէ ամէն անգամ գործօն կամ օժանդակ անդամ մը արձանագրէ, մէկ տարիէն կրկնապատկուած պիտի լինի մեր անդամներու թիւը եւ անդամատուրքերու հասոյթը:

Նոր անդամներ կարելի է արձանագրել ընկերական-համակրական հաւաքոյթներու (social) եւ հրապարակային ձեռնարկներու առթիւ, անհատապէս դիմում

կատարելով:

Տասն անդամներ արձանագրող մը պիտի վարձատրուի ոսկեղէն գեղակերտ մետալով մը, պայմանաւ, որ արձանագրողներու տուրքերը դանձէ:

4. Օրիորդներու խումբեր կազմակերպել, ինչպէս ըրած է նիւ Եորքի մեր մասնաճիւղը:

5. Մանկաբուժարանի հիմնադրամի (fund) լրացումին համար ուժեղ եւ ազդու միջոցներ կիրարկել: Անհատական դիմումով նուիրահաւաքութիւնը լաւագոյն ձեւ մըն է: Շուտով պիտի հաղորդուի ձեր դրամաբաժնի (quota) գումարը:

6. Բրդեղէն զգեստի հաւաքումը ուժեղացնել, ընտրելով յատուկ յանձնախումբ մը կամ պատասխանատու հաւաքիչ մը: Մի հաւաքէք կիսամաշ կօշիկներ:

7. Հասուժաբեր ձեռնարկներ կազմակերպել եւ մեզ հաղորդել ձեր կարգադրութիւնը որ ծանուցանենք «Պայքարի» սիւնակին մէջ:

Halloween-ի (նոյեմբեր 2) եւ Thanksgiving-ի (նոյեմբեր 22) առթիւ, կարող էք դիմակաւոր կամ անդիմակ պարահանդէսներ եւ կամ այլ հաւաքոյթներ սարքել:

Յուսանք յարուցուած խնդիրներու գործադրութեան համար ձեր բոլորանուէր ջանքերը պիտի գործադրէք եւ մեզ պիտի հաղորդէք ձեր որոշմանց եւ գործունէութեան լուրերը:

Ընկերական ողջոյներով, ի դիմաց Պետական Կարմիր Խաչի Ամերիկայի Կենդրոնական Վարչութիւն

Ատենադպրուհի
Ատենապետուհի

Աննա Թէրզյան
Աղաւնի Պուճիգանյան

Ֆ. 154, ց. 3, դ. 7, թ. 12: Բնագիր: Մեքենագիր:

N 18

ԱՄՆ-ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՑ ԻՐԵՆՑ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1 նոյեմբերի 1928թ.
Նյու Յորք

Յարգելի ընկերուհիներ եւ ընկերներ,
Ութերորդ Պատգամաւորական ժողովի քուէարկութեան համաձայն, Կեդր. Վարչութիւնն կազմուելով՝ վերընտրած է նախորդ դիւանը եւ վերահաստատուած է մեր Քարտուղարը:

- Ա. Հայ Կեդրոնական Վարչութեանս կազմը-
- Տիկին Ա. ՂԱԻՆԻ ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ, Ատենապետուհի
- Տիկին Ա. ՆԱԹԷՐՋԵԱՆ, Ատենադպրուհի
- Տիկին ՍԱԹԵՆԻԿ ՍՄՍԱՐԵԱՆ, Գանձապահուհի
- Տիկին ՓԻՔԷ ՄԻՆԱՍԵԱՆ, Փոխ-Ատենապետուհի
- Տիկին ՋԱՊԵԼ ՊՕՅԱՃԵԱՆ, Փոխ-Ատենադպրուհի
- Տիկին ՄԱՐԻ ՍՎԱՋԼԵԱՆ, Խորհրդական
- Տիկին ՀԱՅԿԱՆՈՒՇ ՓՈՒՍԱՆ, Խորհրդական

Սոյն առաջին շրջաբերականներով կողջունենք մեր բոլոր ընկերուհիներն ու ընկերները եւ յատկապէս կը խնդրենք անոնց բոլորանուէր աջակցութիւնը մեր որոշումներու իրականացման եւ մեր նպատակներու անթերի հետապնդման համար: Այս ակնկալութեամբ սեպտեմբեր 10 թուակիր մեր շրջաբերական նամակով տուած ենք ձեր յառաջիկայ գործունէութեան համար նախագիծ մը, որուն համաձայն հարկ է ձեր ուժերն լարել եւ ձեր բոլոր կամեցողութեամբ գործնականացնել զայն:

Հարկ կը համարենք քանի մը տողերով հոս խտացնել յիշատակուած մեր շրջաբերական նամակի կարեւոր կէտերը, որպէսզի մեր հարգո վարչութիւնները հստակօրէն ըմբռնեն իրենց դերը:

1. Ձեր սեփական ուժերուն վրա հաւատք ունենալով, աշխոյժ գործունէութեան լծուիլ:

2. ԾՐԱԳՐԵԼ ձեր առաջիկայ գործունէութիւնը, եթէ տակաւին ըրած չէք: Որոշել ձեր հրապարակային ձեռնարկներու թիւը, բնոյթը ժամանակը եւ անոնց հա-

մեմատ վարձել Հանդիսասրահներ եւ դաշտավայրեր:

Անցնող ամառ մեր մասնաճյուղերէն ոմանք չի կրցին դաշտահանդէս սարքել, որովհետեւ նախապէս ապահոված չէին դաշտավայր մը: Նոյն սխալը կրկնելու չէ առաջիկային:

3. ԲԱԶՄԱ ՊԱՏԿԵԼ մեր անդամներու թիւը, նշանաբան ունենալով՝ թէ իւրաքանչիւր անդամ անպայմանօրէն պիտի արձանագրէ նոր անդամ մը:

4. ՕՐԻՈՐԴՆԵՐՈՒ ԽՈՒՄԵՐ կազմել:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ Մանկաբուժականի շինութեան առթիւ նշանակուած ձեր դրամաբաժինը (quota) լրացնելու համար, անհատական դիմումներով Հանգանակութիւն կատարել եւ մասնաւորապէս նպաստի օրեր (Tag-day) եւ ծաղիկվաճառի օրեր (Flower day) կազմակերպել:

Մանկաբուժարանի շինութեան առթիւ Ձեր դրամավճարն (quota) է \$ գոր գոյացնելու համար արտակարգ ճիգեր կատարելու էք:

6. ԲՐԴԵՂԷՆ զգեստի հաւաքումը ուժեղացնել:

Մի հաւաքէք կիսամաշ կօշիկներ, գործածուած ճերմակեղէններ եւ պատանաւուն զգեստներ:

Զգեստի առաքման հետ մի մոռանաք թէ Կեդրոնական Վարչութեանս եւ թէ մեր միջերանոցի Յանձնախմբի անդամ Տիկ.Փ.Մինասեանի հաղորդել ձեր ուղարկուած զգեստի քանակն ու որակը: Տիկ.Մինասեանի Հասցէն է. 972 Whitlock Ave., Bronx, N.Y.

7. ՀԱՍՈՒԹԱԲԵՐ ձեռնարկներ կազմակերպեցէք, ինչպէս պարահանդէս (գիմակաւոր կամ անդիմակ), ներկայացում, Հանդէս-խնջոյք, Մննդեան եւ Նոր Տարւոյ Հանդէսներ, ընկերական հաւաքոյթներ (social), եւ այլն:

Հասոյթի նկատելի աղբիւրներ են ննջեցեալներու յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղիկեպսակի, եւ նշանախօսութեան, ամուսնութեան ու մկրտութեան առթիւ փոխան ծաղիկեփունջի նուիրատուութիւնները:

Կոչ կընենք անդամներուն եւ վարչութիւններուն, որ յիշուած տխուր եւ ուրախ պարագաներուն մէջ՝ ի մտի ունենան Կարմիր Խաչը եւ արգիւնաւորէն զանոնք ի նպաստ ընկերութեանս նպատակներուն:

Ի տեղեկութիւն կը հաղորդենք՝ թէ ի նպաստ Մանկաբուժարանի շինութեան ստացած ենք Ֆիլատէլֆիոյ մեր մասնաճիւղին միջոցաւ \$50.00 Սիրանուշ Զիթճյանի տխուր մահուան առթիթով:

Նուիրատուներն են Հանգուցելոյն եղբայրն ու քոյրը - Տիրան եւ Սաթենիկ Զիթճեան, որոնց մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք:

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ Խորհրդային Հանրապետութեան ութերորդ տարեդարձին (նոյեմբեր 29) առթիւ, հատկապէս կը հանձնարարենք Հանդէս-խնջոյքներ սարքել եւ տօնախմբութիւններ կատարել:

Վերոյիշեալ խնդիրները ցանկալի լուծման հանգելու համար, կը հրահանգենք մեր մասնաճիւղային վարչութիւնները, որպէսզի օրակարգի վրա դնելով զանոնք, ջանադիր ըլլան անոնց նպաստաւոր լուծման:

Ի մտի ունենալու էք որ հարատեւ ջանքերու առջեւ, կը հարթուին ամէն դժուարութիւններ եւ կը շահուի յաղթանակը: ՈՒրեմն, թող իւրաքանչիւր ընկեր իր աշխատութեան համեմատ բաժինը բերէ, վեր բռնելու համար Հայաստանի Կարմիր Խաչի փրկարար դրօշը, որուն հզօր հովանիին տակ, Հայաստանի գիւղացին ու քաղաքացին պիտի գտնեն իրենց ցաւերուն սփոփանքը:

Արդարեւ, մեծ է Կարմիր Խաչի դերը: Անոր առողջապահական կայանները եւ հիւանդանոցները փրկեցին մեր ժողովրդի ծանրապէս վտանգուած գոյութիւնը: Անոր բացած որբանոցներուն մէջ պատսպարուեցան Հայաստանի անապաստան մանուկները: Անոր հայթայթած զգեստները պաշտպանեցին Հայ գաղթականներու եւ Շիրակի երկրաշարժէն աղէտեալներու կեանքը: Անոր կազմակերպուած «Առաջին Օգնութեան» (First aid) խումբերը անթառամ փառապսակը կը կազմեն անոր շինարար գործունէութեան:

Փառք Հայաստանի Կարմիր Խաչին, եւ Հարգանք անոր անվեհեր գործիչներուն եւ համեստ վաստակաւորներուն:

Հայաստանի Կարմիր Խաչի մշտածաւալ գործունէութիւնը ապահովելու եւ աւելի եւս ուժեղացնելու համար, անհրաժեշտ կը նկատենք մեր անդամներուն կրկինապատկումը եւ մեր համակիր շրջանակներու ընդլայնումը: Ասոնց հետ գուզըն-

թաց, հետամտելու ենք Հասոյթի նորանոր աղբիւրներ գտնել եւ մեր փրօփականոր
օր աւուր գորացնել՝ ամերիկահայ գաղութի մէջ:

Օ~ն, դէպի ի գործ, դէպի աշխատանք...

Վերջացնելէ առաջ մեր խօսքը, կը փափակինք անդրադառնալ այն խնդիրնե-
րուն վրայ, գորս արծարծեցինք այս շրջաբերականի նեղ սահմաններուն մէջ:

Ութերորդ պատգամաւորական ժողովին մէջ, բոլոր պատգամաւորները պատ-
ւոյ խոստում տուին եւ Հանդիսաւորապէս յանձն առին, թէ իրենց բոլոր կարողութե-
ամբ պիտի ջանան ոյժ տալ Հայաստանի մանկաբուժարանի Հանգանակութեան
Հաջողութեան եւ իրենց մասնաճիւղին վրայ դրուած դրամավճարի (quota) գոյաց-
ման: Տարակոյս չունինք, որ ոչ միայն անոնք Հաղորդեցին Ձեզ Մանկաբուժարանի
չինութեան կարեւորութիւնը, այլ նաեւ Հաւատարիմ մնալով իրենց խոստումին,
մեր վարչութեանց հետ գործակցաբար պիտի նպաստեն Հանգանակային շարժման
արդիւնաւորման:

Մանկաբուժարանը, որ պիտի շինուի Հայաստանի բժշկական Համալսարանին
մօտ, պիտի կոչուի Ամերիկայի պետական Հայ Կարմիր Խաչի մանկաբուժարան, որ
Հաւերթական կոթող մը պիտի ըլլա Ամերիկահայ կնոջ քնքույշ զգացումներուն, եւ
գնահատելի նուէր մը՝ ձօնուած Հայաստանի մայրութեան եւ մանկութեան պաշտ-
պանութեան:

Մանկաբուժարանի Հանգանակութեան հետ Համընթաց, լուրջ եւ անդուլ աշ-
խատանք կը պահանջեն նաեւ սովորական գործերն ալ, որոնց անթերի կատարու-
մէն կախուած է այս շրջանակի կենսունակութիւնը եւ մասամբ նաեւ Հայաստանի
Կարմիր Խաչի գործունէութեան արդիւնաւորութիւնը:

Կը խնդրենք որ ուշադրութեամբ հետեւիք Գլխաւոր Վարչութեան նամակնե-
րու արտատպումներուն, եւ ամէն ջանք ի գործ դնէք իրականացնելու անոնց պա-
հանջները:

Մաղթելով Ձեզ ոյժ եւ աշխոյժ, կար եւ կարողութիւն, կը մնանք,

Ընկերական սիրալիր բարեկեանքով,

Ի դիմաց ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՄԵՐ.ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ատենադպրուհի

Աննա Թէրզյան

Ատենապետուհի

Աղաւնի Պուճիգանյան

Ֆ. 154, ց. 3, դ. 7, թ. 10 եւ շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

N 19

ԱՆՎԵՐՍԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 մարտի 1929թ.

Անվերս

Անվերսի փոքրաթիւ Հայ գաղութին Հայ Տիկնանց Միութիւնը որ տարի ի
վեր կազմուած է, իր կանոնագիր- ծրագրի է. Հօդուածով առաջադրած է տարեկան
նուէր մը ուղարկել Հայաստանի Կարմիր Խաչին, իր պիտուծէին ներած չափով:

Այս լրացող տարի շրջանին ծախսերը կանխատեսուած են աւելի ըլլալով.
Վարչութիւնն հարկ դատեց բացառիկ հանդէս մը սարքել ի նպաստ Հայաստանի
Կարմիր Խաչին, եւ շատ ուրախ ենք Հայտարարելով որ անոր Հասոյթը կը թոյլատ-
րէ մեզ, մեր Հոսացածէն աւելի գումար մը, 15,000 Քրանք պէճիական տրամադրել
մեր շատ սիրելի Հայրենիքին այդ օգտաշատ Հաստատութեան :

Ուրեմն ներկայիւս կը խնդրենք որ բարեհաճէք տեղեկացնել մեզ, թէ այդ
գումարը ինչ ձեւի տակ եւ ինչ միջոցով կարող ենք Հասցնել իւր նպատակին:

Հաճեցէք ըսել, թէ ինչ առարկա օգտակար կարող է ըլլալ, բժշկական գոր-
ծի՞ք, կամ դեղօրայք եւ կամ մի այլ առարկա: Պատրաստ ենք վարչութեանդ փափա-
քին գոհացում տալ անմիջապէս, որ ստանանք Ձեր պատասխանը: Կը խնդրենք
նաեւ որ մեզ տեղեկացնէք, թէ ինչ միջոցով կարելի է ուղարկել զայն արագ եւ ապ-
ահով Հասցնելու համար նպատակին:

Այսատեղի Ձեր պատասխանին, հաճեցե՞ք ընդունել Ազնիւ Տիարք, մեր քանի կանխահայտ շնորհակալութիւնները եւ խորին հարգանքները:

Նախագահուհի Մ.Մ.Իբէքճյան
Քարտուղարուհի Մ.Գօվանճյան

Ֆ. 154, ց. 3, դ. 14, թ. 108 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 20

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ՏԻԿԵԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ՀԻՎԱՆԴԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՅԻ ՈՒՂԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
4 մարտի 1930թ.
Փարիզ

Ազն. Տիար,
Յարգելի բժիշկ տիար պ.Քօլօլյան մեզի հանձնեց Ձեր թիւ 441/0221 եւ 21 փետրվարի 1930-ի նամակը, որով կիմացնենք թէ՛ Ամերիկայի Հ.Կ.Խաչի կեդրոնական վարչութիւնը դանդատ հայտնած է Ձեզ, ըսելով թէ՛ մեզմե տակաւին ոեւէ պատասխան չէ ստացած հիւանդատար ինքնաշարժի մասին:

Կը փութանք անմիջապէս յայտնելու թէ՛ իրենց դրած ենք համար 333 եւ 7 հունվր. 1930 եւ համար 334 եւ 8 հունվր. 1930 զոյգ նամակները, որոնց հետ ներփակելով զրկած ենք նաեւ ինքնաշարժի շինութեան հանձնառու տան՝ Citroen-ի հաստատագիր նամակը:

Եւ եթէ ինքնաշարժի աւարտումը եւ հանձնումը հապաղեցաւ, պատճառը՝ մասնաւոր ապսպրանք ըլլալն էր, ինչ որ Serie աշխատանքէն դուրսէ եւ հետեւաբար բացառիկ աշխատանք կը պահանջէ:

Գալով անոր տրամադրուած գումարին, խիստ ապահով տեղ է, այդ մասին կրնաք միամիտ ըլլալ: Այս առթիւ անմիջապէս գրեցիք նաեւ նիւ Եօրքի Հ.Կ.Խաչի կեդրոնական վարչութեան:

Համեցե՞ք ընդունել Տիար բժիշկ, մեր յարգանքներու անկեղծ հաւաստիքը: Ի դիմաց Փարիզի Հայ տիկնանց միութեան Հ.Կ.Խաչի օգնութեան մասնաճիւղի ընդհ. քարտուղար

Գառնիկ Ա.Բարունակյան

Ֆ. 154, ց. 3, դ. 14, թ. 61: Բնագիր: Ձեռագիր:

N 21

ԱՄՆ-Ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ 1930Թ.
ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՑ 1931Թ. ՀՈՒՆԻՍԻ 13-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ* ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՔԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

30 Հունիսի 1931թ.
Նյու-Յորք

Մուտք

Փոխանցուած գումար Մանկաբուժարանի Հիմնադրամէն	2014.94
« » նախորդ շրջանէն	790.86
Անդամատուրքերէ	1690.25
Մուտքի նուէրներէ	43.08
Նուէրներէ	27.65
Ձեռնարկներէ	3285.29
Ի նպաստ Մանկաբուժարանիէ	1153.50
Մանկաբուժարանի Հիմնադրամի տոկոսէն	42.99
Օրացոյցներէ	578.75

* Նմանատիպ մի շարք տեղեկագրեր կան տարբեր տարիների եւ տարբեր ամիսներում ՀՕՄ-ի Հայաստան առաքած օգնութեան մասին:

Հասոյթաբեր աղբիւրներէ	916.48	
Ոսկի զարդակոճակներէ	40.00	
Տոկոս	1.34	
Փոխ տրուած դրամ վերադարձուած	60.00	<u>7839.33</u>
		10645.13

	ԵԼՔ	
Ի հաշիւ Պատգամաւորական ժողովի		187.05
Կեդրոնական գրասենեակի վարձք	300.00	
« » թէյէֆոն	94.55	
« » տպագրական փոսթի, եւն	62.15	
Քարտուղարի	2222.81	2679.51

Գործիչի շաբաթական	1260.00	
Գործիչի ճանապարհածախս	407.42	1667.42

Մասնաճիւղերու համար ծախսուած	515.57	
« » հաւաքական ծախս. -Սիւնակ	298.45	
« Պատգ. ժողովի տեղեկագիր »	52.00	
շրջաբերական եւ տպագրական պիտոյքներ	451.00	1317.12

Մթերանոցի վարձք	240.00	
Մթերանոցի պիտոյքներ	37.80	
Հակերու պատրաստութեան ծախս	239.64	
Անհատներէ ստացուած զգեստներու		
փոխադրողէք	23.85	
Հակերու առաքման ծախս	321.81	863.10

Օրացոյցներու պատրաստութեան ծախս	330.96	
Զանազան ծախսեր	118.09	
Առաքում օթոյի մասեր Մանկաբուժարանի		
հաշուոյն	51.39	
Հայաստանի երկրաշարժի աղէտեալներուն	515.00	
Փէթըրսընի հիւանդ տղուն	25.00	7754.64

ՄԱՆԿԱԲՈՒԺԱՐԱՆԻ ՖՈՆՏԻ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ		
Փոխանցուած նախորդ շրջանէ		2014.94
1930-1931 Հանդաակուած գումարներէ		1196.49
Առաքումներ 1930-1931 - Աղէտեալներու	515.00	3211.43
Օթոյի մասեր	51.39	566.39
		2645.04
Պատրաստ դրամ Կեդրոնական վարչութեան գանձին մէջ		245.45
		<u>2890.49</u>
		10645.13

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Գանձապետուհի՝ Հայկանուշ Տիրատուրեան

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԹԵՐԱՆՈՑԻ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ		
1930-1931 ՏԱՐԻՈՅՆ		
Ստացուած եւ հետեւեալ իրեղէնները		
76 Հակ հագուստ, արժէք	9120.00	
39 Պարկ գործածուած կօշիկ, արժէք	2340.00	
2 Պարկ (175 գոյգ) նոր կօշիկներ, արժէք	350.00	
1 Կարի մեքենա	25.00	
Ընդհանուր արժէք	11835.00	

Ուղարկուած են հետեւեալ իրեղէնները	
76 Հակ Հագուստ, արժէք	9120.00
39 Պարկ գործածուած կօշիկ, արժէք	2340.00
2 Պարկ (175 գոյգ) նոր կօշիկներ, արժէք	350.00
1 Կարի մեքենա	25.00
Ընդհանուր արժէք	11835.00

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ֆ. 154, ց. 3, դ. 18, թ. 1: Տպագրական օրինակ:

№ 22

ԱՄՆ-Ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆՑ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 փետրվարի 1935թ.
Բոսոն

Հարգելի ընկերներ,

Մենք ունինք ապացոյցներ փաստելու, որ ներկա տարեշրջանի աշխատանքները կընթանան աւելի խոստմնալից, աւելի արդիւնաւոր եւ կազմակերպչական ուժեղ պագայով:

Համաձայն ձեր հրահանգներուն եւ վաւերացման կը կազմակերպենք մեր աշխատանքները: Ամփոփ թւագրենք.

1. Հոկտեմբերի 24-ին սկսեալ, գործիչի Հանգամանքով շրջանները ուղարկեր ենք ընկերուհի Տք. Լիւսի Կիւլէզյանը: Առաջին անգամ լինելով, կազմակերպութիւնս Քալիֆորնիո շրջանը գործիչ կողարկէ յանձին Կիւլէզեանի: Հուլիսեր ունինք ակնկալելու, որ այդ շրջանակի մէջ պիտի ունենանք նոր նւաճումներ, դրական հաղթանակներով:

2. Մեր մասնաճիւղերու թիւը բարձրացաւ 63-ի, շատ Հաւանաբար իրականացնենք 65-ի մեր քոթան, բայց կարելորդ մեզ համար, ինչպէս միշտ, լինելու է քանակի հետ միասին որակի ստացումը:

3. Մեր Հաջողութիւնները, բաղդատմամբ անցեալի, 1/3-րդով դերակատարուած են, բայց ընդհանուր առմամբ կարիք ունինք աւելի ուժեղ կազմակերպչական աշխատանքի:

4. Որդեգրած ենք Հանգանակութեան տուփերու գործածութեան սիստեմ մը, որմէ գոյացած գումարները պիտի տրամադրուի միայն Կենտրոնական Կոմիտէիդ անհրաժեշտ ապսպրանքներուն: Պատրաստել տւած ենք 10.000 տուփեր, շարունակաբար ցրելու գաղութահայութեան, օրական մէկ սէնթի նշանաբանով, որու գանձումին Համար մասնաճիւղի պատասխանատու Հանձնախումբը պիտի այցելէ տուները եւ գանձումներու հետ միասին տարած է ՊՀԿԻ-ի պրոպականտան եւ այլն:

5. Տուփերու այդ տեւական սիստեմէն բացի, սկսած ենք, մայիսի մէկէն առաջ վերջացնելու կամքով, Օդանալի Հանգանակութեան քէմբէյնը, տունէ տուն կատարելու Հանգանակութիւն այդ նպատակի համար:

6. Պէտք եղած գումարը Հանձնել ենք Ամթորկին եւ շուտով ճամբա կը Հանենք Փորտ ինքնաշարժի համար պահանջուած մասերը:

Կրտսեաննք կանոնաւորաբար ուղարկուած թերթերը: Ստացանք, նոյնպէս, նոթեր, գրականութիւն, որոնց համար կը հայտնենք մեր սրտագին շնորհակալութիւնները ձեզ, Կենտրոնական Կոմիտէիդ:

Սակայն մենք չենք բաւականանա այդքանով, կողքենք աւելի գրականութիւն եւ կը խնդրենք, որ ձեր խոստումը կատարէք ամենակարճ միջոցով՝ մեզ ուղարկելով շարժանկար մը հետը շինարարական ֆիլմ մը: Այն ժողովրդականութիւնը եւ այն կարելիութիւնները, որ ունի ՊՀԿԻ-ը այստեղ, այո, եթէ դուք լրիւ կերպով ջանաք տեսնել, շուտով մեզ կողարկէք ֆիլմը: Մեր ցանկութիւնը չէ հպարտանալ մեր Հաջողութիւններով, ակնկալել իսկ գովասանք, բայց թէ անխտելի է այն փաստը, որ առանձնապէս կը վկայէ մեր ծաւալումն ու կազմակերպչական ուժը: Չենք ուզեր խօսքով ներկայանալ, այլ միայն գործով: Այդ կը վկայեն մեր գործը,

«Բանևոր»-ի էջերը որպես մանրանկար մասնաճիւղերու գործունէութեան եւ կազմակերպութեան կենսունակութիւնը ոեւէ մարզի մէջ:

Կուզէինք մի վերաւոր կէտ մատնանշել այստեղ, այն, որ երբեմն, թէրեւս անգիտակցաբար, փորձ կը կատարուի թերագնահատել ՊՀԿԽ-ի կազմակերպչական շրջանին կը տանէինք հետեւողական 000 դիժ, բայց ներկան բոլոր տւեալներն ունի ՊՀԿԽ-ի առաջնորդող գիրքին ու անոր մարտական պայքարին:

Գրականութիւնը կըսէ, որ մեր շարքերը, անդամուհիները, աւելի պատրաստուած, գաղափարած ուժը կը ներկայացնեն, աւելի խորը գիտակցութիւն եւ թեքում դէպի Խ.կարգերը քան բանւոր ընկերները:

Երկրորդ, մեր շարքերը ունին գործի սիստեմատիկ գրութիւն եւ տրւած գործի գիտակցական պատասխանատուութիւնը:

ՊՀԿԽ-ն է, որ վերջի տարիներուն, մեր պայքարի ճակատին բերաւ բոլորովին նոր ուժեր եւ մէկ մասը այդ ուժերէն, արձանագրեց ՀԱՄ-ի եւ աւելի առաջացած կազմակերպութիւններու շարքերուն մէջ: Եւ որովհետեւ, այդ շարքերը կը հաշուենք մեզի հետ, պիտի իմանալ, որ չէ կարելի անտեսել ՊՀԿԽ-կազմակերպական ներկա եւ աճող ուժը:

Ոեւէ քէմփէյն առանց ՊՀԿԽ-ի գործակցութեան, պիտի ասել, որ կունենա ողորմելի վախճան:

Այն օրէն, որ ՊՀԿԽ-ը կանգնեցաւ Խ.Հայաստանի եւ պետականութեան ուղիղ գծին ու կոչումին, հետաքրքիր է իմանալ, թէ որ կազմակերպութիւնը կանգնեցաւ «Բանևոր»-ի կողքին, օրինական եւ դրական օժանդակութեան գծով:

Եւ սակայն, ո՞վ կը ճանչնա մեզ Խ.Հայաստանի մէջ եւ ո՞վ մեր մասին մի քանի բառ ըսելու փափաքը կունենա: Վերջին փաստերը չափազանց տխուր են ՊՀԿԽ-ի վարկի եւ անոր գոյութեան համար:

Կարծես, արտասահմանի մէջ ՊՀԿԽ գոյութիւն չունի եւ կարիք ալ չկա խօսելու անոր մասին: Բայց մեր իրականութեան փաստը տարներ է: Դա կսէ, որ ՊՀԿԽ-ը կանգնեց է աշխատանքի եւ պայքարի առաջին գծի վրա, կազմակերպական ամուր ասպարատով օժտուած: ՊՀԿԽ-ն է, որ իրապէս, իր մասնաճիւղերու դրական ջանքերով կստեղծէ դպրոցներու ցանց մը, միաժամանակ առաջացնելով Աշակերտական Միութիւն, ընդգրկելու համար 10-16 տարեկան հասակաւորներ:

ՀՊԿԽ-ը այստեղ միայն օգնութեան կազմակերպութիւն չէ, այլ պայքարի եւ Խ.Հայաստանի պաշտպանութեան համար ստեղծուած կազմակերպութիւն եւ որպէս այդպիսին կը պահանջենք ունենալ մեր տեղը, այդտեղ, Խ.Հայաստանի մէջ, երբ նկատի կառնուին արտասահմանյան կազմակերպութիւնները: Այն, ինչ որ այդտեղ կը գեկուղւի, աւելի կարժէքաւորի գաղութներու մէջ: Եթէ իրապէս կուզէք, որ ՊՀԿԽ-ը օգտագործենք ձեր նպատակներու եւ ձեր հաղթանակի համար, յաւ, պիտի չմոռնաք այդ ընել: Փոխանակ 1000-ի կամ 2-ի, եթէ կուզէի ասպահովել 5000 դոլար, պիտի շեշտել ՊՀԿԽ-ի առաջնութիւնը, գլխաւորութիւնը, կարեւորութիւնն ու օգտագործութիւնը: Կը պահանջենք ունենալ Գիգորի կամ Պեպոյի ֆիլմը: Ողորմութիւն չենք ուղեր, կը ջանանք լիուլի վճարել: Կարմիր Խաչը ուրոյն դաշտ ունի, ուրոյն կազմակերպական մեքենա եւ մեծ ժողովրդականութիւն, լիովին կենսագործելու համար իր առաջադրեալ նպատակները:

Ընկերարար,

Քարտուղար

Ա.Ա.Հարոնյան

Ֆ. 154, ց. 3, գ. 24, թ. 22-23: Բնագիր: Մեքենագիր:

N 23

ԱՄՆ-Ի ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՎԱՐՉՈՒԹԻՅՈՒՆ ԻՐԵՆՑ
ԿԱԶՄԱԿԵՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10 մայիսի 1935թ.

Բոսոն

Հարգելի ընկերներ

Կազմակերպական գործով գնացել էի շրջանները: Մտաւորապէս 5 ամիս է, որ Տք. Լիւսի Կիւլէգեան գործիչի պաշտօնով կայցելէր մտական շրջաններն ու ապա հեռաւոր Քալիֆորնիան:

Առաջին անգամն է, որ մենք կառնենային մեր գործիչը Քալիֆոնիո շրջանի համար: Պիտի հայտնել, որ այդ հեռավոր վայրին մէջ եւս, բաղդատաբար աւելի զօրացաւ ՊՀԿԽ-ի շարժումը, կազմակերպաւ նոր մասնաճիւղեր եւ հիմը դրեցաւ օրանաւի Քէմբէյնի հանգանակութեան:

Լսեով ընկեր Պատրիկ Սելեանի գեկոյցը, որոշեցինք ՀՕԿ-ի հետ միասին, համագործակցաբար վարել օրանաւի հանգանակութեան Քէմբէյնը ի նպատակ իւր հայաստան օգտորմիդին: Մեր սկսած հանգանակութեան առանձին Քէմբէյնը դադարեցուցինք, այդ աշխատանքը միացեալ ուժերով վարելու համար:

Հաւաքած գրամի գործածութեան կերպն ու եղանակը կը մնա Ձեր եւ ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան իրաւասութեան կամ այդ կապուած է այդտեղէն մեր ստանալիք հրահանգին ու անոր գործածութեան: Հանգանակութեան պատասխանատու խառն Հանձնախումբի Կեդրոնը Նիւ-Եորք է, զոյգ կազմակերպութիւններու երեքական ներկայացուցիչներէն ընտրուած:

Քարտուղարի շրջաններն այցելութեան գլխաւոր նպատակն էր բարձրացնել մասնաճիւղերու կազմակերպական ակտիւր, փութացնել անդամատուրքերու գանձումը եւ պլանաւորել ամսագրի բաժանորդագրութիւնը: Կազմակերպուած այցելութիւնը ըստ տեալ պայմաններու արդիւնաւոր եղաւ:

Երկար տաեան է, որ Փորտ օթոմոպիլի մասերու առաքումը հանձնարարուած է Ամթորկին, սակայն ցարդ կարելի չէ եղած այդ առաքումը:

«Շինարար Մարմնի» ամբիւլէնսի առաքման խնդիրը անշուշտ ըստ ձեր հրահանգի կը հետապնդէնք, բայց դրական արդիւնք ակնկալելու չենք:

Կստանանք ձեր ուղարկած թերթերն ու գրքերը: Լրիւ կերպով կը գնահատենք այդ զոհողութիւնը: Նիւթերու առաքումը, ամսագրի համար, հաճեցէք դնել տեւական եւ կանոնաւոր հունի մէջ:

14-րդ համագումարին Կենտրոնական կոմիտէիդ կողմէ՝ ոեւէ շնորհաւորական հեռագիր կամ նամակ չստացանք: Կը խնդրենք, որ այս անգամ մոռացութեան չտաք համագումարին, որ պիտի գումարելի Նիւ-Եորքի մէջ, հուլիսի 5 եւ 6-ին:

Ընկեր Մ.Մ ուրատյան մեր լիազումար նիստին գեկուցեց ձեր աշխատանքներու եւ ընդհանուր առմամբ Կարմիր Խաչի նւաճումներու շուրջ:

Լաւագոյն բարեւներով

ՊՀԿԽ-ի Կեդր. Վարչութեան քարտուղար Բժ.Ա.Ա.Հարոնյան

Ֆ. 154, ց. 3, դ. 24, թ. 98: Բնագիր: Մեքենագիր:

**ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Իսահակյանի թողած Հարուստ վավերագրական ժառանգության մեջ իր ուրույն ու ծանրակշիռ տեղն ունի նրա նամակագրությունը: Նամակները նույնքան կարեւոր սկզբնաղբյուրներ են Վարպետի կենսագրությունը, նրա մտքի տրեզորարանը ընդգրկում են ոչ հոգու հզոր թռիչքը, նրա անթերի գեղագիտական ճաշակն ուսումնասիրելու հարցում, որքան նրա կատարյալ քնարերգությունն ու նույնքան շքեղ արձակը:

Յուրաքանչյուր հանդիպում իսահակյանական մի մասունքի հետ արդեն ինքնին հայտնություն է՝ հոգու հետ մտերմիկ զրույցի բռնվող, մտածելու ու խորհելու տեղիք տվող հայտնություն:

Ընթերցողին ներկայացվող այս նամակները, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում, գրվել են 20-րդ դարի երկրորդ տասնամյակում եւ վկայում են, որ Հայրենիքից հեռու եւ վտարանդի լինելով անգամ Իսահակյանը ոչ միայն չէր կտրել կապը նրա հետ, այլեւ շարունակում էր մնալ իր երկրի ու ժողովրդի դարավոր երազանքի իրականացմանը զինվորագրված նվիրյալներից մեկը, որի համար հարցերի հարցը եղել եւ մնում էր «իր սուրբ հայրենիքին» վերջապես խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի անցած տեսելու փափագը:

Անվարան կարելի է ասել, որ նամակներն այժմ էլ ունեն արդիական հնչողություն եւ շոշափում են հարցեր, որոնք այսօր էլ կենսական նշանակություն ունեն:

Իսահակյանի՝ հայրենիքից հեռու ապրած տարիների նամակագրությունը կարեւորվում է նաեւ նրանով, որ դա է հիմնականում դառնալու նրա գիտական կենսագրությունը շարադրելու հավաստի հենքը:

Նամակներից առաջինը հասցեագրված է ժամանակի Հասարակական գործիչ, հայտնի մանկավարժ Տիգրան Ռազմաճյանին,¹ մյուս երկուսը՝ Պոլսի պատվիրակությունը:²

Նամակները տպագրության նախապատրաստելիս լեզվատճական միջամտություններ չեն կատարվել, որոշ դեպքերում միայն գրվել են անհրաժեշտ կետադրական նշաններ:

Էմմա Հովսեփյան

ՀԱԱ տնօրենի տեղակալ
բանասիրական գիտությունների
թեկնածու

N 1

6 օգոստոսի 1912թ.
Վիեննա

Սիրելի Տիգրան,

Գրում եմ այս նամակը, չգիտեմ ձեռքդ պիտի հասնի, թե ոչ: Ինչպես տեսնում ես, ես հիմա Վիեննա եմ, ավելի քան երկու շաբաթ է՝ այստեղ եմ:

Վերջին անգամ Պոլսից նամակ գրեցի Արշակին³ նյութեր ուղարկելով, հետեն եւ «Դասընկերի»⁴ ուղղած III գիրքը, եւ հասցե տվել էի այստեղ՝ Մխիթարյանների վրա, սակայն եկա եւ ոչ մի նամակ չունեմ Արշակից, չգիտեմ՝ ստացել է ուղարկածներս, թե կորել է. ցավալի է, եթե կորած լինի, բայց չեմ կարծում, որովհետեւ ինչ որ զրկել էի առաջ, հասել էր: Միայն վերջին ամիսներս շատ խառն էր Պոլսի փոստան գնում ու գալիս: Մեկ Դարդանելն էր գոց, մեկ Ռոմելիի երկաթուղիներն էին բոմբերի շնորհիվ քանդվում. վերջապես գոնե միառժամանակով ազատվեցի այդ դժոխսյին պայմաններից, որոնք Թուրքիան են կազմում:

Ափսոս, հազար ափսոս այդ երկիրը, այդ իրոք չքնաղ երկիրը, որ հոգեվարքի մեջն է: Թուրքիան էլ որ քանդվեց, էլ գլուխ գնելու տեղ չենք ունենա. է՛հ, մեր տերն էլ Աստված:

Առայժմ մնալու եմ Վիեննա, սակայն շատ թանկ է ապրուստը այստեղ, կարծում եմ, որ կտեղափոխվեմ Ցյուրիխ, մի փոքրիկ, հանգիստ քաղաք:

Զկարողացա Պոլսում սրտիս ուղածի պես պարապել. քաղաքական անկայուն

գրութիւններ ազգում էր վրաս, եւ կամա-ակամա տարվում էի այդ կյանքով եւ իմ սեփական գործերը մոռանում կամ ավելի վերջին պլանի ձգում:

Որոշել եմ եմբողջաբար ասորել, տեսնեմ՝ ինչ կլինի վերջը: Եթե հնարավոր եղավ Ռուսիա վերադառնալ՝ շատ գեղեցիկ, եթե ոչ՝ մինչ այդ Թուրքիան մի որոշ վիճակ կընդունէ, եւ կարելի է հաստատ նստել այնտեղ: Ապրելու եմ գրական աշխատանքներով. չգիտեմ՝ սովից պիտի ազատվեմ, թե ոչ, բայց ինչ կլինի, թող լինի:

Ինչպես է գնում դասագրքի գործը, ինչ պայմաններով է տպվում, ա՛խ, հնարավոր չեղավ մի լավ զբաղվելի դասագրքով. շուրջ ժողովեցի ուրիշ դասագրքեր, բազում նյութեր, որոնք հետս բերել եմ այստեղ, բայց չկարողացա լավ օգտվել. մի կողմից Պոլսի միջավայրը, այդ պոլիտիկանութիւնները, մյուս կողմից ապրուստ ձեռք բերելու համար հազար բանի ձեռք գարկելը. թարգմանութիւններ, հոդվածներ, այլն այլն:

Այս ընդերս պարապում եմ թարգմանութեամբ եւ նույնիսկ ժամանակ չունեմ հետաքրքիր գրքեր կարդալու, որ վիստում են շուրջս: Ել չեմ խոսում իմ սեփական գրութիւններու մասին:

Նամակս ստանալուն պես պատասխան գրիր, տեսնենք ինչ ենք անում:

Համբուլըներով Ձեր՝ Ա.վ.Իսահակյան

Հասցես. Асטרпуря,
Vien, Redaction de la Revue «Handes Amsoria».

Հանձնել Ա.վ. Պայազատյանին:

Ֆ. 1292, ց. 1, դ. 198, թ. 1-2: Ինքնագիր:

N 2

4 օգոստոսի 1918թ.
Բեռլին

Հարգելի Հայրենակիցներ,

Մոտ քսան օր է ես Բեռլին եմ. գալուս պատճառը երկուսն է. մեկ, որ Ամերիկայի Հայերից մանդատ ունեի՝ դիմելու գերմանական կառավարութեանը՝ խնդրելու նրա աջակցութիւնը Հայերիս համար՝ ինչ գնով էլ որ լինի. երկրորդ՝ պրոպագանդայի հարցի շուրջը:

Գերմանական շրջաններում այն կարծիքն է տարածված, թե նվաստիս դեկավարութեամբ Ձվիցերիայում մղվում է հակագերման պրոպագանդ, սակայն ճշմարտութիւնը այդ չէ, այլ այն, որ ես, որ մի քանի ընկերներով հիմնել ենք «Հայ մամուլի գործակալութիւն»՝ մամուլին ստույգ լուրեր տալու եւ հերքելու ստեղծած, միտումնավոր լուրերը, կանգնած եմ շատ զգուշ տեսակետի վրա. այնպես որ ինձ համարում են նույնիսկ գերմանոֆիլ, իբրեւ վաղուցվա անդամ «Հայագերման ընկերութեան», որ պատերազմի սկզբից գերմանական օրիենտացիա էինք ճանաչում:

Մեր պրոպագանդի շուրջը ծագած թիւրիմացութիւնը ցրելու համար էր, որ եկա այստեղ:

Հուլիսի 27-ին պատիվ ունեցա ներկայանալու արտաքին գործերի նախարարի օգնական Հ. Գյոպտերտին: Խոսակցութեան մեջ հայտնեց, թե ավստրիական կառավարութիւնից հենց հիմա նամակ ստացա, որով պատրաստակամութիւն են հայտնում Հայերին օգնելու: (Օգնութեան ի՞նչ ձեւի մասին՝ չասեց): Իմ հարցին, թե անհրաժեշտ է գորք ուղարկել Հայաստան, նա պատասխանեց, թե մենք մարդու կարիք ունենք, ամեն մի մարդ մեզ պետք է, բայց ավստրիացիք մարդ ունեն, կարող են ուղարկել. տեսնենք, թերեւս, միասին մի բան անենք: Սակայն վաղօրոք պետք է ունենալ ուղևորների համաձայնութիւնը, նրանք արդյոք այդ միջամտութիւնից դժգոհ չեն լինի, քանի որ չեն ճանաչում Ձեր անկախութիւնը: Ես պատասխանեցի, թե մեկ, դուք Վրաստան գորք եք ուղարկել եւ մեզ՝ ոչ, դա արդեն շատ վատ տպավորութիւն է թողնելու Հայ ժողովրդի վրա, եւ որն ավելի, եւ շատ ավելի կարիք ունի, իսկ գալով բուլղերիկներին, ասացի՝ նրանք իրենց չեն կարող օգնել, ուր մնաց մեզ, եւ վերջապես նրանք զբաղված են սոցիալիզմով: Եվ քանի որ Ռուս պետութեանը

յան չքացումից հետո դուք եք կանգնած նրա տեղը, ուրեմն դուք պիտի պաշտպանեք արեւելքի քրիստոնյա, կուլտուրական ազգերը:

Ապա ասաց, թե հույս ունենք, որ հաջողեցնենք հայ գաղթականներին գնալ իրենց հունձերը քաղելու. հնարավոր է այդ: Ես հարցրի՝ վերագառնալ իրենց բնակարանները: Նա պատասխանեց. «Այո՛, իրենց դաշտերը, արտերը»: Ինչպե՞ս հասկանալ:

Հետո դարձավ գլխավոր խնդրին, որի համար ինձ տեսնել էին կամեցել: Ասաց, թե՛ մեր սրտին մոտ է հայ ժողովրդի վիճակը, մենք պիտի անենք, ինչքան որ կարող ենք, չնայելով, որ դուք՝ հայերդ, պրոպագանդ եք արել, եւ անում եք ու ողջ աշխարհը մեր դեմ գրգռում կոտորածների պատճառով:

Ես պատասխանեցի, թե արտասահմանում հայերի կողմից Համաձայնության մամուլում եւ չեզոք մամուլում Գերմանիայի դեմ թշնամական պրոպագանդ չի եղել կամ գրեթե չի եղել. մենք մեծ տարբերություն ենք դնում գերմանացու եւ թուրքի մեջ, եւ, բացի այդ, մեր մեջ կան բավական թվով գերմանոֆիլներ եւ քաղաքականապես հասուն մարդիկ, որ քաղաքական նկատառումներով հարձակումներ չեն արել գերմանացոց դեմ, օրինակ, Պողոս Նուբար փաշան գրել էր մեզ երկու եւ կես տարի առաջ, որ ո՛չ միայն Գերմանիայի դեմ պրոպագանդ չանել, այլեւ թուրք ժողովրդի եւ իսլամի դեմ, այլ միայն ջարդերը հրամայողների:

Սակայն մեզանից անկախ գոյություն ունի ամբողջ աշխարհում ուժեղ պրոպագանդ ավելի Ձեր դեմ, քան թուրքերի՝ հայոց սարսափելի ջարդերի պատասխանատվության մեջ. մենք չենք կարող ազդել ամերիկական - անգլիական - ֆրանս - իտալական մամուլի վրա, օր չի անցնում, որ հայկական ջարդերի մասին չգրվի եւ ձեզ չմեղադրվի. մենք մի բան կարող ենք անել - այն, որ եթե Դուք, որ ամենակարող եք, ճանաչել տաք թուրքին բրեստյան սահմանները, եւ ջարդերը դադարեն, այն ժամանակ մենք կարող ենք մեր կողմից ամեն ջանք գործ դնել ցույց տալով Ձեր դրական աջակցությունը հայ պետություն կազմելու մեջ, ազատելու մեզ վերջնական քայքայումից, եւ դրանով կնպաստեք պրոպագանդայի դադարացման:

Ամենից շատ գայրացած էր, կամ ավելի որոշ ասած՝ վերավորված, որ Բրեստյան դաշնագրից հետո, երբ տեղի ունեցավ Արդահանի ջարդը, մենք՝ ժնեւի հայերս, հեռագրեր ուղարկեցինք Հռոմի Պապին, Իսպանիայի թագավորին եւ սոցիալիստ Բրանդինգին. մանավանդ վերջինին: Պատասխանեցի, ինչ որ պետք էր:

Իմ տպավորությունն այս ամենից, ում որ տեսանք ու խոսեցինք, այն է, որ Գերմանիան ուզում է, ցանկանում է օգնել մեզ եւ ընդունել տալ թուրքերին բրեստյան սահմանագիծը, սակայն դրա իրագործման համար, եթե թուրքերը հակառակեն, չի դիմելու ոչ մի խիստ միջոցի, ոչ թե վախենալով, թե թուրքերի կանցնի թշնամիների կողմը (հաստատ կասեմ, որ Համաձայնությունը չի ընդունի նրան իր ծոցը. պետք չունի. նա ուրիշ հաշիվներ ունի), այլ ուղղակի չուզեցնալով իր 4 տարվա դաշնակցի հետ սառել, վատանալ: Հայերին օգնելու մեջ նա միմիայն մի շահ ունի - մորալ, բարոյական, որը, սակայն, այնքան չի կշռում, դժբախտաբար, քան մարգանեցը կամ նավթը: Բայց այդ նավթը կամ մարգանեցը նրան չտվին ու չեն տա հատուցումը մի չնչին մասի այն հսկա վնասի, որն ստացան հայկական ջարդի պատճառով:

Թերեւս հուսանք, որ նա հաջողեցնե, քանի ուշ չէ, իր դաշնակցին ուղարկել սահմանը: Եթե իրենք չեն ճանաչում Բրեստյան դաշնը, Համաձայնությունը արդեն չի ճանաչում: Համաձայնության պետական մարդկանց կարծիքով, ցնորքներ են Բրեստյան պայմանագիրը. ո՛չ Լուսիան է մեռած եւ ո՛չ թուրքերի վերակենդանացած եւ ո՛չ էլ վերջնական խոսքը ասված է պատերազմի ելքի մասին. դեռ կուվում են, դեռ պիտի կուվեն, նորեն պիտի կուվեն: Հենց մեր վատը այդ կուվի շրջանն է. եթե ազատվեցինք այս անգամ, եւ համեմատաբար քիչ վնասով ոտք դնենք պատերազմի վերջացման օրը՝ փրկված ենք ու շահած ընդմիջտ:

Ինչպես անցնել այս շրջանը. մի ժողովուրդ, փաթաթված թշնամիներով, մեկը մյուսից չար - վրացի, թաթար, թուրք, քուրդ. հոգնած ժողովուրդ՝ բուլշեւիկ դարձած զինվորներով, ինտելիգենտներով, թերթերով, մտայնությամբ այնպես, որ տեղի տվինք քաղցած, մերկ թուրք զինվորների առաջ, եւ 20.000 թուրքերի առաջից 600.000 մարդ սարերն ընկան:

Այս մարդկանց վիճակը, որի մեջ եւ Հայաստանի լինել-չլինելու հարցն է դրած, դա պիտի լուծել. սա է հակաընդդեմը. մյուսը գալու է. եթե ողջ մնացինք, մի-

եւնույնն է, Հայաստան անպատճառ լինելու է. սրա մեջ Համոզված են եւ թուրքերը:

Արտասահմանի թերթերը կարծում են, թե թուրքերը ձգտում են ոչնչացնել եւ ուսահայուցելը, եթե գենքով չկարողանան, ապա պիտի Հաջողացնեն քաղցով, հիվանդութիւններով, ճմուռն գալով: Անշուշտ մենք բոլորս գիտակցում ենք այս ճգնաժամը, եւ պիտի այնպէս տանենք, որ թշնամիները չհասնեն իրենց մուրագին - արշավել, մտնել, ծծվել հարեւան երկրների մեջ - սիրով, ուժով, գենքով:

Ես, որ գալիս եմ Զվիցերիայից, այնտեղ եւ այլուր այն Համոզմունքն է տիրում, որ Հայերը կվարձատրվեն եւ լիապէս կբավարարվեն ապագայում: Ես լավատես եմ եւ հույսով լի. նույնը ցանկանում եմ Ձեզ բոլորիդ Համար:

Հարգանքով Ձեր՝ Ա.վ.Իսահակյան:

Հ.Գ. Խնդրում եմ Հայտնեք պ. Մ. Պապաջանյանին,⁶ որ Հանգ[ուցյալ] Վասակ Վարդանյանի աղջիկը՝ Հայկանուշը, ժնեւ է. մի քիչ հիվանդ է, ջղային. մոտ մի տարի է ընտանիքից ո՛չ լուր ունի, ո՛չ փող. թերեւս մի բան գրե նրան:

Խնդրում եմ, արդյոք մերոնց մասին ի՞նչ գիտեք, արդյոք մնացել են մերոնք Ալեքսանդրապոլ, թե Թիֆլիզ են. կը խնդրեի Հարցներեք Կովկաս այդ մասին: Եվ գրեցեք այդտեղ Համոյին:

Ձեր՝ Ա.վ.Իսահակյան:

Խնդրեմ դարձնել մյուս երեսը -

Դուք գրել էիք Բերնի թուրք դեսպան Ֆուլադ Սելիմի մասին, թե նա Հայ տերիտորիա ստեղծելու համակիր է. այդ զարմանք է պատճառում ինձ. քանի որ նա է Զվիցերիայում Հակահայ պրոպագանդի ոգին. ամեն շաբաթ մի երկու երեսանոց թերթ է հրատարակում միանգամայն ուղղված Հայերի դեմ՝ չքմեղելով ջարդերը եւ սուտ ու փուտ կերպով մեղադրելով Հայերին, պաշտպանելով թուրքերին, թաթարներին, քրդերին, վրացիներին: Նա մի հունգարացու ինտերվյու էր տվել, ուր Հայտնել էր, թե մեր՝ թուրքերի Կովկասը արշավելը հումանիտեր ու մարդասիրական գործ է՝ ազատել ավազակ, արյունարբու Հայերից Կովկասի իսլամ եղբայրներին: Չպետք է Հավատալ թուրքերին: Զվիցերիա գնամ, պիտի տեսնեմ անպատճառ նրան:

Ավելորդ չի տպավորութիւնս ասել Ար.Ջոհրաբովի⁸ մասին. դա Հայ սոցիալ-դեմոկրատների կլիշեն է - պոռոտախոս, ֆրագյոր, իրականութիւնը չհասկացող, անհուն տգետ, ծուլ, անտարբեր մեր աղետի հանդեպ, անբուժելի կերպով վարակված ուսուսական սոցիալիզմի ավերող հիվանդութիւնով: Պետք է աշխատել նրան հեռացնել այս ծանր միսիայից. անպետք մարդ է, եւ շուայուցելու է նրան ունենալը, թանկ է նստում կործանված Հայ ժողովրդի վրա:

Ձեր՝ Ա.վ.Իսահակյան:

Ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 121-124: Ինքնագիր:

N 3

9 օգոստոսի 1918թ.
Բեռլին

Հարգելի Հայրենակիցներ,

Հարցրել էիք Գարոյի⁹ մասին: Շարունակ նամակներ ստանում էի նրանից, թեեւ լավատես է նա շա՛տ եւ գրում է, որ մեծ ակնկալութիւններ եւ աջակցութիւններ ունենք ստանալիք ներկայում եւ ապագայում այն կառավարութիւնից եւ ժողովրդից, որոնց երկրում է նա հիմա, սակայն ինձ հեռագրեց, որ ամեն գնով խնդրենք Գերմանիայի օգնութիւնը թուրքերի Կովկաս արշավելը խանգարելու խնդրում:

Մեր Հարցի ծանրութիւն կենտրոնը, Հոգին ներկա ծանր, աղետներով Հղի վայրկյաններում է թաքնված. թուրքիան անպատճառ պիտի հեռանա բրեստյան

սահմաններում, որ մեր գոյությունը ապահովի վտանգավոր անակնկալներից:

Անգլիան հաստատվում է Պարսկաստանում, թերեւս շուտով հասնի Կովկասի սահմաններին, Համաձայնութեան պետութեանները նոր ճակատ են ստեղծելու Ռուսիայում, բուլղարիկների օրերը համրված են, սակայն ես վախենում եմ շատ, որ այս նոր շրջանը Համաշխարհային պատերազմի նոր սարսափների դուռ բանա մեզ համար. մեր փրկութեանը, իմ կարծիքով, գտնվում է նրա մեջ, որ մենք, որը ամենապակասն է մեր հայրենիքում անգլիացիների եւ գերմանո-թուրքերի միջեւ, կամ եթե չենք գերմանական գրոշակին:

Ինձ թվում է, որ Գերմանիան մեզ չի հավատում, ինչպես հավատում է վրացուն, վախենալով, որ երբ Անգլիան մոտենա Կովկասին, մենք իսկույն անցնենք նրա կողմը, այդ կասկածը փարատելու համար եւ մեր ֆրիզիկական գոյութեանը պաշտպանելու համար մենք պիտի ձգտենք, որ նա մեզ հավատա, մենք փաստեր պիտի տանք այդ հավատը ստեղծելու մեջ. հակառակ դեպքում, երբ նա նկատեց մեր կողմից դավաճանութեան, մենք կորած ենք: Թուրքերը, միացած թաթարների հետ եւ ուրիշների հետ, մեզ կռնչացնեն, մեր ոչնչացումից հետո ինչ օգուտ, երբ հաղթական Անգլիան-Ամերիկան կուզենան Հայաստան ստեղծել մեր գերեզմանի վրա: Երկու ընտրություն չկա, մենք պիտի ջանանք փրկել մեր կյանքը, մնացածը, ինչ որ երազել ենք, սրա կամ նրա կողմից լինելու - ազատ Հայաստանը:

Հայ կառավարութեանը ամեն միջոցներով պիտի ձգտի վստահութեան ներշնչել Գերմանիային. Համակրութեան կամ հակակրութեան ժամանակը չէ:

Դրութեանը նույնն է. Գերմանիան ձգտում է, ուզում է բավարարել մեզ, հարգել տալ Բրեստի դաշնագիրը, սակայն Թուրքիան չի լսում, դիմադրում է:

Մի երկու օր առաջ եղա պրոֆ. Ռիխտերի մոտ. նա հավատացնում էր, որ Գերմանիան շատ մոտ է վերցնում իր սրտին հայերի վիճակը, որ դրեթե անհույս մի կրիզիս է անցկացնում. նա՝ Գերմանիան, չի կարող թողնել, որ մի ամբողջ ազգ ոչնչանա, բայց Թուրքիան խաբեութեամբ ու խորամանկութեամբ արգելքներ է առաջացնում իր բարի կամքին եւ զանազան պատրվակներով իր դաժան ծրագիրը իրագործում:

Այսպես խոսքեր շա՛տ ենք լսել, լսել ենք եւ տարիներ առաջ, լսում ենք եւ հիմա, սակայն միաժամանակ մեր նահատակ ժողովուրդը օր օրի վրա հալվում է այս վիթխարի արյուն-օրդիայի մեջ, որ մեր թշնամիները եւ հարեւանները խաղում են մեր հայրենիքում:

Անպատճառ պիտի Վիեննա գնալ. հույս ունեմ, որ նրանք մի դրական բան անեն: Երբ շուտով Շվեյցարիա գնամ, պիտի նորից դիմում անել Պապին, Սպանիոյի թագավորին եւ այլ չեզոքներին:

Ինչո՞ւ է ուշանում Թուրքահայ Հյուսիսային Հայաստանի ներման հարցը:

Արդյոք կարողացե՞լ եք կամ ուզեցե՞լ եք տեսնել Պուսի Հայ գործիչներին. նրանց միջոցով շա՛տ բան կարելի է անել. նրանք հասկանում են Թուրքերի լեզուն, որը մենք հազար տարի է չկարողացանք հասկանալ եւ այս հավիտենականութեան մեջ նմանը չեղած հասցրինք մեր գլխին:

Բարեւներով Ձեր՝ Ա.վ.Իսահակյան

Ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 146-147: Ինքնագիր:

Ծանոթագրություններ

1. Տիգրան Ռազմաճյան (1862-1946) - մանկավարժ, հասարակական գործիչ: Ծնվել է Ալեքսանդրապոլում, ուսանել է Նիսիումի Գեորգյան ճեմարանում, այնուհետեւ կրթությունը շարունակել Գերմանիայի Լայպցիգի եւ Ենայի համալսարաններում, ուսումնասիրել մանկավարժություն, հոգեբանություն, բնագիտություն: Իբրեւ մանկավարժ աշխատել է Ալեքսանդրապոլում, Երեւանում, Թավրիզում, Բաքվում: Մանկավարժ Արշակ Զիլինկարյանի եւ Ա.վ.Իսահակյանի համագործակցությամբ 1909թ. կազմել եւ հրատարակել է «Դասընկեր» այբբենարան-ընթերցարանը, որը գործածվել է մինչեւ 1921թ., իսկ 1922 թ. արժանացել է ՀՍՍՀ Լուստող-

կոմատի մրցանակին:

2. 1918թ. հունիսի 4-ին Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ կնքված Բաթումի պայմանագիրը Թուրքիան կնքել էր առանց դաշնակից Գերմանիայի եւ Ավստրիայի հետ համաձայնեցնելու: Վերջիններիս պահանջով Կ.Պոլսում հրավիրվում է միջազգային նոր խորհրդաժողով: 1918թ. հունիսի 19-ին Պոլիս է մեկնում Հայկական պատվիրակութունը՝ Ա.Ա.Հարոնյան, Ա.Խատիսյան, Մ.Պապաջանյան, Գ.Ղորղանյան կազմով: Պոլսի պատվիրակութունը մինչեւ նոյեմբեր աշխատում է այնտեղ, մի շարք հանդիպումներ ունենում կառավարութայն երիտթուրք ղեկավարների, օտար երկրների դեսպանների հետ:

3. Արշակ Զիլինկարյան (1864-1917) - մանկավարժ: Ծնվել է Ալեքսանդրապոլում, սովորել է Ջմիածնի Գեորգյան ճեմարանում, կրթութունը շարունակել Գերմանիայի Լայպցիգի, Ենայի, Բեռլինի Համալսարաններում, ուսումնասիրել մանկավարժութուն, հոգեբանութուն, բնագիտութուն: 1886թ. իբրեւ ուսուցիչ պաշտոնավարել է Շուշիի, ապա Երեւանի թեմական դպրոցներում: Եղել է Երեւանի Գայանյան օրիորդաց դպրոցի վերատեսուչ: Բացի «Դասընկեր» դասագրքից, կազմել է նաեւ աշխարհագրութայն դասագրքի («Եվրոպա»), մանուկների համար գրել է պատմվածքներ, տպագրել մանկավարժութայն եւ մանկական հոգեբանութայն մի շարք խնդիրների նվիրված հոդվածներ:

4. Հայաստանի ազգային արխիվում պահպանվում են «Դասընկեր» այբբենարան-ընթերցարանի ուրվագիծը եւ նրա վերաբերյալ Ղազարոս Աղայանի արած դիտողութունները (ՀԱԱ, ֆ.1292, ց.1, գգ.12, 13, 14):

5. Ի նկատի ունի Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի եւ Իտալիայի՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախապատրաստման ու սանձազերծման մեջ մեծ դերակատարում ունեցած Եռյակ միութունը:

6. Միքայել Պապաջանյան (1868-1929) - Հասարակական-քաղաքական գործիչ, 4-րդ Պետական դոմայի, Հայ ազգային պատվիրակութայն անդամ, եղել է ՀՕԿ-ի Փարիզի մասնաճյուղի նախագահ:

7. Համո Օհանջանյան (1873-1947) - քաղաքական, պետական գործիչ, ՀՀԴ կուսակցութայն անդամ: Ավարտել է Լոզանի բժշկական ինստիտուտը, ժնեւում տարել ակտիվ կուսակցական աշխատանք, 1913-15թթ. եղել է Սիբիրի քսորավայրերից մեկում: Հայոց ազգային պատվիրակութայն կազմում 1918թ. եղել է Գերմանիայում, իսկ 1919-ին՝ Փարիզում: 1920թ. սկզբից՝ Հայաստանի Հանրապետութայն արտգործնախարար, ապա նաեւ վարչապետ:

8. Արշակ Զոհրաբյան (1873-1920) - հեղափոխական գործիչ: Ավարտել է Խարկովի տեխնոլոգիական եւ Պետերբուրգի անտառտնտեսութայն ինստիտուտները: Խուսափումի 2-րդ Պետական Դոմայի եւ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութայն անդամ: 1906թ. Թիֆլիսում հրատարակել է Կովկասի սոցիալ-դեմոկրատների օրգան «Հոսանք» թերթը:

9. Արմեն Գարո (Փաստրմաճյան Գարեգին, 1872-1923) - Հասարակական - քաղաքական գործիչ: ՀՀԴ կուսակցութայն անդամ, մասնակցել է Զեյթունի ապստամբութայնն օժանդակելու գործին, ուսանել է ժնեւում եւ ստացել բնագիտութայն ու քիմիայի դոկտորի աստիճան: 1908թ. ընդգրկվել է թուրքական խորհրդարանի կազմում, 1914թ. անցել Կովկաս եւ մասնակցել կամավորական շարժմանը: Կարեւոր դերակատարում է ունեցել «Նեմեսիս» գործողութայն ղեկավարման մեջ:

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻԾ

1914թ. աշնանը Օսմանյան թուրքիայում սկիզբ են առնում եւ 1915թ. գարնանը ահադեանում են արեւմտահայերի գանդվածային ջարդերն ու բռնադադլթը: Արեւմտյան Հայաստանում եւ Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում հայությունը կարողանում է կազմակերպել դիմադրութիւն եւ արժանի հակահարված տալ թուրք եւ քուրդ հրոսակներին:

Առաջին ինքնապաշտպանական կռիւները տեղի են ունենում Վանի վիլայեթում՝ Շատսխում, Փեսանդաշտում եւ այլ վայրերում: Առավել կատաղի եւ անզիջում մարտեր են ընթանում Վան քաղաքի Այգեստան եւ Քաղաքամեջ թաղամասերում: 1915թ. ապրիլի 7-ից մինչեւ մայիսի 4-ը Վանի հայութիւնն անհավասար պաշտպանական կռիւներ է մղում թվով 10 անգամ գերազանցող օսմանյան կանոնավոր բանակի զորամասերի եւ քրդական ջոկատների դեմ: Վանեցիների հաղթանակը պայմանավորված էր ողջ բնակաչութեան եւ նրանց պայքարը ղեկավարող հայ ազգային կուսակցութիւնների միասնականութեամբ, անձնագոհութեամբ, եւ հատկապէս ռուսական զորքի եւ հայկական կամավորական դրուժինաների առաջնադասմամբ:

1915թ. մայիսի 7-ին Կովկասյան բանակի հրամանատարութիւնը Արամ Մանուկյանին նշանակում է Վան-Վասպուրականի ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ): Նրան թույլատրվեց նահանգապետութեան կառավարման ողջ համակարգը կազմել բացառապէս հայերից: Արամն անմիջապէս ենթարկվելու էր Վանի ռուսական կայազորի պետին:¹

Ա.Մանուկյանի անմիջական ղեկավարութեամբ եւ մասնակցութեամբ ձեւավորվում են նահանգային եւ գավառային մարմինները, նշանակվում գավառապետեր, ոստիկանապետեր, դատարանների նախագահներ եւ այլն:²

Նահանգապետութեան առաջնահերթ խնդիրներից էր դատաիրավական համակարգի կազմակերպումը եւ նահանգում օրինականութեան պահպանումն ու ամրապնդումը:

1915թ. մայիսի 8-ին հիմնվեց Վանի քաղաքային ոստիկանութիւնը: Ոստիկանապետ նշանակվեց Վահան Փափաղյանը: Նրա օգնականը (տեղակալը) Ղեւոնդ Խանջյանն էր: Ռուսական բաժնի օգնականն էր Պետրոս Գրիգորյանը, քարտուղարը՝ Հրանտ Կարինյանը, գրագիրը՝ Հովսեփ Բարտաշյանը:

Վան քաղաքը բաժանվեց ոստիկանական հինգ շրջանների եւ բաղկացած էր 12 հեծյալ եւ 60 հետիոտն ոստիկաններից:³ Ոստիկանութեանն էր ենթարկվում բանտը: Բանտապահն էր Կ.Ճանոյանը:⁴

Դատարանը կազմակերպվեց հետեւյալ համակարգով.

1. Շրջանային դատարան, որի նախագահն էր Աղաբեկ Համբարյանը: Դատարանի անդամն էր Եղիշե Քաջունին, դիվանապետը՝ Արսեն Հացագործյանը, քարտուղարը՝ Խաչատուր Գեորգյանը, գործակատարները՝ Մարգար Ազնավուրյանը եւ Բարունակ Դարբինյանը:⁵

2. Հաշտարար դատարան, որի նախագահն էր Ռուբեն Շատվորյանը, քարտուղարները՝ Ենովք Պուրանյանը [Պետրոսյան], Բարսեղ Պապիկյանը եւ Միհրզառ Բրուտյանը:⁶

3. Հարցաքննիչ դատարան, որի նախագահն էր Պողոս Չիթճյանը:⁷

¹ Սահակյան Ռ., Ոստիկանութեան ծառայութեան կազմակերպումը եւ գործունեութիւնը Վանի նահանգապետութեան շրջանում, «Բանբեր Հայաստանի արխիւներ» (այսուհետեւ՝ ԲՀԱ), N 2, 2003, էջ 153:

² Արամի գործունեութեան մասին ավելի մանրամասը տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը եւ գործը (Ազատագրական շարժման եւ անկախ պետականութեան վերականգման ուղիներում), Ե., 2005, էջ 121-161:

³ Նույն տեղում:

⁴ Հայաստանի ազգային արխիւ (այսուհետեւ՝ ՀԱԱ), Ք.242, ց.1, գ.67, թ.1:

⁵ ՀԱԱ, Ք.242, ց.1, գ.58, թ.13:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, թ.13 շրջ.:

4. Ընդհանուր դատախազություն, որը գլխավորում էր Հրանտ Գալիկյանը:¹

5. Գործադիր պաշտոնեություն, որն իրականացրել է դատարանի որոշումները: Գործադիր պաշտոնյան էր Դերջան Սինանյանը, քարտուղարը՝ Գրիգոր Քաջբերունին:

6. Ընդհանուր քննչություն: Ընդհանուր քննիչն էր Կարապետ Այվյանը, քննիչը՝ Իսահակ Տեր-Ղազարյանը, քարտուղարը՝ Պետրոս Աշճիպաշյանը:

Վանի նահանգապետությունը հաշվի առնելով, որ տեղի հայ, ասորի, եզգի, ինչպես նաև քուրդ եւ թուրք բնակչությունը քիչ թե շատ վարժված էին օսմանյան օրենսդրությանը եւ նրա վրա հիմնված դատախազական համակարգին, չգնաց կտրուկ եւ արմատական օրենսդրական փոփոխությունների: Ղեկավարությունը, եւ հատկապես Արամը, հասկանում էին, որ օսմանյան օրենսդրության վերանայումը, կարող էր հանգեցնել իրավական խառնաշփոթի: Ուստի, հրահանգվեց բոլոր մարմիններին, այդ թվում դատախազականին, ժամանակավորապես առաջնորդվել օսմանյան օրենքերով, իհարկե դրանց որոշ դրույթներ վերանայելով եւ հարմարեցնելով ներկա պայմաններին: Հրամայվեց դատախազական համակարգին վերաբերող օրենքները թարգմանել եւ ներկայացնել նահանգապետարանին: Վերջինս պետք է քններ այդ օրենքները, կամ կանոնադրությունները եւ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո, դներ շրջանառության մեջ:

Իրավապահ մարմիններից միայն բանտային վարչությունը չի հաջողվում հայթայթել իր գործունեությունը կարգավորող օսմանյան օրենսգրքը: Դա, սակայն, լրացվում է տեղական ուժերով: Բանտային վարչության կողմից կազմվում են բանտային ժամակավոր կանոնադրություն, որին ծանոթանում են քննիչն ու ոստիկանապետը: Նրանց համապատասխան դիտողություններից եւ լրացումներից հետո, 1915թ. հունիսի 17-ին կանոնադրությունը ներկայացվում է նահանգապետություն:

Ստորեւ հրապարակվող փաստաթղթերում ներկայացնում ենք Վանի նահանգապետության դատախազական հետեւյալ մարմինների՝ ոստիկանության, ընդհանուր քննչության, հարցաքննիչ դատարանի եւ բանտային վարչության ժամանակավոր կանոնադրությունները: Նշված փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում՝ Վանի նահանգապետության գրասենյակի (գիվանի) ֆոնդում (Ֆ.242): Փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ, ուղղագրական եւ կետադրական որոշ շտկումներով, ոճը պահպանելով: Փաստաթղթերի վերնագրումը կատարվել է մեր կողմից:

Ռուբեն Սահակյան
պատմական գիտությունների
թեկնածու

N 1

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉ ԿԱՐԱՊԵՏ
ԱՅՃՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր քննիչի
գիվան
N 2

12 մայիս 1915թ.
Վան

Վսեմ[աշուք] կառավարիչ Վանի շրջանային վարչության
Ընդհանուր քննիչի իրավասությունը ճշտող օրինագրիժը առանց շրջանային վարչությանց պարտականություն սահմանը գծված ըլլալու անկարելի համարված է, առ այդ կը ներկայացվի ընդհանուր եւ օգնական քննիչներու կազմակերպության հատուկ օրինագրիժ մը, հինգ հոդվածե բաղկացալ:

¹ ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.58, թ.13:

² Վասպուրական-Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակի առթիվ, 1915-1930, Վենետիկ-Ս.Ղազար, 1930, էջ 82-83: ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.58, թ.13: Սահակյան Ռ., Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, ԲՀԱ, N 1, 2004, 15-38:

Հետեւաբար, եթե Ձերդ Վսեմության Հավանությանն ալ արժանանա, վավերացվելի եւ դիվանի մեջ արձանագրվելի վերջ, վավերացյալ մեկ պատճենը մեզ հաղորդել [հանձնել] հաճեք:

Վանի շրջանային վարչությանց
Ընդհանուր] քննիչ
Կ[ա]ր[ա]պետ Այճյան

Ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 64: Բնագիր: Ձեռագիր:

N 2

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉ ԿԱՐԱՊԵՏ
ԱՅՃՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Ընդհանուր] քննիչ
Վանի Շրջանային]
Վարչության
N 19/17

2 Հունիս 1915թ.
Վան

Պ[արոն] նահանգապետ

Նահանգապետությանդ հրամանին համաձայն, ընդհանուր] եւ մասնագետ օգնական] քննիչներու իրավասության եւ պարտականության վերաբերյալ օրինագծին մի մասը, 12 մայիս եւ 2 թվահամար պաշտոնագրով մը ներկայացված էք, իսկ ամբողջությունը, որ 25 հոգվածե կը բաղկանա, խմբագրյալ ներկայիս կը մատուցվի:

Եթե որեւէ հոգված լուսաբանելու հարկը տեսնվի, պատրաստ եմ բացատրություններ տալու:

Հետեւապես, հետ քննության, եթե նահանգապետությանդ հավանության արժանանա, առ ի գործադրություն, օրինական ձեւակերպությունը լրացնել տալէ հետո, վավերացյալ պատճեները, շրջանային վարչության պաշտոնատուներու հաղորդել հաճեցեք:

Ընդհանուր] քննիչ
Կ[ա]ր[ա]պետ Այճյան

Ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 63.: Բնագիր: Ձեռագիր:

N 3

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔՆՆՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2 Հունիսի 1915թ.
Վան

Օրինագիծ Շրջանային վարչությանց ընդհանուր] քննության
Մասն Ա. Կազմակերպություն

Հոգված] 1- Ընդհանուր քննիչը կը նտրվի շրջանային կուսակալություններն եւ իր հրահանգները կստանա գրավորապես ուղղակի կուսակալություններն: Ի պահանջել հարկին մասնագետ օգնական] քննիչներ. կուսակալության հաճության եւ վավերացման ենթարկելու պայմանով ընտրելի կըներ կայացվեն ընդհանուր] քննիչի կողմէ:

Հոգված] 2- Ընդհանուր] քննիչը գեթ իրավագետի կաճառե մը վկայալ ըլլալու է, իսկ օգնական] քննիչները եթե վկայալ չըլլան իրենց մասնագիտությունն ու կարողությունը, կուսակալության կողմէ կազմակերպված հատուկ ժողովի մը վկայալ, միեւնույն ատեն բարոյականի տեսակետով՝ անաղարտ, անաչառ, անկողմնակալ, հասարակության համարումը վայելող եւ կուսակալության վստահությանը արժանացող անձնավորություններ պետք է ըլլան:

Հոգված] 3- Օգնական] քննիչները իրենց գործառնությանց համար ուղղա-

կիր ընդհանուր] քննիչին, իսկ ընդհ. քննիչը կուսակալության հանդեպ պատասխանատու կը ճանաչցվեն:

Հոդված 4- Օգնական] քննիչներն որեւէ մեկը, երբ իր պարտականությանը մեջ թերանա, զինք ուղղելու համար ընդհ. քննիչին կողմե Ա. եւ Բ. անգամ գրավոր ազդարարություն ըլլալէ վերջ եթէ կրկնվեն եւ կամ զեղծումներ տեսնվեն, ընդհանուր] քննիչը իրավունք ստացած պիտի ըլլա, թերացող կամ զեղծարար քննիչը առժամաբար [ժամանակավորապես] պաշտոնէ դադրեցնել եւ ըստ արժանավույն պարտ ու պատշաճն տնօրինելու համար հատուկ տեղեկագրով մը անմիջապես կուսակալության տեղեկագրել:

Հոդված 5- Դիվանի երկրորդական պաշտոնյաները կընտրվեն եւ կամ բանավոր պատճառներով պաշտոնանկ կըլլան ուղղակի ընդհանուր] քննիչի կողմե եւ ըստ այնմ արձանագրվելու համար կը տեղեկագրվի կուսակալության դիվանին:

Օրինագիծ
Շրջանային վարչության ընդհանուր] քննիչության
Մասն Բ. Հրահանգ քննության
(Շարունակություն)

Հոդված 7- Ընդհանուր] կամ մասնադես քննիչներու մանրակրկիտ քննության կենթարկվեն՝ շրջանային վարչության, դատական եւ քաղաքային պաշտոնատուների հետեւյալ գործառությունները.

Դատական ճյուղ- խնդրագրերու ներկայացման թվականին եղած գործողությունները, կոչնագրելու եւ վճռագրերու հաղորդվելու ձեւը, դատավարության եղանակը, արձակված վճիռները, խմբագրված նոթագրություններն ու վճռագրերը դատավարության հետաձգման պատճառները, դատավորներու եւ պաշտոնից պաշտոնի շարունակության արձանագրությունը, դատախազի եւ դատախազայի [ամբաստանյալի] հանդեպ ունեցած վերաբերումները, պատժական դատերու մեջ հանցանքի եւ պատժի համեմատությունները, եւ վերջապես, օրենքի եւ հրահանգի մեջ նախատեսված բոլոր տրամադրություններու բաղդատությունն ու գործադրությունը:

Հարցաքննիչ դատ[արան]- Ընդհանուր] դատախազին պատժական խնդիրներու մասին հանձնված պահանջագրին հանձնման թվականեն սկսյալ քննության եւ հարցաքննության պարագաները, ժամանակավոր եւ կամ անպայման բանտարգելության, կամ անբավական համարված ապացոյցներու առթիվ դատավարության արգելման եւ ազատ արձակման մասին տրված վճիռները, ինչպես նաեւ հարցաքննիչ դատավորին ըստ օրենքի իրավասությանը ենթարկված բոլոր գործառությունները:

Ընդհանուր] դատախազություն- Պատժական բողոքագրերու, հարաբերական գրերու, նույնպես բանտարգելության եւ բանտարկության եւ պահանջագրերու արձանագրությունները, հրապարակային գործված ոճիրներու առթիվ եղած քննություններու տեղեկագիրն, ինչպես նաեւ իրավասության սահմանին մեջ կատարած բոլոր գործառությունները:

Գործադիր պաշտոնեություն- Խնդրագրերու, վճռագրերու, շարժական եւ անշարժ ստացվածքներու աճուրդի, վաճառման, գանձման եւ արգելանքի գործողության եւ հասոյթներու արձանագրությունները, ինչպես նաեւ ըստ օրենքի գործադրությունը՝ իրավասության ընթացքով բոլոր գործառություններու:

Նոտարություն- Նոտարին կողմե խմբագրյալ կամ վավերացյալ մուրհակների, պայմանագրերի, փոխանորդագրերի, երաշխավորագրերի, աղերսագրերի եւ հասոյթի արձանագրությունները եւ դատարանի կողմե հանձնված շարժական եւ անշարժ ստացվածքներու արգելանքի եւ հանձման գործողությունները:

Ոստիկանություն- Հանրային անդորրության եւ ապահովության պահպանման վերաբերյալ բոլոր գործառություններն ու կարգադրությունները, պարտականության կիրարկման պարագաներն ու միջոցները, վերջապես ըստ օրենքի ոստիկանության իրավասության ենթարկված բոլոր պարտականությունները:

Քաղաքային ճյուղ- Քաղաքապետություն- Քաղաքի բարեկարգության, լուսավորության, քաղաքապետարանի հատուկ տուրքերու բաշխման, տուրքերու եւ հասոյթներու գանձման եւ սպառման, հասարակության անհրաժեշտ պիտոյքներ-

րու հայթայթման եւ գների գնահատման, հօգուտ քաղաքապետութեան իրերի վաճառման արձանագրութեանը եւ գանազան խնդիրներու առթիւ տրված որոշումները, միեւնոյն ատեն ըստ օրենքի իրավասութեան սահմանին մեջ տեղի ունեցած բոլոր գործառնութեանները:

Տնտեսական ճյուղ- ելեւմտից արձանագրութեանները տնտեսական մարմնի իրավասութեան ենթարկված վարձման, վաճառման, գնման, աճուրդի, հասուլթնե-րու գանձման եւ բաշխման վերաբերյալ գործողութեաններն ու արձանագրութեանները, ինչպէս նաեւ օրինագրի եւ հրահանգներու մեջ նշանակված պարտք եւ իրավունքի իրավասութեան գործադրման եղանակները:

Կրթ[ական], առողջ[ապահական], երկրագործ[ական] եւ գյուղատնտեսական ճյուղեր- նշանակյալ տեսչութեաններու, խմբագրված եւ վավերացված ծրագրերու եւ մասնավոր օրենքի եւ հրահանգներու գործադրման արձանագրութեանները:

Հոդված 8- նշանակյալ քննութեաններու արդյունքը, ինչպէս նաեւ քննչութեան ղեկավարութեաններն ու թելագրութեանները, ընդհանուր] քննիչի միջոցով, տեղեկագրով մը կը մատուցվի նահանգապետութեան:

Հոդված] 9- Քննչութեան ժամանակները կորոշվեն նահանգապետութեան եւ կամ ընդհանուր] քննիչին կողմէ, պաշտոնատուները առանց կանխավ գիտակից [տեղեկացնելու] ընելու:

Հոդված] 10- Պատահական քննութեաններն անմիջապէս կը կատարվեն նահանգապետին մասնավոր հրամանով եւ կամ ընդհանուր] քննիչին հրահանգով:

Հոդված] 11- Վարչային բոլոր պաշտոնատուներն իրենց գործառնութեան-ների տեղեկագրին ամեն ամիս կանոնավորապէս ուղղակի ընդհանուր] քննիչին ղրկելու պարտավոր են:

Հոդված] 12- Ընդհանուր] քննիչն առանց բացառութեան, բոլոր պաշտոնատուներու հետ ուղղակի հարաբերելու իրավունք ունի:

Հոդված] 13- Բոլոր պաշտոնատուներու մեջ պետք է գտնվի քննիչ մարմնի հատուկ, մասնավոր տոմար մը:

Հոդված] 14- Ընդհանուր] քննիչի իրավասութեանը ենթարկված է նաեւ օրինաց եւ հրահանգներու կետ առ կետ գործադրութեան հսկողութեանը, հետեւաբար ընդհանուր] քննիչը ամեն պաշտոնատուներու օրինական թելագրութեաններ ու ազդարարութեաններ ընելու արտոնյալ է:

Հոդված] 15- Քննչութեան ատեն, եթէ օրինաց եւ հրահանգի հակառակ եւ իրար հակասող որոշումներ եւ արձանագրութեաններ տեսնվեն կամ թերութեաններ եւ պաշտոնի կիրարկման զանցառութեաններ նշմարվեն, կարեւոր բացատրութեանները լսելի վերջ, քննիչ պաշտոնյայի կողմէ բերանացի գիտողութեաններ ու թելագրութեաններ ըլլալէ վատ, որոշ ժամանակի մը մեջ թերութեանները ուղղելու, զանցառութեանն զգուշանալու, ինչպէս նաեւ օրինաց բաղդատութեան ուղղութեան հրավիրելու թելագրութեանները մասնավոր տոմարի մեջ արձանագրելէ հետո, քննիչն եւ պատասխանատու պաշտոնյայի կողմէ կատարագրվի:

Հոդված] 16- Ընդհանուր] քննիչը իր պաշտոնին վերաբերյալ բողոքագրեր ընդունելու իրավունք ունի:

Հոդված] 17- Խնդրարկուները, որ աստիճան եւ դասակարգի ալ պատկանեն, պաշտոնեութեանը պարտավոր է քաղաքավարութեամբ, հավասար վերաբերում մը ունենալ ամենուն հանդէպ, հակառակ վարմունք ցույց տվող պաշտոնյաներն ուղղելու համար ընդհանուր] քննիչին կողմէ առաջին անգամ ազդարարագիր մը կը հաղորդվի, կրկնված պարագային՝ մեկ ամսականին մեկ չորրորդ մասը կը կտրվի, իսկ շարունակութեան ատեն, եթէ երկրորդական պաշտոնեութեան կարգին կը պատկանի, ընդհանուր] քննիչն իրավունք ստացած կըլլա գայն պաշտոնանկ ընելու եւ հաջորդը նշանակելու համար գրել պատկանյալ մարմին, իսկ եթէ առաջնակարգ պաշտոնեութեան կարգին պատկանի, այն պարագային, մասնավոր գրութեամբ մը նահանգապետութեան ուղղութեան կը հանձնվի:

Հոդված] 18- Եթէ պաշտոնյաներու գործառնութեանց մեջ փաստացի զեղծումներ տեսնվեն, զեղծարար պաշտոնյան ընդհանուր] քննիչի կողմէ առժամապէս պաշտոն դադարեցնելէ եւ ապացոյցները մասնավոր տեղեկագրով մը անմիջապէս նահանգապետութեան մատուցանելէ վերջ, եթէ նահանգապետն ալ նույն արարքի գոյութեան մասին համոզում գոյացնէ, տրված հրահանգի համաձայն դատարարութեանը կատարելու համար պատկանյալ դատարանին կը հանձնվի:

Հող[ված] 19- Որեւէ պաշտոնյայի մը կողմե, ուրիշ պաշտոնատան մը իրավասութեան, որոշումներու եւ գործառնութեաններու մեջ միջամտութեան եւ ոտնձգութեան տեսնվի եւ կամ այս առթիւ դիտողագիր մը տրվի, անմիջապէս քննութեան ենթարկելով, եթէ իրավացի ըլլալը հաստատվի, այն պարագային պաշտոնյային իր իրավասութեան սահմանին մեջ գտնվելու համար, ընդհանուր քննիչի կողմե գրավոր ազդարարութեան մը կը հաղորդվի, իսկ երբ ազդարարութեան վրա չգաղարի միջամտել, մասնավոր գրութեամբ մը նահանգապետութեան ուղարկութեան հանձնելով, հաղորդված հրահանգի համաձայն պարտ ու պատշաճ կը տնօրինվի ընդհանուր քննիչի միջոցով:

Հող[ված] 20- Եթէ խնդրարկուներու կողմե մասնավոր դատի մը դատավարութեան եւ այլ պաշտոնատան մեջ մասնավոր կամ հանրային խնդիրներու խորհրդակցութեան ատեն ընդհանուր քննիչին կամ մասնագետ քննիչներու ներկայութեան տակ պահանջվի եւ ընդհանուր քննիչը պահանջման պատճառները բանավոր համարվի, ըստ այնմ կը հանձնարարվի պատկանյալ պաշտոնատուն, դատավարութեան եւ խորհրդակցութեան ժամանակը ծանուցանելու, ներկա գտնվելու համար:

Հող[ված] 21- Ընդհանուր քննիչը եւ մասնագետ քննիչները, առանց կարծիք հայտնելու իրավասութեանը ունենալու, ազատ են դատավարութեան եւ խորհրդակցութեան ներկա գտնվել բոլոր պաշտոնատան գործառնութեաններին ժամանակ:

Հող[ված] 22- Դատական կամ քաղաքային պաշտոնյայները պետք է ըլլան ուշիմ, ուղղամիտ, վստահելի, ծանրաբարո, հաստատամիտ եւ իրենց ճշուդին հատուկ օրինաց հմուտ, հետեւաբար քննութեան ատեն սոյն հանգամանքներն ալ նկատի առնելով, տեղեկագրին մեջ կը նշանակվեն:

Հող[ված] 23- Բանտերու քննութեան ատեն, նկատի կառնվեն առողջապահական պայմաններու գործադրութեանը, բանտերու եւ բանտարկյալներու վիճակն ու կացութիւնները, բանտարկյալներու զբաղումները եւ բանտարգելութեան պատճառներն ու միջոցները, պաշտոնից՝ բանտարկյալներու հանդէպ վարմունքները, ինչպէս նաեւ սնունդի պայմանները, եթէ օրինաց եւ հրահանգներու հակառակ արարքներ տեսնվեն, անմիջապէս պատկանյալ պաշտոնատան կը տեղեկագրվի, իսկ եթէ ապօրինի բանտարգելութեաններ տեղի ունեցած ըլլան, բանտարկյալները օրինաց տրամադրութեան ենթարկվելու համար ընդհանուր դատախազութեան կը ծանուցվի:

Հող[ված] 24- Փաստաբաններու արարքներու դեմ, եթէ բողոքներ գտնվեն օրինավորապէս կազմակերպյալ փաստաբանական կաճառին եւ եթէ կաճառը գոյութեան չունենա, այն ատեն նահանգապետին ուղարկութեան կը հրավիրվի:

Հող[ված] 25- Քննութեան տեղութեան ժամանակ քննիչութեան հարկ եղած դրուութեանները տալու եւ օժանդակելու բոլոր պաշտոնյայները պարտավոր են:

Քսանհինգ Հողվածե բաղկացյալ սույն օրինագծի տրամադրութեաններին գործադրութեանը կը հանձնվի ընդհանուր քննիչին:

Սույն օրինագիծը, առ ի քննութեան եւ վավերացում, կը մատուցվի պ[արոն] նահանգապետին:

Ընդհանուր քննիչ

Կ[ա]ր[ա]պետ Այճյան

Ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 63-70: Բնագիր: Ձեռագիր:

N 4

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԵՐ

25 հունիսի 1915թ.

Վան

Հող[ված] 1- Ոստիկանը հանրային ապահովութեան եւ խաղաղութեան շարունակուած ապահովող եւ մարդկանց կյանք, ինչք եւ պատիվը պահպանող եւ հանրային հանգստութեանը ամբողջացնելու պարտականութեամբ օժտված պաշտոնյայն է:

Հող[ված] 2- Ոստիկանի ընդհանուր պարտականութեանն վարչային եւ արդարադատութեան ոստիկանութեան անուններով երկուքի կը բաժանվի:

Հող[ված] 3- Վարչային ոստիկանութեան տրված կանոններ եւ օրենքներ,

օրենքի տակ գրված որոշումներ պետութեան եւ կառավարութեան հրամաններ ու պատվերներ եւ քաղաքապետութեան հակառակ վիճակներուն եւ ամեն տեսակ ոճիրներուն կատարման արգելք ըլլալով, հանրային ապահովութիւնն ու հանգստութիւնն ձեռք բերելու համար միջոցներ ստեղծելու է: Այս ալ վարչական եւ քաղաքապետական անուններով երկուքի կը բաժանվի:

Հոդ[ված] 4- Արդարադատութեան ոստիկանութիւնը] ընդհանրապես ոճիրներ հետապնդելու, ոճրագործներ ձերբակալելու, պետք եղած քննութիւններ կատարելով թողութիւն ի միասին ընդհանուր] դատախազութեան հանձնելու եւ հասարակ ու քաղաքական ոճիրներու վերաբերյալ կարգապահական հատուկ միջոցներ ընտրելու է: Քաղաքական եւ իրավական անունով երկուքի կը բաժանվի:

**Վարձատրութիւնն եւ պատիժ
պաշտոնեից վարձատրութիւնն**

Հոդ[ված] 5- Ոստիկանական կարգին վերաբերող պաշտոնյաներ, թե երկրի ապահովութեան եւ թե անհատներու կյանքի, ինչքի եւ պատվի պահպանման վերաբերող գնահատելի ծառայութիւններ տեսնված եւ մասնավորապես այս տեսակ խնդիրներու մեջ կյանք վտանգի տակ դնելու չափ անձնագոհութեան եւ պարտաճանաչութեան ընթացք մեջ տեսնելու պարագային, ծառայութեան աստիճանին համեմատ իրենց կանխիկ վարձատրութիւնն կը լինի: Կանխիկ վարձատրութեան չափը պաշտոնյայի քառորդ ամսականն մինչեւ երկու ամսականի քանակութիւնն կրնա ըլլալ:

Հոդ[ված] 6- Պետութեան, հայրենիքին եւ ժողովրդեան անհատներին արտաքին կարգի կարեւոր գործ մը տեղի ունենալ լսելով արգելելու միջոցներ հայթայթել եւ իրական վտանգի մը փարատելուն հաջողող պաշտոնյային արտաքին կարգի վարձատրութիւնն ըլլալով, մինչեւ մեկ տարվա ուժիկի քանակութեան չափ կանխիկ վարձատրութիւնն լինելու է:

Հոդ[ված] 7- Սովորաբար եւ բացասաբար երկու անգամ կանխիկ վարձատրութեան արժանացող եւ երկու տարիէն ավելի պաշտոն վարած եւ կենսագրութեան պակաս եղող ոստիկանական պաշտոնյաների ամսականին քառորդէն մինչեւ կենսագրութիւնն հավելում կրնա ըլլալ:

Հոդ[ված] 8- Պաշտոնյաների գովելի ընթացքը, ջանքն ու աշխատութիւնն [աշխատասիրութիւնը] տեսնված պարագային գերադասի կողմէն գնահատման ու գոհունակութեան գիր տրվելու է:

Կանխիկ վարձատրութիւնն, ոստիկանապետութեան կողմէ կատարած նահանգապետութեան դիմումին վրա, նահանգապետի հրամանով տրվելու է:

Ոստիկանների քննութիւնն, դատավարութիւնն ու պատիժ

Հոդ[ված] 9- Ոստիկան, օգնական շրջանապետ եւ շրջանապետներէն մեկին պատժի արժանի ընթացքը գերադաս պաշտոնյայի կողմէ անձամբ եթէ տեսնվի, նույն ընթացքի մասին, այդ գերադաս պաշտոնյային տեղեկագիր մը շինելու է, իսկ եթէ ուրիշներու կողմէ տրված տեղեկութեանց վրա կը լսվի, նախնական գրավոր քննութիւններ կատարելով՝ հանցանքների փաստեր, ապացույցներ հավաքելու է եւ ամբաստանյալ պաշտոնյային ալ գրավորապես պաշտպանողականը լսելու է, քննութեանց եզրակացութիւնը հանելով, ոստիկանապետական ժողովին տրվելու է տնօրինութիւնն:

Հոդ[ված] 10- Պաշտոնյային վերագրված գործը եթէ ապահովութիւնն խանգարող կամ յուր դասակարգի համար անպատվութիւնն առաջ բերող հանցանքներ են եւ փաստերն ալ այդ պաշտոնյային շուտով գործ է ձեռնթափ ընելու, պետք է ցուցնեն, տեսչութեան կողմէն գործը իսկույն դադարեցնելով, վերի հոդվածի համաձայն քննութիւնը շարունակելու է:

Հոդ[ված] 11- Այդ քննութիւններ կատարող ոստիկանապետական ժողովը կը բաղկանա օգնական ոստիկանապետէն եւ երկու շրջանապետներէն, եւ ի պահանջել հարկիս ոստիկանատան քարտուղարներէն քարտուղար մը, որոնց որոշում միմիայն մեծամասնութեամբ լինելու պարագային հայտնելու է:

Հոդ[ված] 12- Ոստիկանապետական ժողովի որոշումը ոստիկանապետութեան հաղորդելով, վավերացնելու է, միայն թե պաշտոնանկութեան պարագային նահանգապետին հավանութիւնն ալ ըլլալու է:

Հող[ված] 13- Ոստիկանապետական ժողովի որոշումները վերաքննությունն եւ վճռաբեկությունն գերծ է:

Պատիժ

Հող[ված] 14- Պատժի տեսակներ՝ պաշտոնանկություն, աստիճանի նվազում, ամսական գեղջում, Հանդիմանություն եւ պատվեր ըլլալով՝ Հինգ մասի կը բաժնվի:

Հող[ված] 15- Ընդհանրապես, եղեռնագործներ եւ դատարանով վեց ամսվան եւ կամ ավելի բանտարկության դատապարտվածներ եւ մասնավորապես գողություն, կեղծարարություն (սաղթաքարլըք), խաբեբայություն (տօլանտըր ջիլիք), անբարոյականություն, կաշառակերություն, լսած կառավարական գաղտնի[ք]ներ հրապարակելու, ասոր անոր զրպարտելու եւ օրինական իրավասություններ ի քեն չարաչար գործողներուն, հետո գինովնալով հրապարակավ պոռալ ու կանչել, իյնալ ու առանց պատճառի գենք պարպել եւ գերադաս պաշտոնյայի տված օրինական հրամանները չգործադրելով կառավարության վնասներ առաջ բերելու պես ընթացք եթէ տեսնվի, տեղի ունեցած փաստացի քննություններով պաշտոնանկ կը լինի:

Հող[ված] 16- Ոստիկանական պաշտոնյաներ իրենց գտնված աստիճանին մեջ պաշտոնական պարտականություններ կատարելու միջոցին, իրենց անկարողությունը հաստատված միջոցին աստիճանի նվազում, իսկ ոստիկաններ պաշտոնանկ կըլլան:

Հող[ված] 17- Ոստիկանատան մեջ եւ կամ դետ[պարեկ] եղած պարագային եւ շրջան պահակությամբ զբաղված ատեն ոգելից ըմպելիներ գործածած ըլլալը հասկացվող ոստիկան պաշտոնանկ կը լինի:

Հող[ված] 18- Նախորդ Հողվածի մեջ Հիշված պարագաներու մեջն ալ, եթէ չըլլա, միայն պաշտոնական հագուստով հրապարակային մի տեղ, գինետան կամ կազինոյի մեջ արբեցող ոստիկաններին երկուական տարի պաշտոնի նախապատվության նվազում եւ օգնական ու շրջանապետներին աստիճանների նվազում կըլլա, այս պարագային կրկնության միջոցին, պաշտոնանկ կըլլան:

Հող[ված] 19- Արտոնված չեղող ժամանակ ոչ պաշտոնական հագուստով հրապարակավ արբեցող պաշտոնյային առաջին անգամով պատվերով միասին Հինգ օրական [կալանք] կը տրվի, երկրորդ անգամ համարձակվողին, նախորդ Հողվածի մեջ Հիշված պատիժը եւ երրորդին՝ ուղղակի պաշտոնանկ կ'լլա:

Հող[ված] 20- Պաշտոնական հագուստներ հագած լինելով Հանդերձ, իր պաշտոնին անհամապատասխան տեղեր պտտող ու նստող, պաշտոնական քաղաքավարության հակառակ շարժումներ ցուցնող, իրենց գերադասի կողմեն տրված պատվերներուն չհարգել ու չորագլխություն ընող, պաշտոնական գործողությանց համար իրենց գերադասներին ժամանակին տեղեկություն չտվող, իր պաշտոնական գործողությանց մեջ ծուլություն ցուցնող եւ իր ընկերներին ու խնդրատուների հանդեպ զուր տեղ պաղ հարաբերություն եւ գործողություն ընելու համարձակող պաշտոնյաներին, առաջին անգամով պատվեր կը տրվի, կրկնված պարագային ամսականի կտրվելու պատիժին կենթարկվի, եւ եթէ այս տեսակ նիստ ու կաց շարունակվի եւ բարեփոխումից հույս կտրվի, այն ատեն պաշտոնանկ կը լինի:

Հող[ված] 21- Իր գերադասի հրամանն ու տեղեկություն չեղած պարագային, իր տեղը ու պարտականությունն եւ առանց իր հաջորդին հանձնելու պաշտոն ունեցող գետի տեղը ձգող պաշտոնյան պաշտոնանկ կըլլա:

Հող[ված] 22- Իր շաբաթական արտոնության ժամը անցուցողին առաջին անգամին մեկ օրական եւ անցուցածը մեկ օրեն եթէ ավելի է, մինչեւ երեք օր լինելու պայմանով, յուրաքանչյուր օրվան համար մեկ-մեկ օրական կը կտրվեն, կրկնության պարագային օրականը կտրելու պատիժը կավելացվի միմիայն, եթէ երբեք այս պարագան շարունակվելով, բարեփոխությունն հույս կտրելու լինի եւ թեկուզ մի անգամ լինի, երեք օրից իր պաշտոնեն բացակայած եղողը պաշտոնանկ կըլլա:

Հող[ված] 23- Արտոնված ժամանակամիջոց առանց բանավոր պատճառի անցնելով իրենց պաշտոնի գլուխ չվերադարձողներ, արտոնություն լրացած օրից հրատարակածի աչքով կը նայվեն, իրենց անցուցած ժամանակի բանավոր պատճառը եւ անհրաժեշտ կարիքին հենված պաշտոնաթղթերով ու պատվավոր ապահովագրերով հաստատող եղողներին բացակայած ժամանակամիջոցը իրենց արտոնության վրա կավելացվի:

Հող[ված] 24- Առանց արտոնված լինելու միջոցներին, թե պաշտոնական եւ

Թե ոչ պաշտոնական հաղուստով հանրատուներ երթալով անբարոյականուհիների հետ հարաբերվողները պաշտոնանկ կըլլան:

Հոդված] 25- Իր տնտեսական կարողութուններն ավելի ծախսերը հանձն առնելով, սրանից [կամ] նրանից իբրեւ փոխ դրամ ճարելով չը վճարողներ եւ նույնիսկ անհատական իրավունքն ալ հաշվի ուրիշ իրավունքին բացորոշապէս ոտնձգութիւն ընելը, իրավունքը ստանալ կամ իրավունք մը չարաչար գործածելու հանձն առած պարագաները կամովի գործադրող պաշտոնյաներ պատվերով միասին իր ընթացքի շտկելը կը հրամայվի: Խելացի մեկ պաշտպանողական չցուցնելով մեկտեղ, իր ընթացքը չշտկելով, եթէ պնդելու լինի՝ պաշտոնանկ կըլլա:

Ոստիկանական ներքին կանոնադիրը

Հոդված] 26- Ոստիկանատուն: Բոլոր գործի տերերուն դիմելու, պաշտոնական գործողութիւններ կատարելու եւ ոստիկաններու բնակութեան հատկացված եղող շէնքը ոստիկանատուն կը կոչվի:

Հոդված] 27- Ոստիկանատուներ եւ պարտականութիւններ: Ոստիկանի խաղաղութիւն ապահովելու պաշտոնյա եղած տեղերը քաղաքի բնակչութեան մեծութեան համեմատ մեկ կամ բազմաթիւ ոստիկանատուներ կը գտնվեն: Յուրաքանչյուր ոստիկանատուն, յուր դիրքի կարեւորութեան աստիճանի համեմատ շրջանապատներ եւ կամ օգնական շրջանապատներ կառավարելու են:

Հոդված] 28- Ոստիկանատան մը մեջ պարբերաբար երկուքը ոստիկանատան պահակութեան, չորսը շրջան պահակութեան եւ օրական մեկ շաբաթային արձակուրդի համար ըլլալով առնվազն յոթը ոստիկան եւ մեկ շրջանապետ կը բաղկանան, այնուամենայնիւ, ոստիկանատան շրջանի ընդարձակութեան եւ կարեւորութեան համեմատ ոստիկաններ կրնան ավելացվել, ինչպէս նաեւ ոստիկանատան շրջանակի մեջ տեղական կարգի պահանջին համաձայն մեկ կամ ավելի դետեր լինելու են:

Հոդված] 29- Հեծյալների ոստիկանատուն: Ոստիկանատան մը, երբ հեծյալ ոստիկաններ բաղկացած է, նույն ոստիկանատան հեծյալ շրջանապետ կամ օգնական շրջանապետ կառավարելու է:

Հոդված] 30- Ոստիկաններ եւ օգնական շրջանապետներ ոստիկանատան մեջ պառկելու պարտավոր են, իսկ շրջանապետներ ոստիկանատան մեջ պառկելի աշխատեն ազատ են, երբ իրենց տուններ նույն շրջանին մեջ կը գտնվեն: Ոստիկան, օգնական] շրջանապետներ եւ շրջանապետներ շաբաթվան մեջ միայն 24 ժամ ազատ են:

Հոդված] 31- Շրջանապետներ, ոստիկանատան շրջանի խաղաղութեան [կարգուկանոնին] հետ մեկտեղ պատասխանատու ըլլալով, ամեն տեսակ ոճրագործութեան պատահած պարագային իսկույն յուր գերադաս պաշտոնյային եւ ընդհանուր դատախազին իմացնելով մեկտեղ, քննութեան ու հետապնդման պարտավոր է, ինչպէս նաեւ ոճրագործին ձերբակալման միջոցները խորհելով ձեռք բերելու է:

Հոդված] 32- Շրջանապետներ իրենց ոստիկանական ներկա կազմին բարեխճորեն պարտականութիւններ կատարելու մասին ամեն բոլոր քննութիւն կատարելու են եւ շաբաթ օրեր ենթակա պաշտոնից զենքեր ու հաղուստներ եւ ոստիկանատան պատկանող ապրանքներ աչքե անցուցելով, տեղեկագրերը իրենց գերադաս պաշտոնյաներին տալու են:

Հոդված] 33- Ոստիկաններ, ոստիկանատան մաքրութեան ամեն կերպով հոգատար լինելու են, շրջանապետներ շարունակ հսկող աչքով նայելու են:

Հոդված] 34- Ոստիկանատանց մեջ կատարվելիք պարտականութեան բաժանում եւ եղած տոմարների արձանագրութեանց եւ պահպանման հսկողութեան շրջանապետներ պարտավոր են ոստիկանատանց մեջ մեկ-մեկ քարտուղար ունենալու: Տոմարներու ամեն մեկ երես նոմերներ նշանակելով՝ քանի երես բաղկացած ըլլալ տոմարի վերջ տեսչութեան պաշտոնական կնիքով վավերացնելու է:

Հոդված] 35- Ամեն ոստիկանատան մեջ նախորդեն հաջորդին օրինապէս փոխանցելու պայմանով, իսկական ապրանքներու տոմար մը լինելով մեկ օրինակ տեսչութեան տրվելու է, իսկական ապրանքների կորսված եւ վնասված պարագային շրջանապետ թեեւ պատասխանատու է, այնուամենայնիւ, անհոգութիւն հաստատված ոստիկանատան պահակը տուժելու է, իսկ հինցած ու անգործութեան վիճակի մեջ եղած իրեղեններ տեսչութեան խրկելու [ուղարկելու] են:

Հող[ված]36- Ոստիկանատան պահակը յուր պահակությունն շարունակած ժամակամիջոցին մեջ ոստիկանատուն կարգապահության, մաքրության եւ հսկողության տակ գտնված անձերու փոխարեն պատասխանատու են:

Հող[ված] 37- Ոստիկանատան պահակը յուր պարտականության ժամանակամիջոցին քննության համար ոստիկանատուն այցելող գերադասին հանդեպ պաշտոնական բարեւ տալիս հետո, յուր պարտականության եւ ոստիկանական կազմին նույն ժամին կատարելիք պարտականության ինչ ըլլալու մասին տեղեկություն տալու է: Վառելիքի եւ ուրիշ պետքերու գործածությանց, շրջանապետներ կամ իրենց մե կարգված փոխանորդ պաշտոնյաներ պատասխանատու են:

Ոստիկանության դիրքը եւ անոր վերաբերյալ պարտականությունները

Հող[ված] 38- Ոստիկան իր գերադասի ներկայության եւ պահանջված պարագաներին պաշտոնական դիրք ստանալու է, այսինքն՝ ուղիղ կեցվածք, ոտքերի սրունքներ իրարու կից եւ ծայրեր մեկ ոտնաչափ իրարից բաց, կուրծքը դուրս, գլուխ ուղիղ, թեւերը կախ, մատները փակ, արմուկներ թեթեւապես դեպի առաջ նետված եւ նայվածքը համարձակ ըլլալու է:

Հող[ված] 39- Ոստիկան դետ [պարեկ] գտնված ատեն պատի, ծառի եւ կամ որեւէ տեղի կռթնելու չէ, նստելու չէ, դետի երկու կողմեն առնվազն տասնհինգ քայլաչափ հեռավորության պտտելու է, բայց միշտ իր պաշտոնական դիրքը պահելու է: Թեթեւ քայլելու է եւ վերջապես ոչ մի ատեն անուշադիր կենալու չէ:

Հող[ված] 40- Ոստիկան, դետ կամ շրջուն պահակ եղած ատեն սիկար [ծխել], սուրճ, թեյ եւ այլն խմելու չէ, լրագիր կարգալ, ընկերների եւ մտերիմների հետ անպետ խոսակցություններ ընելու չէ, վերջապես, պատասխանատվությունն դուրս ոչ մի բանով զբաղվելու չէ եւ պետք չի տեսված ատեն թատրոն եւ ստոնց նման տեղեր մտնել եւ նստել արգելված է:

Հող[ված] 41- Ոստիկան յուր շրջապատի տեսած վիճակին վրա լրջություն թողնելով, խնդալու, ծաղրելու կամ ուրիշին նույն վիճակին մասնակից ըլլալու, այսինքն՝ մտերմական վերաբերմունքն զգուշանալու է եւ ամեն ատեն հաստատակամ, բարեխառն եւ միշտ ուշադիր աչքով դիտող լինելու է:

Հող[ված] 42- Ոստիկան, մինչեւ որ անհրաժեշտ պարտավորությունն չըլլա յուր դետի տեղեն բաժանվելու չէ՝ նույնիսկ որոշված ժամանակ եւս, եթե անցնելու լինի, պարտավոր է սպասել մինչեւ յուր հաջորդին [փոխարինողին] հասնե՞ծը, անկե հետո ուղիղ ոստիկանատուն երթալու է:

Հող[ված] 43- Դետի եւ շրջուն պահակության պարտականությունն լրանալով, իր հաջորդին հանձնված պարագային, երկուստեք պաշտոնական բարեւ փոխանակելիս հետո, պարտականությունն կատարած պաշտոնյան իր պարտականության ժամանակ առած հրամաններ եւ նկատողություններ իր հաջորդին պիտի գիտցնե, հետո պաշտոնական բարեւ տալով բաժնվելու եւ ուղիղ պահականոց երթալով, նույն կերպով իր գերադասին տեղեկությունն տալու է:

Հող[ված] 44- Ոստիկան՝ իրեն դիմողներուն լրջությամբ լսելիս հետո շատ քաղաքավարորեն պետք եղած տեղեկությունն տալու պարտավոր է:

Հող[ված] 45- Շրջուն պահակներ որոշված ժամանակամիջոցին պարտականությունն կատարելու պարտավոր գտնվելու են: Իսկ պաշտոնի ժամանակամիջոցը լրանալուն պես, իսկույն պահականոց վերադառնալու են:

Հող[ված] 46- Շրջուն պահակ իր պարտականության ժամանակամիջոցին սկսված գործը կամ քննությունը առանց վերջացնելու թողնելու չէ:

Հող[ված] 47- Ոստիկան՝ պարտականությունն չունեցած ատենն ալ, պահականոցն դուրս իր պաշտոնական հանգամանքը մոռանալու չէ եւ իր դիրքը պահելու պարտավոր է:

Ոստիկաններու գերադասի հանդեպ եւ փոխադարձ պարտականություններ

Հող[ված] 48- Ոստիկաններ նահանգապետի եւ կառավարչատան բոլոր գլխավոր պաշտոնյաներին, հյուպատոսներին, ինչպես նաեւ իրենց գերադասներու եւ իրարու հանդեպ նմանապես գինվորական սպաներին պաշտոնական բարեւ տալու պարտավոր են:

Հող[ված]49- Պաշտոնական բարեւ հետեւյալ կերպով պետք է կատարվի՝ պաշ-

տոնական դիրք առնելիս հետո, աջ ձեռքի չորս մատները միացրած եւ բթամատը ցուցամատին կպած եւ մատներ թեթեւապես ծռած եւ ափի մեջ երեսի դիմաց դալու պայմանով, ձեռքը աջ հոնքի վրա բերելու կերպով կը կատարվի, իսկ քայած առեն վեց քայլ հեռավորության վրա, երեսը գերադասին ուղղած ըլլալով, վերոհիշյալ կերպով բարեւելու է: Բարեւը ստորագասին տեղի ունենալու է: Ոստիկաններ՝ հավաքաբար քայած առեն հետեւակ գինվորների կանոնին ենթակա են:

Հոդված] 50- Ոստիկան գերադասեն առած հրամանը կատարյալ հնազանդութեամբ կատարելու պարտավոր է, միայն օրենքի եւ կանոնի տրամադրութեանց համաձայն ու իրենց կարողութեանից [իրավասութեանից] դուրս լինելու է:

Հոդված] 51- Գերադասը ստորագասի արժանապատվութեան վիրավորող վերաբերմունքի գզուշանալու է եւ ոստիկան գերադասի ներկայութեան պաշտոնական բարեւ տալով եւ դիրք առնելով լսելու է: Գերադասին նեղացնող կոպիտ վերաբերմունքի եւ տրված հրամանների հանդեպ մոմոալե եւ չորագլխութեան գզուշանալով, ծայրահեղ հարգանքներ ընելն ալ ներելի է:

Հոդված] 52- Ոստիկան ամեն տեսակ գործողութեան մեջ, գոհունակութեան կամ դժգոհութեան պարագային աստիճանակութեանը հարգելու է, այսինքն՝ ստորագասը մեկ աստիճան գերադասը թողնելով, ավելի բարձրին դիմելու է: Միայն գերադասը ստորագասին պահանջը չլսած պարագային, ստորագասն ալ իր պահանջի մեջ իրավացի ըլլալը համոզված առեն գրավորապես, մինչեւ երկու աստիճան գերադասին կրնա դիմել:

Ոստիկանների արձակուրդի մասին

Հոդված] 53- Ոստիկաններ միայն առողջապահական տեսակետով եւ ուրիշ օրինական պատճառներով արձակուրդ կրնան պահանջել, հիվանդութեան պատճառով ոստիկանին գիտականապես եւ բժշկական տեղեկագրով կարենալ բուժել հայտնած առեն, մինչեւ առողջութեան կրնա ազատ համարվել, արձակուրդը միայն ոստիկանապետին արտոնվելու է:

Ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 14-26: Պատճեն: Զեռագիր:

N 5

ՀԱՐՑԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

28 հունիսի 1915թ.
Վան

Հոդված 50-53- Հարցաքննիչ դատավորներ կը նշանակվեն օրվան կառավարութեան կողմէ, օրենսգետ, փորձառու եւ ամենապակասն երեք տարի դատարանական շրջաններու մեջ պաշտոնավարողներէ:

Հարցաքննիչ դատավորներ մինչեւ 3 տարի շրջանի մը մեջ կրնան պաշտոնավարել, ի պահանջել հարկին [անհրաժեշտութեան դեպքում] պայմանաժամ կապելացվի:

Հարցաքննիչ դատավորներու հիվանդութեան կամ այլ պատճառներով բացակայութեան ժամանակ, դատարանի նախագահի կողմէ նշանակված դատարանի անդամներու մեկը կրնա փոխանորդաբար դործեր վարել:

54-57- Ոճիր մը պատահած վայրը հարցաքննիչ դատավոր, դատախազ եւ գրագիր մը անմիջապէս երթալու պարտավոր են: Դատախազի բացակայութեան [դեպքում], հարցաքննիչ դատավորը պատասխանատվութեան իր վրա առնելով, կրնա հարցաքննել, հրահանգներ տալ, պետք եղած գործողութեանը ի գործ դնել եւ նույնիսկ մեղադրվածներ անմիջապէս ձերբակալել:

55- Ոճիրի մը վերաբերյալ քննութեանները, եթէ առաջ կատարված կամ մասամբ ի գործ տված է, հարցաքննիչ դատավորը, եթէ պետք տեսնել կրկին քննութեան կամ պակաս մը զգա, կրնա կրկին քննութեանը ձեռնարկել եւ կամ պակասը լրացնել:

56- Հարցաքննութեանների շարունակութեան միջոցին, ընդհանր [անուր] դատախազութեան պահանջած բոլոր թուղթեր եւ հարցումներուն հարցաքննիչ դատավոր պարտավոր է տալ եւ պատասխանել, ինչպէս եւ ընդհանր [անուր] դատախազութեան

պահանջի համաձայն բռնի ուժով բերելու եւ առժամանակյա [ժամանակավոր] ձերբակալման հրամանագիր [տալ], իսկ ընդհ. դատախազ 24 ժամեն ավելի իր առած թուղթերը պետք չէ, որ պահէ:

57-58- Բողոքողը, անձնական դատախազը եւ ամբաստանյալը, ոճրի պատահած շրջանի հարցաքննիչ դատավորն հարցաքննել, իսկ վկայություն, եթե հարցաքննիչ դատավորը պետք տեսնե, կրնա հրահանգով մը հանձնարարել վկայի շրջանի հարցաքննիչ դատավորին, որ վկան հարցաքննելով, թուղթեր զրկելու պարտավոր է:

59-60- Ոճրի վերաբերյալ աղերսագիր, ոստիկանական տեղեկագիր եւ այլ բոլոր թուղթեր ընդ[անուր] դատախազության կը տրվեն: Ընդհ[անուր] դատախազ յուր կողմէ պահանջագիր մը առնելով, հարցաքննիչ դատավորին պետք է զրկե, իսկ եթե ծանր հանցանք չնկատե, ուղղակի նախնական դատարան կրնա ուղարկել:

61-62- Անձնական իրավունքներն [իրավունքները] պաշտպանելու մտքը բողոքներ մինչեւ 24 ժամվա միջոցի մեջ իրենց իրավունքն ձեռնթափ լինել եւ խնդրագիրը ետ առնել, ետ առնելե վերջ, եթե կրկին դատավարություն պահանջե՝ պարտավոր են դատական ծախքերը վճարել եւ այդ պարագային մեղադրվածն իրավունք կունենա անձնական վնաս եւս պահանջելու: Անձնական դատախազները մինչեւ դատավարության վերջը կրնան իրենց վնասուց հատուցում պահանջել, իսկ ձեռնթափություն մենակ բողոքելե 24 ժամ վերջ ընդունելի է:

63- Հարցաքննիչ շրջանի մեջ չբնակվող անձնական դատախազը պարտավոր է նույն շրջանի մեջ բնակավայր մը ցույց տալ, որպեսզի պետք եղած պաշտոնական գրություններ հաղորդել կարելի ըլլա եւ այս բնակավայրը հարցաքննիչի պաշտոնական արձանագրության մեջ կարձանագրվի, հակառակ պարագային բնակավայրին հաղորդած թուղթերու դեմ առարկությունը (իթիրագ) անյսելի կը համարվի [չի ընդունվի] եւ բոլոր սույն գործողություններ, որոնք ցույց տված բնակավայր հաղորդած են օրինական հաղորդագրություն համարվելով անոր հիման վրա կարելի է բացակայության* որոշում տալ եւ այս մասին ապագա առարկություններ անյսելի կը մնա:

65- Հարցաքննիչ դատավորներին հանձնած խնդրագրեր եւ այլ թուղթեր եւ բողոքներ ընդհ[անուր] դատախազության ներկայացվելու են:

66-67- Հարցաքննիչ դատավորներ ոճրի եւ հանցանքի վերաբերյալ տեղեկություն ունեցողներ իբր վկա կամ տեղեկատու, կրնա կոչնագրով իր ներկայության կանչել եւ հարցաքննել, ինչպես եւ ընդհ[անուր] դատախազության եւ այլոց կողմէ ցույց տրվածները: Կոչնագրերը կոչնակի կամ ոստիկանության միջոցով կը հաղորդվի:

68- Հարցաքննիչ դատավոր իր գրագրի ներկայության վկաներ դատ-գատ եւ դադտնի պետք է հարցաքննե:

69- Վկաներ, ներկայացված ատեն, պետք է իրենց ուղարկված կոչնագրերի կտորը ներկայացնեն եւ այդ ներկայացումը հարցաքննիչ դատավորը պետք է հարցաքննության մեջ արձանագրե:

70- Վկաները դատախազին ու մեղադրվածին ծառաները չեն կրնա լինել, ինչպես եւ մոտիկ ազգականություն ունենալու չեն, ուղիղ խոսելու համար երգում ընելու պարտավոր են եւ այս պարագաներ հարցաքննության մեջ պետք է արձանագրվի: Կղերներ երգվացնելու համար պայմաններ կան:

71-72- Հարցաքննվողը պարտավոր է իր պատասխաններու տակ ստորագրել, չստորագրած պարագային, հարցաքննիչ դատավոր եւ գրագիր պետք է եղելությունը հաստատեն: Ինչպես որ հարցաքննիչ դատավոր եւ գրագիր իրենց հարցումները պետք է ստորագրեն, հակառակ պարագային հարցաքննիչ եւ գրագիր տուգանքի կենթարկվեն:

73- Հարցաքննությունը** քերված եւ ավրված [վնասված] ըլլալու չէ: Եթե մոռացված բան մը ավելացվի մակագրով մը, հարցաքննողի եւ հարցաքննիչ դատավորի ստորագրությամբ պետք է հաստատվի, հակառակ պարագային չեղյալ կը նկատվի:

74- Տասնչինգ տարին չլրացնող մանչ եւ աղջիկ առանց երգումի, իբր տեղե-

* Ընդգծված է փաստաթղթում -Ռ.Ա.:

** Հարցաքննման արձանագրությունը -Ռ.Ա.:

կատու պետք է հարցաքննվեն:

75-76- Ով որ վկայութեան համար հարցաքննիչ դատավորին կը կանչվի, պարտավոր է ներկայանալ, չներկայանալուն՝ ընդհանուր] դատախազութեան պահանջի վրա, հարցաքննիչ դատավոր կրնա մինչեւ 4 օսմ[անյան] լիւր տուգանք որոշել եւ անվերաքննելի ըլլալու պայմանով դանձել եւ բռնի ուժով բերելու: Վկան, եթե բռնի ուժով բերվելէ վերջ վկայութեան տա եւ յուր կոչնագրով չներկայանալուն բանավոր պատճառ մը ցույց տա, ընդհանուր] դատախազութեան կարծիք առնելէ վերջ, տուգանք կրնա ներել:

77- Վկաներու վնասուց հատուցումը եւ ճամբու ծախքերը, սակազիներու (յուրճ թերեֆասի) ցուցակով հարցաքննիչ դատավոր կրնան որոշել եւ կեդրոնական արկղին [դրամարկղից] վճարել տալ:

78-80- Վկաներու հիվանդութեանց պարագային, եթե բժշկական տեղեկագրով հաստատվի, հարցաքննիչ դատավորը պարտավոր է անոր տուն երթալ, իսկ եթե չէրթալու պատճառներ հանդիպի, վկայի գտնված տեղի պաշտոնական մարմնոյն ուղղված հարցարանի միջոցով կրնա վկայութեան առնել, բայց հարցարան հարցաքննիչ դատավորի կողմէ ղրկված հրահանգով մեկ ալ չըջանի հարցաքննիչ դատավոր մը կրնա սոյն հոգվածի համաձայն հարցաքննութեան կատարել եւ ղրկել պետք եղած շրջանի հարցաքննիչ դատավորին:

81- Հարցաքննիչ դատավոր, երբ հիվանդի բնակավայր կերթա եւ հարցաքննվող վկային հիվանդ լինելը չը նկատե, իբր վկա վկայութեան տվողներ եւ բժշկական տեղեկագիր ստորագրող բժշկին անմիջապէս առժամանակյա ձեռքակալման հրամանագիր կրնա տալ եւ ընդհանուր] դատախազութեան կարծիք առնելէ վերջ, երրորդ հոգվածի տրամադրութեան համաձայն, տուգանք եւս կորոշի: Հրահանգով քննող հարցաքննիչ դատավորներն ալ նոյն այս հոգվածի տրամադրութեան կրնան ի գործ դնել:

82-84- Հարցաքննիչ դատավոր, ոճրի մը հեղինակ եւ պարագաներ երեւան բերելու համար կասկածելի տեղեր խուզարկելու իրավունք ունի եւ պետք տեսած ժամանակ ինքը մեղադրվածի տուն [եւ] կահարասիք ու թուղթեր կրնա խուզարկել եւ գրավել եւ ոճրի երեւան հանող պարագաներ փնտրելու համար, յուր կասկածելի համարած տեղեր իսկ անձամբ կրնա խուզարկել: Այս խուզարկութեանց միջոց [ընթացքում] ձեռք բերած ապացոյցներու համար տեղեկագիր մը պատրաստելով, ներկա եղողներին ստորագրել պետք է տա:

85- Եթե ոճրի վայր այլ շրջանի մէջ է, [այս] հարցաքննիչ դատավոր կրնա նույն շրջանի հարցաքննիչ դատավորին հրահանգ տալ եւ վերի 82-83 եւ 84-երրորդ հոգվածների տրամադրութեան ի գործ դնել տալ:

86-87- Ամբաստանյալին հարցաքննիչ դատավոր մինակ կոչնագիր ղրկելով, կրնա բավականանալ, երբ օրին* պաշտոնատուն չներկայացավ, բռնի ուժով բերելու իրավունք ունի, ինչպէս եւ վկաներու նկատմամբ 75-երրորդ հոգվածի տրամադրութեանն զատ, բռնի ուժով բերել տալու իրավասութեանն ունի:

88- Կոչնագրով ներկայացողներ անմիջապէս, իսկ բռնի ուժով բերվածներ մինչեւ 24 ժամէն պետք է հարցաքննվեն:

89- Մեղադրվածի հարցաքննութեան վերջ եւ կամ փախուստ տալու պարագային, մեղադրյալի նկատմամբ, երբ ձեռքակալութեան պիտի տեսնվի, հարցաքննիչ դատավոր ժամանակավոր եւ անժամանակավոր ձեռքակալման հրամանագիր կրնա տալ, անժամանակավոր ձեռքակալութեան հրամանագիր առանց ընդհանուր] դատախազութեան կարծիքը առնել չպիտի կրնա տալ: Ժամանակավոր ձեռքակալութեան հրամանագիր մինչեւ 31 օր ուժ ունի, իսկ անժամանակավոր ձեռքակալման հրամանագիր կը գործէ մինչեւ դատավարութեան վերջը: Հարցաքննութեան շարունակութեան միջոցին՝ ընդհանուր] դատախազութեան պահանջով, հարցաքննիչ դատավոր, թե ժամանակավոր եւ թե անժամանակավոր ձեռքակալման հրամանագիր ետ կրնա առնել, միայն թե մեղադրյալ դատարանի ամեն պետք տեսած միջոցին ներկայանալու եւ տրված վճիռ գործադրվելու ապահովութեան տա: Ձեռքակալման հրամանագրի ետ առնելու որոշումի դեմ որեւէ առարկութեան չի ընդունվի:

90- Կոչնագիր, բռնի ուժով բերելու հրամանագիր, ժամանակավոր եւ անժա-

* Սահմանված օրը -Ռ.Ա.:

մանակավոր ձերբակալման հրամանագիր, հարցաքննիչ դատարանի կնիքով կնքված եւ հարցաքննիչ դատավորի կողմե ստորագրված եւ մեղադրվածի անուն, մականուն, բնակավայր, գործ, տարիք արձանագրված պետք է ըլլա:

91- Անժամանակավոր ձերբակալման հրամանագրերուն պետք է ավելացվի խնդիրը, հանցանքի տեսակը եւ օրենքի տրամադրութեան համաձայն ձերբակալութեան դատապարտելը:

92-93- Կոչնագիր, բռնի ուժով բերելու հրամանագիր, ժամանակավոր եւ անժամանակավոր ձերբակալման հրամանագիր, կոչնակի եւ կամ ոստիկանութեան միջոցով պետք է մեղադրվածին հանձնվի եւ մեկ օրինակ ստորագրված ու հաստատված հարցաքննիչ դատավորին բերեն: Թող լինի, որ ժամանակավոր ձերբակալյալ է, երբ անժամանակավոր ձերբակալման հրամանագիր ստացվի, նորեն պետք է մեղադրյալին հանձնել, եւ այս հրահանգները կառավարութեան [տեղական իշխանութեանը] ամեն շրջաններու կողմե գործադրվելը պարտավորիչ է, եթե մեղադրյալը ձերբակալման հրամանագիր տվող հարցաքննիչ դատավորի շրջանէն դուրս է, գյուղի գյուղապետ, ոստիկանութեան եւ կամ քննիչ առանց հապաղելու մեղադրվածին պետք է տան եւ ստորագրված օրինակը ղրկեն:

94-95- Բռնի ուժով հրամանագրի չըհնազանդող եւ կամ հնազանդելի վերջ փախուստի միտում ունեցողին հետապնդելու է, այնպես որ, երբ հետապնդող պաշտոնյան օգնականի պետք ունենա, ամենամոտիկ պահականոցէն օգնական ուժ կրնա առնել եւ ասոնք պարտավոր են հրամանագրի տրամադրութեանը ի գործ դնել: Եթե ամբաստանյալը 2 օրէն հարցաքննիչ դատավորին չբերվեցաւ եւ հրամանագիր տվող հարցաքննիչ դատավորի շրջանէն 5000 մետրէ հեռու է, նույն տեղի դատախազը հրամանագիր տեղողական համարելով մեղադրյալին ձերբակալելու, տուն եւ կանակածելի տեղեր խուզարկելու իրավունք ունի, նաեւ կրնա առժամանակյա ձերբակալագրով մը եւ ոճրի վերաբերյալ գտնված իրերով եւ գույքերով հետապնդող հարցաքննիչ դատավորին ուղարկել:

96-97- Դատախազ առաջի հոգիածի տրամադրութեամբ տված ժամանակավոր ձերբակալման հրամանագրէն վերջ, 24 ժամվան մեջ բռնի ուժով ձերբակալելու հրաման ունեցող պաշտոնյային պետք է եղելութեան իմաց տա եւ եթե ձերբակալութեան եւ կամ խուզարկութեան տեղեկագիր պատրաստած է, այն եւս հաղորդելու պարտավոր է: Բռնի ուժով ձերբակալելու հրամանագիր ներկայացնող եւ տեղեկագիր առնող պաշտոնյան եթե հարցաքննիչ դատավորէն գատ ուրիշ մը է, քով գտնված ամբողջ ոճրի վերաբերյալ թուղթեր տեղոց հարցաքննիչ դատավորին 24 ժամվա մեջ տալու պարտավոր է:

98- Ուղղակի կամ հրահանգով գործի սկսող պաշտոնյան (հարցաքննիչ) տեղի ունեցած ոճրի վերաբերյալ պատրաստ թուղթեր, իրեր, ձեռք բերած տեղեկութեաններով, մեղադրվածին հարցաքննելով, ասոնք ամբողջ միասին կնքված, առաջվանէ գործի ձեռնարկող հարցաքննիչ դատավորին պետք է վերադարձնեն:

99- Նախապես գործի սկսող հարցաքննիչ դատավորին առժամանակավոր ձերբակալման հրամանագիր տալով մեկտեղ, մեղադրվածի քննված տեղի բանտ փոխադրել, նույն հրամանագրի մեջ կրնա ավելցնել, եթե փոխադրութեան խնդիր սույն հրամանագրի մեջ գրված չէ: 122-երրորդ հոգիածէն մինչեւ 128-երրորդ հոգիածներու տրամադրութեամբ, հարցաքննիչ դատավորի կողմէ մինչեւ որոշում մը տրվելը, ամբաստանյալը ձերբակալված վիճակով քննված տեղի բանտ պետք է մնա:

100- Բռնի ուժով ձերբակալման հրամանագիր հանձնելու ամբաստանյալ, եթե չգտնվե, տեղակալ, տեսուչ, գավառապետ, քննիչ եւ կամ ոստիկանապետութեան, պետք է ներկայացնել եւ ասոնցմէ ով որ լինի, հրամանագիր իրեն ներկայացվել ստորագրված հաստատել:

101- Կառավարական ամեն պաշտոնյա եւ թե հասարակութեան ամեն անհատ, ով որ կը լինի, թող լինի [այսինքն՝ հասարակութեան ցանկացած քաղաքացի] ոճրագործի մը եւ կամ պատժի արժանի մեկի մը, առանց ձերբակալութեան հրամանագրի, պարտավոր է ձերբակալել եւ ընդհանուր դատախազութեան հանձնել:

102- Անժամանակյա ձերբակալման հրամանագրի ներկայանալուն, մեղադրյալ նախնական բանտ պետք է պահվի եւ բանտային տեսուչ մեղադրյալ իր[են] հանձնվելու ստացագիր պետք է տա կոչնակին կամ ոստիկանութեան:

103- Ժամանակավոր եւ անժամանակավոր ձերբակալման հրամանագրերու գործադիր պաշտոնյան պետք ունեցածի չափ հրացանակիրներ առնելու իրավունք

ունեն եւ թե մոտակա պահականոցի հրամանատարն եւս հրամանագրերու տրամադրութիւնն ի գործ դնելու պարտավոր է:

104- Ամբաստանյալ, եթե չձեռքբերուի, իրեն վերջին բնակավայրին պետք է հաղորդել եւ այս մասին տեղեկագիր մը պատրաստվելու է, եւ ամբաստանյալի դրացիներեն 2 մարդու ստորագրել տալու է:

Անժամանակավոր ձեռքբերված հրամանագրի մեկ պատճեն տուն ձգելով, երկրորդ պատճենն եւ պատրաստված տեղեկագիր 10-երրորդ հոդվածի տրամադրութեամբ պաշտոնյաներեն մեկին հաստատել տալով՝ դատարանի դիվանատունն հանձնվելու է:

105- Ժամանակավոր եւ անժամանակավոր ձեռքբերված հրամանագրով ձեռքբերված անհատ առանց հապաղման բանտ դրկվելու էն:

106- Սույն հրամանագիր գործադրող պաշտոնյան, ամբաստանյալին բանտ հանձնելու ստացագիր եւ ուրիշ գրութիւններ միասին, մինչեւ 24 ժամ հարցաքննիչ դատավորին հանձնելու է:

107- Կոչնակ, ձեռքբերված, ժամանակավոր եւ անժամանակավոր ձեռքբերված հրամանագրերու գործադրութեան արձանագրութիւններն այս ձեւով չարձանագրող դատաստանի գրագիր տուգանքի կենթարկվի, ինչպէս եւ ի պահանջել հարկին հարցաքննիչ դատավոր եւ ընդհանուր դատախազը եւս դատի կենթարկվեն:

108- Ամբաստանյալի կողմէ երաշխավորութեամբ ազատ արձակվելու տրված խնդրագիրը ընդհանուր դատախազի կարծիք առնելէ վերջ, ամբաստանյալ ամբողջ գործողութեանց ներկա գտնվելու եւ որոշված վճիռ գործադրվելու, ուղած ժամանակ ներկա լինելուն ապահովեցնելով, հարցաքննիչ մեղադրյալը, եթե մինչեւ 2 տարվան բանտարկութեան պետք տեսնվի եւ բնակավայր ունենա քննութիւններն մինչեւ 5 օր՝ իրավունքով ազատ կրնա արձակվել: Այս հոդված չի գործեր եղեռնագործութեան եւ 1 տարի բանտարկութեամբ վճիռներուն վրա:

109- Ամբաստանյալին, եթե իրավունքով ազատ չթողուն, [ապա] կանխիկով երաշխավորութեամբ կրնա ազատ արձակվել. Ա. ամբաստանյալն ամբողջ հարցաքննական գործողութեանց ներկա պետք է լինի եւ վճիռով պատիժ գործադրվի, եւ երկրորդ՝ ամբողջ դատական ծախքեր, անձնական դատախազի ծախք եւ վնաս հատուցանել եւ տուգանք վճարելու գումար ազատ արձակվելու հրամանագրի մեջ պետք է հիշվի:

110- Իրավունքով ազատ արձակված ամբաստանյալն մը, հարցաքննիչ դատավորի վերջին ձեռք բերած փաստով կրնա կրկին ձեռքբերվելու հրամանագիր տալ, բացի իրմէ վեր դատաստանով ազատ արձակվածին, որ իր որոշում բեկանած է:

111- Դատարանի վերաբերյալ հոդված է:

112- Երաշխավորութիւն պահանջող խնդրագրերու վրա դադտնապէս գործողութիւններ կը կատարվի եւ տրված որոշում գրավոր կերպով խնդրագիր տվողին ստացագիր առնելով կը հաղորդվի:

113- Անժամանակա ազատ արձակվելու ամբաստանյալի խնդրագիր պետք է անձնական դատախազին կամ իր ցուց տված բնակավայր հաղորդել եւ հաղորդվելու ստացագիր առնել:

114- Դատարանի կը վերաբերվի:

115- Ամբաստանյալի ազատ արձակման երաշխավորագիր եղած միջոց այս կանխիկ գումար ամբաստանյալի կամ այլ մը [ուրիշի] կողմէ պետք է վճարվի եւ գումարն հարցաքննիչ դատարանի կողմէ կը որոշվէ եւ ամբաստանյալ դատարաններու ամեն հրավերին ներկայանալ, չներկայանալուն՝ երաշխավորված գումար վճարելու: Այս երաշխավորութիւնն ապահովութիւններն ապացուցված մարդոցով ալ կը լինի:

116- Կանխիկով երաշխավորած գումար կեդրոնական արկղին կը հանձնվէ եւ ստացագիր դատարանի դիվանատունն կը պահվի, ինչպէս եւ ապահով երաշխավորութեան մուրհակը դիվանատունն կը մնա:

Այս գործողութիւններ ընդհանուր դատախազ տեսնելէ վերջ ամբաստանյալին ազատ արձակելու հրաման պետք է տա: Երաշխավորութեամբ եւ առանց երաշխավորութեամբ ազատ արձակված ամբաստանյալ դատարանի դիվանատունն մուրհակ մը [պետք է] տա եւ այդ մուրհակով ետ բնակավայր ցուցնէ:

117- Երաշխավորյալ, երբ ամեն քննութիւն գործողութեանց ներկա գտնվի

եւ վճռի գործադրութեան ժամանակ դատարան ներկայանա, երաշխավորութիւն տված գումար կազատե: Երբ ոչ բանավոր պատճառով մը քննութեանց մեկէն բացակայած է եւ կամ վճռած պատիժ գործադրութիւն ներկայացած չէ, [ապա] երաշխավորութեան մեկ մասը կառավարութիւնը կը գրավե: Մինակ երաշխավորութեան տակ առնված անձ անպարտ արձակվելու եւ կամ օրենքով գործած Հանցանքի Համար կանոն մը չլինելու պարագային՝ դատաստանի վճռով այս գումարը ետ կը տրվի:

118-199- Դատարանի կը վերաբերե:

120-121- Երաշխավորութիւն առնված անձ, երբ առժամանակյա ազատ արձակված է, Հրավիրագրի չպատասխանելու պարագային, Հարցաքննիչ դատավոր ժամանակավոր եւ անժամանակավոր ձերբակալման Հրամանագիր պետք է տա եւ անմիջապէս ձերբակալելով, բանտարկելու է:

122- Հարցաքննիչ դատավոր քննութիւն վերջացնելով, Հարցաքննութեան եւ պարագա թուղթեր ընդ[անուր] դատախազութիւն պետք է տա: Ընդհ[անուր] դատախազութիւն իր կողմէն պահանջագիր ավելացնելով, ամենաշատ 3 օրէն պետք է Հարցաքննիչ դատավորին վերադարձնե:

123- Հարցաքննիչ դատավորը տեղի ունեցած գործը, երբ նկատե ոչ օրինազանցութիւն, ոչ Հանցանք եւ ոչ եղեռնագործութիւն, դատավարութիւն պետք չտեսնելու որոշում կուտա եւ եթէ խնդրով ձերբակալյալ կա, ազատ արձակելու Հրաման կուտա:

124- Հարցաքննիչ դատավոր, եթէ խնդիրը օրինազանցութիւն նկատե, գավառի նախնական դատարան դատավարութեան որոշում տալու է, իսկ եթէ բանտարկյալ կա՝ առժամանակյա ազատ արձակման Հրամանագիր պետք է տա, բայց վարի Հոդվածի տրամադրութեան Համաձայն, անձնական դատախազի եւ ընդհ[անուր] դատախազի իրավասութիւններ վերապահ կը մնա:

125- Եթէ Հանցավորին բանտարկութեան վճիռ տրվելու չափ Հանցավոր է, բանտարկյալ վիճակով դատարան պետք է զրկե:

126- Եթէ Հանցավոր բանտարկելու աստիճանին Հանցավոր չնկատե, ամբաստանյալին օրին [պահանջված օրը] դատարան ներկայանալու Համար ստորագրութեան առնելով, կրնա ազատ արձակվել:

127- Դատավարութեան պետք տեսնված խնդիրներու թուղթերը ընդհ[անուր] դատախազութեան պետք է Հանձնե: Ընդհ. դատախազութիւն 24 ժամվան մեջ պետք եղած դատարան պետք է զրկե:

128- Հարցաքննիչ դատավորի եղեռնագործութեան վճիռներ, ամբաստանյալի վերաբերյալ բոլոր ապացոյցներ եւ պատժական օրինաց, որ Հոդվածի տրամադրութեամբ դատվել, ինչ ապացոյցներով կամբաստանե եւ ամբաստանյալ եւ խնդրո վերաբերյալ բոլոր թուղթեր եւ իրեր, ինչպէս եւ ամբաստանյալի անուն, մականուն, բնակավայր, արհեստ [եւ այլ] բոլորն գրելու եւ ընդհ[անուր] դատախազութեան Հանձնելու է պետք եղած դատարան զրկելու Համար:

Հարցաքննիչ դատավորներու իրավասութիւն ճշտող դատական կազմի օրենսգրքով 50-երրորդ Հոդվածն մինչեւ 128-երրորդ Հոդված ըլլալով, թարգմանութիւն եւ ամփոփումը պատրաստելով ընդհ[անուր] դատախազութեան կը ներկայացնեմ, թեեւ կարգ մը Հավելվածներ եւ կրճատումներ ի վերջո տեղի ունեցած են, առայժմ ձեռք բերել քիչ մը դժուար լինելու չգրեցի:

Վանի Հարցաքննիչ Դատարան Պողոս [Զիթճյան]
(կնիք)

Ֆ. 242, ց. 1, դ. 58, թ. 31-39: Բնագիր: Ձեռագիր:

N 6

ԲԱՏԱՊԵՏ Կ.ՃԱՆՈՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ԲԱՆՏԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
Բանտային վարչութիւն 17 Հուլիսի 1915թ.
N 5 Վան

Պատկ[անյալ] նահանգապետութեան
Բանտային կանոնագրի պատրաստութեան Համար չի կրնալով գտնել բանտային կանոններ պարունակող թյուրքական օրինագիրք մը, Հարկ ու անհրաժեշտ

դատեցինք Ձեր N 1665 Հուլիս 15 [1915թ.] հրամանագրի համաձայն՝ մեր ունեցած տկար փորձառություններով կազմել առժամանակյա կանոնագիր մը, որն պ.պ. [պարտայթ] քննիչի եւ ոստիկանապետի դիտողությանց հանձնելէ ետք, Ձեզ կուղարկենք, որ եթէ պատշաճ կը տեսնեք, վավերացնելով մեզ զրկեք ի գործադրություն:

Ներփակ կը զրկենք նաեւ մեր միջոցով բանտարկելոց ու բանտի ապահովութեան համար ըրած ծախքերու գումարը, որ կընե 6 ուրբի 64 կոպեկ (մանրամասնությունը բանտի ծախուց [ծախսի] տետրին մեջ արձանագրված է): Այս գումարի հետ կը խնդրենք մեզ տրամադրել որոշ գումար մը եւս, ասկէ հետո արվելիք ծախքերի համար:

Հարգանք բանտապետ

Կ.Ճանոյան

Վան քաղաքի բանտի ժամանակավոր կանոնագիր

Կազմ

Բանտը ունենալու է բանտապետ մը, օգնական բանտապետ, քարտուղար մը եւ պետք զգացված քանակութեամբ բանտապահակներ:

Բանտապետի պարտականություն

Բանտապետի պարտականությունն է.

1. Հսկել պահակների վրա իրենց պարտականությունները անթերի կատարելու համար:

2. Բանտարկյալներին արվելիք սննդի ու անհրաժեշտ պիտույքների հայթայթման կանոնավորապես հոգ տանելու է, հսկելով միաժամանակ բանտի մաքրության ու բանտարկյալներու կարգապահութեան:

3. Բանտարկյալի մը վրա կասկածելի հիվանդութեան նշաններ նկատելուն պես տեղեկագրելու է խնդիրը առողջապահական քննիչին...*

4. Կազմել տալու է բանտ եկող բանտարկյալներու արձանագրութեան, ընդհանուր] քննիչի կողմէ վավերացված հատուկ մատյանի մը մեջ:

5. Բանտարկութեան ժամանակամիջոց լրացնող բանտարկյալների մասին տեղեկագրելու է պատկանյալ վարչութեան:

6. Բանտ եկող բանտարկյալները նախապես քննելով՝ ավելորդ ու վտանգավոր առարկաները (դանակ, ատրճանակ, մեծ քանակութեամբ դրամ եւ այլն) վերցնելու է գգուշութեան համար: Վերցուցած առարկաների համար ստացագիր** տալու է բանտարկյալին եւ առնված առարկաները արձանագրելով մատյանի մը մեջ, վերադարձնելու է զանոնք բանտարկյալի ազատութեան հետո:

7. Բանտարկելոց թիվն ու բանտային ծախուց հաշիվները ներկայացնելու է պատկանյալ վարչական մարմնին:

Օգնական բանտապետ - քարտուղարի պաշտոն

Օգնական բանտապետ-քարտուղարի պաշտոնն է.

1. Ի բացակայութեան բանտային տեսչի, վարել անոր գործերը:

2. Կազմել բանտ եկող բանտարկելոց արձանագրութեանը մանրամասնորեն (անուն, հոր անուն, մականուն, տարիք, որ տեղացի ըլլալ, բանտ եկած թվականը, ընդունած վճռագրի թիվն ու նոմեր, ինչպես նաեւ ազատ արձակելու պարագաներ):

3. Արձանագրութեանց համար իր տրամադրութեան տակ ունենալու է մատյան մը (բանտարկելոց արձանագրութեան մատյան), նամակների սեւագրութեան ու բանտային հաշիվների համար հարմար մատյաններ:

Բանտային պահակներ

Բանտային պահակներու պարտականութեանն է.

1. Ցորեկ ու գիշեր աչալը ջորեն հսկել բանտի պահպանութեան եւ ապահովութեան գործին (գիշեր ատեն անքուն եւ հերթով հսկելու են):

2. Ընկերանալու են [հսկելու են] բանտարկյալներին դատարան կամ այլ տեղ զրկված պարագաներին (պահակները հսկողութեան ու փոխադրութեանց ատեն

* Այդպես է փաստաթղթում - Բ.Ա.:

** Ընդգծված է փաստաթղթում -Բ.Ա.:

զենք ունենալու):

3. Բանտապետի հրահանգների համաձայն կամ բանտարկյալներու հաշվին հայթայթելու են՝ բանտարկյալներին վերաբերյալ պիտոյքները (հաց, կերակուր, պտուղ, հագուստ):

4. Հոգ տանելու են բանտի եւ շրջակա տեղերու մաքրության [եւ] արգելելով բանտարկյալներին բանտի շրջակայքը աղտոտել:

5. Մեծ քաղաքավարութեամբ վարվելու են բանտարկյալներու հետ, սիրահո- ժար կատարելով անոնց իրավացի պահանջներն ու խնդրանքները:

6. Իրենց պարտականութեանց մեջ թերացող պահակներ, նայած իրենց հան- ցանքի աստիճանին՝ ա. անգամ կը հանդիմանվեն բանտապետի կողմէ, բ. անգամ տուգանքի կենթարկվեն, իսկ ծանր հանցանքի պարագաներին՝ դատարանին կը հանձնվեն, կամ կարձակվեն իրենց պաշտոնէն:

7. Անկարող ու իրենց պաշտոնին մեջ թերացող բանտապետ եւ օգնականը նահանգապետի հրամանով պաշտոնանկ կլլան:

Բանտարկյալներուն կարեւոր են՝

1. Յուրաքանչյուր բանտարկյալին տալու է [տրվելու է] առնվազն 1/8 օխա* ... հաց ու չափավոր կերակուր (Այս կարգադրութիւնը կլլա վճիռ ընդունած ու ան- կարող բանտարկյալներու համար միայն):

2. Օրական երկու ժամվա պտոյտի իրավունքը (1 ժամ առավոտ [եւ] մեկ ժամ երեկո) բանտի բակին մեջ ընդհանուր] հսկողութեամբ պահակներին: շարունակութեւն տես երես 5**

3. Օրական երկու ժամ (որոշված պահերին) իրավունք տալու է բանտարկյալ- ներին տեսնվելու իրենց պարագաներէ*** [հարազատների] հետ (ամուսին, մայր, քույր, եղբայր, հայր, տղա, կին եւ այլ): Մանր հանցանքներով բանտարկյալներու պարագաները ընդհանուր] դատախազութեւն արտոնագիր ունենալու են տեսն- վելու համար:

Բանտային ծախքեր

Բանտարկյալներու հացի եւ բանտի վերաբերյալ անհրաժեշտ ծախսուց հա- մար (քարյուղ, մոմ, լուցկի, վառելափայտ, ածուխ, թերթ եւ այլն) նահանգային վարչութիւնը բանտային տեսչութեան տրամադրելու է ամսե-ամիս, հարկ եղած գումար (բյուջէ):

Ֆ. 242, ց. 1, դ. 67, թ. 1-4: Բնագիր: Զեռագիր:

* Այդպես է փաստաթղթում-Ռ.Ա.:

** Նույնը -Ռ.Ա.:

*** Ընդգծված է փաստաթղթում -Ռ.Ա.:

**ԷԶԵՐ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԻԶՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ 1915թ. ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Հայոց Յեղասպանության հիմնախնդիրը բավականին լայնորեն է լուսաբանված հայ պատմագիտության մեջ: Այդուամենայնիվ, հիմնախնդիրն վերաբերող բազմաթիվ նրբերանդներ դեռևս կարոտ են առավել հանգամանալի ուսումնասիրման: Այսպես, առավել խորը վերլուծություն են արժանի հայության փաստացի դեկավարումը ստանձնած 'ՅՅԴ-ի' մի կողմից օսմանյան իշխանություններին արվող չեզոքության հավաստիացումները, մյուս կողմից (Ֆիզիկական փրկության, ինչպես նաև թուրքական լծից ազատագրման նկատառումներով) ուսական բանակի օգտին կամավորական շարժման ծավալումը, հարուստ հետախուզական տվյալների հաղորդումը, ցույց տրվող հսկայական նյութական ու բարոյական աջակցությունը, հայ ժողովրդի ճակատագրի վրա ուսական բանակի զորաշարժերի ու ռազմական գործողությունների անդրադարձը, հայ-թուրքական եւ հայ-ուսական հարաբերություններին առնչվող այլ հարցեր:

Այս համատեքստում շրջանառության մեջ գրվող փաստաթղթերը՝ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեի կողմից հայ կամավորների հրամանատարությանն ուղղված նամակները (կրկնությունից խուսափելու նպատակով փաստաթղթերը չենք վերնագրել), լուրջ տեղեկատվություն են պարունակում վերոնշյալ հարցերի վերաբերյալ եւ բավականին մեծ արժեք ունեն:

Փաստաթղթերում կատարվել են անհրաժեշտ ուղղադրական եւ կետադրական փոփոխություններ՝ գերծ պահելով տեքստը իմաստային աղավաղումներից: Մեր կողմից առաջարկվող լրացումները կատարված են ուղղագրի փակագծերով: Մյուս փակագծերը, ինչպես նաև բազմակետերը եւ ընդգծումները բնագրին են: Ծանոթագրությունները ներկայացված են վերջում: Բոլոր փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

Արարատ Միրզոյան
պատմական գիտությունների
թեկնածու

N 1

6 Հունիսի 1915թ.
Մուշ

Ազիզ,

Բանակ կոչված այդ խաժամուժը ոչ էիմ ունի եւ ոչ անուն: Ռուս բանակը երկու շաբաթ առաջ Կոպ-Դերիկում² թուրք այդ խաժամուժին տված սարսափելի հարվածը չկարողացավ օգտագործել: Դուք ջախջախեցիք այնտեղ հավաքված բանակի գրեթե կեսը (բացի զորքից, միայն քուրդ աշիրեթներից սպանվել են 500 մարդ). մնացյալներն ահաբեկված փախուստի էին դիմել, եւ բանակի գրեթե քառորդն էր մնացել, երբ դուք կրկին... կրկին դառնալով Դերիկ՝ գոհացաք այդ առաջին հարվածով միայն: Այնտեղ սպանվել են Մուշի հույնական թուրք պետերից Հաջի Մուսան, Հայտնի ոճրագործ Դրպոյի Սաիդ աղան եւ մի քանի ուրիշ բեկեր եւ շեյխեր: Մուսա բեկի վերքերը թեթեւ էին. ապաքինվել է եւ այժմ գնացել է Ախլաթի³ գծի վրա, իսկ Ղասրմը Կոպում է:

Ռուս բանակի այս անբացատրելի սխալը առաջինը չէ. Օլթի-Սարիղամիշ կոչվում [ուս] սպաների՝ թուրքերին տված ջարդը հիմնովին քայքայել էր էրզրումի ամբողջ բանակը, եւ եթե այդ պահին նրանք հետապնդվեին, ստույգ դիտենք, որ ոչ միայն էրզրումը 3 օրվա մեջ իրենցն էր, այլեւ հայկական մյուս նահանգները: Ձեր բանակի այս տարտամ եւ անվճռական շարժումները ու հետ ու առաջ խաղերը եւ ջախջախված թշնամուն վերջին հարվածով վերջացնելու զգուշությունը ոչ միայն հայ ժողովուրդը կոտորել տալով սպառեց եւ մինչ օրս սպառնում է գրգռել մահադական խուժանը (օր. Բասեն, Ալաշկերտ, Բուլանը⁴, Ախլաթ եւ այլն), այլեւ թուրքերին ժամանակ է տալիս վերակազմել իր բանակը եւ դիմագրությունը շատ երկարացնել:

Այսպես, Բուլանըխում Ձեր տարած, բայց չհետապնդած հաղթուլթյունից հետո ուղարկվեցին նոր անկանոն ուժեր՝ թվով մոտ 2.000: Մասնավորապես մեծ կարեւորութիւն է տրվում Ախլաթ-Բաղեշ⁵ գծին. 6 օր առաջ այնտեղ ուղարկվեց 23-րդ ալային 300 ձիավոր կանոնավոր զորք, որոնց միացրեցին 100 ձիավոր քրդեր եւս: 2 օր առաջ Խարբերդի տեպօ թափուզիէն եկած 400 հոգին այսօր եկան եւ երկու օրից կմեկնեն այնտեղ՝ Էրզրումից եկած Քասթեմունի-Էնկյուրիի⁶ Փրբզան: [Փրբզան ունի] 11.000 հոգի վարժ եւ անվարժ զինվորներ՝ մոտ 20 լեռնային թնդանոթներով եւ 10 մէթրալլօզով: Փրբզան իր հետ ունի 400 բեռ թնդանոթի եւ Հրացանի ռազմամթերք (թէլէֆօն⁷ էլ ունի): Սրանց հրամանատարն էր Բեքիր Սամի փաշան: Այս Փրբզան կոչվում է պէշնճի քուվվէի սէֆէրէյէ (5-րդ պատերազմական օժանդակ ուժ) եւ ունի մեկ էրքքանի Հարպ սպա: Խոսվում է նաեւ, թե նրանց մի մասը Կոպի գծի վրա պիտի ուղարկվի:

Լսվում է, որ 20 օրից ավել Տիգրանակերտից դուրս է եկել այստեղ գալու 34-րդ կոչված Փրբզան, որն իսկապես տէպօ թաբուրներէ է կազմված (թաբուրը միայն 4-500 հոգուց է բաղկացած): Նրանցից զատ, վերջին 2 օրում եկել է եւ, ասվում է, նույնպէս դեպի Ախլաթի գիծ է ուղարկվելու ժանդարմների մի գունդ՝ 5-600 հոգի:

Ուժերի նույն հավելումը, թեեւ որակով ցածր, նկատվում է նաեւ դեպի Էրզրում գիծը. արեւմտյան նահանգներից վերջերս բավականաչափ ուժեր լցվել են այնտեղ: Ռուս սպայակույտը այս անգամ գոնե, քանի դեռ այդ եւ հետագա ուժերը թերեւս չեն հասել, շտապի արագ եւ վճռական հարվածներով չչմեցնել Բուլանըխում եւ Ախլաթում հավաքված խաժամուժին, անդամալուծել նոր եկող ուժերը, որով փրկած կլինի այս հայաշատ շրջանը: Եթե ոչ, Ձեր դանդաղ առաջխաղացուլթյունը...

Բուլանըխի [ուժերի] հրամանատար Օսման բեյն ասել է, թե իր բանակի՝ մինչեւ Քոստուրներ⁹ նահանջման պարագայում Դուրանի հայերը մաքրելու է եւ այդպէս անցնի: Կանոնավոր զորք, Էրզրումից եւ այսօր եկողներից զատ, չենք կարծում, որ այլեւս գտնվի: Անկանոն «Փրբզա» կամ «թաբուր» կոչված անվարժ քուրդ զորքերով կամ աշխրեթներով պիտի լցնի իր բանակի պակասը: Չենք կարծում նաեւ, որ սրանք Հիմարություն ունենան Էրզրումի ճակատից այսօր եկողներից զատ նոր կանոնավոր զորքեր բերել այս կողմը:

Մոսուլի Գոլօրտուն կարելի է ոչնչացած համարել՝ կեսը Բաղդադում եւ մյուս կեսը Պարսկաստանում (Խալիլ բեյի Փրբզան): Քրդական համրիւթի ալայներն էլ չկան (նրանք ոչնչացան Էրզրում-Բասեն գծի վրա), որպեսզի նրանց անունները գրեինք Ձեզ: Աշխրեթները ձեռականորեն գնում են պատերազմ, զենքերը ստանում են եւ դեռ տեղ չհասած մաս-մաս հետ են գալիս իրենց տները՝ մեծ վտանգ կազմելով մեզ համար:

Ուրեմն Կոպի գծի վրա ներկայումս հազիվ 3-4.000 անկանոն ուժեր են գտնվում, իսկ Ախլաթ-Վան գծի վրա, չհաշված նորեկ Էնկյուրիի Փրբզան, նույնքան են, ավել չեն (Քյոռ Հուսեյն փաշան եւ իր ալայի մնացորդներն էլ այնտեղ են):

Խնուսի, ինչպէս նաեւ Երզնկայի, Բաբերդի եւ այլ հեռավոր վայրերի ուժերի մասին ի վիճակի չենք որեւէ ստույգ լուր տալ: Էրզրումի ուժերի մասին քիչ [թե] շատ տեղեկութիւններ կարենանք հաղորդել թերեւս, երբ այնտեղի մեր ընկերներից պատասխան ստանանք:

Երեկ Խարբերդից 20 օր ճամփորդելուց հետո այստեղ եկան 90 սայլ՝ 1154 արկի փամփուշտով (30 սայլ էլ կոտրվելով ճանապարհին են թողել): Ռազմամթերքի մոտակա կենտրոններն են Էրզրումը եւ Խարբերդը: Վերջինից գրեթե անընդհատ բերվում է գլխավորապէս փամփուշտ (հրացանը սպառված է թվում): Մատակարարութիւնը գիտական մտքով երբեք գոյութիւն չունի եւ ոչ մի տեղ: Շտեմարանները լեցուն, բայց զորքը միշտ քաղցած է եւ մերկ: Տիգրանակերտում <կա> 4,5 միլիոն օխա¹⁰ <պաշար>, <այդ թվում> ցորեն՝ 140.000 օխա, ալյուր՝ 32.000 [օխա], պաքսիմաստ՝ 65.000 օխա, կորկոտ՝ 13.000 [օխա], յուղ՝ 11.000 օխա եւ գարի՝ 6.000 օխա¹¹: Չմոռնր եւ այս գարնան սկզբին պաշարի կարեւոր կենտրոնն էր Մուշը, որ դեպի Էրզրում էր փոխադրվում հարյուրավոր գոհերի գնով, հայ ազգաբնակչութիւնի կոնակներով եւ եզներով, իսկ այժմ Էրզրումի պաշարը Տիգրանակերտից եւ Խարբերդից է գնում: Բուլանըխի բանակն իր ջարդած ժողովրդի պաշարն է, որ ուտում է, նույնը նաեւ Բաղեշ-Ախլաթում:

Առաջարկներ

1. Թուլթախից¹² եւ Մանազկերտից¹³ առաջացող Ձեր երկու թեւերից Ղարա-Չոբանի ուժը ուժեղացնելով տիրել Խնուսին՝ Բյուրակնյան¹⁴ լավ ջրերի վրա ամրանալով, Իսկ Կոպի թեւը երկարացնելով դեպի Վարդո¹⁵-Ճապաղջուր¹⁶, Խնուսի ուժերի հետ միացած՝ կարող են կտրել Խարբերդ եւ Հարավից դեպի էրզրում ամեն տեսակ փոխադրությունների գիծը: Եթե Ախլաթի Ձեր ուժերը ժամ առաջ տեր դառնան Նեմրութ-Գրգուռին¹⁷, թե աջակցած պիտի լինեն Բուլանըխի ուժերին եւ թե տեր պիտի դառնան մեր Դուրանին եւ Բաղեշի կիրճին¹⁸: Իրենց թնդանոթներով նրանք կմիանան Վանից եկած ուժերին: Այդ կազմից է, որ ենթադրում ենք, թե պիտի գաք այստեղ: Այս խնդիրն է. եթե Բուլանըխի Ձեր հավելյալ ուժերն ուղարկեք մեր դաշտում միանալու Վանից եկող ուժերին, վերջինները, մանավանդ մերոնք, ոչ մի արգելքի առաջ չպիտի կանգնեն՝ անցնելու Մոտկան¹⁹-Սասուն լեռնաշղթան եւ ամրանալու այդտեղ:

Թուրքերը խորհում են իրենց երկրորդ պաշտպանողական գիծը (Ախլաթ-Բաղեշից հետո) հիմնել նույն լեռնաշղթայի վրա: Եթե ժամանակ տաք նրանց նույն լեռնաշղթայից Հարավ բնակվող քրդերի օժանդակությամբ կազմել հիշյալ գիծը, թե Սասունը եւ թե Դուրանը անպայման պիտի ոչնչանան, նրանք նաեւ իրենց ձեռքում պիտի ունենան Կուքտիկը²⁰, Տալվորիկը²¹, Կոզմոն, Կետիկը²² եւ այլ կիրճեր: Եթե նախապես մենք գիտենայինք Ձեր ծրագիրը եւ հնարավորությունները, նույն պահին կկարողանայինք աջակցել Ձեզ: Ձեր այդ ձեւի շարժումը պիտի շփոթեցնի թշնամուն եւ լեռնական քրդերին պիտի քշի դեպի Հարավ: Պաշարից չպիտի նեղվեք, որովհետեւ այս տարի Հոդերի 85%-ը ցանված է եւ խիստ բեղմնավոր:

2. Մեծ օգտակարություն պիտի ունենար օգնավների գործածությունը թե անկանոն այս բանակների եւ թե քուրդ նախապաշարված այս խաժամուժի վրա: Սարսափ թողնելուց բացի գործնական օգուտներ եւս կստացվեին:

3. Նեմրութ-Գրգուռից եւ Բլեջան լեռից Սասնա ձյունակատար գագաթները երեւում են. կուզեինք, որ մեզ վտանգ սպառնալու կամ ջարդի ընդդեմ խարույկով նշան տայինք Ձեզ, եւ եթե դեպի մեր դաշտը Ձեր առաջխաղացումը Հարմար լիներ, խաղաղ գիշերվա մեջ թնդանոթի պայմանական Հարվածներով տեղեկացնեիք մեզ: Եթե անհրաժեշտ է եւ Հարմար եք գտնում, գրեք Ձեր կարծիքը:

Հարցեր

1. Եթե Ձեր այստեղ մուտքի նախօրյակին շարժումներ առաջացնենք (Սասունում եւ Դաշտում), կարո՞ղ ենք վստահ լինել, որ 8-7 օրվա ընթացքում եթե ոչ բանակը, գոնե մերոնցից ստվար մի ուժ կարող է հասնել այստեղ: Մեր տեղիս ուժը շատ չնչին է, եւ չենք կարող երկար դիմանալ:

2. Եթե շարունակեք դանդաղ շարժվել եւ միջոց տաք սրանց վերակազմվելու, Հայերից գեները Հավաքելու վաղուց եկած հրամանն անմիջապես պիտի դործադրվի այստեղ: Պիտի ջանան Հավաքել նաեւ մեր ընկերներին: Այդ պարագաներում մենք պիտի դիմադրենք: Ի՞նչ պիտի լինի Ձեր դիրքորոշումը:

3. Եթե Ձեր բանակը մեր շրջանը մտնելու եւ, ինչպես մի քանի վայրերում, կրկին նահանջելու հավանականության առջեւ գտնվի (որին անպայման պիտի Հաջորդի Հայերի ջարդը կամ գաղթը), պիտի ծայր տա եւ պալթի կառավարության բարյացակամությունը. կեղծում է, բայց դիտի, որ իր պահանջների արարքներն ավագակախմբերի արարքներից անցան: Այս վիճակում մեր ժողովուրդը ծայրահեղորեն նահաբեկված է եւ բարոյալքված: Նախ, գրեթե բոլորովին անգեն են: Երկրորդ, Հարկադրված են գապել հաճախ այս ու այն կողմ երիտասարդ ըմբոստացումները՝ անժամանակ պայթյուններ առաջ չբերելու եւ 100 հազարից ավելի ժողովուրդը ջարդել չտալու երկյուղով: Իսկ կազմակարգական ուժը շատ անբավական է նույնիսկ որեւէ ձեռնարկի համար: Անշուշտ, տարբեր պիտի լիներ մեր բռնելիք դիրքը, եթե գիտենայինք, թե սկսելիք պայքարում անպայման պիտի աջակցեն նաեւ տեղի գրուժինաները, որովհետեւ մենք մենակ Վանի²³ ...իմանալուն կարող ենք [Հանել] կովոյ ուժ մեծ քանակությամբ, բայց ի՞նչ օգուտ, երբ անգեն են:

Մեր ընկերներից Ռուբենը, Կորյունը, Մկրտիչ, Մատթեոսը, Մարտիրոս վարժապետը եւ Վարդանը (Տիգրան) 70-80 ընկերներով փախստական են: Առաջին երեքը Բարձրավանդակում են՝ 35 ընկերներով: Մատթեոսը եւ մի ուրիշ ընկեր՝ յուրաքանչյուրը 13-15 ընկերներով, Կորոտի աջ եւ ձախ մասերում են: Վարժապետը՝ 15 ընկերներով, Գրոնքի շրջանում է: Նրանցից գատ, Չուխուրում²⁴ է Հասրաթը,

[որը] վերջերս քանդված Մուշաղի²⁵ եւ իրենց գյուղի մոտ 30 ընկերների հետ նույնպես փախստական է: Վարդանը շարունակ շրջում է, իսկ Կոմսը կիսափախստական վիճակում քաղաքում է:

Մինչ այժմ մեր նպատակն է եղել խուսափել պայթյուններից եւ ժամանակ չափել, քանի որ Ձեր շարժումները եւ նպատակներն անհայտ են: Պետք է կռվել, բայց այն հույսով, որ ...մեր ճգնաժամի պահին պիտի կարողանաք հասնել մեզ: Թե կառավարութեան եւ թե քրդերի համար շատ պարզ է, որ թշնամու բանակի առաջին տեղում հայերն են կռվողը: Դա է գրգռողը եւ կատաղեցնողը ոճիրներով հոգակալոր քուրդ ցեղերին: Խորհում են, որ Դուք եւ մենք չպիտի ներենք իրենց ոճիրները: Հետեւաբար, քանի դեռ մենք մենակ ենք եւ թույլ, կսրբեն նաեւ Դուրանը եւ այդպես կգաղթեն շրջանից: Այսքանը մեր կացութեան մասին:

Զինվորական տեղեկագիր

Տաճիկ կառավարութեանը բառի բուն իմաստով կանոնավոր գործ ունի մասամբ միայն էրզրումի գծի վրա: Խլիճ²⁶-կետիկի գիծը մինչ այժմ քուրդ աշիրեթներով էր պահպանվում (Աբդուլ Մեջիդ, Մուսա եւ Խալիլ բեկերով): Վերջինս սպանվեց դեպի Մանազկերտ Ձեր արշավանքի ընթացքում:

Մարտի վերջերին Մուշը դարձավ տէյօ-թաբուրների (սէյդեով գնդեր)՝ թվով 20.000 գործի կենտրոնատեղի: Մինչեւ ապրիլի վերջը հազիվ 7-8.000 հոգի կարողացավ հավաքվել՝ բացառապես զազա եւ հարանային այլ քրդերից: Մոտ մի ամիս նրանք թալանով զբաղվեցին: Միայն վերջին 10-15 օրում երզնկայից եւ Պոլսից եկող կարճ ժամանակահատվածում պատրաստված սպաները իբր թե կրթեցին [նրանց] (քրդերը երբեք թուրքերեն չգիտեին): Այդ ժամանակ էրզրումից եղած պահանջով 1.000-1.500 հոգի ուղարկվեցին այնտեղ: Դրան հաջորդեց Ձեր հարձակումը Մանազկերտի վրա, որ հարկադրեց սրանց անմիջապես Լեղ²⁷-Կոպի գծի վրա ուղարկել բոլոր մնացածներին: Դրանցից մոտ 1.500-ը փախան եւ մեռան: Այդ գծի վրա ուղարկվեց նաեւ Մուսա բեկը՝ մոտ 400 հոգի մանր-մուկ աշիրեթներով: Այդ բանակը ոչ մի թնդանոթ չունեւ սկզբում: Թնդանոթները էրզրումից հասան Ձեր Բուլանը մտնելու պահին. միայն փոքր բերանաչափով 4 դաշտային՝ 140 սնդուկ ունեւերով, իսկ 10 օրից հարբերդից եկան լեռան փոքր թնդանոթներ՝ մեզ անհայտ մթերքի քանակով:

Այդ բանակը սպառնալույս չունեւ եւ կառավարվում է Օսման բեյ անունով մի հազարապետի կողմից, որ դասատու է եղել Պոլսի գինվորական ակադեմիայում եւ այստեղ է եկել իբրեւ թալիմ քար կուլմանդանի՝ գործին կրթութեամբ տվող: Իսկ սպաները, բացի 2-3-ից, մեծ մասը ժանդարմներից վերցված, իսկ մյուսները 2-3 ամսում սպա դարձածներ են:

Ձեր բոլոր հարցերին դժբախտաբար լիակատար գոհացում չպիտի կարողանանք տալ՝ թե մասնագետ չլինելու (էրզրումի սպառնալույսը եւս խիստ գաղտնի է պահում թվերը նույնիսկ տեղիս հրամանատարին) եւ թե այդքան մանրամասն տեղեկութեամբ ժողովել ի վիճակի չլինելու համար: Այսուամենայնիվ, ջանում ենք քիչ [թե] շատ գոհացնել ձեզ: Նախ իրերի կացութեան մասին:

Վանը թեեւ մեծ գոհերով ազատվեց, բայց Վուսթյանին Պոլիս տանելու ճանապարհին՝ Տիգրանակերտի մոտ, կառավարական ոստիկանները դավադրաբար սպանեցին:

Պոլսի ընկերները՝ Զարգարյանը, Ակնունին, Շեհրիկյանը, Փաշայանը, Հրաչը, Խաթալը, Մարգարյանը, Փափագյանը եւ ուրիշներ, հանկարծակի ձերբակալվելով, քշվել են էնկյուրի Այաս գավառի կենտրոն եւ այնտեղ բանտարկվել են: Ձերբակալման փորձ են կատարել նաեւ Սվազի Մուրադի, Վարդան Շահբազի եւ այլոց նկատմամբ, բայց նրանք լեռան վրա էին ապաստանել:

Էրզրումի շրջակայքի ամբողջ հայ ժողովրդին գաղթեցրել են Դերջան²⁸: Մեր ընկերներից Բալաջանը, Փիլոսը, Ատրունին, Հրանտը եւ 70-ից ավելի ուրիշ ընկերներ աքսորվել են Էրզնկայի ուղղութեամբ եւ իբր թե Փիլոսը փախել է. կարծվում է, որ սպանել են: Էրզրումում այժմ միայն Վանիկն է (Միհրան), որ մինչ այժմ մեզ հետ կանոնավոր հարաբերութեամբ է պահում:

Տիգրանակերտի Ֆարդինի²⁹ եւ Սլիվանի³⁰ ընկերները բոլորը ձերբակալվել են, գնդակահարվել են, այնտեղ բոլոր գեներալները հավաքվել են, եւ մի սոսկալի ջարդով վերջաբան է գրվել Տիգրանակերտի շրջանի հայութեանը: Նույն լուրերն են ստացվում նաեւ Կիլիկիայի շրջանից:

Այստեղ <Հայությունը> միայն բաղադրամբ դեռ ազատ է մնացել մասսայական ջարդից, բայց օր օրի սպասում ենք, իսկ խմբային սպանությունները եւ թալանը սովորական են: Տեղիս մյուսներին փոխել³¹ (Հայտնի իթթի Հաթիկան) առայժմ աշխատում է խաղաղություն պահել: Սակայն Հարավային Սասունում, Փսանք³² եւ Խուլփ³³ խիանքում³⁴ բոլոր Հայ գյուղերը դատարկվել են, ընտանիքները գերի են տարվել, եւ ջարդվել են մի քանի գյուղերի տղամարդիկ: Սա կատարվել է կառավարության գիտություններով:

Դաշտի վերբերյալ՝ երկու կողմից պաշարված Մշո դաշտում դիտավորություններ հայերի համար նոր թշնամի բանակ են ստեղծում: Այս բոլորն լուրեր ունենք Սասնա լեռների հարավային ստորոտներում՝ Քյոռ Սլոյի եւ Հուսեյն աղայի առաջնորդությամբ քրդական մի մեծ արշավախմբի (որոնք են պատկանցիները, բազրանցիները, խիանցիները, խուլփեցիները) պատրաստության մասին, որի նպատակն է արշավել Տալփորիկ եւ Վերին Սասուն, բռնել Մշո դաշտի վրա բարձրացող կատարները եւ հեղեղել դաշտը: Ձենքերի թիվը 4-5.000 է: Կառավարությունը նրանց տվել է Սլիվանից, Բշերիկից³⁵ եւ այլ տեղերից (Հայերից) ժողոված հունական մարտիկներ եւ այլ հրացաններ, որոնցով վերջերս կայացած մի ժողովում որոշել են կոտորել Հայերին՝ մոտ ապագայում վրեժխնդիր չունենալու համար, գալ Տալփորիկ-Սասնո վրա, բռնել Մուշ-Փասուրը³⁶, Կոզմոն, Կետիկը եւ Կուրտիկ լեռը՝ նպատակ ունենալով միանգամայն արգելել ուսուցիչների առաջնորդությամբ դեպի հարավ:

Բուլանլի, Ախլաթի, Խնուսի եւ այլ տեղերի հայերի ջարդը եւ ուսուցիչների դանդաղ առաջնորդությամբ հետզհետե նախապաշարում է Հայ եւ մանավանդ քուրդ ժողովուրդը այն գաղափարով, թե ուսուցիչները դիտամբ են դանդաղում, որպեսզի Հայաստանը գրավեն առանց հայերի: Մյուս կողմից ակներեւ ու անմիջական վտանգն այս բոլորն սպասում ենք Մանգլիկերտի Հյուսիսից եւ Վանի շրջակայքից դեպի այս կողմերը եկող քուրդ մուհաջիրների ուսուցիչներից՝ Ռահվայի³⁷ ցեղերը, որոնց գեները 2-3.000 է հաշվվում: Ձենք խոսում դանազան այլ խմբերի մասին: Անիշխանություն է տիրում:

4. Ի՞նչ է բանակի նպատակակետը եւ ի՞նչ ժամանակամիջոցում էք ենթադրում հասնել այս կամ այն վայրը:

5. Մուշ գալու համար բանակը ո՞ր ճամփան է ընտրել:

6. Ո՞ւր են ընկերները՝ Բժիշկը (Վիֆին), Կարոն, Պարույրը եւ Խեչոն: Այդ գծի վրա մեր ո՞ր ընկերներն են գտնվում:

Ձեզ մեր կողմից սուրհանդակներ ուղարկելու հնարավորություն չունենք, խնդրում ենք Դուք շարունակեք աշխատել այդ ուղղությամբ: Նեմրութ-Չուխուր գծով էլ կարող են գալ նրանք: Գրեք միշտ գաղտնի մեղանով, բայց խնամքով, որովհետեւ Ձեր գրած գաղտնի մեղանը (նամակի սկիզբը) ինքն իրեն բացված էր: Սեւը ջանացեք թուրքերեն գրել: Հետեւյալ բանալին եւս գործածեք շիֆրի համար «թող չերգի բլբուլը Մշո դաշտերում, թող երգ չհնչի Սասնա լեռներում»: Լավ կլինի, որ բացի թուրք նամակից, բովանդակությունն ամփոփեք (շիֆրով) սպիտակ շորի վրա մեղան մատիտով եւ տաք նույն սուրհանդակին՝ իր հագուստների մեջ կարելու: Իսկ թուրք ծրարեք այնպես, ինչպես մենք են արել: Խնդրում ենք դարձյալ հանուն այս տառապած ժողովրդի չդանդաղեցնել Ձեր գործողությունները: Խիստ անհամբեր Ձեր պատասխանին սպասելով՝

Ձեր համբույրներով

[ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի]

Կենտրոնական Կոմիտե

Կոմս, Ռուբեն

Ֆ. 1457, ց. 1, գ. 95, թ. 1-11: Բնագիր: Ձեռագիր:

N 2

10 Հունիսի 1915թ.

Մուշ

Սիրելիներ,

Հաստատում ենք մեր հունիս 1-ի թալիսմանը՝ երեք կտոր թուղթ եւ երկու կտոր շորի վրա շիֆրով նամակները եւ վեց ու ութ հունիս նամակները: Տալիս ենք նրա ամփոփումը:

Վահագրը սպանված է, սպանված են նաև Տիգրանակերտի ընկերները, բռնված են խարբերդի, Էրզրումի, Պոլսի գրեթե բոլոր ընկերները: Վերջինները աքսորվել են Էնկյուրիի Այաս: Էրզրումում ազատ է միայն Վանիկը, այստեղ փախստական են բոլոր ընկերները: Վերջերս նաև զինված խմբեր ունենք քաղաքի երկու թեկ լեռնայան շերտում եւ գլխավորապես Բարձրավանդակում:

Մինչ այժմ մեր դաշարը, որ քիչ վնասներով գերծ էր մնացել մյուս վայրերի բախտից, վերջին օրերին մոտալուստ պայթման նշաններ է ցույց տալիս. մասսայական սպանություններ կառավարութայան կողմից, թալաններ քրդերի կողմից: Այս ամենը իթթիհաթական ոճրագործ Հիլմիի (վերջերս Էրզրումից այստեղ եկած) գործերն են: Ժողովուրդը ահաբեկված խուճապով փախուստ է տալիս գիշերը դեպի Սասնո սարայան ջերը: Այս վիճակի նկատմամբ թեեւ անհույս հարկադրված պիտի լինենք պայթեցնելու:

Սասունում Փսանքը, Խուլիքը եւ Խիանքը ավերակ են: Տեղի ժողովուրդը մերկ ու անոթի ապաստանել է Սասունում: Վերին Սասունի, Սլիվանի եւ Դիարբեքրի հայրության մեծ տոկոսը ջարդված եւ ցրված է: Նույնն է նաև Էրզրումում, ուր հայերին քչել են դեպի <երկրի> ներսերը, ջարդել են նաև Բիթլիսի շրջակա հայ գյուղերը, ինչպես նաև Խնուսի գյուղերը:

Թուրք թե քուրդ ազգաբնակչությունը բոլորովին անհույս է թուրք բանակի հաջողության [կապակցութայամբ]: Դաշտի հյուսիսային քրդերը պատրաստվել են քաշվել Բոնաչեն³⁸-Խուլթի³⁹ մոտակա լեռները՝ առաջին վայրկյանին ոտքի տակ չգնալու եւ ապագայում վերագառնալու հույսով: Մուսա-Ղասրմը եւս, վախենալով վրեժխնդրությունից, Չեր առաջնաղացման պարագայում պիտի գաղթեն: Մուհա-Ջիրների քարավանների ահագին շարքը, որ Բաղեշով ներսերը պիտի անցնեն, չգիտենք ինչու վերագառնալով մեր դաշտով է անցնում դեպի Ճապաղջուր-Տիգրանականերտ. թեեւ Բոնաչան⁴⁰-Սղերդում ծագած քրդական շարժումների պատճառով է, որի մասին լավում է: Դաշտի քուրդ ժողովուրդը հայերին հովանավորելու առաջարկներ է անում: Հավատացած ենք, որ նրանց մեծ մասը կոտորելու աշխատանքն է, որ բաժանում են, եւ քրդերի գաղթը առանց դրա չի կարող լինել:

Արդեն սկզբից իսկ գրեթե բացառապես քուրդ համիդիներով եւ բռնի կամավորներով էր պաշտպանվում Գըլըճ-Կետիկ-Մանազկերտ գիծը: Ներկայումս էլ Դերիկ-Լեղ ճակատը կազմված է բռնի ժողովված եւ դարձյալ դեպի տուն փախնող քուրդ խուճանից: Սրանք էլ Մուշում հազիվ 8-10 օր խիստ թերի կրթություն ստացած, անանուն տէպօ թաքուրներ են՝ թվով 3-4.000, մինչեւ 45 տարեկաններ, բացառապես քուրդ: Սրանց միացված են մանր-մուկ աշխրեթներ՝ թվով հազիվ 1.000: Վերջիններս Դերիկի վերջին կովից հետո բոլորովին հուսահատված, գրեթե անվանապես են մասնակցում կռիվներին: Այս գծի վրա համիդիներ այլուստ գոյություն չունեն: Այդտեղ ունեն 4 դաշտային (մեկի բերանը ճեղքված) եւ 3 լեռնային թնդանոթներ՝ 76 բեռ ուղամամթերքով: Հրամանատարն է Պոլսի զինվորական ակադեմիայի ուսուցիչ հազարապետ Օսման բեյը՝ այստեղ եկած իբրեւ տէպօ թաքուրների վարժեցնող: Սպայակուլ չունեն: Կառավարում է ինքը՝ Բուլանըխի կայմակամ էսսագ բեյը:

Ախլաթ-Վան գծի վրա, չենք կարծում, թե ունենան ավել, քան 5.000 անկանոն (տէպօ եւ աշխրեթ) եւ Էրզրումից եկած մի քանի հարյուր կանոնավոր ճիավոր զորք: Այդ ուժի թնդանոթների թիվը մեզ անհայտ է: Դրանց վրա ավելացավ Էրզրումից եկող Էնկյուրի-Գասթէմունիի 5-րդ պատերազմական ուժ անունով Ֆըրդան՝ բաղկացած 6-8.000 զորքից (որոնց կեսը նորակոչ անվարժներ են): Ունեն 4 մէթրալիոզ եւ 6 թնդանոթ, նաև գունդ սապօրնիկ, բատալիոնում ունեն նաև թէլէֆօնի գործիքները: Հրամանատարն է Բեքիր Սամի փաշան, ունի սպայակուլտի մեկ սպա:

Սրանց բանակատեղը հաստատված էր մեր դաշտի արեւելյան ծայրում՝ Կոզնի⁴¹-Գատվան⁴²-Խնճորիկ⁴³ վայրերում: Ի նկատի պետք է ունենալ, որ վերջին տեղեկությունը բացարձակ ստուգություն չի կարող ունենալ, քանի որ մենք անձամբ չենք կարողացել ստուգել: Ստույգ է, սակայն, որ այժմ պաշար եւ ուղամամթերք է տարվում Դատվան: Վերջերս Բաղեշ է եկել նաև Այնթափի Ֆըրդան՝ կազմված անկանոն զորքերից, որոնց հրամանատարի անունը մինչ այժմ չենք կարողացել ճշտել: Կանոնավոր զորքի կենտրոնը միայն Էրզրումն է, իսկ ուղամամթերքի աղբյուրներն են Էրզրումը եւ խարբերդը (վերջինից 200 բեռ ուղամամթերք եկավ վերջերս եւ անցավ Ախլաթ): Ներկայիս պաշարի կենտրոնն այստեղ է, որտեղից էջեր-

ով, եզներով եւ Հայերի կռնակով փոխադրվում է դեպի Դատվան:

Տեղիս բոլոր պաշտոնյաներն ընտանիքներն ուղարկել են երկրի ներսերը: Այժմ տեղումս երեք Հայ վանքերում տեղավորված են 100-200-ական քուրդ անկիրթ զորքերը, իսկ քաղաքում կան 200 քուրդ անկիրթ ոստիկաններ եւ 150 կանոնավոր ձիավոր ոստիկաններ: Կա նաեւ մեկ Հին սիստեմի փոքր թնդանոթ՝ շատ քիչ ուղմամթերքով:

Դերիկ-Կոպի միջեւ Ձեր տարած հաղթութիւնից (բանակի գրեթե կեսը ջարդված է) ոռու բանակը չկարողացավ օգտվել: Այն սարսափն ու խուճապը, որ այդ վայրկյանին տիրում էր թուրք բանակում, Ձեր վճռական եւ արագ առաջխաղացման դեպքում Ձեզ անարգել պիտի բերեր Մուշ, Հնարավորութիւն պիտի տար Ձեզ վերջնականապէս ջախջախել բանակի մնացորդը եւ Հետեւից կտրել Ախլաթի ճակատը: Թշնամու այդ չնչին ուժի առջեւ Ձեր տատանումները եւ դանդաղումը ոչ միայն միջոց է տալիս սրանց զանազան միջոցներով կասեցնել Ձեր առաջխաղացումը, այլեւ Հաստատ ու վճռական է դարձնում մենակ մնացած Տարոնի Հայութեան ջարդը: Վստահ եղեք, որ <եթե> վճռական հարվածով թույլ չտաք սրանց դանդաղ եւ կանոնավոր նահանջը, այդ դեպքում միայն Հայ ժողովուրդը կարող է փրկվել, այլապէս սրանց դանդաղ նահանջը Հայերի կորուստն է: Ի սեր Աստծո, ժամ առաջ շարժվեք: Շատ հավանական է, որ թուրք զորքը դանդաղ շարժման պարագայում գա (Ախլաթի եւ Բուլանըխի գծից) ամրանալու Խութ-Սասուն-Կողմո լեռնալանջերում. դա նույնպէս հավասար է մեր բնաջնջման: Եթե ոչ բանակը, գոնե մեր ընկերներից մի լուրջ ուժ ի վիճակի պիտի լինի Հասնել մեզ: Հաջողելու համար ձեռնտու է, որ ներսից պայթեցնենք... Թեեւ մենք մեր ուժերով 3-4 օրից ավելի չպիտի կարողանանք դիմադրել (ձեռնարկի կամ ջարդի դեպքում), բայց ստիպված ենք պայթեցնել, որովհետեւ տեղական կառավարութիւնը, մի կողմից Ձեր մոտրկութիւնից սոսկալով, մյուս կողմից մեր կազմակերպական ուժի վերաբերյալ նախապաշարմունք ունենալով, առայժմ զգուշանում է միանգամից շարժում ստեղծելուց, այլ աստիճանաբար եւ սիստեմատիկ կերպով սկսել է քայքայել ժողովրդին՝ օրական մի գյուղի դիմելով եւ աչքի գարնող անձանց ձերբակալելով ու գաղտնի սպանելով եւ իբրեւ աշխատավոր այստեղ-այնտեղ փոխադրված Հայ երիտասարդներին անհետ կորցնելով: Այս եւ նման բազմաթիւ գազանային գարգացումները պայթիւնը մեզ ձեռնու են նկատել տալիս:

Ավելորդ չենք նկատում շեշտել, որ ոռու բանակում Հայ կամավորների ներկայութիւնը ավելի սաստկացրեց թուրք խուճանի եւ կառավարութեան կատաղութիւնը մեր նկատմամբ, Հետեւաբար Ձեր ներկայութիւնը րոպե առաջ զգալի արեք նաեւ Մուշում, որ այնքան խիտ հայութիւնը սոսկումով իր օրերն է հաշվում:

Ուստի խնդրում ենք պատասխանել մեր հետեւյալ հարցերին.

1. Դեպի մեր շրջան առաջխաղացման Ձեր ծրագիրն ի՞նչ է (ո՞ր գծերով եւ ի՞նչ ուժերով եւ ե՞րբ մոտավորապէս):
2. Գալու եւ կրկին նահանջելու հարկադրութեան պարագայում Ձեզ Հետ ունենալ 1.500-2.000 ավելորդ հրացաններ իր պաշարով՝ ժողովուրդն իր տեղում պահելու եւ կոտորածից ազատելու համար:
3. Քանի որ այսպէս կամ այնպէս պայթիւնն անխուսափելի պիտի լինի, այժմ կարող եք մեր ընկերներից մի քանի հարյուր (3-500) ձիավոր մի գիշերվա մեջ Հասցնել մեզ՝ միեւնույն ժամանակ բանակն էլ շարժման մեջ դնելով:
4. Ի՞նչ է բանակի կարծիքը. մեր նախահարձակ լինելու՞, թե՞ ինքնապաշտպանութեան դիրքն է ձեռնտու բանակին (ի նկատի ունեցեք մեր ուժը, քանակը):
Խնդրում ենք շուտով պատասխանել մեր այս հարցերին:
Ընկերական ջերմ համբուլըներով՝

[ՀՅԴ] Դ[ուրան]-Բ[արձրավանդակի] Կ[ենտրոնական] Կոմիտե

Ֆ. 1457, ց. 1, գ. 95, թ. 12-15: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթագրութիւններ

1. Կոպ (Կոփ) - գյուղ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Բուլանըխի գավառակում
2. Դերիկ (Դերըկ, Դերըք, Տերիկ) - գյուղ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Մուշի գավառակում

3. Ախլաթ (խլաթ) - գյուղաքաղաք եւ գավառակ Բիթլիսի վիլ. Բիթլիսի գավառում
4. Բուլանըխ (Բուլանըղ) - գյուղաքաղաք եւ գավառակ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառում
5. Բաղեշ (Բիթլիս) - քաղաք Բիթլիսի վիլայեթի Բիթլիսի գավառում
6. Էնկյուրի - բերդ Սեբաստիայի նահանգի Թոխատի գավառում
7. Նկատի է առնվում ռազմա-դաշտային հեռախոսը
8. Բնագրում միտքն ընդհատված է:
9. Քոսուր (Քոսուրներ) - գյուղախումբ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Մուշի գավառակում եւ լեռնաշղթա Մուշի եւ Բուլանըխի գավառակների սահմանագլխին
10. Օսմանյան քաշի միավոր
11. Բնագրում կետադրական նշանների (գույց եւ եւ որեւէ ապրանքատեսակի անվանման) բացակայութեան պատճառով չի հասկացվում, թե որ թիվը որ ապրանքատեսակին է պատկանում
12. Թուլթախ - ավան Էրզրումի վիլ. Բայազետի գավառի Այնթափի գավառակում
13. Մանազկերտ - գյուղաքաղաք եւ գավառակ Բիթլիսի վիլ. Մուշի գավառում
14. Բյուրակն (Բինգյոլ) - գետ եւ լեռ Արեւմտյան Հայաստանում
15. Վարդո - գավառակ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառում
16. Ճապարջուր - գավառակ Բիթլիսի վիլայեթի Գենջի գավառում
17. Գրգուռ - լեռ Արեւմտյան Հայաստանում
18. Բաղեշի կիրճ - Հայկական Տավրոսի ամենամատչելի լեռնանցքը՝ Հայտնի Ձորապահար
19. Մոտկան - գավառակ Բիթլիսի վիլայեթի Բիթլիսի գավառում
20. Կոլտիկ - գյուղ Դիարբեքիւրի վիլայեթի Դիարբեքիւրի գավառակի Սիլվանի գավառակում
21. Տավորիկ - գյուղ Բիթլիսի վիլայեթի Գենջի գավառի Խուլփի գավառակում
22. Կետիկ (Կետակ, Կետեկ, Գետիկ, Գետեկ, Գետակ) - գյուղ Էրզրումի վիլայեթի Էրզրումի գավառի Խորասանի գավառակում
23. Ենթագրում ենք, որ պետք է լինի «...Վանի օրինակով Ձեր հարձակումն իմանալով կարող ենք...»
24. Չուխուր - գյուղ Էրզրումի վիլայեթի Երզնկայի գավառում, ինչպես նաեւ Բիթլիսի վիլայեթի Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում
25. Մուշաղ (Մուշաղա) - գյուղ Էրզրումի վիլայեթի Էրզրումի գավառում
26. Խլիճ (Խլլըճ, Գլլըճ) - գյուղ Էրզրումի վիլայեթի Բայազետի գավառի Ալաշկերտի գավառակում
27. Լեղ (Լեղան) - գյուղ Էրզրումի վիլ. Էրզրումի գավառի Կիսիկի գավառակում
28. Դերջան - գավառակ Էրզրումի վիլայեթի Էրզրումի գավառում
29. Ֆարդին (Ֆարդին) - գյուղ Դիարբեքիւրի վիլայեթի Դիարբեքիւրի գավառում
30. Սիլվան - գյուղաքաղաք եւ գավառակ Դիարբեքիւրի վիլայեթի Դիարբեքիւրի գավառում
31. Օսմանյան կայսրութեան վարչական միավորներից մեկի՝ գավառակի (կազա) ղեկավար
32. Փսանք - գյուղ եւ գավառակ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառում
33. Խուլփի - գյուղ եւ գավառակ Բիթլիսի վիլայեթի Գենջի գավառում
34. Խիանք - գյուղ եւ գավառակ Բիթլիսի վիլայեթի Գենջի գավառում
35. Բշերիկ (Պշերիկ) - գավառ Դիարբեքիւրի վիլայեթում
36. Փասուր (Բասուր) - գյուղ Բիթլիսի վիլ. Գենջի գավառի Խուլփի գավառակում
37. Ռահվա - լեռնանցք Հայկական Տավրոսի կենտրոնական մասում
38. Բունաշեն - գյուղ եւ գյուղախումբ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Սասունի գավառակում
39. Խուլթ - գյուղ եւ գյուղախումբ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Սասունի գավառակում
40. Բոհտան (Արեւելյան Տիգրիս) - գետ Արեւմտյան Հայաստանում
41. Կոդնի (Կոդն) - գյուղ Բիթլիսի վիլայեթի Բիթլիսի գավառում
42. Դատվան - գյուղ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Սասունի գավառակում
43. Խնձորիկ - գյուղ Բիթլիսի վիլայեթի Մուշի գավառի Փսանքի գավառակում

**ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՂՐԻՄ-ԴՈՆՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1919թ.)**

Հայկական պետականության վերածնունդը աշխարհասփյուռ Հայության շրջանում մայր Հայրենիքում ազգային կյանքով ապրելու վերաբերյալ որոշակի հույսեր ու ցանկություններ ծնեցին:

Մեծ էր անկախ Հայաստանի հմայքն ու ձգողական ուժը, սակայն, սուղ էին նրա հնարավորություններն ու կարողությունները:

1919թ. սեպտեմբերի 24-ին Երեւանում հիմնադրվում է Ղրիմ-Դոնյան Հայրենակցական միությունը, որի հիմնական նպատակը ներգաղթի կազմակերպումն էր: Միությունն նախագահ է ընտրվում Ս.Վրացյանը:

Միության նախագահը, Հայրենակիցներին ավելորդ, անհարկի փորձությունների չենթարկելու նպատակով, քաջածանոթ լինելով հանրապետության քաղաքական, տնտեսական վիճակին, նրանց տեղեկացնում է գոյություն ունեցող պայմանների ու սպասվող դժվարությունների մասին:

Ստորեւ ներկայացվող վավերագրերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաեւ Ղրիմի եւ Դոնի Հայության 1919թ. հասարակական ու կրթական կյանքի վերաբերյալ: Բոլոր վավերագրերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 1265): Զերկնվելու համար փաստաթղթերի վերջում ֆոնդի համարը չենք նշում:

Ավարդ Ղազիյան

N 1

**ՄԻՄՖԵՐՈՊՈԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

[մայիս] 1919թ.
Սիմֆերոպոլ

1. Армяне, населяющие гор. Симферополь, с целью управления национально-культурной жизни своих членов, образуют Симферопольскую Армянскую общину.

2. Членом Общины является каждый армянин, проживающий в районе гор. Симферополя, который особым заявлением не отверг своей принадлежности к армянской национальности или не пожелал выйти из этой Общины.

3. По достижении 21 года каждый член Общины приобретает активное и пассивное избирательное право.

4. Всем членам Общины ведутся особые списки.

5. Симферопольская Армянская община самостоятельно распоряжается устройством культурно-национальной жизни членов Общины и в этих пределах постановления Общинного совета обязательны для членов Общины.

Примечание: В вопросах религиозных, религиозно-воспитательных и вообще церковных вопросах, церковные приходы, как армяно-григорянский, так и армяно-католический и другие религиозные приходы действуют совершенно самостоятельно.

6. Община управляет, распоряжается и действует в лице особого Совета общины. Число членов Общинного совета определяется по следующему расчету: до 500 членов Общины-11 членов, а на каждые следующие 500 членов-5 членов, при чем не полные 500 принимаются за полные.

7. Срок полномочий Совета общины два года.

8. Члены Совета общины выбираются закрытой баллотировкой всеми членами, внесенными в списки, указанные в 4 сего Положения, без различия пола. Выборы производятся в пропорциональной системе.

9. Совет общины имеет местопребывание в гор. Симферополе имеет свою печать со своим наименованием.

10. Совет общины имеет свой президиум, состоящий из председателя од-

ного, либо двух товарищей председателя и одного либо двух секретарей, избираемых на один год.

11. Совет общины, руководя и распоряжаясь национально-культурной жизнью Армянской общины, ведает делами о:

- а) национальном воспитании,
- б) народном призрении и благотворении,
- в) экономическом и социальном устройстве (как-то: устройство кооперативов, товариществ, союзов, страхования и подобные силе действия),
- г) попечении, заботах и контроле над всеми армянскими культурными, воспитательными и благотворительными учреждениями.

Примечание: Указанный в пункте "г" сего параграфа контроль имеет целью наблюдать за учреждениями, перечисленными в упомянутом пункте в соответствии их деятельности, задачам и целям нации.

12. Совет общины входит в сношения с местными органами государственной и краевой власти, городского и земского самоуправления по делам, касающимся армян, а также и с органами самоуправления армян в других областях и с Центральным Армянским Национальным управлением.

13. Средства Симферопольской Армянской Общины составляют:

- а) обязательные взносы платежи всех ее членов,
- б) из всех недвижимых имуществ и капиталов, армянских переквей и монастырей, находящихся в районе Общины, та часть, которая в будущем по соглашению будет выделена в пользу нации,
- в) пожертвования и отказы по завещаниям,
- г) доходы с принадлежащих Общине движимых к недвижимым имуществ.

14. Исполнительным органом Общинного совета является Общинная управа.

15. Управа состоит из трех членов, избираемых Советом общины из членов Общины на два года, но во всяком случае срок службы членов Управы кончается с окончанием полномочий Совета их избравшего.

16. Вопрос о вознаграждении членов Управы решается Советом пред избиранием членов Управы.

17. Совет избирает из состава членов Управы председателя управы.

18. В лице Управы, как исполнительного своего органа, Симферопольская Армянская община, как юридическое лицо, осуществляет все имущественные и гражданские права, приобретает движимое и недвижимое имущество, отчуждает и закладывает его, вступает в договорные отношения, пользуется юридической защитой и прочим.

19. На Управу возлагается:

- а) ведение списков членов Общины (4),
- б) приведение в исполнение всех постановлений Совета,
- в) представление Совету докладов, предположений по делам Общины,
- г) приглашение служащих по выработанному Советом штату,
- д) собрание, хранение и расходование сумм, принадлежащих и причитающихся Общине,
- е) выдача доверенностей и полномочий для защиты имущественных и гражданских интересов Общины.

20. При Управе состоят избранные Советом общины подготовительные комиссии по всем отраслям управления Совета, действующие на основании особых инструкций и наказов Совета.

21. Заседание Совета Общины считается законным при наличности половины всех его членов, за исключением случая, предусмотренного в 22.

22. Все вопросы решаются простым большинством голосов и открытой баллотировкой, за исключением тех случаев, когда три члена потребуют закрытой оаллотировки. Равным образом вопрос об исключении членов из Общины разрешается только закрытой баллотировкой, при чем для законности решения необходимо присутствие на заседании Совета не менее 2/3 состава его членов.

23. Поводами исключения из Общины служат: 1) осуждение судебных приговоров по уголовному делу, сопряженное с ограничением прав, 2) неподчинение постановлениям Общинного совета, 3) поступки антиобщественного характера.

24. Заседания Совета ведутся особые журналы, оглашенные и принятые им и скрепленные подписями председателя и одного из секретарей.

25. За три месяца истечения полномочий Общинного Совета, последний избирает комиссию для организации выборов нового Совета.

26. Для ревизии отчетности, наличности, книг, документов, делопроизводства Общинного совета и всех находящихся в его ведении учреждений Советом общины избирается ревизионная комиссия из числа членов Общинного совета, при чем число членов комиссии и срок их полномочий устанавливается Общинным Советом.

27. При ликвидации дел Общины по какой либо причине все ее средства по постановлению Общинного совета определяются на культурные дела армян и передаются тому учреждению, которое таковыми ведает.

ց. 1, գ. 40, Թ. 28-29 Էւ Հաղ.: Պատճեն: Մեքենագիր:

N 2

ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1 օգոստոսի 1919թ.
Սիմֆերոպոլ

NN групп плателчи ков	Размер облагаемого имущества, капитала или получ. доходов			налоговые ставки, проектиров. Финансовой Комиссией	Налоговые ст. Утверж- денные Общинным советом
1	Свыше	5.000 р.	до 10.000р.	50 р.	50р.
2	“	10.000	“ 20.000	100	100
3	“	20.000	“ 30.000	150	150
4	“	30.000	“ 40.000	200	200
5	“	40.000	“ 50.000	250	250
6	“	50.000	“ 75.000	350	
7	“	75.000	“ 100.000	500	500
8	“	100.000	“ 150.000	750	
9	“	150.000	“ 200.000	1.000	1.200
10	“	200.000	“ 250.000	1.200	
11	“	250.000	“ 300.000	1.500	2500
12	“	300.000	“ 400.000	1.800	
13	“	400.000	“ 500.000	2.000	3.500
14	“	500.000	“ 750.000	2.500	
15	“	750.000	“ 1.000.000	3.000	5.000
16	“	1.000.000	“ 1.500.000	3.500	
17	“	1.500.000	“ 2.000.000	4.000	7.500
18	“	2.000.000	“	5.000	

Симферопольский Армянский общинный совет на своем заседании от 1-го августа 1919 года постановил утвердить ставки, выработанные финансовый комиссией.

Председатель Финансовой комиссии

К.Алтунджи

Председатель Симферопольской
Армянской общинной управы Евр.

И.Кефчиянц

ց. 1, գ. 40, Թ. 32: Պատճեն: Մեքենագիր:

N 3

ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՀՈՒՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՊԱՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26 օգոստոսի 1919թ.

N 367

Սիմֆերոպոլ

Քաղաքիս ուսումնարանական խորհուրդը յուր կազմվելու օրերից սկսել է մի գործունեություն, որ հակահայկական բնավորություն է կրում: Քննությունների խնդիրը, որի առաջն առնվեցավ իր ժամանակին Ձեր աշխատանքներով, հայտնի է: Սրանով ներկայումս ուղարկում ենք Ձեզ այն թղթերի պատճենները, որ խորհուրդը փոխանակել է ժողովրդական կրթության բաժանմունքի հետ, որոնցից բարեչնորհությունը կարող է տեսնել, որ խորհուրդը ոչ թե միայն ձգտում է քննությունների հրավիրել մեր դպրոցների աշակերտներին, այլև ակներե ցույց է տալիս հակումն տեր լինել մեր դպրոցներին, կառավարել նրանց եւ պաշտոնյաներ նշանակել նրանց մեջ: Նա գործում է այնքան անձնագորու եւ գործին անտեղյակ եղանակով, որ մինչեւ իսկ մոռանում է, որ մեր դպրոցները հոգեւոր ծխական դպրոցներ են, ուստի եւ ոչ մի կերպով համեմատություն մեջ դրվել քաղաքային դպրոցների հետ կարող չեն:

Այս բոլորը մենք պարտք ենք համարում տեղակազրել Ձեզ ի գիտություն, որպեսզի, երբ խորհուրդը կամենայ խոսքից գործի անցնել բարեչնորհությունը տեղյակ լինի գործի հանգամանքներին պատշաճ տնօրինելու համար:

Համայնական վարչություն նախագահ

ց. 1, դ. 40, թ. 21: Պատճեն: Ձեռագիր:

N 4

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒ ՀԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՆ ՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 1919թ.

N 368

Նոր Նախիջևան

Настоящим честь имею просить Управу не отказать сообщить насколько верно, что городским Училищным советом возбужден вопрос о том, могут ли быть назначаемы на должности заведующих городскими начальными школами лица армяно-григорянского вероисповедания, и если это верно, то какие шаги Управа намерена принять в защиту законных прав учителей-учительниц армяно-григорянского вероисповедания. Сведения эти нужны для доклада Общинному совету.

Председатель общинной управы

ց. 1, դ. 40, թ. 22: Պատճեն: Ձեռագիր:

N 5

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ «ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՏԵՂՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԻՄՆԱԶԻԱ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[օգոստոս] 1919թ.

Սիմֆերոպոլ

По инициативе комиссии по Народному Образованию Симферопольс-кого Армянского Общинного Совета в настоящем 1919/20 учеб. году решено открыть в Симферополе первые два класса Армянской гимназии, чем будет положено начало

делу, необходимость какового давно уже ощущалась всеми сознательными слоями крымского армянства и неоднократно подчеркивалась на съездах и совещаниях. На первых парах дело будет организовано на скромных началах. Как уже сказано выше, в предстоящем учебном году откроются только два класса гимназии I и II, остальные же будут открываться постепенно. Гимназия рассчитана приблизительно на 40-50 учащихся. Временно занятия будут производиться в послеобеденные часы (от 3-х до 8-ми) в помещении Симферопольского Армянского Училища. Преподавание будет вестись на армянском языке, за исключением русского языка и русской истории. В программу первых двух классов войдут следующие предметы:

- | | |
|--------------------------|----------------------|
| 1. Армянский яз. | 8. История всеобщая. |
| 2. Русский - " - | 9. " " армянская. |
| 3. Французский яз. | 10. " " русская. |
| 4. Арифметика. | 11. Закон Божий. |
| 5. Геометрия (со II кл.) | 12. Пение. |
| 6. Естествоведение. | 13. Рисование. |
| 7. География. | 14. Гимнастика. |

Гимназия, несомненно, получит все права.

Обучение для детей несостоятельных родителей-бесплатное. Для более или менее состоятельных установлена будет плата за право учения в размере не свыше 200 руб. в год. Неимущие учащиеся будут получать безвозмездно учебники, пособия учебные и пр. условия приема в гимназии следующие:

1. В I-ый класс будут приниматься:

а) без экзамена: 1) лица, перешедшие из IV-го V-ое отделение двухклассных армянских училищ с пятилетним курсом обучения и 2) окончившие начальные армянские училища с 4-х годичным курсом.

б) с дополнительным экзаменом по армянскому языку: перешедшие из подготовительного класса русских средне-учебных заведений в I-ый класс.

Все прочие будут подвергнуты испытаниям по всем предметам.

2. Во II-ой класс будут приниматься:

а) без экзамена: 1) лица, окончившие двухклассные армянские училища с пятилетним курсом, 2) перешедшие из V-го в VI-ое отделение в 2-х классных армянских училищах с шестилетним курсом:

б) с дополнительным экзаменом по армянскому языку-лица, перешедшие из I-го во 2-ой класс русских средне-учебных заведений.

Все прочие-с испытаниями по всем предметам.

Расходы по содержанию гимназии в 1919/20 учеб. году выражаются в сумме около 40.000 рублей, большую часть каковой суммы (около 25.000 руб.) примет на себя Симферопольский Армянский общинный совет.

Сообщая Вам об изложенном, убедительно просим Вас.:

1) широко оповестить армянское население города об открывающейся гимназии,

2) внести посильную лепту в дело основания первого в Крыму армянского средне-учебного заведения.

Просим по возможности незамедлительно сообщить нам: 1) можно ли рассчитывать на некоторый контингент учащихся из Вашего города, 2) каково отношение Вашего Комитета к открывающейся гимназии, 3) какую приблизительно сумму может ассигновать на это дело Ваш Комитет и 4) можно ли рассчитывать на частные пожертвования со стороны членов Вашей общины. Скорое выяснение указанных вопросов крайне необходимо для составления окончательной сметы. Ждем незамедлительного ответа.

Председатель
Делопроизводитель

С.Гамалов
А.Шахбазян

Գ. 1, գ. 40, թ. 27 Եւ Հակ.: Պատճեն: Ձեռագիր:

N 6

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՆԱՄԱԿԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԿՋԲՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

12 սեպտեմբերի 1919թ.
Նոր Նախիջևան

В разъяснении начальника Отдела Народного Просвещения от 24-го сего июня Городская управа усматривает противоречие, которое необходимо выяснить: с одной стороны назначаются заведующие по примеру прошлых лет, а с другой назначения ставятся в зависимости от исповедания. Настоящим Городская Управа имеет честь сообщить, что в прошлом при назначениях заведующих считались только с их подготовительностью к несению должности заведующих, религиозные вырвания считая делом внутреннего убеждения. Городскую Управу интересовала только постановка учебного дела в городских начальных училищах и насколько заведующие и преподаватели, соответствуют по своим знаниям, опыту и способностям своему назначению ныне стало известным, что при назначении учителей и заведующих будут руководствоваться их вероисповеданием. Городская управа считает, что этим будет нанесен ущерб училищному делу и просит Училищный совет войти в отдел с просьбой руководствоваться при назначении заведующих практикой прошлых лет.

Член Управы
С подлинным верно
делопроизводитель

С.Восканов
К.Хашумян

ց. 1, դ. 40, թ. 35: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐԻՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 սեպտեմբերի 1919թ.
Նոր Նախիջևան

N 3891

Կից Հյուպատոսարանին հաստատվում է խորհրդակցական մարմին 7 անձերից: Երկուսին ընտրում է Արեւմտահայ խորհուրդը, երկուսին պարսկահայութիւնը եւ երեք հոգի տալիս է ռուսահայութիւնը եւ քանի որ Համայնական խորհուրդն է լիազոր ներկայացուցիչը տեղիս հայութեան, խնդրում եմ ընտրել երեք հոգի հիշյալ մարմնի համար:

Հարգանքներս՝
Ռոստովի հայկական Հյուպատոս
Քարտուղար

Գ.Չալխուշյան
Ն.Չալխուշյան

ց. 1, դ. 40, թ. 42: Բնագիր: Մեքենագիր:

N 8

ՂՐԻՄ-ԴՈՆՑԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

[սեպտեմբեր] 1919թ.
Երեւան

1. Ղրիմ-Դոնյան Հայրենակցական Միութիւնը նպատակ ունի.
ա) նյութական եւ մտավոր-քարոյական օգնութեան հասնել իր անդամներին ու նորեկ Հայրենակիցներին.
բ) Կենդանի կապ պահպանել Հայաստանի Հանրապետութեան եւ հայ գաղութներին մեջ.

- դ) Ժողովրդականացնել եւ աջակցել Հայրենակիցների ներգաղթին դեպի Հայաստան.
2. Այս նպատակին Հասնելու համար Հայրենակցական Միութիւնը
- ա) Դրամական օժանդակութիւն է ցույց տալիս իր չքավոր անդամներին եւ աշխատանք է ճարուժ նրանց համար.
- բ) Դասախոսութիւններ, Հանդեսներ, զրույցներ, ներկայացումներ եւ կազմակերպում, ակումբ, գրադարան-ընթերցարան եւ հիմնում.
- գ) Տեղեկութիւններ հավաքում եւ իր անդամներին հաղորդում գաղութային Հայրենիքի կյանքից ու իրադարձութիւններից.
- դ) Փոխադարձաբար գաղութային Հայրենիքն իրագրել է պահում միշտ Հայաստանի պետական-ժողովրդական կյանքին ու գործունեութեան.
- ե) Միջնորդելով թե Հանրապետութեանս իշխանութեան եւ թե գաղութի ազգային-հասարակական հաստատութիւնների առաջ-կանտնաւորում-հաջողեցնում է Հայրենակիցների ներգաղթը դեպի Հայաստան:
3. Հայրենակցական միութեան միջոցներն եւ կազմում
- ա) Անդամավճարները, որոնց չափը որոշում է ամեն տարի Միութեան այն ընդհանուր ժողովը, որ կատարում է վարչութեան ընտրութիւնը.
- բ) Մասնավոր նվիրաբերութիւններն ու կտակներն եւ ազգային-հասարակական հիմնարկութիւնների նպաստները.
- գ) Միութեան գույքերից ստացած եկամուտը եւ ձեռնարկութիւններից ունեցած մուտքը.
4. Միութեան իսկական անդամներն են համարվում Դոնի եւ Ղրիմի Հայաստանում ապրող եւ 17 տարին լրացած Հայերը, որ կհատուցեն որոշյալ անդամավճարը եւ կենթարկվեն սույն կանոնադրութեան: Օժանդակից անդամներն են համարվում նրանք, ովքեր չլինելով Դոնի-Ղրիմի Հայաբնակ հատուցանում են սահմանյալ անդամավճարը, առանց ընտրողական լիազորութեան եւ 2-ի ա) կետում նախատեսված օժանդակութեան ստանալու իրավունքի:
5. Հայրենակցական Միութեան բարձրագույն իշխանութիւնը Հանդիսանում է ընդհանուր ժողովը, որին մասնակցելու իրավունք ունեն իսկական անդամները: Ընդհանուր ժողովն օրինական է համարվում ա. անգամին անդամների կեսի ներկայութեան դեպքում, իսկ բ. անգամ անկախ թվից: Ժողովը հրավիրում է Վարչութեանը, վերստուգիչ Հանձնաժողովը եւ անդամների մեկ քառորդի գրավոր հրավերով:
- Ծանոթութիւն-Ընդհանուր ժողովի օրինականութիւնը որոշելիս Երեւանից դուրս գտնվող անդամները հաշվի չեն առնվում.
6. Ընդհանուր ժողովը.
- ա) Հաստատում է նախահաշիվը եւ քննում հաշիվը.
- բ) Ընտրում է Վարչութիւն, վերստուգիչ Հանձնաժողով եւ այլ պատշաճավոր մարմիններ կարիքն եղած դեպքում.
- գ) Կազմում եւ հաստատում է Միութեան Վարչական-գործադիր մարմինների համար պատշաճ հրահանգներ.
- դ) Պարտազանց անդամներին հեռացնում է ժողովին ներկա եղող անդամների 3/4 որոշմամբ եւ լուծում Հայրենակցական Միութիւնը վերջինիս բոլոր անդամների 2/3-ի համաձայնութեամբ.
- ե) Ընդհանրապես վերջնական լուծում է տալիս Միութեան կյանքում հարուցված բոլոր գործերի ու տարաձայնութիւնների.
7. Միութեան գործադիր իշխանութիւնն է կազմում Վարչութիւնը բաղկացած նախագահից, փոխնախագահից, քարտուղարից եւ գանձապահից: Վարչութիւնը ընտրվում է մի տարի ժամանակով:
8. Վարչութիւնն անմիջական կատարողն է սույն կանոնադրութեամբ նախատեսված նպատակների, եւ ընդհանուր ժողովի պարտ ու պատշաճ վճիռների եւ կազմած հրահանգների:
9. Վարչութեան Հետ միաժամանակ ընտրվում է 3 Հոգուց կազմված մի վերստուգիչ Հանձնաժողով եւ այլ համապատասխան մարմիններ, որոնց կազմակերպութիւնն ու գործունեութիւնը որոշում է ընդհանուր ժողովը հաստուկ հրահանգներով:

10. Ընկերություն վերացման դեպքում նրա բովանդակ դրամական-նյութական միջոցները եւ ամբողջ գործավարությունը անցնում է Նոր Նախիջեւանի Հայ Համայնքին, որը դրանք գործադրելու է Ց 1-ի համաձայն: Ինքնակամ լուծելու դեպքում Ընկերության միջոցների գործադրությունը որոշում է ընդհանուր ժողովը համաձայն սույն կանոնադրության 6 դ) կետի:

Ա.Վրացյան
Գ.Հակոբյան
Ա.Այդինյան

ց. 1, գ. 40, թ. 69 եւ շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

N 9

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Գ.ՉԱԼԽՈՒՇՅԱՆԻՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ ԿԻՑ
ԽՈՐՀՐԳԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

7 հոկտեմբերի 1919թ.
Նոր Նախիջեւան

N 457

Մեծապատիվ պ. Չալխուշյանին
Համաձայն մեծապատվությանդ N 3831, 14 սեպտեմբերի թվակիր Հայտարարության, Համայնական խորհուրդը իր հոկտեմբերի 6-ին կայացած նիստում ընտրեց 4 ներկայացուցիչ (չորրորդը ավելացրած Ձեր հավանությանդ) Հյուպատոսարանիդ կից կազմվելիք խորհրդակցական մարմնին անդամակցելու համար: Ընտրվածները Հետեւյալ անձինք են՝ պ. պ. ուսուցչապետ Կարապետ Աղաջանյան, բժիշկ Անդրեաս Սարթիկյան, իրավաբան Խաչերես Փորքեյան, Հաշվապահ Ստեփան Զոհրաբյան:

Համայնական խորհրդի ընտրության մասին վարչությունս պատիվ ունի սրանով հաղորդել մեծապատվությանդ:

Նախագահ Ե.Շահազիզ
Ի քարտուղար

ց. 1, գ. 40, թ. 43: Պատճեն: Ձեռագիր:

N 10

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽՆԱՅՈՂԱԲԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9 հոկտեմբերի 1919թ.
Նոր Նախիջեւան

N 463

Այսօր առավոտյան գալով գրասենյակս, դահլիճիս բոլոր լապտերներն էլ վառ գտա, որ անկասկած պետք է վերագրել այն Հանգամանքին, որ միջանցքից երեկոյան կամ գիշերը մեկնումեկը տան մեջ ապրողներից բաց է արել միջանցքը լուսավորելու նպատակով:

Ի նկատի առնելով, որ տանդ լուսավորության ծախքի մի երրորդ մասը, ըստ պայմանի, բաժին է ընկնում Համայնքիս, պարտք ենք համարում սրանով հրավիրել Հարգելի վարչությանդ ուղղորդությունը այդ տարրական Հանգամանքի վրա եւ պատասխանատվությունը Հանել մեր վրայից, նամանավանդ որ այդ կարող է այնուհետեւ եւս կրկնվել:

Չպետք է մոռանալ, որ դահլիճումս վառվում են 3 Հատ 16 ճրագանոց ու մի Հատ 600 ճրագանոց լապտերիկներ, որոնց ամբողջ գիշերը վառ մնացած լինելը կա-

րող է կլանած լինել շատ մեծ քանակությամբ էլեկտրական ուժ, չենք ասում արդեն այն, որ թանկարժեք լապտերներն էլ այդ պատճառով կարող են շատ շուտով այրվել ու փչացվել:

Հարգանք

Ե.Շահազիզ

ց. 1, դ. 40, թ. 47: Պատճեն: Ձեռագիր:

N 11

ԴՈՆ-ԿՈՒԲԱՆՑԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐ ՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ՝
ԱՐ ՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԵՑՎԱՇՔԻ ԲՌՆԱԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

N 814

10 Հոկտեմբերի 1919թ.
Նոր Նախիջևան

Имею честь просить командировать своего полномочного представителя в здание армянского ремесленного училища в Нахичевани на 23 октября к 9 часам утра для составления, совместно с представителями Технического и Контрольного Отделов, описи имущества, находящегося в мастерских названного училища к сдачи его, в виду реквизиции мастерских для устройства мастерской Доно-Кубанского Комитета В.З.С.

Заведующий Техническим Отделом инженер

ց. 1, դ. 40, թ. 53: Բնագիր: Մեքենագիր:

N 12

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
ԽՆԱՄԱԿԱԼՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11 Հոկտեմբերի 1919թ.
Նոր Նախիջևան

Армянская Община опекает все учебные заведения г. г. Нахичевани и Ростова н/Д., дополняя дефициты в их бюджетах и всячески заботясь обьеих преуспянии. Кроме того, община постепенно вводит преподавание армянского языка и Закона Божия во всех учебных заведениях г. г. Нахичевани и Ростова н/Д., на что отпускается из своих средств крупную сумму.

Число армянских учебных заведений в обеих городах семь: Духовная семинария, Гогаевская женская гимназия, 8-ми классное коммерческое училище Персидских армян, двухклассное церковно-приходское женское училище св. Рипсимии, и три церковно-приходских школ при церквах.

Число учащихся обоего пола во всех этих учебных заведениях в настоящем учебном году доходит до 20000. Число учащихся-100.

Общий бюджет в настоящем уч. году выражается суммой около 2 мил. половина которой составляет дефицит и пополняется Общиной.

Այս տեղեկությունները տրված են պ. Գր.Չախոբեյանին յուր Դոնի օկրուգին ներկայացնելիք զեկոնցագրին կցելու: Ձեկոնցագրերը ներկայացվելու է սահմանգրույթյան 11-րդ հոդվածը փոփոխելու առթիվ, որը հնարավորություն կտա աղմինիստրատիվ կերպով տուրք գանձել:

ց. 1, դ. 40, թ. 49: Պատճեն: Մեքենագիր:

ՂՐԻՄ-ԴՈՆԵՍԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ ՆՈՐ
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆԵՐԳԱՂԹԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 Հոկտեմբերի 1919թ.
Երեւան

N 5

Հարգելի Հայրենակիցներ.

Դարեր շարունակ երազած «Անկախ Հայաստանի» այժմ անվիճելի իրակա-
նություն դառնալը ցնցեց երկրագնդի բոլոր մասերում ցիրուցան ապրող Հայութ-
յան եւ ամենուրեք համակեց Ազատ եւ Անկախ Հայրենիք վերագառնալու գողա-
փարով: Եվ, հիրավի, այսօր Հայաստանի մայրաքաղաք Երեւանը կարծես մի մուգ-
եռում լինի, որտեղ հավաքվել եւ հավաքվում են տարբեր բարբառով խոսող, տարբեր
կուլտուրայի բովով անցած, սակայն միատեսակ բաբախող սրտերով Հայերի... Այս-
տեղ ներկայացուցիչներ ունեն ամերիկահայերը, բուլղարահայերը, Բեսարաբիան,
Ղրիմը, Դոնը եվն եվն, եւ այս ներգաղթը դեռ շարունակվում է եւ հետզհետե լայն,
մասսայական բնույթ է ստանում:

Որքան էլ ցանկալի եւ անհրաժեշտ համարվի այս երեւույթը, սակայն սա կա-
րոտ է ժամանակավորապես կասեցման եւ որոշ կարգ ու կանոնի տակ դնելու, որ-
պեսզի Հայաստանը ապերյայց երկիր համարողները այստեղ գալով հիասթափվեն եւ
այդպիսով ներգաղթի գործին վնաս չհասցնեն:

Ահա այս հանգամանքը մի կողմից, մյուս կողմից էլ Հայաստանից դուրս
գտնված խոշոր հայ հատվածներին տեղիս իրադարձություններին իրազեկ դարձ-
նելու անհրաժեշտությունը ստիպեցին երեւանաբնակ նորնախիջեւանցի եւ զրիմցի
Հայերին հավաքել եւ հիմնել Հայրենակցական միություն «Ղրիմ-Դոնյան Հայրե-
նակցական միություն» անունով: Սեպտեմբերի 24-ի ընդհանուր ժողովում ընդուն-
վեց Միություն կանոնադրության նախագիծը եւ ընտրեց վարչություն, որի կազմն
է, նախագահ՝ Սիմեոն Վրացյան, փոխնախագահ՝ Գաբրիել Տեր-Հակոբյան, քար-
տուղար՝ Սարգիս Այդինյան եւ գանձապահ Արտաշես Չափլախյան:

Միությունն ուղիղորդում է Հայաստանում վերաբնակվող Հայրենա-
կիցներին օգնության հասնելը մինչեւ նրանց որոշ գործի գլուխ կանգնելը, ապա
աստիճանաբար զեկուցումներ ուղարկելով նոր նախիջեւան եւ Սիմֆերոպոլ՝ իրա-
զեկ պահել տեղիս անցուդարձերին, որպեսզի հակասական եւ չափազանցած տե-
ղեկություններով Հայաստանը ըստ ոմանց արքայություն, իսկ ըստ այլոց, դժոխք
չներկայացվի եւ այդպիսով մտքերն անտեղի պղտորվեն: Բացի այդ Միությունն
նպատակ ունի աջակցել ներգաղթի գործին: Այս ուղղությամբ Միությունն առա-
ջած բավականանում է միայն ցուցակագրությամբ այն անդամների, որոնք կցան-
կանային իրենց մասնագիտությունը օգտակար լինել Հայրենիքին: Ահա այս նպա-
տակով արդեն առաջ է բերվում մի հարցացուցակ, խնդրելով արգոյ համայնքներից
կազմել ըստ այդ հարցացուցակի Հայաստան գալ ցանկացողների ցանկը: Այդ ցան-
կը ստանալուց հետո Միությունն կբանակցի այստեղ համապատասխան հաստա-
տությունների հետ եւ կարիք եղած դեպքում միայն կհրավիրի այս կամ այն ան-
հատը: Միությունն գտնում է անժամանակ մասսայական, խմբերով, մանավանդ
ընտանիքներով եւ տնտեսությամբ ներգաղթը, հակառակ դեպքում դեգերումները
անգործ այստեղ անխուսափելի են իրենց բացասական հետեւանքներով:

Հայաստան գալ ցանկացողների մասին անհրաժեշտ են հետեւյալ տվյալները.
1) ազգանուն, անուն, Հայրանուն. 2) ծննդավայր (գյուղ, քաղաք). 3) տարիքը. 4)
ընտանեկան դրություն (ամուսին, երեխաներ). 5) կրթություն (մասնագիտություն)
որտե՞ղ եւ ե՞րբ է ավարտել. 6) անցյալ պաշտոնավարություն (որտե՞ղ եւ քանի՞
տարի է պաշտոնավարել). 7) Հայրենի լեզվին ի՞նչ չափով է տիրապետում (խոսում
է ազատ գրական լեզվով, թե՞ բարբառով). 8) Հայրենի ի՞նչ չափով է գրագետ
(կարո՞ղ է նամակ, զեկուցում եւն Հայրենի գրել). 9) օտար ինչ լեզուներով ազատ
խոսում ու գրում է:

Այս գրության հետ Միությունն պատիվ ունի արգո համայնքից ներկայաց-
նել յուր անդրանիկ ամփոփ զեկուցումը Հայաստանի արգո կացության մասին: Ան-
հրաժեշտ գտանք ընդ սմին ուղարկել նաեւ տեղում լույս տեսնող «Հառաջ», «Ժո-
ղովուրդ» եւ «Սոցիալիստ Հեղափոխական» լրագրների վերջին N N-ը տեղիս ընթա-

ցրկ կյանքի պատկերը ամբողջացնելու նպատակով:

Նախագահ՝
Փոխնախագահ՝
Գանձապահ՝
Քարտուղար՝

Ս.Վրացյան
Գ.Տեր-Հակոբյան
Ա.Չավրախյան
Ս.Այդինյան

Մակադրուժյուն.
«Ստացա նոյեմբերի 26-ին,
N 296»

ց. 1, գ. 40, թ. 67-68: Պատճեն: Զեռագիր:

N 14

ՂՐԻՄԻ ԵՎ ԴՈՆԵԻ ՀԱՅՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՂՐԻՄ-ԴՈՆՅԱՆ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆՑՈՒԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

15 հոկտեմբերի 1919թ.
Երեւան

N 5

Ղրիմ-Դոնյան Հայրենակցական միութեան նպատակներից մեկն էլ մեր ծննդավայրի Հայրենակիցներին Հայաստանի դրութեանը իրազեկ դարձնելն է: Այդ պատճառով կաշխատենք Ձեզ պարբերաբար տեղեկացնել Հայաստանում անցած-դարձածների մասին՝ այն հույսով, որ փոխադարձաբար դուք էլ մեզ կհաղորդեք այդտեղի նորութիւնները:

Հայաստանն այսօր գտնվում է բախտորոշ վայրկյանի նախօրյակին: Բոլորի աչքերը հառած են դեպի դուրս եւ անհամբեր սպասում ենք մեր անկախութեան վավերացման եւ մանդատի որոշման լուրին: Փարիզից ստացված վերջին տեղեկութիւնները երեւում է, որ հայկական հարցի շուրջը նկատվում է խուլ մրցութիւն: Անգլիան ինքն է կամենում ստանձնել մեր մանդատը եւ այդ պատճառով վարում է համապատասխան քաղաքականութիւն. ձեռնպահ է դեպի բոլոր խնդիրները, որոնք Հայաստանին են վերաբերում եւ, կարծես, ասելիս լինի. «Ամերիկայի մանդատն եք ուզում, թող Ամերիկան էլ օգնի Ձեզ»... Պաշտոնական Ֆրանսիան պարզ թշնամական վերաբերմունք է ցույց տալիս դեպի Հայաստանի անկախութիւնը, երկու պատճառով, նոր՝ որովհետեւ ինքն է կամենում գրավել Կիլիկիան մինչեւ Խարբերդ եւ համառորեն պնդում է ռուս-ֆրանսիական 1916թ. համաձայնութեան վրա, երկրորդ՝ կամենում է Ռուսաստանը վերականգնած տեսնել 1914թ. սահմաններում բուրժուական մամուլը կամ անտարբեր է, կամ, մեծ մասամբ, հակառակ մեզ: «Times»-ը, օրինակ, մի շարք հակահայկական հոդվածներ է հրատարակել: Սոցիալիստներին են միայն, որոնք նույնպես կանգնելով Ռուսաստանի վերականգնման 1914թ. սահմանների վրա՝ Հայաստանի վերաբերմամբ անում են բացառութիւն եւ ընդունում են նրա անկախութիւնն ու միութիւնը:

Միայն Ամերիկան է մնում անվերապահ համակրող մեր անկախութեան. այնտեղ էլ երկու ուժեղ հոսանք կա. 1) Հայաստանի անկախութեան կուսակից առանց մանդատի, 2) մանդատով: Մեր մանդատի խնդիրը կապվում է հաշտութեան պայմանների վավերացման հետ, եւ քանի որ այդ պայմաններն արդեն ծերակույտի կողմից վավերացված են, հավանաբար մեր մանդատն էլ կանցնի: Ամերիկացիք ուզում են ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ Տաճկաստանի, Հայաստանի, Ազրբեջանի եւ Վրաստանի մանդատը-Պոլսից մինչեւ Պարսկաստան եւ Կիլիկիայից մինչեւ Կովկասյան լեռնաշղթան: Այդպիսի եզրակացութիւն կարելի էր հանել այն խոսքերից, որ գեն. Հարբորդն էր անում Երեւանում:

Գեներալ Հարբորդն ավտոմոբիլով անցել է ամբողջ Հայաստանում, Սվազում, Էրզրումում տեսնվել է տաճիկ ապստամբապետներ Մուսթաֆա Քյամիլ փաշայի եւ Ռաուֆ բեյի հետ: Նրանց որոշ գիտողութիւններ է արել: Ամբողջ Տաճկահայաստանում նա շատ քիչ հայ է պատահել, քիչ է նաեւ մահմեդականների թիվը: Երեւանում նրան շատ մեծ շուքով ընդունեցին: Հետը բերել էր շատ մասնագետներ:

եր: Մանրամասը ծանոթացան Հայաստանի դրուժյան: Հավաքեց Հարուստ նյութ եւ որոշ եզրակացութիւններով վերադարձավ Ամերիկա: Նրա զեկուցումը ունենալու է, վճռական նշանակութիւն մանդատի համար: Նա մեկնեց բավական նպատավոր տրամադրութեամբ: Նրա հետ մեկնեց նաեւ գնդապետ Հասկելը՝ Վերսայլի կոնֆերանսի նշանակած բարձր կոմիսարը Հայաստանում: Նա բավական աջակցում է Հայաստանին. ավելի վճռական կարգադրութիւններ անելու նպատակով մեկնեց Փարիզ: Նրա միջամտութեան շնորհիվ էր, որ Հայաստանի եւ Ազրբեջանի միջեւ ստորագրվեց մի համաձայնագիր, որով մինչեւ Փարիզի կոնֆերանսի վճիռը Ղարաբաղը գտնվելու է Ազրբեջանի իշխանութեան տակ, Զանգեզուրը՝ Ազգային Խորհրդի, Շարուր-Նախիջևանը՝ ամերիկյան նահանգապետի, Զուլֆայի երկաթուղին՝ Հայաստանի կառավարութեան:

Առհասարակ, ամերիկյան աջակցութիւնը շատ մեծ է Հայաստանին. վերջերս կնքվեց նոր պայմանագիր մեր կառավարութեան եւ Ամերիկայի ներկայացուցչի միջեւ, որով Ամերիկան խոստանում է մինչեւ եկող օգոստոս ամիսը 800.000 հոգու համար հասցնել հաց մարդու գլուխ 1 ֆունտի հաշվով եւ պարենավորման այլ միջոցներ: Հիմա էլ ստացվում է բավական խոշոր քանակութեամբ ալյուր եւ այլ կարգի նյութեր: Ամբողջ որբերի խնամատարութիւնն ստանձնեցին ամերիկացիք՝ կրթական մասը թողնելով մեր Հանրային կրթութեան նախարարութեան, միեւնույն ժամանակ, նախկին վարչապետ Քաջազնունին, որ այժմ Ամերիկայում է ելեմտական նախարար Էնֆիալյանի հետ, հաղորդում է, որ իրեն հաջողվել է պայմանագիր կնքել Chicago Comparatior թրքստի հետ 50 միլիոն դոլարի (մոտ 5 միլարդ ու.) ապրանքներ Հայաստան ներմուծելու համար: Ամերիկան որոշ աջակցութիւն է ցույց տալու... այս օրերս արդեն 5.000 ձեռք զինվորական տաք հագուստ հասավ մեզ համար:

Այս դրութեան մեջ են գտնվում մեր արտաքին քաղաքական պայմանները:

Պարիզի մեր պատվիրակութիւնները՝ Ահարոնյանի եւ Նուպարի վերջերս փորձեցին միաձուլվելու եւ մեկ պատվիրակութիւն կազմելու: Այդ նպատակով Երեւան է գալիս հատուկ պատգամավորութիւն Վահան Թեքեյանից, Ն.Տեր-Ստեփանյանից եւ պրոֆ. Ա.Խաչատրյանից բաղկացած: Պարիզում երկու պատվիրակութիւնների խորհրդակցութիւնը <...>* միութեան մի նախագիծ, որի համաձայն Հայաստանի պառլամենտը կազմվելու է հավասար թվով տաճկահայերից եւ ուսսահայերից: Նույն սկզբունքով կազմվելու են եւ կառավարութիւնն ու Պարիզի պատվիրակութիւնը: Ըստ Նուպարի պայմանի, կառավարութեան նախագահը միեւնույն ժամանակ պետք է լինի եւ պատվիրակութեան նախագահ: Սրան համաձայն չէ Ահարոնյանի պատվիրակութիւնը, ոչ էլ կառավարութիւնն ու պառլամենտը: Պառլամենտը ըստ Նուպարի, կազմվելու է ընդհանուր ընտրութեամբ եւ մասնակցելու են ի սփյուռս աշխարհի ցրված բոլոր հայերը՝ նախօրոք կազմված որոշ համեմատութեամբ: Պատգամավորների Երեւան գալուց հետո հավանական է, կարելի կլինի համաձայնութեան ընդհանուր մի եզր գտնել, եւ ցանկալի միութիւնը, վերջապես, փաստ կդառնա:

Այսպէս է դրութիւնը արտասահմանում. երկրի ներսը կացութիւնը հետզհետեւ բարելավվում է, բայց էլի պայմանները շատ ծանր են: Ամառն անցավ առանց խոլերայի, թեեւ բոլորը սպասում էին նրան: Գալիս է Հայաստանի ցրտաշունչ ձմեռը: Ժողովրդի մեծ մասը հագուստ չունի: Գաղթականութիւնը անպատասպար է. հացի նեղութիւն կար եւ համաճարակ հիվանդութիւնների ծավալումն անխուսափելի է: Վերջին մի քանի օրվա անձրեւների հետեւանքով Երեւանում, օրինակ, զգալիորեն ուժեղացավ բժավոր տիֆը:

Առհասարակ ներկա պայմաններում ներգաղթը դեպի Հայաստան միանգամայն անժամանակ է. թող մեր հայրենիկներին այս հանգամանքը հաշի առնեն: Ի նկատի պետք է ունենալ եւ այն, որ Երեւանում բոլորովին ազատ բնակարան չկա:

Առեւտրական գործողութիւնները Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կարելի է վերսկսել: Այստեղից կարելի է արտահանել գինի, կոնյակ, կաշի, բուրդ, բամբակ եւ այլն փոխարենը ապրանք մտցնելու պայմանով: Մեծ կարիք կար մեխի, ապակու, շինութեան գանազան նյութերի, ձեթի, ամանեղենի, մանուֆակտուրայի, կոշիկի եւ այլն: Սապոնի պահանջի սրութիւնն անցավ, որովհետեւ այստեղ բացվե-

* Անընթեռնելի բառ -Ա.Ղ.:

ցին սապոնի գործարաններ: Փորձեր էր արվում բանալու նաև ուրիշ գործարաններ: Բացված են նաև մի քանի ծխախոտի գործարաններ: Առհասարակ, առեւտրական եւ արդյունաբերական կյանքը մեղանում սկսում է կենդանանալ: Այստեղ հարկ ենք համարում ասել, որ միանգամայն անհիմն է, ճշմարտութեանն չհամապատասխանող Հայաստանից դուրս տարածվող այն գրույցները, թե, իբր, Հայաստանում արդյունաբերութեւնը խեղդվում է, եւ կապիտալը հալածանքի ենթակա: Իրականութեւնը դրա ճիշտ հակառակն է եւ կառավարութեւնը առանձին խնամքով է վերաբերվում դեպի արդյունաբերական ուժերը եւ միջոցներ է ձեռք առնում Հայաստան կապիտալ մտցնելու: Ամեն կապիտալիստական ձեռնարկ ազատ Հնարավորութեւններ ունի զարգանալու: Այս սկզբունքը տրված էր եւ կառավարութեւն կարգացած դեկլարացիայի մեջ: Մենք շատ փափաքելի կնկատեինք, որ մեր Հայրենակիցներն սկսեին առեւտրական կապեր հաստատել Հայաստանի հետ եւ իրենց դրամագրութեւնները գործի դնել Հայաստանի համար ու Հայաստանի մեջ:

Երկրում կարգը հետզհետեւ սկսվում է ամրանալ: Թուրքերն ու քրդերը արտաքին ճնշման տակ հանդարտվել են եւ Հնարավորութեւն են տալիս կառավարութեւնը ընթացիկ աշխատանքներով զբաղվելու: Զորքի վիճակը եւ պարենավորման եւ հագուստի տեսակետից լավանում է: Կառավարութեւն ամերիկացիներից գնեց 16 հազար գուլյգ զինվորական կոշիկ, հագցրեց նոր շորեր եւ մեր զինվորը արտաքին շենք ու շնորհք ստացավ: Զորակոչի ենթարկված են մինչեւ 32 տարեկանները: Բարելավ վիճակում են գտնվում եւ որբանոցները, թեեւ բնակարաններ չլինելու պատճառով դեռեւս կարելի է փողոցներում տեսնել անպատասպար երեխաներ:

Երկրի ֆինանսական դրութեւնը դեռեւս ծանր է, անդրկովկասյան բռներ այլեւս բաց չեն թողնում: Վերջերս մեր պետական բանկը թողեց 100 միլիոն ուրբլու չէքեր, որոնք, սակայն, արգեն վերջացել են: Այս օրերս նոր քանակ եւս պիտի հրատարակվի: Պարիզում ապսպրված են կես միլիարդ ուրբլու հայկական դրամանիշներ եւ այդ նպատակով Պարիզ են ուղարկած նկարիչ Ա. Ֆեթվաճյանը եւ ինժեներ Աղաբաբյանը: Դրամանիշներին սպասում են նոյեմբերի կեսին: Մինչեւ, սակայն, մի խոշոր փոխառութեւն չարվի, դժվար կլինի կացութեւնը:

Վրաստանի հետ մեր բանակցութեւնները շարունակվում են: Վիճելի բոլոր հարցերի վերաբերմամբ գրեթե համաձայնութեւն գոյացել է եւ այս օրերս կատարագրվի համաձայնագիրը, որից հետո Բաթումի ճանապարհը մեր առջեւ կբացվի լայնորեն: Համաձայնութեւն հիմքն է մենք գիջում ենք Ախալքալաքում, վրացիները՝ Բորչալուում:

Նոյեմբերի 1-ից Երեւանում բացվում է Հայաստանի համալսարանը իրավաբանական եւ պատմալեզվաբանական բաժիններով:

Ահա, Հայրենակիցներ, ընդհանուր գծերով Հայաստանի ներկա վիճակը: Հաջորդաբար կգրենք տեղի ունեցող իրադարձութեւնների մասին: Սպասում ենք Ձեր գրութեւններին:

Խորին հարգանք՝

Նախագահ Ղրիմ-Դոնյան Հայրենակցական միութեան
Քարտուղար

Ա.Վրացյան
Ա.Ալբերյան

ց. 1, գ. 40, թ. 73-74 եւ շրջ.: Բնագիր: Զեռագիր:

N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ-ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ԻՐԵՆՑ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

N 1409

17 հոկտեմբերի 1919թ.
Երեւան

Հարգելի Հայրենակիցներ.

Տեղդ է գալիս Հայկոպի ներկայացուցիչ Մարտիրոս Ռուչանյանը Միութեան գործերով:

Նոր Նախիջեւանի համայնքդ իր պատմական Հայրենասիրութեամբ մեր ան-

մխիթար իրականութեան մեջ իր ցայտուն ու ջինջ էջերն է գրավել: Ինչպես Հայ կյանքի սեւ անցուղարձի ժամին Դուք Ձեր հուժկու ձայնը բարձրացրիք մեր մարտիրոս ժողովրդի անլուր տանջանքները ամոքելու համար, այնպես էլ այժմ Ձեր մայր ժողովուրդը մաշվում է կարիքի ճիրաններում եւ նորեն Ձեզ է կանչում ու Ձեզ դիմում:

Քաղաքական բոլոր հարվածները կրելուց հետո, այժմ յուր ազատութեան նախօրյակին նույն մեծ ժողովուրդը տառապում է սովից: Կոոպերացիան, որ կոչված է մեր կյանքի աղաղակող կարիքը բավարարելու Ձեզ է դիմում հանուն Հայ ժողովրդի եւ օգնութիւն սպասում:

Նպաստեցեք կոոպերացիային, որով մեծապես նպաստած կլինեք: Մենք դիմում ենք ունեւոր դասին եւ արդյունաբերողներին ընդառաջ գնալու մեզ եւ հնարավորյան սահմաններում վարկ բանան Հայկոոպին:

Ոչ թե դրամական միջոցների սղութիւնն է մեզ ստիպում վարկ խնդրել, այլ Հայկական Հանրապետութեան դրամի անարժեքութիւնը արտասահմանում:

Հուսով ենք, որ Նոր-Նախիջեւանի-Ռոստովի Հայկական Համայնքը ընդառաջ կգնար Հայկոոպին, իր վարկով եւ աջակցութեամբ նպաստած կլիներ Հայաստանի կոոպերացիային եւ Հայ ժողովրդին:

Վարչութիւն
Ի.տ. քարտուղար

Գ.Տեր-Մկրտչյան
Պ.Ղարախանյան

ց. 1, դ. 40, թ. 70 եւ շրջ.: Պատճեն: Զեռագիր:

N 16

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ
ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ԳՐԻԳՈՐ ԶԱԼԽՈՒՇՅԱՆԻՆ «ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔ» ԹԵՐԹԻՆ ԱՇԽԱՏԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱՔԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 492

5 նոյեմբերի 1919թ.
Նոր Նախիջեւան

Համայնական խորհուրդն ամսին 10-ին կայացած նիստում լսելով վարչութիւնի գեղուցումը Համայնքիս պաշտոնական օրգան «Հայ Համայնք» շաբաթաթերթի հրատարակութեան մասին, գտան, որ թերթի հրատարակութիւնն անհրաժեշտ է եւ որոշեց հրատարակել այն հինգ Հազար ուրբլի ամսական բացով:

Միեւնույն ժամանակ, ի նկատի առնելով վարչութիւնն այն հայտարարութիւնը, որ հյուպատոսութիւնը միտք է հղացել հրատարակել Հայերեն մի թերթ, որ «Հայ Համայնքի» հրատարակութեան վերսկսելով, գուցե ավելորդ համարվի, քանի որ հյուպատոսարանը կարող էր հասարակութեանը հայտնելիք հաղորդագրութիւնները տպագրել «Հայ Համայնքում», լրագորեց վարչութիւնն դիմել հյուպատոսարանի, որ սա եղած բացը ծածկելու համար, ամսական մի գումար նպաստ տա «Հայ Համայնքի» հրատարակութեանը, իրավունք ունենալով իր պաշտոնական հաղորդագրութիւններն տպագրել «Հայ Համայնքում» եւ մի ներկայացուցչի միջոցով մասնակցելու խմբագրութեան գործերին:

Համայնական խորհրդիս այս որոշման մասին հաղորդելով Ձեզ, խնդրում ենք հաճել հայտնել Ձեզ այս մասին Ձեր որոշումները կամ լրագորել մեկին այդ մասին բանակցելու վարչութիւնն հետ:

Նախագահ վարչութիւն
Քարտուղար

Ե.Շահագիր

ց. 1, դ. 40, թ. 63: Պատճեն: Զեռագիր:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՂՐԻՄ-ԴՈՆՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՑՈՒԴԱՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՄԱՍԻՆ

9 դեկտեմբերի 1919թ.
Նոր Նախիջևան

N 515

Համայնական վարչությունս ստացավ Ձեր հոկտեմբերի 15-ի գրությունը, որից ծանոթանալով Հայրենակցական միության կազմելուդ Հանգամանքին եւ նպատակներին, համակրությունք վերաբերվեց այդ ձեռնարկությանդ, ճանաչելով նրա օգտակարությունը: Այդ մասին վարչությունս անհրաժեշտ պարտք կհամարե գեկուցանել Համայնական խորհրդիս առաջիկա նիստում: Ուղարկած տեղեկագիրդ մեր Հայրենիքի կացության մասին այնքան շահեկան թվեցավ մեզ, որ հարկ համարեցինք նրան տպագրել թերթում ու ընթերցողներիս հարցասիրության բավարարություն տալու համար:

Մեր Հանգամանքներին փոխադարձաբար ձեզ տեղյակ կացուցանելու նպատակով ուղարկում ենք «Հայ Համայնքի» Ձեր չունեցած համարները, հաղորդելով միանգամայն, որ ցավ ի սիրտ շաբաթաթերթը տպարանում գրաշար չլինելու պատճառով օգոստոսի չորսի համարի վրա դադարել էր եւ վերստին սկսեց հրատարակվել նոյեմբերի կեսից:

Նախագահ վարչության
Ի տեղի քարտուղարի

ց. 1, դ. 40, թ. 71: Պատճեն: Ձեռագիր:

**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ
ԿՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Մերձավոր Արեւելքի ամերիկյան նպաստամատուց կոմիտեն (Ամերկոմ) Հայ որբերի խնամատարութեամբ սկսել է զբաղվել Առաջին Համաշխարհային պատերազմից հետո, որի շնորհիվ Մեծ եղեռնից մագապուրծ եղած եւ թուրքիայում, Սիրիայում, Հունաստանում, Կովկասում եւ Հայաստանում ապաստանած տասնյակ Հազարավոր անտուն ու անօթեւան որբեր փրկվեցին ստույգ մահից:

Ամերկոմի որբախնամ գործունեութիւնը կանոնավոր եւ կարգավորված բնույթ ստացավ արդեն Առաջին Հանրապետութեան տարիներին եւ շուրջ 10 տարի շարունակվեց նաեւ Հայաստանի խորհրդայնացումից հետո: Ամբողջ Հայաստանի տարածքում արդեն բացված եւ գործող որբանոցներից նրանք, որոնք ստեղծվել եւ պահպանվում էին Ամերկոմի միջոցներով, շարունակեցին մնալ նրա հոգածութեան տակ եւս մեկ տասնամյակ, որը, թեեւ մեծ աջակցութիւն էր Հայաստանի Համար, սակայն, ինչ խոսք, հետագայում լուրջ խնդիրներ էր դնելու կոմունիստական վարչակարգի առաջ՝ ամերիկացիների կողմից որոշ կենցաղային, կրօնական, գաղափարական դաստիարակութիւն ստացած պատանիներին ու աղջիկներին վերափոխել ըստ նոր պայմանների ու պահանջների:

Ինչեւէ, Ամերկոմի գործունեութիւնը երկրում ՀՍԽՀ կառավարութիւնը գնահատեց «անսահման ցանկալի» եւ իր 1920թ. դեկտեմբերի 14-ի հատուկ շրջաբերականով պատրաստակամութիւն Հայտնեց Հարկ եղած աջակցութիւնը ցուցաբերել նրան:

Իսկ 1921թ. օգոստոսի 13-ին Ալեքսանդրապոլում կատարվեց քաղաքում տեղավորված ամերիկյան նախկին որբանոցների պաշտոնական վերահանձնումը Ամերկոմին: Տարածաշրջանները Հայաստանի կառավարութեան եւ Ամերկոմի միջեւ հիմնականում ստեղծվում էին որբերի դաստիարակութեան եւ որբանոցների դպրոցներում դասավանդվող առարկաների եւ դասավանդման մեթոդների շուրջ, մինչդեռ որբերի խնամքի, սննդի, ֆիզիկական պատրաստվածութեան, արհեստներում վարժվելու, լեզուներ սովորելու հարցում կառավարութիւնը միանգամայն բավարար եւ ընդունելի էր համարում Ամերկոմի գործունեութիւնը:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվող եւ ստորեւ ընթերցողին ներկայացվող փաստաթղթերը որոշ պատկերացում կտան Ամերկոմի որբախնամ գործունեութեան մասին՝ ընդգծելով հատկապէս այն մարդասիրական եւ հոգատար վերաբերմունքը, որով հեռավոր Ամերիկայից եկած մարդիկ շրջապատել էին Հայ որբերին եւ որոնց ճակատագրով շարունակում էին հետաքրքրվել նաեւ հետագայում:

Սուրեն Ավետիսյան

N 1

ՀՍԽՀ ՀԵՂԿՈՄԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՍԽՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ
ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄԵՐԿՈՄԻ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆԸ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1920թ.
Երեւան

Ընդունելով Մերձավոր Արեւելքի օգնութեան կոմիտեի գործունեութիւնը դադարեցնելու, որբական եւ ընդհանրապէս խնամատարական գործում օգտակար եւ անհրաժեշտ խորհրդային Հայաստանում, ՀՍԽՀ հեղկոմը նրա գործունեութեան շարունակութիւնը եւ ընդարձակումը համարելով անսահման ցանկալի, խոստանում է նրան իր լիակատար աջակցութիւնը եւ հավաստիացնում է բռնագրավումների դեմ:

Ուստի առաջարկում է ՀՍԽՀ բոլոր քաղաքացիական եւ զինվորական իշխանութիւններին ցույց տալ նույն կոմիտեի վարիչներին հարկ եղած աջակցութեան:

յուսնը իրենց գործունեութեան ընթացքում:

Հեղինակի նախագահ՝ Ս.Կասյան¹
Արտաքին գործերի
ժողովրդական կոմիտար՝ Ա.Բեկզարյան²

Ֆ. 114, ց. 2, գ. 46, թ. 33: Պատճեն: Մեքենագիր:

N 2

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՊԻ ԺՈՂԿՈՄԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ
ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ՎԻՃԱԿԻ ԵՆ
ԱՄԵՐԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19 յայտի 1921թ.
Թիֆլիս

На попечении Американского Комитета находятся 20.000 сирот,³ которые получают полное довольствие от Комитета и на средства Комитета. Главная масса детей размещена в Александрополе в казармах гарнизона, расположенных в двух противоположных частях города. В настоящее время помещения слишком переполнены в виду перевозки приютов из Карса, где невозможно было продолжать работу, так как турки не совсем или навстречу Комитету и, наоборот, тормозили его работу.

Главное внимание необходимо обратить на обстановку, в которой приходилось Американскому Комитету поддерживать существование сирот в связи с оккупацией Александропольского уезда кемалистскими войсками. В продолжении нескольких месяцев (5-6) Александрополь был отрезан от остального мира, в смысле невозможности доставить пищевые продукты сиротам, между тем как на месте было использовано кемалистами все существенное, а на оставшееся нельзя строить какие либо расчеты. Вот как характерно описывает действия турецких войск Предревкома Александрополя тов. Саркисян. Я хочу выдержками из его письма доказать безусловную необходимость оказывать всяческую помощь Американскому Комитету в смысле транспорта и облегчения им работ для сохранения жизни целому потомству.

“7 ноября в 10 часов вечера вокзал и крепость г. Александрополя были заняты турками. Они босые, почти голые, в ту же ночь набросились на мирное население привокзальной части близ лежащей к крепости. С первого же момента нарушились условия перемирия и попирались элементарные права о неприкосновенности чести и имущества. С первых же шагов стало ясно, что город отдан на произвол бандам. Грабежи продолжались и днем, даже в центре города, но не с такими темпами и не в таком масштабе, как на окраинах.

С раннего утра в городское самоуправление сыпались требования от различных войсковых частей на сотни пудов продуктов, между тем как склады Правительства были почти пусты”.

“13 ноября состоялся митинг с участием представителей турецких коммунистов, где прошла единогласная резолюция “Объявление Советской власти во имя спасения народа”, а 17 ноября власть была объявлена при звуках §Марсельезы: Товарищи коммунисты и народ надеялись, что с объявлением Советской власти положится конец предел безчинствам турок, но дальнейшие события повели за собою глубокое разочарование. Турки сняли все телеграфные аппараты, отрезали город от всего мира и приступили к выполнению своего чудовищного плана, плана уничтожения целого народа.

Были закрыты все дороги из города в села и наоборот. Не пропускалось ничего. В городе продовольствия не было: отсюда вывод один -уморить население голодом. Результаты были блестящие для турок. Беднейшее население и беженцы умирали сотнями. Не хватало перевозочных средств для подбора трупов. Эта мера сильно отразилась на детях, которые умирали на улицах. К тому надо прибавить и суровость нашей зимы, с запретом привоза топлива откуда бы не было". "Если мы говорим о планомерных действиях, имеющих цель уничтожение целого народа, то имели в виду, кроме открыто учиненных зверств и тайные распоряжения, хитрые приемы, ведущие к той же цели. Например: ежедневные приказы с требованием сотен людей, якобы на работы. Собирали целыми толпами, преимущественно молодежь и отправляли в Карс, Сарыкамышь, Эрзерум. Всех их мы считаем безвозвратно погибшими. Только отдельные личности вырвались и то потерявшие всякую способность к сопротивлению смерти. На улицах схватывали мужчин, которые бесследно исчезали. Только теперь обнаруживаются их трупы, брошенные в колодцы, в ямы, в овраги, в развалины домов, в речки и на поля."

Я был свидетелем ужасной картины: верстах в 20-ти от Александрополя по направлению к ст. Караклис над туннелем есть овраг полный трупами исключительно женщин и детей. На расстоянии 1/2 версты они разбросаны на открытом месте и бежащий ручеек каждый час обнаруживает все большее и большее количество трупов. По приблизительному подсчету там не менее как 1200 трупов, не считая те, которые еще не обнаружены водой, но руки и ноги которых торчат из под земли. Раны в большинстве случаев пулевые и штыковые. По положению тел и платья можно смело сказать, что убитые женщины не избежали насилия.

По приблизительному подсчету комиссии, организованной местными властями потери людьми в городе и в уезде Александрополя, за время военной оккупации местными кемалистами следующее:

М у ж ч и н		Ж е н щ и н	
убитых	30.000	убитых	15.000
раненых	20.000	раненых	10.000
пленных	18.000	изнасилованных	25.000
повешенных	25	уведенных	2.000
умерших от голода	10.000	умерших от голода	5.000

Д е в у ш е к		Д е т е й	
убитых	10.000	убитых	5.000
раненых	5.000	раненых	3.000
изнасилованных	10.000	умерших от голода	10.000
уведенных в плен	3.000		
умерших от голода	1.000		

Если даже верить на половину указанным цифрам учетной комиссии, то получается внушительная цифра в 90 000 человеческих жизней.

Отношение кемалистов к имуществу граждан, характеризуется учетной комиссией следующим образом:

“Но всего гнуснее было то, что среди белого дня, по заранее составленному плану офицеры с фургонами и телеграммами с командой аскеров ворвались в дома жителей и брали все, что представляло из себя какую нибуть ценность. Это, они говорили, берут в “бешкеш”.

Той же участи подвергся весь скот не бежавших из уезда жителей.

Подобные действия вынудили Советскую власть отказаться от своей работы и объявить народу, что вся ответственность за безчинства падает на турецкое командование.

Выше переданный мною ход событий и действий победителей дают мне право говорить, что 8 американцев (5 мужчин и 3 женщины) совершили чудо, сохранив существование 20 тысячам детей, которые были сосредоточены в разгар событий в Александрополе в одно целое, даже были вывезены из г. Карса около 8 тысяч детей.

К началу мая месяца сего года весь запас продуктов питания вышел. На рынке невозможно было достать что либо, а ожидать получения чего либо от турок для сирот армян было смешно. В силу этого американцам пришлось прибегнуть к системе сокращения пайка, результат этого на лицо: лазареты городка переполнены больными детьми, общий % заболеваемости выше 35. Смертность сравнительно небольшая, что я приписываю энергии и любви персонала к своему делу.

К приезду Генерального директора мистера Ярро⁴ в складах запас муки достаточен был только на 5 дня, теперь они обеспечены на некоторый срок, и мистер Ярро убежден, что паек детям можно смело увеличить, так как со стороны нашего Правительства ему оказывается всесторонняя помощь для перевозки тяжелых маршрутных поездов с продуктами.

Точка зрения мр. Ярро, что “помощь Армении одновременно и помощь Грузии” вполне находит оправдание в политике СССР.

Ниже я постараюсь вкратце познакомить Вас, что сделали Американицы за этот тяжелый период и какая система работы преобладает в их действиях. Система ли поддерживать существование детей или наряду с этим воспитать еще хороших граждан, могущих принести пользу человечеству.

Все дети распределены в трех пунктах: на ст. Каракилис около 600 детей, в городе Александрополе 16.600 и, наконец, в столице Армении около 3.000.

В Александрополе под приютом заняты два городка “Казачий пост” и “Полигон”, в первом 11тысяч детей, во втором 5.500 из них больных четыре тысячи, главным образом трахомой и внутренними болезнями, находятся в семи госпитальных домах, вполне оборудованных в европейском духе, здоровые дети помещены в 34 больших домах.

Из числа здоровых детей находящихся на “Казачьем Посту”

5 летнего возраста	900 детей - 10%
8 „_„ „_„	2000 „_„ - 25%
12 „_„ „_„	3250 „_„ - 35%
14 „_„ „_„	1200 „_„ - 15%
16 „_„ „_„	1150 „_„ - 15%

Указанные проценты возрастов сирот можно распространить и на общее количество детей.

Все дети старше семилетнего возраста посещают школу, где им преподают элементарные науки: например: на “Полигоне”, где занимаются около 2600 детей, находятся 33 преподавателя.

Кроме того все взрослые дети обучаются ремеслам в своих собственных мастерских: сапожных, кузнечных, чувячных, столярных, портняжных и др. Девушки обучаются шитью, кройке, выделке ковров, уходу за больными и не

взрослыми детьми. Одновременно все дети практически приучаются к физической работе на кухне, в столовых, прачечных, и, важнее всего, на открытом поле.

Наиболее взрослые мальчики несут караульную службу и физически тренируются под руководством опытного гимнаста. При приютах и гостиницах находится более чем 1200 чел. туземного персонала.

РЕЗЮМЕ. Общее экономическое положение Армении настолько тяжелое, что без внешней помощи страна не может существовать, поэтому необходимо всеми мерами содействовать пропаганде и внушению генеральному директору гражданину Ярро, о необходимости не только помогать сиротам, но распространить свою работу среди всего населения и еще раз поставить на ноги нацию, так как она привяжет население Армении к своим жилищам и не заставит его искать куска хлеба в соседних республиках и тем нарушать экономическое равновесие и без того сильно расшатанного.

Приложения: фотографические снимки и работа Тифлисского Отделения Американского Комитета.

Сотрудник связи Костаношвили.

Ֆ. 114, ց. 2, ք. 169, թ. 10-13: Պատճեն: Մեքենագիր:

N 3

ԱՄԵՐԿԱՆՍԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԻ ԿԱՆՈՒՄՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԱՆԴՐՑԵԴԵՐԱՑԻԱՑԻ ԺՈՂՎՈՄԻՈՐ ՀՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԱՆԴՐՑԵԴԵՐԱՑԻԱՑԻ⁵ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
ԱՄԵՐԿԱՆՍԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻՑ ՇՈՒՐՉ 4.000 ՈՐԲԵՐ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 մարտի 1925թ.
Լենինական

Американский Комитет Помощи на Ближнем Востоке обратился ко мне с просьбой придти ему на помощь, ввиду его материального положения, разгрузить и ликвидировать часть детей, находящихся на его издвении в пределах ССР Армении.

Из дальнейших переговоров выяснилось, что Амерком предполагает в течении летних и весенних месяцев ликвидировать из своих детдомов от 3000 до 4000 детей.

Ввиду сложностей и серьезностей затронутого вопроса, мною было предложено Заместителю генерального директора Амеркома организовать особую комиссию из представителей: Амеркома, Ленисполкома и Представительства ЗСНК и СНК ССРА, с возложением на эту комиссию обязанностей, разрабатывать детальный план ликвидации устройства и расселения детей и собрания предварительных данных, как о специальном положении ликвидируемых детей, так и обследование тех районов, куда возможно расселить увольняемых сирот Амеркома.

По этому вопросу мною и генеральным директором достигнуто полное соглашение .

Дабы безболезненно провести намерение Амеркома и разрешить в контакте с ним ряда принципиальных и практических вопросов, связанных с ликвидацией детей, необходимо в срочном порядке организовать вышеозначенную комиссию из пяти лиц, со следующим составом: постоянным представителем комиссии является заместитель генерального директора Амеркома гр. Бич,⁶ членами: 1) уполномоченный представительства ЗСНК и

ССРА в Лениакане тов. Саркисян, 2) 2 постоянных члена от Амеркома и 3) уполномоченный представитель от Лениаканского исполкома.

Выработанный и одобренный план ликвидации необходимо выслать в Тифлис Представительству на утверждение.

Дополнительно Вам будут высланы инструкции по этому поводу.

Срочно уведомите Представительство о принятых Вами мерах для организации вышеозначенной комиссии .

Представитель ЗСНК и ССРА
Секретарь

Н.Тер-Газарян
С.Даниелян

Ֆ. 113, ց. 38, դ. 98, թ. 93: Վարկերացված պատճեն: Մեքենագիր:

N 4

ՀԱՅԷԺՈՂԿՈՄՍԻՈՐ ՀԻՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄՌԱՎՅԱՆԻ⁷ ՄՈՏ
ԿԱՑԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻՑ 3.000 ՈՐԲ ԱՐՁԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

27 ապրիլի 1925թ.
Երևան

Слушали:

Постановили:

1. О ликвидации 3.000 детей до 1-го августа с.г. в Лениаканских приютах Амеркома.

а) Потребовать через тов. Наримана Тер-Газаряна и Саркисяна сведения об освобождающихся детях для выяснения их пола, возраста, состояния здоровья, степени грамотности и т.п.

б) Также выяснить через них сколько детей перейдет к своим родителям и родным.

в) Выяснить у них же на какой срок после освобождения детей из приютов Амерком обеспечит их и на какую сумму.

г) Выяснить через НКТруд какое количество детей может быть размещено в учреждениях и на каких условиях.

д) Выяснить через узисполкомы какое количество детей в порядке усыновления может быть передано крестьянам.

2. О сокращении 500 служащих-сирот из Амеркома.

2. Выяснить в СПСА, что они думают делать с сокращенными 500 служащими (на это сокращение имеется согласие СПСА).

3. О выяснении положения участка Каракала (около 5.000 дес.земли).

3. Участок Каракала не может полностью остаться в руках Амеркома, т.к. количество десятин превышает потребности существующей фермы. Наркомзему поручить выяснить потребности Амеркома в пастбищном участке и в сенокосе, принимая во внимание наличие скота и возможности увеличения до 1-го мая Сокращение существующих границ считать не-

допустимым.

4. О переходе школы слепых от Амеркома к Правительству.

4. Считать возможным переход школы слепых Правительству Армении в случае, если школа будет обеспечена на два года.

Председатель совещания

А.Мравян

Ֆ. 113, ց. 1, դ. 38, թ. 89: Բնագիր: Մեքենագիր:

N 5

ԱՄԵՐԿՈՄՈՒՄ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԲԵՐ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 Հոկտեմբեր 1925թ.
Լենինական

Ամերկոմը արտասահմանում բնակվող ամերիկյան քաղաքացիներից դիմումներ է ստանում՝ որբանոցներում գտնվող հայ երեխաներին որդեգրելու համար: Հնարավոր է արդյոք այդ նպատակով երեխաներին արտասահման ուղարկել եւ ի՞նչ կարգով կարելի է այդ անել:

Ներկայացուցիչ՝

Գ.Սարգսյան

Ֆ. 113, ց. 38, դ. 98, թ. 116: Բնագիր: Մեքենագիր:

N 6

ԱՄԵՐԿՈՄՈՒՄ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՑԻ ԵՎ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ Ա. ՄՌԱՎՅԱՆԻՆ՝ ԱՄԵՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԲԵՐ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

28 Հոկտեմբերի 1925թ.
Լենինական

Амерком неоднократно обращался к нам с просьбой разрешить гражданам Северо-Американских Соединенных Штатов усыновить сирот из детдомов Амеркома, почему прошу сообщить, допустимо ли усыновление армян-сирот гр. САСШ и в уведомительном случае дать нам инструкции о порядке усыновления.

Представитель ЗСНК
и СНК ССРА
Секретарь

Н.Тер-Газарян
С.Даниелян

Ֆ. 113, ց. 38, դ. 98, թ. 115: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 7

ԱՄԵՐԿՈՄՈՒՄ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՑԻ ԵՎ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂԿՈՄԽՈՐՀ՝ ԱՄԵՐԿՈՄՈՒՄ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատասխանելով Ձեր այս գրուած յանձնը՝ Հարկ եմ համարում նշել, որ ինչպէս անցյալ տարի, նույնպէս եւ այս տարի, Ամերկոմի որբուծական մի մասի լիկվիդացիան կատարվում է ոչ այնքան Ամերկոմի նախաձեռնութեամբ, որքան այդ որբուծական ծնողների եւ ազգականների պահանջներին ընդառաջ գնալու համար: Ամերկոմի սաների 75 տոկոսը (անցյալ տարվա թվերը նկատի ունենալով) ունեն ծնողներ կամ ազգականներ, որոնք, աստիճանաբար ապահովվելով տնտեսապէս, ցանկութեամբ եւ հայտնում իրենց խնամքի տակ առնել որբանոցներում պատասպարած իրենց երեխաներին:

Անցյալ տարի այս գործին ուղղութեամբ տալու համար կազմակերպված լիկվիդացիոն բաժինը իր գործունեութեամբ սկզբնական շրջանում մի քանի սխալներ թույլ տվեց, որոնք անցանկալի հետեւանքներ ունեցան, սակայն ներկայումս արմատական միջոցներ են ձեռք առնված բոլոր թյուրիմացութեաններից խուսափելու համար: Յուրաքանչյուր երեխային արձակելուց առաջ՝ քննվում է նրա ծնողների կամ ազգականների տնտեսական գրութեանը, եթե այդ գրութեանը տանելի է, երեխային Ամերկոմի ծառայողները անձամբ հանձնում են այդ ծնողներին ներկայացուցչութեան թուղթով թույլ տալու եւ ծնողների համաձայնութեանն ունենալուց հետո:

Այս ձեւով երեխաների վերահիշյալ մասի լիկվիդացիային ձեռնարկված է, պետք է ասել, դեռ այս տարվա սկզբից, իսկ մայիսից հատուկ խորհրդակցութեամբ, որին մասնակցել են ժողովուրդի ներկայացուցիչը, Լենքաղբայրի նախագահը եւ Ամերկոմի ներկայացուցիչները: Անգործող ժողովուրդի ներկայացուցչութեան գիտութեամբ որոշված է ընթացիկ տարվա մեջ իրենց ծնողներին եւ ազգականներին հանձնել 3000-ի չափ երեխաներ: Ներկայումս այս ծրագիրը կատարված է արդեն 75 տոկոսով եւ մինչեւ դեկտեմբերի սկիզբները կամբողջացվի:

Ներկայացուցիչ՝ Գ.Սարգսյան

Ֆ. 113, ց. 38, գ. 98, թ. 118 : Բնագիր: Մեքենագիր:

N 8

ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՀԱՏՈՒԿ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՆ. ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆԻՆ՝ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՈՐԴԵԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ Ա.ՄՈՒՎՅԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

9 նոյեմբերի 1925թ.
Երեւան

Համաձայն Ձեր N 2340 գրութեան՝ հայտնվում է լուստողկոմ ընկ.Մռավյանի մակագրութեանը. «Եթե որբերի որգեգրումը ամերկացիների կողմից կախված է այդ երեխաների մեկնման հետ Ամերկոմի, ապա լուստողկոմը դեմ է»:³

Գաղտնի բաժնի վարիչ՝ Ա.Նիկողոսյան

Ֆ. 113, ց. 38, գ. 98, թ. 113: Բնագիր: Մեքենագիր:

N 9

ՔԱՂՎԱԾՔ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՄԵՐԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 օգոստոսի 1928թ.

Լսեցին - 6. Ամերկոմի հետ կապված խնդիրները:

Որոշեցին - 6. ա) Ամերկոմի հետ կապված բոլոր խնդիրները ուսումնասիրելու եւ կարգադրիչ նիստի քննութեանը 10 օրվա ընթացքում կոնկրետ առաջարկներ ներկայացնելու համար (մասնավորապէս Ամերկոմի որբանոցների սաներից 350 հոգի պետութեան խնամքին հանձնելու մասին) կազմել հատուկ հանձնաժողով Լուսժողովմատի (նախագահ), Առժողովմատի, Սոցապժողովմատի ներկայացուցիչների մասնակցութեամբ:

բ) Հանձնաժողովի կազմի մեջ մտցնել անձնապէս նաեւ ընկ. Գ.Սարգսյանին (Ամերկոմին կից ժողովմտխորհի ներկայացուցիչ):

Ժողովմտխորհի նախագահի տեղակալ՝ Ա.Մուսվեյան
Ժողովմտխորհի գործերի կառավարչի տեղակալ՝ Ա.Թոքմաջյան

Ֆ. 122, ց. 1, գ. 944, թ. 144: Պատճեն: Մեքենագիր:

N 10

ԱՄԵՐԿՈՄԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ
ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՎԱԾ ԻՐ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ՝ ՆԱԽԿԻՆ
ՍԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Հոկտեմբեր 1928թ.
Լենինական

Նյութը Յորքից ստացված մի գրութեան համեմատ Ամերկոմի կոմիտեի կենտրոնական գրասենյակը ցանկանում է գաղափար կազմել իր մանկատներից դուրս եկած սան - սանուհիների կյանքում ունեցած հաջողութեանների մասին:

Որովհետեւ Դուք մեր այս մեծ ընտանիքի ամենահին անդամներից եք, հետեւաբար խնդրվում է, որ բարի լինեք տալ համառոտ կերպով տեղեկութեան Ձեր գիտեցած այն տղաների եւ աղջիկների մասին, որոնց կյանքում ունեցած հաջողութեանը բացահայտ է:

Խնդրվում է, որ այդ տեղեկութեանները ուղարկեք իմ գրասենյակը:
Հասցեն՝ Լենինական, Պոլիգոն:

Հարգանք՝ Զանեթ Մ.Մըքայ

Ֆ. 131, ց. 1, գ. 272, թ. 20: Բնագիր: Մեքենագիր:

N 11

ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ՝ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ԱՄԵՐԿՈՄԻՆ ԿԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ ԱՄԵՐԿՈՄԻ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՐԲԵՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ
ԴԵՊԻ ԼԵՆԻՆԱԿԱՆ ԿԱՆԻՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 մարտի 1929թ.
Լենինական

Ինչպէս հայտնի է, Հայաստանի Սոցապժողովմատը երեք ամիս սրանից առաջ ընդունել է Ամերկոմից 350 դեֆեկտիվ երեխաների եւ տեղավորել նրանց Ստեփանավանում: Այդ երեխաների հետ նա Ամերկոմից ստացել է եւ դեռ շարունակում է ստանալ 68000 դրարի ապրանք, որը շուկայի գներով կազմում է ոչ պակաս, քան 250000 ռուբլի, նրանց պահպանութեան համար: Այս բոլորից հետո կարելի էր սպասել, որ այդ երեխաների համար Սոցապժողովմատը կստեղծի քիչ թե շատ տանելի վիճակ, որ նրանք կապրեն եւ կդաստիարակվեն Ստեփանավանի մանկատներում եւ որ, համենայն դեպս, շարունակ չեն փախչի այնտեղից Լենինականի փողոցներում թափառելու եւ անապաստանութեանն այնտեղ աճեցնելու համար:

Սակայն, ինչպես երեւում է, մանկատների գրուծյունն այնքան էլ մխիթարական չէ Ստեփանավանում, որովհետեւ շաբաթ չի լինում, որ այդ մանկատների սաները խմբերով չհայտնվեն Լենինականի փողոցներում, չգիմեն Ամերկոմին՝ պահանջելով, որ նորից հետ ընդունեն իրանց Պոլիգոնի մանկատները, կամ խմբերով չհավաքվեն փողոցներից եւ չներկայացվեն Գործկոմին: Արդեն երրորդ անգամն է, որ Ստեփանավանից փախած երեխաների խմբեր ներկայացուցչութեան կողմից վերադարձվում են Ստեփանավան՝ միլիցիոներների կամ Ամերկոմի աշխատակիցների ուղեկցութեամբ: Երկու անգամ թե՛ ներկայացուցչութեան եւ թե՛ ընկ. Տեր-Ղազարյանի կողմից պաշտոնապես խնդրված է Սոցապոզիտիւմատին, որպեսզի նրա կողմից միջոցներ ձեռք առնվեն կանոնավոր Հիմքերի վրա դնելու համար Ստեփանավանի մանկատները, որտեղ հավաքված են գլխավորապես Ամերկոմի նախկին սաները, եւ կանխվեն այն պատճառները, որոնք առիթ են ծառայում երեխաների փախստյան, բայց հավանական է, որ Սոցապոզիտիւմատում առանձին ուղղորդութեան չեն արժանացնում ներկայացուցչութեան գրուծյունները, քանի որ երեխաները նրա մանկատներից շարունակում են փախչել այսօր էլ:

Հետեւանքը լինում է այն, որ.

- Փողոցներում շարունակում է աճել անապաստան երեխաների թիվն այն ժամանակ, երբ պետութունը նրա դեմ ահազին պայքար է մղում:

2. Ընկնում է Սոցապոզիտիւմատի պրիստիժն Ամերկոմի առաջ, որն իրավամբ կարող է մտածել, թե իր սված 68000 դոլարը չի գործադրվում իր սաների պահպանութեան վրա:

3. Ավելորդ ծախսերի առաջ են կանգնում զանազան Հիմնարկութուններ, հատկապես անապաստաններին խնամող Լենինականի Հանձնաժողովը:

Այս բոլոր հանգամանքները կարող էին այնքան էլ մեծ ցավ չպատճառել մեզ, եթե Սոցապոզիտիւմատը չնորհակալութեամբ ընդուներ ուրիշ Հիմնարկութունների կողմից իրեն մատուցված ծառայութունները - իր երեխաներին փողոցներից հավաքելու եւ մանկատները վերադարձնելու համար, եւ սիրալիր կերպով համաձայնվեր վճարել այն ծախսերը, որ կատարվում են Հիմնարկութունների կողմից այդ ծառայութեան ընթացքին: Բայց բանը նրանումն է, որ նույնիսկ այդպիսի տարրական պարտականութուն Սոցապոզիտիւմատը չի կամենում հանձն առնել: Նա հրահանգել է Լենինականի սոցապոզիտին, որպեսզի իր մանկատներից փախած երեխաներին մանկատուն չվերադարձնեն: Այս հանգամանքն այնքան ավելի անհանդուրժելի է, ինչքան Սոցապոզիտիւմատի երեխաներին փողոցներից հավաքելու եւ նորից մանկատուն վերադարձնելու հարցով շահագրգռված է նախ Ամերկոմը, որովհետեւ այդ երեխաներն իր նախկին սաներն են, եւ նա անտարբերութեամբ չի կարող տեսնել, որ նրանք թափառում են փողոցներում, եւ երկրորդ՝ անապաստան երեխաներին խնամող Հանձնաժողովը, որը բնականաբար չի կարող թույլ տալ, որ անապաստանութունը նոր թափ ստանա Ստեփանավանի մանկատան պատճառով: Եվ ահա, երբ այդ Հիմնարկները հավաքում են երեխաներին փողոցներից, վերադաձնում են Սոցապոզիտիւմատի մանկատները եւ պահանջում վճարել կատարած ծախսերը, Սոցապոզիտիւմատից ստանում են այնպիսի հակիրճ պատասխաններ, ինչպիսին կցված է այս գրութեանը:

Մեզ համար անհասկանալի է, թե ինչ բարոյական իրավունքով Սոցապոզիտիւմատը ցիրուցան է անում իր խնամքին հանձնված որբերին, երբ նրանց պահպանութեան համար հատկապես նա Ամերկոմից ստացել է 68000 դոլար: Հենց այսօր Ստեփանավան վերադարձվեց փախած երեխաների մի խումբ եւս՝ 5 հոգուց բաղկացած:

Այս երեւույթը համարելով խիստ աննորմալ, ներկայացուցչութունս խնդրում է.

1. Կարգադրել Սոցապոզիտիւմատին, որ նա բարելավի Ստեփանավանի իր մանկատների գրուծյունը եւ կանխի երեխաների փախստյան պատճառները:

2. Կարգադրել, որ նա վճարի փախած երեխաներին հավաքելու եւ նրանց մանկատուն վերադարձնելու համար կատարված ծախսերը համապատասխան Հիմնարկներին:

Ձեր կարգադրութեան հետեւանքի մասին խնդրում եմ տեղեկացնել ինձ:

ՀԱՆՉ Ժողկոմխորհի՝ Լենինականում

Գ.Սարգսյան

Ծանոթագրություններ

1. Սարգիս Կասյան (1876-1937) - կուսակցական եւ պետական գործիչ, ավարտել է Լայպցիգի առեւտրական ինստիտուտը եւ Բեռլինի Համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: 1920թ. նոյեմբերին՝ Հայաստանի Հեղկոմի նախագահ, 1927-1931թթ. եղել է Անդրֆեդերացիայի եւ ՀՍԽՀ Կենտգործկոմների նախագահ:
2. Ալեքսանդր Բեկզադյան (1879-1939) - Հեղափոխական գործիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր: 1920թ. նոյեմբերից նշանակվել է ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմ, 1926-1930թթ. եղել է Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի տեղակալ եւ առեւտրի ժողկոմ: 1930-1934թթ. ԽՍՀՄ դեսպանն էր Նորվեգիայում, իսկ 1934-1937թթ.՝ Հունգարիայում:
3. Տեքստում նշված թիվը սխալ է, քանի որ Հենց նույն փաստաթղթում Հիշատակվում է, որ որբերի ընդհանուր թիվը Հասնում է 20.200-ի, իսկ Ամերկոմի արխիվային ֆոնդում պահպանված ցուցակներում եւ Հաշվառման քարտերում ընդգրկված որբերի թիվը Հասնում է մոտավորապես 23.000-ի (Տես Փ.39, ց.1):
4. Կապիտան Յարրոն Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կոմիտեի Կովկասի ընդհանուր լիազորը եւ նրա՝ Ալեքսանդրապոլի մասնաճյուղի գլխավոր տնօրենն էր:
5. Նարիման Տեր-Ղազարյանը Անդրֆեդերացիայի եւ ՀՍԽՀ ժողկոմխորհների ներկայացուցիչն էր ոչ միայն Ամերկոմում, այլեւ Հանրապետությունում գործող օտարերկրյա այլ բարեգործական կազմակերպություններում, որոնցից ակտիվ գործում էր նաեւ Բրիտանիայի նպաստամատույց միսիամ (Անգլկոմ):
6. Ջոզեֆ Բիչը Յարրոյի տեղակալը եւ կարգադրիչ տնօրենն էր Ալեքսանդրապոլում:
7. Ասքանազ Մուսվյան(1885-1929) - կուսակցական եւ պետական գործիչ, ավարտել է Սանկտ-Պետերբուրգի հոգեներոյոգիական ինստիտուտը: 1920թ. նոյեմբերին եղել է ՀՍԽՀ Հեղկոմի կազմում, 1921-1923թթ. եղել է ՀՍԽՀ արտաքին գործերի, 1923-1929թթ.՝ Լուսավորության ժողկոմ եւ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ:
8. Հայաստանի Կառավարությունը թեեւ դեմ է եղել որբերին Ամերիկա տեղափոխելու խնդրին, սակայն որոշ փաստաթղթեր անուղղակիորեն վկայում են, որ որբերի մի մասը, այնուամենայնիվ, Բաթումից մեկնող նավերով փոքր խմբերով տեղափոխվել է Ամերիկա (Տես Փ.39, ց.1, դդ.1-15):

**ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԿԱՐՄԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ**

Հայ պատմագրութեան մեջ Կարսը, իբրև ռազմա-տնտեսական կարեւոր նշանակութեան բերդաքաղաք, հիշատակվում է արդեն 9 դարից: Այն, դառնալով թագավորանիստ քաղաք, հզորացավ հատկապես Աբաս Բագրատունու օրոք:

Հետագա դարերում մինչև հաջորդող օտարերկրյա նվաճողների արշավանքները թուլացրին Կարսը, որը 17-րդ դարում անցավ թուրքիային:

Դարերի ընթացքում խիստ փոխվեց Կարսի ժողովրդագրական պատկերը: Բնիկ Հայ բնակչութեան կողքին այստեղ հայտնվել են հույներ, ասորիներ, վրացիներ, թուրքեր, իսկ Ռուսաստանին միանալուց հետո (1878թ.)՝ նաև ռուսներ:

Ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, Կարսի մարզն ուներ 290.654 բնակիչ: Յուրաքանչյուր 1000 մարդուց 349-ը Հայ էր, որոնք ապրում էին հիմնականում Կարսի եւ Կաղզվանի օկրուգներում (ՀԱԱ. ֆ. Պ-274, ց.1, գ.78, թ.1-5): 1916թ. հունվարի 1-ին Կարս քաղաքի բնակչությունը կազմում էր 30514 մարդ, որից հայեր էին 25665-ը (Кавказский календарь на 1917г., см. 199-201):

1918թ. ապրիլի 25-ին Կարսը Անգրկովկասյան սեյմի դավաճանական քաղաքականութեան հետեւանքով, առանց կռվի հանձնվել է թուրքերին: 1918-ի Բաթումի պայմանագրով Կարսը տրվել է թուրքիային: 1919թ. ապրիլին, թուրքերի հեռանալուց հետո, Կարս են մտցվել անգլիական զորքեր եւ մայիսին քաղաքը անցել է Հայաստանի Հանրապետությանը:

1920թ. հոկտեմբերի 30-ին քեմալական զորքերը գրավել են Կարսը:

Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագրով Կարսը տրվել է թուրքիային: ՀՍՍՀ կառավարութունը, Ռուսաստանի ճնշմամբ, 1921թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրով ճանաչել է Կարսի բռնակցումը թուրքական Հանրապետությանը:

Հրապարակվող փաստաթուղթը Կարսի սբ. Լուսավորիչ եկեղեցու ծխատեղաբնական Կորյուն Քոթանջյանի ղեկուցչությամբ է հղված Ամենայն Հայոց Գեղորդ Եկեղեցիական Կ.Քոթանջյանի ակնառես է եղել այն բոլոր իրադարձություններին, որ կատարվել են քաղաքում թուրքերի հարձակման ժամանակ ժողովրդի ու զորքերի իրեն համար անհասկանալի խուճապահար փախուստին, թշնամու կողմից Հայ ազգաբնակչության նկատմամբ գործադրված բռնություններին, բռնագաղթին:

Նա վերջիններից մեկն է եղել, որ թողել է Կարսը: 1922թ. հոկտեմբերի 26-ին եկեղեցու ունեցվածքը հանձնելով ՀՍՍՀ Կարսի Հյուպատոս Հայկակ Կարապետյանին, Կ.Քոթանջյանը եկել է Ալեքսանդրապոլ եւ շատ չանցած բանտարկվում խորհրդային իշխանութունների կողմից (ՀԱԱ, ֆ. Պ- 409, ց.1, գ.2519, թ.1-2):

Փաստաթուղթը (պահվում է Հայաստանի ազգային արխիվում) հրապարակվում է առաջին անգամ՝ ժամանակի ուղղագրությամբ: Պահպանվել են ոճական առանձնահատկությունները:

Մարտ Ավետիսյան
ՀԱԱ գլխավոր արխիվագետ

**ԿԱՐՍԻ ՍԲ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱՏԵՐ ԿՈՐՑՈՒՆ ՔԱՀԱՆԱ
ՔՈՒԹԱՆՋՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՔԱՂԱՔԻ
ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ
ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

17 դեկտեմբերի 1922թ.
Ալեքսանդրապոլ

Այսու պարտք եմ համարում խոնարհաբար ղեկուցելու վշտալի հորդ՝ որպես ակնառես Կարսի Հայ ժողովրդյան կրած ֆիզիկական, նյութական եւ բարոյական կորուստն ու աննկարագրելի տառապանքը տաճիկներից, Կարսի գրավման ժամանակ եւ նրանից հետո:

Տաճիկները Կարսը գրավեցին առանց կռվի, 1920թ. հոկտեմբերի 29-ին, շաբաթ ավուր ժամի 3-ին, ճաշից հետո, անակնկալ կերպով, որովհետեւ այդպիսի գրավում ոչ ոք չէր սպասում, աչքի առաջ ունենալով Կարսի անառիկ ամրոցները, 20000-ին մոտ կանոնավոր կազմակերպված զորքը եւ եռապատիկ թվով Հայ բնակչությանը:

չունթյունը, որի մի հինգերորդից ավելին դարձյալ գենքի տակ էր՝ քաղաքի պահպանութեան համար:

Հայ ժողովուրդը անսպասելիորեն, հանկարծակիի գալով՝ մատնվեց ամենասուսկալի խուճապի, տուն ու տեղ վայր պղծ, մեծ ու փոքր, ունեւոր - չունեւոր, կոնատակերին մի-մի կապոց կամ դատարկ, միայն երեսայի ձեռքից բռնած, շատերը երեսներին անգամ կորուցած, լաց ու կոծ, ճիչ, աղաղակ. գլուխներին թակելով, ուր փախչելները չէին իմանում: Եվ այդպես մարդիկ, անասուններ ցեխակոլով, (աստիկ անձրեւում էր), միմյանց կոխտեսելով՝ տարերային մղումով դեպի ձորն էին շտապում՝ Ալեքսանդրապոլ տանող նախկին խճուղու ճանապարհը, ուր տեղավորված էին ամերիկյան Հայ որբանոցները: Բայց այդ էլ չօգնեց դժբախտ ժողովրդին տաճիկ ասկյարների եւ քուրդ հրոսակների բարբարոսութեանց: Նոքա անմիջապես բռնեցին ձորի երկու կողմի բարձունքները եւ գնդացիներով անգթորեն կոտորեցին ժողովրդին: Առաջին փախչողները կամ ամերիկյան որբանոց հասածները մի կերպ ազատվեցին, իսկ միջին մասը եւ վերջումն եղողները մեծ մասամբ զոհ գնացին գնդացրային կրակին: Դոցանից կենդանի մնացածներին, կանանց առանձին, տղամարդկանց առանձին վերադարձրին քաղաք՝ իրենց տներում տեղավորելու պատրվակով: Սակայն այլ կերպ վարվեցին: Նրանց տարան տեղավորեցին կայարանի կողմերում գտնված տախտակյա դատարկ պահեստանոցներում եւ քաղաքային բանտում: Վերջինում տղամարդկանց մի մասին եւ գինվորականներին՝ 120-ի չափ սպանելով, որոնց թվում եւ քաղաքի բերդապետ գեն[երալ] Փիրուսյանին եւ Հայկական 5-րդ գնդի գնդապետ Շաղաբաթյանին եւ այլն, 1300-ի չափ գինվորներով, որոնք նոյն Շաղաբաթյանի հրամանատարութեամբ քաղաքի Հարավային կողմի մարտկոցում բոլոր զորամասերից (բոլորեքյան դավաճանորեն փախուստի էին դիմած) միանգամայն կտրված, հերոսաբար, հուսահատական կռիվ էին մղում չորս կողմից օղակող տաճկական հորդաների դեմ:

Քաղաքացի բանտարկվածներին կողոպտել - մերկացնելուց եւ մի քանի օր քաղցի ու ծարավի մատնելուց հետո (կանանց հետ պատահածը...՝ աննկարագրելի էր, այս դժբախտները կիսամերկ դարձան իրենց տները), ոմանց ծեծի, ոմանց սվիններով եւ ոմանց էլ գիշերով բանտից դուրս տանելով՝ սպանում էին բանտի քամակում: Իսկ մնացածներին էլ դարձյալ ծեծի տակ, ծանր աշխատանքների՝ դիակներ քաշել տալ կամ սայլերին լծել ենթարկելով, քսան օր հետո, փալասներով, հին մորթու կտորներով կամ Հայկական ջուլահականցի թելերով պարուրված, մարդկային կերպարանքից ընկած, գերեւարեցին դեպի Սարիղամիշ, ուր դարձյալ մի շաբաթից ավելի սոսկալի սառնամանիքներին ավերակ զորանոցներում պահելու տանջելուց հետո «Կուկուլչկա» կոչված գնացքով հասցրին Էրզրում:

Բայց ինչպես ե՞ն հասցրել...

Որքան որ կարողացանք իրագեկ մարդկանցից ու կես ճանապարհից փախչող գերիներեն ստուգել (գերիների ընդհանուր թիվը գինվորութեան հետ միասին եղել է 3700 հոգի, ըստ ոմանց 7000 են հաշվում), միայն Էրզրում հասածները, բացի ճանապարհին փախչողներից (մոտ 200 հոգի), քաղցից, ծեծից եւ ցրտից մեռած եւ սպանված մոտ 300 հոգի, ընդամենը՝ 4200 հոգի: Տասնմեկ ամիս հետո գերութեանից վերադարձան ոչ ավել, քան 8-900 հոգի:

Կարսից սկսած մինչեւ Էրզրում սպանութեանը կատարվում է (եղել է հետեւյալ) սոսկալի ձեւերով: Բոլոր կայաններում մի քանի գինված գինվորներ պարբերաբար գիշերվա ժամը 11-ին գալիս, բաց անել են տալիս գերիների կացարանի դուռը եւ չորսից հինգ հոգի կանչում դուրս, որպես թե, «մեծավորն» է կանչում կամ որեւէ աշխատանքի են տանում: Բայց գնացողները ետ չեն գալիս եւ այդ ձեւի բարբարոսութեանը ամենամեծ թեւակներով շարունակվում է մինչեւ Էրզրում: Բացի չորանից Սարիղամիշից մինչեւ Էրզրում այն կայարանները, որոնք գտնվում են թուրք գլուղերի մոտ, գերիներին տանելու ժամանակ թուրք կանայք գիմավորում են եղել քարերով, փայտերով եւ կացիներով եւ բացարձակորեն պահանջում «գլավորներին իրենց հանձնելու, որ արյունները խմենք»: Երբ մերժում են ստանում, դազանային ունոցներով, անյուր հիշոցներ թափելով Հարձակվում են դժբախտների վերա եւ սոսկալի կերպով ծեծում ու ջարդում (այդ չի արգելվում նրանց, որովհետեւ նույնն անում են եւ ասկյարները ամեն քայլափոխում), տեղ-

* Այստեղ եւ մնացյալ տեղերում բազմակետերը փաստաթղթի հեղինակին են - Մ.Ա.:

տեղ էլ թույլ կամ հայտոյաց պահապաններին կաշառելով՝ գիշեր ժամին շարքերից դուրս քաշում շատերին եւ տանում, ո՞վ գիտե ինչպիսի սոսկալի տանջանքներով սպանում: Այդ ձեւ սպանվածների թվումն եղել է կաղզվանցի տեր Ներսես քահանան երկու այլ քահանաների հետ:

Կարսի բանտում թողած հայերին անասունների նման լծում էին սալերին եւ մահակների անդուլթ հարվածների տակ, ձմեռվա սառնամանիքին, կիսամերկ, ցրտից կապտած անդամներով դիակներ, վառելափայտ եւ մեծ տակառներով ջուր էին կրել տալիս: Նոյնպիսի դաժան աշխատանքների մատնված են եղել եւ գերինները Սարիղամիշում, Կարաուրգանում, Ջեւիսում, Գանձաղում եւ էրզրումում, որոնց մասին դառնուլթյամբ եւ սարսափով էին հիշում վերջերս դարձող գերինները:

Քաղաքի մնացած ժողովուրդը ոչ մի հնար կամ ժամանակ չգտնելով փախուստի դիմելու՝ շչմած եւ քարացած, յուր ամբողջ գույքը թողած, հագիվ կարողացավ յուր անտեր գլուխը թաքցնել մոտակա զանազան տներում կամ տեղացի ծանոթ թողբերի մոտ՝ սպասելով օրհասական ընթացքների: Նոյն ավուրը, գրավման գիշերվա ժամը երկուսից զանազան տեղերում լավեցին հրացանի խուլ ձայներ, միաժամանակ եւ տղամարդկանց ու կանանց սարսուռ ազդող ճիչեր ու աղաղակներ՝ վա՛յ, վա՛յ, վա՛յ, օգնուլթյու՛ն, օգնուլթյու՛ն... Սակայն ո՞վ է լսողը: Ասկյարների, քրդերի, տեղական թուրք ասկյարի համագրեւտով, որպեսզի անճանաչելի մնան ժողովրդից, սրիկաների եւ տեղացի ու մոտակա գյուղերից եկած մոլորականների ոհմակները ներս են խուժում... Կողոպտել, ծեծել, դուրս քաշել սպանել, մանրամասն խուզարկուլթյան ենթարկել տան բոլոր անկյունները, թախտերի տակները, հագուստի ծալքեր, գլխարկների մեջ, կապոցներ, դուլթի, անկողին, բարձեր եւ այլն, քարուքանդ անելուց եւ տղամարդկանց մերկացնելուց հետո ձեռքերում ունեցած լապտերները վառում եւ ընկնում էին կանանց շարքերը... Կամ պապանձում էր տիրում, կամ սոսկալի վայնասուն: Ջոկում էին գեռատի, գեղեցիկ կանանց եւ օրիորդների եւ տանում դուրս... Մի տեղ էլ ծնողների ձեռքից խլելով գեղանի կուլյսին՝ տանում են կից սենյակը (հայտնի ընտանիք): Դժբախտ ծնողները արտասուքն աչքերին՝ պատմելով ինձ կատարվածը՝ խնդրում էին ինձանից մի վկայական տալ դժբախտացածի ապագա փեսացուին ներկայացնելու ճշմարտապատումը (եթե նրա կողմից որեւէ տրտունջ առաջ գար): Նկուղներից, թախտերի տակերից եւ զանազան անտեսանելի հարմարավոր անկյուններում թաք կացած երիտասարդներին գտնում, դուրս քաշում եւ տանից մի քանի քայլ հեռացնելով, գնդակահարում կամ անհետացնում: Ոչ մի աղաչանք, արտասուք, պաղատանք չէր ազդում եւ չէր շարժում նոցա գուլթը, մանավանդ տեղականների: Քաղաքի զանազան ծայրամասերում թաքնվածները մեծ մասամբ անխտիր կոտորվեցին:

Բերդաթաղում, մի տան մեջ հավաքված ահագին թվով ընտանիքների մի քանի անգամ կողոպտելուց հետո, մի գիշեր էլ դալիս, դուռը թակում, թե բաց արեք: Ներսից պատասխանում են, թե ախր ին՞չ բաց անենք, եղած չեղածներս բոլորը տարել են ձեր ասկյարները, այլեւս բան չկա, խնայեցեք մեզ, ի սեր Աստծո:

«Բաց արեք դուռը, - գոռում են դրսից, հրացանի կոթերով ուժգին թակելով, - եթե ոչ կ'ջարգենք դուռը եւ ձեզ բոլորիդ շան նման կ'կոտորենք, գյավուրներ»: Դողդողալով մեկը գնում, բաց է անում դուռը:

Շուն, չե՞ս ուզում դուռը բաց անել մեր առջեւ, - եւ սկսում են դանակոծել դժբախտին, եւ ներս խուժել սենյակները, պահապան դնելով դռան մոտ: Ներս մտնող սպան մի աղջիկ է պահանջում իրեն «օրինավոր» կնուլթյան համար: Ամենքը պապանձվում եւ քարանում են: Կանանցից շատերն ուշաթափվում են, հառաչանքն ու մղկտոցները սիրտ են ծակում: Գազանը լապտերով շրջում է կանանց մեջ եւ գտնում: Դժբախտ գոհը՝ մի վարժուհի, սա առաջ է շարժվում առանց գիմարուլթյան եւ խանձված ձայնով ներկա եղողներին «ես կամովին կզոհեմ իմ պատիվը, - ասում է նա, որպեսզի այստեղ գտնված կանանց եւ օրիորդների պատիվն ու տղամարդկաց կյանքը փրկած լինեմ, - եւ դալիս, լուլթյան նստում է սպայի մոտ: Պատսպարվածների մեջ լինում է քաղաքի քահանաներից մեկը, որին սպան առաջարկում է իր նշանդրերը կատարել հայկական ծեսով, մանավանդ երբ իմանում է, որ քահանան իր նշանածի մոտ բարեկամներից է: Դժբախտ քահանան մի քիչ տատանվելուց հետո, ընկճված կատարում է գազանի առաջարկը: «Փեսան» վերցնում է «հարսնացուին» եւ հեռանում իր բնակարանը, իսկ մի շաբաթ հետո գոհին վերագարձնում տիրոջը:

Կոտորվելուց եւ առեւանգվելուց չազատվեցին նոյնիսկ ամերիկական որբանոցներում ապաստանվածները: Ամեն գիշեր սանձարձակ ասկյարները գնում, այնտեղից գեղանի կույսեր <էին> ջոկում եւ հեռացնում: Նոյն վիճակին ենթարկվում են եղել եւ որբանոցի հասակավոր աղջիկները: Աղա մարդկանց էլ կառավարութիւնն է իրա «փոլիսներով» դուրս հանում թաքստից եւ հեռացնելով՝ վարվում ըստ վերոգրելոցն, առանց խնայելու որբանոցի իսկական հայ ծառայողներին եւս՝ վերջիններին միայն ֆոնդում պահելով:

Որբանոցում մնացողներից շատերը տեսնելով, որ նոյնպիսի դառն վիճակ իրենց էլ է սպասում, խումբ - խումբ սկսեցին գիշերով փախուստի դիմել լեռնային զանազան անանցանելի ճանապարհներով: Դոցանից ոմանք ազատվեցին, ոմանք էլ կես ճանապարհին գնդակահարվեցին հետապնդող բարբարոսներից: Անհավատալի կլինի, եթե ասեմ, որ ամերիկյան որբանոցի ընդհանուր լիազոր, գնդապետ Քոքսի օգնականն անգամ ապտակվեց թուրք ասկյարներից՝ հագիվ թաքստյան տեղ գտնելով յուր սենյակներից մեկում: Եվ հարգելի Քոքսը նկատելով, որ ասկյարների պարբերական նեխուժումից եւ գինյութրական պետերի անախորժ եւ անտեղի պահանջներից. (բազմատեսակ մթերքների յուրացման նկատումով) ոչ մի հնար չկա ազատվելու, երկու չարիքից փոքրագույնն ընտրեց: Երկու եւ կես ամիս Կարսի առումից հետո, մթերքների մի մասը տաճիկներին «ընծայելով»՝ յուր որբերի հետ հեռացավ դեպի Ալեքսանդրապոլ:

Կարսի գրավման քսաներորդ օրը կառավարութեան կողմից մունեստիկի միջոցով հայտարարվեց հայ ժողովրդին՝ դուրս գալ թաքստյան տեղերից եւ գնալ իրենց տները: Սարսափելի վիճակ, նուր դատարկ, գրպանում դրամ չկա, հագուստից, անկողնից եւ վառելիքից միանգամայն զրկված, ապա քաղցը... Ու՞ր գնա, ու՞ր թաքցնես յուր ողբալի գլուխը, անասունի աստիճանի հասած գժբախտ հայ ժողովուրդը: Այդ դրութիւնը վերհիշելն անգամ սարսուռ է ազդում Ղդերիս վերա, որովհետեւ ինքս էլ այդ սարսափելի դրութեան էի մատնված իմ թշվառ գավակներս հետ, որոնցից մեկին՝ 28-ամյա միջնակարգ կրթութիւն ստացած դատերս թաղեցի սրտի ամենախիստ բարախումից եւ երկյուղի ու սարսափի տակ սրտաճաք լինելուց, երբ ինձ քաշում էին դուրս՝ սպանելու...

Մեր աչքերի առաջ քսաներեք օր շարունակ սայլերով ու ֆուրգոններով (շատերին հայ մարդիկ լծած) դիակներ էին կրում քաղաքից դուրս: Իսկ առաջին երեք գիշերները քաղաքից դուրս, բաց դաշտում, մեծ տարածութեան վերա, մինչեւ լույս կապտագույն բոցերով այրվում էր... Սկզբում անհասկանալի եւ նոյնիսկ անհավատալի, որ մարդիկ լինեին այրվելիս, բայց այդ դժոխքից հրաշքով ազատվողներն մինը հաստատեց կատարված սեւ իրողութիւնը, որ նավթը մեծ դեր է կատարել հայ երիտասարդութեանը կենդանւոյն այրելու դիվական իրախճանին:

Տաճիկ կառավարութիւնը գեներալ որոնելու պատրվակով Կարսի գրավումից մեկ ամիս հետո բողոքի (Սարիղամիշի մոտ) չերքեզ, ոմն տիրահազակ Նեյրուլլայի (քաղաքագլուխ) ղեկավարութեամբ պաշտոնական խուզարկութեան ենթարկեցին հայերի տները, որի արդյունքն այն եղավ, որ ասկյարների պակաս թողածը իրենք լրացրին... Եվ 16-75-ամյա արուներին հավաքելով՝ առաջնորդեցին դեպի բանտ, ուր քաղցի, ծարավի եւ չարաչար աշխատեցնելուց հետո քառասունից բարձր տարիք ունեցողներին վերադարձրին իրենց տները, մի-մի փալասի կամ հին փոստի կտոր քամակներին ու փորերին կապած, իսկ երիտասարդներին առաջնորդեցին «ավետոյաց երկիր» համարվող էրզրումի կողմը:

Հագիվ հայ ժողովուրդը ծվարել էր յուր՝ թուրքերից գրավված տան անկյուններից մինում եւ ահա սկսվեց դորա բռնի տեղահանումը դեպի Ալեքսանդրապոլ՝ ձմեռվա այդ խիստ սառնամանիքին: Ընչաքաղց «փոլիսներն», (ոստիկան) եւ ժանդարմերիան գործի եղան: Մի քանի տասնյակ ընտանիքների հերթով իմաց էին տալիս, որ 3-5 օր հետո գնացքը մեկնում է, պատրաստ եղեք՝ դուրս գալու: Լաց ու կոծ, աղաղակ, աղաչանք, որ գոնե մինչեւ գարնանը խնայեն, ցուրտ է, մերկ են եւ այլն: Լսել անգամ չեն կամենում եւ վարպետորեն գնացքի մեկնումը նշանակում են առավոտյան ժամի ճիշտ ութին, որպեսզի ոչ ոք հնարավորութիւն չունենա որեւէ իր կամ ծանրոց կայարան փոխադրելու միջոցին դիմելու: Գնացքի օրը, առավոտյան լուսաբացին փոլիս, ժանդարմներ կտրում՝ են դուռը. «Դեհ, շուտ գնացեք,

* Տեքստում այդպես է: Հավանաբար պետք է լինի կոտորում - Մ.Ա.:

գնացքը շարժվում է»։ «Աղա ջան, մի քիչ ժամանակ տվեք, լույսը նոր է բացվել, սայլ գտնեմ կամ մարդ բերեմ իրերս կայարան տանելու»,- (n°վ կարող է ազատ դուրս գալ տանից, որ մարդ կամ սայլ կարողանա բերել, մանավանդ որ բեռնակիրները հեռու թաղերում ապրող թուրքեր են), լալազին պաղատում են խեղճերը։ Պատասխանը լինում է անուր հայհոյանք եւ մտրակների ու հրացանի կոթերի հարվածներ։ Իսկ եթե ուղարկվողը քիչ դուրեկան կին է, առանձնացումն... Ապա ճանապարհ... Եվ հոգեպես ընկճված, ֆիզիկապես կմախքացած կարավանը, շտապովի, միմի կապոց կամ ծանրոց գրկած-շալակած, այդ փոլիսների հսկողութեան տակ, տարվում է դեպի կայարան՝ ատամ-ատամի խփելով, մի վերջին արտասովից հայացք ուղղելով դեպի անտեր թողած օջախը, ուր հենց այդ րուպեին մնացած փոլիսներն ու թուրք սրիկաները ներս խուժած մաքրագարդում են յուր արդար քրտինքը յուր աչքի առջև։ Եվ մի ժամ հետո լքված տների դատարկ պատերն են մնում որպես լուռ վկաներ կատարված բարբարոսութեան։ Այդ դեռ քիչ է։ Կայարանում տարված իրերը խուճարկում են եւ կրկին իրենց հարկավոր բաները վերցնում։ Գնացքի մեկնելուց հետո կայարաններում, ասկյարների ձեռամբ կատարված քստմնելի արարքները գերազանցում են ամեն մի տեսակ բարբարոսութեան։ Ամեն մի կայարանում գնացքը պահում են 1.5-2 ժամ, երբեմն ավելի։ Ասկյարները անարգել մտնում են վագոնները եւ թուրքին հատուկ վավաշոտութեամբ աչքները սեւեռում դեպի կանանց կողմը եւ աչքն ընկած քաշում վագոնից դուրս...

Թեեւ ծանր է ինձ արձանագրել 'Լզլչախչախի կայարանում տեղի ունեցած մի սոսկալի դեպք եւս, սակայն «կարմիր» թուրքի իսկական պատկերն ու ազգային հատկանիշը ի վեր հանելու համար՝ հարկադրված եմ վշտացյալ Հայրապետիդ կրկնակի վիշտ պատճառելու, քանի որ Կարսի ամբողջ հայ ժողովուրդը սոսկումով լսեց այդ դեպքը։

Գնացքը կանգնում է Հիշյալ կայարանում եւ ըստ սովորականին լալիչ ասկյարները մտնում են մի վագոն, սրան - նրան ծեծել-կողոպտելուց հետո ամենքիս ծանոթ մի մարդու կոշիկները քաշելուց հետո նրա եւ նրա կնոջ ու վագոնում տեղավորված գաղթականութեան ներկայութեամբ բռնաբարում են նորա 17-ամյա մատաղահաս դստերը։ Եվ այս ձեւի տեղահանումը շարունակվում է մինչեւ 1921թ. մարտ ամսի վերջերը։

Թուրքերը, երբ որ ամեն բան մաքրեցին, Կարսի գրավումից վեց ամիս հետո ([19]21թ. ապրիլ վերջերին) երեւի Անգորայից եկած որեւէ հրամանով, մի փոքր մեղմացրին իրենց վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդը։ Այդ ժամանակ Կարսում գտնված Գեղիմ փաշայի առանձին թարգման, հայագրի մահմեդականութուն ընդունած Հիդեիթ* էֆէնդիի խորհրդով եւ թելադրութեամբ Զատիկի օրերում մի քանի մարդկանցով դիմեցինք մութեսերիֆ (նահանգապետ) Թեյիբ բեյին՝ թույլատրութուն խնդրելու՝ եկեղեցին բաց անելու եւ ժամերգութուն կատարելու, մատնացոյց անելով Զատիկան մեծ տոնը։ Հիդեիթից նախապատրաստված լինելով (բոլոր պաշտոնյաների վերա ազդեցութուն ունեւ Հիդեիթը), վերին աստիճանի քաղաքավարութեամբ մեզ ընդունելուց հետո «ապալիլ էաշամչն դըր», ստեղծողը ընդհանուրինն է, - ասաց, - գնացեք, բաց արեք ձեր եկեղեցին, առանց որեւէ երկյուղի, զանգակները չալեցեք, ազատ ժամերգութուն կատարեցեք եւ ձեր կանանց ու երեխաներին հայտնեցեք, որ փողոցներով ազատորեն ման գալով մտնեն եկեղեցի եւ աղոթեն։ Ոչ ոք իրավունք չունի նրանց ծուռ աչքով նայելու այսուհետեւ։

Կարսի նորաչեն ս. Լուսավորիչ եկեղեցին բոլորովին կողոպտված էր։ Շինու-

** Ասում էին, որ Տրապիզոնի նախկին առաջնորդ Էմմանուել վարդապետն է եղել Հիդեիթ էֆենտին։ Ինչ հանգամանքներում կրոնափոխ լինելը մեզ անհայտ մնաց, որովհետեւ սարսափելի գաղտնապահ եւ խիստ մարդ էր, որից ոչինչ չէր կարելի իմանալ։ Սակայն խոսակցութեան ժամանակ հիշում էր յուր չորսամյա տանջալի բանտարկութունը Միջագետքի տաճական բանտերում։ Մասնակցել է տեր Կոմիտաս վարդապետի Պոլսի քառաձայն երգեցիկ խմբին որպես բաս։ Երգում էր պատարագի արարողութունից եւ հայտնի շարականներից գեղեցիկ ձայնով եւ ձայնագրագետի հատուկ հմտութեամբ։ Եկեղեցական գույքերի եւ անոթեղենների պահպանման սարսափելի նախանձախնդիր էր։ «Որ սպայի կամ ականավոր թուրքի մոտ որեւէ եկեղեցական անոթ կամ զգեստ կտեսնեք, ինձ անմիջապես իմաց տվեք», - միշտ կրկնում էր նա։ Ծանոթութունը փաստաթղթի հեղինակինն է - Մ.Ա.։

թյունը սակայն դրսից ու ներսից անվնաս էր մնացել, բացի մարմարյա փոքրիկ վեմաքարից, որ տեղափոխվել էր արհեստական հիմքի վրա, տակից մի բան գտնելու համար: Մուկեթեանի ֆիլմի թույլ տված թույլտվությունը՝ սկսեցինք այս ու այն կողմից գրքեր հավաքել եւ ազդեցական ժողովրդի փոքրիկ նվիրատու թյուններով մի կերպ կարգավորել եւ անարգել կատարել ժամերգությունը:

Ի դեպ «Առաքելոց» պատմական հոյակապ եկեղեցին թուրքերը վերածեցին ջամիի, գմբեթից պոկելով ս. խաչը, նրա տեղ իրենց կիսալուսինը դնելով, չմոռանալով «երախտագիտորեն» սպանելու կիսալուսինը տեղը դնող Հայ վարպետին: Հայկական մյուս երկու եկեղեցիները, որոնք գտնվում են Բերդաթաղում, խարխլած լինելու պատճառով, նախկին Հանրապետության օրով իսկ անգործածելի էին:

Մեր քահանաներից միմիայն տեր խորեն Ստամբուլյանն էր մնացել Կարսում, որը զատկական տոներից հետո հեռացավ Կարսից:

Մնալով Կարսում միայնակ, ուխտեցի չլքել ամենեւին այնտեղ մնացած մի բուն Հայ ժողովրդին եւ որպես հովիվ բաժանել նրա հետ նրա կրելիք տառապանքն ու ցավերը եւ չբաժանել նրանից ինչ դեպք էլ որ պատահի եւ հոգեպես մխիթարել նրան իմ մարդկային ուժերիս ներածի չափով:

Այնուհետեւ, հետզհետե ծանոթանալով թուրքական մեծ ու փոքր պաշտոնյաների հետ, Հիդեիթ էֆենտու գործակցութեամբ կարողացա մի քանի Հայ կանայք եւ օրիորդներ դուրս բերել տաճիկ սպաների մոտից, մի քանի օր պաշտպանելուց հետո ունայց ուղարկել տալ Ալեքսանդրապոլ, ունայց էլ Հանձնել Կարսի պետական կտավի գործարանը՝ ջուլհականոց, ուր 30-ի չափ Հայ կանայք եւ օրիորդներ (մեծ մասամբ ալեքսանդրապոլցի եւ արդահանցի) աշխատում էին չափավոր աշխատավարձով եւ որոշ օրապահիկով, կանոնավոր հսկողութեան տակ:

Տարվոյս մարտ ամսի սկզբներին Կարսի Հայկական ներկայացուցչի օգնական Անտոնյանն ու թարգման Ն. Կարապետյանը (ներկայացուցչից) բացակա էր) կանչեցին ինձ եւ խնդրեցին, որ տեղվոյն Հայ ժողովրդի ընտանեկան մանրամասն ցուցակը կազմեմ: «Թեեւ մենք Կարս մտնելու օրից ([19]21թ. օգոստոս) պետք էր, որ պաշտոնապես ցուցակագրեինք Կարսի Հայ ժողովրդին, - ասացին նրանք, - բայց չմտածեցինք: Այնինչ ուղևորական ներկայացուցչից գյուղացի մոլորականներին անգամ ցուցակագրել է յուր ժամանակին, իսկ այսօր, երբ կարելու է մեզ այդպիսի մի ցուցակ, մենք մեր ձեռքում ոչինչ չունենք: Որոշ փափկանկատութեամբ պաշտոնապես չենք կարող կատարել այդ, որովհետեւ կարող է բարդութեամբ առաջ բերել, որը մեզ համար այժմ հաճելի չէ: Այլ կերպ Հնար չունենք: Ուստի մնում է Ձեզ խնդրել, տեղ Հայր, որ այդ նեղութեամբ Դուք հանձն առնեք, միայն չափազանց զգուշացե՛ք»: Ես ուրախութեամբ հանձն առա այդ դժվարին գործը եւ տնտեսն շրջելով՝ ընթացա մի ամսով կարողացա գլուխ բերել ցուցակագրությունը, որի մեջ նշանակված էին ընտանիքի բոլոր երկուսն անդամների անունները, տարիքը, բնակված թաղը, պարագամունքը եւ որտեղացի լինելը, բացի դորանից, ո՞ր կինը կամ ո՞ր աղջիկը ո՞ր սպայի կամ թեյարաններում ծառայելը կամ ո՞ր սպայի հետ կենակցելը եւ այլն (թեեւ ես իմ ծխականների համառոտ ցուցակն ունեի, բայց ոչ այդպիսին):

Գրելու ժամանակ ինձ հարցնող թուրքերին եւ ծխականներին (վերջիններից էլ գաղտնի էի պահում իսկութեամբ) զատկական տոներն ու տնօրհնեքն էի պատճառ բերում, իբր թե տները շուտ գտնելու եւ օրհնելու, որպեսզի բողոքի տեղիք չտամ, թե քահանան մեզ մոռացավ:

Ժողովրդի ընդհանուր թիվը դուրս եկավ 725 անձ, մեծ մասամբ ծեր կանայք, այրիներ եւ որբեր: Հայկական ներկայացուցչութեան ցուցակի հարազատ պատճենն ուղարկեց Երեւան, ուր տվյալ թվերը հրատարակվեցան «Խորհրդի» Հայ-աստանի» էջերում: Մի օրինակ էլ յուր մոտ պահեց: Ծնորհիվ այդ ցուցակի դարձյալ շատ Հայ կանայք եւ օրիորդներ մեր ներկայացուցչի ձեռքով խլվեցին սպաների ձեռքերից եւ ուղարկվեցին Հայաստան: Առեւանգութեանը դադարեց:

Տաճիկ կառավարութեանն էլ յուր կողմից հայտարարեց, որ ոչ մի սպայի մոտ Հայ աղջիկ չպետք է ծառայի: Ինքը՝ կառավարութեանն էլ Կարին կամ այլուր տեղափոխվող սպաների ձեռքից Հայ աղջիկներին խլում եւ հանձնում էր մեզ, որոնցից չորս հոգու էլ ինձ մոտ ուղարկեցին ի պահպանութեամբ:

* Հիդեիթի անստորագիր տոմսակը՝ ինձ մոտ պահ տրված երեք Հայ աղջիկների վերաբերմամբ, ներփակ կա գեղուցագրի մեջ, ինչպես եւ Հայ ներկայացուցչի ներք տոմսակները: Ծանոթութեամբ փաստաթղթի հեղինակին է - Մ.Ա.:

1921թ. մայիս ամսի վերջերին ոստիկանութիւնը գիշերով ինձ տարավ բանտը, ուր բանտարկված չորս հայ երիտասարդների (Կաղզվանից եւ շրջանից) դատական վճռով գնդակահարեցին իմ ներկայութեամբ որպէս մասնակիցների կաղզվանցի ոմն թուրք Ասլան բեյի սպանութեան (1919թ.), որոնց խոստովանեցնել հաղորդելու դժբախտութեանն ունեցա, որովհետեւ անկեղծորեն ու տղամարդուն վայել սառնութեամբ (վախենալու պետք չունեին, քանի որ մազն ու կյանքը բաժանող գերեզմանի եզերքին էին կանգնած) խոստովանեցան, որ իրենք այդ սպանութեան վրա զործի մեջ միանգամայն անմեղ են եւ ինչ որ ոմն կաղզվանցի Նազարի սարքած ծուղակն են ընկել... Գնդակահարութեանից հետո դատախազի խնդրանք չորսին էլ ամփոփեցի իրենց համար նոր փորված գերեզմանի մեջ՝ թաղման կարգի կատարմամբ եւ գերեզմանի կնքումով՝ ստորագրելով եւ այդ առթիւ պատրաստված արձանագրութիւնը:

Ընթացս երկու տարի ազդիկ եւ մի այրի կին միայն կրօնափոխ եղան տաճկաց կրօնապետի՝ մուֆթիի ձեռնամբ, զանազան ժամանակներում: Առաջինը՝ կարսեցի գիմնագիտի չորրորդ դասարանի աշակերտուհի, երկրորդը՝ արդահանցի, երրորդը՝ բասենցի եւ չորրորդը՝ դարձյալ կարսեցի: Առաջին երեքի ժամանակն էլ կրօնապետը պաշտոնապէս հրավիրեց ինձ որպէս հայ քահանայի եւ հայ ժողովրդի ներկայացուցչի՝ հավատուրացներին խոստովանեցնելու, ըստ իրեն՝ մուֆթիի «որպէսզի բռնութեան տակ արած չլինեն այդ քայլը, որը մեզ համար բնավ հաճելի է»:

Սակայն ուրացողներից առաջին երկուսը, (անշուշտ թելադրված), ոչ թե չկամեցան իմ հարցումներին մայրենի լեզվով պատասխանել, այլ արհամարական հայացք գցելով դեպի իմ կողմը, տաճկերեն դիմեցին մուֆթիին, թե մենք ամենեւին չենք ցանկանում դորա (ցոյց տալով ինձ) հետ խոսել, չենք էլ ճանաչում դորան, մենք երեխաներ չենք, մենք արդեն կամովին «հախ դինը» (ուղիղ հավատ) ընդունել ենք: Մինչեւ անգամ գիմնագիտի սանուհին թույլ տվավ իրեն դիմելու մուֆթիին հետեւյալ խոսքերով. «Եթե դուք կատիպեք ինձ այդ քահանայի հետ, խոսելու, ես դորա գլխին այնպիսի գործ կբանամ, որ նա բոլորովին կկորչի...»: Մուֆթիին ուսերը թոթովելով, նայեց դեպի ինձ, կամենալով ասել, թե ես իմ պարտքս կատարեցի, քո ազգը քեզ չի ճանաչում, ես ի՞նչ անեմ եւ գրասեղանին մոտ հրավիրելով՝ «ուղիղ հավատի» հանգանակը մի առ մի կրկնել տալով, արձակեց «ի խաղաղութիւն»:

Նախքան այդ աշակերտուհուն ներս կանչելը, դորա դեմ որպէս անչափահասի (15 ամյա) կրօնապետին բողոքեցի, թե այդ երեխաների, թե կրօնափոխութիւնը, թե ամուսնութիւնը եւ թե վկայութիւնը որպէս անչափահասի ոչ մի պատուութիւն չի ընդունում, հետեւապէս եւ այդ երեխան (մայրն էլ ներկա էր) որպէս առեւանգված թուրք երիտասարդի ձեռքով, պետք է որ Ձեզ համար անընդունելի լինի դորա հավատափոխութիւնը, որովհետեւ պարզ երեւում է, որ գիտակցորեն եւ ներքին համոզումով չէ այդ քայլը, այլ փախցնող տղայի հետ ամուսնանալու ցանկութեամբ, որ օրենքի հակառակ է. «Ուրեմն, Ձեր շարիաթը միթե՞ ընդունում է այդ, մուֆթի է՞քենդի»:

Կրօնապետը ցնցված իմ խոսքերից, վեր թռավ նստած տեղից եւ «փափազ է՞քենտի հակառակ մտքեր եք արտահայտում, մենք մեր շարիաթին երբեք դեմ չենք գնում, - ասելով, մոտեցավ պատի տակ դրված պահարանին եւ այնտեղից մի հաստափոր գիրք վերցնելով, դարձավ յուր տեղը, բաց արավ մի տեղ եւ մոտենալով ինձ՝ ցուցամատը տողերի հետ վերուվայր տանելով, արաբերեն կարգաց մի քանի տող եւ տաճկերեն բացատրեց, որ իրենց օրենքով ոչ թե 14 կամ 15, այլ 10 տարեկանն էլ կարող է ամուսնանալ, իսկ 15 տարեկանը ազատորեն կարող է յուր հավատը փոխել:

Բայց ի՞նչ ձեւ փոխելուն, ոչինչ չբարեհաճեց ասելու: Ես անմիջապէս մտաբերեցի Հագրեթի Մուհամեդի 3 տարեկան Այիշայի հետ նշանագրվելն ու նրա 9 տարեկան հասակում նրան կին վերցնելը: Միեւնույն ժամանակ զգալով ուր գտնվելս, սուս կացա եւ որպէս վկա միայն ստորագրեցի կազմված արձանագրութիւնը:

Նոյնն արեց եւ դժբախտ մայրը: Երրորդը՝ բասենցին առանձնապէս խոստովանեց, որ ինքը ձեւականորեն եւ առերես է հավատափոխ լինում իրեն թուրք ձեւացնող հուլի գիմնագիտի հետ ամուսնանալու մտքով, որպէսզի կասկածի չենթարկե նրան՝ գիմնագիտին, մինչեւ որ իրենց բախտը իրենք կարողանան տնօրինել: Չորրորդը

կարսեցի մի այրի էր, որ յուր դժբախտ ծնողների լալագին թախանձանքը մերժելով՝ Հայտնապես գնաց նստեց մի կին եւ երեխաներ ունեցող թուրքի տանը իբրեւ «ղամա» (կնոջ վերա նոր կին) եւ թուրք դրացիների բողոքի ու ճնշման տակ այնտեղից եւս անհայտացավ նույն թուրքի ձեռքով, Հայտնի չէ, թե ուր: Այլեւս հետքը չգտնվեց:

Գնացած գերիներից վերադարձան միայն 900 հոգի, մեծ մասամբ գինվորականներ:

Գալով Կարսի անկմանը, որ քաղաքական մեծ խորուժ[յուն] է ամփոփում յուր մեջ, դորա պատճառները ըստ էութեան քննելն ու լուսաբանելը իմ ուժերից բարձր եմ գտնում: Նոյնիսկ փակագծի մեջ էլ դժվար է ասել: Տեսնելով տաճկական զորքը, որ առանց չափազանցութեան երեք անգամ քիչ էր մերիկից, դժվար է ասել, որ հայկական զորքը տաճկականի դեմ իրեն անզոր զգալով, երեխայի նման լեղաճաք եղավ եւ փախավ:

Քավ լիցի, այդպես ասող-պնդողները չարախոսում են: Եթե պահ մի լսենք Զորդ գիվիգ[իայի] գնդապետ Հյուսնի Բեյին, վարագույրի ծայրը մի քիչ կբացվի. «Զեր բոլոր ժողովներում խոսված ճառերը եւ գինվոր[ական] գաղտնի որոշումները մեզ անմիջապես տեղեկացնում էին մեր բարեկամ հայերն ու մոլոկանները»:

Վեհ[ուժյան]դ ամենախոնարհ որդի եւ ծառա՝

Կորյուն քահանա Քոթանջյան

Ֆ. 57, ց. 3, գ. 511, թ. 1-20: Բնագիր: Ձեռագիր:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ**



Միջնադարյան ժամանակների ճարտարապետական հուշարձանները ներկայացնող Երեւանի ամենահին՝ Պողոս-Պետրոս եկեղեցին գտնվում էր Աբովյան փողոցում (ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի տեղում)՝ Հնուկյանների պաշտպանության կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանի տան անմիջապես կողքին եւ Հանդիսանում էր քաղաքի ամենամեծ եկեղեցին:

Եկեղեցու հիմնադրումը թվագրվում է վաղ միջնադարով (V-VI դդ.): Եռանավ այս բազիլիկ եկեղեցին դրսից պարզ կառուցվածքով էր ու երկթեք տանիքով: Գրավիչ էր եկեղեցու Հարավային մուտքին Հմտերեն Հարմարեցված երկաթածուլ դուռը, որը, մինչ այդ, պատկանել էր Հին Բայազետի բերդին, որտեղից Մուխսի Սաքո անունով մի մարդ, Երեւան բերելուց հետո, այն վաճառել էր տեղ Կարգանին, իսկ վերջինս այն նվիրել էր Պողոս-Պետրոս եկեղեցուն:

Գտնվել են պատերին ագուցված խաչքարեր, որոնք հիմք են տալիս ասելու, որ 1679թ. երկրաշարժից բավականին տուժած եկեղեցին վերականգնվել է 1692-1693թթ., իսկ վիճադրերը փաստում են եկեղեցու վերանորոգման 1798թ. եւ 1810թ.:

Պողոս-Պետրոս եկեղեցին հայտնի է իր՝ 6 կամ 7 շերտից բաղկացած Փրեսկոներով (որմնանկարներով): Դրանցիվ վերին երկու շերտերը պատասառի վրա են, ստորին մնացած շերտերը՝ կրածեփի վրա եւ բոլորն էլ մոնումենտալ արվեստի սքանչելի նմուշներ են: Ստորին 1-ին եւ 2-րդ շերտերը V-VI դդ. խորհուրդն ունեն: Մնացած շերտերը, բացառությամբ 3-րդի, ծնունդով ներառելի են XIII-XVIII դդ. մեջ՝ եկեղեցու համանուն առաքյալների դիմանկարներով: Ինչ վերաբերում է 3-րդ շերտին, ապա այստեղ հստակ է 1131թ., որը եզակի է դարձնում այս որմնանկարը, որպես յուզաներկի օգտագործման ամենավաղ նմուշ համաշխարհային որմնանկարչության մեջ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, նոր իշխանությունները կատարի պայքար սկսեցին կրոնի դեմ, որի արդյունքում, 1931թ.-ին, քանդվեց Պողոս-Պետրոս եկեղեցին: Դրա քանդման ժամանակ տուժեցին նաեւ որմնանկարները, որոնք, շերտ առ շերտ, դուրս բերվեցին եկեղեցուց: Այժմ դրանք պահպանվում են թանգարաններում:

Հրապարակվող անտիպ փաստաթղթերը (բոլորն էլ ընտրված են Հայաստանի ազգային արխիվից) ներկայացնում են Ալ.Թամանյանի՝ Պողոս-Պետրոս եկեղեցին եւ նրա որմնանկարները փրկելու գործունեությունը:

Ռուբեն Սիմոնյան

N 1

**ԱԼ.ԹԱՄԱՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ
Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՎԵՐՋԻՆԵՍ ԿՈՂՄԻՑ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

6 փետրվարի 1930թ.
Երեւան

Կոմիտես տեղեկացել է, որ Երեւանի Քաղխորհուրդը որոշել է քանդել Պետրոս-Պողոսի եկեղեցին, որ գտնվում է Աբովյան փողոցի վրա ընդ N 52:

Կոմիտես իր պարտքն է համարում հայտնել Ձեզ, որ վերոհիշյալ եկեղեցին կառուցված է 1679թ. մեծ երկրաշարժից անմիջապես հետո: Նա Երեւանի ամենահին շենքերից մեկն է, որովհետեւ երկրաշարժը հիմնովին ոչնչացրել էր քաղաքի բոլոր կառուցվածքները: Բացի դրանից, նա ունի իր վրա բազմաթիվ արձանագրութւոյններ, քանդակներ, պատմական դուռը (Հին Բայազետից բերված) եւ իր ամբողջութեամբ ներկայացնում է 17-րդ դարի հայ ճարտարապետութւյան ցայտուն պատկերը. նրա կործանումը մի զգալի բաց պիտի առաջացնի Երեւան քաղաքի շինարարութւյան համար:

Ուստի եւ Կոմիտես խնդրում է Ձեզ միջնորդել ժողովուրդի առաջ թույլ չտալ այդ հուշարձանի քանդումը, մանավանդ, որ նրա կանգուն մնալը չի խանգարում նրա շուրջը քաղաքացիական շենքեր կառուցելուն Աբովյան փողոցի եւ հրապարակի կողմից:

Նկատի առնելով այդ հուշարձանի կարեւորութւոյնը, Կոմիտես վաղուց որոշել էր մանրակրկիտ կերպով ուսումնասիրել, չափազրել եւ լուսանկարել. եւ այդ որոշումը նա իրագործելու է անմիջապես:

Նախագահ Ա.Թամանյան
Գիտական քարտուղար Ա.Քալանթար

Ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

N 2

Ա.Լ.ԹԱՄԱՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԵՒ ԴՐԱՆՔ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

2 մարտի 1930թ.
Երեւան

Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման ընթացքում Հնուէթ[յունների] պահպանման կոմիտեի կողմից կատարվող հետազոտական աշխատանքների միջոցին պարզվեց, որ այդ շենքն ունի իր մեջ մի շարք կարեւոր պատմա-հնագիտական արժեքներ- բարեկիւֆներ, արձանագրութւոյններ եւ մանավանդ միանգամայն բացառիկ բնույթ ու եզակի գիտական արժեք ներկայացնող ֆրեսկոներ-որմնանկարներ, որոնցով ծածկված են եղել շենքի պատկերը: Եկեղեցին վերաշինված է 17-րդ դարի վերջին՝ Երեւանի մեծ երկրաշարժից (1679թ.) անմիջապես հետո, սակայն այժմ վերին սվաղը պոկելուց հետո պարզվում է, որ ներկա շենքի մի խոշոր մասը մնացած է երկրաշարժից առաջ եղած եկեղեցուց, որը պահպանել է մի շարք բնորոշ տվյալներ (ըստ տիպի, շիննյակերպի եւ այլն)՝ նրա հիմնավորման ժամանակը հասցնելու 5-րդ-6-րդ դարերին:

Եկեղեցու ներսում արեւելյան պատի վրա աբսիդի երկու կողմերում, արտաքին նկարների տակ մեկը մյուսի հետեւից բացվեցին 5 տարբեր սվաղի շերտեր գանգան դարերի պատկանող, որոնց վրա գտնվում են յուզաներկ եւ ջրաներկ ֆրեսկոներ. վերելից 2-րդ շերտը պատկանում է նորոգման ժամանակին (17-րդ դարի վերջին), իսկ 3-րդ շերտը թվագրված է եւ կրում է հայոց 580 թվականը՝ որ համապատասխանում է 1131 թվականին, դրա տակ գտնվող 4-րդ եւ 5-րդ շերտերը իրենց գեղարվեստական գերազանց արժանիքներով կարող են պատկանել հատկապես 10-րդ եւ 7-րդ դարերին - հայ արվեստի ծաղկման շրջաններին:

Բոլոր շերտերի վրա նկարներն էլ, որքան նրանք այստեղ-այնտեղ արդեն բացված են՝ պահպանված են բավականաչափ լավ եւ հնարավոր է վերականգնել իրենց նախկին գրութւյամբ:

Այս նկարները չափազանց մեծ նորութւոյն են հանդիսանում ոչ թե միայն հայ արվեստի պատմութւյան համար, որի՝ մինչ այժմ մեզ հայտնի ամենահին ֆրեսկոները (Անի, Քոբեք, Հաղբատ, Գեղարդ) 13-րդ դարի կիսից դենը չեն անցնում, այլեւ համաշխարհային արվեստի տեսակետից ունեն բացառիկ նշանակութւոյն:

Բացի այդ, այս գյուտի շնորհիվ միայն Երեւան քաղաքի հեռավոր անցյալը սկսում է առաջին անգամ բացվել մեր առաջ:

Հն[ուէթյունների] պահպանման կոմիտեն ի նկատի ունենալով, որ այս հու-

շարժանը՝ իր բացառիկ մնացորդներով մեծ հեղաշրջում է առաջացնելու արվեստի պատմութեան մեջ եւ առիթ ու հնարավորութիւն է տալու մեր խորհրդային գիտութեանը ասելու նոր խոսք եւ անելու մեծ նվաճում գեղարվեստի պատմութեան ասպարեզում, գտնում է, որ այս հուշարձանը պետք է ուսումնասիրվի ամենայն մանրամասնութեամբ ու մանրակրկիտ ձեւով:

Այդ գործը ներկայումս բոլորովին հնարավոր չէ այն հապճեպ աշխատանքների հետ միաժամանակ, որով կատարվում է նրա քանդումը:

Ուստի Կոմիտեն խնդրում է Ձեզ միջնորդել ժողկոմխորհի առաջ՝ կարգադրելու դադարեցնել քանդման աշխատանքները եւ հնարավորութիւն տալ Կոմիտեիս կատարելու այդ հուշարձանի ուսումնասիրութիւնը՝ օգտագործելով տեխնիկական եւ գիտական բոլոր հնարավորութիւնները:

Նախագահ

Ա.Թամանյան

Ֆ. 1063, ց. 1, դ. 92, թ. 2 եւ շրջ.: Պատճեն: Մեքենագիր:

N 3

Ա.Լ.ԹԱՄԱՆՅԱՆԻ ՇՆՈՐ ՀԱԿԱԼԱԳԻՐԸ ՌՍՖՖՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԱՐՎԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ԳԻՏԵՈՐ ՀՐԴԻՆ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ Ն ՊԱՏԱԿՈՎ Գ.ԶԻՐԻԿՈՎԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ

18 հունիսի 1930թ.
Երեւան

Комитет Охраны Древностей Армении настоящим подтверждает, что научный сотрудник ЦГРМ Григорий Осипович Чириков, вследствие командировки Мастерскими, прибыл в Эриван 22/V и, немедленно приступив к исследованию фресок в [бывшем] храме Погос-Перроса, проработал включительно по 18-ое июня с.г.

За это время Г.О.Чириковым произведена трудная и весьма ценная в научном отношении работа по вскрытию 7-ми слоев росписи, а также стеновых окрасок штукатурки и исследованию таковых в техническом и художественно-историческом отношении. В ряде докладов в расширенных заседаниях Комитета Г.О.Чириков дал обстоятельные объяснения о произведенных им работах и о технике монументальной фресковой живописи. Им прочитан также специальный доклад по технологии красок в Художественно-промышленном Техникуме.

В результате работ Г.О.Чирикова выяснилась возможность в общенаучном отношении открытых росписей, о чем им через Комитет представлен письменный доклад Наркомпросу ССР Армении.

Комитет Охраны Древностей армении приносит глубокую благодарность Государственным Реставрационным Мастерским за отзывчивое отношение к его просьбе командировкой тов. Чирикова и Г.О.Чирикову за его весьма ценный труд по исследованию фресок.

Председатель Академик
Ученый секретарь профессор

А.Таманян
Ашх.Калантар

Ֆ. 1063, ց. 1, դ. 92, թ.3: Պատճեն: Մեքենագիր:

N 4

Գ.ԶԻՐԻԿՈՎԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԻՆ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

18 հունիսի 1930թ.
Երեւան

Согласно приглашения Комитета по охране Древностей Армении, я был командирован из Москвы Наркомпросом - Центральными Государственными Реставрационными Мастерскими Главнауки для обследования и раскрытия древней

стенной росписи в бывшем храме Петра и Павла в гор. Эривани. Приехав 22-го мая и проработав до 18-го июня с.г., выяснил нижеследующие результаты:

1. Все внутренние стены сооружения, как оказалось, имеют семь слоев самостоятельной окраски: при этом, каждой окраске предшествовала в попорченных местах частичная починка штукатурки. Первые две верхние окраски сделаны масляным способом, а третья - известковая побелка появляется при восстановлении частей стен и сводов после землетрясения 1679 года. Остальные же четыре слоя относятся ко времени до землетрясения. Из них первая (сверху) окраска цветная исполнена способом "Альсеко", которую и застало землетрясение, а остальные три нижележащие - грязно-сероватого цвета, относятся к более ранним периодам.

2. В восточной стороне здания на пилястрах по бокам абсиды, обращенных на запад, имеется живопись, состоящая из разновременных шести слоев, а именно:

1) Две картины на полотне с изображениями Петра и Павла, на которых имеется дата исполнения, относящаяся к 1897 году.

2) Две картины, исполненные по извести масляными красками, с изображением Распятия и Воскресения, окруженные гиповыми грубыми рамами, относящимися ко времени после землетрясения.

3) Две картины с изображением Петра и Павла в рост, большего размера, чем ранее упомянутые изображения, окаймленные рамой желтого цвета и исполненные масляным способом. При этом эти изображения были вписаны в более раннюю живопись, состоящую из цветочного орнамента.

Над этими двумя фигурами имеются сверху надписи с именами названных апостолов. Внизу у их ног видна дата "1131 года Иване".

4) Под масляной датированной живописью обнаружены две картины Петра и Павла, окруженные цветочным орнаментом, и выше них расположены картины двух всадников на конях Георгия и Саркиса. Эта живопись продолжается и далее за пределы пилястр, переходя в алтарную абсиду, где на южной и северной стене (абсиды) находятся две фигуры в рост Фадея и Варфоломея, окруженные орнаментом с золотом. Вся эта живопись исполнена эмульсионно-лаковым способом.

5) На северной пилястре небольшой разведкой удалось установить, что под эмульсионно-лаковой живописью имеется более ранняя, фигурная, масляная живопись, покрытая лаком. Надо полагать, что обнаруженные цвета относятся к плащу цвета сурика и бакана, хитон же темно-зеленого цвета с грязно-зеленовато-желтоватыми тенями. Пол грязно-темный, разделан кирпичиками.

6) Наконец, под всеми этими слоями обнаружена самая древняя фресковая живопись, исполненная по белому фону орнаментами. Открыта тумбовая ребеска из стилизованных роз, окаймленная цветочной рамой красноватого оттенка, выше которой помещена в центре ваза или сосуд с цветами и наряду с ним нарисованы четыре дерева с красными стволами (стилизованные пальмы), при этом они разной формы, темно-сероватого цвета.

Переходя к историческому анализу вышеобнаруженных слоев, необходимо отметить, что, с точки зрения современной археологии, первые два слоя не имеют существенного значения. Третий слой, несмотря на выявленную дату 1131 года, которая, мне кажется, не может служить критерием для определения данного слоя, т.к. масляный способ живописи на основании данных европейской литературы и материалов, появляется лишь в начале XVI-го века. Основываясь на этом, я полагаю, что эти слои необходимо датировать и относить к следующим векам: третий, масляный слой с датой, к половине XVII-го века; четвертый, эмульсионно-лаковый, к началу XVII-го века; пятый, масляный, покрытый лаком, - к XVI-му веку и, наконец, шестой фресковый, исполненный по сырой штукатурке - к XII - XIII-му веку.

Далее, переходя к технологии материала слоев живописи изучению местной армянской литературы и ее памятников материальной культуры, за короткое мое пребывание только в гор. Эривани и ее окрестностях, обнаружены

материалы и упоминания в литературе, что масляный способ живописи встречается здесь уже в начале X-го века. Возможно, глубокое изучение рукописей и живописного материала Востока, и в особенности Армении, заставит изменить сложившееся мнение в европейском ученом мире о времени появления масляного способа и внесет важную корректуру в изучение художественной живописной культуры. Тогда, безусловно, окажется необходимым пересмотреть все указанные мною даты о слоях бывшей церкви Петра и Павла и перенести в более ранние века и, естественно, тогда эта дата 1131 года найдет себе оправдание.

Также не могу не отметить присутствие здесь исключительного в своем роде, естественного, никогда неупоминаемого в литературе и не встречающегося до сего времени в моей практике, имеющегося здесь эмульсионно-лакового слоя живописи, сделанного на каменно-штукатурной стене, к счастью, сохранившегося очень хорошо.

Эти обстоятельства меня заставили отнестись с полной осторожностью ко всем существующим слоям при работах по их удалению, раскрытию и перенесению живописи, я ограничился лишь частичной работой разведки этих слоев и открытием показательных квадратов. Необходимо считаться с фактом наличия этой, хотя и случайно открытой, живописи, которая имеет весьма огромное научное и показательное значение в отношении, как исторических наслоений, так и способов исполнения, которые так необходимы ныне при возрождении крепкой, здоровой живописи, при учебе молодых художников, которые должны применять их при нашем социалистическом культурном строительстве. Тем более, что ныне Московская Академия Художественных наук озабочена выявлением и изучением всех существующих в Советском Союзе способов живописи и особенно остановилось на фресковом способе, который ныне и изучается новыми кадрами художников для введения в нашу жизнь.

В заключение остановлюсь на вопросе о сносе самого здания, а следовательно -переносе всей существующей живописи. Я полагаю, что при всяком изменении условий хранения ее, исчезнут навсегда как вся научная обоснованность, так и те драгоценные данные, из которых, как из научной базы, человек всего мира черпает материал для изучения.

Сохранившаяся здесь живопись является маяком путей изучения способов, существовавших в глубокой древности на протяжении веков и по сему полагаю, что мысль о разборке здания должна быть навсегда оставлена.

Художник рестовратор Г.О.Чириков

Ֆ. 1063, ց. 1, դ. 92, թ. 4-5: Բնագիր: Մեքենագիր:

N 5

Ա.Լ.ԹԱՄԱՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂՎՈՄ
Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ Գ.ԶԻՐԻԿՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8 նոյեմբերի 1930թ.
Երեւան

Հայաստանի Խորհրդայնացման 10-ամյակի առիթով կազմակերպելիք ցուցա-
Հանդեսի Համար օգտագործելու նպատակով՝ Կոմիտեի կողմից ներկայումս շտապ
կերպով կարգի է բերվում Պողոս-Պետրոսի շենքը, որը կառավարութան կողմից
Հանձնվել էր Կոմիտեի՝ կարգի բերելու եւ դարձնելու «Քարերի թանգարան»:

Այժմ Կոմունալ Տնտեսութան բաժինը 3304-12-4 գրությամբ Հայտնում է,
որ «գալիք շին[արարական] սեզոնը սկսվելուն պես քանդվելու է Պողոս-Պետրոսի
շենքը», ուստի եւ առաջարկում է մեզ դադարեցնել մեր կատարվող աշխատանքնե-
րը եւ առանձնացնել ու փոխադրել այդ շենքից «Կոմիտեի Համար անհրաժեշտու-

թյուն ներկայացնող» մասերը, որի Համար Կոմ[ունալ]տնտ[եսության] բաժինը ժամկետ է տալիս մինչև սույն նոյեմբերի 20-ը:

Պողոս-Պետրոս շենքի եւ նրա մեջ պատերի սվաղաշերտերի վրա բացված որմնանկարների ընդհանուր գիտական խոշոր արժեքի ու նշանակության մասին Կոմիտես Ձեզ գեկուցել է իր ժամանակին (06.02.1930թ.՝ 183-124 եւ 03.03.1930թ. 1936-227), որի հետեւանքով կարգադրվել է կանգնացնել նրա քանդումը եւ Հնարավորություն է տրվել կատարելու նրա բազմակողմանի ուսումնասիրությունը: Այնուհետեւ Կոմիտեի ձեռնարկած ուսումնասիրական աշխատանքները, երբ ջանք է թափվել օգտագործել տեխնիկական ու գիտական բոլոր Հնարավորությունները եւ որոնց ընթացքի մասին ձեզ պարբերաբար գեկուցվել է բանավոր կերպով՝ տվել են մի արդյունք, որը միանգամայն Հաստատել է Կոմիտեի կարծիքը նրա բացառիկ գիտական արժեքի մասին. այդ նույն եզրակացության եկավ մեր Հրավերով Պետական Գեղարվեստական Ռեստավրացիոն արվեստանոցների կողմից գործուղված Մոսկվայից եկած նկարիչ-ռեստավրատոր Գր.Չիրիկովը, որը ամիս ու կես աշխատելով Պողոս-Պետրոսի որմնանկարները վրա, բացեց նրանց եւ ուսումնասիրեց: Նրա աշխատանքները որոշակի պարզեցին, որ տեխնիկական ոչ մի Հնարավորություն չկա պատերի վրայից վերցնելու որմնանկարների շերտերը, պահելու Համար առանձին. այդ փորձերը նա կատարեց, որոնք տվին միանգամայն բացասական արդյունք, այսինքն՝ վերցվող մասերը, առանց բացառության, բոլորն էլ փչացան: Գր.Չիրիկովը իր կատարած ուսումնասիրության արդյունքի մասին Ձեզ գեկուցեց բանավոր եւ գրավոր (01.07-1930թ. 376) կերպով, որի վերջում նա, անդրադառնալով Հատկապես շենքը քանդելու խնդրին, ասում է հետեւյալը.-

“В заключение остановлюсь на вопросе о сносе самого здания, а следовательно -переносе всей существующей живописи. Я полагаю, что при всяком изменении условий хранения ее, исчезнут навсегда, как вся научная обоснованность, так и те драгоценные данные, из которых, как из научной базы, человек мира черпает материал для изучения.

Сохранившаяся здесь живопись является маяком путей изучения способов, существовавших в глубокой древности на протяжении веков и поему полагаю, что мысль о разборке здания должна быть навсегда оставлена”.

Ձեկուցելով վերոհիշյալը, կոմիտեն խնդրում է Ձեզ միջնորդել ժողկոմխորհրդի առաջ կարգադրություն անել Պողոս-Պետրոսի շենքը պահպանելու մասին՝ վերացնելով արգելքները նրան կարգի բերելու եւ ծրագրված քարերի Թանգարան (նման Անիի ճարտարապետական բեկորների Թանգարանին) դարձնելու Համար, ուր ներկայացված է լինելու Հայաստանի շինարարությունն ամբողջ իր զարգացման էտապներով՝ սկսած նախապատմական ժամանակներից:

Ձեկուցում ենք նաեւ, որ Պողոս-Պետրոսի մինչ այժմ կատարած ուսումնասիրության արդյունքը՝ նրա թե որմնանկարների եւ թե շենքի գիտական արժեքի վերաբերյալ պատրաստվում է Կոմիտեիս կողմից եւ մոտ ապագայում կհանձնվի տպագրության:

Աւելիր ներկայացվում է նախագիծ* Պողոս-Պետրոսի շրջակայքը քաղաքացիական նոր շենքերի Համար օգտագործելու ձեւի մասին:

Նախագահ
Գիտական քարտուղար

Ա.Թամանյան
Ա.Հիւ.Քալանթար

Ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 6 եւ շրջ.: Պատճեն: Մեքենագիր:

N 6

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՈՒՂՂՎԱԾ
ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀՆԱԳԵՏ ԵՎ ՈՐՄՆԱՆԿԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍԻ
ՄԱՍՆԱԳԵՏ Ա.ՇՆԵՑԴԵՐԻ ՁԵԿՈՒՑԱԳՐԻ ՔԱՂՎԱԾՔԸ՝ ՀՊԿ-Ի

* Նախագիծը բացակայում է գործում -Ռ.Ա.:

ԳՐԴՐՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 փետրվարի 1931թ.
Երեւան

Краткое пребывание в Армении посвящено было посещению церквей и музеев в Эчмиадзине, Звартноце и Эривани. Предполагаемый осмотр Баш Гарни к сожалению не мог состояться из за неблагоприятной погоды, планы же и фотографические снимки я все таки имел возможность посмотреть.

В Эривани имеется чрезвычайно деятельный Комитет армянских древностей, издающий также и журнал "Орагир", один только номер которой пока вышел. Своих собственных раскопок пока еще не предпринимали, но ведут неутомимое обследование поверхностного слоя почвы, разрабатывают археологическую карту Армении и коллекционируют все, что обнаруживается при уличном и жилищном строительстве. Целый ряд старых построек зачерчен в прекрасных планах. Чрезвычайно поучительна в этом отношении была выставка планов и находок, виденная мною в здании Комитета. Выставленные находки состоят, главным образом, из керамических и бронзовых предметов доисторической эпохи и в том числе единичные экземпляры (выгравированные пряжки от поясов, панцерные браслеты), известные нам по кавказским раскопкам...

Особенную важность представляет найденная фреска из Эриванской церкви Петра и Павла. Эта базилика с пилястрами, подземная часть которой принадлежит еще к V-VI веку. На обеих антах наложены семь слоев живописи, из которых третий слой датирован 1130 годом. На самом нижнем слое имеется фресковая живопись с чисто декоративным рисунком, сильно напоминающим в своем исполнении картины в Кузейр-Амра (восточная Мадаба, Трансиордания). Было бы чрезвычайно важно совершенно очистить этот фреск, как это уже образцово выполнено в отношении небольшой части...

А.М.Шнейдер

Ֆ. 1063, ց. 1, դ. 92, թ.9-10: Պատճեն: Մեքենագիր:

N 7

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԽԻՎԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

28 մարտի 1931թ.
Երեւան

ՀՍԽՀ Պետական կենտրոնական արխիվն այսուհետև հավաստում է, որ Ձեր միջոցով ստացվեցին Երեւանի Պողոս-Պետրոս եկեղեցու եւ Ախտալայի (Ալլավերդիի ռայոնի) վանքի արխիվներից մնացած գործերն ու վավերագրերն, որոնք առանց ցուցակների են, եւ կազմում են ընդամենը երեք կապուկներ:*

Պետարխիվի վարիչ
Գործավար

Խ.Սամվելյան
Ա.Մկրտչյան

Ֆ. 1063, ց. 1, դ. 92, թ. 7: Բնագիր: Ձեռագիր:

N 8

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ Դ.ԲԱԳՐԱՄՈՎԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՌԵՆՏԳԵՆԻՉԱՑԻԱ
ԱՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

* Շրջանի -Ռ.Ա.:

При осмотре совместно с профессором] Ашхарб. Калантар здания бывшей церкви Погос-Петрос выяснилось, что произвести рентгеносемку фресок на стене церкви в настоящих условиях совершенно невозможно.

Заведывающий рентгеновским кабинетом 2-ой клинич[еской] больницы Др.Баграмов

Ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 14: Պատճեն: Մեքենագիր:

N 9

**Ն.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԻՆ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

22 ապրիլի 1931թ.
Երևան

Համաձայն Ձեր N 02-09, 19.04.1931թ. գրավոր առաջարկության՝ «մշակելու, թե ինչ ձեռնարկումներ են հարկավոր, որպեսզի (ԺԿԽ որոշմամբ քանդման ենթակա Պողոս-Պետրոսի) շենքի ներսը գտնվող ֆրեսկոները մաքսիմալ չափով ապահով հանվին եւ օգտագործվին հետագա ուսումնասիրության համար» - Հն[ու]թյունների] պահպանության] կոմիտեն իր արտակարգ նիստում 20/4 հարցը բազմակողմանի քննելով, միաձայն եկավ հետեւյալ եզրակացության՝

Պողոս-Պետրոսի մոտ մի տարվա հետազոտությունը, որ կատարվեց, թե մեր կողմից եւ թե Միութենական ակադեմիայի մասնագետների (Զիրիկով, Գրաբար) ու գերմանացի հայտնի հնագետ եւ ֆրեսկո-արվեստի մասնագետ Շնայդերի կողմից՝ պարզվեց ու հաստատվեց թե շենքի հնագույն լինելը (5-6-րդ դ.) եւ թե մասնավանդ նրա պատերի վրա եղած 6-7 շերտ գանազան դարաշրջանների պատկանող ֆրեսկոների միանգամայն բացառիկ գիտական արժեքը, որոնց մեջ կան շերտեր (ներքեւից երկրորդ-ЭМУЛЬСИОННО-ЛАКОВЫЙ) ունիկալ իրենց տեխնիկայի տեսակետից եւ միայն առաջին անգամ Պողոս-Պետրոսում հայտնաբերված, եւ որոնց ուսումնասիրությունը կարող է հեղաշրջում առաջացնել արվեստի պատմության մեջ (Զիրիկով), իսկ հատկապես ամենաներքին շերտը Շնայդերի կողմից համադրվեց հռչակավոր Կուզեյիր Ամրայի (Տրանս Իորդանիա) ֆրեսկոների հետ, որոնք արվեստի պատմության մեջ շեղվում են համարվում (Կուզեյիր Ամրայի ֆրեսկոները՝ պալատի մեջ - 1 դարի երկրորդ կեսի, իսկ քրիստոնեական] բազիլիկայի մեջ - 4-րդ դարի, ամենանորն այնտեղ հասնում է 8-րդ դարի):

Շնայդերի զեկուցումը Բեռլինում առաջ է բերել մեծ հետաքրքրություն Պողոս-Պետրոսի ֆրեսկոների վերաբերյալ եւ այժմ 04.03[1931] (1/4) գրությամբ նա մեզանից պահանջել է ֆրեսկոների լուսանկարները հրատարակության համար:

Այս բոլորն ի նկատի ունենալով, Կոմիտեն գտնում է, որ մեզ մոտ պատահաբար հայտնագործված այս արժեքների պահպանությունը գիտության համար մաքսիմալ չափով ապահովելը՝ ներկայացնում է անվիճելի անհրաժեշտություն:

Բայց այժմ անխուսափելիորեն դրված է նրանց տեղահանման հարցը. Զիրիկովն իր մոտ մեկ ու կես ամիս տեւող ուսումնասիրական աշխատանքից հետո գտավ այդ միանգամայն անհնար, շեշտելով, որ “при всяком изменении условий хранения ее (всей существующей живописи), исчезнут навсегда как вся научная обоснованность, так и те драгоценные данные, из которых, как из научной базы, человек всего мира черпает материал для изучения”- (Զիրիկովի գր[ա-վոր] զեկուցումը):

Կոմիտեն երբեք չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ նրանք պետք է կործանվին կամ անպետքանան դեռեւս չուսումնասիրված-օգտագործված գիտության համար, քանի որ եւ ոչ մի տեսակի տեղահանում չի կարող փրկել կորստից այն փաստերը, որոնք բռնում են արեւելյան պատն ու արսիդը ամբողջովին: Միանգամ-

այն Համաձայն լինելով Չիրիկովի եզրակացութեան հետ եւ լսելով մեր ճարտարապետների կարծիքը, որ նման բարդ օպերացիան կատարելը, ի նկատի ունենալով տուֆի եւ կրաշաղախի առանձնահատկութիւնները՝ հղի է բազմաթիւ պատահականութիւններով, ինչպէս փորձը ցույց է տվել հին կառուցվածքների քանդման ժամանակ, երբ ոչ միայն անհնարին է լինում ամբողջական քարերն իրարից զատելով հանել կամ պատամասերը վերցնել, այլ եւ ոչ մի հնար ու երաշխիք չի կարող լինել, որ թեկուզ միայն Փրագմենտներ ցանկալի մասերով հանել՝ Հաջողի առանց նրանց վնասելու: Եվ որովհետեւ նման մի փորձ կարող է կատարվել միմիայն տեխնիկական լայն հնարավորութիւնների եւ Համապատասխան փորձված մասնագետ ուժերի միջոցով, որ տեղումս չկան՝ Կոմիտեն գտնում է, որ այդ չափազանց պատասխանատու գործը կարելի է միայն Հանձնարարել Մոսկվայի Պետական Գեղարվեստական Ռոստավրացիոն Արվեստանոցներին՝ դիրեկտոր Գրաբարի ղեկավարութեամբ եւ Չիրիկովի մասնակցութեամբ:

2. Միաժամանակ Կոմիտեն գտնում է անհրաժեշտ, որ նախքան այս կամ այն փորձը կատարելը՝ ծածկված շերտերի բովանդակութիւնը պարզելու համար պետք է օգտագործվին Ռենտգենյան ճառագայթները, որպիսի միջոցը, Համապատասխան ուսումնասիրութիւնների դեպքում, արդեն գործադրվում է Մոսկվայում, Բեռլինում մի ձեռնարկութիւն, որ տարաբաղաբար անհնար եղավ կազմակերպել տեղումս՝ մեր ունեցած միջոցներով (առդիր ռենտգենոլոգի գրութիւնը)՝ եւ նույնպէս պետք է Հանձնարարվի Մոսկվայից հրավիրվելիք մասնագետներին:

3. Կոմիտեն գտնում է, որ դեպի այդ բացառիկ գիտական արժեքը միակ մոտեցումը վերեւում հիշատակված միջոցներն են, իսկ եթե մասնագետների զաւր ինչ ինչ պատճառներով հապաղի կամ նրանց եւս չհաջողվի շտապ կերպով լուծել առաջարկված խնդիրը, ծայրահեղ դեպքում, շենքի քանդելը կարելի է կատարել արեւմտյան կողմից, նախապէս նոր պատ շարելով եւ կայունութիւնն ապահովելով՝ առանձնացնել արեւելյան մասը (շենքի մեկ երրորդը), որտեղ առավելագույն չափով կուտակված են արժեքները՝ պահպանելու նրանց ապագա ուսումնասիրութիւնների համար: Այս առանձնացված մասը չի կարող խանգարել նոր կառուցվող շենքին, կամ թե նրան կարելի է մտցնել նոր կառուցվող մեծ շենքի կոմպոզիցիայի մեջ, որ մասնագետների կարծիքով ճարտարապետական տեսակետից միանգամայն հնարավոր է:

4. Համենայն դեպս անհրաժեշտ է առաջին հերթին կատարել Հուշարձանի՝ իր ներկա ամբողջական գրութեամբ՝ գիտական չափագրումը եւ մակետի պատրաստումը, որի համար պետք է բացվին նրա հիմքերը, պեղումների միջոցով այդ աշխատանքները կրկին առնվազն մի ամիս, որ կարծում ենք, նույնպէս չի կարող խանգարել ձեռնարկելիք նոր շինութեան գործին, քանի որ դրանից ոչ պակաս ժամանակ հարկավոր կլինի մինչեւ որ կազատվի Պողոս-Պետրոսի շրջապատի ամբողջ հրապարակը եղած այլ շենքերից եւ բնակչութիւնից (100-ից ավելի մարդու): Նախագահ՝ Ա.Թամանյան

Քաղաքապետի ղեկավար ճարտարապետ
Գիտ[ական] քարտուղար

Ն.Բունիաթյան
Ա.Ղա.Քալանթար

Ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 12-13: Բնագիր: Մեքենագիր:

N 10

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԺԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՍԵՎՏՈՐԻ
ՎԱՐԻԾ Ֆ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՇՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

* Տես փաստաթուղթ N 8-ը -Ռ.Ա.:

Նկատի ունենալով, <որ> Քաղխորհրդի կողմից մեզ առաջարկված <է> Պոզոս-Պետրոս եկեղեցու քանդման աշխատանքները շարունակել եւ ավարտել մինչեւ 1932թ. Հունիսի 10-ը, ուստի խնդրում ենք, ունենալով Հնագիտական քարերի Հավաքման աշխատանքներ*, շտապեցեք վերջացնել <ու> տալ մեզ Հնարավորութուն կատարելու մեզ առաջադրված աշխատանքները:

Ճան[ապարհային] սեկտորի վարիչ
Հաշվետար

Ֆ. Հովսեփյան
Հովսեփյան

Ֆ. 1063, ց. 1, գ. 124, թ. 56: Բնագիր: Մեքենագիր:

N 11

**ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ
Հ.ԶՈՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԱՄԱՅԻՍ ԵՐԶՆԿՅԱՆԻՆ ՔԱՆԴՎՈՂ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՍՅՈՒՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

9 Հունիսի 1932թ.
Երեւան

Քաղխորհրդի Ճան[ապարհային] սեկտորն իր 150 գրությամբ եւ Հատուկ աշխատակիցների միջոցով բանավոր առաջադրել է ինստիտուտիս Պոզոս-Պետրոս նախկին եկեղեցու քանդման աշխատանքների վրա հսկողութիւն ունենալ եւ տեղափոխել Հնագիտական-պատմական արժեք ներկայացնող բեկորները:

Ինստիտուտս Հատուկ աշխատակիցներ է նշանակել հսկելու կատարվող աշխատանքներին այն մասին, որոնք չեն վերաբերում նախկին եկեղեցու ֆրեսկոներին: Ֆրեսկոների պահպանման խնդիրը շատ բարդ է եւ մեզ հնարավորութիւն չի տալիս տեղն ու տեղը կատարելու:

Ինստիտուտիս կոնսուլտանտները՝ Ակադեմիկոս Ալ.Թամանյանը, ճարտարապետ Թորոս Թորամանյանը եւ այլք գտնում են, որ անհնարին է ֆրեսկոներն Հանել եւ փոխադրել մի ուրիշ վայր առանց հուշարձանները հիմնովին փչացնելու եւ ապարժեք դարձնելու:

Այդ ֆրեսկոները հնարավոր է անվնաս պահել միմիայն ռենտգենյան ապարատով: Նման ապարատ Հայաստանում չի կարելի գտնել:

Ինստիտուտս կարծում է, որ շին[արարական] աշխատանքների հրատապութիւնը նկատի ունենալով՝ կարելի է եկեղեցու բոլոր մասերը քանդել, Հավասարեցնել գետնին, իսկ ֆրեսկոների սյուները՝ Հատուկ պահպանակի տակ պահել:

Այդ խնդիրը ներկա պայմաններում անկարելի է այլ կերպ լուծել, եթե մենք չենք ուզում ոչնչացրած լինել մեր արվեստի պատմութիւն մի այնպիսի արժեքավոր էջ, որպիսին է Պոզոս-Պետրոսի այդ ֆրեսկոները:

Դիրեկտոր
Գիտ[ական] քարտուղար

Հ.Զորյան
Կ.Մելիք-Օհանջանյան

Ֆ. 1063, ց. 1, գ. 124, թ. 60: Բնագիր: Մեքենագիր:
**ԿՈՄՊՈՋԻՏՈՐՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԱՍԻՆ
(ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԾՆՆԴԹԱՆ
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)**

* Խոսքը վերաբերում է Հնութիւնների պահպանութիւն կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքներին -Ռ.Ա.:

Հայ կոմպոզիտորների ավագագույն սերնդի ամենաակնառու ներկայացուցիչներից է Նիկողայոս Տիգրանյանը: 2006թ. լրանում է նրա ծննդյան 150-ամյակը: Ծնվել է 1856 թվի օգոստոսի 19-ին, Ալեքսանդրապոլում՝ ասել է թե երգ-երաժշտության քաղաքում: Այն քաղաքում, ուր դեռ 1924 թվին, կազմակերպվեց Հայաստանում առաջին սիմֆոնիկ երաժշտական խումբը՝ մեծատաղանդ գիրիժոր Մելիք-Փաշաեհի ղեկավարությամբ:

Ահա թե ինչ է ասվում կոմպոզիտոր, բանահավաք, երաժշտական գործիչ, դաշնակահար՝ Հայկական ազգային դաշնամուրային երաժշտության հիմնադիրներից, Նիկողայոս Տիգրանյանի երաժշտական գործունեության 25-ամյակի հոբելյանական Հանձնաժողովի խոսքում, որ տպագրվել է «Բազմավեպում»¹, 1914 թվին.

«Ներկա տարվա Հունիսի 1-ին, Ալեքսանդրապոլում կատարվելու է երաժշտագետ Նիկողայոս Տիգրանյանի գործունեության 25-ամյա հոբելյանը: Տաղանդավոր երաժշտագետը առաջին Հայ ուսանողն էր, որ սրանից մոտ երեսուն տարի առաջ, լուսավոր եվրոպայում երաժշտական լուրջ կրթություն ստանալով՝ վերադարձավ իր խեղճ ու խավար Հայրենիքը եւ իրեն նպատակ դրեց ուսումնասիրել չափի ու կանոնի վերածել մինչեւ այդ մոռացված ու աչքից թողած Հայկական, պարսկական, վրացի եւ քրդական մեղեդիները: Տիգրանյանն այն անձնավորությունն էր, որ եվրոպական երաժշտության չափ ու կանոնին ենթարկելով արեւելյան անսանձ մեղեդիները, մի կողմից փրկեց նրանց կորստից ու նորանոր աղավաղումներից, իսկ մյուս կողմից գեղարվեստական աշխարհի առջեւ բաց արեց մի բոլորովին նոր եւ ուրույն աշխարհ: Նա այն Հայ կոմպոզիտորն էր, որ առաջին անգամ եվրոպական նոտաներով ձայնագրելով Հայկական բազմաթիվ երգեր ու պարեր, նրանց Հայ երաժշտասեր Հասարակայնությանը մատուցեց, եւ եվրոպական երաժշտական կրթություն ստացած Հայ երաժիշտն ու երգիչը Բեթհովենի, Շոպենի, Վագների, Լիստի փառահեղ երկերի կողքին իր ազգային ու արեւելյան մելոդիաների ժողովածուներն ունեցավ:

Տիգրանյանն այն լուրջ երաժշտագետն էր, որ 25 տարի շարունակ, հեռու ու մեկուսացած, անխոնջ ու անվհատ ուսումնասիրեց Հայկական ու պարսկական գողտրիկ մեղեդիները, սովեց նրանց եվրոպական փայլ ու Հարմոնիա եւ մի պեղանտիկ ճշտությամբ ձայնագրելով այդ եղանակները, մեծ տաղանդով գտավ արեւելյան երաժշտության համապատասխան եւ բնորոշ Հարմոնիկացիա՝ եվրոպական մուզիկայի թեորիայով եւ Հարմոնիայով:

Սակայն չենք կարող այստեղ կանգ չառնել այն խոշոր Հանգամանքի վրա, որը անսահման կերպով բարձրացնում է արեւելյան եղանակների առաջին մայեստրոյին եւ նրա սկսած գործը: Խիստ վճիռ, հստակ ու մաքուր էր այն աղբյուրը, որից վերցնում էր Տիգրանյանը իր երաժշտական երկերը, իսկ այդ աղբյուրը արեւելյան եղանակների անզուգական երաժշտագետն էր, Հանգուցյալ Աղամալ աղա Մելիք-Աղամալյանը, Երեւանի այդ հռչակավոր ընտանիքի տաղանդավոր զավակը, մեծ Հայրենասեր Խաչատուր Աբովյանի շնորհալի աշակերտը, որի երաժշտական գիտությունն ու հռչակը այնքան մեծ էին, որ Պարսկաստան գնացող եւ այնտեղից վերադարձող ոչ մի արեւելյան երաժշտագետ չէր կարող անցնել առանց նրան այցելելու, առանց լսելու նրա հեղինակավոր եւ խորիմաստ կարծիքը իր նվագած պարսկական մուղամաթների մասին:

Ահա այս անզուգական անձնավորությունն էր, որ ամենից առաջ սեր ներշնչեց երաժշտագետի մեջ դեպի արեւելյան մուղամաթները, որից լիովին օգտվեց տաղանդավոր հոբելյարը, նրա ամբողջ կյանքի ընթացքում: Ու շնորհիվ այս բարեբախտ Հանգամանքի նա ձայնագրեց ու հրատարակեց իր գողտրիկ «Բայաթի Շիրազը», խրոխտ ու անզուսպ «Բայաթի Բյուրդը», աննման «Չարգյահը», չքնաղ «Շահնագը», «Հեյդարին», «Նովրուզ - Արաբին» եւ այլն եւ այլն, որոնք իրենց բովանդակությամբ թեեւ պարսկական կլասիկ երկեր են, բայց միեւնույն ժամանակ նրանք բոլոր արեւելյան ազգերին, որոնց թվում եւ մեզ՝ Հայերիս համար, այնքան ընտանի են ու հարազատ: Եվ ահա այսօր, երբ լրացել է արդեն 25 տարին այն օրից, երբ առաջին անգամ հրատարակվեցին տաղանդավոր երաժշտագետի առաջին երկերը, մենք, նրա Հայրենակիցներս, գոհունակությամբ եւ հպարտությամբ զգացմունք-

¹ «Բազմավեպ» - օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց: Վենետիկ, տպ. Ս.Ղազար, 1846-1967թ.թ., երկշաբաթաթերթ:

ներով հրավեր ենք կարգում հայ եւ օտար հասարակութիւններին եւ բոլոր նրանց, որոնց համար թանկ է ազգային երաժշտութեան վերածնունդն ու զարգացումը՝ մասնակցել երաժշտագետի հոբելյանական հանդեսին եւ այսպիսով միմիայն իր բարոյական քաջակերութիւնն ու հարգանքը մատուցանել նրան, ով 25 տարի շարունակ լռիկ ու մենակ, հեռու ամեն տեսակ ցուլցից ու խրախուսանքից, լոկ իր սեփական ջանքերով եւ միջոցներով գրել ու հրատարակել է 50-ից ավելի երաժշտական երկեր, որոնք այսօր հիացմունք պատճառելով օտարներին, մտել են շատ նշանավոր երաժիշտների ռեպերտուարների մեջ եւ հայ երաժշտական աշխարհի պարծանքն են կազմում ամենայն իրավամբ:

Հոբելյանական հանձնաժողով»¹:

Հայաստանի ազգային արխիվի մշակութի բնագավառի գործիչների անձնական ֆոնդերում հետաքրքիր փաստաթղթեր կան Նիկողայոս Տիգրանյանի մասին: Դրանցից առավել ուշագրավները ներկայացնում ենք «Բանբեր Հայաստանի արխիվներ» հանդեսի ընթերցողներին: Առաջինը երաժշտագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արտակ Տոնիկյանի ֆոնդի Ն.Տիգրանյանի ինքնակենսագրութիւնն է, որ թվագրված է 1935 թվականով, երկրորդը դաշնակահարուհի, ՀԽՍՀ վաստակավոր արտիստուհի Արեւիկ Ավդալբեգյանի հուշերն են մեծանուն կոմպոզիտորի մասին: Փայլուն կատարողական տվյալներով եւ բարձր երաժշտականութեամբ օժտված տաղանդավոր դաշնակահարուհին, հանրապետութեան անվանի երաժշտագետ Յիցիլիա Բրուտյանի վկայութեամբ՝ ազգային երաժշտութեան եւ մասնավորապես Ն.Տիգրանյանի երկերի լավագույն մեկնաբաններից էր: Դեռ մանուկ հասակից փոքրիկ, տաղանդավոր աղջնակի եւ արդեն տարիքն առած կոմպոզիտորի ծանոթութիւնն ու կապը, տարիների ընթացքում փոխարկվել էր հաստատուն բարեկամութեան:

Հրապարակվող փաստաթղթերը գալիս են լրացնելու մեկը մյուսին եւ եթե դրանցից առաջինը, որ գրված է կոմպոզիտորի թելադրանքով, իր կուրանալու հուզիչ պատմութեան եւ դրան հաջորդած ուսումնառութեան տքնաջան տարիների մասին է, ապա երկրորդը նրա անսահման կենսասիրութեան, հումորի ու պայծառ լավատեսութեան զարմանահրաշ հաստատումն է:

Փաստաթղթերը ներկայացվում են առանց կրճատումների, ժամանակագրական դասակարգումով: Պահպանվել են լեզվական ու ոճական առանձնահատկութիւնները, ինչպես նաեւ վերնագրերը: Բնագրերի բազմակետերը պահպանվել են նույնութեամբ:

Վարդիթեր Մանգասարյան

N 1

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ*

1935թ.
Երեւան

Յես ծնվել եմ 1856 թվի ոգոստոսի 19-ին:

Իմ հայրը, Թատեվոս Նազարեթի Տիգրանյանը, մի զինվորական սպա էր: Սրանից 90 տարի առաջ նա ավարտել էր Թիֆլիսի կլասիկական գիմնազիան, վորը այն ժամանակ մեծ արտոնութիւններ էր տալիս պետական հիմնարկութիւններում ծառայելու համար: Բայց մի 15 տարեկան գեղանի եւ վառվռուն աղջիկ- Յերանուհի Գորոյանցը (հետագայում իմ մայրը), պահանջեց, վոր նա ավարտե նայեվ զինվորական կուրսերը:

Հայրս կատարեց այդ պահանջը, վորից հետո վորպես մի փայլուն սպա յեկավ Ալեքսանդրապոլ եւ ամուսնացավ իմ մոր, վերոհիշյալ Յերանուհի Գորոյանցի հետ: Մայրս համեմատած իր դարին, 1840-ական թվականների վերջերին, մի կրթված եւ ուսյալ անձնավորութիւն էր եւ տիրապետում էր յերեք լեզուների - հայերեն, ռուսերեն եւ թուրքերեն:

¹ ՀԱԱ, ֆ.Մ-69, ց.1, գ.84, թ.6-8:

* Վերնագիրը փաստաթղթինն է -Վ.Մ.:

Նա իր բազմաթիվ բարձրագույն կրթութունն ստացած վորդիների եւ միակ դասեր՝ Մարիամ Տիգրանյան Տեր-Մարտիրոսյանի Հետ (ներկայումս Հայտնի որին նուազիստ դաշնակահարուհի), մինչեւ իր կյանքի վերջը, 1919 թիվը, ապրեց ժամանակակից գաղափարներով:

Հայրս Բերդապազ գորագնդի սպա էր, վորի պատճառով էլ ծնողներս ապրում էին Ադեքսանդրապոլի ամրոցում, վորի հեռավորութունը քաղաքից մի կիլոմետր էր:

1860 թվին, յերբ յես 4 տարեկան էի, իսկ իմ մեծ յեղբայր Հակոբը - 6 տարեկան էր, վերջինիս համար ծնողներս հրավիրեցին մի ուսուցիչ, յես պահանջեցի, վոր ինձ էլ գիրք տան եւ սովորեցնեն:

Մի փոքր դիմադրութունից հետո, առարկելով, թե վաղաժամ է, վերջապես ցանկութունս կատարվեց եւ յես յեղբորս հետ, համահավասար գնում էի եւ հետ էի մնում նրանից:

Մի տարի հետո մենք արդեն Հայերեն ու ուսերեն կարդում եւ գրում էինք եւ թվաբանութունից էլ տարրական գիտելիքների տեր էինք:

Այդ տարիներին յես մութը տեղերից սաստիկ վախենում էի, մանավանդ վոր մեր շրջապատը համոզված էր, թե սատանա գոյութունն ունի:

Մայրս ինձ հանգստացնում եւ մխիթարում էր, ասելով, թե բարի եւ հզոր Աստվածը եւ նրա հրեշտակները մեզ կպաշտպանեն չարերից: Սակայն մեր հեքիաթների մեջ պատմված դեվերը, վոգիքը եւ գերբնական ոյժերը «վոհմ», սարսափ էին առաջացնում իմ մատղաջ սրտի մեջ... Միայն Հայրս էր, վոր ասում էր հաստատապես, թե սատանա գոյութունն չունի, սակայն յես մտածում էի՝ յեթե հրեշտակ կա, ապա ուրեմն կա եւ սատանա:

Այս ամենի պատճառով, յես իմ ամենամատաղ հասակից, մի առանձին հետաքրքրությամբ եւ հոգուս բոլոր թափով լսում եւ յուրացնում էի յերբեմն նոյն իսկ ուսանողներից գաղտնի լսածս բնագիտական որեւքների եւ կանոնների մասին եւ միայն սրանով կարողանում էի յուրացնել հորս ասածը - վոր սատանա չկա: Բայց սրանով թուլանում էր նաեւ իմ հավատը դեպի կրոնը:

Բնության տիեզերական ոյժերի այդ համերաշխ ներդաշնակութունը ինձ հիացնում էր եւ ներշնչում էր պատկառանք: Սակայն, քանի գնում էր, այնքան խորը համոզվում էի յես, վոր բնության կամքը սահմանափակված է իր որեւքներով, եւ վոր նա չի կարող կամայական լինել, ուստի եւ մեր «ամենակարող եւ ամենաբարի աստվածը» նոյնպես սահմանափակված է եւ ազատ կամք չի կարող ունենալ, քանի վոր նա թողնում է տանջանքների մեջ անմեղ գոհերին, մինչդեռ նա մի հրամանով կարող էր վերադարձնել ինձ իմ աչքի լոյսը եւ ուրիշ շատ անմեղ դժբաղտներին բազմավորացնել: Բայց նա այդ չի անում, վորովհետեւ տիեզերքի որեւքները անխախտ եւ անսասան յեն: Յես շարունակ հակառակ էի եւ մաքառում էի ամեն տեսակ նախապաշարմունքների եւ սնոտիապաշտութունների դեմ:

Այստեղ յես չեմ կարող կանգ չառնել եւ չհիշել իմ պապին, իմ մոր հորը - Սիրական Գորոյանցին, այդ լուսամիտ ու խելոք անձնավորությանը, վորը մեծ դեր է խաղացել իմ զարգացման եւ կրթության գործում:

Սիրական Գորոյանը ծնվել է Երզրումում 1801 թվին: Երզրումը այն ժամանակ մի կուտուրական կենտրոն էր Թուրքիայում, շնորհիվ տրանզիտ Հաղորդակցության ճանապարհի Տրապիզոն-Թեհրան, շատ յեվրոպացիներ էին ապրում այնտեղ, վորի շնորհիվ էլ շատ տարածված էր ֆրանսերեն լեզուն:

Ս. Գորոյանցը իր կրթութունն ստացել էր Երզրումի առաջնակարգ դպրոցներից մեկում: Նա մոտ հարաբերության մեջ է յեղել Երզրումի ուսյալ եւ զարգացած շեյխերի եւ յեվրոպական միսիոներների հետ, վորի շնորհիվ նա տիրապետում էր, բացի Հայոց լեզվից նաեւ արաբ-թուրքական լեզվին ու գրականությանը: Նա ուսումնասիրել էր նաեւ հոյն կլասսիկ փիլիսոփաների գրվածքները, ուներ նաեւ յերաժշտական ընդունակութուն եւ գեղեցիկ նվագում էր սազ:

1828 թվի մեծ գաղթին նա էլ Թուրքիայից անցավ Ռուսաստան եւ վորպես

ինտելլիգենտ ու ժողովրդասեր անձն, գաղթի դժվարութուններին յենթարկված ժողովրդին ցոյց է տալիս ամենակ աջակցութունն ու ոգնութունն:

Նա առաջին «կուլտուր-տրեգերներից» է եղել: Ադեքսանդրապոլում առաջին այգին եւ բանջարանոցը նա մշակեց: Նա Թոխաթից (Թուրքիա) բերել տվեց ալ-

աջարի ներկի ծառեր, պատվաստեց եւ պտուղ ստացավ (երկար տարիներ այդ հայտնի պտուղով ոգտվում էին կաշի եւ ուրիշ իրեր ներկելու համար):

Մինչեւ իսկ նա այս առթիւ ստացավ Պետերբուրգի 1850 թվի գյուղատնտեսական ցուցահանգեսի հանձնաժողովից եւ 1852թ. Մոսկվայի Գյուղատնտեսական ընկերութունից գովասանական գրութուններ- «գրամոտա»-ներ եւ արժաթյա մեդալներ:

Սիրական Գորոյանցը մոտ ծանոթ էր Աղեքսանդրապոլի կաթնիկ հայերի առաջնորդ հայտնի Աղեքսանդր վարդապետ Արարատյանի հետ, վորի ղեկավարութեան շնորհիւ հայ-կաթնիկական դպրոցը ավելի կանոնավոր գրութեան մեջ էր գտնվում, քան քաղաքիս մյուս դպրոցները: Այս պատճառով, հետեւելով նրա խորհրդին, ծնողներս ինձ եւ յեղբորս՝ Հակոբին տվին այդ դպրոցը:

Իմ պապ Ս. Գորոյանցը ինձ եւ իմ յեղբորը տանում էր Աղեքսանդրապոլում սկսնակ հայ թատրոնական ներկայացումներին, ուր խաղում էին «Վարդան Մամիկոնյան», «Շուշանիկ», «Խոսրով Թագավոր», «Սանդուխտ կոյս» եւ զանազան վողեվիներ:

Այդ ներկայացումների մեջ կանանց դերերը կատարում էին գեղեցիկ յերիտասարդները եւ մի 3-4 տարի հետո միայն առաջին անգամ բեմ դուրս յեկավ հայ կինը- Աբգար Գյուլումյանի մանկամարդ ամուսինը՝ Զարուհին, սակայն պայման դնելով, վոր ինքը բեմ դուս կգայ՝ յեթե իրան հետ մասնակցե Յերանուհի Սիրականյան Տիգրանյանը- իմ մայրը, վորը ուրախութեամբ հանձն առավ եւ «Սանդուխտ կոյս» պիեսի մեջ դուրս յեկավ նվարդի դերով: (Այն ժամանակները բեմ դուրս գալը կանանց համար մի անհամեստ քայլ էր համարվում): Պապ- Գորոյանցը, տանում էր ժամանակավորապես քաղաքս յեկող ցիրկերը, Ֆիզիկոլոգներին խաղերին եւ այլն: Տանում էր, ցոյց էր տալիս եւ ծանոթացնում էր մեզ, թե ինչպե՞ս են այրում կիրը, ինչպե՞ս են թափում աղյուսը, մաքրում ու պատրաստում գործածութեան կաշին: Տանում էր բրուտխանքը, տնայնագործ ջուճկականոցները եւ խալի գործողների արհեստանոցը, ցոյց էր տալիս կառուցվող նշանավոր շէնքերը եւ մինչեւ իսկ բացատրում էր մեզ առողջապահական կանոնները:

Ինչպե՞ս յես վերեւում հիշեցի, ինձ տվին հայ-կաթնիկների դպրոցը, յես յեղբորս հետ ամեն ուր ամրոցից գալիս էինք քաղաք սովորելու:

Յես թեեւ 6 տարեկան էի, այնուամենայնիւ այնքան ինքնուրոյն էի, վոր յերբեմն մենակ էլ բերդից գալիս էի քաղաք:

Մենք տանը ձիեր ունեինք, պատահում էր, վոր մեր գինվորի հետ տանում էինք այդ ձիերը Արփաչայ գետը եւ յես մենակ, ձիու վրա նստած, գետի խորը տեղերում լողացնում էի նրան:

Իմ մեծ յեղբայր Հակոբը շատ ընդունակ եւ առաջադեմ էր, բայց յես նրանից հետ չէի մնում: Յերբ նա լավ տրամադրութեան էր լինում, ինձ տանջում էր, ասելով, թե մենք արդեն մեծանում էինք, մեզ շուտով կուղարկեն հեռու քաղաքներ, վոր մենք ուսում առնենք, մարդ դառնանք, բայց այնտեղ, ոտարութեան մեջ՝ վոչ մեր հայրիկը եւ վոչ էլ մայրիկը կլինի, բոլորը մեզ համար ոտար կլինեն: Յես աշխատում էի իմ հուզմունքը պահել, բայց վերջը իմ աղիողորմ լացով կվերջանար, մինչեւ վոր մայրս նրան կհեռացներ:

Ան հասարակ յերբ յես տխուր յերգ կամ պատմութիւն էի լսում, չէի կարող արտասուքս պահել եւ փախչում էի սենյակից, վորպեսզի իմ սրտի թուլութիւնը ցոյց չտամ ուրիշներին:

Մեր ծնողները իրանց հետ մեզ տանում էին մեր բարեկամների հարսանիքներին, խնջոյքներին, յերբեմն եւ քաղաքից դուրս «Սեյրան», (բացողյա հրավերներ) ձիթողցոնց ջրաղացը, Արփաչայը, Զարքյազի ձորը, Սիրական աղոնց Ալաջայրի բոստանը եւ մինչեւ իսկ Ղփչաղ (Հառիճ), վորը գտնվում է Արագածի լանջին: Այս ամենը, առանձնապես եւ այս վերջինը իր ձորերով, ոգով, ջրով, գմայլելի ծաղիկներով, նամանավանդ հնադարյան պատմական վանքի շէնքով, անջնջելի խոր տպավորութիւն են թողել ինձ վրա, իմ 8 տարեկան հասակում, դեռ յեւս աչքերս առողջ ժամանակ*:

* Այս բոլոր պարումները դեռ մինչեւ այսօր էլ թարմ մնացել են իմ հիշողութեան մեջ: Ծանոթ. հեղինակինն է -Վ.Մ.:

Յես արդեն 8 տարեկան էի, մի որ ուսումնարանում էի, այդ որը շաբաթ որ էր, շաբաթ որերը ծանր որեր էին մեզ համար, այդ որը մեր ամբողջ շաբաթվա սովորած կրոնի դասերը պետք է անդիր ասեինք: Յես ինձ վատ էի գգում, թեև չգիտեի, թե դա իմ վերջին բաղդավոր որն է լինելու: Այո, յես չէի կարող յերեվակայել, թե անագորոյն ճակատագիրը ինձ պետք է յերկնքից գետին քցե, պետք է իմ թեվերը կտրի, ինձ պետք է սողունի հավասարեցնե...^{**} Այո, այդ չարաբաստիկ պատահարը չկամեցավ իմ կյանքը խլել. թողեց ինձ, հենց կարծես թե նրա համար, վոր գալիք անգնահատելի եւ անդառնալի կորուստը ինքս անձամբ շոշափելի կերպով զգամ, ըմբռնեմ եւ վողբամ:

Բայց այս ամենը ինչո՞ւ, ինչո՞ւ համար, իմ վոր մեղքերի համար...

Հիմա նորից շարունակեմ իմ գլխին յեկածը, վորովհետեւ յես ինձ վատ էի գգում, խնդրեցի եւ ինձ թոյլ տվեց ուսուցիչը ժամանակից առաջ տուն գնալ: Յես, որ յերեքրայով դեպի ամրոց մեր տունն էի գնում, ճանապարհին պատահեց մեր բարեկամ Հովհաննես Տայանցը, վորը կառքով նոյնպես ամրոց էր գնում: Նա ինձ վեր առավ իր մոտ եւ հասցրեց մեր տունը:

Մայրս գարմանքով հարցրեց իմ շուտ գալուս պատճառը եւ տեսնելով իմ դրուժյունը, իսկոյն ինձ անկողին դրեց: Յես սկսեցի սաստիկ ջերմել եւ այլեւս ինձ չեմ հիշում...

Հայրս գործուղված է եղել Թիֆլիս, մայրս իսկոյն կանչել է զինվորական բժշկին, սա էլ իբրեւ առաջին միջոց ջերմի դեմ, սառույց է գրել իմ գլխին:

Յերեք որից հետո յերբ յես ուշքի յեկա, նոր տեսնելով մարմնիս վրայի բծերը, հասկացան, վոր ես ծաղկով յեմ հիվանդ: Այդտեղ հավաքվեցին փորձված-իմաստուն մայրեր եւ սգացին բժշկի կատարած սխալ քայլը:

Սկսվեց նախ անտանելի գլխի ցավ, եւ հետո էլ սարսափելի աչքի ցավ: Արեւի լույսը ծակում էր աչքերս, սենյակը բոլորովին մթնեցրած էր, իսկ մի քանի որ հետ, յերբ ցավերս անցան, յես այլ եւս բան չէի տեսնում...

Մայրս ինձ սիրտ էր տալիս, ասելով, թե մի քսան որից կբժշկվեն իմ աչքերը: Հետո ինձ հոյս էին տալիս եւ ամեն կերպ զբաղեցնում եւ փայփայում էին եւ յես փոքր առ փոքր ընտելացա իմ ծանր վիճակին:

Ծնողներս, վշտալի սգից սթափվելուց հետո, սկսեցին խորհել - տալ ինձ փոխարեն աչքի լոյսի՝ հոգու լոյս:

Այդ ժամանակներում սկսել էր մուտք գործել մեզանում յեվրոպական յերածշտուժյունը, թեեւ միայն զինվորական թեթեւ փողավոր խմբերում եւ ձեռքի գարմոնիկայի միջոցով: Ծնողներս ինձ համար մի հարմոնիկա գնեցին եւ յես սկսեցի սովորել նվագել մի կազան-թափար շնորհալի զինվորի մոտ, մի կես տարուց հետո, յես արդեն վարժ նվագում էի մի շարք յեվրոպական եւ ուսական պարեր: Իմ նվագով տեղական հասարակութունը զվարճանում եւ պարում էր:

1868 թվին, յերիտասարդ խիրուրկ Գրիգոր Քոչարյանը յեկել էր պաշտոնով Յերեվան: Այնտեղ նա կատարել էր մի քանի «գարմանալի» անդամահատություններ - մեկի կտրված շրթունքն էր կարել, մյուսի վոտքի յերեսից մի մեծ մսի գունդ էր կարել (քաշով 1 կիլո) եւ սա հետո սկսել էր ազատ ու հեշտ քայլել: Այս անդամահատությունները տրամադրում յեն իմ մորաքրոջը, Տիրուհի Մելիք-Աղամալյանին, ծնողներս մի նամակ գրել եւ պահանջել, վոր ինձ Յերեվան ուղարկեն աչքերիս բժշկության համար:

Ինձ ուղարկեցին Յերեվան իմ մորաքրոջ տունը, ուր հիշյալ բժիշկ Քոչարյանը համոզվելով, վոր կարող է ինձ ոգնել, սկսեց մի շարք աչքի ոպերացիաներ կատարել: Այդ ոպերացիաների հետեւանքն այն յեղավ, վոր յես մի աչքով մինչ այս գանազանում էի լույսն ու մութը, գրկվեցի եւ գրանից...

Այս չարաբաստիկ դեպքը, վորի համար յես Յերեվան էի յեկել, ունեցավ ինձ համար մի բարեբաղտ հետեվանք:

Այդ միջոցին, վոր յես ապրում էի իմ մորաքրոջ՝ Տիրուհի Մելիք-Աղամալյանի տանը, վորի ամուսինն էր հայտնի ու հուշակավոր արեւելյան յերածշտուժյան թառիստ Աղամալ Մելիք-Աղամալյանը, որոնց տունը Պարսկաստանից Հյուր յեկավ, արդեն ծերունի, վոչ պակաս հուշակավոր յերգիչ Սաթտարը եւ յես այդտեղ բաղտ ունեցա լսել նրա զմայլելի յերգերը: Սա Սաթտարի վերջին այցն էր Մելիք-Աղա-

^{**} Այս եւ մյուս բազմակետերը հեղինակինն են -Վ.Մ.:

մայրանին, վորից Հետո նա վերագործավ Պարսկաստան եւ վաղճանվեց, յես էլ վերագործա մեր տունն - Աղեքսանդրապոլ:

1870 թվին Հայրս ինձ տարավ Թիֆլիս, Հայտնի աչքի բժիշկ Տալիոյի մոտ, սա իմ աչքերը զննելուց Հետո Հայտնեց, վոր չի կարող ոգնել:

Անմխիթար Հայրս դտավ Թիֆլիսում մի իտալացի յերաժիշտ Տուարտա ազգանունով, վորը յեղավ իմ առաջին յերաժշտութեան ուսուցիչը: Սրա կինն էլ վորպես գերմանուհի, ինձ սովորեցնում էր գերմաներեն լեզուն:

Յերկու տարի Հետո յես արդեն նախապատրաստված էի արտասահման գնալու Համար:

1873 թվի գարնանը իմ ծնողները ինձ տարան Վիեննա, Ավստրիայի մայրաքաղաքը, վորպես ամենալավ յերաժշտական կենտրոն, եւ վորտեղ տեղի ունեցավ այդ ժամանակ Համաշխարհային ցուցահանդեսը: Սկիզբը դիմեցինք Հայտնի, ակադեմիոս ոկոլիստ Արլտին. սա էլ վոր բժշկելու Հոյս չտվեց, այդ ժամանակ Հայրս դիմեց Վիեննայի Կայսերական Կուլթերի ինստիտուտի պրոֆեսսոր-դիրեկտոր Պաբլասեկին՝ մի փայլուն ու լուսամիտ անձնավորութեան:

Սա վերցրեց ինձ, իբրեւ ոտարահպատակի, իր տանը եւ յես վորպես ինստիտուտի պրիվատ աշակերտ, Հաճախում էի դպրոցը:

Թեպետ յես ինձ միանգամայն բավարարված էի զգում, վոր Հնարավորութեան էի գտել զարգացում, ուսում եւ մասնագիտութեան ձեռք բերելու, սակայն վոր մնալու էի ոտար յերկրում- մարդիկն էլ, լեզուն էլ ոտար եւ Հեռու իմ Հարազատներից, դա ինձ Համար շատ ծանր էր եւ Հրաժեշտի ըսպելին Հայրիկիս Հետ գրկվեցինք եւ այլեւս չէինք կարող բաժանվել: Մայրս Հայրիկիս նկատողութեան արավ եւ ասաց.- «ի՞նչ կա, փառք աստծու, մենք մեր Նիկողայոսին թողնում յենք մի լուսավոր աշխարհում, լավ մարդկանց մոտ»: Հայրս պատասխանեց.- «Յերանուհի, դու ինձանից ջահել յես, դու նրան կրկին կտեսնես...»:

Վորովհետեւ յես Հայերեն տառերը գիտեի, Հենց վոր սովորեցի տախտակե տրասպարանտ գործածել, իսկոյն մատիտով մի նամակ գրեցի ծնողներինս, Աղեքսանդրապոլ եւ Հարցրի, թե նամակ կարդացվո՞ւմ է, Հասկանալի՞ է: Հայրս ինձ պատասխանեց, թե դու մեր դյուզի շատ քահանաներից ավելի լավ յես գրել: Յես Հետզհետե այնպես ընտելացա թե լուսամիտ դիրեկտոր Պաբլասեկի, թե նրա շատ սիրելի ընտանիքի եւ թե շրջապատի Հետ, վոր տարիներից Հետո, յերբ յես Հայրենիք պիտի վերագառնայի, մեր Հրաժեշտը շատ մտերմական եւ սրտառուչ էր եւ տուն գալուց Հետո էլ մենք շարունակ գրագրութեան էինք պահպանում:

1873 թվի Հունիս ամսին յես ընդունվեցի Պաբլասեկի մոտ եւ ինստիտուտի ամառային արձակուրդի ամիսներին լարված եւ մեծ յեռանդով պատրաստվում եւ սովորում էի թե գերմաներեն լեզուն եւ թե դպրոցական առարկաները:

Աշնանն ընդունվեցի ինստիտուտի 4-րդ դասարանը եւ մնացած 5 տարվա կուրսը անցա 3 տարվա ընթացքում, ինտենսիվ աշխատելով թե ուսումնական տարվա եւ թե արձակուրդների ժամանակամիջոցում:

Ինստիտուտի սաների որվա ժամերը բաժանված էին Հետեւեալ կարգով:

Սաները առավոտյան ժամը 7-ին վեր էին կենում եւ սուրճ կամ կաթ խմելուց Հետո ժամը 8-ին գնում էին դասարան: Մինչեւ ժամը 10-ը դպրոցական դասեր, 10-11-ը յերաժշտական եւ որկեստրային վարժութեաններ, 11-12-ը կրկին դպրոցական դասեր, ապա 1/2 ժամ դադար, վորից Հետո ճաշ, մինչեւ ժամը 2-ը Հանգիստ: Ժամը 2-3 յերաժշտական տեորիա եւ վոմանց Համար արհեստների պարապմունք: Ժամը 3-4-ը մարմնամարզութեան, 4-5-ը սուրճ եւ ազատ զբաղմունք, 5-6-ը սաների Համար ընթերցանութեան, կարդում էին ուրիշները գրականական երկեր: 6-8-ը Հանգիստ եւ ընթրիք, 8-9-ը դասերի պատրաստում, 9-10 դադար եւ 10-ին անկողին: Դիւսցիպլինան, կարգապահութեանը պահանջվում էր խստորեն:

Գրել, կարդալը կատարվում էր գլխավորապես Բրայլի կետավար սիստեմով, բայց մենք ունեինք նաեւ լատինական ուղղակի տառեր, վորոնցով նոյնպես գրում եւ կարդում էինք:

Ինչպես վոր Բրայլի եւ լատինական շրիֆտի Համար, նոյնպես եւ թվաբանութեան եւ յերկրաչափութեան Համար ունեինք Հատուկ գրելու եւ նշելու ապարատներ, կային նաեւ ուղղակի քարտեզներ եւ գլոբուսներ:

Շաբաթ որերը ճաշից Հետո բազմիս, մեկ շաբաթ որը տղայոց Համար, մյուս շաբաթ որը- աղջկաների:

Հինգշաբթի որը, վորը կիսատոն էր համարվում, ինստիտուտի դուռը բաց էր հասարակության համար: Մուտքը ազատ էր, ցուցադրվում էին ժողովրդի առաջ դպրոցի ուսման, արհեստագործության եւ գլխավորապես յերաժշտության մեջ ձեռք բերված արդյունքները: Մեր որկեստը սիմֆոնիաներ էլ նվագում էր եւ հայտնի էր:

Վորովհետեւ յես իբրեւ արհեստ ընտրել էի պիանոյի լարելը եւ արհեստի ժամերին զբաղված էի տեորիայի դասերով, ուստի պիանո լարելու պարապմունքները կատարում էի կյուրակի եւ տոն որերին:

Այս պարապմունքների ժամանակ, դիրեկտորի աղջիկները զանազան պատրվակներով ընդմիջել էին տալիս ինձ իմ պարապմունքները եւ յերբեմն էլ ինձ կշտամբում էին, վոր յես իմ ջանասիրուծյունը ի չարն եմ գործ դնում, ի վնաս իմ առողջության:

Այդպես էլ եղավ, 1877 թվին իմ ջղերը այնպես քայքայվեցին, վոր յես հոգեպես ուժասպառ յեղա եւ հայտնի նյարդային հիվանդությունների բժշկապետ Տրաթեկի խորհրդով ստիպվեցա կազդուրվելու համար հայրենիք- Աղեքսանդրապոլ վերադառնալ:

Ի հարկ է մեր տանը, իմ հարազատների շրջանում յես շուտով կազդուրվեցի ու հանգստացա եւ մի տարուց հետո կրկին վերադարձա Վիեննա ու շարունակեցի լուրջ եւ ինտենսիվ կերպով իմ յերաժշտական պարապմունքները, մինչեւ վոր կոնսերավտորիայի ծրագրով ավարտեցի իմ կուրսը, 1880 թվին:

Ինստիտուտի կուրսը ավարտելուց հետո, հետեվյալ 3 տարիները նվիրեցի լեզուների եւ գիտական առարկաների մեջ կատարելագործվելու, դիրեկտորիս եւ մեր մյուս դասատուների մոտ:

Իսկ յերաժշտությունը, պիանոյի եւ մասամբ ջութակի վրա, ավանդում էին կոնսերվատորիայի լրիվ ծրագրով, պրոֆեսսորներ Շեններ եւ Շմիդտ, իսկ ջութակինը- պրոֆեսսոր Բաուեր:

1914 թվին, 34 տարուց հետո, յերբ յես կրկին գնացի Վիեննա, գտա Պարլասեկի աղջիկներին եւ ծանոթացա նրա թոռների հետ: Սրանց շրջանում յես ինձ զգում էի վորպես հարազատների մոտ եւ մինչեւ հիմա էլ գրագրություն ունեմ նրանց հետ:

Վիեննայում գնացի մեր կուրերի ինստիտուտը: Նոր դիրեկտորը պրոֆեսսոր Ա.Մելլը իմ մասին գիտեր, վորովհետեւ յես ուղարկել էի ինստիտուտին իմ յերաժշտական աշխատություններից: Նա ինձ սիրով եւ պատվով ընդունեց, ծանոթացրեց ուսուցչական կազմի եւ առաջագեմ ուսանողների հետ: Նա ուզեց իմ լուսանկարը եւ դահլիճում կախեց:

Դիրեկտորի խնդրանք ինստիտուտում տվի մի համերգ-զեկուցում իմ աշխատություններից, մասնակցությամբ մի գերմանուհի յերգչուհու եւ անմոռանալի բարեհիշատակ Վիեննայի համալսարանի հայ ուսանող ջութակահար Լեվոն Լիսիցյանի:

Մուտքը ազատ էր, հրավիրված էին անձինք Պարսից եւ Թուրքաց դեսպանատներից եւ Միսիթարյան Միաբանությունից: Դիրեկտորը ինձ հետ բեմ դուրս յեկավ, զեկուցեց իմ մասին, հայտնեց, վոր յես թեեւ հեռու աշխարհից, բայց իրանց սրտին շատ մոտ եմ, վորովհետեւ յես իրենց նախկին սանն յեմ յեղել եւ հիմա էլ, վորպես իրենց հարազատը կազմակերպել յեմ այս հանդիսավոր յերեկոն: Ապա դիրեկտորն ավելացրեց- «մենք պարծենում յենք, վոր այսպիսի սան յենք ունեցել»:

Իւրաքանչյուր կտորը նվագելուց առաջ, յես հասարակությանը ծանոթացնում էի յեղանակի բովանդակության, բնույթի եւ նշանակության մասին:

Հասարակությունը մի առանձին հետաքրքրությամբ լսում էր եւ նվագն ընդունում էր ովացիաներով եւ բուռն ծափահարություններով:

Այս յերեկոյթի առթիվ Թիֆլիսի «Հորիզոն» թերթի Վիեննայի թղթակիցը 1914թ. մարտի 5-ից գրում է ի միջի այլոց, վոր մեր հայրենակից Ն.Տիգրանյանը մեծ աջողությամբ, կուրերի ինստիտուտում մի կոնցերտ տվեց իր հեղինակություններից, մասնակցությամբ մի գերմանուհի յերգչուհու եւ համալսարանի ուսանող ջութակահար Լ.Լիսիցյանի եւ արժանացավ ջերմագին ովացիաների:

Սրանից հետո Վիեննայի համալսարանի Գեղարվեստական ինստիտուտը ինձ հրավիրեց եւ յես այնտեղ, նոյն Լիսիցյանի եւ յերգչուհու հետ տվի մի կոնցերտ:

Համերգից առաջ, պրոֆ. Աղլերը, բազմաթիվ Հասարակութայն առաջ, գեկուցեց արեվելյան յերաժշտութայն առանձնահատկությունների մասին: Ներկա յեղող մասնագետների մեջ դիսկուսիա առաջացավ եւ յես զանազան Հարցերի վերաբերմամբ տալիս էի մանրամասն մեկնաբանություններ եւ բացատրություններ:

Այդ յերեկոյթին ներկա գտնվող Համալսարանի յերաժշտութայն պատմութայն մասնագետները մանրամասն քննութայն յերնթարկեցին Պարսկաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Քուրդիստանի յերաժշտութայն տեորիան եւ տեխնիկան:

Այդ մասին արձանագրվեց Վիեննայի Համալսարանի ժուրնալում եւ լոյս տեսավ հոգված՝ Լայցիգի «Յայտչրիֆտ դեռ ինտերնացիոնալեն մուզիկ - գեզելչաֆտ» 1914թ. տետր 9, յերես 253-4:

Սրանից հետո Վիեննայի Միթիթարյան Միաբանութայն հրավերով, իրանց շենքի մեջ, տվի եւս մի Համերգ Լիսիցյանի մասնակցութայնամբ:

Միաբանությունը մեծ սիրով եւ հարգանքով մեզ ընդունեց, Համերգից հետո արբաՀայրն ինձ որհնեց եւ շնորհակալություն հայտնեց:

1914 թվի ապրիլին Վիեննայից գնացի Բերլին: Այնտեղ այցելեցի արեվելագետ պրոֆեսսորներին, ի շարս վորոնց Կոմիտասի եւ Սպիրիդոն Մելիքյան պրոֆեսսորին, Օսկար Ֆլայշերին եւ Շմիդտին: Վերջինս հարցրեց.- «Ինչո՞ւ Սպիրիդոնը այլ եւս իր նոր աշխատություններից ինձ չի ուղարկում, ինչո՞վ է պարապում, ի՞նչ է անում»: Յես պատասխանեցի, թե դաստավութայնամբ է պարապում, ամուսնացել է: «Հա, դրա համար այլեւս չի ստեղծագործում»:

Բերլինի Համալսարանի գեղարվեստական բաժինը նոյնպես հրավիրեց ինձ եւ յես այնտեղ մի յելոյթ ունեցա եւ նվագածս կտորների վերաբերմամբ տվի մանրամասն բացատրություններ:

Իմ այդ յելոյթը արձանագրվեց, բայց յես հետագայում հնարավորություն չունեցա վորեւէ տեղեկություն ստանալ՝ շնորհիվ սկսվող Համաշխարհային պատերազմի:

Բերլինում Հայ բանվորությունը իմ գալստյան առթիվ մի յերեկոյթ կազմակերպեց, յես նրանց համար նվագեցի եւ գեկուցի իմ նվագած կտորների նշանակութայն մասին, մեկնաբանելով նրանց իմաստն ու բնոյթը:

Նոյն թվի մայիսին վերագարձա Պետերբուրգ:

Ֆ. 1274, ց. 5, դ. 14, թ. 1-14: Պատճեն: Ձեռագիր:

N 2

ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ն.Ֆ.ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ*

[1968թ.]

Երեւան

Նիկողայոս Տիգրանյանի հետ կապված իմ հուշերի ծայրը խորանում է մինչեւ մանկութայնս վաղ տարիները:

Շատ անգամներ էի տեսել սեւ ակնոցներով կույր երաժշտին, որ իր ուղեկցի հետ հաճախ բարձրանում էր մեր պատշգամբի առջեւից անցնող աստիճաններով: Նա այցելութայն էր գալիս իր կրտսեր եղբորը՝ Հովսեփ Տիգրանյանին եւ իր մտերիմ այրի բարեկամուհիներ Թ.Թ.Կիրակոսյանին եւ նրա շատ համակրելի քրոջը՝ Ելիզավետա Թարխանովնային: Ահա հենց այդ ընտանիքի հետ է կապվում Նիկոյալ Փաղեյիչին ճանաչելու եւ մոտ ապագայում նրա հետ ծանոթանալու երջանիկ պահը:

Վաղ առավոտյան մենք արթնանում էինք վերին հարկից մեզ հասնող դաշնամուրի անկրկնելի հնչյուններից: Շատ երաժշտասեր եւ կիրթ այդ քույրերը հաճախ իրենց մենակությունը սփոփելու եւ գվարճանալու համար ինձ կանչում էին իրենց տուն, հյուրասիրում քաղցրավենիքներով, խոսեցնում եւ իհարկե, անպատճառ, նվագել տալիս:

Ահա այդպիսի մեկ օր ինձ կանչեցին վերեւ: Երբ ներս վագեցի սենյակ, տեսա ինձ արդեն շատ ծանոթ արտաքինով ծերուկ երաժշտին, որը նստած աթոռին, դեմքը դարձրած դեպի դուռը սպասում էր... Ինձ մոտեցրին նրան եւ ասացին, որ «սա

* Վերնագիրը փաստաթղթինն է -Վ.Մ.:

այն երեխան է, որի մասին պատմում էինք»։ Նիկոլայ Փաղեյիչը բռնեց ձեռքերս եւ մի քանի հարցեր տալուց եւ պատասխաններս ուշադրութեամբ լսելուց հետո, ցանկութեամբ հայտնեց ինձ լսելը։ Ինձ նստեցրին դաշնամուրի առջեւ եւ ես նվագեցի ինչ-որ բան։

Տիգրանյանը հայտնեց իր գոհունակութիւնը եւ հենց այդտեղ ընտրեց իր գործերից մի քանիսը, որ ես փորձեմ սովորել եւ իր համար նվագեմ։

Առաջին ստեղծագործութիւնները, որ կատարեցի, դա գեղեցիկ ու նուրբ «Ուզունդարան» էր եւ «Գյարեյիւն», որոնք հայրիկս արտագրեց եւ ես մտցրի իմ «նվագացանկի» մեջ։

Այդ ժամանակ կլինեի 8-9 տարեկան։

Այդպէս հիմք դրվեց մեր անխախտ բարեկամութեանը եւ համագործակցութեանը, որը շարունակվեց մինչեւ Նիկոլայ Փաղեյիչի մահը։

1934թ. սեպտեմբեր ամսին ընտանիքը հանգստանում էր Լենինականում։ Մեզ հատկացրել էին 2 հիւանդի սենյակ երկաթգծի մանկապարտեզի շէնքում, կողքն էլ հսկայական դահլիճն էր՝ դաշնամուրով։ Շատ անգամներ հյուր էր լինում մեզ մոտ Ն.Ֆ.-ը, նա հետաքրքիր եւ ուրախ խոսակից էր, պատմում էր անցյալից, իր ուսման տարիներից, հիշում էր հիացմունքով եւ մեծ երախտագիտութեամբ իր մորաքրոջ ամուսնուն՝ հռչակավոր Աղամալ Մելիք Աղամալյանին, որի անզուգական նվագը եւ արվեստը ոչ միայն սեր ներշնչեցին Տիգրանյանին հանդեպ արեւելքի երաժշտութիւնը՝ մեղեդիներն ու մուղամները, այլեւ ճակատագրական դեր խաղացին նրա հետագա կյանքում։

Մեր երեկոները միշտ համեմատ էին լինում երաժշտութեամբ։ Նիկոլայ Փաղեյիչը սիրում էր նաեւ եվրոպական ու կլասիկ երաժշտութիւնը։

Մեծ հաճուքով կատարում էր Շոպենի ստեղծագործութիւնները։

Այդ նույն մանկապարտեզի բակում ցերեկները հավաքվում էին երեխաները, խաղում, վազվզում, հետո աղմուկով լցվում էին դահլիճ՝ նախաճաշելու եւ հանգստանալու։ Ինձ խնդրում էին երեխաներին զբաղեցնել երաժշտութեամբ եւ երբ հերթական համարը վերջացնում էի, դաստիարակչուհին, որ տղամարդու բամբ ձայնով մի սիրուն ու նուրբ աղջիկ էր, դիմում էր երեխաներին. «Երեխաներ, ինչ նվագեց Արեւիկը», բոլորը միահամուռ բղավում էին «Գյարեյիւն»։

Շատ պահանջուտ, մանրակրկիտ, համառ եւ աշխատասեր էր Տիգրանյանը, յուրաքանչյուր կետը, նշանը, նոտան, պաուզան, նյութանք տասնյակ անգամներ կրկնել էր տալիս եւ նրա համբերութեանը վերջ չկար։ Սիրում էր պարապելիս ձեռքերով ծափ տալ, ոտքով չափել խփել եւ գլուխը բարձր բռնած, կզակը իր փոքրիկ մորուքով առաջ բերած կերկերուն ձայնով երգել։ Իր կուրսութիւնն ավելի էր բարդացնում մեր գործը, երբ ուզում էի բացատրել, թե որ նոտային է վերաբերում խոսքը կամ երբ ինքը ինձ բան էր հարցնում, իսկ ես փոխանակ պատասխանելու, գլխով էի անում, մոռանալով նրա կուրս լինելը։ Այդ էր պատճառը, որ այն տարիներին, երբ Նիկոլայ Փաղեյիչին հանդիպում էի տանը կամ բակում, փախչում էի, որ ինձ չնստեցնի գործիքի առջեւ եւ ժամերով չզբաղեցնի։

Մեկ օր էլ երեկոյան, երբ բոլոր երեխաներով վազվզում էինք բակում եւ բաց էինք թողել օդապարիկը, կամ ինչպէս լենինականցի երեխաներն էին ասում «վերանելիչը», հեռվից հայտնվեց Նիկոլայ Փաղեյիչը իր ուղեկցի հետ միասին, ուրախութեամբ ճիչը, որ քանի գնում ուժեղանում էր «վերանելիչի» թռիչքի հետ միասին, կտրվեց (չէ որ արտակարգ լսողութիւնն ուներ Նիկոլայ Փաղեյիչը) եւ ես փախա։ Հետագայում պարզվեց, որ եկել էր մեզ իրենց տուն հրավիրելու։

Նշանակված օրը մեր ամբողջ ընտանիքը հյուր էր Նիկոլայ Փաղեյիչի մոտ։

Դա Տիգրանյանների պապենական տունն էր, որը գտնվում էր Լենինականի մեծ եկեղեցու դիմաց, հրապարակի վրա։ Հետաքրքիր հիշողութիւններ եւ պատմութիւններ էին կապված այդ տան հետ։

Ահա Նիկոլայ Փաղեյիչի երկու եղբայրները՝ Լազր Փաղեյիչը եւ Սիրական Փաղեյիչը, որոնք Նիկոլայ Փաղեյիչի հետ մեզ ընդունում են իրենց տան ընդարձակ հյուրասենյակում։ Սեղանը լի է ամեն տեսակ բարիքներով եւ չնայած սուղ ժամանակներին, Նիկոլայ Փաղեյիչը ոչինչ չի խնայել, որպէսզի սեղանը ճոխ լինի։ Հատուկ խմորեղեններ է պատվիրել, օգոստոս ամսին ճարել է խաղող։ Այս պատիվը իհարկե տրվում է ծնողներին, բայց ես ուրախ եմ, որ պատճառն ու առիթն եմ այդ բարեկամութեան։ Նիկոլայ Փաղեյիչը մեծ եռանդով եւ ճարպկութեամբ վազվզում

է սենյակներում եւ չնայած լուսն անսպասելի Հանգել է եւ մենք նստած ենք նավթի լամպի աղոտ լուսի տակ, ինքը մեծ արագաշարժութեամբ վերջացնում է սեղանի պատրաստութիւնը եւ մենք Հիանալի երեկո ենք անցկացնում: Նվագում ենք, մեծերը գրուցում են, վերջապես իմ քունը սկսում է տանել եւ մենք հրաժեշտ ենք տալիս Տիգրանյաններին եւ անջնջելի տպավորութիւններով հեռանում ենք նրանց տնից: Օգոստոսյան մեղմ եւ գեղեցիկ երեկո է, եւ Լենինականի երկինքը ինչպես միշտ, զարմանալի աստղազարդ է Նիկոլայ Ֆադեյիչը մինչեւ փողոցի շքամուտքը մեզ ճանապարհ է գցում եւ հետեւիցս կանչում է. «Արեւիկ ջան, նոթերը դուրս գրէ»: Պետք է ինչ-որ բան արտագրել:

Տարիներ անց, երբ կրկին Լենինականում էի, նստած էինք Նիկոլայ Ֆադեյիչի սենյակում, նորից էինք աչքի անցնում եւ ստուգում որոշ ստեղծագործութիւններ եւ նորից նա իր ցուցմունքներն էր տալիս, մի փոքր դադար տվեցինք մեր պարզամտութիւնը: Տիգրանյանը բերեց մի քանի ֆոտո-նկարներ եւ սկսեց պատմել յուրաքանչյուր նկարի մասին: Անմոռանալի եւ հուզիչ էր հատկապես մեկ նկար: Տիգրանյանների հայրը՝ Թագեւոսը՝ կրթված եւ լուսամիտ մարդ էր: Նա իր բոլոր գովակներին տվեց փայլուն կրթութիւն: Նրանք ցրված էին աշխարհի տարբեր կողմերում իրենց ուսման հետեւից ընկած եւ տարիներ շարունակ հեռու էին հայրենիքից: Բայց ահա, մեկ անգամ միայն, մեկ երջանիկ օր 9 որդին հավաքվում են իրենց հայրական հարկի տակ եւ ահա նստած են ծնողները եւ զավակները շրջապատել են նրանց:

Մեծ սիրով եւ լայն ժպիտով էր Հիշում Նիկոլայ Ֆադեյիչը, թե ինչպես ամեն անգամ այդ նկարը տեսնելիս նրանց միակ քույրը՝ Մարիա Ֆադեւեւան, որ ամենակրտսերն էր եւ ամենասիրելին, որը հետագայում դարձավ Տիգրանյանների գործերի լավագույն կատարողը, վշտանում էր եւ հանդիմանում իրենց, որ այդ նկարում ինքը չկա, չէ որ մայրը կարող էր իրեն գիրկն առնել եւ այնպես նկարել:

1936թ. Հայաստանի կառավարութիւնը նշեց Նիկոլայոս Տիգրանյանի ծննդյան 80-ամյակը: Մեծ եւ հանդիսավոր տոնակատարութիւն էր: Կուլտուրայի տան դահլիճը (այժմ փոքր դահլիճը) լեփ-ղեցուն էր ընտրովի հասարակայնութեամբ, ներկա էին երաժիշտներ, մտավորականներ, գրողներ, անվանի մարդիկ: Ահա առաջին կարգերից մեկում նստած է մեր սիրելի բանաստեղծը՝ Ավ. Խասհակյանը, որն ընդամենը 1 շաբաթ է, ինչ վերագարձել է հայրենիք:

Հանդիսավոր մասից հետո սկսվում է համերգը, մասնակցում են Հայտնի արվեստագետներ եւ կատարողներ, 2-րդ բաժինը նվիրված է Նիկոլայոս Տիգրանյանի մեծ կտավի ստեղծագործութիւններին, որոնք կատարում է սիմֆ. նվագախումբը՝ Կ.Ս.Սարաջեհի ղեկավարութեամբ: Համերգի վերջում նվագախումբը կատարում է Արեւելյան քայլերգը, որն ստիպված են կրկնել որոտընդոտ ծափահարութիւնների տակ: Այստեղ ահա առաջին անգամ Տիգրանյանի ստեղծագործութիւնների կատարմամբ ելույթ ունեցաւ եւ ես: Նիկոլայ Ֆադեյիչի պահանջով ինձ էլ մտցրել էին հորեկանական համերգի ծրագրի մեջ: Նվագում էի հայկական պարերը եւ հասարակութիւնը շատ ջերմ ընդունեց Տիգրանյանի ստեղծագործութիւնների իմ առաջին հրապարակային ելույթը:

Մեկ ուրիշ անգամ Ֆիլհարմոնիայի նույն դահլիճում կազմակերպված էր համերգ, բայց ի՞նչ առիթով եւ ովքե՞ր էին մասնակցում, չեմ հիշում, բայց ունկնդիրները շատ աղմկարար պատանիներ էին: Մի քանի համարներից հետո հայտարարվում է իմ համարը, ես դուրս եմ գալիս բեմահարթակ եւ հասարակութեան մեջ բարձրաձայն կարծիքներ են փոխանակվում: Ահա սկսեցի Տիգրանյանի «Փատեն կիտամ»-ը, երբ հասա երկրորդ կեսին, որ մի ուրախ պար-եղանակ է, ամբողջ դահլիճը սկսեց նվագիս չափով ու տակտով ծափ տալ եւ ոտքերով դոփել հատակը: Ես վիրավորվեցի եւ դուրս վազեցի բեմից:

1950-52թթ. ամառները նորից անց ենք կացնում Լենինականում: Հաճախ էինք հանդիպում Նիկոլայ Ֆադեյիչին: Այդ տարի նա իրեն շատ տկար էր զգում: Մենք վարձել էինք սենյակ ֆիլհարմոնիայի դիմացի շենքում, որտեղ մեզ հարեւան էր ժող. դերասան Արմեն Արմենյանը: Վաղ առավոտյան Արմենյանը գնում էր «Գորկա» մարմնամարզութեան եւ դեռ մյուսները քնած էին լինում, երբ վերադառնում էր զբոսանքից: Հենց նույն ժամին հայտնվում էր Նիկոլայ Ֆադեյիչը: Գունատ եւ դողդոջուն հասնում էր մեր տուն եւ ասում էր «գնում եմ «Գորկեն», մի քիչ «аппетит нагулять»:

Հարցնում եմ.- Նրկոլայ Փաղեյիչ, միթե առանց նախաճաշելու տնից դուրս եք եկել, «Արեւիկ ջան, բոլորովին ախորժակ չունեմ, ճիշտ է, մեկ բաժակ թեյ խմեցի, մի երկու կտոր կարագով հաց կերա, հետո 2 ձու թերխորով կերա, հա, մոռացա ասել, երեկվա բորչից մնացեր էր, դա էլ խմեցի, բայց ախորժակ չունեմ, գնամ «Գորկեն»», գուցե օդի մեջ ախորժակս բացվի»: Ամուսինս ինձ առաջարկում է հագնվել եւ Նրկոլայ Փաղեյիչի հետ գնալ զբոսանքի, Նրկոլայ Փաղեյիչը, որ նստած է աթոռին, շուռ է գալիս աթոռի հետ միասին մեջքով դեպի ինձ եւ ասում.- «Արեւիկ ջան, հագնվիր, հագնվիր, մենք չենք նայում»: Տարօրինակ զգացողութուն: Երբեմն այնպես էր խոսում, կարծես տեսած բան է պատմում, վառ, պատկերավոր: Ասում էր «Իոսիֆ Փաղեյիչը, երբ նստում էր սպիտակ ձիւն ու քշում, դա մի հոյակապ պատկեր էր...^{*} Իոսիֆը մի գեղեցիկ տղամարդ էր»...

Ահա կրկին Լենինականում ենք:

Նրկոլայ Փաղեյիչը եկել է մեզ մոտ եւ շատ հավանել է մեր գնած միրգը: Գանդատվում է, որ ձմերուկը թանկ է եւ եթե գնի հանկարծ ու վատը դուրս գա^o: Մենք ծիծաղում ենք եւ ամուսինս՝ Գուրգենն ասում է.- «Նրկոլայ Փաղեյիչ, այս անգամ Ձեզ համար Երեւանից լավ ձմերուկներ եմ բերելու»:

Ամեն առավոտ հայտնվում է Նրկոլայ Փաղեյիչը իր ուղեկցորդուհու հետ՝ ցանցը ձեռքին: Վերջապես եկան ձմերուկները. մինչեւ Նրկոլայ Փաղեյիչի գալը Գուրգենն ինձ պատմում է, որ ամենալավ ձմերուկի վրա ինքը նշան էր արել, որ տա Նրկոլայ Փաղեյիչին, բայց գնացքից նկատել էր, որ այդ ձմերուկը չկա, ուղեկիցները դիտավորյալ, թե պատահաբար իրենց ձմերուկների հետ տարել էին եւ մեր բոլոր ձմերուկներն էլ առանց նշանի դուրս եկան:

Մրտատրոսի սպասում ենք Տիգրանյանին: Ահա բարձրանում է մեր տան աստիճաններով եւ ուրախ ներս մտնում: Ուզում ենք բացատրել, թե ինչ է պատահել ճանապարհին, գնացքում, բայց նա չի լսում, անհամբեր ձեռքերը մեկնում է Գուրգենի կողմը եւ ասում.- «Ոչինչ, կուտվի, Գուրգեն ջան, կուտվի»:

Մեկ դեպք եւս կապված Նրկոլայ Փաղեյիչի անվան հետ եւ վերջացնում:

1956, թե 57 թվին կուլյրերի միութունը կազմակերպել էր երեկո նվիրված Ն.Տիգրանյանի ծննդյան 100-ամյակին: Ունկնդիրների մեծ մասը կուլյրեր էին, նախագահութունում նստած էին երաժիշտներ, կատարողներ, երաժշտագետներ եւ արվեստի գործիչներ: Ես նստած էի նախագահութունում, բավականին երիտասարդ տեսքով, կարճ հագուստով, կարճ մազերով եւ երբ ընկ. Թուրջյանը Հանգամանորեն պատմելով Նրկոլայի Տիգրանյանի կյանքի ու գործունեության մասին, նշում է, որ Տիգրանյանը ունեցել է ժամանակակից կատարողներ, որոնք եւ Համագործակցել են նրան եւ ժպտալով դառնալով դեպի իմ կողմը՝ ինձ է մատնացույց անում (չէ որ Տիգրանյանը 100 տարի առաջ է ծնվել), դահլիճը քրքշում է: Ձե^o որ բոլորին չէր Հայտնի, որ նա ապրեց Համարյա մեկ դար եւ կարելի էր նրան Համագործակցել արդեն նրա կյանքի վերջին շրջանում:

Ոչ ճակատագրի դաժան խաղը, որ նրան մանուկ հասակից կտրեց արեւի լույսից եւ ոչ էլ հետագա տառապանքներն ու վիշտը չընկճեցին եւ չհուսահատեցրին Տիգրանյանին եւ մինչեւ իր կյանքի վերջին օրերը մնաց աննկուն, աշխատասեր, եռանդուն, պարտաճանաչ, լավատես, ազնիվ եւ միշտ սիրելի ու հարազատ:

Ֆ. 69, ց. 1, գ. 84, թ. 10-16: Բնագիր: Մեքենագիր:

ԴՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ ՍԻՄՈՆ ՎՐԱՑՑԱՆԻՆ

^{*} Այս եւ մյուս բազմակետերը հեղինակինն են -Վ.Մ.:

Տպագրվող վավերագիրը Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, զորավար Դրոյի (Դրաստամատ Կանայան) ոչ հարուստ գրավոր ժառանգությունն անուշներին է, որ ընթերցողի ուշադրություն է հանձնվում առաջին անգամ: Դրոն եղել է գործի մարդ եւ քիչ է հետաքրքրվել գրավոր խոսքով: Նրա գրչին են պատկանում «Վէմ» պարբերականի 1934-1935թթ. երեք համարներում տպագրված «Յուշեր»-ը: Պարբերականի խմբագիր Ա.Վրացյանը ծանուցում է, որ տպագրելու է նաեւ «Դրոի ընդարձակ յուշերն ու տեսութիւնները», սակայն այդ չի իրականացրել: «Յուշեր»-ը նվիրված են 1905թ. Հայ-թաթարական կռիվներին Դրոյի մասնակցութեամբ: 1948թ. «Արեւելք» թերթում տեղ է գտել նույն Հեղինակի «Բուշեւիկներն ինչպէս դրժեցին իրենց խոստումները» խորագրով հոդվածը, որում նա անդրադարձել է 1920թ. դեկտեմբերի 2-ի Հայ-ուսական համաձայնագրին, որով Դաշնակցութեանը ստեղծված իրազրույթյան մեջ, որոշակի պայմաններով, իշխանութեանը զիջեց Հայ բուշեւիկներին, իսկ վերջիններս ցանկութեան էլ չունենին հետեւելու իրենց խոստումներին: Այս երկու նյութերն արտատպված են 1991թ. Երեւանում տպագրված «Դրո» գրքում:

Տպագրվող նամակը վկայում է այն մասին, որ զորավար Դրոն զբաղվել է նաեւ կուսակցական գործերով ՀՅԴ Բալկանների կազմակերպութեանը, ինչպես նաեւ կուսակցության անցյալին վերաբերող խնդիրներով: Շատ բազմաբովանդակ ու հետաքրքիր է նամակը, որը միաժամանակ նյութ է տալիս մտորումների ու վերլուծութեանների համար: Այստեղ մենք մտադիր չենք խորանալու առաջադրված Հարցերի լուսաբանության մեջ եւ հրամայելու մեր կարծիքը այս կամ այն Հարցի նկատմամբ: Մեր խնդիրը սոսկ նյութ ներկայացնելն է, ինչպես ընդունված է Հրապարակումների դեպքում: Նույն մոտեցումով են բերվում նաեւ ծանոթագրութեանները:

Նամակից երեւում է (նաեւ բնագրի ձեռագրից), որ Դրոն այն թեկադրել է: Ակնհայտ է նաեւ, որ Դրոն շատ լուրջ է վերաբերվել այն բոլոր Հարցերին, որոնց ինքն անդրադարձել է, քանզի պատճառաբանել է «նամակի վերամշակման» ուշացումը (կնոջ հիվանդության հանգամանք):

1920-1930-ական թվականներին, որոշ տարիներ, լինելով նաեւ ՀՅԴ Բյուրոյի անդամ, կատարել է ղեկավար կուսակցական աշխատանք Բալկաններում, այդ հանգամանքի բերումով առնչութեան է ունեցել տվյալ տարածքային կազմակերպութեան ղեկավարութեան հետ: Նամակի զգալի էջեր նվիրված են տվյալ Հարցերին: Խոսքը վերաբերում է Բալկանների կենտրոնական կոմիտեի գործունեութեանը, կենտրոնական կոմիտե, որը գտնվել է Գարեգին Նժդէհի եւ Հայկ Ասատրյանի իշխանութեան տակ: Մյուս կարեւոր Հարցը, որին այստեղ անդրադարձել է Դրոն՝ Նժդէհի կուսակցութեանից հեռացնելն է: Ընդգծվում է զորավարի հոգատար եւ զիջողական վերաբերմունքը մարտական ընկերոջ՝ Նժդէհի նկատմամբ, անկախ միմյանց միջեւ առկա տարաձայնութեաններից:

Դրոյի նամակի բարձրացրած մյուս Հարցախումբը վերաբերում է կուսակցության պատմության ավելի հեռավոր անցյալին: Այդ Հարցերից են եկեղեցական գույքերի բռնագրավումը (1903թ. Հունիսի 12-ի ցարական օրենքը) եւ Դաշնակցութեան վերաբերմունքը, Հայ-թաթարական ընդհարումները եւ կուսակցության գործունեութեանը, կուսակցության կովկասյան ծրագիրը եւ միհրանական շարժումը եւ այլն: Էական նշանակութեան ունի կուսակցության ու նրա այս կամ այն ղեկավար գործիչի, կասեինք այսպես կոչված, պատասխանատվության Հարցը՝ կապված Հայ ժողովրդին վիճակված ցեղասպանութեան ու ինքնապաշտպանական կռիվների կազմակերպման հետ, Հարցեր, որոնց նկատմամբ նամակի Հեղինակն ունի շատ զգուշավոր մոտեցում: Բոլոր դեպքերում Դրոն ղեկավարվում է ՀՅԴ շահերի պաշտպանության, նրա միասնութեան պահպանման գերապատիվ սկզբունքով:

Հրապարակման հեղինակները ձգտել են տալ որքան կարելի է հարուստ ծանոթագրութեաններ, որոնք օգտակար կլինեն վավերագրում ներկայացված Հարցերը որքան կարելի է ճիշտ ընկալելու համար: Փաստաթղթի Հրապարակման գլխավոր նպատակը պատմական ճշմարտության բացահայտումն է, բացառելով ու մերժելով կանխակալ մոտեցումն ու հեղինակութեանների հանգամանքը:

Հրապարակվող փաստաթղթում պահպանվել են Դրոյի լեզուն ու ոճը: Նամակը բնագիրը եւ ձեռագիր է: Այն կրում է անձամբ Դրոյի ստորագրութեանը: Տպագր-

վում է առաջին անգամ՝ Դաշնակցութեան Բոստոնի կենտրոնական արխիվում պահպանվող բնօրինակի քսերոպատճենից:

Վլադիմիր Ղազարեցյան
պատմական գիտությունների
դոկտոր
Համլետ Գեուրգյան
պատմական գիտությունների
թեկնածու

Փաստաթուղթ

15 օգոստոսի 1939 թ.
Պուքրէշ (Բուխարեսա)

Սիրելի Սիմօն¹,

Դուռն շատ լաւ գիտէս, որ մէկն ես իմ ամէնահարազատներից, մէկն ես նոյնպէս, որ ինձ լաւ ես ճանաչում եւ այդ իսկ պատճառով անվերապահօրէն կը գրեմ քեզ հետեւեալ տողերը, որուն ամէն մէկ կէտին պէտք է հաւատաս տառացիօրէն:

Սկսեմ Պալքանով եւ Նժդէհով²:

Երբ 1936-ի փետրուարին <1 անընթեռնելի բառ (ա.բ.-Վ.Ղ.)> դեգերումներուն (°) վրայ անցայ Պալքան, հետեւեալ կացութիւնը գտայ այնտեղ: Մէկ ամբողջ տարի Հայկ Ասատրեանը³ կ[ենտրոնական] կոմիտէ է խաղցուցէր առանձին (°) եւ անպատասխանի թողցուցած Բիւրօյի նամակները այն մասին, թէ ո՞վքեր են մարմնի անդամները: Այս միեւնոյն անձը բառի իսկական մտքով հալածանքի մէջ հազարեան մեթօտներով կախակայէր, արտաքսէր է բոլոր անոնք, որոնք իր կամակատարները չեն եղէր. նոյնիսկ Մազմանեանի⁴ պէս քառասուն տարուան ընկերոջ կախակայած էր՝ առարկելով, թէ իր եռամսեայ տուրքը չէ վճարած: Այս մենատիրութիւնը անձնական կ[ենտրոնական] կոմիտէութիւնը շարունակեր է պահել մինչեւ Նժդէհի Ամերիկայէն վերադառնալը⁵:

Նժդէհի վերադարձէն <հետոյ, նախապէս պատրաստուած մարդկանցով գումարէր են փակ ժողով մը, գաղտնիացման պատրուակին տակ իմաց չէ տալով ոչ ոքի այն ընկերներէն, որոնք տասնեակ տարիներ պատասխանատու դէր են կատարած Պալքանի մէջ, նոյնիսկ անոնցմէ մէկ մասին վերաբերմամբ նախապէս պատժական որոշումներ են տվեր՝ զանազան պատրուակներով: Այս փակ ժողովը ուրիշ դէր չէ ունեցած, բայց միայն վաւերացնել Նժդէհի եւ Հայկի պատրաստած մարմինը, վաւերացնելով նաեւ այն պատժական որոշումները անոնց հանդէպ, որոնք չեն եղած իրենց անձնական համախոհները⁶:

Երեք Հոգինոց այդ մարմնին մէջ մտցուցած էին նաեւ Ներսէս Աստուածատրեան⁷ անունով մէկը, որ նախքան կ[ենտրոնական] կոմիտէի մէջ մտնելը ոեւէ այլ մարմնի անդամ չէ եղած:

Նժդէհ, Հայկ եւ Ներսէս Աստուածատրեանէ կազմուած այս եռանդամը գործի անցնելով, իր գլխավոր պարտականութիւնն է նկատած մինչեւ յետին շարքայինին առջեւ վարկաբեկել ղեկավար ընկերները Պալքանէն նէրս, թէ դուրս գտնվող անհեթեթ պատմութիւններ հիւսելով ամէն մէկու հասցեին: Բացի ասկէ, օգտուելով քաղաքական եւ յեղափոխական մեր հարկադրական իներտութեան պատճառած դժգոհութիւնէն շարքայիններու մօտ, ջանացած են ոմանց ուղէղին մէջ կախել այն միտքը, թէ ղեկավարներու պարտուողական հոգեբանութեան հետեւանք է մեր կուսակցութեան ինէրտ լինելը: Եւ որպէսզի ցոյց տան, թէ իրենք գործօն հեղափոխականներ են, սկսէր են մարդկանց երեւակայութիւնը շոյող պատմութիւններ ու ծրագիրներ ներշնչել շարքայիններուն: Կտամ քեզի մէկ քանին միայն այս պատմութիւններէն, ցոյց տալու համար, թէ շարքերը անբարոյացնելու համար մինչեւ ուր կարելի է հասցնել ծաղրածութեան հասած պատմութիւնները:

Ըստ Հայկ Ասատրեանի Դաշնակցութիւնը չէ կրցած ըմբռնել ռազմական այն արժէքը, որ ունի Նեմրութի սարը՝ թուրքերուն հարուածելու համար: Մանաւանդ (°) այսօր, մարմինները եթէ կարենային պատերազմական կատարելագործուած թեքնիքայէն գրաւել, կրնային Նեմրութի սարը դարձնել յարձակման խարխալ թուրքերուն դէմ:

Եւ որպէսզի մարմիններուն այս ապիկարութիւնը դարձանուի, կ.կոմիտէն արտակարգ գործի մը անունով ներքին հանգանակութեան կը ձեռնարկէ, համոզելով շրջանի մարմիններն ու ընկերները, թէ կարելի չէ բացատրութիւններ տալ այդ գործնական ձեռնարկներուն մասին: Հանգանակուած այդ գումարը ուրիշ բանի չէ հատկացուիր, բայց եթէ ապահովելու անհաշիւ երթեւեկի ծախքերը Հայկ Ասատրեանի, որպեսզի այդ ճամբորդութիւններով շրջանի ընկերներուն մէջ թոյն սրսկէ ու անվստահութեան մթնոլորտ մը ստեղծէ բոլորին հանդէպ, սկսած Պալքանէն մինչեւ Բիւրօ: Այս կերպով է, որ, մէկ կողմէն նախկին մարմիններէն իրենց փոխանցուած գանազան ֆօնդերու գումարները, իսկ միւս կողմէն «արտակարգ ձեռնարկներու» անունով հանգանակուած այդ գումարները ծառայեցուցեր են «բորբականտ» թոյն եւ կիրք սրսկելու համար ընկերներուն մէջ: Իսկ իրենց արտակարգ ձեռնարկը ուրիշ բան չէ եղած, բայց միայն քանի մը ընկերներ տեղաւորել գաղտնի ուստիկանութեան մէջ, որոշ շրջաններ հետեւելու համար թուրք էմիսարներու գործունէութեան:

Այս վրան բաց եւ յաճախ խորհրդաւորութիւնով սքողուած անյուր բամբասանքներն անկասկած ունեցած են իբր հետեւանք դժգոհութիւններ, որոնք միացած տասնեակ տարիներու պատմութիւն ունեցող ներքին վեճերու, դրա հետ, վերածեր են կռկռուքի, ատելութիւնով կիտուած կատարվում աւելի քենոտ կերպով, քան Ամերիկայի բամբակարներն ու դաշնակցականները:

Հայկ - Նժդէհ կ.կոմիտէի դէմ դժգոհ խմբակին գլխավոր ղեկավարներն էին մեր հին ընկերներէն Արամ Յակոբեան⁸, Օննիկ Մխիթարեան⁹ եւ իմ ներքին համոզումով մի մուլթ աւանտիւրիսթ՝ Թափառական¹⁰ անունով, որ նախքան դժգոհներուն միասնալը, տարիներ շարունակ եղած է Նժդէհի գործակիցը:

Այս երկու խմբակին միջեւ պայքարը այն աստիճան կը սրի, որ Հայկի եւ Նժդէհի կողմէ լրտեսութեան կասկածներ կը ներշնչուեն շարքայիններուն մէջ նախ Տէվէճեանի¹¹ հասցէին, Նժդէհի Ամերիկայէն վերադառնալու առթիւ՝ երբ Համոն¹² ալ կը գտնուէր Պալքան, եւ յետոյ իրենց ընդդիմադիրներու հասցէին, ընդհանրապէս, Քրիստափորի¹³ եւ Եավորովի¹⁴ յիշատակին կազմակերպուած հանդիսութեանց առթիւ: Հետեւանքը կըլլայ այն, որ դժգոհներէն տղաներ, Թափառականի ընկերակցութեամբ կերթան ատրճանակով սպառնալիք կարգալ Նժդէհին:

Դժգոհները բողոքելով կը դիմեն Բյուրօյին, որ վերջ տայ այս անարդարութեանց: Եւ նոյնիսկ Ռուսոնուի մարմինը, որ տարիներու այդ պայքարին մէջ միակն է եղած այս կամ այն կողմին չէ յարող, եռանդամ կ.կ.-ին միջոցաւ կը դիմէ Բիւրօյին, որպէսզի ընդհուպ վերջ տայ այս կացութեան, յատուկ մարդ զրկելով դուրսէն: Օրինական քանալով կատարուած այս բողոք-դիմումն ալ չէ հասնիր անշուշտ իր հասցէին, մնալով կ.կ.-ի արխիվներուն մէջ:

Միւս կողմէն, Արամ Յակոբեան, Օննիկ Մխիթարեան եւ Թափառական դժգոհ խմբակը, դժգոհները կը համախմբեն յատուկ խումբերու մէջ եւ կը սկսեն անդամատուրք գանձել անոնցմէ: Իրենց այս հակականոնադրական քայլը կը պատճառաբանեն անով, որ եթէ դժգոհները ձգէին անկազմակերպ, կ.կոմիտէի կողմնակիցներուն հետ անոնք կրնային ոչ ցանկալի բախումներ ունենալ եւ շատերն ալ կրնային իսպառ հեռանալ կուսակցութիւնէն: Եվ որպէսզի տպաւորութիւն ձգեն Բիւրօյին կամ անոր զրկելիք լիազօրներուն վրայ, այդ արուեստական կազմակերպութեան թիւը կը բազմապատկեն, իրենց խումբերուն մէջ գետեղելով անձեր, որոնք տասնեակ տարիներով հէռի են ապրած կուսակցութիւնէն եւ կամ իրենց ընտանիքներու անդամները՝ կին, աղջիկ եւ այլն:

Նախքան իմ Պալքան հասնելը, Լազեանը¹⁵ մօտ մէկ ամսով եղած էր այնտեղ եւ մանրամասն քննած կ.կ.-ի եւ դժգոհներու փոխադարձ ամբաստանութիւնները, մասնաւորաբար Սօֆիայի եւ Ֆիլիպէի մէջ, որ թէ օրինական կազմակերպութեան եւ թէ դժգոհներուն միացած <ընկ>երներուն թիւը Պալքանի կազմակերպութեան գրեթէ ստուար մեծամասնութիւնը կը կազմէին:

Դատական ու պատժական որոշումներ առնելու առթիւ Լազեանին հետ համախորհուրդ հիմք ընդունեցինք այն պարագան, որ դժգոհները կուսակցութեան մէջ կուսակցութիւն ստեղծելու վտանգաւոր յանցանքը գործած են. անհատական դժգոհներուն կազմակերպուած ձեւ տալով՝ դժգոհները յատուկ խումբերու մէջ են համախմբած եւ ընտրած իրենց վարչութիւնը: Խղճի հանդարտութեամբ պատժեցի մօտ 16 հոգի այդ դժգոհներէն, գլխաւորութեամբ ընկ. Արամ Յակոբեան:

նի, որուն կուսակցութիւնէն Հեռացրի մինչեւ ԺԳ ընդհանուր] ժողով, մի Հին ընկեր, որ մէկէ աւելի անգամներ կ.կ.-ի անդամ էր եղած եւ թէ Պալքանի եւ թէ Ռուսաստանի մէջ կուսակցական գործունէութիւն ունեցած:

Դժգոհները պատժեցի Հետեւեալ Հիմունքներով, որ անոնք.

ա) Խորացուցած են թայֆայական կիրքերը կուսակցութիւնէն ներս, ստեղծելով կանոնադրօրէն անթոյլատրելի մարմիններ եւ կազմակերպութեան մէջ կազմակերպութիւն ստեղծելով:

բ) Որ անոնք թույլտուած են ամսավճարներ դանձել կուսակցութեան անունով, առանց օրինապէս ճանչցուած մարմին ըլլալու:

գ) Որ տպաւորութիւն ձգելու մտահոգութեամբ միայն, իրենց խումբերուն մէջ արձանագրած են տասնեակ տարիներով կուսակցութիւնէն Հեռացածներ եւ այլն:

դ) Որ Թափառականի ղեկավարութեամբ ՆժդէՀի դէմ - երբ ան օրինական կ.կ.-ի անդամ էր սարքուած սքանտալին Հանդէպ կրաւորական դիրք են բռնած եւ այլն:

Այս կերպով, դժգոհ ըմբոստներուն պատժեր եմ, իրենց կազմած դժգոհութեան դօսարովն¹⁶ իսկ, ինչպէս կ.կ.-ի մէկ անդամին պատժեցի, Հիմնուելով կ.կ.-ի կազմած դօսարին, ինչպէս պիտի տեսնես քիչ վարը:

Քննելով կ.կ.-ի ալ դօսարը, գտանք որ.-

ա) կապոցներով պատիժներ՝ կախակայում, արտաքսում, առանց Հիմքի եւ Հարցաքննութեան: Պատիժներէն մեծ մասը անոր Համար, որ կ.կ.-ի ստեղծած կախարդական մթնոլորտին մէջ գտնուէր են մարդիկ, որոնք չեն ուզեցեր անլեզու Հայկան ըլլալ:

բ) Հայածեր են մարդկանց եւ պատժեր այն առարկութեամբ, որ Բիւրօյին բողոքեր են Յուճաստանի կ.կ.-ին միջոցաւ եւ ոչ թէ իրենց՝ Պալքանի: Մինչդէռ, ինչպէս վերեւ ակնարկեցի, Ռուսոճուգի կոմիտէն, երբ իրենց՝ Պալքանի կ.կ.-ին միջոցաւ ուզած է իր խօսքը լսելի դարձնել Բիւրօյին, այդ առթիւ իրենց միջոցաւ Բիւրօյին ուղղուած յիշեալ մարմինն նամակը չեն ուղարկած իր Հասցէին: Ռուսոճուգի մարմինն նամակը ուրիշ բովանդակութիւն չէ ունեցած, բայց եթէ խնդրել Բիւրօյին, որ ժամ առաջ միջոցներ ձեռք առնէ Պալքանի վիճակը բարելաւելու Համար:

Երբ Հայկ Ասատրեանին Հարց տուինք, թէ ինչո՞ւ Ռուսէի նամակը չէ զրկած Բիւրօյին, քանի որ իրենց միջոցաւ կատարուած է այդ դիմումը, իսկ միւս կողմէն պատժած այն ընկերները, որոնք Յուճաստանի միջոցաւ զրկած են, Ասատրեան պատասխանեց, թէ ամիսներէ ի վեր լուրեր էին տարածուած, թէ Բիւրօյի լիազօրներ պիտի գան՝ ատոր Համար չէ զրկած Ռուսէի նամակը: Բայց պատասխան չի կրնար տալ, երբ Հարց կուտանք իրեն՝ Հապա ինչո՞ւ այնքա՞ն պատիժներ սահմանեցիք Հենց լիազօրներու գալէն մօտ 15 օր առաջ, երբ գիտէիք, թէ լիազօրներ պիտի գային:

գ) Փաստօրէն արձանագրութիւն չեն ունեցած: Լիազօրներու գալու օրերուն կազմուած Հապճէպ արձանագրութեանց մէջ անգամ Հայկ Ասատրեանը յաւելումներ էր կատարած՝ առանց իր երկու ընկերներու գիտութեան:

դ) Մեր մեկնումէն յետոյ, մեր կողմէ նշանակուած կ.կ.-ի եւ ժամանակաւոր գործիչ ընկ. Ա.Ա.-ի¹⁷ Հաշուեքննութիւնէն պարզուէր էր, որ անոնք իրենց ամբողջ գործունէութեան շրջանին Հաշուապահութիւն եւս չեն ունեցեր եւ ի վերջոյ տարիներու Հաշիւները մէկ օրուան մէջ մատեանի մը մէջ արձանագրած են, առանց փաստաթուղթի եւ թուական կարգի: Թէեւ զեղծումի ոչ մէկ կասկածելի Հետք չէ գտնուած:

Այս եւ նման զանցառութիւններ եւ կամայական արարքներ լեցուն են իրենց իսկ՝ կ.կ.-ի կազմած դօսարներուն մէջ:

Զպատժել կ.կ.-ի անունով գործող եւ տարիներ շարունակ Բիւրօյին իսկ ճշգրիտ ոչ մէկ Հաղորդագրութիւն չկատարող անձերը՝ անկարելի էր: Եռանգամ կ.կ.-ին մէջ գտնուող Ներսէս Աստուածատրեանը՝ բառին իրական մտքովը «եալանչի փեհլեվան» էր եւ իր անունը դրած կ.կ.-ի մէջ՝ թիւ լեցնելու Համար: Այս իսկ պատճառով կարեւորութիւն չէ տւի այս մարդուն եւ չէ պատժեցի:

Գիտակցօրէն գնացի անարդարութեան, չպատժելով ՆժդէՀին, զինքը փրկելու միակ մտահոգութեամբ եւ կ.կ.-ի անդամներէն ու իրենց Համախոհներէն պատ-

ժեցի միմիայն Հայկ Ասատրեանին, մինչև ընդհանուր ժողով հեռացնելով կուսակցութիւնէն, մինչդէռ դժգոհներէն պատժած էի մօտ 16 հոգի:

Միմօն ջան, դու շատ լաւ գիտես, որ ոչ քաղաքացիական արիւթիւնը կը պակսէր ինձ եւ ոչ ալ կուսակցական այն գիտակցութիւնը, թէ կ.կ.-ի անդամները Հաւաքաբար պատասխանատու են իրենց արարքներուն համար: Բայց ես չէ պատժեցի ՆժդէՀին, որովհետեւ բառին իսկական մտքով կուզէի փրկել զինքը. մեկու մը, որ դժբախտաբար երբէք ընդունակութիւնը չունեցաւ կարգին մարդկանցով ինքզինքը շրջապատելու:

Հակառակ վրան բաց իմ այս կողմնակցութեան, միմիայն Հայկ Ասատրեանին պատժած ըլլալու համար, անոնք ամէն կերպ սապօթածի ենթարկեցին մի քանի օրուան իմ վերակազմչական աշխատանքներս, նախ.

1) Փակելով Սօֆիայի ակումբին դռները իմ կողմէ հրավիրուած մէկ Հաւաքումին, երբ ստիպուած եղաւ դուռը կոտրել եւ բանալ:

2) Գոցել տալով էլէքտրական հոսանքը, որուն պատճառով ստիպուած եղաւ անձնապէս տուգանքը յանձն առնել եւ ապօրէն կերպով լոյսը բանալ տալ:

3) Իմ կողմէ նշանակուած ժամանակաւոր կ.կ.-ի անդամներէն երեքը ընտրեցի իրենց ցանկութեամբ, մնացեալ երկուսէն մէկին համար եւս առարկութիւն ըրին, անոր ալ փոխեցի, հակառակ որ մեր Հին ընկերներէն էր:

4) Որ ՆժդէՀի իսկ տան մէջ ինքը ինձ խնդրեց, որ ազատեմ իրեն Հայկ Ասատրեանէն. խնդրեց նաեւ, որ նիւթապէս օգնեմ Սէթօին,¹⁸ որպէսզի յիշեալին կինը միրգի խանութ բանայ: Իմ սեփական միջոցներով օգնեցի Սէթօին: Ու ի՞նչ տեղի ունեցաւ. մեկնումէս քսանեւջորս ժամ չանցած լուր տարածեցին, թէ ուզեցեր եմ կաշառել զիրենք: Ու այս անհեթեթ սուտը շրջանէ շրջան պտտուցին տարիներով, անշուշտ ինձմէ դրամը ստանալով եւ ծախսելով հանդերձ:

5) Հակառակ իրենց խոստումին, կուսակցական արիւթները չի հանձնեցին օրինական մարմիններուն. մի քանի ակումբներ պահեցին իրենց ձեռքը մինչև այսօր. իմ մեկնումէն անմիջապէս յետոյ փորձեցին պայթեցնել իմ նշանակած կ.կ. միտէն եւ յաջողեցան անոնցմէ երեքին հրաժարականը տալ. կազմեցին ապօրէն շրջանային ժողովներ եւ երեք տարիէ ի վեր կը շարունակեն շահագործել կուսակցութեան անունը՝ անվաւեր կ.կ.-ի մը անունով ուրոյն (°) կազմակերպութիւն մը պահելով Պալքանի մէջ:

Հակառակ այս ամէնուն եւ Հակառակ ՆժդէՀի մասին ԺԳ ընդհանուր ժողովի արտաքսման վճռին, ես կանչեցի նրան ինձ մօտ, ու մինչ ես այս տողերը կը թելագրէի՝ նա Պուքրէշում էր, որովհետեւ իմ այս նամակի վերամշակումը յապաղեցաւ մօտ մէկ ամսով, որովհետեւ կինս ծանրօրէն հիւանդացաւ եւ ես հնարաւորութիւն չունեցայ զբաղելու այս նամակով:

Կանչելով ՆժդէՀին ինձ մօտ, ես իրեն յայտարարեցի, որ զինքը կանչած եմ պարզապէս դուրս բերելու համար այն աղբէն եւ ապականութիւնէն, որուն մէջ խրուեր է: Գէորդ Ղազարեանի տանը Սարգիս Արարատեանի, որուն հետ ինչպէս գիտես մօտ ինը տարի է չեմ խօսում, մեր Յարութիկի¹⁹ եւ Գուրգէն Սարգիսեանի ներկայութեան խօսեցայ իրեն հետ: Ու այս հանդիպման չէ կանչեցի նոյնիսկ Մեկուսի ներկայացուցչին, այլ միայն այն մարդկանց, որոնց հանդէպ ինք վստահութիւն ունի: Այդ հանդիպումին ես պատմեցի այն ամէնը, ինչ որ գրի եմ առած նախորդ էջերում Պալքանի մասին. ու հարց տւի ՆժդէՀին, ճիշտ են իմ ըսածներս, թէ՞ ոչ: Ու աւելցուցի. «Դուն անբարոյական տարրերուն հետ դուրս կուզաս հրապարակաւ եւ յետոյ զէնքի ընկերներդ կը փնտռես: Ինչպէս այլ առթիւ ալ ըսած եմ քեզի, ես քեզ կանչեցի այստեղ աղբից եւ ապականութիւնից փրկելու համար: Եթէ իմ խօսքը, իբր զէնքի ընկերոջ, արժէք ունի քեզ համար, պէտք է խզես կապերդ այդ այլասերուած տարրերուն հետ: Տարրեր, որոնք ուրիշ հովերով են տարուած. հակառակ պարագային մենք այլեւս զէնքի ընկերներ մնալ չենք կարող»: Վերեւ ակնարկածս ընկերներու ներկայութեան, իմ այս բոլոր յայտարարութիւններուն ոչ մէկ լուրջ առարկութիւն իր կողմէ. իշացած մնաց:

Նախքան Պուքրէշէն մեկնելը, Յարութիկին եւ Գ.Սարգիսեանին հետ եկած էր ինձ մօտ, դարձեալ յայտնեցի, որ եթէ շարունակեն իրենց ընթացքը եւ ինքն ալ մնայ այդ այլասերուածներու կողքին, անոնք արժանի կըլլան ծանրագոյն պատժին, եւ ես մէկը կըլլամ յարմար առթիւ ըսելու, որ թէր դէմ ուրիշ որոշում չունենք...

Կը հաւատամ, որ ինքն ալ կուզէ դուրս գալ այդ կացութիւնէն: Խճճուած է անգամ մը եւ վերջին օրը անկեղծօրէն յայտնեց, թէ կուզէ ազատուիլ այդ շրջանէն: Դժբախտաբար անձնական գործերս այժմ այնքան փայլուն չեն, բայց փոքր ինչ եթէ գործերս լաւանան, իմ սեփական միջոցներով պիտի փորձեմ փոխադրել զինքը այլուր, որովհետեւ այսօր ալ իմ ամբողջ մտահոգութիւնս է փրկել այդ մարդուն, բան մը, որ կարելի է միմիայն զինքը այդ շրջանէն հեռացնելով: Թէեւ, ի հարկէ, փրկութիւնը նախ իրանից է կախուած:

Ամէն պարագայի, եթէ ես ընդհանուր] ժողով²⁰ գացած ըլլայի, իր մասին իմ տեսակէտս պիտի ըլլար վերջին պատահութիւնն մը եւս տալ, որոշելով, որ «Դաշնակցութեան ընդհանուր] ժողովը կարգի կը հրաւիրէ ընկ. Նժդէհին, պահանջ դնելով խզել ընդմիջտ իր կապերը այդ շրջանի ըմբոստացած տարրերուն հետ, մասնաւորաբար այն տարրերուն հետ, որոնք երբեք ալ չեն կրնար մուտք գործել Դաշնակցութեան մէջ, որից յետոյ եթէ ան շարունակէր գործակցութիւնը այդ այլապէս անհնարուն հետ, մեքենաբար կարտաքսուի կուսակցութիւնէն»:

Ես Նժդէհին արտաքսման լուրը ստանալուն պէս կարճ նամակ մը գրեցի իրեն, մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ. «Սիրելի Գարեգին, իմացայ քո արտաքսման լուրը. ինձ չէ կարող ցաւ չպատճառել այդ որոշումը: Բայց ինչո՞ւ դուն քեզ այդտեղ հասցրիր: Դու չուզեցար լսել քո զէնքի ընկերոջը: Այս փաստի առաջ դժուարանում եմ քօնկրեալ ոեւէ բան գրել քեզ. ես խնդրում եմ հաւասարակշռութիւնդ պահես եւ լուռ տեղդ նստես. տեսնենք ի՞նչ պիտի անել»²¹:

Նա ինձ յայտարարում է, թէ այս նամակս չէ ստացել, իսկ միւս կողմից իր հովանաւորած մամուլի մէջ այնպիսի այլանդակ դիրք է բռներ, որին հանդուրժել կարելի չէ: Այդ մամուլը անվայել, անթոյլատրելի պայքար մը սկսած է Ռուբէնին դէմ²², որուն ներքին էութիւնը յար եւ նման է միհրանականութեան: Միհրանական շարժման ժամանակ եւս, Համբարձում] Առաքելեանը²³ ուզեց այդ շարժման գաղափարական հագուստ հագցնել՝ պատրուակ ծառայեցնելով նախագիծը: Պայքանի մէջ ծայր տուած այդ շարժման համար ալ նոր Առաքելեան մը պիտի ծնի եւ անոր գաղափարական կերպարանք տայ, մինչդեռ տակը պարզապէս միհրանականութիւն է²⁴:

Մի նեղացիր, եղբայրս, որ այս առթիւ մի քիչ էլ քեզ դիպչեմ: Խոսքս կը վերաբերի Կոմսի յուշերուն, որ տպեցիր «Վէմի»²⁵ մէջ, քու ալ յաւելումովդ: Այդ գրութեամբ կարծէս թէ ուզած եք Ռուբէնին ցոյց տալ իբր միակ յանցաւոր Մշոյ ջարդերուն եւ այլն: Ինչո՞ւմն է, սակայն, Ռուբէնի մեղքը, որ ան չէ կարողացա՞ւ հազարանգր տալ Մշոյ ժողովուրդին, թէ իրկուն պիտի ջարդեն եւ չէ կարողացա՞ւ ի գէն հրավիրել անոր: Բայց, ըսէ, տեսնեմ, Դաշնակցութիւնը կարողացա՞ւ կանխատեսել այն բոլոր ջարդերը, զոր տեղի ունեցան յետագային եւ կրցա՞ւ հայ ժողովուրդին ի գէն գոռալ:

Տամ նաեւ Վանի օրինակը: Ծիշտ չէ, որ Վանի ղեկավարութեան ի գէն հրաւիրողը Արամն²⁶ է եղած: Ապստամբութիւնէն նոյնիսկ մէկ շաբաթ առաջ Արամը, Վուստեանը²⁷ եւ Իշխանը²⁸ ճնշում բանեցուցած են զինուորացուներուն վրայ, որ ներկայանան զինուորական իշխանութեան: Անոնց հիմնական մտահոգութիւնն է եղած միայն եւ միայն յետաձգել հաւանական ջարդերը: Իսկ երբ Շատախ զրկելու պատրուակին տակ Իշխանին կը սպաննեն Հերս²⁹ գիւղին մէջ, եւ գիւղացի կին մը լուր կը բերէ այդ մասին, միւս կողմէն ձէվդէթը³⁰ վար կը դնէ Վուստեանին, քիչ էր մնում Արամն էլ ընկնէր նոյն այդ թակարդին մէջ, եթէ Գէորգ ձեռածեանը³¹ արգելք չըլլար իր մեկնումին: Ահա այդ պայմաններուն տակ է, որ Վանի երիտասարդութիւնը կը հարկադրէ Արամին անմիջապէս գէնքի դիմել:

Առնենք Տրապիզոնի օրինակը: Նոյն վայրի կ.կօմիտէն չէ՞ր որ զինուած ուժերուն հրահանգում էր անձնատուր ըլլալ³²:

Անցնենք կոիւններու շրջանը: Դուն չե՞ս գիտեր, թէ ինչպէ՞ս Բե[ր]կրի Գալայում, Վանի նահանջի ժամանակ, շատ թանկագին եւ քանիցս մահաւան դուան առաջ կանգնող ընկերներ խուճապի մատնուեցան ու Անդրանիկն անգամ ամբողջ բանակով թափեց եւ հեռացաւ:

Չե՞ս յիշէր նոյնպէս Կոմսի պարագան, որ Մուրադի եւ Սեպուհի հետ Թիֆլիզէն անցաւ Հիւսիսային Կովկաս ճիշտ այն պահուն, երբ ամբողջ երկիրը թուրքերուն հետ կռիւի էր բռնուած. Կոմսը, որ Արեւմտեան խորհուրդի անդամ ալ էր³³:

Ասա, խնդրեմ, եթէ մէկը դուրս գայ եւ մամուլի սեփականութիւն դարձնէ այս ամէնը, ի՞նչ կը շահէ Դաշնակցութիւնը եւ Հայ ժողովուրդը:

Ու երբ այս ամէնը գիտենք, գիտենք նաեւ որ մարտահրաւերի կոչ ոչ մէկ տէր չէ եղած, այլ տեղ-տեղ դէպքերն է, որ հարկադրէր են զէնքի դիմելու: Կարելի՞ է Ռուբէնը միայն մեղադրանքի ակնարկին վրայ նստեցնել, այն առարկութեամբ, որ Սուշը ոտքի չէ հանած³⁴:

Եւ, վերջապէս, ասա, խնդրեմ, Սիմօն Զան, ի՞նչ բանի կը ծառայէն այդ յուշերը: Պատմութեան Համար կուզէք գրի առնել, թէ՞ սերունդ դաստիարակելու համար: Եթէ պատմութեան Համար է՝ հրապարակելը վաղաժամ է, իսկ եթէ սերունդ դաստիարակելու համար է՝ վնասակար:

Արդեօք նման յուշերը մէկքի իրենց բաժինը չունեն՞ն, որ Պալքանի այլասերած մամուլը նոյնիսկ Գէորգ Չավուշի սպանութիւնը Ռուբէնին վզին փաթաթելու անմարդկային լրբութիւնը կունենայ: Արդ յուշերու ազդեցութեան տակ չէ՞, որ այսօր ընկերոջ (°) մը վարկաբեկելու, հարուածելու ներքին որոշումով, Տարօնակա-նութիւն կը խաղցնեն եւ կը Զանան ճեղք բանալ կուսակցութեան մէջ:

Եւ, վերջապէս, մէկ բան գէթ մեզի Համար. պարզուած չէ՞ արդեօք, որ 914-915-ի շրջանին Դաշնակցութեան միակ ընդհանուր գիծն է եղած կանխել Հունական վտանգները³⁵ եւ երբէք առիթ չէ տալ թշնամիին արագացնելու բնաջնջման իր ծրագիրներուն գործադրութիւնը:

Սիմօն Զան, իմ Համոզումով կուսակցութեան ժառանգները մարմիններու անդամները չեն միայն, այլ այն բոլոր Հին ու նոր ընկերները, որոնք նոյնացած են կուսակցութեան Հետ իրենց անցելով եւ ներկայով: Ահա թէ ինչու կան ընկերներ, որոնք մեծ զգուշութեամբ պէտք է շարժեն իրենց գրիչները, որովհետեւ մեր բոլորիս ալ ցաւը, մտահոգութիւնը մէկ է, պահել կուսակցութիւնը եւ եթէ պիտի մեռնի Հակառակ մեր Զանքերուն՝ նա մեռնի պատուով:

Անցնենք մի այլ նիւթի: Դա քեզ ծանօթ դէպքն է: Ոչ որոշումն էր ինձ ծանօթ, եւ ոչ ալ մանրամասնութիւններն են ծանօթ ինձ մինչեւ այժմ: Կը յայտարարեմ քեզ, իմ ընկերոջս, որ ես զայրացած եմ միմիայն վայրի եւ ամբոխավարական այն եղանակի Համար, որով տեղի ունեցաւ այդ դէպքը: Բայց ես մէկն եմ անոնցմէ, որ իբր[եւ] կուսակցական կը վերցնեմ պատասխանատուութեան իմ բաժինս, առանց իմանալու մանրամասնութիւնները: Կը յիշե՞ս, ռուս եւ ճափոն պատերազմի ժամանակ, երբ մինչ մէկ կողմէն ցարերու կառավարութիւնը մեր դպրոցները կը փակեր, մեր եկեղեցական կալուածները կը գրաւէր եւ կողակներու ձեռքով Հարիւրաւոր անմեղ դիակներ կը փռէր անդին, Հայ կոչնակը Բազու Բարապետի հրապարակում մաղթանք կը կարգար ռուսական զէնքի յաջողութեան համար: Ու ժամհարեանն ու ինչօն էին, որ աղօթողներու մէջ ռուսներ կը նետէին իբր բողոքի արտայայտութիւն, մինչեւ 20 վիրաւոր եւ սպանուած թափելով այնտեղ: Այդ դէպքի առթիւ ի՞նչ եղաւ վերաբերմունքը կուսակցութեան իսկական տէրերուն եւ ղեկավարներուն: Անոնք թեթեւ պատիժներ միայն սահմանելով, Հաստատեցին, որ յեղափոխական զայրոյթը արգարացի էր նման քայլ մը առնելով³⁶:

Անցնենք ընդհանուր ժողովը սարքովի ըլլալու պատմութեան: Նախորդ էջերուն մէջ ակնարկածս Հանդիպման բոլորի ներկաութեան Նժդէ՛՛՛ը ոչ մի լուրջ բան չասեց, բացի ընդհանուր ժողովը սարքովի ըլլալու մասին: Բայց այս ուղղութեամբ շատ տեղերէ լսած եմ դժգոհութիւններ: Բայց մի՞թէ չենք կարող ընդունել, որ փաստը կատարուած է եւ այդ փաստի առաջ ոչ մէկ պատասխանատու դաշնակցական պէտք չէ խախտի Հեղինակութիւնը մեր մարմինն, տարածելով նման խնդիրները կուսակցական շարքերուն մէջ:

Դուն պիտի Հարցնես, թէ Հապա ի՞նչ է քու կարծիքը: Գրեմ նաեւ իմ կարծիքներու եւ անելիքներու մասին: Դուն գիտես, որ ինձ է չի պակսի քաղաքացիական արիութիւնը ըսելու այն ամէնը՝ ինչ որ ես կը մտածեմ: Բայց զիս մտահոգողը մէկ բան է միայն: Զիրար գզգզելով, կազմակերպութեան թշնամիներուն, քանդել ուղղողներուն պէտք չէ սնունդ մատակարարենք:

Գրեմ, սակայն, թէ ի՞նչ է իմ կարծիքս, իմ տրամադրութիւնս, իմ ցանկութիւններս ու իմ դէրս:

Դուն պէտք է գիտնաս, որ ես սկզբից հրաժարեցի մարմնի մէջ մտնել եւ յետոյ ետ առի Հրաժարականս, Հակառակ այն կարգ մը որոշումներուն, որոնք իմ կարծիքով անթոյլատրելի էին Դաշնակցութեան ընդհանուր ժողովի մը համար: Կը

բերեմ միայն մի քանի օրինակ, մնացածները համարելով երկրորդական ինձ համար:

Առաջինը այն է, որ ՀՅԴ ընդհանուր ժողովը ցանկութիւն է յայտնած, որ ընկերները գրաւոր կապ չէ պահին անձնական գետնի վրա, կուսակցական խնդիրներու առթիւ: Այս ցանկութիւնը եթէ իբրեւ որոշում քուէարկուած ըլլար, բնական կերպով մարմիններու կողքին պէտք է կազմակերպուէր գաղտնի ուստիկանութիւն մը, որպէսզի հետապնդման ենթարկէր ընկերներու ներքին կապերը:

Երկրորդը այն հակասական որոշումն է, որ տուած են երկրի հետ կապի խնդրի առթիւ պատահած դժբախտութեանց գլխաւոր յանցաւորի՝ Եղիշէի³⁷ մասին:

Երրորդը այն է, որ ՀՅԴ ընդհանուր ժողովը³⁸ այն օրին է հասեր, որ, բացի Ռուպինայէն³⁹ եւ Լիպարիտէն, խորհրդակցական ձայնով ուրիշ ոեւէ ընկեր իր մէջ ունենալու հնարաւորութիւն չէ ունեցած:

Կուսակցութիւնը դէպի կենտրոնացում առաջնորդող միւս որոշումները ինձի համար երկրորդական նշանակութիւն ունին, բաղդատած այն բարոյական մթնոլորտին, որուն մէջ կայացած է ընդհանուր ժողովը:

Այո, այդ բոլոր պարագաները չեն կրնար ճշող տպաւորութիւն չէ թողուլ ինձ վրայ: Ընդհանուր ժողովի կազմակերպիչները պէտք է չափէին իրենց ուժերով, որպէսզի աւելի լայն թիւով մարդկանց հնարաւորութիւն տրուէր մասնակցելու ընդհանուր ժողովին: Այս թերացումը այսօր շատերը կը բացատրեն կանխամտածուած, դիտումաւոր: Բայց ինչքա՞ն ճիշտ է՝ ես չէ գիտեմ:

Ընդհանուր ժողովէն առաջ, թէ՞ ընթացքին, ես Բիւրօյին ուղղուած նամակներ գրեցի: Թէեւ նամակներն ուղղած էի Բիւրօյին, բայց չէի ենթադրեր, որ իմ այդ նամակները կարգացուելու չեն ընդհանուր ժողովին մէջ, մասնաւոր այն ատէն, երբ իմ թեկնածութիւնը կը դրուի մարմնի համար: Ես այդ նամակներովս որոշ տեսակէտներ պարզած էի եւ նոյնիսկ պահանջած, որ յետաձգեն ընդհանուր ժողովը, այդ հաւաքման տալով խորհրդակցական բնոյթ:

Այս երեւոյթին համար էլ դժգոհ եմ անշուշտ: Բայց կը կրկնեմ, փաստը կատարուած <է> արդէն:

Ու այս ամէնէն յետոյ ի՞նչ բանի մէջ ես գտնեմ դէրս: Լինեմ մարմնի մէջ, թէ մարմնէն դուրս, պիտի ձգտիմ իմ բոլոր հնարաւորութիւններովս հարթել բոլոր այն թիրիմացութիւնները, որոնք ներսէն կը կրծեն մեր կուսակցութիւնը: Իմ համոզումն է, ձգտումն է եւ այս ուղղութեամբ դիմած եմ նաեւ մարմնին, որ Դաշնակցութիւնը պիտի ղեկավարուի հեղինակաւոր ընկերներու եւ մարմիններու համագործակից աշխատանքովը, որ ղեկավար, հեղինակաւոր ընկերը նոյնքան պատասխանատու է <իր> շրջանի կուսակցական աշխատանքներուն համար, ինչքան ոեւէ մարմնի անգամ, որով բոլոր հիմնական խնդիրները պէտք է լուծուեն ու գործադրուեն այդ ընկերներուն <աջ>ակցութեամբ ու գործակցութեամբ:

Ես հաւատացած եմ, որ բոլոր այն դաշնակցականները, որոնք դեռ կը հաւատան, թէ դէր մը ունի կատարելիք այս կուսակցութիւնը հայ իրականութեան մէջ եւ <սա>ւնսիրտ կը դատեն ամէն ինչ, դուրս պէտք է չարտեն <ի>նչ որ հետեւանքն է անհատական դաւանութիւններու «եւ» պարզ ու շեշտակի մարմիններու եւ հեղինակաւոր ընկերներու առաջ պիտի դնեն այն բոլոր խնդիրները, որոնք պիտի <ծ>առայեն Դաշնակցութիւնը փրկելու եւ ոչ թէ քանդելու:

Ներկայի իմ անձնական գրութիւնը այնքան փայլուն չէ: Բայց յոյս ունիմ, որ մօտիկ ապագայում հնարաւորութիւն կունենամ ոտքս դրելու թէ Եգիպտոս, թէ Բարիզ, եւ թէ գուցե Շանթի եւ Աղբալեանի բնակած վայրը⁴⁰:

Իմ կարծիքս եղած է եւ կը մնայ, որ կուսակցութեան ժառանգները միմիայն մարմիններու մէջ գտնուող ընկերները չեն եւ ոչ ալ միմիայն մարմինները: Բայց միեւնոյն ժամանակ հիմնական կարծիքս է, որ հեղինակաւոր եւ պատասխանատու ընկերները նոյնքան պատասխանատու են իրենց գործունէութեան, թաքթի եւ վարմունքի համար, որքան մարմնի մէջ գտնուողները:

Վերջացնելով նամակս, Սիմօն Զան, դաւանութեամբ լեցուն, առաջներումս մթութիւն, մեր ընկիւքները քաղաքական մարզի վրայ այնպէս մը դասաւորուած, որ ներկայ խմորումներու ընթացքին սուպեկտիվ շատ չնչին բան կարող ենք ընել մեր ուժերով: Այս պայմաններում ի՞նչ կը մնայ մեզ ընել, եթէ քանի մը տասնեակ ընկերներ ալ չէ կարողանանք զիրար հասկնալ եւ զիրար զգոգնել:

Շուտով կը լրանայ Դաշնակցութեան յիսնամեակը: Մեր բոլոր ճիգերը կենտրոնացնելով այդ յիսնամեակի առթիւ՝ դուրս պէտք է գանք աւելի ուժեղացած եւ կենսունակ, քանի որ մեր ժողովուրդի փրկութեան միակ ապաւենը Դաշնակցութիւնն է այսօր:

Յամբիւրներով քո Դրօ

Գ.Ե. Նժդէհը մեկնելուց առաջ, Գ.Սարգսեանին միջոցաւ լուր էր դրկած, թէ նոր տարին, երբ կը վերջանան իրենց ձեռքը գտնուած ակումբներուն վարձակալական պայմանաժամը, պիտի յանձնուին օրինաւոր մարմիններուն, ինչպէս նաեւ դրամները:

Կը կատարի՞. անկե՞ղծ է՝ արդեօք. Հնարաւորութիւն կունենա՞յ. ապագան ցոյց պիտի տայ:

ՀՅԴ կենտրոնական արխիւ (Բոստոն), Ֆոնդ Սիմոն Վրացյան, թղթածրար 15, դործ 45: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթութիւններ

1. Սիմոն Վրացյան:

2. Գարեգին Նժդէհ:

3. Հայկ Ասատրյան (1900-1956) - Հայ Հասարակական-քաղաքական գործիչ, փիլիսոփա: Մասնակցել է 1921թ. փետրվարյան ապստամբութեանը, այնուհետեւ բնակութիւն Հաստատել Բուլղարիայում եւ Ռումինիայում: Ավարտել է Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցը եւ Պրահայի Համալսարանի փիլիսոփայութեան բաժինը, փիլիսոփայական գիտութիւնների դոկտորի կոչումով: Համագործակցել է Գարեգին Նժդէհի հետ: Նմբագրել է պարբերականներ, հատկապէս նշանավոր «Ռազմիկ» կիսաշաբաթաթերթը, Նժդէհի հետ միասին (1937-1944): Համատեղ հիմնադրել եւ քարոզել են Տարոնական շարժում կամ Տարոնականութիւնը Հայրենասիրական գաղափարական Հոսանքը, տպագրել «Յեղ եւ Հայրենիք» ամսագիրը: Գործուն մասնակցութիւն է ունեցել Փաշիստական այն քարոզչութեան ժխտման գործում, որի Համաձայն իբրեւ թե Հայերը ոչ թե Հնդեվրոպական, այլ սեմական ծագում ունեն, եւ որը կարող էր սպառնալիք դառնալ Հայերի ջարդի Համար, ինչպէս այդ տեղի ունեցավ Հրեաների հետ: Հայկ Ասատրյանը Հանդես եկավ «Հայաստան-Արիական նախագիրք Առաջավոր Ասիայում» գրքով, որի առաջին մասը լույս է տեսել Նժդէհի առաջաբանով, իսկ երկրորդ մասը մնացել է անտպ:

Հ.Ասատրյանը զբաղվել է կուսակցական գործունեութեամբ, եղել է ՀՅԴ Բալկանների կենտրոնի անդամ, ունեցել է տարածայնութիւններ գործընկերների հետ, որի արդյունքում հեռացվել է կուսակցութիւնից (1935թ.):

Տարոնական շարժման ծավալման շնորհիվ, նշել է Ասատրյանը բանտային Հարցաքննութեան ժամանակ, Բուլղարիայի դաշնակցական կազմակերպութիւնը կազմալուծվեց եւ Հարեց մեր շարժմանը:

1944թ. Բուլղարիայում ձերբակալվել է «Սմերչի» կողմից, դատապարտվել է տաս տարվա ազատազրկման եւ մինչեւ 1955թ. տառապել խորհրդային բանտերում: (Ваце Овсепян, Гарегин Нжде и КГБ, Ер., 2001, с.82-86, 179-183: Մուշեղ Լալայան, Տարոնական շարժումը: Հայկ Ասատրյան, Երեւան, 2002, էջ 22-26):

4. Վահան Մազմանյան:

5. ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի անդամ Հովհաննես Դեւեջյանը խորհրդային բանտարկութեան ժամանակ, 1947թ. օգոստոսի 28-ին տվել է հետեւյալ ցուցմունքը. «Քարոզելով «Յեղակրոն» գաղափարը, Նժդէհը Բուլղարիայում գրավեց ինչպէս դաշնակցականների կենտրոնական կոմիտեն, որի անդամ էին ինքը՝ Նժդէհը, նրա գործակից Հայկ Ասատրյանը եւ բարեկամ Հովհաննես Օվանեսովը, այնպէս էլ դաշնակցականների բուլղարական կազմակերպութեան մեծամասնութիւնը: Նժդէհի եւ Հայկ Ասատրյանի գործունեութիւնը հետաքննելու Համար Բյուրոն Ռումինիայից Բուլղարիա գործուղեց Դրո Կանայանին, Հունաստանից՝ Գաբրիել Լազյանին, երկուսն էլ Բյուրոյի անդամ, որոնք տեղում ուսումնասիրելով գործը, կուսակցական տույժի ենթարկեցին Հայկ Ասատրյանին»: «Յեղակրոնի» կողմնակիցները չենթարկվեցին այդ որոշմանը, ուստի Բյուրոն կուսակցութիւնից հեռացրեց 15-20 մարդու, այդ թվում Նժդէհին: Այնուհետեւ Դեւեջյանը ծանու-

ցում է, որ ինքը բարեկամական Հարաբերություններ չի ունեցել Նժդեհի հետ՝ սկսած 1923թ., եւ որոնք աստիճանաբար ավելի են խորացել:

Նույն թվականին Դեկտյանի վերաբերյալ Հարցաքննվել է նաեւ բանտարկյալ Նժդեհը, որը սակայն, մեզ հետաքրքրող Հարցերին չի անդրադարձել: (Ваце Овсепян, Гарегин Нжде и КГБ, Ер., 2001, с.15-20):

6. Նժդեհը ԱՄՆ-ում գտնվել է 1933-1934թթ.: Աշխատանք է տարել ՀՅԴ 12-րդ ընդհանուր ժողովի (Փարիզ 1932թ.) որոշումների կեսագործման ուղղությամբ, այն է՝ «Հայ երիտասարդ սերնդի կազմակերպումը ապակուսակցական հողի վրա»: Նժդեհի գաղափարական-կազմակերպական գործունեությունը արդյունքը եղավ երիտասարդական ցեղակրոն կազմակերպությունների ստեղծումը: Ցեղ, ցեղակրոն, ապա նաեւ տարոնականություն (վերջինը Հայկ Ասատրյանի հետ միասին) հասկացությունների հիմքում դրվում էր Հայրենասիրության ոգով երիտասարդության եւ ամբողջ ազգի դաստիարակությունը: Շուտով Ամերիկայի ցեղակրոն կազմակերպությունները վերանվանվեցին երիտասարդական կազմակերպության՝ Փաշխուտական ռասայական տեսություն հետ չնույնանալու եւ սահմանազատվելու համար:

Ընդ որում եղել են նաեւ ցեղակրոն շարժումը չընդունողներ եւ մերժողներ: Օրինակ, այդ մասին բանտում Հարցաքննության ժամանակ ցուցմունքներ է տվել պատմաբան-բանասեր Սիրունին (Հակոբ Չոլոյանը), ավելացնելով, որ շարժումը լայն տարածում չունեցավ ինչպես կուսակցության մեջ, այնպես էլ նրանից դուրս: (Ваце Овсепян, Гарегин Нжде и КГБ, Ер., 2001, с.138-143):

Բանտային հոգվածներից մեկում Նժդեհը լավագույնս լուսարանել է ցեղակրոն շարժման կազմակերպման շարժառիթներն ու նշանակությունը: Ես, գրել է Նժդեհը, «Հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգությամբ» ձեռնարկեցի երիտասարդության կազմակերպման գործը, նրան համարելով «ամենակարող վերակերտիչ գործոն», երիտասարդ սերունդ, որը ծնված լինելով Հայրենիքից դուրս եւ հեռու, իր տրամադրություններով դարձել էր մտահոգող: Իսկ գործը Ամերիկայից սկսելու կապակցությամբ գրել է, որ այնտեղ հայտնվել էր գաղութահայրենասիրական ամենամեծ զանգվածը, եւ որ այդ երկիրն օժտված էր ամենակույլ ու ձուլող հատկությամբ: (Պարեգին Նժդեհ, Երկեր, Հ. 2, Երեւան, 2002, էջ 441-446):

7. Ներսես Աստվածատուրյան (ծնվել է Կոստանդնուպոլսում, մահացել խորհրդային բանտում)- բուլղարահայ կուսակցական-հասարակական գործիչ, ունեցել է առեւտրական գործունեություն: Աշխատակցել է Հայկ Ասատրյանի եւ Պարեգին Նժդեհի հետ: (Մուշեղ Լալայան, Տարոնական շարժումը: Հայկ Ասատրյան: Երեւան, 2002, էջ 26-27):

8. Արամ Հակոբյանի մասին տվյալներ ենք հանդիպել ՀՅԴ Բաղկանների կենտրոնի անդամ Ասատուր Պետիկյանի հուշերում, որ տպագրվել են 1933թ.: Արամ Հակոբյանը, գրել է Պետիկյանը, օրինակելի կուսակցական գործիչ էր Ֆիլիպեում, ապա Սոֆիայում: Նա այնտեղ էր, որտեղ գործ կար՝ կուսակցական մարմիններից մինչեւ ընթերցարան-մատենագրարներ: («Հայրենիք», 1933, N 5, էջ 109):

Արամ Հակոբյանի անունը հիշատակվում է նաեւ Նժդեհի «Դանակցություններ Բուլղարիայում» բանտային հոգվածում (1947թ.), որպես պատերազմի ժամանակ Բուլխարեստում Դրոյի հրավիրած ժողովի մասնակից:

9. Օնիկ Մխիթարյան - «Նոր խոսք» թերթի (Սոֆիա, 1932-1943) խմբագիր:

10. Թափառական- Գ.Հալաճյան:

11. Հովհաննես Դեկտյան (1886-անհայտ)-1921-1945թթ. ապրել եւ աշխատել է Բուլղարիայում եւ Ռումինիայում: Զբաղվել է մանկավարժությամբ, վարել է կուսակցական գործունեություն, տպագրել է հոգվածներ դաշնակցական մամուլում: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գործակցել է Դրոյի հետ:

1955թ. բանտարկությունից ազատվելուց հետո մեկնել է Արգենտինա, որտեղ տպագրել է (Արմեն Սեւան գրական կեղծանունով) «Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիները Պարեգին Նժդեհի հետ» գիրքը: (Պարեգին Նժդեհ, Երկեր, Հ. 2, Եր., 2002, էջ 504):

12. Համո (Համազասպ) Օհանջանյան:

13. Քրիստափոր Միքայելյան (1859-1905)- Հայ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից: Զոհվել է Աբդուլ Համիդի ահաբեկումը կազմակերպելիս ինքնաշեն ռումբի փորձարկման ժամանակ:

Ռուսներին պատրաստումը եւ գործարկումը կապված է «Փոթորիկ» անունը կրող կոմիտեի հետ: Այն ստեղծվել էր 1901թ. Ֆիլիպեոս (Բուլղարիա) «Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմին» կողմից: Նպատակը ազգային-ազատագրական շարժման համար հանգանակութուն (հայ հարուստներից) կատարելն էր՝ զենք ու զինամթերք հայթայթելու նպատակով (հարցը քննարկվել էր ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովում 1898թ.): Կոմիտեի ղեկավարը Քրիստափոր Միքայելյանն էր, որը 3-րդ ընդհանուր ժողովում (Սոֆիա, 1904թ.) զեկուցել է կոմիտեի գործունեության առաջին արդյունքների մասին: (Միքայել Վարանդեան, ՀՅԴաշնակցութեան պատմութիւն: Եր., 1992, էջ 267-270):

14. Պեյո Յավորով (Պ.Կրաչով, 1878-1914)- բուլղար բանաստեղծ, Թուրքիայի կողմից 1890-ական թվականներին կազմակերպած հայկական կոտորածների անմիջական տպավորութեամբ գրել է «Հայեր» նշանավոր բանաստեղծութունը:

15. Գաբրիել Լազյան:

16. Դոսար - դոսյե (Յոսե)՝ գործ:

17. Ս.Ս.-ի ով լինելը չհաջողվեց պարզել:

Հայ եւ ընդհանրապես կովկասցի ուսանողները ոչ միայն մասնակցում էին ուսանողական եւ հեղափոխական կազմակերպությունների գործունեությունը, այլեւ շատ հաճախ իրենք էին հիմնում այնպիսի խմբակներ, որոնք մեծապես բաղկացած էին իրենց հայրենակիցներից։ Այդպիսի մի խմբակ գործում էր Պետերբուրգում, որը ժանդարմական հաշվետվություններում անվանվում էր «վրացական»։ Ա.Հովհաննիսյանը այն նույնացնում էր «կովկասցիներ» կոչված խմբակի հետ եւ նշում, որ երկու դեպքում էլ, ամենայն հավանականությամբ, խոսքը գեմյելվոյցիների այն խմբակի մասին է, որ 1873թ. հիմնադրել է Իգնատի Իոսելիանին։ Խմբակի գործունեությունը հայերից մասնակցել են Արշակ, Օլգա եւ Վառվառա Սաֆարյանները։² Խմբակի մեջ աչքի ընկնող դեր է կատարել նաեւ Օ.Քանանովան։ Հետաքննությունը պարզվել է այս խմբակի գործունեությունը մասնակցած մի շարք այլ հայ ուսանողների անուններ եւս։ Նրանցից էին Ստեփան Վերմիչեւը, Խուդաբաբովը, Սանդրո Եվանգուլյանը եւ Դավիթ Այվազյանը։³ 1889 թվականով թվագրված մի շրջաբերականից տեղեկանում ենք, որ թեպետ Դ.Այվազյանը ենթարկվել է ոստիկանության գաղտնի հսկողության, 1874թ. կարողացել է ձեռք բերել արտասահմանյան անձնագիր եւ մեկնել է Ռուսաստանից։ Ոստիկանությանը հայտնի էր նաեւ, որ Այվազյանը 1881թ. ապրել է Փարիզում։ Շրջաբերականում առաջարկվում էր Դ.Այվազյանին հայտնաբերելու դեպքում ենթարկել հրապարակային հսկողություն։⁴ Դ.Այվազյանի մասին մեկ այլ շրջաբերականում նշելով նույն տեղեկությունները եւ նրան հայտարարելով որոնման մեջ, շեշտվում էր, որ հայտնաբերելու դեպքում հայտնել Ոստիկանական դեպարտամենտին եւ Պետերբուրգի նահանգային ժանդարմական վարչությունը։⁵

Ժանդարմերիայի 1883թ. մի փաստաթղթում հիշատակվում է Պետերբուրգում գործող խմբակի մասին, որը կազմված էր կովկասցիներից։⁶ Թե ովքեր են եղել այդ խմբակի անդամները եւ ինչ գործունեություն են ծավալել, դրականություն մեջ եւ արխիվային փաստաթղթերում որեւէ տեղեկություն չի հանդիպում։

Արխիվային փաստաթղթերը տեղեկություններ են տալիս զուտ հայկական կազմ ունեցող մի խմբակի մասին, որը գործել է Պետերբուրգում։ Նրա հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 1884թ. նոյեմբերի 2-ին Հայկ Ալթունյանցի բնակարանում։⁷ Խմբակի մեջ մտնում էին Ալեքսանդր Նազարյանցը, Ալեքսանդր Աբելյանցը, Հայկ Ալթունյանցը, Աբել Ապրեսյանցը, Ալեքսանդր Սաֆարյանցը, Զահանգիր Զամոգեսյանցը, Սմբատ Սարգիս-Բեգլյանցը, Սեւոս Ամերյանցը, Արշակ Կալապարյանցը եւ Լ.Լեոն Գասպարյանցը։⁸ Հավանական է, որ այս խմբակը գտնվել է նարոդնիկությունից հաղափարական ազդեցություն տակ։ Սակայն նրա ազգային կազմը հուշում է, որ նրանք զբաղվել են նաեւ ազգային խնդիրներով։ Այս խմբակի գործունեության մասին որեւէ այլ տեղեկություն չի պահպանվել։

Պետերբուրգում գործող մյուս խմբակը, որ միավորում էր զգալի թվով հայ ուսանողների եւ որոնք հակված էին ազգային հարցերին, հիմնադրվել էր 1886թ.։ Նրա մեջ մտնում էին Անտառային ինստիտուտի ուսանողներ Առաքել Գրիգորովիչ Ղուլյանցը, Գաբրիել Ալեքսանդրովիչ Ռոտինյանցը, Իսայի Զախարեւ Ստեփանյանը, Արշակ Մելքոնով Թաթոսյանցը, Սիմոն Հակոբով Շահումյանցը, Կարապետ Աղաջանով Յուզբաշեւը, Աբգար Ալեքսանդրով Անանովը, Հակոբ Մարգարով Խաչատուրյանցը եւ Քաղաքացիական ինստիտուտի ուսանողներ Գրիգորի Իվանով Արեշեւը, Հովհաննես Մաթեւոսով Տեր-Հովհաննիսյանց Քաղաքնունին եւ Խոսրով Ալեքսանդրով Միրզոյանցը։⁹ Խմբակն ուներ իր գանձարանը, որով օգնում էր հայ ուսանողներին, տարածելու նպատակով ձեռք էր բերում հայկական ամսագրեր եւ հայ

¹ ՌԴՊԱ, ֆ.102, ց.1892, գ.760, թ.2-3:

² Հովհաննիսյան Ա., նշված աշխ., հէջ 25:

³ Նույն տեղում, էջ 25-26:

⁴ ՄԲՊԱ, ֆ.477, ց.3, գ.5, թ.108-109:

⁵ ՌԴՊԱ, ֆ.102, ց.1890, գ.80, թ.116:

⁶ Նույն տեղում, , ց.1883, գ.898, թ.98:

⁷ ՌԴՊԱ, ֆ.1410, ց.2, գ.229, թ.13:

⁸ Նույն տեղում:

⁹ ՌԴՊԱ, ֆ.102, ց.1888, գ.287, թ.9:

գրողների նկարներ, ինչպես նաև Հեղափոխական բնույթի գրականություն: Խմբակը կապեր էր հաստատել Մոսկվայի եւ Կազանի հայ ուսանողների հետ:¹

Մոսկվայում եւ Պետերբուրգում գուտ հայկական կազմ ունեցող խմբակների եւ կազմակերպությունների հանդես վկայում է այն մասին, որ տեղի էր ունենում անցում դեպի ազգային հարցերը: Նրանց ծրագրային փաստաթղթերում փորձ է արվում նարողնիկական գաղափարախոսությունը հարմարեցնել հայ իրականություններից բխող խնդիրներին:

Մկրտիչ Դանիելյան
պատմական գիտությունների
թեկնածու

УЧАСТИЕ АРМЯН В ДЕЯТЕЛЬНОСТИ НАРОДНИЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЙ МОСКВЫ И ПЕТЕРБУРГА

РЕЗЮМЕ

В статье на основе новых архивных документов показывается участие армянской студенческой молодежи в русском народническом движении 70х-80х гг. 19-ого века.

На примере организаций Москвы и Петербурга представляется активное участие армянского студенчества, а также их постепенная идеологическая эволюция.

В итоге они начали основание организаций, имеющих, в основном, национальный состав, которые и стали базой для формирования национально-народнических организаций.

Մկրտիչ Դանիելյան
кандидат исторических
наук

К ВОПРОСУ ИНДУСТРИАЛИЗАЦИИ ВИНОГРАДАРСТВА ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1828-1918гг.

¹ Նույն տեղում:

В трехтысячелетней истории отечественного виноградарства и виноделия особое место занимает период присоединения Восточной Армении к России, ознаменованный бурным развитием этих отраслей хозяйства. Наивысшего подъема она достигла в конце XIX - начале XX вв., благодаря стабильному миру, воцарившемся в Армении после долгих десятилетий персидского ига. В результате развития капиталистических отношений, взвешенной экономической политики внутри страны и устойчивости Российского государства на международной арене, Армения смогла интегрироваться не только во внутренний всероссийский рынок, но и выйти на внешний. Уже в конце XIX в., окончательно завершился период индустриализации виноградарства и виноделия Армении, темпы развития которых были самыми высокими не только на Кавказе, но и во всей России.

Положение в виноградарстве и плодоводстве в начальный период присоединения Армении к России представляло собой следующую картину: общее число садов составляло, в провинциях: Эриванской - 3330, Нахичеванской - 541, в Ордубадском округе 1386, а площади (в халварах), соответственно, 1975, 129 и 247¹. При этом, с каждого гектара садов и виноградников в среднем получили: по Эриванской провинции 7.5ц винограда и различных плодов, а по Нахичеванской - около 2.8 ц. Очень мелкими были и площади садов. Так, средняя площадь одного хозяйства составляла: по Армянской и Нахичеванской провинции 1-12 га и 0.65 га соответственно, а в Ордубадском округе - 0.48 га².*

Все это однозначно свидетельствовало об отсталых способах ведения виноградарства и садоводства в Армении к 1828 году. Далее, несмотря на определенные мероприятия царского правительства, (создание различных компаний, проведение оросительных каналов, ввоз из-за границы лучших сортов технических культур, внедрение передовых технологий и оборудования и т.д.), ситуация коренным образом не менялась вплоть до начала 70-ых годов XIX века.

Это обусловливается низкими темпами развития капитализма как в Армении, так и во всем крае, на начальном этапе не оказывающего существенного влияния на развитие сельского хозяйства в целом, и на виноградарство и виноделие, в частности. Однако, после крестьянской реформы 1870г., на смену чисто потребительскому виноградарству пришли товарно-рыночные формы организации производства. Стали восстанавливаться и расширяться площади под виноградники, а в канун первой мировой войны, отрасль развилась до неузнаваемости и внесла свой серьезный вклад в хозяйство края.

Исследование тенденций изменения размеров площадей и урожайности виноградников, а также валового сбора винограда по Эриванской губернии за период от присоединения Армении к России до первой мировой войны представляет собой следующую картину.³

* один халвар равняется 2,5 га

¹ И.Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской Империи, М., 1852, стр.747.

² И.Шопен, указ. соч., 1852, стр.747.

³ данные взяты: за годы: 1828 - И.Шопен, указ. соч., стр.747; 1870 и 1874 - Очерки виноделия Кавказа, Тифлис, 1875, стр. 563; 1880-1889 - Обзор Эриванской губернии за 1889 г., стр.15; 1881, 1889-1891 - Национальный архив Армении (далее НАА) ф.101, оп.1, д.133, л.6; 1892 - ф.101, оп.1, д.134, л.4; 1894 - ф.101, оп.1, д.135, л.3; 1895-1899 - Л.Першке, Обзор винокуренной промышленности в Закавказском крае за 1899г., Вестник финансов, промышленности и торговли, 1900, N 44, стр.222, 1900-1912 -М.Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ере-

В 1870г., по сравнению с 1828г. площади виноградников с 5868 десятин уменьшаются до 5583 га, т.е. на 4.8%. Причина заключалась в резком повышении цен на хлопок на международном рынке, особенно в 60-е годы¹, вследствие чего лучшие поливные земли и часть существующих виноградников перешли под эту культуру². Некоторый рост наблюдается только с 1874г., причем, если за 1870-1890гг., т.е. в течение двух десятилетий, площади виноградников увеличились всего лишь на 1287 десятин, а валовой сбор винограда на 132.4 тыс. пудов, то за 1890-1900гг., т.е. в течение одного десятилетия площади стали расширяться значительно быстрыми темпами, и прирост составил 1637 десятин, а валовой сбор винограда увеличился в 2.4 раза.

В 1900г. площади виноградников выросли до 8507 десятин, а валовой сбор урожая - до 2664.6 тыс. пудов. По сравнению с 1870г., прирост площадей виноградников составил 52.4%, валовой сбор увеличился в 2.7 раза, а урожайность возросла в 1.8 раза. Таким образом, прирост валового сбора винограда, в основном был результатом экстенсивного фактора, т.е. происходил за счет расширения площадей. Интенсификация производства продвигалась более медленными темпами о чем свидетельствует то, что по сравнению со среднегодовым приростом урожайности и повышалась в среднем, лишь на 2.9 % в год.

В 1913г. площади виноградников составили 10235 десятин, а урожаем перешагнул отметку 5000 тыс. пуд, т.е. в течении 1901-1913гг. площади виноградников по Эриванской губернии (с некоторыми колебаниями по годам) увеличивались на 20.3% со среднегодовым приростом на 1.5%. При этом урожайность возросла на 66.5%, а валовой сбор удвоился. Таким образом, в отличие от предыдущего этапа, медленные темпы расширения площадей сопровождались опережающими темпами роста интенсификации производства, чем и было обусловлено опережение темпов роста общего выхода валовой продукции виноградников.

Анализ данных темпов развития виноградарства в Закавказье и его удельного веса по Эриванской губернии³, показывает, что по сравнению с началом XIX в, в 1913г. число владельцев по Закавказью сократилось на 9.6%, а площади - на 2.7%. Благодаря этому, в расчете на одно хозяйство, средние размеры виноградников увеличились на 10.3%, средняя урожайность выросла на 81%, а валовый сбор винограда на 43.3%. В этот же период доля Эриванской губернии в Закавказье по численности владельцев виноградников выросла с 8.0% до 10.6%, в общей площади возросла с 10.4% до 13.2%, валовой сбор поднялся с 15.2% до 23.7%. При этом средняя площадь виноградников в расчете на одно хозяйство увеличилась на 7.1%, что на 30.9% был больше, чем в среднем по Закавказью.

ван, 1955, стр. 116, 1913 -Кавказский календарь, 1915г., стр. 337; 1914 – Кавказский календарь, 1916г., стр. 87; 1915 - Кавказский календарь, 1917г. стр. 354.

¹ НАА, ф.375, оп.2, д.3,1,5.

² В самом деле в 1830-1860гг. благодаря возвращению армян в Восточную Армению, наблюдалось увеличение площадей под виноградниками, и только после введения акциза на вино и спирт, с 1863г., производство винограда перестало быть достаточно прибыльным, вследствие чего его место стали занимать другие культуры. См. например: И.З.Андраников, Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии. Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе. Выпуск VI, Тифлис, 1896, стр. 31.

³ Данные взяты за годы: 1899 - Л.Першке, указ. соч., стр. 222; 1902 - Кавказский календарь, 1904г., стр. 87-88; 1911 - Кавказский календарь, 1913г., стр. 319; 1913 - Кавказский календарь, 1915г., стр.337; 1914 - Кавказский календарь 1916г., стр. 85 и 1915г. - Кавказский календарь за 1917г., стр.357.

В 1914г. площади виноградных насаждений в Закавказье в целом заметно возросли, “В Эриванской губернии под лозу отводились хлопковые и огородные поля, в Елисаветопольской делинные участки, в Имеретии старые погибшие от филлоксеры виноградные клинья, в Кахетии лоза спускалась все ниже и ниже и захватывала пашни и пустыри, расположенные недалеко от Алазани, в соседнем Елисаветопольском уезде расширялись старые сады”¹. Однако валовой сбор и объемы виноделия уменьшались. Причем, упадок отрасли этого и последующих годов объяснялся вначале плохими метеорологическими условиями 1914г. (только в Эриванской губернии урожайность снизилась до 65.6 пуда с десятины, а валовой сбор на 20-25%)², а затем-антиалкогольной политикой государства и, наконец, начавшейся Первой мировой войной.

Положительные сдвиги в экономике Восточной Армении, особенно в конце XIX и начале XX вв, в первую очередь были обусловлены проникновением товаро-денежных отношений во все отрасли сельского хозяйства и, безусловно, в виноградарство. Однако, в течение всего периода существования Армянской области и затем Эриванской губернии, огромное значение в деле развития виноградарства и садоводства имела проводимая государством взвешенная сельскохозяйственная политика.

В начальный период, для поощрения расширения площадей под сады и виноградники, были введены определенные льготы. Так, например, земельные участки, отведенные под плодовые культуры и виноградники становились собственностью владельцев садов и виноградников. В то же время, с 1834г. на территории Закавказья было введено Положение о садоводстве в Новороссийской губернии от 14 сентября 1828г. Согласно “Положению”, в целях разведения культур южных климатов (винограда и др.) разрешалась передача частным лицам свободных казенных участков³.

С той же целью в 1856-1857гг. был внесен ряд дополнений и изменений в “Устав о сельском хозяйстве”. Так, для поощрения садоводства устав предоставлял право передачи частным лицам земельных участков за счет неиспользованных казенных земель в размере от 5 до 15 десятин, а для индиго и сахарного тростника - до 500 десятин⁴. Предусматривалось также, что, “когда отведенные участки будут иметь на каждые девять кв. сажень одно фруктовое дерево, тогда предоставить в их вечное и потомственное владение с оставлением со времени отвода на десятилетнюю льготу без всякого в казну платежа, а в потверждение, что и по истечению льготных лет, земли их подвергнутся умеренной подати, при отводе земли составлять условия с владельцем о количестве подати, которую он по утвержденным за ним участком платить в казну имеет право”. А согласно ст.14, “Вышеизложенные правила о садоводстве имеют силу и в отношении развития виноградарства...”⁵ Результат этой политики стал весьма ощутим, например, в 1877-1886гг., когда значительно увеличилось количество фруктов и винограда, получаемых частниками с казенных земель⁶

Виноградники и фруктовые сады постепенно стали переходить в частное владение садовладельцев. Борьба за расширение садовых участков стала

¹ НАА, ф.39, оп.1, д.47, л.3.

² Ценные культуры в Закавказье в 1914 году. Кавказское слово, 1.01.1915 г, N 1, стр. 5.

³ Акты собранные Кавказской Археографической комиссии далее (далее АКАК), Тифлис 1878, т. VII, N 139, 144, 145, 146, 147.

⁴ АКАК, Тифлис, 1888, т. XI, стр.766.

⁵ АКАК, Тифлис, 1878, т.VII, стр.766.

⁶ НАА, ф.125, оп.1, д.32, л.4-5.

борьбой за превращение земли в частную собственность. Победителями в этой борьбе становились преимущественно экономически обеспеченные слои населения. К концу XIX столетия гонка за расширение площадей под виноградники достигла такой остроты, что в хозяйствах Араратской долины 43.7% от общей площади земельного фонда уже составляло частную собственность¹.

Виноградарство вошло в число отраслей сельского хозяйства, имеющих особо важное значение в экономической жизни Эриванской губернии. При этом виноградники главным образом были сосредоточены в городе Эривань, Эриванском и Эчмиадзинском уездах, а в Нахичеванском, Сурмалинском, Шаруро-Даралагезском уездах виноградарство оставалось второстепенной отраслью сельского хозяйства.

Анализ данных по природным и экономическим условиям для Эриванской губернии позволил выделить четыре главных виноградарских региона: средний и нижний бассейны реки Карпи (бывший Карпинский магал), Эривань со своими окрестными селами, Зангибасарский и Гарнибасарский участки с центром в селе Камарлу и некоторые участки Нахичеванского уезда.

В последнем регионе виноградарство не имело особого экономического значения, так как уезд находился на окраине губернии, вдали от коммуникаций. Виноград здесь выращивали в достаточном количестве лишь для местного потребления, и не менее половины получаемого урожая шло на приготовление бекмеса. Вино готовили только в армянских селах и то лишь в необходимом для местного христианского населения количестве.

Следует заметить, что Нахичеванский уезд был единственным районом, где христианское население выращивало виноград для виноделия. К сожалению достоверных данных о качестве Нахичеванских вин мы не нашли. Однако сравнительный анализ средней за 1870-1874гг. цены готового вина, позволяет отчетливо выделить регионы относительно дорогих вин. Так, в г. Нахичеване ведро готового вина стоило 1р.20к., в деревнях Али-абад - 60к., Ямхана и Тумбул - 50к., Карахан-беклю - 40к., в других селах по 30-35к.²

Во всех остальных частях губернии виноградарство было направлено на винокурение. А в Эривани, как описывает А.Ломан, виноградники "были распределены вокруг города, а в уезде по долине Аракса, у подножия горы, отделяющей этот уезд от Новобаязетского, но до Аракса они не доходят версты на три, так как почва у берегов солончаковая и болотистая"³.

Данные, характеризующие развитие отрасли по уездам,⁴ показывают, что из года в год площади виноградников расширялись, несмотря на большие затраты, необходимые для закладки и обработки новых насаждений.

Так, если в 1870г. площади под виноградники (в десятинах) по уездам выглядели следующим образом: Эриванский - 2890, Эчмиадзинский - 1239,

¹ О.В.Туманян, Экономическое развитие Армении, ч.1, Ереван, 1954, стр. 168-169.

² Очерк виноделия Кавказа, Тифлис, 1875, стр. 402-414.

³ А.Ломан, указ. соч., стр. 551.

⁴ Данные взяты за годы: 1870 - Очерк виноделия Кавказа, Тифлис, 1875, стр.259; 1887 - ф.113, оп.2, д.69, л.28-30; 1889 - ф.101, оп.1, д.132, л.9-10, 53-54; 1890 - ф.101, оп.1, д.132, л.9-10, д.133, л.6 и об.; 1891 - ф.101, оп.1, д.133, л.6 и об.; 1892 - ф.101, оп.1, д.134, л.4 и об.; 1893 - Обзор Эриванской губернии, 1893г., стр.6; 1894 - ф.101, оп.1, д.135, л.3; 1895, 1899 - Л.Першке, указ. соч., N44, стр. 222; 1900 - Отчет заведующего акцизными сборами Закавказского края о ходе акцизного дела, Ведомости акцизного управления Эриванской губернии, Тифлис, 1901, стр.120; 1902 - Кавказский календарь, 1904, стр. 88; 1910 - Обзор Эриванской губернии, 1911, стр.5; 1911 и 1912 - ф.375, оп 2, д. 3,1,5; 1913 - Кавказский календарь, 1915, стр.337, 1914 - Кавказский календарь, 1916, стр.87; и за 1915 - Кавказский календарь за 1917, стр.357.

Нахичеванский - 1254, то в 1915 г. соответственно - 5438, 2849, 1041, а в Сумалинском уезде 616 и в Шаруро-Даралагезским уезде - 635. Закладывались они и в новых регионах, в частности, в Даралагязе, где до присоединения к России виноградников почти не было. Здесь особенно интенсивно виноградарство развивалось в долине реки Арпа, где к 1890г. площади под виноградниками достигли до 362 десятин. Правда, из 72 населенных пунктов уезда, занимающихся виноградарством, всего в 11 имелись 10 и более десятин виноградников, однако, как показали дальнейшие исследования, эти села отличались разнообразием, аборигенных высококачественных сортов и уникальным микроклиматом, вследствие чего некоторые из них затем стали известными очагами виноделия.

За рассмотренные годы 70-88% от общей площади виноградников Эриванской губернии были сосредоточены в Эриванском и Эчмиадзинском уездах, т.е. в Араратской долине. Здесь же получали большую часть (61-95%) валового сбора винограда губернии. Остальные три уезда вместе взятые, в разные годы, составляя 11-30% от общей площади виноградников, производили 5-39% всей валовой продукции винограда, что свидетельствует о менее интенсивном ведении виноградарства в этих уездах. Причем в этих трех уездах не все села имели виноградники, тогда как во многих селах Араратской долины большая часть земель была занята под виноградники, что и являлось основным источником доходов крестьянских хозяйств.

Делать новые посадки виноградников имели возможность относительно имущие крестьяне, так как освоенный участок мог дать урожай не ранее чем через 3-4 года после закладки виноградника. Так, в конце XIX столетия, для закладки одной десятины виноградника и ухода за молодыми насаждениями до их товарного плодоношения необходимо было вложить от 450 до 500 рублей¹. Такой суммы бедный крестьянин не имел, поэтому, в лучшем случае, виноград и фрукты возделывались на приусадебных участках, примерно на 0.1-0.3 десятинах земли. Вследствие этого, площади под виноградники были распределены между крестьянскими хозяйствами достаточно неравномерно.

Так, по губернии в целом, до 0.5 десятин площадей виноградников имели 73.8% виноградниковладельцев, от 0.5 до одной десятины - 15.9%, от одной до двух - 7.2%, от двух до трех - 1.6 %, от трех до пяти десятин - всего 1% и лишь 0.5 % имели более пяти десятин виноградников. В Эриванском и Эчмиадзинском уездах до 1 десятины виноградников имели 83%, а более 3 десятин - лишь 2.3 % виноградниковладельцев. Причем крестьяне, имеющие до 0.5 десятины виноградников, в основном, были бедняками. В эту группу входили также середняки, и редко - имущие крестьяне.

В регионах, где виноградарство являлось основной отраслью в специализации сельскохозяйственного производства, виноградники были сосредоточены в руках имущих. Причем, в хозяйствах, имеющих более одной десятины виноградников, владельцы были не в состоянии вести хозяйство собственными силами, поэтому они в обязательном порядке набирали наемных работников.

В Армении в конце XIX века 11% состоятельных хозяйств, занимающихся виноградарством, сосредоточили в своих руках более половины виноградников. В 1894 году, если в Эриванской губернии в расчете на одно хозяйство, занимающееся виноградарством, приходилось по 0.5 десятин садов, то на имущие хозяйства приходилось 3 десятины, то есть в шесть раз больше.

¹И.З.Андраников, указ. соч., стр. 154-175.

Такова в основных чертах история индустриализации виноградарства в Эриванской губернии в период за 1828-1915гг. В Армении темпы роста производства шли в ногу с темпами производства остальных регионов Российской империи. За относительно короткое время из кустарного, отсталого средневекового хозяйства виноградарство превратилось в развитую отрасль экономики страны, при этом площади виноградников увеличились почти вдвое, а валовой сбор и урожайность - соответственно в 30 и 16 раз.

Аваг Арутюнян

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ 1828-1918թթ.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսումնասիրված է Ցարական Ռուսաստանի կազմում եղած ժամանակահատվածի համար (1828-1915 թթ.) Արեւելյան Հայաստանում խաղողագործութեան զարգացման միտումները եւ արդյունագործացման պատմութեան որոշակի հարցեր : Ըստ գավառների մանրամասն վերլուծութեան եւ ենթարկվել խաղողի այգետարացքների, նրանցից ստացված ընդհանուր բերքի, բերքատվութեան, այգիների միջին չափսի եւ ճյուղը բնութագրող այլ ցուցանիշների փոփոխման դինամիկան :

Վեր եւ հանվել միջավայրի իրավական եւ տնտեսական այն առանձնահատկութիւնները, որոնց շնորհիվ արդէն առաջին աշխարհամարտի նախօրէին Արեւելյան Հայաստանը հետամնաց, ագրաային խղճուկ իրականութիւնից անցում կատարեց դեպի զարգացած խաղողագործութեամբ տնտեսութիւն, աճի տեմպերով առաջ անցնելով անդրկովկասյան մյուս տարածաշրջաններից : Այդ ընթացքում այգետարացքները աճեցին շուրջ 2, իսկ համընդհանուր բերքը եւ բերքատվութիւնը 30 եւ 16 անգամ համապատասխանաբար :

Ավագ Հարուժիչունյան

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԽՄԲԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

19-րդ դարի 80-ական թթ. մեծ վերելք ապրեց Հայ ազգային-ազատագրական շարժումը : Այդ ժամանակաշրջանում Արեւելյան Հայաստանում Հայ գործիչների կողմից կազմավորվում եւն զինված խմբեր, որոնց նպատակն էր՝ անցնել Արեւմտյան Հայաստան եւ աջակցել արեւմտահայերի պայքարին : Այդ գործիչներից էր Սա-

րգիս Կուկուենյանը, ով 1890թ. սեպտեմբերի 22-ին իր ջոկատով (117 հոգի¹) Կարսի մարզից փորձեց անցնել Արեւմտյան Հայաստան, սակայն, սահմանի մոտ մարտի բռնկվելով թուրքական զորամասերի ու քրդական հեծյալ ջոկատների հետ, պարտվեց եւ նահանջեց: Արդյունքում՝ իր ջոկատի կենդանի մնացած անձանց հետ ձերբակալվեց ուսու սահմանապահների կողմից:

Սարգիս Կուկուենյանի խմբի դատավարութանը, ցավոք, ցասօր, խորը ուսու-մնասիրութան չի արժանացել:

1890թ. աշնանից սկսվեց Ս.Կուկուենյանի խմբի՝ ձերբակալված 43 հոգու նախաքննութունը, որը տեւեց մոտ երկու տարի: 1893թ. ապրիլի 7-ին Կարսում սկսվում է ձերբակալվածների դատավարութունը, որը տեւեց մոտ մեկ ամիս: Ս.Կուկուենյանի խմբի գործի նախաքննութունը վարող ժանդարմական վարչութունը գործին տվել էր քրեական բնույթ², որը չէր համապատասխանում իրականութանը, քանզի այն ուներ քաղաքական բնույթ: Գործի դատաքննութունը իրականացրեց երեւզին շրջանային դատարանը Բողարովի նախագահութեամբ (դատարանը իր ողջ կազմով եկել էր Կարս): Ս.Կուկուենյանի խմբի ձերբակալված անդամների փաստաբանը Գաբրիել Մնացականյանն էր, ով, սակայն, չկատարեց իր՝ պաշտպանական գործունեութունը, քանզի ինչպես նա էր նշում. «Ձեր վճիռն արդէն կայացել է, սրանք աներեւույթ ձեւակառույթի են»³:

Դատաքննութան ընթացքում մեղադրող կողմը՝ դատախազութունը հրավիրել էր 350 վկայի, որոնց մեծ մասը քրդեր եւ թուրքեր էին, անգամ՝ թուրքիայից: «Այնպիսի վկաներ երեւացին, խոսեցին ու վկայեցին, որ մենք չէինք էլ տեսել: Ամեն մեկիս տվել էին 200 էջանոց մեղադրական ակտ», - իր հուշերում գրում է արշավանքի մասնակից Հովսեփ Մովսիսյանը⁴: Վկաների մեծ մասի վկայութունները ակնհայտորեն խեղաթյուրված էին եւ համապատասխանում էին մեղադրող կողմի՝ գործին քրեական բնույթ տալու գծին:

Ամբաստանյալները մերժեցին իրենց ներկայացված քրեական բնույթի մեղադրանքները եւ պահանջեցին, որպեսզի իրենց գործին տրվի քաղաքական բնույթ: «Մենք գնում էինք Տաճկահայաստան մեր եղբայրների վրեժը, նրանց արյունը ծծող քրդերից եւ տաճիկներից հանելու, մենք ուզում էինք միայն օգնութան ձեռք կարկառել այդ դարերով տանջված, խաղաղ ժողովրդին, մենք ուսու կառավարութանը դէմ չէինք, մեզ զարմացնում, ապշեցնում է ուսու կառավարութեան բռնած այդ պախարակելի դիրքը»⁵: Սակայն դատարանը մերժեց ամբաստանյալների պահանջը եւ 1893թ. մայիսի 7-ին կայացրեց իր որոշումը. Ս.Կուկուենյանը դատապարտվեց 20 տարվա ազատազրկման (7 տարի՝ շղթայակապ, ապա՝ մշտական աքսոր), իսկ խմբի մի մասը դատապարտվեց տարբեր տարիների ազատազրկման, իսկ մի մասին էլ՝ ազատ արձակեցին: Մինչեւ դատավարութան սկիզբը մահացել

¹ Կուկուենյանի արշավախմբի թվական կազմի վերաբերյալ հուշագրողների մոտ եղած տվյալները տարբեր են. ձերբակալվելուց հետո, հարցաքննութան ժամանակ Կուկուենյանը հայտնում է (ըստ դատական ամբաստանագրի), որ խումբն ունեցել է 100 մարդ, ի թիվս 20 ձիավոր: Կոստանդին Լիսինյանի ցուցմունքներով՝ 70 հոգի, Ռուբեն Հովհաննիսյանն էլ միեւնույն թիվը մատնանշելով ավելացնում է՝ «եւ 15 ձիավոր»: Արշավանքի մեկ ուրիշ մասնակից Մեսրոպ Վարդանյանը մի փոքր տարբեր թվեր է տվել. «Մենք մնացինք 78, մեզնից 24 ձիավոր էր» (Տես, Դրոշակ, 1930, թիվ 5): «Ոմանք խումբը հաշվում էին 120, ոմանք 150 հոգի, - ասում է մյուս մասնակիցը՝ Հովսեփ Մովսիսյանը, - բայց փաստն այն է, որ մենք չհաշվեցինք վերջնականորեն, թե քան՞ի հոգի էինք: Մոտ քսան հոգի ձիավոր էինք: Ձեռքերը ես էի բաժանում: Ընդամենը հարյուր կտոր զենք էր: Ոմանք եկել էին իրենց զենքերով, ոմանք էլ վերադարձան զենք չլինելու պատճառով» (Տես, Հայրենիք, 1934, թիվ 4, Յովսեփ Մովսիսյանի յուշերը, էջ 88): Նույն Մովսիսյանն իր մեկ այլ հուշով ասում է, թե իրենց խումբը բաղկացած էր «հարիւր տաս հոգուց» (Տես, Դրոշակ, 1930, թիվ 5): Արամայիս Ազնավուրյանի հուշերում խմբի կազմի վերաբերյալ ասված է հետեւյալը՝ «Խումբը բաղկացած էր 85 հոգուց, որից 20-23-ը ձիավորներ էին» (Տես, Հայրենիք, 1937, թիվ 4, էջ 147): Մեզ համար ընդունելի է Դատական ամբաստանագրին կից ամբաստանյալների ցուցակը՝ անուն - ազգանուններով եւ անձնական տվյալներով, ուր նրանց թիվն է 117, Տես, Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ ՀԱԱ), ֆ.4 -4033, ց.5, գ.21, թ.328-335:

² Հայրենիք, Բոստոն, 1934, թիվ 6, էջ 116:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Կուկուենյանի խմբի արշաւանքը, Վիեննա, 1894, էջ 27:

էին խմբի 2 անդամ՝ Մկրտիչ Կարսեցին եւ Սահակ Մինասյանը: «Երբ դատավճիռը լսելուց յետոյ բանտ վերադարձանք՝ նոր միայն զգացինք, որ մենք իսկական բանտարկեալ ենք: Երեք օր հարբածի նման էինք: Երգում, գոռում էինք խենթ ու խելառի պէս՝ չհասկանալով մեր արածը: Յոյն բանտապետը փախչում էր բանտից՝ չլսելու համար մեր ոռնոցը: Երեք օր ետքը եկաւ բանտային վարսավիրը եւ գլուխներին աջ կողմը ածիւնց թողնելով ձախը: Ապա շղթայ զարկեցին մեր ոտներին. գլուխներին դրին գորշ գոյնի թիապարտի գլխարկ եւ հագցրին նոյն գոյնի հագուստ: Բայց ամենից ավելի ազդում էր շղթան: Նրա շոինդից մարում էր մեր հոգին: Մենք այլեւս «կատորժնիկ»-ներ էինք, թիապարտներ»: Դատավճիռը մեծ բողոք առաջացրեց ինչպէս դատապարտյալների, այնպէս էլ հայ հասարակութեան շրջանում:

Ս.Կուկուլեանը եւ իր խմբի անդամները դիմելով, Թիֆլիսի դատաստանական պալատին, բողոքարկեցին Երեւան շրջանային դատարանի դատավճիռը: 1893թ. մայիսի 23-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Դատաստանական պալատի նիստը. պալատի նախագահ՝ Ֆրանցով, անդամներ՝ Վերխովսկի եւ Կարնովիչ, քարտուղար՝ Ամիրխանով, դատախազ Շարինգին, փաստաբաններ՝ Տեր-Ստեփանյան, Օպեչինին եւ Եվանգոլյան²: Երեք օր անց պալատը մերժեց վերաքննիչ գործը, որից հետո գործը տեղափոխվեց Սենատ: Ինչպէս Թիֆլիսի դատաստանական պալատը (26.05.1893թ.), այնպէս էլ Սենատը³ (28.01.1894թ.) անփոփոխ թողեցին Երեւանի շրջանային դատարանի որոշումը: Դատապարտվածներին ամենից ավելի ցավ էր պատճառում ոչ թե բանտարկութիւնը, այլ այն հանգամանքը, որ իրենց դատապարտել են որպէս քրեական հանցագործներ, այնինչ, նրանք իրենց համարում էին քաղաքական գործիչներ:

Բանտից-բանտ տեղափոխվելով, ի վերջո, 1895թ. փետրվարին, նրանց, ում պետք է քրտորէին Սախալին, տարան Օդեսա, իսկ այնտեղից՝ «Յարոլավլ» նավով տեղափոխեցին Սախալին: Այդ խմբի մեջ էր նաեւ Սարգիս Կուկուլեանը, ով Սախալինում անցկացրեց 10 տարի:

1898-1899թթ. Սախալինի արեւելյան ափին գտնվող Ալեքսանդրովսկ կայանում, որտեղ բնակվում էր Ս.Կուկուլեանը, բնակութիւն հաստատեցին ճապոնացիները: Նրանք զբաղվում էին ձկնորսութեամբ եւ մանր առեւտրով ու, գործի բերումով, շփվում էին ուս պաշտոնյաների ու վաճառականների հետ: Սակայն այդ շփումներին խանգարում էր մի հանգամանք. նրանք ուսներեն չգիտէին եւ պետք էր մի մարդ, ով նրանց կսովորեցներ ուսներեն: Այդ գործը հանձնարարվեց Ս.Կուկուլեանին, ով չնչին վարձատրութեամբ, ստանձնեց այդ աշխատանքը: Այս դասերը հոգեկան բավականութիւն ու սփոփանք էին պատճառում ու մխիթարում Կուկուլեանին. «...նրանք ինձ վրայ բարձրից չէին նայում, դեպի ինձ վերաբերում են ոչ այնպէս, ինչպէս սովորաբար Սախալինումն է ընդունված՝ վերաբերուել դէպի կատարելիպէս անպաշտպան, թշուառ, իրավազուրկ տաժանակիրը. ոչ, նրանք ինձ վրա նայում էին, ինչպէս իրենց հաւասար մի մարդու, նրանց հետ եղած ժամանակս միայն գտնում էի, որ մարդկային արժանապատուութիւնս յարգում է, որ ես, տաժանակիր լինելով հանդերձ՝ մարդ էլ եմ...»⁴: «Պետք է խոստովանել,-գրում է Կուկուլեանը, որ ճապոնացի աշակերտներս առանձին ուշագրութիւն էին դարձնում եւ մի տեսակ յարգանքով վերաբերում դէպի այն տաժանակիրները, որոնք Սախալին էին քշուել քաղաքական յանցանքների համար, մանաւանդ, եթէ նրանք ներկայացուցիչներն էին Ռուսաստանում գտնուող մանր ազգութիւնների»⁵: Կուկուլեանը ճապոնացիներին պատմում էր թուրքական լծի տակ արեւմտահայերի ծանր վիճակի, իր խմբի՝ Արեւմտյան Հայաստան անցնելու մասին: «Նրանք ինձ լսում էին խորին ուշադրութեամբ եւ իրենց դիտողութիւններն էին անում,- նշում է Կուկուլեանը: Իմ պատմածների համառօտագրութիւնը նրանք լոյս ընծայեցին ճա-

¹ Հայրենիք, 1934, թիվ 6, էջ 117:

² ՀԱԱ, ֆ.4 -4033, ց.5, դ.21, թ. 35:

³ Հայաստանի Պատմութեան պետական թանգարան (այսուհետեւ՝ ՀՊՊԹ), Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, մ.մ.10795, թիվ 832, թ.7:

⁴ Ս.Կուկուլեան, Վերջին օրերս Սախալինում, էջ 9-10:

⁵ Ս.Կուկուլեան, Վերջին օրերս Սախալինում, էջ 9-10: Նույն տեղում:

պոնական թերթերում»¹: Փաստորեն, այդ աշխատանքը մի փոքր մեղմեց Կուկունյանի հոգեկան վիճակը: Միաժամանակ, նա սովորեց ճապոններեն:

Նրա աքսորականի հոգեվիճակը ավելի բարելավվեց, երբ Սախալինի զինվորական նահանգապետ Լեապունովը նրան նշանակեց կառավարական տպարանի կառավարիչ: Կարճ ժամանակահատվածում Ա.Կուկունյանը կարգավորեց տպարանի աշխատանքը եւ այն սկսեց շահույթով աշխատել: Որպես կառավարիչ նա ստանում էր 30 ռուբլի աշխատավարձ: «Տաժանակիր եւ 30 ռուբլի ռոճիկ Սախալինում՝ դա մի հազուադեպ բախտաւորութիւն է. բայց այս անգամ ինձ 30 ռուբլին չէր հետաքրքրողը, այլ այն, որ ես գրանով մի քայլ էլ առաջ անցայ իմ մարդկային իրաւունքների մեջ»:

Ակսված ռուս-ճապոնական (1904-1905թթ.) պատերազմը փոխեց նրա ճակատագիրը: Ա.Կուկունյանը, որպես կամավոր (ռուսական բանակում կրկին աշխատում էր որպես տպարանի կառավարիչ), մասնակցեց ռազմական գործողութիւններին:

Պատերազմի արդյունքում ռուսական բանակը պարտվեց: Սակայն Կուկունյանը ազատվեց ճապոնացիների կողմից գերեվարվելու վտանգից: Նրան, պատահաբար, ճանաչել էր ճապոնացի մի սպա, ով տարիներ առաջ եղել էր Ա.Կուկունյանի մոտ ռուսերեն սովորած մի աշակերտ: Սպան առաջարկեց Կուկունյանին գնալ Ճապոնիայի Նագասակի քաղաքը եւ տեղի ռուսամտարաններից մեկում աշխատել որպես ռուսերենի ուսուցիչ: Սակայն, Կուկունյանը այլ նպատակ ուներ. «...16 տարիների ընթացքում ես հայրենիքս էի երազել եւ հոգով, սրտով դէպի այնտեղ ձգտել: Այժմ, Կայսերական հրովարտակի համաձայն, ես կամաւոր էի գրուել, մասնակցել կռիւներին, կամաւորների բոլոր պարտականութիւնները, իմ անմիջական իշխանաւորներին ամեն հրամանները կատարել, այժմ իրաւունք ունէի ազատ համարվելու, իրավունք ունէի բաղձալի հայրենիքս վերադառնալու»²: Նա մերժեց իրեն արված առաջարկը եւ Սախալինում մնաց մինչեւ 1906թ. հունիսը:

Ռուս-ճապոնական պատերազմը եւ նրան հետեւած՝ 1905թ.-ի ռուսական հեղափոխութիւնը էական դեր կատարեցին Ա.Կուկունյանի ճակատագրում: Ռուս-ճապոնական պատերազմին կամավորագրված աքսորյալներին ներում շնորհելու (1905թ. հոկտեմբերի 17), ինչպես նաեւ՝ աքսորյալներին ներում շնորհելու (հոկտեմբերի 22) կառավարական հրապարակված մանիֆեստներից հետո, Ա.Կուկունյանը իր ընտանիքի հետ (կնոջ (հայրազգի) հետ ծանոթացել էր Սախալինում) վերադարձավ Կովկաս⁴:

1906թ. օգոստոսին Ա.Կուկունյանը արդեն Թիֆլիսում էր, իսկ երկու ամիս անց, հոկտեմբերի 30-ին, վերադարձավ իր հայրենի գյուղը՝ Նիժ: «Հետագային, 16 տարի վերջը, ես նորից տեսա Կուկունյանը, երբ նա ազատվելով ռուսական տաժանակիր բանտից եւ Սախալին կղզիի աքսորից՝ եկավ Կովկաս, սպիտակ մազերով ու մորուքով, բավական գիրցած ու դանդաղաշարժ,- խոհուն ծերունի մը, որ հեռավոր իսկ նմանութիւն չունէր այն երիտասարդի հետ, որ տեսած էի առաջին անգամ եւ մասնավոր սիրով պահած հիշողութեանս մէջ: Միայն աչքերն էին, որ խոր հայացքով կը թափանցէին մարդու հոգիին մէջ»³, գրում է Համո Օհանջանյանը⁵:

Գյուղի բնակչութիւնը գրկաբաց ընդունեց իր զավակին: Նա հատկապես ջերմ ընդունելութիւն արժանացավ Նոր Նախիջևեանում, որտեղ, հանդես գալով բոցաշունչ ելույթով, կոչ արեց շարունակելու պայքարը: Այս պահից սկսվում է նրա պայքարի երկրորդ փուլը՝ պայքարը Հարստահարիչների դեմ:

Նիժը խոշոր գյուղ էր եւ ուներ սոցիալապես խիստ շերտավորված բնակչութիւն: Գյուղի աղքատ բնակչութիւնը, հանձինս «Սարգիս-աղի» (Ա.Կուկունյանի), գտան իրենց պաշտպանին: Նրանք Կուկունյանին պատմում են իրենց սոցիալական ծանր վիճակի մասին: Լսվածը այն աստիճան հուզեց Կուկունյանին, որ վերջինս սպառնաց դաժան դատաստան տեսնել գյուղի հարուստների նկատմամբ, եթե նրանք չմեղմացնեն գյուղի աղքատների սոցիալական վիճակը: 1907թ. սեպտեմբերից գյուղում սկսեց գործել «Գյուղացիական միութիւն» ընդհատակյա կազմակեր-

¹ Նույն տեղում, էջ 22:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 88:

⁴ Ե.Ջարենցի անվան գրականութիւնի եւ արվեստի թանգարան, ԳԱԹ, Դ.Անանունի արխիվ, մ.մ. 10795, թիվ 832, թ.10:

⁵ Յուսաբեր, 1940, դեկտեմբերի 7:

պուլթյունը (ուներ մոտ 600 անդամ)¹: Չնայած այդ ժամանակաշրջանում Ս.Կուկուենյանը ապրում էր Բաքվում եւ անմիջական մասնակցութիւն չուներ «Միութեան» գործերին, սակայն, իր խորհուրդներով, օգնում էր կազմակերպութեանը:

1905-1907թթ. Հեղափոխութեան պարտութիւնից հետո, Ռուսաստանի կառավարութիւնը սկսեց հալածել ինչպէս Հեղափոխական, այնպէս էլ՝ ազգային շարժման գործիչներին: Հալածանքների ենթարկվեցին նաեւ Նիժ գյուղի «Գյուղացիական միութեան» անդամները. 1909թ. Հունվարին ձերբակալվեց գյուղի 34 բնակիչ, իսկ փետրվարի 6-ին Բաքվում ձերբակալվեց Ս.Կուկուենյանը, որին «կապում էին» գյուղում գործած «Միութեանը»: Իշխանութիւնները չկարողանալով ձերբակալածներին մեղադրանք ներկայացնել, երեք ամիս անց, նրանց ազատ արձակեցին: Ինչ վերաբերում է Ս.Կուկուենյանին, ապա վերջինիս՝ Հինգ Հոգու հետ միասին, իշխանութիւնների կողմից ենթարկվեց վարչական պատժի²: Նա 5 տարի պետք է բնակվեր Ռուստովում, սակայն, իր ընկերների օգնութեամբ, կարողացավ ազատվել վարչական այդ քստորից եւ 1909թ. վերջերից կրկին աշխատանքի է անցնում Բաքվում:

1910թ. Հոկտեմբերի 15-ին Նիժում ձերբակալվում են 8 Հոգի (2-ը բնիկ, 6-ը՝ դրսից եկած): Նրանց մոտ հայտնաբերում են ռումբեր եւ այլ զենքեր: Իշխանութիւնները նրանց ճանաչում են որպէս Հեղափոխականներ, ովքեր իբր Ս.Կուկուենյանի հրահանգով Բաքվից եկել էին Նիժ պատժելու համար գյուղի վաշխառուներին: 1910թ. Հոկտեմբերի 18-ին Բաքվում ձերբակալվեց Ս.Կուկուենյանը: Դատական գործի վարույթը իրականացրեց Թիֆլիսի դատական պալատը, 1911թ. նոյեմբերի 11-ին, Գանձակում: Չնայած Կուկուենյանի՝ իրենց հետ որեւէ կապ չունենալու մասին ամբաստանյալների պնդումներին, վերջինս դատապարտվեց 15 տարվա տաժանակիր աշխատանքների: Տարբեր տարիների ազատագրված ման դատապարտվեցին նաեւ խմբի ձերբակալված մյուս անդամները³:

1912թ. փետրվարի 4-ին, ՀՅԴ անդամների աջակցութեամբ, Ս.Կուկուենյանը փախավ Գանձակի բանտից: «Ոսկանապատի Կ.Կոմիտէն յանձնարարեց Բուլղարացի Յարութիւնին եւ Նուշեցի Պուճուբ Արտէմին, Գանձակի բանտէն փախցնել Սարգիս Կուկուենեանը ու ապահով հասցնել Պարսկաստան:

Բուլղարացի Յարութիւն օր մը առաջ լուր կուտայ Սարգիս Կուկուենեանին, որ յաջորդ առաւօտ գինք պիտի փախցնեն բանտէն: Նոյն ժամուն Յարութիւն եւ Արտէմ պատրաստ էին բանտի մէջ, կ'իջնեն խոհանոցի մուտքը ու բանտապէտի միջանցքով կ'ողողուին Հոն. Յարութիւնը ծանօթ էր ամէնուն, ան շուտով խոհարարուհիին կուղարկէ շուկայ որպէսզի կարիքներ գնէ: Սարգիս Կուկուենեան բանտի սենեակէն դուրս կ'ելլէ բաղնիք մտնելու. այդ միջոցին Յարութիւն եւ Արտէմ գինք կ'առաջնորդեն դէպի խոհանոց, հագուստները փոխելով դուրս կ'ելլեն դէպի փողոց, ուր կ'առքը արդէն պատրաստ էր, նստելով կ'անցնան թրքական թաղը, Նաբիենց տունը, մինչեւ երեկոյ. անկից ալ ծպտուած կ'անցնին Իրզաղուլիի տունը ուր 15 օր մնալէ ետք, Յարութիւնի եւ Արտէմի հետ ճամբայ կ'ելլեն դէպի Պարսկաստան, ճանապարհին կ'անցնին Ղարաբաղ, ապա Նոր Բայազետի գաւառ»⁴: Սակայն փախուստից 17 օր անց, նա կրկին ձերբակալվեց Նոր-Բայազետ գավառի Նորագուղ գյուղում եւ վերադարձվեց Գանձակի բանտ: 1913թ. մարտի 9-ին Ս.Կուկուենյանը՝ իր երեք ընկերների հետ հայցեց Թիֆլիսի դատական պալատի արդարադատութիւնը, սակայն, ամեն ինչ ապարդշուն անցավ:

Դատավճիռը համարելով վերջնական, Ս.Կուկուենյանին տեղափոխեցին Ռուսաստանի Օրիոլ քաղաքի բանտը: Երկարատեւ քստորը, բանտային ծանր պայմանները կատարել էին իրենց բացասական դերը. 1913թ. նոյեմբերի 26-ին Օրիոլի բանտում Սարգիս Կուկուենյանը կնքեց իր մահկանացուն:

«Ծանր է՛ր խաչդ, դու պիտի մեզի ճամփայ բանայիր Անյայտին մէջ, առաջին արահետը: Կյանքը անողորմ եղաւ դէպի քեզ, ինչպէս քո սիրած Ազգիդ: Դու եղար անոր մանրանկարը, ո՛վ Մեծ Տառապեալ»⁵, -բնորոշում է Գ.Խաթակը (Արծիւեան):

¹ ԳԱԹ, Վավերագրերի ֆոնդ, Գ.Անանունի արխիւ, մ.մ.10795, թիվ 832, թ.12:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, թ.13:

⁴ Յեղափոխական պալոմ, Ազատագրական պայքարի յուշամատեն, Բեյրութ, 1962, թիվ 2, էջ 50:

⁵ Ազատամարտ, Կ.Պոլիս, 1914, թիվ 2, Հունվարի 12:

Կուկունյանն ապրեց ընդամենը 50 տարի ու 10 ամիս եւ այդ ժամանակի մեծագույն մասը նրան չպատկանեց: Նրա կյանքից տարիներ կորզեցին ցարական ոստիկանութիւնն ու դատարանը: Ցարական կառավարութեան վերաբերմունքը Սարգիս Կուկունյան անհատի նկատմամբ պարզ էր. - այդ են վկայում նրա նկատմամբ կիրառված պատիժները՝ վարչական տարազրուցիւն՝ 5 տարի, նախնական ձերբակալութիւն՝ 2 տարի 9 ամիս, տաժանակիր աշխատանք՝ 35 տարի:¹ Սակայն նա այդ ամենը տարավ տոկունութեամբ, լուկայն, գոյատեւման համար մղվող դարավոր պայքարին բնորոշ համառութեամբ:

Ռազմական տեսակետից Կուկունյանի արշավանքը կատարյալ ճախողանք էր, եւ որպէս այդպիսին չկայացավ: Ռոմանտիկ, բայց ըմբոստ ու ռազմատենչ այդ պոռթկումը չվերածվեց արշավանքի: Պարզ է. այն որպէս արշավանք իր կազմակերպվածութեամբ թույլ է եղել, շատ անկազմակերպ ու հապճեպ: «Խմբի արժեքը, - գրում է Ռուբենը, - պետք չէ որոնել իր մէջը. այլ պետք է որոնել այն ազդեցութեան մէջ, գործը թողած է ժողովրդի հոգեբանութեան վրայ»²: Եվ իրավամբ, Կուկունյանի կատարած գործը ազդանշան ու հրավեր էր եւ ձեռք բերեց այնչափան համբավ: Տեղին է մեջբերել ասացվածքը. «Համայնքի համբավը ծովի ալիք է»: Եվ նա ալիքի պէս բարձրացող հոչակ վաստակեց՝ թե իր կատարածի, եւ թե առավել եւս՝ կրածի համար: «Սա մի տարեհարյի հոսանք էր, ազնիւ, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առնել ոչ մի յորդորանքով, ոչ մի խելացի պատճառաբանութիւններով, ոչ մի սարսափելի ապագայի նկարագրութիւններով»³, - այսպէս ճշտորեն է ըմբռնել շարժման էությունն ու խորհուրդը դաշնակցութեան հիմնադիրներից մեկը՝ Ռոստոմը: Ռուբեն Սեւեանի բնութագրմամբ. «Սարգիս Կուկունեանի արշաւանքը հայկական առաջին «Խաչակրաց արշաւանքն էր», որ կատարուեցաւ դէպի Երկիր»⁴:

Նա այդպէս էլ չտեսավ իր ժողովրդի ազատութիւնը, որին նահատակեց իր կյանքը:

Կարինե Եղիազարյան

СУДЕБНЫЙ ПРОЦЕСС ГРУППЫ САРКИСА КУКУНЯНА И ЕГО ДАЛЬНЕЙШАЯ СУДЬБА

РЕЗЮМЕ

80-годах 19-го века параллельно с активизацией освободительной борьбы, в среде армянской передовой молодежи усиливается идея создания вооруженных отрядов, с целью проникновения в Еркир (Зап. Армения) и возглавления вооруженной борьбы. Первенцом этого движения и стал поход вооруженного отряда студентов Петербургского университета возглавляемого С.Кукуняном. Он своей личностью и делом оставил заметный след в истории этой борьбы. На основе архивных и других материалов в статье освещаются детали похода и дальнейший ход событий. Указываются также значение этого похода в истории освободительной борьбы армянского народа.

Էնծննի Ընթացածյի

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՈՆՈՒՄ 1917-1920-ական թթ.**

1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններն իրենց հորձանուտի մեջ առան նաեւ Դոնի երկրամասը: Այս երկրամասը, մինչեւ 1920թ. ապրիլ ամիսը, երբ այստեղ հաստատվեցին խորհրդային կարգեր, ներքաշ-

¹ ԳԱԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, մմ.10795, թիվ 832, թ.5:

² Ռուբեն, Հայ Հեղափոխականի մը յիշատակները, Հ. Ա., Եր., 1990, էջ 110:

³ Վեմ, Փարիզ, 1935, թիվ 10, էջ 86:

⁴ Հայրենիք, 1937, թիվ 7, էջ 110:

վեց քաղաքացիական պատերազմի մեջ: Քաղաքական այս իրադարձությունները, բնականաբար, իրենց ազդեցությունը թողեցին երկրամասին հայ բնակչության կյանքում:

Հայ ազգային-մշակութային կյանքը նոր նախիջեւանում, այդ շրջանում, տնօրինում էր 60 հոգուց բաղկացած Համայնական խորհուրդը, որն ընտրվել էր 1917թ. վերջին՝ գաղութի հայ Հասարակությունը ներկայացնող կուսակցություններից (Հնչակյան, ՀՅԴ եւ այլն): «Համայնական խորհուրդը, փաստորեն, ոչ միայն նոր նախիջեւանի ու հայկական գյուղերի, այլեւ Հարավային Ռուսաստանի ցիրուցան հայություն մշակութային կյանքի տնօրենը դարձավ»,¹ ներկայացնելով ու պաշտպանելով հայ համայնքի շահերն ու դիրքորոշումը իշխանության տեղական մարմինների առջեւ: Համայնական խորհուրդն ուներ նախագահություն եւ գործադիր մարմին՝ Ազգային Համայնական Վարչություն: Համայնական խորհրդի գործադիր կառույցներն ու մշտական հանձնաժողովները հստակ ձեւակերպված եւ տարանջատված էին. առավել մեծաթիվը Ֆինանսատնտեսական եւ մշակութային հանձնաժողովներն էին:

Համայնական խորհրդի նախագահությունը բաղկացած էր 5 անդամից. նախագահ՝ Ռ.Բերբերյանը, անդամներ. «...նախագահի ընկերներ [էին] Ա.Տերտերյանն ու Ղ.Քրիստոսովուրյանը, քարտուղարներ՝ Զ.Խոջաֆյանը, Գ.Լոգչնիկյանը»:² Ազգային Համայնական Վարչությունը գլխավորում էր Ե.Շահազիզը, իսկ Վարչության մյուս երկու անդամներն էին Ա.Մելիք-Վարդանյանը, Գ.Ջալաուխյանը: Ե.Շահազիզի խմբագրությունը լույս էր տեսնում համայնքային շաբաթաթերթը՝ «Հայ Համայնք»-ը*, որի խմբագրական կազմի անդամ էին՝ Վարչության անդամներն ու նախագահության նախագահ Ռ.Բերբերյանը: «Հայ Համայնք» շաբաթաթերթը մեծ դերակատարություն ունեցավ համայնքի ներքին կյանքի կազմակերպման գործում, իսկ նրա խմբագիր՝ բազմավաստակ գրականագետ ու պատմաբան, մանկավարժ Ե.Շահազիզը անգնահատելի աշխատանք կատարեց Դոնի հայության համար, մինչեւ այն պահը, երբ, ՀՍԽՀ լուսժողովուրդի հրավերով, 1922թ, տեղափոխվեց Երեւան: Ե.Շահազիզի գործունեության գնահատականը անուրանալի է. «Բարձր գնահատելով վաստակավոր բանասերի եւ մանկավարժի կատարած աշխատանքները՝ նոր-նախիջեւանի հասարակությունը 1917թ. նշում է Ե.Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանը»³:

Նոր նախիջեւանի (նույնն է՝ Դոնի նախիջեւան) «Հայկական Համայնք»-ի կանոնակարգը բաղկացած էր 24 կետից, որոնք վերաբերում էին Համայնքին, Համայնքային խորհրդին, գործադիր կառույցներին, հարցերի քննարկման կարգին եւ այլն: «Հայ Համայնք»-ի կանոնակարգի առաջին 4 կետերը վերաբերում էին Համայնքի անդամներին եւ նրանց՝ կազմակերպության անդամագրվելու հարցին: Ըստ կանոնակարգի՝ նոր նախիջեւանի «Հայկական Համայնք»-ի անդամ կարող էին դառնալ. «...հայերը, որոնք բնակվում էին նախիջեւան եւ Ռոստով քաղաքներում, կրեստովոզդիժենսկի գյուղում եւ, որոնք, հատուկ հայտարարությունք, չէին մերժում իրենց հայ ազգությունը»⁴ (8 2): Նոր նախիջեւանի «Հայկական Համայնք»-ի հիմնական նպատակն էր հանդիսանում՝ իր անդամների մշակութային կյանքի կազմակերպումը (8 1): Նոր նախիջեւանի «Հայկական Համայնք»-ի կանոնակարգի 5-12 կետերը վերաբերում էին Համայնքային խորհրդի ձեւավորման խնդիրներին: Ըստ կանոնակարգի՝ Համայնքային խորհրդի լիազորությունները հաստատվում էին երեք տարով, խորհուրդը նիստեր էր գումարելու նախիջեւանում էւ ունենայու էր իր անվանումով կնիք: Համայնքային խորհրդի անդամներն, առանց սեռային տարբերության, ակտիվ եւ պասիվ ընտրական իրավունք ստանում էին 21 տարին լրանալուց հետո: Պետք է նկատել, որ Համայնքային խորհրդի 60 անդամների ընտրությունը կատարվում էր փակ քվեարկությամբ, իսկ դրան կից՝ ընտրվում էին նաեւ 10 թեկնածու: «Հայկական Համայնք»-ի կանոնակարգի 12-րդ կետով առանձ-

¹ Վ.Բարխուդարյան, Նոր նախիջեւանի հայկական գաղութի պատմություն 1861-1917թթ., Եր., 1985, էջ 264:

² Армянский настольный календарь на 1919годъ, Ростовъ на-Дону 1918г., էջ 20:

* Թերթը ընդհատումներով հրատարակվել է 20-րդ դարի երկրորդ տասնամյակի վերջերից:

³ Ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Ե.Շահազիզ, ծննդյան 90-ամյակը եւ մանկավարժական ու գիտական գործունեության 65-ամյակը, Եր. 1946թ էջ 2:

⁴ Армянский ... նշվ.աշխ., էջ 17.

նացվում եւ մատնանշվում էին այն ուղորտներն ու ուղղութիւնները, որոնք Հանդիսանում էին Դոնի Նախիջևեանի «Հայկական Համայնք»-ի առանցքային խնդիրները.

«Համայնքային Խորհուրդը խնամք եւ հոգատարութիւն էր տածելու՝

1. Հայութեան լուսավորութեան
2. Պատասխարման
3. Տնտեսական զարգացման
4. Տեղի հայկական մշակութային լուսավորչական, բարեգործական հաստատութիւնների
5. Հայ մամուլի հանդեպ»¹

Ազգային Համայնական Վարչութեան իրավասութիւններին էին վերաբերում կանոնակարգի 14-19 կետերը: Համայնական Վարչութիւնն, ըստ կանոնակարգի, բաղկացած էր երեք անդամից, որոնց տարիքն անցնում էր 25-ից եւ նրանք ընտրվում էին 3 տարի ժամանակով: Դոնի Նախիջևեանի Հայ Համայնքը՝ հանձնիս Վարչութեան իրականացնում էր իր քաղաքացիական եւ գույքային իրավունքները, ձեռք բերում շարժական եւ անշարժ գույք, օտարում այն, մտնում պայմանագրային իրավահարաբերութիւնների մեջ, օգտվում իրավաբանական պաշտպանութիւններից եւ այլն:

Ազգային Համայնական Վարչութիւնը հանձն էր առնում համայնքի անդամների ցուցակագրման գործը, Խորհրդի որոշումների իրականացումը, համայնքին պատկանող գումարի հավաքումն ու պահպանումը, ինչպէս նաեւ համայնքի քաղաքացիական եւ գույքային իրավունքների պաշտպանութեան նպատակով երաշխավորագրեր տրամադրում: Դոնի Նախիջևեանի «Հայկական Համայնք»-ի կանոնակարգի 13-րդ կետը վերաբերում էր ֆինանսական միջոցների հավաքման կարգին, ըստ որի՝ այդ միջոցները գոյանում էին անդամներից պարտադիր կերպով գանձվող մուտքավճարներից, շարժական եւ անշարժ գույքի կտակներից ու նվիրատվութիւններից ինչպէս նաեւ պետութեան, քաղաքների եւ հասարակական կազմակերպութիւնների օժանդակութիւններից: Հետաքրքրական է, որ Համայնքային Խորհրդի 1918թ. նշանակած պարտադիր գանձումների չափն ընդունել էր հետեւյալ տեսքը.

1.մլն եւ ավելի կարողութիւն ունեցողները	200-500 Հզր ունեցողները	մինչեւ 3000 Հզր ունեցողները
1500ռուբլի	600ռուբլի	15 ռուբլի

եւ այլն, իսկ. «Թոճիկ ստացողները վճարում էին դրա 1 %»²: Համայնքի յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ գրավոր կերպով դիմելու Խորհրդին, որպէսզի իրեն, ֆինանսական կարգավիճակից ելնելով, տեղափոխեն մի կատեգորիայից մյուսը, իսկ եթե, երկշաբաթյա ժամկետում, վճարման չափը չէր բողոքարկվում, ապա նշանակված գանձման գումարը դառնում էր պարտադիր:

Դոնի Նախիջևեանի «Հայկական Համայնք»-ի կանոնակարգի եզրափակիչ՝ 24-րդ կետը վերաբերում էր «Համայնք»-ի լուծարման կարգին. «Որեւէ պատճառով Համայնքի գործերի լուծարման դեպքում, նրա ամբողջ միջոցները, Խորհրդի որոշմամբ, ուղղվելու էին Հայութեան մշակութային խնդիրների լուծմանը եւ փոխանցվելու էին այն հաստատութիւններին, որոնք զբաղվում են այդպիսի խնդիրներով»³:

Դոնի Նախիջևեանի «Հայկական Համայնք»-ի կանոնակարգը Ռոստովի օկրուգային դատարանի որոշումամբ գրանցվեց 1918թ. օգոստոսի 11-ին եւ մտցվեց շահույթ չհետապնդող կազմակերպութիւնների եւ միութիւնների ռեեստրի I մաս մեջ (N 72):

«Հայկական Համայնք»-ի գործունեութիւնը շարունակվում է նաեւ 1920-ական թթ., Դոնում Խորհրդային կարգերի ամրապնդումից հետո, եւ անհրաժեշտութիւն է առաջանում հաստատելու նոր կանոնադրութիւն, որը կհամապատասխաներ

¹ Армянский ... նշվ.աշխ. էջ 17.

² Նույն տեղում, էջ 19:

³ Նույն տեղում:

ՌՍՖՅՆՀ «Կազմակերպությունների եւ Միությունների մասին» ընդունած դեկրետին: Այդ է վկայում այն հանգամանքը, որ Դոնի Գործարար Կոմիտեին (ЦИКО-НО) կից Ազգային Փոքրամասնությունների Խորհուրդը չի վերադարձնել Դոնի Նախընտանի «Հայկական Համայնք»-ը եւ նրա կանոնադրությունն, որն հաստատվել էր 1918թ. օգոստոսի 11-ին: Այս մասին է վկայում Դոնի մարզի Ազգությունների Խորհուրդի տեղեկանքն, որն ուղղված էր Համայնքային Խորհրդի Նախագահության նախագահ բժիշկ Քրիստոսթուրյանին, ուր մասնավորապես, գրված էր. «...ինչպես երեւում է Դոնի մարզի Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի գործերից, 1922թ. հունիսի 17-ին Դոնի Գործկոմի անունով դիմում է ստացված բժիշկ Քրիստոսթուրյանից, ուր ներկայացված էին նշված կազմակերպության (Համայնքի) գլխավոր նպատակները, վերջինիս գրանցման առնչությամբ: Ընկեր Քրիստոսթուրյանը լրացնելով հաստատված հարցաթերթը (անկետա) եւ դիմումը, կանոնադրության մանրամասն չնեղակայանելու հանգամանքով այն դեռեւս չի քննարկվել»¹: Գործող կանոնադրության մեջ կատարվում են փոփոխություններ եւ Համայնքային Խորհրդի ընդհանուր ժողովը ընդունում է վերջնական տարբերակը: Բավականին հետաքրքիր է գրանցում փոփոխված եւ լրացված սկզբունքների դիտարկումը: Նախեւանաջ, ամրագրվում է այն կետը, ըստ որի. «Համայնքը կազմակերպվում է միավորելու համար հայազգի քաղաքացիներին, որոնք բնակվում էին Նախընտանի, Դոնի Ռոստով քաղաքներում եւ Դոնի մարզի տարածքում...»², այսինքն, Համայնքի անդամ կարող էին դառնալ Դոնի մարզի ցանկացած բնակավայրի հայազգի քաղաքացիները: Երկրորդ կարեւորագույն դրույթը այն էր, որ կազմակերպությունը չէր զբաղվելու քաղաքական-կրոնական գործունեությամբ. այն զբաղվելու էր միայն մշակութային գործունեությամբ: Ինչ վերաբերում էր կրթամշակութային նոր կառույցների հիմնմանը, ապա Համայնքը պետք է առաջնորդվեր գործող օրենսդրությամբ եւ ամեն անգամ ստանար Դոնի երկրամասի իշխանությունների հատուկ թույլտվությունը: Սահմանվում էին Համայնքի գործերի կառավարման դրույթները, անդամների իրավունքներն ու պարտականությունները: Փաստորեն, հստակորեն սահմանվում էին Համայնքի գործունեության եւ իրավասությունների շրջանակը: «Հայկական Համայնք»-ի վերադարձնման ու նրա կանոնադրության վերջնական տարբերակը մշակելու համար, 1922թ. օգոստոսի 3-ին Համայնքային Խորհրդի նիստում տեղի են ունենում քննարկումներ: Վերոհիշյալ նիստին՝ Լ.Քրիստոսթուրյանի նախագահությամբ մասնակցել են 31 հոգի: Լ.Քրիստոսթուրյանի զեկույցից հետո նիստի մասնակիցները որոշել են. «...ընդունել Ազգային Փոքրամասնությունների Խորհրդի առաջարկն ու հանձնարարել Խորհրդի ներքոհիշյալ 10 անդամներից կազմված հանձնաժողովին (Լ.Քրիստոսթուրյան, Ա.Խամբուրյան, Գ.Բեգելյան, Ա.Սալտիկյան, Ս.Դիրացույան, Ա.Տեր-Հարությունյան, Ա.Տեր-Վարդանյան, Ա.Ջուրաբյան, Գ.Լոգչինիկյան, Մ.Աթոյան)՝ ղեկավարվելով հին կանոնադրությամբ, մշակել նորը՝ համաձայն նոր օրենսդրության եւ այն ներկայացնել հաստատման»³: Լ.Քրիստոսթուրյանի գլխավորած հանձնաժողովը կարճ ժամկետում, գործող օրենքներին համապատասխանեցնում եւ փոփոխում է Դոնի Նախընտանի «Հայկական Համայնքի» կանոնադրությունն, որն էլ, 1922թ. օգոստոսի 5-ին, հաստատվում է Համայնքային Խորհրդի ընդհանուր ժողովում: Վերափոխված կանոնադրությունը բաղկացած էր 21 կետից: Հիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ ճշգրտվել էին ձեւակերպումները, հաճախակի էին դարձել «գործող օրենքների համաձայն» հավելումները:

Համայնքային Խորհրդի կազմը հասցվել էր 36 անդամի, որոնք հանդիսանում էին ինչպես տեղական հայկական մշակութային կառույցների, այնպես էլ երկրամասի այլ համայնքների ներկայացուցիչներ: Գրեթե նույնությամբ պահպանվել էին Համայնքի նախկին կանոնադրությամբ սահմանված խնդիրներն ու լրագործությունները:

Այսպիսով, Դոնի Նախընտանի «Հայկական Համայնքի» գործունեությունը ընդգրկել է բոլոր իրադարձություններով լի մի շրջան, ունեցել մեծ դերակատար

¹ Ռոստովի մարզի պետական արխիվ (այսուհետեւ ՌՄՊԱ), ֆ.1818, ց.1, դ.477, թ.22:

² Նույն տեղում, թ.9:

³ Նույն տեղում, թ.60:

րում ոչ միայն Դոնի, այլև Հյուսիսային Կովկասի եւ Ռուսաստանի Հայաշատ այլ Համայնքների կյանքում:

Դոնի Նախընթացի եւ տարածաշրջանի Հայութիւնը բազմաշերտ էր սոցիալական, խայտաբղետ՝ լեզվամշակութային առումներով: Սրան Հավելվում էր նաեւ Հայութեան աշխարհագրական տարբեր վայրերից եկած լինելու Հանգամանքը. այստեղ կենտրոնացել էին ոչ միայն Անդրկովկասից եւ Թուրքիայից, այլև՝ Պարսկաստանից ու Բալկաններից փախստական դարձած Հայութեան զգալի զանգված: Եվ այդ իսկ պատճառով, պատահական չէր, որ Հայութեան շրջանում աստիճանաբար սկսեցին ի Հայտ գալ Հայրենակցական կազմակերպութիւններ, որոնցից էին Պարսկահայերի Հայրենակցական միութիւնն ու Աղբակահայերի Հայրենակցական միութիւնը:

Պարսկահայերի Հայրենակցական միութիւնը ձեւավորվել է Դոնի Ռոստովում, որտեղ այդ կառույցի Հիմնադիր անդամներ՝ Մովսէս Ավակովի, Պավել Ավակովի, Արամ Ավակովի, Իսրայել Ամիրովի, Նիկոլայ Մուրադյանցի, Խոսրով Մկրտչյանի եւ Մովսէս Խուզաբերդյանի ստորագրութեամբ միութեան կանոնադրութիւնը Հաստատելու Համար, 1919թ. ապրիլի 25-ին, խնդրագիր է ներկայացվել Դոնի Ռոստովի օկրուգային դատարան: Պարսկահայերի Հայրենակցական միութեան կանոնադրութեան դրույթները, Ռոստովի օկրուգային դատարանում քննարկվել են ապրիլի 29-ին եւ որոշվում է կայացվել գրանցել այն, մտցնելով՝ շահույթ չհետապնդող կազմակերպութիւնների եւ միութիւնների ռեեստրի ցուցակ (N 185): Պարսկահայերի Հայրենակցական միութեան կանոնադրութիւնը բաղկացած էր 30 կետից, որոնք ներկայացնում էին միութեան նպատակներն ու միութեան կառավարման վերաբերող դրույթները: Միութեան Հաստատված կանոնադրութեամբ, նպատակների գլխավոր առանցքն էր. «Դոնի Ռոստովում Հիմնել կրթական օջախներ եւ Հասարակական ժողով, որոնք պետք է ծառայեն, ազգային, մշակութային-յուսուսավորչական գործին»: Անհրաժեշտ էր Համարվում կազմակերպել դասախոսութիւններ, գրական-գեղարվեստական երեկոներ, ստանալ Հայալեզու եւ օտարալեզու տպագիր Հրատարակութիւններ ու թերթեր, ունենալ ընթերցասրահ եւ գրադարան: Նպատակահարմար էր Համարվում աջակցել նման Հայրենակցական միութիւններին կազմակերպմանը նաեւ այլ քաղաքներում. «...Հնարավորութեան սահմաններում բարոյապես եւ նյութապես աջակցել Հայերին Հայրենիքում վերաբնակվել, կազմակերպել քարոզ վերաբնակիչներին օգնելու նպատակով»²: Պարսկահայերի Հայրենակցական միութիւնը այլ քաղաքներում նման միութիւնների ձեւավորումը դիտում էր անհրաժեշտ քայլ, քանզի այդ միութիւնները Համատեղ ուժերով նպաստելու էին Հայրենիքի վերականգնման գործին: Կանոնադրութեան Համաձայն, միութեան անդամ կարող էր դառնալ ցանկացած պարսկահայատակ Հայ. «Հայրենակցական միութեան անդամ չէին կարող դառնալ անչափահասները, սովորողները, ծառայութեան մեջ գտնվողները, դատարանի կողմից իրավունքներում սահմանափակված անձինք, որոնք գտնվում են հետաքննութեան տակ...»³: Հայրենակցական միութեան գանձարկի միանվագ կերպով 500 ռուբլի մուծող անձինք ստանում էին մշտական անդամի կարգավիճակ: Պարսկահայերի Հայրենակցական միութեան գործերը վարում էր Ընդհանուր ժողովի կողմից 3 տարով ընտրված եւ 12 անդամից բաղկացած Վարչութիւնը, որը գտնվում էր Դոնի Ռոստով քաղաքում: Ինչպէս բոլոր միութիւնների եւ կազմակերպութիւնների կանոնադրութիւններում էր նրա լուծարման կարգին, ըստ որի. «Ընդհանուր ժողովի որոշումամբ՝ Հայրենակցական միութեան փակման դեպքում միութեան ամբողջ ունեցվածքը փոխանցվելու էր Պարսկահայաստանի բարեգործական Հաստատութիւններին»⁴:

Դոնի Ռոստով քաղաքում էր Հիմնադրվել եւ գործում նաեւ Աղբակահայերի* Հայրենակցական միութիւնը (Землячество Ахпакских армян), որի խնդրագիրը՝ կանոնադրութիւնը Հաստատելու մասին Ռոստովի օկրուգային դատարան է ներկայացվել 1919թ. օգոստոսի 22-ին: Աղբակահայերի Հայրենակցական միութիւնը

¹ ՌԲՊԱ, ֆ.181, ց.3, գ. 491, թ.2:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, թ.3:

⁴ ՌԲՊԱ, ֆ.181, ց.3, գ.491, թ.3:

* Միութեան անունը ծագել է պատմական Հայաստանի Աղբակ գավառի անունից:

գլխավորում էին Խոսրով Մկրտիչը, Հակոբ Տեր-Հակոբովը, Մակար Հակոբով-Մելիքյանցը, Պետրոս Շահինյանցը, Մինաս Մինասյանցը, Ասվատուր Վարդանովն ու Ենոք Կեռորովը: Աղբակահայերի Հայրենակցական միության կանոնադրույթյունը, գրեթե նույնությամբ, կրկնում էր Պարսկահայերի Հայրենակցական միության կանոնադրույթյունը. նրանում առաջադրված էին նույն խնդիրներն ու նպատակները: Միակ տարբերությունը կայանում էր ընտրովի վարչական մարմնին օժտած լիազորությունների իրականացման ժամկետների մեջ: Խոսրով Մկրտիչն, ում վստահված էր կանոնադրույթյան գրանցման հետ կապված հարցերը, կանոնադրույթյան արդեն հաստատված տարբերակը հետ է ստանում գեկտեմբերի 4-ին. «1919թ. գեկտեմբերի 2-ին Դոնի Ռոստովի օկրուգային դատարանը, լսելով Աղբակահայերի Հայրենակցական միության կանոնադրույթյան հաստատման հարցը, որոշում է այն մտցնել շահույթ չհետապնդող կազմակերպությունների եւ միությունների ռեեստր (N 237)»:¹

Համայնքային եւ Հայրենակցական կազմակերպություններից բացի, որոնք հիմնվել ու գործում էին Նոր Նախիջևեան, Դոնի Ռոստով քաղաքներում, մշակութային կազմակերպություններ էին ծնունդ առել նաեւ Դոնի երկրամասի գյուղաբնակ Հայության շրջանում: Այսպես, Նեսվիտայի մշակութային միությունն առաջինն էր, որն օրինական գրանցում եւ գործունեություն լայն հնարավորություն ստացավ: Նեսվիտա գյուղի մշակութային միության հիմնադիրներ Հովհաննես Խաչիկյանի, Դժխուհի Խաչիկյանի, Ասվածատուր Մարտիրոսյանի, Վառվառա Մարտիրոսյանի, Իվան Լազուտինի, Հոգեւորականներ Գրիգոր Հակոբյանի եւ Սարգիս Մարտիրոսյանի ստորագրությամբ, 1918թ. սեպտեմբերի 18-ին, Ռոստովի օկրուգային դատարան է ներկայացվում կազմակերպության 51 կետից բաղկացած կանոնադրույթյունը հաստատելու վերաբերյալ խնդրագիր: 1918թ. հոկտեմբերի 8-ին Դոնի Ռոստովի օկրուգային դատարանը, քննելով Նեսվիտայի մշակութային միության կանոնադրույթյունը, որոշում է կայացնում գրանցել այն: Միության կանոնադրույթյան առաջին կետը նշում էր կազմակերպության նպատակներն ու գործունեությունը գաշտը²: Այս նպատակների իրագործման համար անհրաժեշտ էր դիտվում հիմնել ժողովրդական ծուն, կազմակերպել դպրոցներ, գրադարան, գիտակրթական թանգարաններ եւ այլ հաստատություններ: Միության անդամ կարող էին դառնալ 17 տարին բոլորած Նեսվիտա գյուղի բնակիչները, որոնք ընդունում էին կանոնադրույթյան կետերն ու պահանջները: Նեսվիտա գյուղի մշակութային կյանքը տնօրինելու համար լայն լիազորություններ էին վերապահված միության կառավարող օղակներին՝ Ընդհանուր ժողովին եւ Վարչությունը:

Նմանօրինակ ծրագրեր եւ խնդիրներ էր հետապնդում նաեւ Դոնի երկրամասի Հայաբնակ մյուս գյուղում՝ Մեծ Սալայում կազմավորված կրթամշակութային միությունը: Կազմակերպությունը, որը կոչվում էր «Մեծ Սալայի եւ շրջակա գյուղերի մշակութային-լուսավորչական միություն», հիմնադրել էին Լ. Նոր-Արեւյանը, Մ. Դիրացուհեւը, Կ. Պոպովը, Չեբանովա-Խաչապյանը եւ այլոք, որոնք միության կանոնադրույթյունը հաստատելու խնդրանքով, դեռեւս 1918թ. մարտի 16-ին, դիմել էին Ռոստովի օկրուգային դատարան: Այս դիմումը մերժվել է 1918թ. մարտի 22-ին. «...Մեծ Սալայի եւ շրջակա գյուղերի մշակութային-լուսավորչական միության Վարչության գտնվելու վայրը կանոնադրույթյան մեջ չեն նշվել պատճառով»:³ Ինչպես երեւում է, միության կանոնադրույթյան մեջ առկա անհամապատասխանությունները գործող օրենքներին, հետագա ամիսների ընթացքում եւս հնարավորություն չտվեցին գրանցելու արդեն փաստացի գոյություն ունեցող միության կանոնադրույթյունը:

1918թ. հոկտեմբերի 15-ին, կանոնադրույթյունը հաստատելու համար, Ռոստովի օկրուգային դատարան է ուղղվում նոր խնդրագիր, որի 10-րդ կետը վերաբերում էր միության կառավարմանն ու գտնվելու վայրին. «Միության գործերի կառավարումը հանձնարարվում է Ընդհանուր ժողովին եւ Վարչությանը, որոնք գտնվում են Դոնի Ռոստովի օկրուգի Մեծ Սալա գյուղում»:⁴

¹ ՌՄՊԱ., ֆ.151, ց.3, գ.539, թ.8:

² Նույն տեղում, գ.141, թ.2:

³ Նույն տեղում, գ.42, թ.2:

⁴ ՌՄՊԱ., ֆ.151. ց.3, գ.43, թ.2:

Ռոստովի օկրուգային դատարանը, 1918թ. նոյեմբերի 1-ին, քննարկում է այս խնդրագիրը եւ, պատճառաբանելով, թե նշված չեն Վերստուգիչ Հանձնաժողովի ընտրման ժամկետները, Վարչութեան անդամների թվակազմն ու այլ Հարցեր, խնդրագիրը թողնում է անպատասխան: Որոշման մասին տեղյակ են պահվում միութեան Հիմնադիր անդամները: Միութեան կանոնադրութեան գրանցումը ձգձգվել է բավականին երկար ժամանակ. դա երեւում է միութեան կանոնադրութեան գրանցման Հարցերով զբաղվող Լ.Նոր-Արեւյանին՝ դատարանից վերադարձված կանոնադրութեան օրինակներից, որոնք թվագրված են 1919թ. Հունվարի 3-ով: Միութեան ծրագրի առանցքային նպատակ էին կրթական Հարցերը. «Միութեանը նպատակ ունի նպաստելու լուսավորութեան տարածմանը Մեծ Սալայում եւ նրան շրջակա Հայկական գյուղերում»:¹ Իր առջեւ դրված խնդիրների լուծմանը Հասնելու Համար միութեանը ծրագրել էր բացել տարրական դպրոցներ, գրադարան, բարձրագույն ուսումնարան, աղջիկների եւ տղաների Համատեղ ուսուցմամբ գիմնազիա, որոնք գործելու էին Լուսավորութեան միջնորդութեան ծրագրերին Համապատասխան ու Համընթաց էին ժամանակի պահանջներին:

Դոնի երկրամասում, բացի վերոհիշյալ կազմակերպություններից, որոնք ունեին Համայնքային, ազգային-Հայրենակցական, կրթամշակութային ուղղվածություն, գործել են նաեւ աղքատախնամ եւ Հասարակական-բարեգործական այլ միություններ. նրանց՝ մեծ մասի վերաբերյալ եղած տվյալները սուղ են: Դրանց շարքում խիստ Հետաքրքրական են Հայ կանանց կողմից գլխավորած կազմակերպությունները, որոնք Հիմնականում ուղղված էին փախստականների, աղքատների եւ սոցիալական այլ խնդիրների լուծմանը: Այդպիսի կազմակերպություններ գործում էին եւ Դոնի Ռոստովում, եւ Նոր Նախիջևանում: Եթե նրանցից առաջինի վերաբերյալ առկա տվյալները սուղ են. «Դոնի Ռոստովում էր գործում Ե.Անպետկովայի գլխավորած Հայ կանանց բարեգործական միությունը»,² ապա Նոր Նախիջևանում գործող «Աղքատներին սատարող Հայ կանանց միութեան» գործունեության մասին Հնարավոր է դառնում պատկերացում կազմել առկա փաստաթղթերի եւ միութեան կանոնադրության շնորհիվ: Միութեան ստեղծման ժամկետի վերաբերյալ Հստակ տվյալներ չկան. այն, Հավանաբար, ստեղծվել է 1917թ. Հեղափոխությունը Հաջորդող ժամանակաշրջանում: Կազմակերպության կանոնադրության նախագիծը, որը կազմված էր Համառուսաստանյան Կենտգործկոմի 1922թ. օգոստոսի 3-ի Հրամանագրի գրույթներին Համապատասխան, Հաստատման է ներկայացվել 1922թ. Հոկտեմբերի 6-ին: Դոնի Նախիջևանի «Աղքատներին սատարող Հայ կանանց միութեան» Հիմնադիր անդամներն էին՝ Վարդուչ Բրիստոսթուրյան, Մարիա Ալյանակի, Ռոզալիա Պոպովա, Բ.Սագիրովա, Եկատերինա Քեչեկ եւ այլն: Հետաքրքրական է, որ միութեան Հիմնադիր 10 անդամից 6-ը ուսուցիչ էր, մյուսները՝ բժիշկ ու տնային տնտեսուհիներ, ուստի եւ առաջնային նշանակություն ունեցող սոցիալական-առողջապահական եւ կրթական խնդիրները, որոնք նախատեսում էր լուծել միությունը, բավականին լավ Հիմնավորված էին կանոնադրության մեջ: Այսպես, միությունը առաջնային նպատակ էր դիտում. «...օժանդակությունը Հայ աղքատներին նյութական միջոցներով եւ բարոյապես»:³ Աղքատներին օգնություն ցուցաբերելը արտահայտվում էր նրանց Հագուստ եւ սնունդ տրամադրելով, տնային պայմաններում Հիվանդներին բուժելով, իսկ առավել ծանր դեպքերում, միութեան միջոցների Հաշվին Հիվանդանոցային բուժում կազմակերպելով, մահացածներին Հուղարկավորելով եւ այլն: Անտուն, Հիվանդ եւ ծեր անձանց Համար, առանձնացվելու էին անկելանոցներ, որք երեխաններին տեղավորելու էին որբանոցներում, մի մասին էլ՝ ուսումնական եւ արհեստագործական Հաստատություններում: Նախատեսվում էր բացել Հասարակական ճաշարաններ, կացարաններ, բաղնիք, բուժարան. «...չունենորներին միջոցներ տրամադրել Հայրենիք վերադառնալու Համար»:⁴ Թվարկած բոլոր միջոցառումների իրականացման Համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գլխավորապես գոյանալու էին անդամավճարների, նվիրատվությունների եւ վարձակալության գումարների Հաշվին: Հետաքրքիր նորամուծություն էր այն, որ Հավաքված գումարները վերածվելու էին պետական արժեթղ-

¹ Նույն տեղում:

² Армянский..., նշվ.աշխ., էջ 25:

³ ՌՄ ՊԱ ֆ-1818. ց.1, գ. 477, թ. 40.

⁴ ՌՄ ՊԱ ֆ-1818. ց.1, գ. 477, թ. 40:

թերի եւ պահպելու էին Պետական Բանկում, իսկ միութեան լուծարման դեպքում՝ գույքի հետ միասին բարեգործական նպատակներով ուղղվելու էր կարիքավոր հայերի խնդիրների լուծմանը:

Դոնի երկրամասում գործել է նաեւ Հայկական ուսանողական կազմակերպութիւն, որի կանոնադրութեան օրինակը թվագրված է 1922թ. նոյեմբերի 23-ով: Այդ կազմակերպութիւնը կոչվում էր «Դոնի Ռոստովի Հայկական ուսանողական Հայրենակցական միութիւն», որի հիմնադիր 10 անդամների թիւում էին Գրիգորի Լոգչինիկյանը, Գարեգին Մնացականյանը, Սաթենիկ Առաքելովան եւ այլք: Ուսանողական Հայրենակցական միութիւնն իր առջեւ նպատակ էր դրել. «...օժանդակել իր անդամների գործունեութեանը եւ, մասնավորաբար, նպաստել Հայ ազգային-մշակութային արժեքների (յեզու, պատմութիւն, գրականութիւն, արվեստ եւ այլն), հետ ծանոթանալուն, ցուցաբերել նյութական օգնութիւն կարիքավոր ընկերներին»: Ուսանողական Հայրենակցական միութիւնը նպատակադրվել էր ունենալ գրադարան-ընթերցասրահ, կազմակերպել էքսկուրսիաներ եւ Հայոց պատմութիւնը վերաբերող գիտական դասախոսութիւններ: Ինչ վերաբերում էր կարիքավոր ուսանողներին օգնելու Հարցին, ապա, այդ աջակցութիւնը կարող էր լինել, թե գրամական, թե նյութական (սննդի տեսքով): Բացի վերոնշյալից, խնամք էր տարվելու բժշկական օգնութեան կարիք ունեցողների նկատմամբ՝ ընդհուպ մինչեւ նրանց հիվանդանոցում տեղավորելը: Անհրաժեշտ էր դիտվում հիմնել աշխատանքային արտելներ, բացել հանրակացարան եւ ճաշարան: Ուսանողական միութեան կառավարումն իրականացնում էր Ընդհանուր ժողովն ու նրա կողմից ընտրված Վարչութիւնը՝ կես տարի ժամկետով (ամեն ուստարվա կիսամյակի հետ կապված):

Դոնի Ռոստովում եւ Նոր Նախիջևեանում, բացի վերոհիշյալ կազմակերպութիւններից, գործել են նաեւ Հայութեան խնդիրներով զբաղվող այլ հասարակական եւ բարեգործական միութիւններ ու կոմիտեներ, որոնց գործունեութեան վերաբերյալ արխիվային փաստաթղթերի եւ անգամ այդ կառույցների կանոնադրութիւնների վերաբերյալ տեղեկութիւնների բացակայութեամբ Հնարավորութիւն չեն տալիս Հանգամանորեն խոսել նրանց մասին: Նման կազմակերպութիւններից են՝ «Դոնի Նախիջևեանի աղքատ Հայերի եկեղացական Հոգաբարձութիւնը», Ա.Սալտիկովի գլխավորութեամբ «Ռոստով-Նախիջևեանյան Հայկական կոմիտեն», Ս.Ոսկանյանի գլխավորութեամբ, «Դոնի Ռոստովի Հայկական Իզմիրլյան բարեգործական միութիւնը»՝ Ս.Ջեւեղեգովի գլխավորութեամբ եւ այլն:

Դոնի երկրամասում գործող տեղական Հայկական կազմակերպութիւններից բացի, 1917թ. առաջ եւ հետո, գործել են Համառուսաստանյան Հասարակական-բարեգործական կազմակերպութիւնների Դոնի կոմիտեներ, որոնք զգալի ներդրում են ունեցել կարիքավոր Հայերին օժանդակելու Հարցում: Փախստականներին օգնելու նպատակով առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված Համառուսաստանյան կազմակերպութիւններից էր Ա.Դերեթանովի գլխավորութեամբ Դոնի երկրամասում գործող «Համառուսաստանյան քաղաքների միութեան Դոնի Նախիջևեանի կոմիտեն», որը հսկայածավալ աշխատանք կատարեց պատերազմից տուժած եւ անապաստան Հայերին տեղավորելու, խնամելու եւ կերակրելու գործում: Դոնի Նախիջևեանի կոմիտեն Ա.Դերեթանովի, Ե.Խանումյանի, Ու.Չուբարովի, բժիշկ Ա.Քեչեկի եւ այլ սրտացալ Հայ գործիչների ջանքերով կարողացավ իրականացնել սոցիալական-առողջապահական խոշոր ծրագրեր, որոնք փրկեցին Հազարավոր փախստական Հայերի կյանքեր: Պահպանված բազմաթիւ փաստաթղթերը խոսում են այն ծանր բարոյական եւ նյութական վիճակի մասին, որում Հայտնվել էին Հայ փախստականները, պատմում այն խնդիրների մասին, որոնք լուծում էին գտնում կոմիտեի կողմից: Դրա վառ վկայութիւններից է 1918թ. փետրվար ամսով թվագրված նամակը կոմիտեի նախագահ Խանումյանից պահեստների կառավարիչ Վարդանեսովին. «Հաշվի առնելով մեր կազմակերպութեան ապաստարանում գտնվող փախստական Մարիա Ալոյանի ծայրաստիճան թշվառ վիճակը թուլատրում եմ Ձեզ նրան անվճար մեկ չուգունե աման տալ»:՝ Կոմիտեն, փորձելով ամեն կերպ աջակցել կարիքավորներին եւ փախստականներին, միջնորդութիւններով է Հանդ-

¹ Նույն տեղում, թ. 75:

² ՌՄ ՊԱ., ֆ.806, ց.1, գ.34, թ.64:

ես եկել նաեւ քաղաքային իշխանութիւններին առաջ: Այդպիսի միջնորդութիւն էր Հանրիսանում Ա. Դերեթանովի նամակը Դոնի Ռոստովի քաղաքագլխին, որն ունի հետեւյալ բովանդակութիւնը. «...խնդրում եմ Ձեզ չմերժել եւ մեր կոմիտեի խնամքի ներքո գտնվող Բաղդասար Ատամյանին ու իր ընտանիքին Դոնի Ռոստով կայարանից մինչեւ Կարս կայարան անվճար երթեւեկելու իրավունք տալ... Բաղդասար Ատամյանը անընդունակ է աշխատելու եւ ըստ բժիշկների եզրակացութեան՝ կարիք ունի բուժման»:¹

Այսպիսով, Դոնի երկրամասուն գործող Հայկական կազմակերպութիւններն ու միութիւնները, փոքրիշատե մեղմացնելու համար ծանր պայմաններում Հայտնված Հայութեան այս հատվածի անթիվ խնդիրները, անգնահատելի աշխատանք կատարեցին:

Հովհաննես Ալեքսանյան

АРМЯНСКИЕ ОБЩЕСТВЕННО-БЛАГОТВАРИТЕЛЬНЫЕ ОРГАНИЗАЦИИ ДОНА С 1917-1920-ые гг.

РЕЗЮМЕ

После Первой мировой войны и последующие революции в России 1917г., Донской край полностью оказался в трудной и напряженной политической ситуации. Гражданская война и иностранная интервенция не обошлись кругом и только в апреле 1920г. в регионе окончательно были основаны советская власть и порядки.

В этот период на Дону, и, в частности, Нахичевани-на-Дону национальная культурная жизнь армян регулировалась Общинным и множеством общественно-просветительских, благотворительных организаций, которые защищали права проживающих здесь армян. Послевоенные годы действующие на Дону армянские организации можно разделить на три группы:

- а) Общинная (Нахичеванская на-Дону Армянская Община).*
- б) Земляческая (Ахпакских армян, Персидских армян и т.д.).*
- в) Культурно-просветительская, благотворительная (Несветайская и т.д.).*

Основная цель и сфера деятельности этих армянских организации являлся забота: а) о призрении, б) о просвещении, в) об экономическом развитии, г) о местных армянских культурно-просветительских и благотворительных учреждениях.

Армянские организации Дона, не смотря на свою кратковременную деятельность (до начало 20-ых гг.), смогли в какой-то мере организовать, сконцентрировать армян, провести необходимые мероприятия.

Оганес Алексанян

ՍՈՉԻ ԼԱՅՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ (1918թ. երկրորդ կես - 1919թ. սկիզբ)

19-րդ դարի երկրորդ կեսին Սեւ ծովի Հարավային ափերին երեւան եկան առաջին Հայկական բնակավայրերը, որոնց թիվը, ժամանակի ընթացքում, ավելաց-

¹ Նույն տեղում, թ.422:

ազ¹: Հատկապես հայաշատ էր Սեւծովյան նահանգի Սոչիի շրջանը, որտեղ, 1918թ. դրուվածք, հայկական բնակչությունը գերազանցում էր 20000-ը², կազմելով տեղի գյուղական բնակչության 36.7%³, իսկ ողջ շրջանի բնակչության՝ գրեթե 30%⁴: Միեւնույն ժամանակաշրջանում, Սոչիի շրջանում գործում էին բազմաթիվ հայկական դպրոցներ, եկեղեցիներ, բարեգործական, լուսավորչական կազմակերպություններ, խնամատարական խորհուրդներ, սիրողական թատերական խմբակներ եւ այլն⁵:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ: Այդ ժամանակահատվածում Սոչիի շրջանը մի քանի անգամ «ձեռքից ձեռք» անցավ: Սոչիի հայուկությունը անմասն չմնաց շրջանում ընթացող քաղաքական գործընթացներից: Շրջանի հայուկության մեջ կային եւ Կամավորական բանակի եւ խորհրդային կարգերի կողմակիցներ: Սակայն, ավելի հաճախ, Սոչիի հայկական համայնքը, հանուն տեղական իշխանությունների քաղաքական նպատակների, շահարկվում էր վերջիններիս կողմից: Չնայած այն հանգամանքին, որ Սոչիի հայուկությունը բազմիցս դիմել էր Հայաստանի Հանրապետությանը Սոչիում Հյուպատոսություն հիմնադրելու խնդրանքով⁶, վերջինս՝ միջոցների սղուկյան եւ կանոնավոր հեռագրային կապի բացակայության պայմաններում ի վիճակի չէր ներկայացնել Սոչիի շրջանի հայուկությանը տեղական իշխանությունների քաղաքականությունից:

1918թ. մարտին Սեւծովյան նահանգում ստեղծվեց՝ Խորհրդային Սեւծովյան Հանրապետությունը: Սոչիի հայուկության մի մասը ակտիվորեն համագործակցեց խորհրդային իշխանությունների հետ: Շրջանում ձեւավորված խորհուրդներում զգալի թիվ էին կազմում հայերը⁷: Սոչիի շրջանի հայկական բնակչությունից եւ նախկին ռազմագերիներից կամավորական սկզբունքով, իսկ ավելի հաճախ՝ պարտադրաբար կազմավորվում էին խորհրդային զորքերի շարքերում մարտնչող ջոկատներ⁸: 1918թ. մայիսին մի կողմից գերմանացիները, իսկ մյուս կողմից Կամավորական բանակի զորագնդերը ներխուժեցին սեւծովյան ափամերձ շրջաններ: Նրանց դեմ պայքարը միավորելու նպատակով Խորհրդային Սեւծովյան Հանրապետությունը 1918թ. մայիսի 30-ին միավորվեց Կուբանի խորհրդային Հանրապետության հետ ձեւավորելով՝ Կուբանոսեւծովյան Խորհրդային Հանրապետությունը⁹:

Միեւնույն ժամանակ նորանկախ Վրաստանի Հանրապետության զորքերը, օգտվելով Կուբանոսեւծովյան Հանրապետության ծանր դրուկությունից, ներխուժեցին Սոչիի շրջան՝ ստեղծելով այնպիսի տպավորություն, թե իբր վրացական բանակը գործում է որպես Կամավորական բանակի դաշնակից:

Արխիվային վավերագրերը եւ փաստաթղթերը վկայում են, որ Սոչիի գրավումից հետո վրացական իշխանությունները տեղի հայ բնակչությանը ենթարկում էին տարաբնույթ բռնությունների եւ կողոպուտի, որի հետեւանքով առաջանում էր համատարած դժգոհության ալիք, ինչը հմտորեն օգտագործվեց Կամավորական բանակի կողմից հայերին՝ վրացիների դեմ հրահրելու համար: Սոչիում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության բացակայության պայմաններում տեղի հայուկությունը անպաշտպան էր մնում վրացական իշխանությունների եւ Կամավորական բանակի վարած քաղաքականության առջեւ: Մասնավորապես, 1918թ. օգ-

¹ Վ.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը եւ տեղաշարժները, XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2002, էջ 37:

² Симонян М., «Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века)», диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02, Отечественная история, Краснодар, 2003, էջ 63:

³ Деникин А., Очерки русской смуты, том четвертый, том пятый, Вооруженные силы Юга России, Москва, 2003, էջ 224:

⁴ Карпов Н., Трагедия Белого Юга, 1920 год, Москва, 2005, էջ 100:

⁵ Симонян М., նշվ. աշխ., էջ 57:

⁶ ՀԱԱ, (սյուսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ.200, ց.1, դ.73, թ.128:

⁷ Симонян М., նշվ. աշխ., էջ 64:

⁸ ՀԱԱ, ֆ.200, ց.1, դ.73, թ.129:

⁹ Карпов Н., նշվ. աշխ., էջ 96-97:

նստուսի 30-ին, վրացական զինված ջոկատը Սոչիի պարետի գլխավորությամբ կողոպտեց Սոչիի Հայոց ազգային խորհրդի շենքը եւ բռնություններ կիրառեց խորհրդի քարտուղարի եւ խորհրդի շենքում գտնվող այլ անձանց նկատմամբ: Վրացական իշխանությունների նմանատիպ անօրինականության վերաբերյալ Սոչիի Հայոց ազգային խորհուրդը 1918թ. սեպտեմբերի սկզբին հեռագրել էր Վրաստանի ներքին գործերի նախարարին եւ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը, որում բողոքել էր Վրաստանի կառավարությանը եւ պահանջել դադարեցնելու նմանատիպ երեւույթները ու պատժելու մեղավորներին: Միեւնույն հեռագրում Սոչիի Հայոց ազգային խորհուրդը, տեղեկացնում էր, որ ստեղծված իրավիճակում դադարեցնում է իր եւ իրեն հարակից կազմակերպությունների գործունեությունը¹: Գիտակցելով, որ Կամավորական բանակի հրամանատարությունը, վաղ թե ուշ, անդրադառնալու է Սոչիի հիմնահարցին, վրացիները, ընդունելով գեներալ Մ.Ալքսեեևի առաջարկը², եկատերինոգար գործուղեցին Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորու գլխավորած պատվիրակությանը: 1918թ. սեպտեմբերի 25-26-ը եկատերինոգարում Կուբանի երկրամասի կառավարության, Կամավորական բանակի ու Վրաստանի պատվիրակության միջև տեղի ունեցավ խորհրդակցություն³: Բանակցությունների ընթացքում Ա. Դենիկինը հետամուտ կերպով հանդես եկավ «միացյալ եւ անբաժան Ռուսաստանի» ծրագրով, եւ առհասարակ չցանկացավ ճանաչել Վրաստանի ինքնիշխանությունը⁴: Ինչ վերաբերվում է Սոչիի շրջանին, ապա Ա. Դենիկինը պահանջեց այն մաքրել վրացական զորքերից⁵: Այնուհետեւ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը կից «Հատուկ խորհրդակցությունը» Վրաստանին հայտարարեց մաքսային եւ պարենային պատերազմ⁶: Կամավորական բանակի հրամանատարությունը 1918թ. դեկտեմբերին օգտվելով այն ճանդամանքից, որ հայ-վրացական պատերազմի հետեւանքով վրացիները Սոչիի շրջանի իրենց ռազմական միավորումները տեղափոխել էին հայ-վրացական ռազմաճակատ, առանց կռվի, գրավեցին հայաբնակ Լոռ կայարանը⁷:

Սոչիի շրջանի հայ բնակչության վիճակը գնալով ծանրանում էր: Վրացական իշխանությունների հալածանքները եւ բռնությունները ավելի դաժան բնույթ էին կրում: Տեղի էին ունենում համատարած գողություններ եւ ավազակություններ: Վրացական իշխանությունների կողմից սահմանված ծանր հարկերը բարդացրին առեւտուրը եւ սննդամթերքի հայթհայթումը ու ավելի ուժեղացրին շրջանում տիրող սովը⁸: Սոչիի շրջանի բնակչությունը, մի շարք պատգամավորական եւ փաստաթղթային որոշումներով դիմում էր Կամավորական բանակի հրամանատարությունը՝ վերջինիս հրավիրելով Սոչիի⁹: Կամավորական բանակի հրամանատար Ա. Դենիկինը Սոչիում տիրող գրությունների վերաբերյալ գրում է. «Վրացական սահմանը անցած ուղևորները եւ մասնավորապես հայերը՝ հարակից գյուղերի բնակիչները, մեր առաջնային ջոկատներին հասցնում էին օգնության խնդրանքներ եւ տեղեկություններ՝ այնտեղ իրենց հետ կատարվող խոչտանգումների եւ բռնությունների մասին»¹⁰ (ընդգծումը մերն է -Ս.Մ.):

Կամավորական բանակի հրամանատարության «սրտագին» վերաբերմունքը Սոչիի շրջանի հայերի նկատմամբ պայմանավորված էր քաղաքական շահով: Կամավորական բանակի հրամանատարությունը նպատակ ուներ հայերի օգնությամբ գրավել Սոչիի շրջանը: Այդ նպատակին հասնելու համար Կամավորական բանակը սկսեց զինել Սոչիի սահմանամերձ հայկական գյուղերի բնակչությանը, հրահրելով նրանց զինված պայքարի: Այն ժամանակ, երբ Կամավորական բանակի հրամանատարությունը սիրաշահում էր Սոչիի հայությունը, Հյուսիսային Կովկասի այլ վայ-

¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, դ.7, թ.144:

² Деникин А., նշվ. աշխ., էջ 398-399.

³ Նույն տեղում, էջ 400:

⁴ Карпов Н., նշվ. աշխ., էջ 97:

⁵ Նույն տեղում:

⁶ Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918թ.հունիս-նոյեմբեր), Եր., 2004, էջ 47:

⁷ Деникин А., նշվ. աշխ., էջ 223:

⁸ Նույն տեղում, էջ 222:

⁹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, դ.82, թ.7:

¹⁰ Деникин А., նշվ. աշխ., էջ 222:

րերում այդ նույն հրամանատարութիւնը պարտադրաբար Կամավորական բանակի շարքերն էր գորակոչում հայրենիք վերադարձող հազարավոր հայ նախկին ռազմագերիներին¹։ Ա. Դենիկինի հավաստմամբ, 1919թ. հունվարի վերջին Ազգերի շրջանում եւ ուսու-վրացական ռազմաճակատի երկայնքով ապստամբեցին հայկական գյուղերը²։ Սակայն դա ապստամբութիւն չէր, այլ՝ հայկական գյուղերի բնակչութեան ինքնապաշտպանական մարտեր, որոնք ուղղված էին վերջ տալու համար վրացական իշխանութիւնների հալածանքներին եւ բռնութիւններին։ Հայկական գյուղերի ինքնապաշտպանութիւնը ճնշելու նպատակով վրացական զորքերը ձեռնարկեցին պատժարշավ, որի արդյունքում մի քանի օր շարունակ հայկական գյուղերի բնակչութեան եւ վրացական կանոնավոր զորքերի միջեւ տեղի ունենեցան ռազմական ընդհարումներ³։ Ա. Դենիկինը, «ցանկանալով դադարեցնել արյունահեղութիւնը», հրամայեց իր զորքերին զբաղեցնել Սոչիի շրջանը⁴։ Կամավորական բանակի գորագնդերը 1919թ. հունվարի 24-ին անցան հարձակման⁵։ Ռուսական մի շարք աղբյուրներում հիշատակվում է այն մասին, որ այն ժամանակ, երբ Ա. Դենիկինի զորքերը ռազմաճակատից հարձակվեցին վրացիների վրա, նրանց կողմից կազմավորված հայկական ջոկատները, հարվածեցին վրացական զորքին թիկունքից եւ թեւերից, որի հետեւանքով վրացական զորքերը անձնատուր եղան⁶։ Կարելի է ենթադրել, որ Կամավորական բանակը նախօրոք կազմակերպել, զինել եւ նախապատրաստել էր հայերից բաղկացած մի քանի ջոկատներ, որոնց եւ օգտագործել էր իր ռազմական նպատակների համար։ Ռազմական գործողութիւնները շարունակվեցին մինչեւ 1919թ. փետրվարի 10-ը, երբ կամավորական բանակի զորամասերը հասան Բզիբ գետը։ Միայն դրանից հետո, դենիկինյան հրամանատարութիւնը, անգլիացիների ճնշմամբ, հանդես եկավ հայտարարութեամբ, որով դադարեցրեց Վրաստանի դեմ ուղղված ռազմական գործողութիւնները⁷։ Փաստորեն, իր նպատակները կյանքի կոչելու համար, Կամավորական բանակի հրամանատարութիւնը հմտորեն օգտագործեց Սոչիի հայութիւնը։ Կամավորական բանակի կողմից Սոչին գրավելուց հետո, Վրաստանի կառավարութիւնը անհիմն մեղադրանքներ ներկայացրեց Հայաստանին, թե իբր հայերը եւ ուսուները կազմակերպված կերպով իրականացրել են համատեղ ծրագիր ընդդեմ Վրաստանի Հանրապետութեան։ Սակայն տվյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսաստանի հարավի զինված ուժերի միջեւ դաշինքի առկայութեան դադարին անգամ համահավասար էր անհեթեթութեան։ Կամավորական բանակի գլխավոր հրամանատար Ա. Դենիկինը գրում է. «Չնայած Հայաստանի հետ մեր հարաբերութիւնները՝ նույնիսկ դեկանագրիտական, բացարձակապես կարգավորված չէին, սակայն, վրացական կառավարութիւնը ինքը, կամ անգլիացիներին ներշնչելու համար, կարծում էր, որ ժամանակի առումով համընկած Կամավորական բանակի մասնակի առաջխաղացումը դեպի Լոռ կայարան եւ հայկական հարձակումը Թիֆլիսի ուղղութեամբ հանդիսանում էին ընդհանուր խորը մտածված ծրագիր ընդդեմ Վրաստանի Հանրապետութեան»⁸։

Վրաստանի կառավարութեան կողմից տարածված նման լուրերը պատճառ դարձան, որ Անդրկովկասում անգլիական շահերի հանձնակատար գեներալ Ուոքերը բացահայտ կերպով սպառնա Հայաստանի արտաքին գործերի նախարար Տիգրանյանին, որ «թե հայերը Կամավորական բանակի հետ միասին հարձակվեն Վրաստանի վրա, ապա ինքը իր զորքի հետ միասին հանդես կգա նրա պաշտպանութեամբ»⁹։

Կամավորական բանակը, Սոչիի գրավումից հետո էլ, շարունակեց օգտագործել հայ բնակչութիւնը իր նպատակների իրականացման համար։ Շուտով Սոչիում սկսվեց ապսամբութիւն, որն ուղղված էր այս անգամ արդեն Կամավորական բանակի դեմ։ Ձեռքի ուժով չկարողանալով ճնշել ապստամբներին, Կամավորական բա-

¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.100, Թ.81
² Деникин А., նշվ. աշխ., էջ 224:
³ Նույն տեղում, էջ 283:
⁴ Նույն տեղում:
⁵ Նույն տեղում:
⁶ Карпов Н., նշվ. աշխ., էջ 98:
⁷ Նույն տեղում:
⁸ Деникин А., նշվ. աշխ., էջ 280:
⁹ Деникин А., նշվ. աշխ., էջ 222:

նակի հրամանատարութիւնը առաջարկեց ապստամբութեան ղեկավարներին բանակցութիւններ սկսել, որտեղ, որպէս միջնորդ, օգտագործվեց Սոչիի Հայոց ազգային խորհուրդը¹: Նրա միջոցով, Կամավորական բանակը ապստամբներին հաղորդեց, որ խռովութեան բոլոր մասնակիցներին հայտարարվում է ներում: Որպէսզի հստակեցվի իշխանութիւնների եւ բնակչութեան միջեւ ձեւավորվելիք փոխհարաբերութիւնների սահմանագիծը Կամավորական բանակի հրամանատարութիւնը առաջարկեց անցկացնել հատուկ համագումար: Ապստամբները, համարելով, որ հիմնականում կատարել են իրենց շարժման գլխավոր նպատակները, ընդունեցին Կամավորական բանակի առաջարկը եւ դադարեցրեցին զինված պայքարը: Սակայն Կամավորական բանակի հրամանատարութիւնը չկատարեց իր խոստումը: Գրեթե միանգամից սկսվեցին ապստամբութեան ղեկավարների հետապնդումները եւ ձերբակալութիւնները²: Ապստամբութիւնը նոր ուժ ստացավ, իսկ Կամավորական բանակի քաղաքականութեան եւ տեղի Հայոց ազգային խորհրդի անհեռատես քայլերի արդունքում Սոչիի հայութիւնը լուրջ բարդութիւններ ունեցավ տեղաբնիկների հետ փոխհարաբերութիւններում: Արխիվային վավերագրերը եւ նյութերը հավաստում են, որ 1919թ. առաջին ամիսներին Հյուսիսային Կովկասի այլ վայրերից Սոչի եկած հայ նախկին ռազմագերիները ապստամբ ուժերի կողմից ենթարկվում էին հալածանքների եւ թալանի, որոնցից խոսափում էին միայն նրանք, ովքեր համաձայնվում էին համալրել վերջիններիս շարքերը: Ապստամբներին համալրած հայ ռազմագերիների թիվը հասնում էր 500 հոգու³:

Արխիվային վավերագրերի եւ նյութերի ուսումնասիրութիւնը, բերում է մեզ այն համոզմանը, որ 1918թ վերջին եւ 1919թ. սկզբին Սոչիի շրջանի հայութիւնը Ռուսաստանում մոլեզնոզ քաղաքիական պատերազմի պայմաններում անցել էր ծանր փորձութիւնների միջով: Մի քանի ամիսների ընթացքում Սոչիի շրջանը տարբեր քաղաքական ուժերի տիրապետութեան տակ էր գտնվում, որոնք տեղի հայութեանը ենթարկում էին տարաբնույթ հալածանքների, բռնութիւնների եւ ծառայեցնում էին իրենց քաղաքական շահերին:

Սմբատ Մինասյան

ПОЛОЖЕНИЕ СОЧИНСКОГО АРМЯНСТВА И ДОБРОВОЛЬЧЕСКАЯ АРМИЯ

(вторая половина 1918г. - начало 1919г.)

РЕЗЮМЕ

Во время бушующей в России гражданской войны множество армянских общин на Юге России использовались в корыстных интересах местных властей. Некоторые местные Армянские национальные советы оказывали содействие местным властям в осуществлении их политики, которая часто шла в разрез интересам местного армянского населения. В декабре 1918г. и в первые месяцы 1919г. в Сочинском округе создалась сложная политическая ситуация между Грузией и Добровольческой армией: началась борьба за преобладание в этом округе. Грузинская политика в Сочи вызвало недовольство местного армянского населения, большинство которых стало поддерживать А.Деникина. Добровольческая армия, под предлогом защитить армянское население Сочи, захватила округ.

Տմբատ Մինասյան

**ՌՌՒՍԱՍԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԿԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ**

¹ Карпов Н., ԿՂՎ. աշխ., էջ 100-101:

² Նույն տեղում:

³ ՀԱԱ, ֆ.200, ց.1, դ.100, թ.81:

Կարմիր բանակի՝ 1920թ. առաջին ամիսներին ունեցած ռազմական հաջողությունները Հյուսիսային Կովկասում, մեծ մտավախություն առաջացրեց Համաձայնության (Անտանտի) երկրների դեկավարության մոտ. բոլշևիզմի վտանգը մոտեցել էր Անդրկովկասի սահմաններին: Մ.Մանուկյանը գրում է. «...Սպիտակ շարժման անգործությունը բացում էր կարմիր բանակի առջև ազատ ճանապարհ դէպի երեք նոր Հանրապետություններ: Այդ արդէն նրանց ներքին՝ իրենց անկախութեան պահպանութեան վերաբերուող հարց չէր, այլ ամբողջ եվրոպային եւ, մանաւանդ, Անգլիային սպառնացող վտանգի հարց էր յաղթականորէն Ասիայի սահմաններին մօտեցող Խորհրդային իշխանութիւնից: Այդ, միւս կողմից, հարցի տակ էր դնում եւ Դաշնակից զօրքերի մնալը Անդրկովկասում, զօրքեր, որոնք բաւականաչափ ուժեղ չէին, որպէսզի բացայայտ կռուի բռնուէին կարմիր զօրքերի հետ»¹: Իրենց շահերին սպառնացող վտանգի պայմաններում, Համաձայնության երկրների կառավարութիւնները հանկարծ «հիշեցին», որ Անդրկովկասյան պետութիւնները իրենցից վաղուց «խնդրում էին» պաշտոնական ճանաչում: Համաձայնության երկրները կառավարութիւնները երկյուղում էին, որ Անդրկովկասը «բոլշևիկացնելուց» հետո, Խորհրդային Ռուսաստանը կմոտենար Պարսկաստանին եւ Առաջավոր Ասիայի այլ երկրներին: Ահա թե ինչու Անդրկովկասյան պետութիւնների դե ֆակտո ճանաչումը, որի նպատակն էր՝ «օղակել բոլշևիկյան շարժումը»², հրատապ դարձավ Համաձայնության երկրների համար: Ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանն ու Ադրբեջանն ունեին հակառուսական դիրքորոշում, նրանք շատ արագ հայտնվեցին ուշադրութեան կենտրոնում:

1920թ. հունվարի 12-ին Համաձայնության երկրների Գերագույն խորհուրդը դե ֆակտո ճանաչեց Վրաստանի եւ Ադրբեջանի կառավարութիւնները³, «հիշելով» սակայն, Հայաստանը: Դա, բնականաբար, խոր վրդովմունք եւ դժգոհութիւն առաջացրեց Հայաստանի Հանրապետության քաղաքական, դիվանագիտական եւ, առհասարակ, հայութեան լայն շրջաններում. ինչու՞ «Դաշնակիցները ...միաժամանակ չեն հռչակել նաեւ Հայաստանի տէ ֆաքթօ ճանաչումը»⁴: Այլեքսանդր Խատիսյանը, նամակով, իր վրդովմունքը հայտնեց Անգլիայի գերագույն հանձնակատար Օ.Ուորդրոպին եւ խնդրեց այդ մասին տեղեկացնել Գերագույն խորհրդին⁵: Հունվարի 15-ին Մ.Ուորդրոպն Ա.Խատիսյանին ուղղած պատասխան նամակում գրում է. «Ես շատ մտահոգեցի, լսելով ձեզից, որ ձեր հայրենակիցները անհանգստացած են ներկայումս de facto միայն Վրաստանի եւ Ադրբեջանի ճանաչմամբ: Ըստ իս այդ լուրը պետք է հակառակ տպաւորութիւն գործէր: Հարկական հարցը կապւած է տաճկական հետ եւ շուտով կը լուծւի Տաճկաստանի հետ կնքելիք հաշտութեան պայմանագրով, իսկ մինչ այդ ես լիազօրւած չեմ որեւէ պաշտոնական յայտարարութիւն անելու Հայաստանի ճանաչման խնդրի մասին: Իսկ այն վաստը, որ Վրաստանն ու Ադրբեջանը de facto պաշտօնապէս ճանաչել են, ինձ թւում է թէ համոզիչ ապացույց է, որ Հայ ժողովուրդը ոչ մի հիմք չունի անհանգստանալու... Գործը կարելի է թողնել դաշնակիցների ձեռքում, լիապէս հաւատացած լինելով, որ Հայ ժողովրդի հետ արդարացի կը լինեն»⁶ (ընդգծումը մերն է - Գ.Պ.):

Պատճառաբանութիւնն առաջին հայացքից թվում է հիմնավոր. Հայկական հարցը, իրոք, քննարկվում էր Փարիզի վեհաժողովում. պատրաստվում էր Թուրքիայի հետ կնքելիք պայմանագիրը, որը պետք է լուծեր Արեւմտյան Հայաստանի խնդիրը: Սակայն դա չէր խանգարում, որպեսզի Գերագույն խորհուրդը ճանաչեր արդեն կազմավորված ու գործող Արեւելյան Հայաստանի Հանրապետութիւնը: ՀՀ-ի չճանաչման գործում իր դերն էր ունեցել այն հանգամանքը, որ վերջինս բարեկամական հարաբերութիւններ ուներ Ռուսաստանի հարավում գործող քաղաքական ուժերի հետ: Համաձայնության երկրների կառավարութիւնները համոզված էին, որ Հայաստանը դեմ դուրս չի դա Ռուսաստանին, անկախ նրանից, թե

¹ «Հայրենիք», Բոստոն, 1927, հոկտեմբեր, էջ 78:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ ՀԱԱ), ֆ.Պ- 278, ց.1, գ.10, թ.36:

³ ՀԱԱ, ֆ.Պ- 43, ց.1, գ.124, թ.19, Բ.Բորյան, Армения международная дипломатия и СССР, մաս II, Մոսկվա-Լենինգրադ, 1929, էջ 65.

⁴ «Հայրենիք», Բոստոն, 1926, հոկտեմբեր, էջ 92:

⁵ ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց.1, գ.555, թ.40, 56, «Աշխատավոր», 17 հունվարի, 1920, Թիֆլիս:

⁶ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 196:

վերջինս՝ «սպիտակ» է, թե՛ «կարմիր»։ Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում Գերագույն խորհրդի աշխարհայր բացասական արձագանք ստացավ, վերջինս շտապեց ուղղել թույլ տրված իր սխալը։ Մի քանի օր անց, հունվարի 19-ին, դե ֆակտո ճանաչվեց նաև Հայաստանի կառավարությունը¹։

Հունվարի 23-ին, Գերագույն խորհրդի այս որոշման մասին Լ.Քերզոնը Հեռագիր ուղղարկելով Թիֆլիս՝ Օ.Ուորդերոպին*։ Վերջինիս փոխանորդ Գրանդը, նույն օրը, Հեռագրի բովանդակությունը հաղորդեց Ա.Խատիսյանին. «Գերագույն խորհուրդը Փարիզում որոշեց, որ Հայաստանի կառավարությունը պիտի ճանաչի իբրև կառավարություն de facto, այն պայմանով, որ այս ճանաչումը ոչ մի դէպքում չի կանխորոշում սահմանների խնդրի վերջնական լուծումը։ Այս ճանաչումը անպայմանորեն վերաբերում է Հայաստանի՝ նրա այժմեան վիճակին, երեւան մայրաքաղաքով, սակայն ոչ մի կերպ չի վերաբերում՝ Թիւրքաց Հայաստանին»²։ Հաջորդ օրը, հունվարի 24-ին, Ա.Խատիսյանը Հեռագրի բովանդակությունը հրապարակեց Հայաստանի խորհրդարանի արտակարգ նիստում³։

Անգրկովկասյան պետությունների անկախության դե ֆակտո ճանաչման փաստին այլ մոտեցում ցուցաբերեց Ռուսաստանի հարավում գործող Կամավորական բանակի Գլխավոր հրամանատարությունը, որի նպատակն էր վերականգնել Ռուսական կայսրությունը՝ 1914թ. սահմաններով։ Իսկ դա նշանակում էր, որ Կամավորական բանակի Գլխավոր հրամանատար Անտոն Դենիկինը չէր ընդունում Անգրկովկասյան պետությունների, այդ թվում եւ՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը։ Իրա մասին է վկայում 1920թ. հունվարի 20-ին Ռուսաստանի հարավի գլխաված ուժերի գլխավոր հրամանատարությունը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հ.Սաղաթեղյանի՝ ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված նամակ-գեկուլյցը, որտեղ նշվում էր. «...Ներկա պահին գրեթե կանխորոշված է Կամավորական բանակի մոտալուրտ պարտությունը, սակայն գեներալ Ա.Դենիկինը իր հայրենասիրության եւ գործունեության գերագույն նպատակը համարելով «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան»-ի կերտումը՝ շարունակում է չճանաչել Հայաստանի անկախությունը... Ահա թե ինչու այս պահին նպատակահարմար չեմ համարում բարձրացնել այդ հարցը։ Անհրաժեշտ եմ համարում սպասել եւս մի քանի օր եւ հայտնի կդառնա Կամավորական բանակի դրությունը»⁴։ Այդ հարցը մեկ անգամ չէ, որ բարձրացվել է գլխավոր հրամանատարության առջև, շարունակում է Հ.Սաղաթեղյանը, սակայն միշտ էլ հետեւել է այն պատասխանը, որ պետք է սպասել Համառուսաստանյան Սահմանադիր ժողովին. նա կտա հարցի վերջնական պատասխանը⁵։

Ահա թե ինչու Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը վրդովմունքով եւ ցավագին ընդունեց Համաձայնության երկրների Գերագույն խորհրդի որոշումը՝ դե ֆակտո ճանաչել Անգրկովկասյան երեք պետությունների կառավարությունները։ Գերագույն հրամանատարությունը կարծում էր, թե ճանաչվում է նրանց անկախությունը։ Թեեւ դա այդպես էր։ 1920թ. հունվարին, Եկատերինոգարում, Դոնի, Կուբանի եւ Թերեքի Գերագույն կրոնքում Ա.Դենիկինն արտահայտեց իր վերաբերմունքն այդ կառավարությունների դե ֆակտո ճանաչման մասին։ Գեներալը նշեց, որ Համաձայնության երկրների Գերագույն խորհրդի կողմից. «...Հայտարարված վերաբերմունքը դեպի Ադրբեջանն ու Վրաստանը առիթ տվեց կարծելու, թե դա նորակազմ պետությունների անկախության հայտարարությունն է, եւ դիմեցի բողոքով, բայց այսօր պաշտոնական պարզաբանում եմ ստացել, որ տերությունները de facto են ճանաչել կառավարությունների ինքնուրույնությունը, այլ ոչ թե ծայրամասային պետությունների անկախությունը հենց իմ առաջարկության իմաստով։ Դա անհանդուրժողականություն է, այլ ռուսական

¹ Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (այսուհետեւ ՌԴՊԱ), ֆ.446, ց.2, գ.36, թ.98, «Յառաջ», 3 փետրվարի, 1920, եր. «Հայրենիք», Բոստոն, 1927, հոկտեմբեր, էջ 78, Բ.Բորյան, նշվ. աշխ., էջ 65։

* Այդ օրերին նա գտնվում էր Բաքվում։

² ՀԱԱ, ֆ.Պ-201, ց.1, գ.53, թ.8, ֆ.Պ- 200, ց.1, գ.555, մաս I, թ.36, 56։

³ «Յառաջ», 3 փետրվարի, 1920, Երեւան։

⁴ ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց.1, գ.385, թ.30։

⁵ Նույն տեղում։

պետութեան գերագույն շահերի պահպանութիւնն է, եւ այդ առարկութիւնները բոլորովին չեն բացառում բարեկամական ու բարիգրացիական հարաբերութիւններին հնարավորութիւնը այդ հիման վրա»¹: Այնուհետեւ, Ա. Դենիկինը նշեց. «Դաշնակիցների այն առաջարկին, որ որոշեմ իմ վերաբերմունքը ծայրամասերի նկատմամբ, ես տվի որոշ եւ պարզ պատասխան:

Ընդամին՝ ես ճանաչում եմ բոլշեւիկների դեմ կռիւղ ծայրամասերի իրական կառավարութիւնների գոյութեան փաստը:

Երկրորդ՝ ծայրամասերի նկատմամբ Ռուսաստանի ունենալիք ապագա հարաբերութիւնները սահմանվելու են համառուսական կառավարութեան եւ ծայրամասերի կառավարութիւնների միջեւ կնքվելիք պայմանագրով. ընդամին թույլ է տրվում դաշնակից պետութիւնների միջնորդութիւնը»²:

Համաձայնութեան երկրների Գերագույն խորհրդի Հանձնարարութեամբ Ռուսաստանի հարավի գինւթ ուժերի գլխավոր հրամանատարութիւնը նույնպէս ճանաչեց Անդրկովկասյան երեք պետութիւնների կառավարութիւնների փաստական գոյութիւնը: 1920թ. հունվարի 21-ին (փետրվարի 3-ին) գեներալ Ա. Դենիկինը, հեռագիր ուղարկելով Թիֆլիսի իր ներկայացուցիչ գնդապետ Դենին, Հանձնարարեց նրան տեղեկացնել Անդրկովկասի երեք պետութիւնների իշխանութիւններին այն մասին, որ Ռուսաստանի հարավի գինւթ ուժերի գլխավոր հրամանատարութիւնը ճանաչում է Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարութիւնների փաստական գոյութիւնը³: Փետրվարի 10-ին, Հայաստանում գլխավոր հրամանատարի գինւթական ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկելիչը Հայաստանի Հանրապետութեան վարչապետին ուղղած պաշտոնական ուղերձում հաղորդեց. «Պատիւ ունեմ ներկայացնելու Հայաստանի կառավարութեանը Մեծ Բրիտանիայի Անդրկովկասյան գերագույն Հանձնակատարի եւ Թիֆլիսի մեր ներկայացուցչի միջոցով հին տամարով հունվարի 21-ին (նոր տամարով փետրվարի 3-ին) ինձ ուղարկած մի հեռագրական հաղորդագրութիւն, որով հայտնվում է, որ Ռուսաստանի հարավի գինւթ ուժերի գլխավոր հրամանատարութիւնը ճանաչում է Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի փաստական գոյութիւնը»: Ի՞նչ էր նշանակում ընդունել Անդրկովկասյան պետութիւնների կառավարութիւնների փաստական գոյութիւնը: Դա նույնն էր, թե ճանաչել այդ պետութիւնների անկախութիւնը: Պարզապէս կարելի է ասել, որ «կառավարութիւնների փաստական գոյութեան ճանաչման» արտահայտութիւնն ուղղակի բառախաղ էր, որը, Ա. Դենիկինի մոտ, պատրանք է ստեղծում. թե Անդրկովկասյան պետութիւնների անկախութիւնը չի ճանաչվում, այլ, սոսկ, ընդունվում է նրանց կառավարութիւնների փաստացի գոյութիւնը: Ի դեպ, գեներալը ավելի շուտ էր ճանաչել Հայաստանի Հանրապետութիւնը, երբ 1919թ. օգոստոսի 20-ին ՀՀ կառավարութեանը կից նշանակել էր իր գինւթական ներկայացուցչին⁴: Ռուսաստանի հարավի գինւթ ուժերի գլխավոր հրամանատարութեան կողմից Անդրկովկասյան պետութիւնների փաստական ճանաչումը կատարվեց այն ժամանակ, երբ Կամավորական բանակը գտնվում էր փլուզման եզրին:

Անդրկովկասյան պետութիւնների համար ստեղծվեց բարդ եւ հակասութիւններով լի մի նոր իրավիճակ: Մի կողմից Վրաստանն ու Ադրբեջանը ուրախութեամբ ընդունեցին գեներալ Ա. Դենիկինի մոտալուրտ պարտութիւնը, սակայն, մյուս կողմից յուրը անհանգստցան, քանզի հանձինս Կարմիր բանակի նրանց անկախութեանը նոր վտանգ էր սպառնում: 1920թ. մարտի 25-ին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնակատար Լ. Թումանյանը Թիֆլիսից հաղորդում է այն մասին, որ վրաց ղեկավարները համոզված են, թե «...Բոլշեւիկի հաստատումը Վրաստանի սահմաններում առաջ կբերի անկախութեան գաղափարի խորտակում,

¹ Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах. - Книга 3/ т.4, т.5. Вооруженные силы Юга России, Москва, 2003, էջ 735, Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետութիւն, Եր. 1993, էջ 382, Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրութիւնը (1920-1922թթ.), Եր., 1967, էջ 77:

² «Աշխատավոր», 12 փետրվարի, 1920, Թիֆլիս:

³ Ռուսաստանի Դաշնութեան գինւթական արխիւ (այսուհետեւ ՌԴՁԱ), Փ.35540, ց.1, գ.44, թ.74-75, ՌԴՊԱ, Փ.446, ց.2, գ.36, թ.95, ՀԱԱ, Փ.Պ- 200, ց.1, գ.529, թ.14:

⁴ ՀԱԱ, Փ.Պ- 199, ց. 1, գ. 198, մաս I, թ. 32, 34, 35, 36, Վրացյան Ա., նշվ. աշխ., էջ 381:

որովհետեւ յայտնի է, որ Վրաստանի կոմունիստները ձգտում են դէպի ֆեդերատիվ միացում Ռուսաստանի հետ»¹:

Այդպիսի բարդ քաղաքական իրադրութեան պայմաններում, մինչ Ա.Դենիկինի վերջնական պարտութիւնը, Հայ դիվանագիտութիւնը չեզոքութիւն դրսեւորեց, թե Կամավորական բանակի եւ թե Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Միաժամանակ, ելնելով ՀՀ շահերից, Հայաստանի կառավարութիւնը շարունակեց պահպանել բարեկամական հարաբերութիւնները Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ, քանզի ձգտում էր օգտվել Ռուսաստանի հարավի քաղաքական, ռազմական եւ տնտեսական հնարավորութիւններից. Հայաստանին անհրաժեշտ էր Դոնի, Կուբանի եւ Թերեքի երկրամասերից ներկրել գէնք, գինամթերք, հաց, պարեն եւ այլ անհրաժեշտ ապրանքներ: Կամավորական բանակի հսկողութեան տակ գտնվող շրջաններում բնակվում էին նաեւ հազարավոր Հայ գաղթականներ:

Հայաստանի Հանրապետութեան հետ իր բարեկամական հարաբերութիւնները շարունակեց պահպանել նաեւ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարութիւնը: Փետրվարի կեսերին, Հ.Սաղաթելյանի հետ հանդիպման ժամանակ, Ա.Դենիկին մեկ անգամ եւս նշեց, որ իր վերաբերմունքը Հայաստանի եւ Հայ ժողովրդի նկատմամբ շարունակում է մնալ բարյացակամ եւ չի դադարի օգնել նրան թշնամիների դեմ մղվող պայքարում²: Չնայած Կամավորական բանակը գտնվում էր պարենային խոր ճգնաժամի մեջ, սակայն, Ա.Դենիկինը խոստացավ շարունակել Հայաստանին մատակարարել սերմացու, պարեն, գէնք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ: Ա.Դենիկինը հայտնեց նաեւ, որ Բաթումում ստեղծվում են Կամավորական բանակի՝ գէնքի եւ գինամթերքի պահեստներ եւ անհրաժեշտ է մտածել՝ Հայաստան ապրանքների ու գինամթերքի առաքման ապահով ճանապարհների ճիշտ ընտրութեան հարցի մասին: Հայաստանը Կամավորական բանակից ստացավ վերջին օգնութիւնը՝ մեկ միլիոն 200 հազար փամփուշտ եւ որոշ քանակութեամբ գինամթերք³:

1920թ. փետրվարին, Կամավորական բանակի օգնութեամբ, հարյուրավոր Հայ գաղթականներ Կուբանի եւ Թերեքի երկրամասերից ներգաղթեցին Հայրենիք: Ա.Դենիկինը թույլատրեց ՀՀ իշխանութիւններին այդ երկրամասերի տարբեր քաղաքներում հիմնել հայկական նոր հյուպատոսութիւններ, որոնք պետք է զբաղվեին տեղի հայութեան եւ գաղթականութեան խնդիրներով:

1919թ. դեկտեմբերի 16-ին գեներալ Ա.Դենիկինը լուծարեց գլխավոր հրամանատարութեանը կից «Հատուկ խորհրդակցութիւնը», իսկ 1920թ. հունվարի 23-ին ճանաչեց Դոնի, Կուբանի եւ Թերեքի երկրամասերի անկախ գոյութիւնը: Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարութեան եւ երեք երկրամասերի համաձայնութեամբ ստեղծվեց կազակային նոր կառավարութիւն՝ Դոնի, Կուբանի, Թերեքի Գերագույն կրուզը՝ (Верховный Круз) գեներալ Ա.Դենիկինի նախագահութեամբ: Գերագույն կրուզը միաժամանակ ստանձնեց օրենսդիր եւ գործադիր իշխանութիւնների գործառույթներ:

Նորաստեղծ Գերագույն կրուզի առաջնահերթ խնդիրն էր՝ կասեցնել Կարմիր բանակի առաջխաղացումը եւ պահպանել այդ երկրամասերի անկախ գոյութիւնը: Գերագույն կրուզի նախագահի որոշմամբ ստեղծվեցին Դոնի (Պ.Կովալեւ), Կուբանի (գնդապետ՝ Մ.Ջոզուլյա) եւ Թերեքի (գնդապետ՝ Ն.Բիզաեւ) պատվիրակութիւններ, որոնք բանակցելով Անդրկովկասյան երեք պետութիւնների կառավարութիւնների հետ, պարզելու էին, թե վերջիններս բուլշեւիկների դեմ մղվող պայքարում հնարավոր ինչ ձեւերով ու միջոցներով կարող են օգնել Կամավորական բանակին:

1920թ. փետրվարի 28-ին Լ.Եվանգուլյանը* Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-գեղեղյցով¹ եւ մարտի 4-ի հեռագ-

¹ ՀԱԱ, Ք.Պ- 200, ց.1, գ.440, թ.15:

² Նույն տեղում, գ.562, թ. 20:

³ Նույն տեղում:

* 1920թ. մարտի 3-ին Լ.Եվանգուլյանը Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարին ուղղած նամակում հայտնեց, որ հիվանդութեան պատճառով հրաժարվում է Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչի պարտականութիւններից այն հանձնելով Մ.Թումանյանին, որը 1918-ի սեպտեմբերի 14-ից զբաղեցնում էր դիվանագիտական ներկա-

րով² տեղեկացրեց, որ փետրվարի 24-ին Թիֆլիս է ժամանել Գերագույն կրուզի պատվիրակությունը: Գերագույն կրուզի պատվիրակությունը Թիֆլիսում ստացավ ջերմ ընդունելություն: Փետրվարի 27-ին Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան եւ արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին նրանց ընդունեցին կառավարությունում: Բանակցությունների ժամանակ Ն. Ժորդանիան նշեց, որ «Վրաստանը միշտ էլ ձգտել է բարեկամական հարաբերություններ հաստատել կազակների, ինչպես նաեւ գեներալ Ա. Դենիկինի հետ, սակայն, դա նրան չի հաջողվել: Այժմ վրաց ժողովուրդը Գերագույն կրուզի պատվիրակությունը դիմավորում է բավարարություն մեծ գգացումով: Վրաստանը չի կարող մոռանալ հարյուրամյա իր կյանքը Ռուսաստանի դրոշի ներքո, կյանք, որը բացասականից գատ ունեցել է նաեւ դրական կողմեր: Նա չի կարող մոռանալ նրա մշակույթը, որով դաստիարակվել է վրաց ժողովուրդը»³: Այնուհետեւ Ն. Ժորդանիան պատասխանեց Գերագույն կրուզի առաջադրած հարցերին. «Վրաստանը կազակներին զինված օգնություն ցույց տալ չի կարող, քանի որ դրա համար իր երկիրը ուժ չունի: Ինչ վերաբերում է նյութական եւ բարոյական օգնությանը, ապա Վրաստանի կառավարությունը պատրաստ է ընթացող գնալ կազակներին»⁴:

Մարտի 7-ին Գերագույն կրուզի պատվիրակությունը Թիֆլիսից ժամանեց Երեւան⁵: Կայարանում, մեծ հանդիսավորությամբ, կազակների պատվիրակության ընդունեցին զինվորական նախարար՝ գեներալ Արարատովը, արտաքին եւ ներքին գործերի նախարարների տեղակալները, Երեւանի պարետ՝ կապիտան Պ. Շահ-խաթունին, գեներալ Ա. Դենիկինի ներկայացուցիչ՝ գնդապետ Մ. Չինկելիչը եւ այլ պաշտոնյաներ⁶: Հաջորդ օրը, մարտի 8-ին, նախարարների խորհրդում նրանց ընդունեց Ա. Խատիսյանը: Բանակցությունների ժամանակ կազակների պատվիրակությունը Հայաստանի կառավարությանը ներկայացրեց հետեւյալ խնդիրները՝

1. Հայաստանը ի՞նչ կերպ կարող է մասնակցել բուլղերիկների դեմ մղվող պայքարին:

2. Սպառազինության փոխանակում:

3. Հայաստանում Կամավորական բանակի համարման հնարավորությունը եւ Հայաստանի կառավարության վերաբերմունքը դրա նկատմամբ:

4. Կամավորական բանակի նահանջի դեպքում արդյոք կարո՞ղ են ուսւ գին-վորները եւ փախստականները կացարան գտնել Հայաստանում:

5. Ինչպիսի՞ն է ուսւների դրու՞թյունը Հայաստանում:

6. Գերագույն կրուզը՝ քաղաքական, տնտեսական եւ ռազմական բնագավառներում ինչպիսի՞ օգնություն կարող է ցույց տալ Հայաստանին:

7. Ռուսաստանի հարավի հետ փոստ-հեռագրական կապի հաստատում⁶:

Հայաստանի նկատմամբ դրսեւորած քաղաքական, տնտեսական, զինական օգնություն եւ հայ գաղթականների՝ ներգաղթի կազմակերպմանն աջակցելու համար, Ա. Խատիսյանը՝ կառավարության, խորհրդարանի եւ հայ ժողովրդի անունից շնորհակալություն հայտնեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գլխավոր հրամանատարությունը ու գեներալ Ա. Դենիկինին: Այնուհետեւ, վերոնշյալ հարցերի վերաբերյալ ՀՀ վարչապետը հրապարակեց կառավարության պաշտոնական տեսակետը.

1. Հայաստանի կառավարությունը հնարավորություն չունի ուժեր հատկացնել բուլղերիկների դեմ մղվող պայքարին: Չի կարող զինված ջոկատներ հատկացնել կազակությունը, քանզի՝ Հայաստանը չըջապատված է թուրք-ադրբեջանական օղակով եւ ՀՀ բոլոր ուժերն ուղղված են նրանց դեմ:

յացուցչություն խորհրդականի պաշտոնը եւ ղեկավարում էր գրասենյակի գործավարությունը:

¹ ՀԱԱ, ֆ. 9- 200, ց. 1, գ. 417, թ. 7, 43:

² Նույն տեղում, թ. 12:

³ Ռ. Դ. ՊԱ., ֆ. 5881, ց. 2, գ. 250, թ. 9:

⁴ Նույն տեղում:

* Նույն պատվիրակության հետ Երեւան ժամանեց նաեւ Փարիզում ՀՀ պատվիրակության անդամ Համո Օհանջանյանը:

⁵ Ռ. Դ. ՊԱ., ֆ. 5881, ց. 2, գ. 250, թ. 22:

⁶ Նույն տեղում, թ. 21-22, Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ, ֆ. 71, ց. 35, գ. 195, թ. 207, ՀԱԱ, ֆ. 9- 200, ց. 1, գ. 33, թ. 8:

2. Հայաստանը պատրաստ է կազմակերպել սպառազինութեան փոխանակում:

3. Կառավարութիւնը գտնում է, որ Հայաստանում հնարավոր չէ ձեւավորել Կամավորական զորաջոկատներ:

Միակ տարրը՝ մոլականերն են, սակայն, նրանք էլ «վարակված» են բոլշեւիզմով: Կամավորական զորաջոկատների կազմավորման մասին պաշտոնական Հայտարարութիւնն անօգուտ ու վնասակար է եւ չի Համապատասխանում Հայաստանի քաղաքական շահերին: Սակայն կառավարութիւնը չի խոչընդոտի, եթե գտնվեն անձինք, ովքեր, որպէս անհատներ, ցանկութիւն կհայտնեն մեկնելու Կամավորական բանակ:

4. Կամավորական բանակի նահանջի դեպքում Հայաստանը պատրաստ է Հյուրընկալել ռուսական բանակի զինվորներին եւ փախստականներին, սակայն, պարենի ճգնաժամի պատճառով՝ ժամանողները պետք է ունենան իրենց անհրաժեշտ պարենը:

5. Հայաստանում ռուսների դրութիւնը բարվոք է, նույնիսկ՝ արտոնյալ: Նրանք զինապարտ չեն. ոչ մի ռուս Հայաստանից չի արտաքսվել, հակառակը՝ այլ վայրերից եկածները Հայաստանում կացարան եւ աշխատանք են գտնում: Բանակում շատ են ռուս սպաները եւ զինվորները. ազգայնացման հետեւանքով բանակից դուրս մնացածները ստանում են փոխհատուցման գումարներ:

6. Ռուսաստանի Հարավը կարող է Հայաստանին օգնել տնտեսական, քաղաքական եւ ռազմական ոլորտներում: Տնտեսական օգնութիւնը կարող է արտահայտվել Հայաստանին անհրաժեշտ Հացամթերք, յուղ, սերմ ուղարկելով: Քաղաքական օգնութիւնը՝ Միացյալ Հայաստանի իրավական ճանաչումն է: Ռազմական օգնութիւնը կարող է արտահայտվել սպառազինութեան փոխանակման տեսքով:

7. Ա.Խատիսյանը ցանկութիւն հայտնեց, որ Գերագույն կրօնգր կոնկրետ քայլեր ձեռնարկի Ռուսաստանի Հարավի եւ Հայաստանի միջեւ փոստ-հեռագրական կապի Հաստատման ուղղութեամբ, քանզի դրա բացակայութիւնը շատ ծանր է անդրադառնում Հանրապետութեան վրա¹:

Ինչպէս երեւում է Ա.Խատիսյանի պատասխանից, Հայաստանի կառավարութիւնը որեւէ պարտավորութիւն չստանձնեց: Գերագույն կրօնգր պատվիրակութեանը չքաջալերեց վարչապետի դիվանագիտական պատասխանը: Թերեքի պատվիրակութեան ներկայացուցիչ գնդապետ Ն.Բիգաեւը իր հուշերում գրում է. «...Թիֆլիսում լրագրողները չէին հեռանում պատվիրակութիւնից, իսկ երեւանում անգամ պաշտոնաթերթից ոչ ոք չմոտեցավ մեզ»²: Այս անգամ եւս, Հաշվի առնելով ստեղծված քաղաքական բարդ պայմանները ՀՀ ղեկավարութիւնը ճիշտ կողմնորոշվեց եւ չընդունեց բոլշեւիզմի դեմ պայքարում իրենց աջակցելու Ա.Դենիկինի առաջարկը եւ մնաց չեզոք դիրքերում:

Կազակների պատվիրակութիւնը, մարտի 11-ին, ուղեւորվեց Թիֆլիս, Վրաստանի արտաքին գործերի նախարարութիւնում, մարտի 15-ին, շարունակեց բանակցութիւնները: Այս անգամ կտրուկ փոխվել էր Վրաստանի իշխանութիւնների վերաբերմունքը պատվիրակութեան առաջադրած Հարցերի նկատմամբ եւ Վրաստանի իշխանութիւնները մերջեցին Կամավորական բանակին աջակցելու վերաբերյալ պատվիրակութեան բոլոր դիմումները: Պատճառը պարզ էր. Կամավորական բանակը վերջին օրերին պարտվել էր գլխավոր բոլոր ճակատներում եւ Կարմիր բանակը մոտեցել էր Անդրկովկասի սահմաններին: Գնդապետ Մ.Բիգաեւը Հիշեցրեց վրաց ղեկավարներին, որ նրանք «մոռացել» են երեք շաբաթ առաջ իրենց հուղական ճառերը Ռուսաստանի Հարավի եւ ռուս ժողովրդի մասին³:

Մարտի 17-ին Բաքու մեկնած կազակների պատվիրակութիւնն Ադրբեջանում եւս Հանդիպեց անհաջողութեան, որը ստիպեց նրան հեռանալ Ադրբեջանից⁴:

1920թ. մարտի վերջին գեներալ Ա.Դենիկինի Կամավորական բանակը վերջնականապէս պարտվեց: Մարտի 20-ին իր իսկ հրամանով գեներալ Ա.Դենիկինը ազատվեց գլխավոր հրամանատարի պարտականութիւններից՝ փոխարենը նշանակելով գեներալ Պ.Վրանգելին⁵: Ապրիլի 18-ին լուծարվեց Հայաստանի կառավարութիւնը:

¹ ՌԴՊԱ, ֆ.5881, ց.2, գ.250, թ.24-25, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.33, թ.8-9:

² ՌԴՊԱ, ֆ.5881, ց.2, գ.250, թ.25:

³ Նույն տեղում, թ.27:

⁴ ՌԴՊԱ, ֆ.5881, ց.2, գ.250, թ.31-32:

⁵ ՌԴՊԱ, ֆ.39540, ց.1,գ.187, թ.2:

յանը կից Ռուսաստանի հարավի գինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Դենիկինի գինվորական ներկայացուցչությունը Երեւանում¹:

Փակվեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարեւոր էջերից մեկը. ավարտվեց Կամավորական բանակի Գլխավոր հրամանատարության հետ ՀՀ հարաբերությունների երկամյա դործընթացը:

Միաժամանակ, ապարդյուն անցան ինչպես Համաձայնության երկրների Գերագույն խորհրդի, այնպես էլ՝ Ռուսաստանի հարավի գինված ուժերի Գլխավոր հրամանատարության ջանքերը. չհաջողվեց միավորել Անգրկովկասի պետություններին, չնայած վերջիններիս անկախության դե ֆակտո ճանաչմանը, եւ նրանց ուղղել բոլշևիկյան շարժման դեմ:

Գեղամ Պետրոսյան
պատմական գիտություններ
դոկտոր

ОТНОШЕНИЕ ДОБРОВОЛЬЧЕСКОЙ АРМИИ ЮГА РОССИИ К ФАКТИЧЕСКОМУ ПРИЗНАНИЮ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Верховный Совет стран Согласия 12-го января 1920г. признала de facto Грузию, Азербайджан, а 19-го января - Республику Армения. 21-го января Главное командование вооруженными силами Юга России также признала фактическое существование правительств трех закавказских республик. Этим и Верховный Совет стран согласия и Главное командование вооруженными силами Юга России стремились создать дипломатические препоны против Советской России.

Но тщетными были их усилия путем признания Закавказских республик объединить их для пресечения большевистского движения.

Гегам Петросян
доктор исторических
наук

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԽՍՀ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1920-1930-ական թթ.)**

¹ ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց.1, դ.529, թ.18:

Հասարակութեան սոցիալական կառուցվածքում տարբեր տեսակի կապերը (տնտեսական, քաղաքական, իրավական եւ այլն) ներկայանում են իրենց միասնութեան եւ փոխներգործութեան մեջ: Սոցիալական կառուցվածքը մի բարդ ամբողջութիւն է, որի բաղկացուցիչ մասերը հանդես են գալիս իբրեւ ենթակառուցվածքներ: Վերջիններս մեջ վճռական նշանակութիւն ունի տնտեսական կառուցվածքը, որի մեջ դրսեւորվում են արտադրական հարաբերութիւնները եւ սոցիալական շերտավորումը, որոնք պայմանավորված են տիրապետող արտադրանգանակով:

Նախ տեսնենք, թե ինչպիսին էր նախախորհրդային Հայաստանի բնակչութեան սոցիալ-դասակարգային կառուցվածքի պատկերը: Երկար ժամանակ գտնվելով օտար պետութիւնների տիրապետութեան ներքո, Հայաստանի տնտեսութիւնը մնացել էր չափազանց ցածր մակարդակի վրա: Նրա բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը ապրում էր գյուղում եւ զբաղվում գյուղատնտեսութեամբ: 1913թ. նախախորհրդային Հայաստանի սոցիալ- դասակարգային կառուցվածքը մոտավոր ձեւով հետեւել էր. 896.1 հազար գյուղական բնակչութեան կեսին ավելին (50-54 տոկոսը) կազմում էր չքավորների խումբը, մեկ երրորդը՝ (30-34 տոկոսը) միջակների խումբը, 7-8 տոկոսը՝ կուլակութիւնը, կալվածատիրութիւնը Հայաստանում տարածված էր: Այսպէս, XIX դարի վերջին եւ XX դարի սկզբին Երեւանի նահանգի 654 մասնավոր հողատերերից 463-ը կամ 71 տոկոսն ունեցել է 9-19, 93-ը՝ 20-72, 58-ը՝ 73-380, 20-ը՝ 380-1000 դեսյատին հող, իսկ 20-ը՝ հազարից ավելի:¹ Ինչ վերաբերում է քաղաքային բնակչութեանը, որի թիվը կազմում էր ընդամենը 104,0 հազար, ապա նրա հիմնական տարրը մանր բուրժուազիան էր (մանր առեւտրականներ, արհեստավորներ, մանր ձեռնարկատերեր), պրոլետարիատի ու շատ փոքրաթիվ բուրժուազիայի հետ միասին: Ամբողջութեամբ վերցրած, 1913թ. նախախորհրդային Հայաստանի բնակչութեան մեջ գերակշռում էր մանր սեփականատերերի խումբը կամ մանր բուրժուազիան:

Քաղաքային բնակչութեան զբաղվածութիւնը բնութագրվում է հետեւյալ կերպ. 1911թ. Երեւանի նահանգի ֆաբրիկաներում ու գործարաններում աշխատում էր 10155 մարդ:² Նրանք հիմնականում աշխատում էին կոնյակի եւ գինու 6 ձեռնարկութիւններում, Գաբրիելյանների ու Սահակյանների կաշվի, Տեր-Ավետիքյանի մետաղաձուլական գործարաններում, բամբակազտիչ ֆաբրիկաներում եւ այլուր:

Ըստ զբաղմունքի տեսակի նախախորհրդային Հայաստանում 1913թ. եղած 1 միլիոն 100 հազար բնակչութիւնը բաժանված էր երեք հիմնական խմբի.

Գյուղատնտեսական բնակչութիւն՝ 87,6 տոկոս:

Արդյունաբերական բնակչութիւն (ներառյալ առեւտրականները) 7-8 տոկոս:

Ոչ արտադրական բնագավառի բնակչութիւն՝ 4-6 տոկոս:³

Այս վերջին բնագավառում ընդգրկված էին զորքը, կրոնի սպասավորները, լուսավորութեան, առողջապահութեան, գիտութեան, գրականութեան, արվեստի ասպարեզի աշխատողները, թոշակառուները եւ այլք:

Հայաստանը խորհրդայնացման նախօրյակին գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր կացութեան մեջ: Պատճառն առաջին աշխարհամարտն էր ու 1918թ. եւ 1920թ. թուրքական արշավանքները: Տնտեսութիւնը հայտնվել էր կաթվածահար վիճակում: Աղետալի դրութեան մեջ էր գյուղատնտեսութիւնը: Վառելիք եւ հումք չունենալու պատճառով կանգ էին առել առանց այդ էլ սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկութիւնները:

Տնտեսական քայքայվածութեան ու ընչազրկութեան հետեւանքով նվազեց բնակչութեան բնական վերարտադրութիւնը: Մյուս կողմից էլ բնակչութեան քանակական կազմում դրանք առաջացրին կտրուկ փոփոխութիւններ: Երեւանի նահանգի բնակչութիւնը 1918 եւ 1920 թվականներին թուրքական զորքերի կազմակերպած կոտորածների, բռնութիւնների, համաճարակային հիվանդութիւնների, արտագաղթի եւ սովի հետեւանքով զգալիորեն նվազեց: Ավելի քան 30 տոկոսով

¹ Մ.Արոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսութիւնը եւ հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երեւան, 1968, էջ 78:

² Վ.Նոջաբեկյան, Հայաստանի բնակչութեան վերարտադրութիւնը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երեւան, 2001, էջ 76:

³ А.Бадалян, Население Армении со времени присоединения ее к России и до наших дней, "Известия АН Арм. ССР, общественные науки", 1953, N 5, стр.76.

կրճատվեց Հայաստանի բնակչութիւնը: 1913թ. մեկ միլիոն հարյուր հազարից այն 1920թ. վերջերին կազմեց ընդամենը 720 հազար:¹

1920թ. վերջերին Հայաստանը հռչակվեց խորհրդային իշխանութիւն: Դեկտեմբերի 4-ին Հայաստանի հեղափոխական կոմիտէի (Հեղկոմ) անդամները եւ նրանց օգնութեան եկած խորհրդային զորամասերը մտնում են Երեւան: Հեղկոմն իր ձեռքն է վերցնում ամբողջ իշխանութիւնը: Սկզբից եւեթ այն Հայաստանում սկսում է վարել սխալ տնտեսական քաղաքականութիւն: Ռուսաստանի օրինակով Հայաստանում կիրառվեց ռազմական կոմունիզմի քաղաքականութիւնը, որի հետ համակերպվում է նաեւ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կենտկոմը: Այդ քաղաքականութեան կիրառմանը կտրուկ դեմ էին Հեղկոմի նախագահ Ա. Կասյանը եւ անդամ Ա. Մուսաբեկյանը:

Ա. Կասյանը 1920թ. դեկտեմբերի 4-ին Երեւանում կայացած կոմունիստների ժողովում «Ընթացիկ մոմենտի մասին» գեղուցման մեջ, անդրադառնալով հանրապետութեան տնտեսական խնդիրներին, նշում էր. «Հայաստանը գլխավորապէս գյուղացիական մանր տնտեսութեան մի երկիր է: Տնտեսական քաղաքականութիւնը երբեք չի կարելի միակերպ անցկացնել ամբողջ երկրում, դա կախած է երկրի անմիջական կազմից: Տվյալ դեպքում Հայաստանի նկատմամբ չի կարելի անցկացնել խորհրդային Ռուսաստանի եւ նույնիսկ Ադրբեյջանի տնտեսական քաղաքականութիւնը: Խոշոր գործարանները, որոնք մատների վրա կարելի է հաշվել, իհարկեւ, կազգայնացվեն: Կայքքարենք նույնպէս գյուղացիական կուլակների դեմ: Ինչ վերաբերում է միջին գյուղացիութեանը, մանր տնտեսութիւն վարողներին, տնայնագործութեամբ պարապողներին, ինչպէս ցույց տվեց խորհրդային Ռուսաստանի փորձը, ձեռք չենք տա»:²

Փաստորեն, Ա. Կասյանը, հաշվի առնելով հանրապետութեան առանձնահատկութիւններն ու խորհրդային Ռուսաստանի փորձը, Հայաստանի տնտեսական ծանր վիճակը վերլուծում էր միանգամայն ճիշտ դիրքերից:

Այդուհանդերձ, ռազմական կոմունիզմի քաղաքականութիւնը Հայաստանում կիրառվեց, որը Հայհեղկոմի եւ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հապճեպութեան, հանրապետութեան առանձնահատկութիւններն ու համաժողովրդական մտայնութիւնը հաշվի չառնելու հետեւանք էր: Իսկ դրանք հանդեցրին քաղաքացիական կռիւների:

Արդ տեսնենք, թե ռազմական կոմունիզմի քաղաքականութիւնը ինչպէս կիրառվեց հանրապետութիւնում: Սկզբից եւեթ նշենք, որ դա ընթանում էր պարենմասնատրման եւ արդյունաբերական ձեռնարկութիւնները պետականացնելու եղանակով: Ռազմական կոմունիզմի քաղաքականութեան էութիւնը կայանում էր հետեւյալում. պահանջվում էր սահմանել կենտրոնական վերահսկողութիւն ամբողջ արդյունաբերութեան (այդ թիւում նաեւ մանր արդյունաբերութեան) նկատմամբ, մտցնել հացի առեւտրի պետական մենաշնորհ եւ խստիվ արգելել մասնավոր առեւտուրը, հաշվառման վերցնել գյուղատնտեսական ամբողջ մթերային պաշարը, մտցնել պարենմասնատրման մթերքների ավելցուկների անվճար բռնագրավում, իսկ պարենմասնատրման կենսագործման համար պատասխանատու էր ամբողջ գյուղական համայնքը եւ ոչ թե առանձին մարդիկ: Մտցվելու էր նաեւ համընդհանուր աշխատանքային պարհակ, բոլորը պարտավոր էին աշխատել, իսկ դրան նպաստում էր այն, որ առեւտրի արգելման հետեւանքով, մթերքների բաշխումը կատարվում էր ըստ աշխատանքի վայրի:³

Այսպիսով, ռազմական կոմունիզմի քաղաքականութիւնը չնախատեսված, հարկադրական միջոցառում էր, որ Հայաստանում այն մտցնելու անհրաժեշտութիւնը բոլորովին չկար:

Վերը շարադրանքից պարզորոշ զգացվում է, որ ռազմական կոմունիզմի քաղաքականութիւնը տնտեսական միջոցառումների մի ամբողջ համակարգ էր, որը վերաբերում էր եւ գյուղատնտեսութեանը, եւ արդյունաբերութեանն ու առեւտրին:

Երեւանի ժամանելուց ընդամենը 4 օր անց Հայհեղկոմի նախագահ Ա. Կասյանի եւ ռազմական ժողկոմ Սիլինի ստորագրութեամբ հրաման է արձակվում «Պարենավորման մթերքների եւ այլ նյութերի հայտնաբերման մասին», ազդարարելով որ

¹ "Народное хозяйство Армянской ССР в 1978г.", Ереван, 1979, стр. 8.

² Ա. Կասյան, Ընտիր երկեր, Երեւան, 1967, էջ 185-186:

³ Մանրամասն տես Գ. Գեղամյան, «Ռազմական կոմունիզմի» քաղաքականութիւնը Հայաստանում, «Հայաստանի ժողովրդական տնտեսութիւն», 1976, N 8, էջ 65-74:

բոլորը՝ թե պետական հիմնարկները, թե մասնավոր անձինք, պարտավոր են մատակարարման կառավարչի առաջին իսկ պահանջով հայտնել իրենց ունեցած պարենամթերքների, վառելիքի ու լուսավորութեան պիտույքների չափերը: Տեղեկացվում էր, որ չհայտնողներն ու սխալ տեղեկութուն տվողները կենթարկվեն ռազմական տրիբունալի պաշտոնական պատասխանատվության:¹

Երկու օր անց, դեկտեմբերի 10-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմը դիմում է Հանրապետության բոլոր աշխատավորներին, որ այդ օրվանից Հայաստանի սահմաններում հայտարարված է հացահատիկի կամավոր հավաքում: Հացի հավաքումը ընդգրկելու էր բոլոր գյուղերը եւ բոլոր գյուղացիներին, իսկ կուլակների ու հարուստների համար այն պարտադիր էր: Գյուղացիները պարտավոր էին հացահատիկը փոխադրել իրենց սայլերով:² Այս փաստաթղթերը աներկբա վկայում են, որ Հայհեղկոմն ու Հայկոմկուսը Հանրապետությունում կիրառել են ռազմական կոմունիզմի քաղաքականություն:

Եղած պաշարները բաշխելու չափեր սահմանվեցին: Որոշվեց հաց տալ պետական պաշտոնյաներից միայն նրանց, ովքեր բոլորովին անապահով էին եւ ֆիզիկական աշխատանք կատարող բանվորներին, առաջիններին՝ մեկական, երկրորդներին՝ ոմանց մեկական, ոմանց կեսական ֆունտ (գրվանքա):³ Մտցվեց հացի առևտրի պետական մենաշնորհ եւ արգելվեց մասնավոր առևտուրը: Շուկայում մտցվեցին կայուն գներ: 1921թ. հունվարի 2-ին նորից էր ի լուր ամենքի հրապարակվում, որ ամեն ոք պարտավոր է ստույգ հայտնել իր ունեցածի չափը, իսկ շատ ունեցողները պետք է ավելցուկները հանձնեն, որ մյուսները սովից չմեռնեն:⁴ Հացի եւ պարենի հաշվառման գործը, ինչպես նաև բռնագրավումը Հայհեղկոմը իրականացնում էր տեղական հեղկոմների եւ չքավորական խմբերի միջոցով: 1920թ. դեկտեմբերի 18-ին Հանրապետության պարենոնոմատը հրաման է արձակում, որ պարենավորման մթերքների բաշխման, նորմաների մշակումը եւ որոշումը, ինչպես եւ բռնագրավման, տեղափոխություն, ստացման եւ արտահանության իրավունքը պատկանում է միայն պարենոնոմին, առանց որի թույլտվության ոչ մի պետական հիմնարկություն, ինչպես եւ մասնավոր հաստատություն եւ անհատ իրավունք չունի այդ ուղղությամբ որեւէ գործ անելու:⁵ Պարենոնոմատին տրվում են լայն իրավունքներ եւ արտոնություններ: Հայհեղկոմի հատուկ հրամանով գորահավաքից ազատվում են կենտրոնական եւ շրջանային պարենավորման բոլոր փորձված աշխատողները, որոնք ծնվել էին 1898թ. հետո:⁶ Այնուհետեւ, Հանրապետության ռազմական ժողկոմի հրամանով պարենավորման ժողկոմին կից կազմակերպվում է ռազմական բաժին:⁷

1921թ. հունվարի 3-ին Հանրապետության պարենավորման ժողկոմ Ալ.Բեկզադյանի հրամանով պարենոնոմատի հսկողությանն են հանձնվում Երեւան քաղաքի բոլոր ջրաղացներն ու դինգերը: Ի դեպ, ջրաղացների ու դինգերի բոլոր ծառայողները համարվում էին պետական ծառայողներ: Ջրաղացների եւ դինգերի տերերը պետք է ներկայանային պարենոնոմատի արդյունաբերական բաժին՝ հաշվառման:⁸ 1921թ. հունվարի 14-ին Հանրապետության գավառներում եղած սերմացուի բոլոր պահեստները հանձնվում էին տեղական հեղկոմների վերահսկողությանը, որոնք պետք է գործեին պարենոնոմատի ցուցումներով:⁹

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում կիրառվել է 1920թ. դեկտեմբերի 8-ից եւ տեւել է մինչեւ 1921թ. ապրիլի 10-ը: Այդ 4 ամիսների ընթացքում թե որքան հացահատիկ, այլուր, մսացու անասուն, խոտ, հաց, սերմացու, վառելիք եւ սայլեր են հավաքվել, արխիվային փաստաթղթերը տեղեկություններ չեն ընձեռում:

¹ «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում»: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու (1920թ. նոյեմբեր - 1922թ. հունվար), Երեւան, 1974, էջ 260:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ.1, ց.1, գ.4, թ.28:

³ «Կոմունիստ», 25 դեկտեմբերի 1920:

⁴ Նույն տեղում, 9 հունվարի 1921:

⁵ «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում», էջ 262:

⁶ Նույն տեղում, էջ 273-274:

⁷ Նույն տեղում, էջ 263-264:

⁸ Նույն տեղում, էջ 188:

⁹ ՀԱՍՀ ղեկիւրեւները եւ հրամանների ժողովածուն, պրակ 1, էջմիածին, 1922, էջ 24:

Ռազմական կոմունիզմի քաղաքականության կենսագործման ամիսներին ՀայՏեղկոմի առանձին անդամները (Ա.Նուրիջանյան, Ի.Դովլաթյան), Հայկոմկուսի կենտրոնը (քարտուղար Գ.Ալիխանյան) եւ Հայաստանում ՌՍՖՆՀ արտակարգ Հանձնաժողովի լիազոր Գ.Աթարբեկյանը, թույլ տվեցին կոպիտ սխալներ եւ ազավաղումներ: Իսկ իշխանության տեղական մարմինները «իրենց թույլության եւ անկազմակերպվածության պատճառով ավելի էին խորացնում բռնագրավումները՝ վերցնելով նաեւ գյուղացիների սերմացուն եւ սննդի համար անհրաժեշտ պարեներ»:¹

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կասեցնում էր գյուղացու նախաձեռնությունն ու շահագրգռվածությունը վար ու ցանքի նկատմամբ, որովհետեւ նրա արտադրած ամբողջ ավելցուկը ենթակա էր անվարձաՀատույց բռնագրավման: Ռուսաստանում տարեցտարի կրճատվում էին ցանքատարածությունները եւ անասունների գլխաքանակը: Իսկ Հայաստանում լուրեր տարածվեցին, թե իբր ՀայՏեղկոմը մտադիր է բռնագրավել լծկանները եւ կաթնատու անասունները: Այդ էր պատճառը, որ շատ տեղերում սկսվեց անասունների վաճառքը եւ մորթոտումը, իսկ ՀայՏեղկոմը Հերքեց այդ լուրը: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը չէր կարող նպաստել երկրի տնտեսական վերելքին: Ուստի ՌԿ (ք)Կ X Համագումարը 1921թ. մարտին որոշեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունից անցնել նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ): Նոր տնտեսական քաղաքականությունը Հայաստանում կիրառվեց 1921թ. ապրիլի 10-ից: Այդ օրը Ս. Կասյանի ստորագրությամբ հրապարակվում է դեկրետ «Սերմացուի մասին», որով ցանելիք սերմացուն ազատ էր որեւէ բռնագրավումից, ապա ցանքսերից ստացվելիք բերքը ամբողջովին պատկանում էր ցանողին եւ նույնպես չէր կարող ենթարկվել բռնագրավման, այնուհետեւ տեղական բոլոր հեղկոմները պարտավոր էին իրենց պատասխանատվությամբ հսկել այս դեկրետի անշեղ գործադրությունը:²

Փաստորեն, ՀայՏեղկոմը հրաժարվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունից կամ պարենմասնատրումից: Այդ նույն օրը ՀայՏեղկոմը հրապարակում է մի այլ դեկրետ «Հայաստանի գյուղացիական տնտեսության համար անհրաժեշտ անասունների քանակի մասին», որով սահմանվում էր, թե որքան անասուն կարող են պահել գյուղացիական տնտեսությունները: Դեկրետի հիմքում դրված էր միջակ տնտեսությունը: Նա պետք է սեփական սպառման կարիքներից ավելի շատ արտադրեր: Որպես միջին՝ ընդունելով հինգ հոգուց բաղկացած ընտանիքը, Հայաստանը ուղղահայաց կերպով բաժանվում էր երկու գոտու՝ երկրագործական եւ անասնապահական: Առաջին գոտու ընտանիքի համար սահմանվում էր երկու գույք լծկան, մեկ ձի, երեք կով կամ մատակ, մեկ ցուլ, երեք մոզի կամ երինջ, ութ ոչխար կամ այծ, հինգ խոզ (մերուն): Երկրորդ գոտու համար՝ երկու գույք լծկան, երկու ձի, մեկ ջորի, տասը կով, մեկ ցուլ, տասը մոզի կամ երինջ, քսանհինգ ոչխար կամ այծ, հինգ խոզ (մերուն) եւ այլն: Էշերի, թռչունների, մեղվի փեթակների, ճագարների թիվը չէր սահմանափակվում: Հինգ հոգուց ավելի բաղկացած ընտանիքների չափերը լրացուցիչ էին: Այս ամենը, որպես միջակ տնտեսության չափ, անձեռնմխելի էին հռչակվում եւ բռնագրավման ենթակա չէին:³ Փաստորեն, այս որոշումները նպաստում էին գյուղի միջակացմանը:

Ապրիլի 10-ի դեկրետներին հաջորդում է ապրիլի 16-ի «Պարենային բռնագրավումների վերացման մասին» ՀայՏեղկոմի նախագահ եւ գյուղատնտեսության ժողկոմ Ս.Կասյանի հրամանում ամրագրված էր. «Այսօրվանից վերացվում են ամեն տեսակ բռնագրավում, նույնպես եւ կայուն գները շուկայում»:⁴ Ապրիլի 19-ին հրապարակվում է պարենժողկոմի «Բռնագրավումների ամբողջական վերացման մասին» հրամանը, որտեղ ասվում էր. «Ի գիտություն բոլոր իշխանությունների, պետական եւ հասարակական հիմնարկությունների, որի համաձայն ՀայՏեղկոմի որոշման իրականապես արգելվում է բոլոր տեսակի բռնագրավումները, խու-

¹ Վ.Ղազարխեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիությունը (1920-1929 թթ.), Երևան, 1975, էջ 67:

² ՀԱԱ, ֆ.130, ց.6, ք.2, թ.6:

³ «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում», էջ 148-150:

⁴ Նույն տեղում, էջ 276:

գարկությունները՝ որեւէ թաքցրած ապրանքների գտնելու նպատակով»¹ Այս դեկրետները եւ հրամանները բխում էին ՌԿ (Բ) Կ X համագումարի պահանջներից:

1921թ. մայիսի 5-ին Ալ.Մյասնիկյանը եւ Ս.Լուկաշինը (Սրապիտոնյան) ժամանում են Երեւան: Մայիսի 21-ին Հայհեղկոմը վերակազմվում է ժողովրդական կոմիսարների խորհրդի: Ժողովուրդի նախագահ եւ ռազմական գործերի ժողովում է նշանակվում Ալ.Մյասնիկյանը, իսկ ՀԿ(Բ) Կենտկոմի քարտուղար եւ ժողովրդական տնտեսութեան խորհրդի ժողովում է հաստատվում Ս.Լուկաշինը: Նրանք ձեռնամուխ են լինում խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսութեան վերականգնման աշխատանքներին: Եվ ահա, 1921թ. հունիսի 24-ին Հայաստանի ժողովուրդը ընդունում է «Պարենտուրքի մասին» դեկրետը, որով էլ ավարտվում է Հանրապետութեան ՆԷՊ-ը գործողութեան մեջ դնող հիմնական որոշումների շարքը:

Այդ դեկրետի համաձայն Հանրապետության ամբողջ տարածքում սահմանվում էր պարենահարկ: Յուրաքանչյուր քաղաքացի, որ զբաղվում էր հացահատիկի, գետնախնձորի, տեխնիկական եւ արդյունաբերական բույսերի վար ու ցանքով, ինչպես եւ մեղվաբուծությամբ, անասնապահությամբ, պարտավոր էր պետութեանը վճարել բնական տուրք: Այդ տուրքի չափերը սահմանվում էին բերքի հաշվարկով եւ սպառողների թվով: Սակավագոր ընտանիքներն ազատվում էին պարենահարկից: Պարենահարկը վճարելուց հետո հողագործի մոտ մնացած պարենի, հում նյութերի եւ կերի այն բոլոր պաշարը բռնագրավման ենթակա էր²:

Այնուհետեւ, ժողովուրդին ու Կոմկուսը սկսում են պետականացնել արդյունաբերական ձեռնարկութեանները, գործարաններն ու ֆաբրիկաները, ինչպես նաեւ կալվածատերերի կալվածքները: Առաջինը դեռեւս 1920թ. դեկտեմբերի 28-ին պետականացվել է Պ. Էսապյանի Երեւանում գտնվող պահածոների գործարանը³ 1921թ. օգոստոսի 23-ին ՀՍՍՀ ժողովուրդի որոշմամբ ազգայնացվում է Դիլիջանում գտնվող Թումանյանի կալվածքը: Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) ազգայնացվում են Թայրյանի, Դագեսովի, Բաղդասարյանի, Օհանյանի, Աղասարյանի եւ Մելիք-Ղարաբաղյանի այգիները՝ իրենց շինութեաններով, շարժական եւ անշարժ գույքով: Պետականացվում են նաեւ Դավթաշի այգիները, Շուստովի էլեկտրակայանը, Երեւանի ջրմուղը, Սարաջովի, Կ.Ա.Ֆրիկյանի, Հ. Սողոմոնյանի եւ Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) «Արաքս» եւ «Նա վերե» սպիրտի, կոնյակի, դինո եւ օդու գործարանները, ինչպես նաեւ առաջին Հանրապետության տարիներին պետականացված Շուստովների սպիրտի, կոնյակի եւ օդու գործարանները⁴:

ՀՍՍՀ ժողովուրդի 1921թ. օգոստոսի 11-ի որոշմամբ պետականացվում են Երեւանի Գաբրիելյանների եւ Սահակյանների կաշվի գործարանները⁵ Ազգայնացվեցին նաեւ բամբակի, լիմոնադի, ինչպես նաեւ Տեր-Ավետիքյանի մետաղաձուլական գործարանը եւ Մելիք-Աղամալյանների կալվածքներն ու գործարանները, Պետականացվում են նաեւ մասնավոր մարդկանց պատկանող անտառները⁶ Կալվածատերերը, գործարանատերերը եւ ֆաբրիկաների տերերը, այսպես կոչված բուրժուազիան ունեզրկվեց եւ սնանկացավ: Փաստորեն, արդյունաբերության ազգայնացումով վերացվեց քաղաքային բուրժուազիան եւ սոցիալական կառուցվածքում մնում էր պրոլետարիատը, որը ձեւափոխվում էր բանվոր դասակարգի, գյուղական բուրժուազիան (կուլակութեանը) եւ գյուղացիութեանը, որոնք ունեին տարբեր տեսակարար կշիռներ՝ բնակչության մեջ: Նրանցից ամենամեծ տեսակարար կշիռ ունեւր գյուղացիութեան դասակարգը, որը կազմում էր ամբողջ բնակչության երեք քառորդը: Պրոլետարիատն ու կուլակութեանն ունեին շատ փոքր տեսակարար կշիռ:

ՆԷՊ-ի կենսագործումով բավականաչափ աշխուժացում ապրեց քայքայված արդյունաբերութեանը: Այսպես, 1922թ. Հանրապետության քաղաքներում կար 112 պետական, 10 կոոպերատիվ եւ 774 մասնավոր մանր արտադրական ձեռնարկութեան: Մեկ տարի անց, 1923թ., դրանց թիվը համապատասխանաբար կազմում է 139.16 եւ 1221, որը ՆԷՊ-ի կենսագործման արդյունքն էր: Այդ 1221 մանր արտադ-

¹ ՀՍՍՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ 2, էջ 163-164:

² Նույն տեղում, էջ 163-164:

³ Նույն տեղում, պրակ 1, էջ 122:

⁴ «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում», էջ 212:

⁵ Նույն տեղում, էջ 217:

⁶ Նույն տեղում, էջ 143:

րության յուրաքանչյուրում աշխատում էր մեկական, ընդամենը 1245 մարդ, իսկ պետական 139 ձեռնարկություններում զբաղված էր 1412 մարդ, այսինքն յուրաքանչյուրում ավելի քան 10 մարդ:¹ Արդյունաբերությունն աստիճանաբար ոտքի էր կանգնում՝ ՆԷՊ-ի կենսագործման շնորհիվ: Ուժերը վերստին բաժանվեցին ժամանակաշրջանի սկսվեց երկրի ինդուստրացման կուրսի առաջադրումով՝ 1925թ. վերջին: Ինդուստրացումն ապահովում էր բնակչության մեջ բանվոր դասակարգի տեսակարար կշռի արագ աճ:

Կառուցվեցին Հիդրոէլեկտրակայաններ, զարգացում ապրեց պղնձարդյունաբերությունը, գործարկվեցին Լենինականի տեքստիլ եւ Երեւանի կարբիդի գործարանները: Եւրոպայից հանձնվեցին շինանյութերի եւ թեթեւ արդյունաբերական մի քանի ձեռնարկություններ: 1928թ. Հանրապետության արդյունաբերությունը տվեց 28.2 միլիոն ռուբլու համախառն արտադրանք:² Սակայն ընդունումից 5 տարի անց Ստալինը հրաժարվեց ՆԷՊ-ի քաղաքականությունից եւ սկսեց հայածել ու բռնություններ գործադրել նէպմանների (մասնավոր ձեռնարկատերեր, առեւտրականներ, կապալառուներ) նկատմամբ եւ անցնել վարչահրամայական մեթոդների կիրառմանը:

Այդուհանդերձ, 1928-1940թթ. Հայաստանում կառուցվեցին բամբակյա, բրդյա, մետաքսյա գործվածքեղենի եւ այլ ֆաբրիկաներ: Հայաստանը դարձավ տեքստիլ արդյունաբերության կարեւոր կենտրոններից մեկը: Զգալի առաջընթաց նկատվեց նաեւ սննդի արդյունաբերության բնագավառում: Կառուցվեցին հրուշակեղենի, կարամելի, պահածոների, բուսական յուղի, խմիչքների գործարաններ եւ մսի կոմբինատներ: Հանրապետութայնում մեծ զարգացում ապրեցին արդյունաբերության էներգատար ճյուղերը, հատկապես՝ քիմիական արդյունաբերությունը, սեւ եւ գունավոր մետաղագործությունը: Արդեն 1940 թվականին 1913թ. համեմատությունում էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելացել էր 77.5, մեքենաշինության ու մետաղամշակման համախառն արտադրանքը՝ 15.4, շինանյութերի արդյունաբերությունը՝ 14, թեթեւ եւ սննդի արդյունաբերությունը՝ 8 անգամ, իսկ գունավոր մետաղաձուլությունն ավելացել էր 47 տոկոսով: Արտադրվող 395.3 միլիոն կվտ ժամ էլեկտրաէներգիայի շուրջ 83 տոկոսը սպառվում էր արդյունաբերության եւ շինարարության մեջ:

Այս ամենի շնորհիվ աճեցին աշխատատեղերը եւ բնակչության զբաղվածությունը: Այսպես, 1926թ. մարդահամարի տվյալներով ՀԽՍՀ գործարաններում եւ ֆաբրիկաներում աշխատում էր 6057, իսկ տնայնագործական-արհեստագործական արդյունաբերության մեջ՝ 8032 մարդ: 1940թ. արդեն արդյունաբերության մեջ ընդգրկված բանվորների եւ ծառայողների միջին տարեկան թիվը հասավ 43.6 հազար մարդու, որից միայն 30.7 հազարը բանվորներ էին: 1940թ. արդյունաբերական արտադրական անձնակազմի միջին տարեկան թիվը կազմեց 34.6 հազար, որից 23.8 հազարը բանվորներ էին: Նրանք հիմնականում ընդգրկված էին թեթեւ արդյունաբերության (40.9 տոկոս), սննդի (17.5), պղնձի, շինանյութերի (7.0) եւ արդյունաբերության այլ ճյուղերում: 1940թ. շինարարության մեջ ընդգրկված էին ավելի քան 25 հազար, տրանսպորտի եւ կապի ճյուղերում՝ մոտ 12 հազար, հասարակական սննդի եւ նյութատեխնիկական մատակարարման ոլորտում՝ մոտ 16 հազար մարդ:³

Դրանց հետեւանքով պայմանավորված՝ 20-ական թվականներին Հայաստանում տեղի ունեցան բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխություններ, որոնք ցույց են տրված ներքոհիշյալ աղյուսակում:

Խորհրդային Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները 1926-1935թթ. (տոկոսներով)

Սոցիալական կառուցվածքը	1926թ.	1935թ.
------------------------	--------	--------

¹ «Խորհրդային Հայաստանը թվերով», վիճակագրական տեղեկատու (1923-1927թթ.), Երեւան, 1928, էջ 118-119:

² Социалистическое строительство Армянской ССР (1920-1940гг.), Ереван, 1940, стр. 23.

³ Վ.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչությունը եւ նրա զբաղվածությունը (1828-1978թթ.), Երեւան, 1979, էջ 288

⁴ ՀԱԱ, ֆ.163, ց.19, գ.111, թ.26:

Քանվոր-ծառայողներ	12.69	23.31
Կոլտնտեսականներ, կոոպերացված տնայնագործներ ու արհեստավորներ	0.08	60.85
Մենատնտես գյուղացիներ, չկոոպերացված տնայնագործներ ու արհեստավորներ	76.19	11.76
Քուրթուղա (կալվածատերեր, առևտրականներ, քաղաքային բուրժուազիա, կուլակներ)	7.62	0.55
Այդ թվում կուլակներ	5.47	0.2
Այլ բնակչուկներ (սովորողներ, բանակում ծառայողներ, թոշակառուներ, մանկատան սաներ եւ այլն)	3.42	3.53

Աղյուսակից երևում է, որ 1926-1935թթ. բանվոր-ծառայողների տեսակարար կշիռն ավելացել է մոտ 2 անգամ: Անհամեմատ բարձրացել է կոլտնտեսուկներին, կոոպերացված տնայնագործների եւ արհեստավորների տեսակարար կշիռը: Դրան հակառակ գյուղատնտեսուկյան կոլեկտիվացման, արհեստագործական կոոպերացիայի զարգացման շնորհիվ մոտ 7 անգամ իջել է մենատնտես գյուղացիներին, չկոոպերացված տնայնագործների եւ արհեստավորների տեսակարար կշիռը: Արդեն 1935թ. բուրժուազիան կազմում էր հանրապետուկյան ամբողջ բնակչուկյան ընդամենը 0.55 տոկոսը, որը գործարար մարդկանց, կալվածատերերի եւ կուլակների նկատմամբ բռնաճնշման հետեւանք էր: Այսպիսով, ինդուստրացման շնորհիվ Խորհրդային Հայաստանում ձեւավորվեց նոր սոցիալական կառուցվածք, որի գլխավոր տարրը բանվոր դասակարգն էր: Այն արդեն 20-ական թվականներին երկրորդ կեսին ապրում էր քանակական ու որակական նկատելի աճ: Ժողովրդական տնտեսուկյան մեջ գնալով արագորեն աճում էր բանվոր դասակարգի թվաքանակը, որը 1940թ. հասավ 92.4 հազարի: Իսկ 1939թ. հանրապետուկյան բանվոր դասակարգի տեսակարար կշիռը բնակչուկյան մեջ հասել էր 17.6 տոկոսի:

1920-ական թվականներից սկսած բուռն զարգացում ապրեց Հայկական մշակուկյթը, իրականացվեց մշակուկթային հեղափոխուկյունը, որը հանդիսացավ Հասարակուկթյան սոցիալական կառուցվածքի արմատական վերափոխման կարեւոր հիմքերից մեկը: Ձեւավորվեց ժողովրդական մտավորականուկյունը՝ սոցիալական կառուցվածքի մյուս տարրը: Եթե 1926թ. Հայաստանում մտավորականուկթյան թվաքանակը եղել է 7.4 հազար, ապա 1939թ. այն հասել է 37 հազարի, այսինքն 13 տարում աճել է 5 անգամ:¹

Այժմ անդրադառնանք Խորհրդային Հայաստանի գյուղում տեղի ունեցած սոցիալական կառուցվածքի փոփոխուկյուններին: 1920-1922թթ. ագրարային վերափոխումների հիմքն ու առանցքը հողի պետականացումն էր, այն ամբողջից Հայհեղուկի՝ 1920թ. դեկտեմբերի 28-ի դեկրետով: Այդ դեկրետի համաձայն հողագուրկ եւ սակավահող գյուղացիական տնտեսուկյունները ստացան 200 հազար հեկտար հող՝ բռնագրավված արքունական, բաժնեհողի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մեհետային, իրավաբանական եւ մասնավոր անձերի հողերից:² Հողի պետականացումը բուրժուա-դեմոկրատական բնուկյթի խոշոր միջոցառում էր, որով անմիջապես վերացվեց կալվածատիրուկյունը: Հողի ազգայնացումով եւ ՆէՊ-ի քաղաքականուկթյան կիրառմամբ սկսվում է Հայկական գյուղի միջակացման գործընթացը, որի վկայուկյունն է հետեւյալ աղյուսակը՝ (տոկոսներով):³

	1925թ.	1926թ.	1926թ.
--	--------	--------	--------

¹ "Народное хозяйство Армянской ССР Юбилейный статистический ежегодник к 60-летию Великого Октября", Ереван, 1977, стр. 131

² Изменения социальной структуры советского общества, 1921-середины 30-х годов, М., 1979, стр. 298.

³ Վ.Ղազարեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիուկյան պատմուկյունը 1920-1929 թթ., էջ 116:

⁴ ՀԿ(Բ)Կ VI համագումարի բանաձեւերն ու որոշումները, Երեւան, 1929, էջ 24:

1	Ցանքազուրկ տնտեսություններ	17,7	15,9	13,5
2	Մինչև ե մեկ դեսյատին ցանք ունեցողներ	36,7	33,8	34,4
3	Մեկից մինչև 3 դեսյատին ցանք ունեցողներ	36,1	39,1	39,1
4	3-ից մինչև 6 դեսյատին ցանք ունեցողներ	8,1	9,4	10,5
5	6-ից ավելի դեսյատին ցանք ունեցողներ	1,4	1,8	2,5
6	Տնտեսություններ առանց անասունների	-	19,8	15,2
7	Տնտեսություններ առանց լծկանի	55,4	48,0	37,5
8	Տնտեսություններ առանց գյուղգործիքների	63,1	55,8	46,7

Ակնհայտ է, որ 1927թ. Խորհրդային Հայաստանի գյուղում միջակները կազմում էին գյուղացիական տնտեսությունների մոտ կեսը՝ 49.6 տոկոս, չքավորները՝ 48, իսկ կուլակները՝ 2.5 տոկոս:

Ըստ ցանքատարածությունների աղյուսակում նշված 5 կատեգորիայի տնտեսությունները կարելի է խմբավորել հետևյալ կերպ. առաջին երկու կատեգորիաները չքավոր տնտեսություններն էին, 3-րդ եւ 4-րդ կատեգորիայի տնտեսությունները միջակներն էին, իսկ 5-րդը՝ Հարուստ տնտեսությունները (կուլակները): Փաստորեն, այդ 3 տարիներին 6-7 տոկոսով պակասել էր չքավոր գյուղացիների տեսակարար կշիռը, 5-6 տոկոսով աճել էր միջակների եւ մոտ մեկ տոկոսով էլ կուլակների տեսակարար կշիռը:

Սակայն, հեղինակների մոտ տարբեր մոտեցումներ կան Հայկական գյուղի սոցիալ-տնտեսական կառուցվածքի հարցում: Օրինակ, Ս.Ամիրյանի Հաշվարկներով գյուղատնտեսության կոլեկտիվացման նախօրյակին՝ 1927թ. Հայաստանի գյուղում միջակները կազմում էին գյուղացիական տնտեսությունների մոտ կեսը (49.6), չքավորները՝ 48, իսկ կուլակները՝ 2.5 տոկոս:¹ Վ. Ղազարյանի Հաշվարկներով Խորհրդային Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացման նախօրյակին չքավոր տնտեսությունները (պրոլետարիատ, կիսապրոլետարիատ), կազմում էին բոլոր տնտեսությունների 40-45, միջակները՝ 50-55 եւ կուլակները՝ 4-5 տոկոս, իսկ սոցիալիստական (կոլտնտեսային) գյուղացիության տեսակարար կշիռը բոլոր տնտեսությունների մեջ 1929թ. վերջին հասնում էր մոտ 4 տոկոսի:²

Իսկ Գ. Գեղամյանը Հաշվարկը կատարել է ըստ գյուղատնտեսական հարկի եւ ստացել հետևյալ պատկերը՝ 1929-1930թթ. չքավորները կազմել են 58, միջակները՝ 40.5, իսկ կուլակները՝ 1.5 տոկոս:³ Կուսակցության XV Համագումարը որոշեց անցնել առավել եկամտային հարկման: Անհատական հարկման համակարգը կարեւոր միջոցառում էր, որով կասեցվում էր մասնավոր կապիտալիստական կուտակումների աճը: Հարկման այս նոր կարգի համաձայն գյուղհարկի կեսից ավելին դրվում էր կուլակային տնտեսությունների վրա: Հայաստանում 1927թ. կուլակները եւ Հարուստները, որոնք կազմում էին գյուղացիական տնտեսությունների 12 տոկոսը, այդ նույն տարում վճարել են գյուղհարկի 49, իսկ 1928 թվականին՝ 61 տոկոսը: Հարկային ճնշումն ավելի ուժեղացվեց 1929թ.: Հայաստանի գյուղացիության 54 տոկոսն ազատվել էր հարկ վճարելուց: Միջակները վճարել էին հարկերի 24.7, իսկ կուլակները՝ 33 տոկոսը:⁴ Այժմ դիտարկենք, թե ինչպես ընթացավ գյուղատնտեսության կոլեկտիվացումը եւ ինչպես այն ներգործեց սոցիալական կառուցվածքի վրա:

1920-ական թվականների վերջին դրվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նոր խնդիրներ, առաջին հերթին գյուղատնտեսության կոլեկտիվ ձեւի՝ կոլտնտեսային շինարարության ծավալման անհրաժեշտությունը:

¹ Ս.Ամիրյան, Հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխումն ու զարգացումը Հայկական ԱԱՀ-ում, էջ 100:

² Վ. Ղազարյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը, էջ 296:

³ Գ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նէՊ-ի տարիներին (1921-1936թթ.), Երեւան, 1978, էջ 136:

⁴ ՀԱԱ, ֆ.1, ց.15, թ.56:

1930թ. Հունվարին արդեն վերադաս որոշումների համաձայն Հայաստանի ղեկավարութունը ծրագիր ընդունեց գյուղի այնպիսի արագ եւ շուտափուլ կոլեկտիվացման ուղղությամբ, որն իրականում չէր համապատասխանում տեղական պայմաններին, ոչ էլ պատրաստվածութեան աստիճանին: Կոլտնտեսային շարժումը «գնալով թափ» էր հավաքում եւ փետրվարի 10-ին հասավ 62.7 տոկոսի: Վավերագրերը ցույց են տալիս, որ այդ թվերը ձեռք էին բերվել հարկադրանքի եւ բռնութունների, շրջաններ մեկնած բանվորական բրիգադների օգնությամբ, համառութեան շնորհիվ, հաճախ՝ միայն թղթի վրա: Սակայն բավական էր Ստալինի հայտնի հոգվածի հրապարակումը, որպեսզի սկսվի ձեւականորեն կազմակերպված կոլտնտեսութունների քայքայումը, որի արդյունքում վերոհիշյալ ցուցանիշն իջավ 9.6 տոկոսի:¹

Մի քանի որոշումների շնորհիվ 1930թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայաստանում սկսվեց կոլեկտիվացման նոր փուլ: Ճիշտ է, պահպանվում էին գյուղացիների վրա ճնշումների նախկին ձեւերը, բայց ավելանում էր նաեւ կամավորների թիվը: Դիրեկտիվները կատարվում էին կոպիտ սխալներով: Մթերումների անվան ներքո կոլտնտեսութուններից բռնադրավվում էր ամբողջ բերքը, եւ գյուղացին մատնվում էր սովի:

Գյուղատնտեսութեան կոլեկտիվացումն ավարտվեց երկրորդ հնգամյակի տարիներին (1933-1937թթ.): 1937թ. արդեն բոլոր կոլտնտեսութուններն ընդգրկում էին գյուղացիական տնտեսութունների 88.7 եւ ցանքատարածութունների 92.6 տոկոսը: Լուծարվեց կուլակութունը որպես դասակարգ: Թե քանի կուլակային տնտեսութուն է արտաքսվել Հայաստանի գյուղերից, ճշտված տվյալներ է բերում Վ.Ղազարխեցյանը: Ըստ նրա, 1930-1932թթ. Հայաստանում կուլակաթափման է ենթարկվել ընդամենը 2092 կուլակային տնտեսութուն կամ բոլոր գյուղացիական տնտեսութունների (183 հազար) 1.16 տոկոսը:² Տեղի ունեցավ մի գործընթաց, որի արդյունքում գյուղական բնակչության ճնշող մեծամասնութունը կազմող եւ հիմնականում մանր բուրժուական բնույթ ունեցող աշխատավոր գյուղացիութունը վերափոխվեց սոցիալիստական դասակարգի՝ կոլտնտեսային գյուղացիութեան: Իսպառ լուծարվել էր նաեւ քաղաքային բուրժուազիան:

Վերացվեց նաեւ հին հասարակարգի սոցիալական ուժերից մասնավոր առեւտրական խավը, որի գոյութունը պայմանավորված էր ՆԷՊ-ի տարիներին մասնավոր առևտրի առկայութեամբ եւ նրա զգալի աշխուժութեամբ: Խոշոր առևտրականները նույնպես մտնում էին «չահագործող դասակարգի» կազմի մեջ: Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումից հետո պետականացվեց ներքին առևտուրը եւ սահմանվեց արտաքին առևտրի մենաշնորհը, որը գտնվում էր միայն պետութեան ձեռքում: 1924-1925թթ. հանրապետութունում կատարվող ապրանքաշրջանառութեան մեջ մասնավոր բաժինը կազմում էր 46.4 տոկոս, իսկ 1928թ. մասնավոր առևտրի ծավալը 12 մլն ռուբլուց անցեց եւ հասավ 21.5 մլն ռուբլու: Քաղաքներում մասնավոր առևտրի բաժինը կազմում էր 41.7 տոկոս, իսկ գյուղերում՝ 21.6:³ Դրվեց առևտրից մասնավորին դուրս մղելու խնդիրը: 1932թ. արդեն մասնավոր բաժինը ապրանքաշրջանառութեան մեջ կազմում էր 0.7 տոկոս եւ այն էլ՝ միայն քաղաքներում: 1931թ. գյուղերում ապրանքաշրջանառութեան 26.5 տոկոսը կատարվում էր պետական, իսկ 73.5-ը՝ կոոպերատիվ առևտրի ոլորտում: 1929թ. հանրապետութունում գործում էին մասնավոր 1862 առևտրի կետեր, իսկ 1932թ. ընդամենը 34՝ միայն քաղաքներում:⁴

Ավարտվում է նոր սոցիալական կառուցվածքի հիմնական տարրերի՝ սոցիալիստական բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիութեան եւ ժողովրդական մտավորականութեան ձեւավորումը: 1939թ. Հունվարի 17-ի մարդահամարի տվյալների համաձայն Խորհրդային Հայաստանի 1 մլն. 282.3 հազար բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքն ուներ հետեւյալ պատկերը.

Տոկոսներով ամբողջ բնակչության նկատմամբ⁵

¹ Վ.Ղազարխեցյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիութեան պատմութունը (1929-1937), Երևան, 1978, էջ 73:

² Նույն տեղում, էջ 121-124:

³ «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 188-189:

⁴ Նույն տեղում, էջ 187-188:

⁵ "Итоги всесоюзной переписи 1959 года Арм. ССР", М., 1963, стр. 28.

Բանվորներ եւ ծառայողներ -----	32.2
որից՝	
Բանվորներ -----	17.6
Ծառայողներ -----	14.6
Կոլտնտեսականներ եւ կոոպերացված տնայնագործներ -----	64.1
Մենատնտես գյուղացիներ եւ չկոոպերացված տնայնագործներ -	3.7
Այսպիսով, Խորհրդային Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքը հիմնականում կազմված էր աշխատավորների հասարակական խմբերից:	

Հայկ Վիրաբյան

ЭКОНОМИЧЕСКАЯ ПОЛИТИКА СОВЕТСКОЙ АРМЕНИИ И ИЗМЕНЕНИЯ СОЦИАЛЬНОЙ СТРУКТУРЫ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920-1930-ых ГОДАХ

РЕЗЮМЕ

Социальная структура выражает характер устойчивых и существенных связей и тенденции их развития. В досоветской Армении население делилось на три основные группы: сельское население составляло 87.6%, торгово-промышленное - 7.8% и непроизводственное - 4.6%. В советской Армении произошли серьезные изменения, она стала развитой индустриальной страной. Сельское хозяйство было коллективизировано, сформировалось интеллигенция. Согласно переписи населения 1939 года картина социальной структуры Армении выглядела следующим образом: рабочие и служащие составляли 32.2% населения, колхозники и кооперированные надомники - 64.1%, а единоличники и некооперированные надомники - 3.7%.

Գայկ Վիրաբյան

ԶԱՆԳԵԶՈՒՐ - ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԴՐՎԱԳԻ ՇՈՒՐՋ (ԿՈՄՈՒՆԻՍՏ ԵՐԵՄԻԱ ԲԱԿՈՒՆՑԻ ՄԱՍԻՆ)

1927թ. մարտին ՀԿ(բ)Կ Կենտկոմի եւ ԿՎՀ-ի նախագահությունների միացյալ նիստում, ապա Կենտկոմի պլենումում չորրորդ եւ վերջին անգամ քննարկվել է

Կենսոկոմի քարտուղար Երեմիա Բակունցի Հարցը եւ ընդունվել որոշում: Առաջին 3 քննարկումների մասին հիշատակվում է սույն հոդվածի հավելվածում: Հարցը վերաբերում էր նրան, թե կոմունիստ Երեմիա Բակունցը 1919թ., լինելով Չանգեզուրի ազգային խորհրդի անդամ, դրա նիստում մյուսների հետ միասին, քվեարկել է հոգևոտ Շուշուբուխի ադրբեջանական գյուղերի (Որոտան (Բարգուշատ) գետի աջ ափ) տեղահանության: Այս դեպքում Հարցը քննության առարկա էր դարձել Ադրբեջանից ստացված դիմումի համաձայն:

Խնդիրը պատկերացնելու համար հարկավոր է անդրադառնալ տվյալ պատմական ժամանակաշրջանին, այն իրադրությունը, որ տիրում էր Չանգեզուրում, ինչպես նաև Ղարաբաղում: Իսկ առայժմ մի քանի խոսք այն մասին, թե ով էր Երեմիա Բակունցը:

Երեմիա Սայադի Բակունցը, Չանգեզուրի Գորիս քաղաքի արհեստավորի ընտանիքի ծնունդ (1892թ.), ավարտել էր էջմիածնի ճեմարանը (1914թ.), ապա Պետերբուրգի հոգեհայրաբանական ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը: Ճեմարանում ուսումնասիրել էր մարքսիզմի տեսությունը եւ կատարել ակտիվ քարոզչական աշխատանք: Այդ ժամանակից էլ (1908թ.) սկսվել էր նրա ստաժը կոմունիստական կուսակցության շարքերում: Կուսակցական աշխատանք էր տարել Բաքվում, գործուղվել Չանգեզուր նույն նպատակի համար:

Ըստ կուսակցական հարցաթերթի տվյալների՝ 1917թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին ընտրվել է Չանգեզուրի բանվորների եւ գինվորների դեպուտատների խորհրդի նախագահ, իսկ 1919թ. ապրիլ-օգոստոս ամիսներին՝ Չանգեզուրի բանվորների եւ գյուղացիների պատգամավորների խորհրդի անդամ:

Այդ ամիսների գործունեության մասին իր ինքնակենսագրականում գրել է. «Գյուղացիական համագումարում ընտրվել եմ շրջանային խորհրդի անդամ, վարել եմ գաղթականական գործերը, հետագայում խորհուրդը դաշնակցականների կողմից ցրվել է»: Իրականում, սակայն, այս վերջին խորհուրդը եղել է ոչ թե բանվորագյուղացիական, այլ ազգային: Հենց այս ազգային խորհրդի գործունեությանը նրա ունեցած մասնակցությանն է վերաբերում սույն հոդված-հրատարակումը:

Խորհրդային իշխանության տարիներին Ե.Բակունցը պետական-կուսակցական աշխատանքում է գտնվել Չանգեզուրում (հեղկոմի անդամ), Բաքվում (ժողովրդական դատավոր), Երեւանում (Հեղափոխական տրիբունալ, արդարագատուության ժողկոմատ): 1922-1927թթ. եղել է ՀԿ(բ)Ա Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի, ապա Կենսոկոմի քարտուղար:

С этого момента в восприятии событий стали проявляться нотки романтизма. В этот период уже совершенно очевидно община теряет всякие функциональные связи со своим окружением и приобретает функциональную роль в армянском этносе в целом, роль традиционную для армянской диаспоры, а именно, хранителя "героического мифа", с которым в конце 40-ых - 50-ые годы было связано формирование Еревана, как центра собирания армянского этноса.

Романтизм и героика войны. Весна 1990.

В этот момент армянская община уже вполне определенно делится на две части: тех, кого объединил описанный выше комплекс чувств (его символическое выражение выработалось позднее) и тех, кто продолжал культурно-организационную деятельность. Конфликт не имел внешнего выражения, но вторая из указанных групп оказалась как бы на периферии жизни общины, превращалась в ее оболочку и воспринималась ядром общины почти так же как внешнее окружение (и то, что это тоже были армяне имело очень маленькое значение). Коммуникация между двумя группами нарушалась. Старые этнические символы оказывались неактуальны-

ми, они перестали отвечать сегодняшними переживаниям, новые символы еще не сложились. (В скобках отмечу, что в самой Армении в этот период диссонанс с внешним окружением ощущалось еще значительно меньше, чем в диаспоре, он актуализировался позднее, в мае-августе 1991 года. Кроме того, Армения была занята межпартийной борьбой, что для диаспоры в то время было почти не актуально. В целом ощущение войны было в диаспоре более обостренным, чем в Армении, и соответствующая новой стадии "этнической мобилизации" символика зарождалась на месте, а не привносилась из Армении.)

Следующий период в жизни армянской общины можно назвать периодом романтизма. Он начинается приблизительно с весны 1990 года и продолжается до лета 1991 года. (В Армении этот период был менее выражен и более быстротечен.) В это время вырабатываются новые, уже ярко национальные символы, которые с этого момента выражаются открыто и даже демонстративно. Акцент переносится на героическую сторону армянской истории, особенный интерес вызывает движение фидаи (партизан) в турецкой Армении на рубеже XIX - XX веков. Имена всех более-менее известных фидаи и основные факты их биографии (о которых раньше почти никому не было известно, ведь прежняя армянская этническая символика была в основном связана с историческими событиями далекого прошлого) выучивались наизусть и являлись способом узнавания "своих". В моду входят фидаинские песни конца XIX века, где доминирующим мотивом является не жалоба на извечно несчастную армянскую судьбу, а готовность к борьбе. (Может быть, более правильно было бы говорить не о старой и новой символике, а о том, что складывалась символика общины, которая отличалась от традиционной символики армянской диаспоры, которая в этот период в значительной мере утратила для армян свою актуальность). Коммуникативный диссонанс с социокультурной средой субъективно почти снимается. Члены армянской общины открыто выражают свою инаковость. Воинственные разговоры с полной откровенностью ведутся во весь голос даже в городском транспорте (естественно, по-русски, знание армянского языка остается довольно слабым). Цель этих разговоров - эпатаж общественного мнения и самоутверждение. Однако сама эта манера поведения в значительной мере служит способом установления связей со средой уже в новом качестве - чужих, имеющих свои, отличные от среды ценности и идеалы. Но при этом ни на день не умирала надежда быть когда-нибудь в будущем понятыми. Ожидается, что будет время, когда русские придут к сходным позициям, и тогда русские и армяне станут союзниками. Априорно предполагалось, что мир столь же враждебен к русским, как враждебен к армянам.

Наличие у армянской общины новой национальной символики делает возможной этническую консолидацию, "вербовку" новых членов общины. Но ядро общины продолжают составлять те, кто прошел через период депрессии. К жизни общины привлекаются в значительной мере армяне, до этого времени слабо с ней связанные: недавние выходцы из Армении, в том числе из деревни. Последнее объясняется тем, что для них было относительно легко принять новую военную идеологию, правда, в значительно упрощенной форме, без того душевного надрыва, который был характерен для большей частью русскоязычного ядра армянской общины. "Вербовки" новых членов общины среди русскоязычной армянской интеллигенции практически не происходило. Связи с общиной поддерживали только те из них, кто сам прошел описанный выше путь. В этот период делаются попытки формализовать на основе новой символики некоторые подструктуры общины. Однако ни одна из них не увенчалась успехом. Организовать общественную деятельность на основе новой символики и идеологии не удастся. Возможно, идеологической основой для объединения выбираются слишком крайние и одновременно слишком умозрительные основания. Постараюсь объяснить, как это видела я. Романтизм, пришедший на смену общей депрессии, захватывал. Но в нем было слишком мало конкретного, осязаемого. Эпатировать общественное мнение было забавно, но абсолютно бессмысленно.

Нужна была, казалось, хотя бы мало-мальски жизнеспособная, логичная и внутренне связанная идеология - национально-героическая. Получить ее из Армении не удавалось. Никаких структур Дашинакцутюн в армянской диаспоре Санкт-Петербурга не было, АОД (Армянское общенациональное движение) сколько-нибудь удовлетворительной идеологии не мог дать в принципе, его протурецкий и прозападный прагматизм вызывал отторжение, мне кажется, у всех членов общины, кому было меньше сорока. Оставалось реконструировать идеологию самим. Занимаясь созданием армянского землячества, я одновременно попыталась создать группу молодежи, которая взяла бы на себя задачу по реконструкции романтической идеологии. Задача оказалась не столь простой, как казалась. То, что выглядело романтическим на рубеже веков, когда разворачивала свою деятельность Дашинакцутюн, теперь выглядело либо неинтересным, либо прямо разочаровывающим. В программе Дашинакцутюн от 1907 г., которую легко было получить в Публичной библиотеке, акцент делался на классовую борьбу, это была программа одной из социалистических партий. Национальные вопросы терялись в ряду прочих. Старые подшивки "Мишак" (армянская национальная газета, издававшаяся на рубеже веков в Тифлисе) могла вызвать интерес у меня, как у историка, но, как это не удивительно, содержала слишком мало того, что было актуально для современной армянской молодежи. Это была другая реальность, несовпадающая с нашим сегодняшним опытом. Вместо реконструкции получались только общие слова. Современными звучали только старые фидаинские песни, сначала, может быть, слишком экзотичные для петербургских армян, но воспринятые очень легко и естественно. Оставалась символика, а не связанная идеология.

К весне 1990 года уже никто из носителей прежних культурных доминант не мог стать центром объединения, новые же представления продолжали быть слишком мифологичны, чтобы стать основой для упорядочивания чего бы то ни было. Связь с Арменией как следует налажена так и не была. Этот период характерен так же тем, что на диаспору начинает проецироваться межпартийная борьба в Армении. Представители прежней культурной ориентации ассоциировали себя с АОД (правившая до февраля 1998 г. в Армении партия с националистическо-прагматической программой), представители новой - с Дашинакцутюн (национальной партией основанной еще в 1890 году, с которой так или иначе были связаны все героические страницы армянской истории последнего столетия), хотя практически мало кто был в тот период непосредственно связан с какой-либо одной из партий, о их деятельности имелись только приблизительные представления, а образ Дашинакцутюн был мифологичен до предела. В это время община уже почти полностью расколота на носителей новых этнических символов и носителей старой культурно-исторической ориентации. На какое-то время кажется, что новая этническая символика побеждает.

Интересно, что эта символика со временем начинает восприниматься и некоторым количеством русских, не как национальная, а как героическая идеология вообще. Карабах предоставлял возможность участия в войне на стороне дружественного народа и в обстановке особого пиетета к своей персоне. Русских добровольцев (именно добровольцев, получающих мизерное денежное довольствие наравне со всеми и во многих случаях дававших присягу на верность армянскому народу, а не наемников) в 1991 - 1992 годах в Карабахе было значительное количество. А потому можно предположить, что резко-оппозиционистская модель поведения, которая была принята армянами в России, приводила к установлению новых связей с социокультурным окружением, на основе иной культурно-ценностной системы.

АОД или Айдат?

Ситуация в Армении того времени внешне мало соответствовала представлениям армянской общины Петербурга. Армения в этот период (1992 год) переживает внутренний и внешний (в том числе, военный) кризис, все более ощущается настроение апатии и усталости. Поднявшаяся в диаспоре "романтическая" волна как

бы разбивается. Носители новых этнических символов, попадая в Армению, кажутся там со своими представлениями мечтателями, если не ненормальными. Этот период в Армении характеризуется ростом антивоенных настроений, хотя и до этого времени уровень милитаризации сознания был не велик. Идеи "перестройки" постепенно трансформировались в идеи Айдата. Однако уже в 1992 - 1992 годах последние начинают тускнеть. Вновь формируемая ценностная альтернатива выглядела таким образом. На одном полюсе находилась та система мировоззрения, которая пропагандировалась правительством во главе с Л. Тер-Петросяном, основанная на идее, что армянский народ должен мыслить себя как "обычный" народ, ничем от других народов не отличающийся, принять западные ценности, заставить себя забыть геноцид и дружить с Турцией. На другом полюсе - открыто прорусская и антитурецкая идеология, в которой Айдат является одной (и, может быть, не самой главной) частью системы доминант, в основании которой лежит категория "союзничества"¹, а именно - союзничества с Россией, подразумевающее возможность более-менее полной самореализации и сохранения привычной самоидентификации.

Итак, с одной стороны, предполагалось изменения самопредставления, "отказ от амбиций" и претензий к внешнему миру и достижение таким образом спокойного и благополучного существования, а с другой - беспокойная, непредсказуемая судьба, возможно, полная опасностей, но с надеждой на будущую значительность. В целом, вторая альтернатива преобладала, хотя и "антигероическая" идеология оказывала свое влияние и вызывала время от времени почти пораженческие настроения. Последнее провоцировалось и отсутствием реальных перспектив союза с Россией, колебательностью ее позиции. Можно было бы ожидать, что героическая система доминант, принятая в тот момент диаспорой, вступит в резонанс с антитурецкой альтернативой в Армении. Однако идеальный героизм диаспоры был мало понятен в Армении, а идея идеального "союзничества" с Россией вызывала удивление и даже раздражение у диаспоры.

Не возникло достаточного коммуникативного резонанса и с карабахскими армянами. Последние жили своей собственной жизнью, воевали, строили свою республику и свою собственную очень своеобразную политику, направленное на всемерное утверждение своей самости и своей субъектности. Основные удары от этой политической линии принимала на себя Армения. Карабах никогда не вел себя как ее часть. Скорее Армения порой превращалась в приложение к Карабаху. Возникал диссонанс между Карабахом, как новым центром армянской активности и Ереваном, как центром собирания армянского этноса в сороковые - восьмидесятые годы. Однако возможность реализации антитурецкой альтернативы в совокупности с осознанием покровительства армянам со стороны России и союзничества с ней (на фактическом уровне, вопреки эксплицитно провозглашаемым принципам) приводило к тому, что армяне из Армении принимали в Карабахской войне значительное участие, хотя их установки и взгляд на цели и методы ведения войны отличались от карабахских и между двумя субэтническими группами сохранялось очень заметное непонимание. Армян диаспоры в Карабах привлекает возможность реализации "героического мифа". Этот миф способствовал и вовлечению в Карабахскую войну добровольцев, как из числа армян диаспоры, так и русских. Кроме того он формировал у русских образ армян-карабахцев в качестве хороших воинов, что в России всегда ценилось. Таким образом, к 1992 году коммуникация армян диаспоры со своим социокультурным окружением начала, казалось, налаживаться на новом уровне и более-менее адекватно.

Тем не менее армянская община Санкт-Петербурга в это время разбивается на несколько почти не общающихся между собой групп. Все они в большей или меньшей степени сохраняют новую национальную символику. Казалось бы, военные действия в Карабахе и особенно последовавшие в 1993 году один за другим крупные

¹ Категория "союзничества" в армянском политическом сознании имеет особое значение.

военные успехи должны были бы поддерживать актуальность "героического мифа" в диаспоре. Но очевидно, что его реализация в действительной жизни приводила к потере его значимости в качестве символа. Реальность не противоречила этому мифу, но была значительно сложнее его, не укладывалась в его рамки. В каждый конкретный момент основное внимание сосредотачивалось на новых проблемах, которые не могли найти свое отражение в символике. Активное комментирование карабахских событий того времени со стороны российских СМИ, создание ими своей версии событий, льстившей армянам, но не вполне соответствующей действительности, нагромождение несоответствующих друг другу фактов вызывало недоумение и растерянность и постепенно разрушало миф диаспоры.

Военные действия в Карабахе продолжаются до первых дней осени 1993, но боевые победы уже практически никак не влияют на жизнь диаспоры. С середины 1992 года начинается процесс перехода общины как бы в латентное состояние. Она, с одной стороны, вновь разбивается по сословно-земляческому принципу, с другой, бывшие активные ее члены переключаются на внутрироссийские политические проблемы, уже не в качестве армян, а в качестве россиян. Функциональная роль общины на этом этапе исчерпывает себя. Собственно с этого момента прекращается и развитие Карабахского конфликта. Он входит в латентную стадию, боевые действия прекращаются.

Община после войны

Формирование в России негативного отношения к армянам как к "лицам кавказской национальности" не приводит к консолидации общины. Оно встречается с недоумением и растерянностью. Столь резкую смену в отношении, ничем, казалось бы, не спровоцированную (в эти годы отношение армян к русским носило даже некоторые идиллические черты) вызывает не усиление этнической самоидентификации, а напротив, ее кризис. Ведь представление о союзничестве армян и русских было неотъемлемой частью этой самоидентификации. Массовая миграция из Армении в Россию в период резкого экономического спада приводит к еще большей дезинтеграции диаспоры.

Постепенно в армянской общине на первый план вновь выходят те представители армяноязычной и русскоязычной интеллигенции, которые в свое время были оттеснены от руководства общиной "партией войны". Активизируются формальные структуры общины, снова организуется культурно-просветительская работа, детские кружки, воскресная школа для детей, некоторое время функционирует театральная студия и молодежный клуб "Амайнк".

В течение 1993 - 1994 года центром объединения армян Петербурга становится церковь. Причем насколько политизирована была община в предыдущий период, настолько аполитична она в эти годы. Разговоры о политике пресекаются. Прежние лидеры от общины отходят и ее состав значительно меняется.

В последующие годы существенные смены состава общины происходят неоднократно. В это время она скорее напоминает клуб любителей армянской культуры, чем этническое образование. Она всевозможно пытается подстроиться к своей социокультурной среде, избегая при этом малейшей оппозиционности. Былой накал жизни общины пропадает. Она функционирует как бюрократическая структура, не имеющая отношения к подавляющему большинству армян Санкт-Петербурга. Создается некий фиктивный орган самоуправления "Армянская культурная автономия", имеющая в Санкт-Петербурге очень не высокую степень влияния. Надо отметить, что в отличие от Санкт-Петербурга в Москве армянская диаспора всегда имела и имеет в настоящее время значительно более высокую степень формальной организации, хотя и там она раздроблена. Утверждения подобные тому, что "только в Москве существует 30 армянских организаций самой различной направленности, оберегающих и пропагандирующих культуру, язык, религию, а так же со-

действующую развитию экономических связей и выполнением социальных функций”¹, исходят из сложившегося стереотипа о якобы сплоченности армянской диаспоры и я полагаю, нет сомнений, что эта статистика включала в себя в большинстве своем либо карликовые, либо существующие почти только на бумаге организации. Тесной связи между петербургской и московской армянскими общинами никогда не существовало равно как и не существовало связей между петербургской общиной и общинами других городов.

Светлана Лурье

(г. Санкт-Петербург, Россия,)

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԻՈՑ ԵՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՑ ՏԱՐԱԾՔԻՆ (1987-1998թթ.)**

Սուբիոյ Շրջանային Վարչութեան ծնունդը պատահականութեան արդիւնք էր 1987-ին, այլ՝ անհրաժեշտ պահանջը եւ օրուան հրամայական:

Հալէպի Մասնաճիւղը, յատկապէս, 1980-էն ետք սկսած էր մշակութապէս զարթոնք ապրիլ, ոչ միայն տեղական ուժերու ներգրտմով, այլեւ պարբերաբար Հալէպ հրաւիրելով արտասահմանէն մտաւորականներ եւ թատերական խումբեր, որոնք իրենց ելոյթներով հանդէս կու գային Հալէպի եւ Սուբիոյ այլ հայաշատ կեդրոններէն ներս, յագեցնելով ժողովուրդի ծարաւը, հայրենի ականգն ու մշակոյթը ճանչցնելու ճգնաժամով: Այս առնչութեամբ, 1982-ին Հալէպի նորընտիր վարչութեան հիմնական առաջադրանքներէն էր շրջիլ Սուբիոյ հայաշատ կեդրոնները, նոր մասնաճիւղեր հաստատելու մտադրութեամբ: 1984-ին ընթացաւ վարչութիւնը իր անդամական ընդհանուր ժողովէն բխած առաջարկներու հիման վրայ կը շօշափէ Սուբիոյ Շրջանային Վարչութեամբ մը օժտելու հարցը, նկատի ունենալով մասնաճիւղերու անդամական թիւի աճը եւ շրջաններու հետաքրքրութիւնը յամազգայինի նկատմամբ: Սակայն պէտք է ըսել, թէ Շրջանային Վարչութեան յառաջաման հարցը կը ձգտուի մինչեւ 21 Յունիսի 1987, «Երբ սուբիաւայ գաղութի հոգեմտաւոր առօրեան կը հարստանար գործող մեր երեք մասնաճիւղերու երէց ընկերներու երազի իրականացմամբ, որովհետեւ Համազգայինի Սուբիոյ մեծ ընտանիքը կօտուէր Շրջանային Վարչութեան ղեկավարութեամբ համադրուած եւ ծրագրուած մշակութային գործունէութեամբ»:

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը 1985-ի 521-3097 եւ 524-3099 թուակիր նամակներով կը մատնանչէ Շրջանային Վարչութեան յառաջաման անհրաժեշտ կարեւորութիւնը եւ կը շեշտէ դրական քայլեր առնել եւ փութացնել անոր ծնունդը. «Շրջանային Վարչութիւնը տեղական բնոյթ չունի, այլ կազմակերպութեան ցանցը ընդլայնող եւ մասնաճիւղերու գործունէութիւնը համակարգող վերին մարմին մը պիտի ըլլայ: Ասոր համար ալ, անհրաժեշտ է Շրջանային Վարչութիւնը, եւ կը շեշտենք թէ՛ Հալէպէն, Դամասկոսէն եւ Գամիշլիէն զատ մասնաճիւղեր պէտք է հիմնել Լաթաքիոյ եւ ուրիշ քիչ թէ շատ հայութիւն ունեցող վայրերու մէջ, «Համազգային»ի ձայնը լսելի դարձնելու համար Սուբիոյ բոլոր հայութիւն ունեցող կեդրոններուն մէջ»: Կեդրոնական Վարչութիւնը այս եւ յար բովանդակութեամբ նամակներ կը յղէ եւ կառաջարկէ Սուբիոյ շրջանները օժտել մասնաճիւղերով:

Այս նպատակով Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը Սուբիոյ շրջանին համար կը նշանակէ Առժամեայ Շրջանային Վարչութիւն մը, որուն գլխաւոր առաքելութիւնը, ընթացիկ գործերու կողքին, պիտի հանդիսանար ըստ կանոնադրի առաւելագոյնը վեց ամսուան ընթացքին յառաջացնել Սուբիոյ Պատգամաւորական առաջին ժողովը, որմէ պիտի բխէր Սուբիոյ Առաջին Շրջանային Վարչութիւնը: Առժամեայ Վարչութեան անդամները իրենց դիւանը կը կազմեն հետեւեալ ձևով:

¹Ж.Т. Тощенко, Т.И. Чаптыкова, Диаспора как объект социального исследования, Этнографическое обозрение, 1996, N 12.

²Համազգայինի Սուբիոյ Շրջանային Վարչութեան արխիւ (այսուհետեւ՝ ՀՄՎԱ), շրջաբերական թիւ 3.87, Հալէպ, 25 Յունիս 1987:

³ՀՄՎԱ, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան 8 Հոկտեմբեր 1985 թուակիր եւ 524-3099 Համարակալուած նամակ, ուղղուած Հալէպի Մասնաճիւղի վարչութեան:

ատենապետ Յակոբ Խաչատուրեան, ատենադպիր Յովսէփ Տէր Մանուէլեան եւ այլն:

Առժամեայ Վարչութիւնը չորս ամիսներու ընթացքին յաջորդաբար Հանդիպումներ կունենայ շրջանի Համազգայինի մասնաճիւղերու վարչութեանց Հետ, գանոնք մշակութային գործունէութեամբ Համադրուած եւ կենսունակ մակարդակի մը Հասցնելու նպատակով: Այս տեսակցութիւններու ընթացքին տեղի կունենան մտերմիկ զրոյցներ, գաղութս յուզող մշակութային ընդհանուր Հարցերու շուրջ: Առժամեայ Վարչութիւնը մասնաճիւղերէն կը պահանջէ սերտել ժողովրդավարական կանոնները եւ պատրաստուիլ Սուրիոյ Անդրանիկ Պատգամաւորական ժողովին: Առժամեայ Շրջանային Վարչութիւնը իր Ը. նիստին (2 Յունիս 1987) Ռաս Իւլ Այնէն կը ստանայ 10.12.1986 թուակիր նամակը, ուր կը տեղեկացնէին, թէ «կազմած են Ռաս Իւլ Այնի շրջանի մէջ Համազգայինի մասնաճիւղ մը, 48 անդամ-անդամուհիներով»: Սակայն այլազան պատճառներով յետագային առաջընթաց քայլեր չեն առնուիր: Յստակ չէ, թէ Ռաս Իւլ Այնի Մասնաճիւղը յետագային շարունակած է իր գոյութիւնը թէ ոչ:

Հալէպի Համազգայինի պատմութեան մէջ անկիւնադարձային ըլլալու սահմանուած Անդրանիկ Պատգամաւորական ժողովը կը գումարուի Կիրակի, 21 Յունիս 1987-ին, «Ն. Աղբալեան» մշակութային տան մէջ: Ժողովին կողմէ կը յառաջանայ Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կանոնագրի մշակման յանձնախումբ մը, բաղկացած Հինգ անդամներէ՝ Զաւէն Սապունճեան, Սարգիս Պատմաճեան, Յակոբ Մկրտիչեան, Սուրէն Նազարեան, Գրիգոր Տունկեան: Յանձնախումբը երեք ամսուան ընթացքին պիտի պատրաստէր կանոնագիրը եւ յղէր յաջորդ Պատգամաւորական ժողովին, առ ի քննարկում եւ վաւերացում: Մինչ այդ նորընտիր Շրջանային Վարչութիւնը առժամաբար պիտի գործէր Հալէպի Մասնաճիւղի մշակած կանոնագրի յօդուածներուն Հիման վրայ, որոնք օրին Կեդրոնական Վարչութեան կողմէ դանց առնուած էին Սուրիոյ մէջ Շրջանային Վարչութեան մը չգոյութեան պատճառով: Պատգամաւորական ժողովին ներկայներուն կողմէ կըլլան առաջարկներ եւ թելադրանքներ, որոնք կը միտէին կազմակերպել Ընկերակցութեան գործունէութիւնը եւ անոր Հիմնական նպատակները:

Անդրանիկ Պատգամաւորական ժողովի գումարումով աւարտած կը Համարուի Համազգայինի Սուրիոյ Առժամեայ Շրջանային Վարչութեան առաքելութիւնը: Պատգամաւորական Ա. ժողովի (21 Յունիս 1987) կողմէ կընտրուի Սուրիոյ Շրջանային Վարչութեան 11 ընկերները, որոնք իրենց դիւանը կը կազմեն Հետեւեալ ձեւով. ատենապետ Սուրէն Նազարեան, փոխ ատենապետ Յակոբ Խաչատուրեան, ատենադպրուհի Էմմա Ագարիկեան եւ այլն:

Կազմակերպչական աշխատանքներու առընթեր, Շրջանային Վարչութիւնը 3 Յուլիս 1988-ին կը կազմակերպէ Սուրիոյ շրջանի Բ. Պատգամաւորական ժողովը, յատկապէս՝ Համազգայինի ծրագիր-կանոնագրի քննարկման եւ վաւերացման օրակարգով: Պատգամաւորական ժողովը նոր ծրագիր-կանոնագիրը յօդուած առ յօդուած կը սերտէ, կը քուէարկէ եւ կը վաւերացնէ: Կը վաւերացնէ նաեւ «Զուարթնոց» երգչախումբի ու «Զաւարեան» թատերախումբի վարչութիւնները, որպէս Համազգայինի երաժշտական եւ թատերական միաւորներ, իսկ Հայ Երիտասարդաց Միութիւնը կընդունի որպէս մասնաճիւղ, որուն ենթակայ էր «Բ. Կանաչեան» երաժշտանոցը: Յիշեալ ժողովին կողմէ վաւերացուած ծրագիր-կանոնագիրը կը յղուի Կեդրոնական Վարչութեան, առ ի վաւերացում: Հրաժարեալ Յ. Գարրիէլեանի փոխարէն Շրջանային Վարչութեան լրացուցիչ անդամ կը Հրաւիրուի Զաւէն Սապունճեանը:

¹ ՀՄԾՎԱ, Առժամեայ Շրջանային Վարչութեան ատենագրութեան տետրակ, 23 Փետրուար 1987-20 Յունիս 1987, Ը. նիստ, էջ 33:

² ՀՄԾՎԱ, Ատենագրութիւն Ա. Պատգամաւորական ժողովի, 21 Յունիս 1987, Ա. նիստ, էջ 1:

³ Նոյն տեղը, Գ. նիստ, էջ 14:

⁴ ՀՄԾՎԱ, Ներկայացուցչական ժողովներ (Ա. ժողով. 21.06.1987, Բ. ժողով. 03.07.1988, Գ. ժողով. 24.05.1989, Դ. ժողով. 20-21.07.1990, Ե. ժողով. 19-20.09.1991), Տեղեկագիր Համազգային Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Հալէպ, 20 Յունիս 1987, էջ 1-3:

⁵ ՀՄԾՎԱ, Նոյն տեղը, Երկամեայ Տեղեկագիր Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, 21.06.1987-24.06.1989, էջ 1, 4:

Ա. Պատգամաւորական ժողովի կողմէ ընտրուած Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը կը ձեռնարկէ մասնաճիւղերու վերակազմութեան գործին, ինչպէս նաեւ նոր մասնաճիւղեր հիմնադրելու աշխատանքին: 13 Փետրուար 1988-ին կը նախաձեռնէ Քեսապի մէջ մասնաճիւղ մը հիմնադրելու աշխատանքին: Կեանքի կը կոչէ նշանակովի վարչութիւն մը, որուն կը վստահուի շրջանի մշակութային կեանքը վերակենդանացնելու աշխատանքը: 26 Փետրուար 1989-ին Շրջանային Վարչութեան անդամներու ներկայութեամբ Լաթաքիոյ Հայ կեդրոնէն ներս եւս կը կազմուի նշանակովի վարչութիւն մը: Այսպիսով՝ կը վերակազմուի Համազգայինի Լաթաքիոյ Մասնաճիւղը, որուն արմատները կերթան մինչեւ 1930-ական թուականները:

Մշակութասէր Հասարակութեան ծարաւը յագեցնելու նախանձախնդրութեամբ, Շրջանային Վարչութիւնը այս շրջանին ընթացք կու տայ Հետեւեալ աշխատանքներուն.

- Վարչութեան կազմակերպութեամբ լիբանանահայ մտաւորական-գրագէտ Պօղոս Մնայեան յաջորդաբար կը դասախօսէ Հալէպի, Լաթաքիոյ, Գամիշլիի եւ Դամասկոսի մէջ, Փրանց Վերֆէլի «Մուսա Լեւան 40 Օրեր» թեմայով:

- Համազգայինի Հալէպի «Լ.Շանթ» թատերախումբը ելոյթ կուենայ Քեսապի մէջ՝ «Արեւածաղիկս» երաժշտախառն կատակերգութեամբ, բեմադրութեամբ Ճորճ Վանեանի:

- Տեղի կուենան յիշատակի երեկոներ՝ Գամիշլիի եւ Քեսապի մէջ, նուիրուած Համազգայինի հիմնադրներէն Ն. Աղբալեանի յիշատակին, դասախօսութեամբ Գրիգոր Տունկեանի, իսկ ասմունքի երեկոներ՝ Քեսապի եւ Դամասկոսի մէջ:

- Մշակութային նոր աւելի ներարկելու նպատակադրումով Համազգայինի Հալէպի պարախումբը յաջորդաբար Հանդէս կու դայ Դամասկոսի, Ռազգայի եւ Գամիշլիի մէջ:

- Համազգայինի «Զաւարեան» թատերախումբը Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ Հալէպէն ետք Գամիշլիի մէջ կը բեմադրէ «Վարագդատ» պատմաողբերգական թատերախաղը, իսկ Լաթաքիոյ եւ Դամասկոսի մէջ՝ մեծանուն վիպագիր Բաֆֆի «Ոսկի Աքաղաղ»:

Գեղարուեստական դաստիարակութեան զարգացման առաջադրանքով Շրջանային Վարչութիւնը յարաբերութիւններ կը մշակէ Հայաստանի Մշակութային Կապի Կոմիտէութեան Հետ:

Կիրակի, 29 Մայիս 1988-ին Հալէպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ սրահին մէջ տեղի կուենայ Համազգայինի հիմնադրութեան 60 ամեակին նուիրուած Հրատարակային Հանդիսութիւնը: Այս առթիւ Համազգայնականները կը ներկայացնեն «Մայիսեան Յաղթերգ» խորագրով Համադրական գործ մը, Գրիգոր Քէլէշեանի բեմադրութեամբ: Օրուան բանախօս՝ Հրաչ Տասնապետեան կը ներկայացնէ Համազգայինի առաքելութիւնը՝ իր ծնունդէն մինչեւ 1988: Հանդիսութեան աւարտին՝ Հալէպի, Դամասկոսի եւ Քեսապի վարչութեանց ներկայացուցիչներու ողջոյնի խօսքերէն ետք կը կարգացուի Գարեգին Բ. Վեհափառին սրբատառ Կոնդակը:

Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը այս առթիւ կը հրատարակէ յիշատակի յայտագիր-պրակ մը, ուր տեղ կը գտնեն հիմնադիր փաղանգի զանազան գրութիւններէն քաղուած խօսքեր, ինչպէս նաեւ Համազգայինի սկզբնական շրջանի գործունէութեան պատմական թուականները:

Համազգայինի 60 ամեակին առիթով, Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ Հոկտեմբերեան Պատերազմի պանծալի յաղթանակին նուիրուած «Մշակութային Ձեռնարկներու Շաբաթ»:

Այս առթիւ՝ Շրջանային Վարչութեան հրաւերով Պէյրութէն հիւրաբար Հալէպ ժամանած Կարօ Յովհաննէսեան իր դասախօսաշարքով յաջորդաբար երեք օրերու ընթացքին Հանդէս կու դայ Հալէպահայութեան՝ «Հայ մշակույթը իբրեւ ինքնուրոյն երեւոյթ», «Տաղանդը Տիգ-

¹ Նոյն տեղը, էջ 6:

² ՀՄԿՎԱ, Նոյն տեղը, Երկամեայ Տեղեկագիր Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, 21.06.1987-24.06.1989, էջ 6-7:

³ Գաղութէ գաղութ 60 ամեակի տօնակատարութիւն, «Հայ Մշակույթի Լրատու», թիւ 3, Լիբանան, 1991, էջ 40-41:

րան Չրաքեանի մէջ» եւ «Բաֆֆի» (նուիրուած Բաֆֆիի մահուան 100 ամեակին) թեմաներով: Տեղի կունենան Հարցազրոյց՝ Արցախի նուիրուած, ցուցահանդէս՝ Համազգայինի Հայէպի պատմութեան, ազգային տարազներու ցուցադրութիւն՝ տոհմիկ պարերու եւ թատերական պատկերներու ընդմէջէն: Դարձեալ Պէյրութէն հրաւիրուած Յակոբ Բագրատունի կը դասախօսէ «Հայ Մշակոյթը եւ զայն պահե- յու անհրաժեշտութիւնը» թեմայով:

Համազգայինի Սուրբոյ Երջանային Գ. Ներկայացուցչական ժողովը² կը գումարուի 24-25 Յունիս 1989-ին, «Ն. Աղբալեան» սրահին մէջ, մասնաճիւղերու եւ միաւորներու ներկայացուցիչներուն ներկայութեամբ: Այս շրջանի մասնաճիւղե- րու թիւը աճ արձանագրելով կը ներկայացնէ անդամական հետեւեալ պատկերը. Գամիչի՝ 58, Լաթաքիա՝ 22, Դամասկոս՝ 151, Քեսապ՝ 66, Հայէպ՝ 484, ՀեՄ՝ 450, ընդհանուր թիւ՝ 1241 ընկեր-ընկերուհիներ⁴:

Սուրիահայ իրականութեան մէջ մշակութային եւ կրթական երախտաշատ աշխատանքի լծուած Համազգայինի Սուրբոյ Երջանային Վարչութիւնը յատկանշա- կան եւ անկիւնադարձային յանձնառութեամբ կարգարացնէ ինքզինք 1989-1991 շրջանին հետեւեալ կազմով. ատենապետ Վահէ Ժամագործեան, ատենադպրուհի Էմմա Ազարիկեան եւ այլն⁵:

23-24 Օգոստոս 1990-ին Աթէնքի մէջ կը գումարուի Համազգայինի Համա- Հայկական Անդրանիկ Պատգամաւորական ժողովը, որմէ կը բխի Համազգայինի առաջին ընտրովի Կեդրոնական Վարչութիւնը, եւ ուր կորդեգրուի Համազգայինի անուան ներկայ տարագաւորումը՝ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն: Նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամ կընտրուի Սուրիայէն Ն. Մելիքեան, որ կը դադրի Երջանային Վարչութեան մաս կազմելէ⁶:

1989-ի աշնան Երջանային Վարչութեան հրաւերով լիբանանաբնակ մտաւո- րական Սարգիս Կիրակոսեան իր գոյգ դասախօսութիւններով Հանդէս կու գայ Հա- յէպահայ Հասարակութեան՝ «Հայ Երիտասարդ Արձակագիրը» եւ «Հայ Մշակոյթի Կոթողներու Ողիսականը» նիւթերով: Քանատաբնակ ասմունքող Սոնա Յովհան- նէսեան կը ներկայացնէ գրական եւ ասմունքի երեկոներ Հայէպի, Լաթաքիոյ, Քե- սապի, Դամասկոսի եւ Գամիչիի մէջ:

1990-ի աշնան ՀՅԴ-ի 100 ամեակին առիթով կը կայանայ մշակոյթի տասնօր- եակ մը, մասնակցութեամբ հայրենի եւ սփիւռքահայ մտաւորականներու, արուես- տտի եւ մշակոյթի գործիչներու: Հրապարակային հանդիսութեամբ ելոյթ կունենան հայրենի արուեստաբան Հենրիկ Իգիտեան, բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեան, սփիւռքահայ գրողներ Պօղոս Մնայեան եւ Սարգիս Կիրակոսեան, արուեստի գործիչ Սօս Սարգսեան, օփերայի երգչուհի Արաքս Մանսուրեան, դաշնակահարուհի Կալի- նա Մելքոնեան, ասմունքող Անդրանիկ Յարութիւնեան եւ երգիչ Գոռ Արսէնեան:

ՀՅ.Դ.-ի 100 ամեակին նուիրուած հրապարակային հանդիսութեան Համազ- գայինը իր մասնակցութիւնը կը բերէ «Ձուարթնոց» երգչախումբով: 1990-ի Օգոս- տոսի Երջանային Վարչութիւնը կունենայ իր գրասենեակը Արամ Մանուկեան ժողովրդային Տունէն ներս եւ կը ստանձնէ «Լ. Շանթ» սրահին կից գտնուող «Քրիստափոր» գրադարանի գործառնութիւնը, բաժին բերելով գրադարանի գոր- ծավարուհի նիւթական վարձատրութեան:

Համազգայինի Սուրբոյ Երջանային Վարչութիւնը իր մասնաճիւղերով եւ միաւորներով համադրուած գործունէութիւն մը ունենալու առաջադրանքէն մղ- ուած, 1990-ին կը կազմակերպէ ծանօթացման հանդիպում մը, որուն ընթացքին Գ. Ներկայացուցչական ժողովի որոշմամբ եւ օրուան թեմիս Առաջնորդ Գերաշնորհ

¹ ՀՄԵՎԱ, Երկամեայ Տեղեկագիր Համազգայինի Սուրբոյ Երջանային Վարչութեան, 21.06. 1987 - 24.06.1989, Նշուած աշխատութիւնը, էջ 8:

² ՀՄԵՎԱ-ի մէջ Համազգայինի Սուրբոյ Երջանային առաջին երկու ժողովները յիշատակուած են Պատգամաւորական ժողովներ, Իսկ Գ. ժողովէն սկսեալ՝ Ներկայացուցչական:

³ Նոյն տեղը, Համազգայինի Սուրբոյ Գ. Պատգամաւորական ժողով, 24.06.1989, Ա.Նիստ, էջ 1:

⁴ Նոյն տեղը, Բ. Նիստ, էջ 7:

⁵ ՀՄԵՎԱ, Նոյն տեղը, Ատենադպրութիւն Ա. Հանդիպումի Համազգայինի նորընտիր Վարչու- թեան հետ, 25.06.1989:

⁶ Նոյն տեղը, Երկամեայ գործունէութեան բարոյական տեղեկագիր Համազգայինի Սուրբոյ Երջանային Վարչութեան, 24-25.06.1989 - 19-20.09.1991, էջ 1:

Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի օրհնութեամբ մասնաճիւղերը կանուանակոչուին Համազգայինի Հիմնադիր սերունդի անուններով.

- Հայէպի Մասնաճիւղ (545 անդամ-անդամուհիներ) «Ն. Աղբալեան»
- Դամասկոսի Մասնաճիւղ (175 անդամ-անդամուհիներ) «Լ. Շանթ»
- Գամիշլիի Մասնաճիւղ (60 անդամ-անդամուհիներ) «Ա. Ահարոնեան»
- Քեսապի Մասնաճիւղ (76 անդամ-անդամուհիներ) «Հ. Օհանջանեան»
- Լաթաքիոյ Մասնաճիւղ (26 անդամ-անդամուհիներ) «Վ. Նաւասարդեան»
- ՀԵՄ Մասնաճիւղ (320 անդամ-անդամուհիներ) :

Համազգայինի Սուրբոյ Շրջանային Դ. Ներկայացուցչական ժողովը կը գումարուի Հայէպի մէջ, 21-22 Յուլիս 1990-ին: Կը քննարկուի եւ վաւերացուի միութեան ծրագիր-կանոնագիրը, ինչպէս նաեւ կը կատարուի Համազգայինի ՀամաՀայկական Անդրանիկ Պատգամաւորական ժողովի (Օգոստոս 1990, Աթէնք) Սուրբոյ պատգամաւորներու ընտրութիւնը: Ժողովին ներկայ կըլլան Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը, վեց մասնաճիւղերու եւ երկու միաւորներու կողմէ ընտրուած պատգամաւորներն ու հրաւիրեալները, թիւով 60 հոգի:

Համազգայինի ՀամաՀայկական Պատգամաւորական Անդրանիկ ժողովին մասնակցող Հինգ պատգամաւորներն էին. Նուպար Մելիքեան, Սուրէն Պաթարեան, Կարօ Հրեշտակեան, Աւետիս Մատեան եւ Մաթիկ Էպլիդաթեան: Շրջանային Վարչութիւնը կունենայ իր ներկայացուցիչը՝ յանձին Վահէ Ժամագործեանի, իսկ խորհրդակցական ձայնով Սուրբոյ շրջանէն Կեդրոնական Վարչութեան կողմէ կը հրաւիրուին Զաւէն Սապունճեան, Կարպիս Դերձակեան եւ Հոփի Կանանեան :

4 Յունուար 1991-ին կը գումարուի Ներկայացուցչական ժողով մը, ուր կը կարգացուի Աթէնքի մէջ գումարուած Անդրանիկ Պատգամաւորական ժողովի ղեկոյցն ու բանաձեւերը³: Շրջանային Վարչութիւնը 1991-ի նոր տարեշրջանը կը սկսի Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսի (յետագային՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս) «Մարդկութիւնը Մարդուն Մէջ» դասախօսութեամբ եւ «Զուարթնոց» երգչախումբի ելոյթով, ղեկավարութեամբ Հայրենի խմբավար Խորէն Մէլիքեանի: Մասնաճիւղերու միջեւ Համագործակցութեան ոգին զարգացնելու առաջադրանքով, Շրջանային Վարչութիւնը Սուրբոյ շրջանները կուղարկէ արուեստի խումբեր եւ մշակոյթի գործիչներ:

Նոր աշխարհակարգի ձեւաւորման այս բախտորոշ ժամանակաշրջանին անհրաժեշտութիւն կը նկատուի Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու վերակազմակերպումը:

Հայրենիք-Սփիւռք մշակութային կապի ամրապնդման ձգտելով Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Համազգայինի կրթական եւ մշակութային վերելքի տեսլականով, զարկ կու տայ Հայաստանի հետ Համագործակցութեան: Շրջանային Վարչութեան հրաւերով Սուրբոյ շրջաններուն մէջ յաջորդաբար ելոյթներ կունենան «Մարաթուկ» ազգագրական երգի-պարի Համոյթը, «Հայեր» էսդրատային խումբը, «Երեւանի Պետական Սենեկային» թատերախումբը, «Գոսանական եւ Ժողովրդական երգի» Համոյթը, «Արեւիկ» մանկապատանեկան երգչախումբը, «Կոմիտաս» քառեակը եւ տակաւին բազմաթիւ այլ խումբեր: Հայրենիքէն կը հրաւիրուին նաեւ արուեստի մարզերու ուսուցիչներ: «Զուարթնոց» երգչախումբի, «Սարգարապատ» պարախումբի, «Բ. Կանաչեան» Երաժշտանոցի, «Ա. Կորքի» Ակադեմիայի Համար, գաղութիս մշակութային կատարողական մակարդակը բարձրացնելու հեռանկարով⁴:

Ընդառաջելով սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի հրաւերին, 27 Յուլիս 1991-ին Հայրենիք կայցելեն Համազգայինի Սուրբոյ եւ Լիբանանի պատուիրակութիւնները, կամրջելու Հայրենիք-Սփիւռք մշակութային գործու-

¹ ՀՄԿԱ, Երկամեայ գործունէութեան բարոյական տեղեկագիր Համազգային Սուրբոյ Շրջանային Վարչութեան, 24-25.06.191989 - 19-20.09.1991, էջ 4-5:

² ՀՄԿԱ, Երկամեայ գործունէութեան բարոյական տեղեկագիր Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, 24-25.06.191989 - 19-20.09.1991, էջ 5:

³ Տես Համազգայինի Անդրանիկ Պատգամաւորական ժողովը (Աթէնք, Օգոստոս 1990), «Հայ Մշակոյթի Լրատու», Լիբանան, թիւ 4, 1993, էջ 2-9:

⁴ ՀՄԿԱ, Երկամեայ գործունէութեան բարոյական տեղեկագիր Համազգային Սուրբոյ Շրջանային Վարչութեան, 24-25.06.1989 - 19-20.09.1991, էջ 8-11, 36:

նէութեան աւանդը: Սուրբիոյ պատուիրակութիւնը բաղկացած էր Հինգ Հոգիներէ՝ Վահէ ժամագործեան, Կարպիս Դերձակեան, Հռիփ Կանանեան, Էմմա Ագարիկեան եւ Վարդան Տէր Մովսէսեան:

Անդրանիկ այցելութիւնը հիմը կը դնէր Հայրենիք-Սփիւռք մշակութային գործակցութեան փոխանակելով արուեստի գործիչներ եւ խումբեր: «Յիշեալ երկու միութիւնները եւ Հայրենի մի շարք կազմակերպութիւնները միջեւ կնքուեցին կարեւոր պայմանագրեր, ձեռք բերուեց կատարող արուեստագէտները եւ մասնագէտ դասախօսները փոխադարձ հրաւերները հարցերի շուրջ պայմանաւորուածութիւն»¹: Համազգայինի պատուիրակութեան Հայրենիք այցելութեան արձագանգած են «Ազատամարտ» եւ «Հայրենիքի Չայն» Հայրենի թերթերը²:

19-20 Սեպտեմբեր 1991-ին գումարուած Համազգայինի Սուրբիոյ Շրջանային Ե. Ներկայացուցչական ժողովը կը նորէ նոր շրջանի վարչութիւնը: Նորակազմ վարչութեան պատկերը հետեւեալն էր. ատենապետուհի Հռիփ Կանանեան, ատենադպիր Աւետիս Մատեան եւ այլն:

Նորընտիր Շրջանային Վարչութիւնը ճիգ չի խնայեր գործադրելու շրջանի Ե. Ներկայացուցչական ժողովի որոշումները: Առ այդ, իր վեց մասնաճիւղերով եւ զոյգ միաւորներով կը ջանայ հնարաւոր սահմաններուն մէջ արդարացնել իրեն վստահուած առաքելութիւնը, զբաղելով ներքին կազմակերպչական եւ մշակութային կեանքը յուզող հարցերով:

9-13 Դեկտեմբեր 1991-ին, Համազգայինի հիմնադրութենէն 63 տարի ետք, Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը իր անդրանիկ լիազուցմամբ ժողովը կը գումարէ Երեւանի մէջ, ուր Կեդրոնական Վարչութեան կողքին խորհրդակցական ձայնով կը մասնակցին նաեւ Հայաստանի ներկայացուցիչ անդամները: Յիշեալ ժողովին կեանքի կը կոչուի Համազգայինի Հայաստանի Գրասենեակն ու Վարչութիւնը, որ կը ստանձնէ յատուկ առաքելութիւններ: Իսկ Սօս Սարգսեանի ղեկավարած թատրոնը այնուհետեւ կը կրէ Համազգայինի անունը: Այսպիսով, աւելի քան 60 ամեակ մը սփիւռքահայ կազմակերպութիւն ըլլալէ ետք, Հայ ժողովուրդի կեանքի այս կարեւոր հանգրուանին Համազգայինը քայլ պահելով ժամանակի հրամայականներուն հետ եւ հաւատարիմ մնալով Համազգայինի Ա. Պատգամաւորական ժողովի բանաձեւերուն, կը դառնայ համահայկական կազմակերպութիւն:

Օգտուելով Համազգայինի Հայաստանի Վարչութեան յառաջացումէն, 1992-ին Սուրբիոյ Շրջանային Վարչութիւնը գարկ կու տայ Հայաստանի Գրասենեակին հետ մշակութային գործակցութեան, իր ճամբով հրաւիրելով Հայրենի արուեստի եւ մշակութիւն գործիչները: «Զուարթնոց» երգչախումբին համար կը հրաւիրէ խմբավար Նորէն Մէլիսանձեանը: «Բ. Կանաչեան» երաժշտանոցին համար՝ դաշնակահար Դոնատ Կալինա Մեքրումեան եւ սոլֆէժի դասատու Քնարիկ Փիլոսեան, որ նոյն ժամանակ կը գործուղուի նաեւ Լաթաքիա, շաբաթական Հերթականութեամբ: Յաջորդաբար կը հիւրընկալէ Հայրենի զանազան խումբեր, կը հրաւիրէ արուեստագէտները: Օգտուելով Գոլանական խումբի Հալէպ ներկայութենէն, առաջին առթիւ կառաջարկէ Հայրենի պարուսոյց Ինա Կոստանեանին ստանձնել «Սարտարապատ»ի ղեկավարութիւնը, աւելի ուշ՝ Նորիկ Մեհրապեանին: «Ա. Կորքի» գծագրական արուեստանոցին համար, որպէս արուեստի դասատու կը հրաւիրէ Հայաստանի գեղագիտական դաստիարակութեան հիմնարկէն Սոնա Բանոյեանը:

1991 Հոկտեմբերէն սկսեալ Շրջանային Վարչութիւնը, համագործակցաբար իր մասնաճիւղերուն, միաւորներուն եւ յանձնախումբերուն, կը կազմակերպէ փայ-

¹ «Համազգայինի Պատուիրակութիւնը Երեւանում», «Հայրենիքի Չայն» օրաթերթ, Երեւան, 14 Օգոստոս 1991, թիւ 31-32 (1957), էջ 5:

² ՀՄԵՎԱ, Երկամեայ գործունէութեան բարոյական տեղեկագիր Համազգային Սուրբիոյ Շրջանային Վարչութեան, 24-25.06.1989 - 19-20.09.1991, էջ 6:

³ Տես նոյն տեղը, Բանաձեւեր Համազգայինի Սուրբիոյ Շրջանային Ե. Ներկայացուցչական ժողովին, էջ 1-3:

⁴ Համազգայինի Հայաստանի առաջին Վարչութիւնը բաղկացած էր Ռազմիկ Դաւոյեանէ, Սօս Սարգսեանէ, Վահագն Ստամպուլցեանէ, Համլէթ Միքայէլեանէ, Ռուբէն Զուլհապեանէ, Ռուբէն Յովսէփեանէ, Գագիկ Վարդանեանէ, Երուանդ Երկանեանէ եւ Լիլիթ Գալստեանէ:

⁵ ՀՄԵՎԱ, Երկամեայ տեղեկագիր Սուրբիոյ Շրջանային Վարչութեան, 19-20 Սեպտ. 1991-23 Հոկտ. 1993, էջ 13-14:

լուև ձեռնարկներ, որոնք օրին մեծ յաջողութեամբ կը պսակուին: Կը կազմակերպէ «Կոմիտաս» քառեակի ելոյթները Հալէպի եւ Դամասկոսի մէջ, Հայաստանի գուսանական եւ ժողովրդական երգի ու պարի անսամպլի չորս ելոյթները, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբի երկու ելոյթները, Հայաստանի խորհրդարանի անդամ Սէյրան Պաղտասարեանի զեկոյցը՝ «Հայաստանի եւ Արցախի ներկայ իրավիճակ» շուրջ: Օգտուելով ՀՅԴ-ի Բիւրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխեանի ներկայութենէն կը կազմակերպէ հրապարակային դասախօսութիւն Արցախի ազատագրական պայքարի եւ Հայաստանի մասին :

Շրջանային Վարչութիւնը երեք տարիներ յաջորդաբար (1991-1992-1993) կը մասնակցի Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ կայացած երեք Միջ-շրջանային ժողովներուն (երկուքը՝ Լիբանան, իսկ մէկը՝ Հալէպ), որոնց ներկայ էին Կիպրոսի, Լիբանանի եւ Սուրիոյ ներկայացուցիչները, գլխաւոր օրակարգ ունենալով ներքին կազմակերպչական եւ Հայրենիքի հետ առնչուած միջ-գործունէութեան ծրագիրները, մասնաւորաբար Հայաստանէն խումբեր եւ ուսուցիչներ հրաւիրելու գծով: 1993-ին Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ խորհրդաժողով մը, գլխաւորութեամբ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին, որ կը փոխանցէ Հայաստանի մէջ կայացած լիազուցմար նիստի որոշումներն ու առաջադրանքները : Նոյն տարուան Յունուարին թատերական գործունէութեան աշխուժացման ծրագրով Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ հանդիպումներ եւ հարցազրոյցներ հայրենի տաղանդաւոր արուեստագէտ, Համազգայինի Հայաստանի թատերախումբի բեմադրիչ Սօս Սարգսեանի եւ «Մատենադարան» ֆիլմաշարի անձնակազմին հետ: Կը կազմակերպէ նաեւ «Մատենադարան» ֆիլմաշարի ցուցադրութիւնները: Յունուարին Հալէպ կը ժամանէ հայրենի ականաւոր դերասան Մհեր Մկրտիչեանը: Այդ առթիւ Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ օգտաշատ զրոյց մը արուեստագէտին, անձնակազմին եւ հալէպահայ թատերախումբերուն հետ:

1992-1993 տարեշրջանի տուեալներով Համազգայինի Սուրիոյ շրջանի մասնաճիւղերու անդամներու թիւը կը ներկայացնէ հետեւեայ պատկերը. «Ն. Աղբալեան» Մասնաճիւղ՝ 463, ՀեՄՄ Մասնաճիւղ՝ 328, «Լ. Շանթ» Մասնաճիւղ՝ 158, «Վ. Նաւասարդեան» Մասնաճիւղ՝ 46, «Հ. Օհանջանեան» Մասնաճիւղ՝ 78 անդամ-անդամուհիներ:

1991-1998 շրջանին Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը իր մասնաճիւղերով եւ միաւորներով կը շարունակէ մշակութային գործը: Սերտ յարաբերութիւններ կը մշակէ Կեդրոնական Վարչութեան, Հայրենիքի եւ քոյր միութիւններու հետ: Մասնակցութիւն կը բերէ նաեւ Սուրիական Արաբական Հանրապետութեան միջոցառումներուն, որպէս հաւատարիմ քաղաքացի: Հարկ է յիշել, որ սուրիահայութիւնը հաւատարիմ մնալով իր արեան կանչին ու մշակութային ավանդներուն, չէ զլացած իր դերակատարութիւնը ունենալէ ա՛յն երկրին մէջ, ուր տասնեակ տարիներ առաջ ապաստան գտած էր փրկուելու մահուան ճիրաններէն: Սուրիահայութիւնը իր ողջ կեցութեան ընթացքին որպէս համայնք, որպէս միութիւն իր ներգրուած ունեցած է երկրի տնտեսութեան բարգաւաճման, մշակոյթի զարգացման եւ այլ բնագաւառներէն ներս որպէս լիիրաւ քաղաքացի կատարած է իր պարտաւորութիւնները: Սուրիահայութեան կրթական եւ մշակութային կեանքը առաւել վերելք կապրի վսեմաշուք նախագահ Հաֆէզ Էլ Ասատի օրերուն: Անոր նախագահութեան 22-րդ տարեդարձին առթիւ եւ սուրիական «Վերանորոգման շարժման» միջոցառումներուն, այլ միութիւններու եւ կազմակերպութիւններու կողքին, Համազգայինը եւս հանդէս կու գայ «Զուարթնոց» երգչախումբով եւ «Սարգարապատ» պարախումբով, արժանանալով ընդհանուրի գնահատանքին:

Բացի պետական տօնախմբութիւններուն բերած իր մասնակցութենէն, Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը 1993-ին կը կազմակերպէ Բերիոյ

¹ ՀՄԿՎԱ, Երկամեայ տեղեկագիր Սուրիոյ Շրջանային Վարչութեան, 19-20 Սեպտ. 1991-23 Հոկտ. 1993, էջ 16-17:

² ՀՄԿՎԱ, Երկամեայ տեղեկագիր Սուրիոյ Շրջանային Վարչութեան, 19-20 Սեպտ. 1991-23 Հոկտ. 1993, էջ 5-8:

³ Նոյն տեղը, էջ 9: Սոյն նիստի որոշումներուն եւ առաջադրանքներուն մասին ուրիշ ոչ մէկ յիշատակութիւն կայ ՀՄԿՎԱ-ի մէջ:

Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սուրեն Ս. Արք. Գաթարոյանի առաջնորդութեան 15 ամեակին նուիրուած երեկոյ մը: Սոյն ձեռնարկին բացառիկ պատրաստութեամբ կը ցուցադրուին պատմական Հայաստանի ազգագրական տարազները: Ի պատիւ Կիլիկիոյ Թեմի Ազգ. Ժողովի պատգամաւորներուն, կը կազմակերպէ գեղարուեստական երեկոյ, բարձր հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կաթողիկոսի եւ Համագործակցութեամբ ՀԵՄ-ի Վարչութեան: Կը մասնակցի Բերիոյ Թեմի Ազգ. Գաւառական ժողովին իր ներկայացուցիչով: Կը կազմակերպէ Հայրենի արուեստագէտներու նկարչական գործերու ցուցահանդէս-վաճառք, «Ողջոյն սուրիա-կան եւ Հայկական բարեկամութեան» խորագիրով:

Հայ եւ օտար մշակոյթի մերձեցման առաջադրանքով, Շրջանային Վարչութիւնը Ֆրանսական Հիւպատոսարանի հովանաւորութեամբ կը կազմակերպէ լուսանկարչական ցուցահանդէս, որուն կանգնադառնայ նաեւ օտար մամուլը: Ընդառաջելով ՀՀ Հիւպատոսարանի առաջարկին, աշակցութիւն կը բերէ Հայրենի «Շիրակ» խումբի պետական ելոյթի տոմսերու ցրուումին:

1993-ի Օգոստոսին Լաթաքիոյ մէջ կայացած «Սիրոյ եւ Խաղաղութեան» փառատօնին նուիրուած միջոցառումներուն Շրջանային Վարչութիւնը իր մասնակցութիւնը կը բերէ «Սարգարապատ» պարախումբով: Համագործակցութեամբ Քեսապի «Հ. Օհանջանեան» եւ «Ն. Աղբալեան» մասնաճիւղերու վարչութեանց. Քեսապի մէջ կը կազմակերպէ Ս. Աստուածածնայ տօնին նուիրուած փառատօն մը, մշակութային երանգաւորում մը տալու նպատակով:

Հակառակ Հայրենիքէն ներս տիրող տնտեսական անբարենպաստ պայմաններուն, Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը 1993-ի Սեպտեմբերին Հայրենիք կողարկէ «Սարգարապատ» պարախումբը, մասնակցելու Հայաստանի Մշակոյթի Նախարարութեան կազմակերպուած փառատօնին, որուն կը մասնակցի նաեւ Լիբանանի «Քինար» պարախումբը: Աւարտին՝ պարախումբին ընկերակցող Շրջանային Վարչութեան ատենապետուհին՝ Հռիփ Կանանեան կունենայ շարք մը Հանգիպումներ արուեստի եւ մշակոյթի գործիչներուն հետ, Հայրենի արուեստագէտներու հրաւիրման, ինչպէս նաեւ Համագրայինի եւ Հայրենիքի մշակութային կապերու ամրապնդման հարցերով¹:

Համագրայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը 23-24 Հոկտեմբեր 1993-ին, երկամեայ տարեշրջանի աւարտին կը գումարէ Սուրիոյ Զ. Ներկայացուցչական ժողովը, ուր կը նտրուին Սուրիոյ Դ. Շրջանային Վարչութեան անդամները. ատենապետ Վահէ Ժամագործեան, ատենադպրուհի Էմմա Ազարիկեան եւ այլն²:

24 Յուլիս 1994-ին կը գումարուի Համագրայինի Սուրիոյ Շրջանային Արտակարգ Է. Ներկայացուցչական ժողովը, սերտելու Համագրայինի Բ. Պատգամաւորական ժողովի (Սեպտեմբեր 1994, Ծաղկաձորի մէջ, Հայաստան) օրակարգերը եւ կատարելու պատգամաւորներու ընտրութիւնը: Ներկայացուցչական ժողովին պատգամաւորներ կը նտրուին Ասատուր Պօղոսեան, Մովսէս Ֆաբեան, Վիգէն Մարաշլեան, Թինա Գարեգինեան եւ Տալիտա Նալպանտեան, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Վահէ Ժամագործեան:

Կազմակերպչական եւ մշակութային գործունէութեան աշխուժացման ծրագրով Շրջանային Վարչութիւնը յաջորդաբար կը կազմակերպէ Միջ-գիւղականային չորս խորհրդաժողովներ (Յունուար 1994, Մայիս 1994, Հոկտեմբեր 1994, Փետրուար 1995):

Շրջանային Վարչութիւնը նախանձախնդիր զարգացնելու Հայրենիք-Սփիւռք գործակցութիւնը կը մշակէ նոր ծրագիրներ եւ կորոշէ հրաւիրել Հայրենի դասախօսներ ու արուեստագէտներ: 1993-94 տարեշրջանին շրջանիս մէջ աշխատանքի կը հրաւիրուին Հայրենի հետեւեալ արուեստագէտները.

- Նորիկ Մեհրապեան, որպէս պարուսոյց «Սարգարապատ» պարախումբին:
- Սոնա Բանոյեան, որպէս դասատու «Ա. Կորքի» գծագրական արուեստանոցէն ներս:

¹ ՀՄԿԱ, Ներկայացուցչական ժողովներ (Զ. Ժողով. 23-24.10.1993, Է. Ժողով. 24.07.1994, Ը. Ժողով. 1.10.1995, Թ. Ժողով. 5-6.07.1997), երկամեայ տեղեկագիր Սուրիոյ Շրջանային Վարչութեան, 19-20 Սեպտ. 1991 - 23 Հոկտ. 1993, էջ 17-23, 25-26:

² Նոյն տեղը, Ատենագրութիւն Սուրիոյ Շրջանային Զ. Ներկայացուցչական ժողովի, 23. 10. 1993, էջ 1:

- Սեդրակ Երկանեան, որպէս խմբավար «Զուարթնոց» երգչախումբին:
Իսկ 1994-95 տարեշրջանին.

- Գէորգ Ալվազեան՝ պարուսոյց «Սարգարապատ» պարախումբին:
- Կարէն Սարգիսեան՝ խմբավար «Զուարթնոց» երգչախումբին:
- Հրաչեայ Աշուղեան՝ բեմադրիչ «Լ. Շանթ» թատերախումբին:

Համազգային Սուրբոյ Շրջանային Վարչութեան այս շրջանի կարեւորագոյն նախաձեռնութիւններէն էր, Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանի տնօրէնութեան եւ Շրջանաւարտից Միութեան վարչութեան հետ Համագործակցաբար նախապատրաստել գեղարուեստական դաստիարակութեան ճամբով արտադպրոցական ծրագիր մը, ձեմարանի աշակերտութեան յատուկ, մասնագէտ ուսուցիչներու անմիջական հսկողութեամբ: Նախատեսուած ծրագիրը կիրականանայ, յատկապէս թատրոնի եւ պարարուեստի մարզերէն ներս եւ յատուկ անդրադարձ կ'ունենայ աշակերտութեան վրայ, զարգացնելով նոր սերունդի հետաքրքրութիւնները հայ մշակոյթի եւ գեղարուեստի նկատմամբ:

Ինչպէս նախորդ շրջաններուն, այս շրջանին ե՛լս Շրջանային Վարչութիւնը կունենայ ծաւալուն գործունէութիւն: Կը կազմակերպէ տոհմիկ երեկոներ, Հայրենի գեղանկարիչներու գործերու ցուցահանդէսներ, մշակոյթի օրեր, դասախօսութիւններ, հանդիպումներ եւ այլն: Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կունենան Հայրենի թաթուլ Ալթունեանի անուան երգի-պարի պետական Համոյթի եւ Հայրենի մանկապատանեկան «Սարգարապատ» Համոյթի ելոյթները: Համազգայինի Հայաստանի թատերախումբը, գեղարուեստական ղեկավար Սոս Սարգսեանի գլխաւորութեամբ, Սուրբոյ եւ Լիբանանի Շրջանային վարչութեանց հրաւերով եւ «Զաւարեան» Միւսուրի վարչութեան կազմակերպութեամբ, 1994-ի Փետրուարին ելոյթներ կունենայ Հալէպի, Դամասկոսի եւ Գամիշլիի մէջ: Շրջանային Վարչութիւնը Համաձայն Զ. Ներկայացուցչական Ժողովի որոշումներուն, 1994-ի Ապրիլին կը կազմակերպէ Ն. Աղբալեանի նուիրուած երեկոյ մը, ներկայութեամբ իր դստեր Տորա Ն. Աղբալեանի: Սոյն ձեռնարկին բանախօսն էր Պէյրութէն յատկապէս ժամանած գրականագէտ-մանկավարժ Գրիգոր Շահինեան: Քեսապի մէջ Ս. Աստուածածնայ տօնին առթիւ կայացած տոհմիկ երեկոյին, Շրջանային Վարչութիւնը եւս իր մասնակցութիւնը կը բերէ գեղարուեստական յայտագիրով եւ «Սարգարապատ» պարախումբով:

Ի պատիւ եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի գործադիր յանձնախումբի անդամներուն, ներկայութեամբ եւ հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ.-ի կը կայանայ «Հայ Մշակոյթի Երեկոյ», ուր կը ցուցադրուին հայկական ստեղծագործութիւններ, իսկ գեղարուեստական բաժինով ելոյթ կունենայ Համազգայինի «Սարգարապատ» պարախումբը: Շրջանային Վարչութիւնը հանդիսաւորապէս կը նշէ հայկական առաջին թերթի՝ «Ազգարար»ի 200 ամեակը, դասախօսութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն Հոգշ. Տ. Գրիգոր Վրդ. ԶիՅթճեանի, «Ազգարարն ու Հայ մամուլը» թեմայով:

1995-ի Ապրիլին, Եղեռնի 80 ամեակին, Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը լիազօրէ Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը Տէր Զօրի նահատակաց մատուռի յուշարձան-թանգարանին մէջ գետեղելու Համազգայինի անունով որմնաքանդակ մը, իր մշտանորոգ ուխտը կատարելով: Վարչութեան կազմակերպութեամբ կը կայանայ Եղեռնի 80 ամեակին նուիրուած «Եղեռնէն Վերածնունդ» ցուցահանդէսը, ինչպէս նաեւ «Գեղարուեստական Երեկոյ» նուիրուած արտասահմանէն ժամանած ուխտաւորներուն, մասնակցութեամբ «Զուարթնոց» երգչախումբին եւ «Սարգարապատ» պարախումբին: Կը կազմակերպէ Սարգիս Ղազարեանի անուան ասմունքի մրցանք, մասնակցութեամբ երեք մասնաճիւղերէ (ՀԵՄ, «Ն. Աղբալեան», «Լ. Շանթ») ներկայացող ասմունքողներու: Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր առաջարկով եւ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ կը կայանայ գեղարուեստական երեկոյ, ի պատիւ քաղաքս ժամանած Գ. Կիւլպէնկեան Հիմնարկի Հայկական բաժնի տնօրէն Դոկտ. Զաւէն Եկաւեանի, մասնակցութեամբ «Զուարթնոց» երգչախումբին եւ «Սարգարապատ» պարախումբին: Վարչութիւնը մասնակցութիւն կը բերէ նաեւ Պէյրութի մէջ տեղի ունեցած ամառնային Ուսանողա-

կան մշակութային Ա. Հաւաքին¹ (Forum), ուղարկելով մեծ թիւով մասնակիցներ: Թելադրուած Ջ. Ներկայացուցչական ժողովի առաջարկներէն, Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կունենայ յոբելենական Հանդիսութիւն, նուիրուած Յակոբ Օշականի գրական գործունէութեան յիսնամեակին, ներկայութեամբ սփիւռքահայ մտաւորական Վահէ Օշականին:

Ի սկզբանէ Համազգայինի գործունէութեան ծիրէն ներս իւրայատուկ տեղ գրուած էր, բացի մշակութայինէն, նաեւ կրթական նպատակներու իրագործումը: Սակայն այս շրջանի իր կարեւոր իրագործումներէն մէկը կըլլայ զարկ տալ հրատարակչական աշխատանքին, իրագործելով բանասէր Յակոբ Չոլաքեանի «Քեսապ» ազգագրական-բանասիրական ծաւալուն գիրքի Ա. Հատորի հրատարակութիւնը²:

Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը մասնաճիւղերուն եւ միաւորներուն հետ ունեցած սերտ համագործակցութեանց կողքին յարաբերութիւններ կը մշակէ այլ շրջաններու Շրջանային վարչութեանց հետ: Այսպէս, այս շրջանին Սուրբոյ եւ Լիբանանի Շրջանային վարչութիւնները կունենան համատեղ նիստեր, ուր համագործակցութեան ճամբով կը յանգին որոշումներու, կը հաստատեն համատեղ նիստերու հերթական գրութիւն մը (եռամսեայ), գեղարուեստական խումբերու փոխանակում, գծագրական գոյգ արուեստանոցներու եւ «Բ. Կանաչեան» գոյգ երաժշտանոցներու միջեւ գործակցութիւն³:

Համազգայինի Սուրբոյ բնտանիքը մասնաճիւղերու եւ միաւորներու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ 14-15 Հոկտեմբեր 1995-ին կը գումարէ Սուրբոյ Ը. Ներկայացուցչական ժողովը, որի կողմէ յառաջացած Շրջանային Վարչութիւնը կընտրէ իր ղեկանը հետեւեալ ձեւով. ատենապետ Ասատուր Պօղոսեան, ատենադպրուհի Էմմա Ազարիկեան եւ այլն:

Կազմակերպչական ծրագիրներ մշակելու առաջադրանքով, Շրջանային Վարչութիւնը ներկայացուցչական կազմով հանդիպում կունենայ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան հետ⁴:

Ինչպէս անցեալին, այս շրջանին եւս Շրջանային Վարչութիւնը շրջաններուն մէջ կը վարէ համագործի դեր: Մասնաճիւղերուն եւ միաւորներուն միջեւ կազմակերպչական կապը աշխուժացնելու, ինչպէս նաեւ մշակութային կեանքը ծաղկեցնելու առաջադրանքէն մղուած կը կազմակերպէ Միջ-գիւնանային երկու ժողովներ (Մարտ 1996, Հոկտեմբեր 1996): Մշակութային կեանքը աւելի կազմակերպուած եւ արդիւնաւէտ տեսնելու հեռանկարէն թելադրուած, Շրջանային Վարչութեան ատենապետը կը գործուղուի Հայաստան եւ երկար բանակցութիւններէ ետք, 1995-96 տարեշրջանին «Ձուարթնոց» երգչախումբին մօտ որպէս գեղարուեստական ղեկավար հայրենիքէն կը հրաւիրէ Ռուբէն Ալթունեանը, իսկ 1996-97 տարեշրջանին՝ Սամուէլ Վարոսեանը, որոնք կը ստանձնեն «Բ. Կանաչեան» երաժշտական դպրոցէն ներս լարային խումբի մարզումը: «Սարգարապատ» պարախումբին որպէս պարուսոյց կը հրաւիրէ Փայլակ Սարգսեանը, իսկ յաջորդ շրջանին համար՝ Վիլէն Գալստեանը, որոնք կը կազմակերպեն նաեւ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի միջնակարգի ուսանողութեան մօտ պարային դասընթացքի ուսուցում:

Շրջանային Վարչութիւնը կազմակերպչական թէ գեղարուեստական իր մասնակցութիւնը կը բերէ ազգային եւ պետական տօներու հանդիսութեանց, իր երգչախումբով, պարախումբով: Այսպէս՝ 1995-ին եւ 96-ին կը կայանան Նոյեմբերեան Բարենորոգման տարեդարձին նուիրուած հրապարակային հանդիսութիւններ, ուր

¹ 1995-էն ի վեր Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ Լիբանանի մէջ տեղի կունենայ ամառնային Ուսանողական մշակութային Հաւաք (Forum), իսկ 2002-էն ի վեր նաեւ՝ Հայաստանի մէջ:

² ՀՄԿՎԱ, Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիր, 24-25.10.1993 - 14-15.10.1995, էջ 4-8, 10-14, 16-17:

³ Է. Ազարիկեան, Համազգայինը այսօր, «Գանձասար» բացառիկ, Հալէպ, 1996, էջ 15:

⁴ ՀՄԿՎԱ, Ատենագրութիւն Համազգայինի Հայ Մշակութային եւ Կրթական Միութեան Սուրբոյ Շրջանային 8-րդ ժողովի, 14-15 Հոկտ. 1995, էջ 1:

⁵ Նոյն տեղը, Համազգայինի Սուրբոյ Շրջանային Վարչութեան գործունէութեան տեղեկագիր 14-15.10.1995 - 5-6.07.1997, էջ 3:

⁶ Տես նոյն տեղը, էջ 4-5:

գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը կը բերեն Համազգայինի պարախումբը, երգչախումբն ու երաժշտանոցի ուսուցչական կազմը:

Ապրիլին Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոսի առաջին այցելութեան առթիւ տեղի կունենայ գեղարուեստական երեկոյ, մասնակցութեամբ Համազգայինի պարախումբին, երգչախումբին եւ երաժշտական դպրոցի լարային Համոյթին, նախագահութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր:

Ասմունքի արուեստը հասարակութեան ծանօթացնելու եւ նոր սերունդին մօտ արուեստին հանդէպ ունեցած սէրը զարգացնելու նպատակով, երկու ամսուան համար Հալէպ կը հրաւիրուի «Հայրենի ասմունքի վարպետ» Սիլվա Իւզպաշեանը եւ նոյն նպատակով կը կազմակերպուին դասընթացքներ Հալէպի եւ Գամիշլիի մէջ: Այս ուղղութեամբ գնահատելի էր ասմունքի «դպրոց» կամ «խմբակ» ստեղծելու գաղափարը, որուն արգասիքը մինչ օրս կը քաղենք: Սիլվա Իւզպաշեանի ցուցմունքներով առաջնորդուող պատանին կամ պարմանուհին, այսօր արդէն կը զարգարէ մեր բեմերը, հայ հասարակութեան մատուցելով գեղեցիկն ու արժանին: Անկասկած այս բոլորը առաջին հերթին կը պարտինք ա՛յն մշակութային միութեան, որ յղացած էր այս գաղափարը:

Շրջանային Վարչութիւնը այս շրջանին մասնակցութիւն կը բերէ Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ կայացած հայ Ուսանողական մշակութային Բ. Հաւաք (Forum), կը կազմակերպէ նաեւ շրջապտոյտ մը դէպի Գահիրէ-Ադեք-սանգրիա:

Համազգայինը ըլլալով կրթական եւ մշակութային Միութիւն, Սուրիոյ տարածքին, իր ողջ գոյութեան ընթացքին, առաւել զարկ տուած է մշակութային աշխատանքին, յատկապէս Շրջանային Վարչութեան յառաջացումէն վերջ: Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը հաւատարիմ իր առաքելութեան այս շրջանին կիրառործէ Հայագիտական դպրոցի մը հաստատումը: Որոշումը յանդուգն քայլ մըն էր, որ կը պահանջէր նիւթական եւ բարոյական հսկայ ներդրում: Երկար խորհրդածութիւններէ ետք, հաւատարմով գաղութէն ներս Հայագիտական դպրոցի անհրաժեշտութեան, 1996-ին հիմը կը դրուի Համազգայինի Հալէպի Հայագիտական Դասընթացքին, հովանաւորութեամբ եւ հսկողութեամբ Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան: Աշխատանքի կը հրաւիրուին վկայեալ դասախօսներ նստավայրէն թէ Հայաստանէն: Բացի ծրագրուած դասախօսաշարքէն Շրջանային Վարչութեան հրաւերով Համազգայինի Հայագիտական Դասընթացքէն ներս յատուկ դասախօսութիւններով ելոյթ կունենան Լիբանանէն Պօղոս Մնայեանը, հայրենիքէն ձենտերէճեան եղբայրները, Արուսեակ Սահակեանը եւ այլ մտաւորական այցելուներ:

Հայագիտական Դասընթացքի հայրենի եւ տեղացի դասախօսները հանրութեան կը ներկայանան իրենց դասախօսաշարքերով՝ Հալէպի թէ շրջաններու մէջ: Այսպէս՝ Լաթաքիոյ մէջ Հայագիտական Դասընթացքի դասախօս Անի Ֆիշենկեան կը դասախօսէ Թարգմանչաց թեմայով, իսկ հայրենի գրականագէտ Աւիկ Իսահակեան՝ Ա. Իսահակեանի գրական վաստակի մասին: 1997-ի գարնան կը կայանայ հայրենի պատմաբան Կիմ Գահրամանեանի պատմական դասախօսաշարքը Հալէպի, Գամիշլիի եւ Դամասկոսի մէջ:

Դարձեալ Շրջանային Վարչութեան հրաւերով եւ կազմակերպութեամբ 1996-ի վերջաւորութեան հայրենի երգիչ Ռուբէն Հախվերտեան իր մենահամերգներով հանդէս կու գայ Հալէպի եւ Գամիշլիի մէջ: Իսկ 1997-ի Յունուարին կը կայանան հայրենի տաղանդաւոր ջութակահար ձենտերէճեան եղբայրներու զուգանուագի ելոյթները:

1997-ին Շրջանային Վարչութիւնը կը հրապարակէ պատի օրացոյցներ, կը նպաստէ «Բագին» գրական հանդէսի ցրուումի աշխատանքին: Կը կազմակերպէ «Քեսապ» Ա. հատորի ցրուումի աշխատանքները, 300 օրինակ ուղարկելով Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ Գերշնորհ Տ. Մեսրոպ Սրբազան Աշճեանին, ինչպէս նաեւ Համազգայինի Լիբանանի գրախանութիւն եւ Գարեգին Վեհափառ Հայրապետին: Վարչութիւնը ամէն ջանք ի գործ կը դնէ իրեն վերապահուած շրջաններու մշակութային առօրեան աշխուժացնելու, ինչպէս նաեւ միաւորներու եւ միջմասնաճիւղային գործունէութիւնը համադրելու:

¹ ՀՍԵՎԱ, Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան գործունէութեան տեղեկագիր 14-15.10.1995 - 5-6.07.1997, նոյն տեղը, էջ 6-14:

Համազգայինի Սուբիոյ Ե. Երջանային Վարչութեան նստաշրջանի աւարտին կը գումարուի Երջանային Թ.Ներկայացուցչական Ժողովը, 5-6 Յուլիս 1997-ին :

Ներկայացուցչական Ժողովին մասնակցողներուն կողմէ եղած գանազան առաջարկները կը վերաբերէին յատկապէս Հայագիտական Դասընթացքի հեռակայ յաջողութեան եւ շրջանային-մասնաճիւղ-միաւոր համընդհանուր գործունէութեան: Իսկ «Բ. Կանաչեան» երաժշտական դպրոցը, որ մինչեւ 1997 կը գործէր ՀԵՄ Մասնաճիւղի անմիջական հովանաւորութեան տակ, Համազգայինի Սուբիոյ Երջանային Թ. Ներկայացուցչական Ժողովի որոշմամբ կը դառնայ միաւոր:

Նորընտիր Վարչութիւնը գործի կը սկսի 1997-ի Յուլիսին, հետեւեալ կազմով. ատենապետ Ասատուր Պողոսեան, ատենադպրուհի եւ այլն: 1998-ի Սեպտեմբերին Ա. Պողոսեան Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուելով կը դադրի, իսկ Կ. Դերձակեան կը դառնայ կազմին նոր ատենապետը :

Այս շրջանին «Բագին» հանդէսի ցրուումը եւ հայերէն նոր հասած հրատարակութիւններու սպառումը կազմակերպելու համար, Երջանային Վարչութիւնը կը յառաջացնէ Գրատարած յանձնախումբ մը:

6 Սեպտեմբեր 1998-ին կը գումարուի Համազգայինի Սուբիոյ Երջանային Արտակարգ Ժ. Ներկայացուցչական Ժողովը, սերտելու Համազգայինի Գ. Պատգամաւորական Ժողովի (Սեպտեմբեր 1998, Լիբանանի Ատմա շրջանին մէջ) օրակարգերը եւ ներկայացուցիչ առաջարկները: Յիշեալ Ժողովին կողմէ պատգամաւորներ կընտրուին Վահէ Ժամագործեան, Յարութ Հալլաճեան, Կարպիս Դերձակեան, Լեւոն Պապիկեան եւ Տալիտա Նալպանտեան: Խորհրդակցական ձայնով կը հրաւիրուի Մովսէս Փաքճեան, իսկ Սուբիոյ Երջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Ասատուր Պողոսեան³:

Հաւատարիմ իր առաքելութեան, Վարչութիւնը կունենայ բեղուն գործունէութիւն: Առաջին հերթին կը կազմակերպէ Միջ-դիւանային երեք Հանդիպումներ (Հոկտեմբեր 1997, Փետրուար 1998, Նոյեմբեր 1998): Հայրենիքէն կը հրաւիրուին հայրենի մտաւորականներ, վաստակաշատ դասախօսներ եւ արուեստագէտներ, որոնք իրենց գիտելիքներն ու փորձառութիւնը ի սպաս կը դնեն մշակութային գործունէութեան :

Վարչութեան կազմակերպութեամբ եւ հրաւերով, Հայագիտականի դասախօս, հայրենի լեզուաբան՝ Դոկտ. Լալիկ Խաչատրեան հանրութեան կը ներկայացնէ գրական-մատենագիտական դասախօսաշարք մը, Հայէպի եւ Դամասկոսի մէջ: Դասախօսութիւններ կունենան նաեւ հայրենի պատմաբաններ Արմէն Կարապետեանն (Դամասկոս) ու Ռուբէն Սահակեանը (Հայէպ, Դամասկոս եւ Քեսապ), իսկ մանկավարժական թեմայով՝ Երեւանի Պետական Համալսարանի մանկավարժութեան ամպիոնի վարիչ՝ Դոկտ. Նազիկ Յարութիւնեանը⁵:

Երջանային Վարչութեան հրաւերով դասախօսութիւններով ելոյթ կունենան Ամերիկահայ պատմաբան եւ Մ.Շ.Լ.Ա. Համալսարանի պատմութեան ամպիոնի վարիչ՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, Նիւ Եորքի Համալսարանի դասախօս, թատերագիր, բեմադրիչ՝ Դոկտ. Հրանդ Մարգարեան, Լիբանանէն Դոկտ. Փրոֆ. Սեդա Տատոյեան, Հ.Հ. գիտութիւններու փոխնախագահ, Անգլիոյ մէջ Համաշխարհային գրականութեան ցմահ անդամ՝ ակադեմիկոս Գէորգ Բրուտեան, Երեւանի Պետական Համալսարանի Իմաստասիրութեան բաժնի նախագահ, հայկական Իմաստասիրական Ակադեմիայի անդամ՝ ակադեմիկոս Դոկտ. Փրոֆ. Հրաչ Միրզոյեան, Հայաստանէն հայրենի Հանրաժանութ «Ողնի» խմբագիր եւ վաստակաշատ բանաստեղծ Արամայիս Սահակեան, Միացեալ Նահանգներէն Ակադեմիկոս՝ Դոկտ. Փրոֆ. Վահագն Տատրեան եւ ուրիշներ: 1997-1998 թուականներուն հայրենի դասախօսներու առաւել հոսքը եւ առկայութիւնը հայէպահայ դաղութէն եւ յատկապէս Հայագի-

¹ Նոյն տեղը, Ատենագրութիւն Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Սուբիոյ Երջանային Թ. Ժողովի, 5-6 Յուլիս 1997, Ա. նիստ, էջ 1:

² ՀՄԵՎԱ, երկամեայ գործունէութեան տեղեկագիր, 7 Յուլիս 1997-22 Օգոստոս 1999, էջ 1-2:

³ Նոյն տեղը, էջ 3:

⁴ Նոյն տեղը, էջ 3-5:

⁵ Նոյն, տեղը, էջ 13-14:

տական Դասընթացքէն ներս առնչուած էր Հայրենիք-Սփիւռք փոխյարաբերութեան առաւել սերտացման եւ զարգացման:

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու զարգացման շրջադարձային պահը առաւել ակներեւ կը գտնայ 1998 թուականին, երբ Լեւոն Տէր Պետրոսեանի հրաժարումով քաղաքական նոր իշխանութիւնը կը վերանայի եւ հիմնովին կը փոխէ Հայաստանի Հանրապետութեան քաղաքականութիւնը, մասնաւորապէս, այնպիսի հարցերու, ինչպիսիք էին Հայ Դատը եւ Հայաստանի յարաբերութիւնները Սփիւռքի հետ: «Մենք պետք է ստեղծենք եւ կատարագործենք այնպիսի մեքանիզմներ, որ Սփիւռքը զգայ մեր պետական հովանաւորութիւնը եւ կարողանայ լիարժէք մասնակցել Հայկական պետութեան կեանքին ու մեր ազգային իղձերի իրականացման»¹: Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը կանցնի գործնական քայլերու: Այսպէս՝ 1999-ին կը կազմակերպէ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» համահայկական փառատօնը, որուն համար Հայրենիք կը ժամանեն սփիւռքահայ արուեստի բազմազան եւ բազմաթիւ խումբեր: Զուգահեռաբար, Երեւանի մէջ կը կայանան Համահայկական Ա. խաղերը՝ «Կարելորը մասնակցութիւնն է» նշանաբանով: Նոյն տարուայ Սեպտեմբեր 22-ին սկիզբ կառնէ ազգային կեանքին մէջ անկիւնադարձային արժէք ներկայացնող Հայաստան-Սփիւռք առաջին համահայկական խորհրդածողովը: Սոյն խորհրդածողովին Համազգայինը պատուաբեր մասնակցութիւն կը բերէ իր ներկայացուցիչով, յանձին Կարօ Ալեքսանեանի: Իսկ Սեպտեմբեր 24-ի խրախճանքին Համազգայինի «Սարգարապատ» պարախումբը իր յաղթական ելոյթը կունենայ Հայաստանի պետական աւագանիին եւ բազմաթիւ հիւրերու ներկայութեան: 1997-1998 թուականներու միջոցառումներու ցանկին կարելի է աւելցնել հայրենի երգիչ Ռուբէն Հախվերտեանը եւ երգչուհի Լիլիթ Պրպոյեանը, որոնք ելոյթներ կունենան Լաթաքիոյ եւ Հայէպի մէջ: Կը կազմակերպուի նաեւ մեծանուն գրագէտ Յակոբ Օշականի մահուան յիսնամեակին նուիրուած յուշ-երեկոյ, 22 Մարտ 1997-ին: Սոյն ձեռնարկը պատշաճօրէն նշելու նախանձախնդրութեամբ Շրջանային Վարչութիւնը կը հրահրէ Վահէ Օշականը, որուն առողջական պայմանները սակայն չեն թոյլատրեր զինք ներկայ գտնուելու:

Բէկի Էքմանեան

(Սուրբա, Հալէպի Համազգայինի
Հայագիտական հիմնարկի շրջանաւարտ)

¹ 1998-ի Մարտին նախագահ ընտրուած Ռոպերթ Քոչարեանի նախընտրական ծրագրի Սփիւռքին վերաբերող հատուածը:

ՄԵԾԱՐԺԵՔ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

«Հայաստան» Հայաթերթ, 1915, Ա. տարի, թիվ 1-57, Անթիլիաս, 2005:

2005թ. Հիրավի Համագրային եւ Համամարդկային ընդգրկմամբ ոգեկոչվեց Հայոց Յեղասպանութեան 90-րդ տարեդարձը, հրատարակվեցին Հարյուրավոր գրքեր բազմաթիվ լեզուներով: Այդ ամենի Համապատկերում աղբյուրագիտական մեծ արժեքով առանձնանում է Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութեան կողմից Սոփիայում, դեռ 1915թ. տպագրված «Հայաստան» թերթի վերահրատարակումը, մանավանդ, եթե նկատի ունենանք այն կարեւոր փաստը, որ հիշյալ թերթը եզակի օրինակով է մնացել, եւ դրա վերահրատարակումը իրական է դարձնում այն՝ գրադարաններում պահպանութիւնն ու մասնագետներին ուսումնասիրութեան հնարավորութիւնն ընձեռնելը:

«Հայկական Յեղասպանութեան եզակի աղբիւր մը» վերնագրված առաջաբանում Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. կաթողիկոսը արժանիորեն կարեւորելով «Հայաստան» թերթի 1915թ. համարների վերահրատարակութիւնը, մասնավորապես շեշտում է. «Արդարեւ, Հայկական Յեղասպանութեան հարուստ աղբիւր մըն է այս թերթը. Յեղասպանութեան առնչուած դէպքերու, եղելութիւններու ու անձերու կենդանի հանդիսարան մը: Յեղասպանութեան գծով տրուած փաստացի տեղեկութիւններու առնթեր անոր խմբագրականները համապարփակ ու ճշգրիտ պատկերը կը ներկայացնեն 20րդ դարու առաջին Յեղասպանութեան իր բոլոր երեսներով, հանգամանքներով ու հետեւանքներով:

...«Հայաստան»-ը եզակի դեր կատարած է Հայ ժողովրդին դէմ գործադրուող Յեղասպանութիւնը այդ օրերուն թուրքիայէն դուրս մեր ժողովրդին սեփականութիւնը դարձնելու ու զինք արթուն պահելու եւ մանաւանդ Հայկական Յեղասպանութեան մասին օրը օրին կարեւոր տեղեկութիւններ փոխանցելու իմաստով: Այս ծիրէն ներս, յատուկ կարեւորութեան արժանի են թերթին մէջ մնայուն կերպով երեւցող հետեւեալ գլուխները. - Վերջին Լուրեր, Կովկաս, Հայկական Հարց, Երկիր, Մեծ Ճգնաժամը եւ Հայկական Հարածանքը: Թերթին մէջ երբեմն ընթերցողը կը հանդիպի այնպիսի դիպուկ երեւոյթներու, յուզիչ դէպքերու, պատմական նշանակութիւն ունեցող եղելութիւններու, որոնք նոր տարածքներ կը բանան մեր առջեւ մեծապէս նպաստելով Հայկական Յեղասպանութեան ամբողջական վերլուծման ու արժեւորման: Անհրաժեշտ է, որ Հայկական Յեղասպանութեամբ զբաղող բանասէրներն ու պատմաբանները մօտէն ուսումնասիրեն այս թերթը»:

Ուշագրավ պետք է համարել այն կարեւոր հանգամանքը, որ թերթի պաշտոնական հիմնագիր (թեկուզ եւ անվանական) է եղել անվանի բուլղար մտավորական եւ Հայաստան գործունեութեամբ Հայտնի Դիմիտրի Լյապով-Գուրինը:

Շաբաթական երկու պարբերականութեամբ հրատարակվող «Հայաստան» թերթին առաջին խմբագրականում հիմնավորեց իր գոյութեան անհրաժեշտութիւնը. «Բալկաններու մէջ Հայ թերթի մը պէտքը երբէք այնպէս ընդհանուր եւ անյետաձգելի չէ եղեր՝ ինչպէս այս պատմական օրերուն, երբ համերոպական շարժման մէջ կամայ թէ ակամայ կը քշուի եւ Հայաստանը, եւ Հայկական Հարցը... Հայաստանը՝ կանգնած է այժմ երէկի եւ վաղուան պատմութեան ամենավտանգաւոր ճա-

նապարհին վրայ, ուրիշ կարող է երթալ կամ կատարեալ ջնջում եւ կամ ազատագրութեան արշալոյս»։ Ըստ այդմ, թերթը ներկայացնում է իր հետեւյալ նպատակներն ու խնդիրները. «Օրը օրին արձանագրելով փաստերը, դէպքերը, «Հայաստան»ը պիտի ջանայ իր ոյժերու չափով պարզաբանել նուիրական Հարցի (նկատի ունի Հայկական Հարցը - Ա.Հ.) լուծման նախօրեակին անոր գանազան փուլերը, չմոռանալով միաժամանակ արձագանգ լինել այն ընդհանուր միջազգային դէպքերու, որոնք հեռաւոր կամ մերձաւոր կերպով կարող են կապ ունենալ մեր «Հարց»-ին հետ»:

Թերթի խմբագիր Լ. Նազարյանցը վերլուծելով Հայկական Հարցի անցած ուղին եւ ամփոփելով այն, գտնում էր, որ ինքնապաշտպանութիւնն է «օրուան կարգախօսը, որպէսզի Հայուն քաջած տանջանքները որ այլեւս անհնարին ըլլան, որ Հայ ազգը կարենայ ինքը ազատ կերպով տնօրինել իր ճակատագիրը, ըստ իր կարողութիւններու շինել իր կեանքը, ատոր միակը միջոցը Հայկական ինքնավարութիւնն է»:

Բոլոր խմբագրականներում, խստորեն քննադատելով Օսմանյան կայսրութեան Հայաջինջ քաղաքականութիւնը, «Հայաստան»ը, մասնավորապէս, «Գերագոյն վայրկեան» էր Հայոց համար համարում հետեւյալը. «Մեր ազգին սպառնացող այս վիթխարի վտանգին հանդէպ այսօր մէկ բան միայն կրնայ զբաղեցնել մեզ: Ուշ է արդէն մաշելու օտար սեմերը, որովհետեւ միջամտութեան ոչ մէկ ճայն այլեւս լսելի կըլլայ Թուրքիոյ մէջ: Կը մնայ որ մենք ինքնիս ստանձնենք մեր խողխողող Հայրենիքին օգնելու գործը: Հայաստանը սովամահութեան մատնուած է, ու անպաշտպան ժողովրդին գլխուն բարբարոսին սուրը կը շողայ: Պետք է ուրեմն նիւթական օգնութիւն հասցնել եւ կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը» (N 12):

Համառոտակի հիշատակներ եւ անդրադառնանք թերթում տպագրված առավել արժեքավոր նյութերին ու հոդվածներին:

Թերթի ապրիլի 22-ի եւ 25-ի համարներում հրատարակվեցին Հաղորդումներ Կ.Պոլսում Հայ մտավորականների եւ գործիչների զանգվածային ձերբակալութիւնների մասին (N 11-12):

Հայոց Ցեղասպանութեան վերաբերյալ Հաղորդագրութիւն-լրատվութիւն թեմայից կարելուր են հետեւյալ շարքերը. «Սեւ խապրիկները Զուլումի աշխարհէն» (Հեղինակներ Բարձրբերդցի, Ասլան եւ անստորագիր), «Հայկական Հարց»: Թեմայի մասին բազմիցս հրատարակվել են փաստաշար նյութեր, օրինակ, Ս.Արարատյանի «Բաղեջի կոտորածը» (N 37), «Ականատեսներու պատմածը» Հաղորդագրութիւններ Արեւմտահայաստանի տարբեր վայրերից (N 38-39, 41), «Երզնկայի սարսափները» (N 29-30, 32-33), «Կիլիկեան աղէտը» (N 31-33): Այս համատեքստում առանձնանում է Ռազմիկ-Վարազի «Մեծ ճգնաժամը. նամակներ Պոլսից» շարքը, ուր մանրամասնորեն ներկայացվում է իրավիճակը եւ տրվում ԸՊ գնահատականներ (N 17, 24, 26, 31, 34, 35, 37-44, 46-47, 55):

Կ.Պոլսի մտավորական եւ ազգային գործիչների, «Ազատամարտ» թերթի վերաբերյալ արժեքավոր են Վիգենի «Գրիգոր Զոհրապ» եւ «Գրագէտի մը յիշատակարանները» հոդվածները (N 45, 48-53, 56-57):

Գուրգենը «Դասալքումը Թուրքիոյ մէջ» հոդվածաշարքում (N 2-5), մանրամասն անդրադառնալով եւ վերլուծելով գինձառայութիւնից Հայերի խուսափելու հարցը, քննադատում է թուրքական տեսակետները եւ հիմնավորում Հայկական դիրքորոշումը:

Ուշագրավ է անստորագիր «Հայ-թուրք-քրտական ընդհարումներ» հոդվածը (N 7-8):

Թերթի ուշադրութեան կենտրոնում էր Վանի Հերոսական ինքնապաշտպանութիւնը եւ, այդ առթիւ, բազմաթիւ հրատարակումներից նշենք առավել կարեւորները. Վանի կուսակալ Ճէվտէթի նամակները (N 23-25, 29, 33), Վանեցու «Ինչպէս ծագեցաւ ապստամբութիւնը» հոդվածը (N 25), Ս.Արարատյանի հոդվածները (N 27-28, 31-32), Ռ.Լ.-ի (Լ.Նազարյանց) «Իշխան» մահախոսականը (N 14), Հայկական վիրայիթների գլխավոր ղեկավար, Կարինի կուսակալ Թահսին բեյին Վանի երեսփոխան Վուսթյանի ուղղած հիշատակագիրը, որը վերաբերում է թուրքական բանակից Հայերի դասալքմանը (N 1):

Դաշնակցական Խեչոյի Հիշատակի արժեւորմանն են նվիրված մահախոսականները (N 39-40):

Վերջում Հիշատակենք նաեւ Ա.Օզանյանի «Շապին Գարահիսար» (N 48-50) եւ Բարունակի «Կարին եւ Սեւծովեզերեայ Հայ վայրերը» (N 53) հոգվածները:

Թերթի N 6-ը նվիրված է Ք.Միքայելյանի Հիշատակին՝ հավուր պատշաճի խմբագրականով, նշենք Գուրգենի «Ք.Միքայելյան» եւ Հովհ. Սասանյանի «Վիտոշի գերեզմանին» հոգվածները:

Հասարակական-կուսակցական թեմաներից նշենք Ար-Մանի «Հին վերք» հոգվածը (N 11-13) եւ դրա առթիվ Ս.Վրացյանի պատասխանը (N 14), որոնցում քննադատվում էր Համբ. Առաքելյանի գործունեութունը եւ ներկայացվում Կովկասի Հայ քաղաքական ուժերի վիճակը:

Պոռոս Նուբարի գործունեութեան արտացոլմանն ու քննադատութեանն են նվիրված մի քանի փաստաթղթերի հրատարակումներ եւ հոգվածներ (N 8-9, 14):

Բուլղարիայի Հայ Համայնքի գրութեան մասին բավականին հետաքրքրական են Ա.Օզանյանի «Բուլղարահայերու կրթական-կուլտուրական գործը» (N 29-31) եւ «Նոր Բուլղարիան եւ Հայ գաղութները» (N 37-41, 43, 45) հոգվածները: Հարցին առնչվում է նաեւ «Հայկական Հայածանքը եւ բուլղար մամուլը» հրատարակումը, ուր տրվում է մամուլի տեսութեան (N 27-28):

Հայ թատրոնի պատմութեան ուսումնասիրողների Համար Հետաքրքիր կլինեն բուլղարահայ «Քնար» եւ «Վահան Մամիկոնյան» թատերախմբերի գործունեութեան մասին հրատարակումները (N 6, 11):

Պեյո Յավորովի Հանրահայտ «Հայերը» բանաստեղծութեան տպագրումը անչափ կարեւոր էր 1915թ., թեպետ թարգմանչի անունը չի նշվում (N 10):

Այնուհետ, «Հայաստան»-ը ուշադիր էր նաեւ մյուս ժողովուրդների ազատագրական պայքարների Հանդեպ, ինչի վկայութունն էր Մ.Վարանդյանի «Պրէսանսէ եւ Բուլղարական դատը» հոգվածի բուլղարերենից թարգմանական հրատարակումը (N 12), Վլադիմիր Վիկտորով-Տոպորովի «Եւրոպան եւ Բալկանները» հոգվածարարքը (N 1-2): Ուշագրավ պետք է համարել Օսլոյի Համալսարանում Ֆր.Նանսենի «Փոքր ազգերի իրավունքները» ճառի հրատարակումը (N 15): Օտար Հեղինակներից Հիշատակենք Վ.Միխայլովսկու «Պատերազմը Հայաստանի մէջ» (N 32, 36) եւ Յ.Միքիսկու «Արամը» (N 24) հոգվածները:

Միանգամայն նորույթ է Սեբաստիայում, Ադանայում եւ Կարինում Հայանպաստ մեծ գործ կատարած շվեյցարուհի Մարի Զինկերի մասին Ազատ Վշտունու հոգվածը (N 13):

Համոզված ենք, որ թումանյանագետների Համար անակնկալ է Հովհ. Թումանյանի «Վերջին օրը» բանաստեղծութեան տպագրումը (N 17):

Ինչ խոսք, 1915թ. մարտի 10-ից մինչեւ սեպտեմբերի 26-ը, ընդամենը 57 Համար, հրատարակված «Հայաստան» թերթը, պատվով կատարելով ստանձնած Հայրենանվեր առաքելութունը, ծառայեց իր նպատակին եւ դրա վերահրատարակումը, անտարակույս, մեծապես կօժանդակի Հայ մամուլի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան հետազոտողներին:

Ցանկանում ենք ողջունել եւ մեր երախտիքի խոսքն ուղղել Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. կաթողիկոսին, ով Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամի միջոցով, հրատարակեց «Հայաստան» թերթի 1915թ.-ի, արդեն վաղուց հազվագյուտ դարձած, համարները, առավել եւս, նմանաբնույթ սկզբնաղբյուրի հրատարակումն առաջին ամգամ չէ, որ տեղի է ունենում. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութունը Հայտնի է Հայոց Ցեղասպանութեան վերաբերյալ բազմաթիվ աշխատութունների եւ սկզբնաղբյուրների հրատարակմամբ:

Միաժամանակ ողջունում ենք Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամին սույն հրատարակմանը հովանավորելու համար. երախտիքով ենք հիշում վերջինիս կողմից «Ազդարարի»-ի տարիներ առաջ կատարած վերահրատարակութունը:

Ավագ Հարուժեւորյան
ՀԱԱ տնօրենի տեղալի
պատմական գիտութեան
թեկնածու

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ «ԱԼԵՄԴԱՐ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1919թ.)

Հայոց ցեղասպանության փաստագրման առումով առանձնահատուկ կարեւորվում են օսմանյան աղբյուրները, որոնց շարքում նշանակալի տեղ է գրավում տվյալ ժամանակաշրջանի թուրքական մամուլը:

Առաջին աշխարհամարտում թուրքիայի կրած պարտությունից հետո, պատերազմական տարիներին հարկադրյալ լուծթյուն պահպանած օսմանյան մամուլը սկսեց ակտիվորեն քննարկել Հայոց տեղահանությունը, կոտորածները, դրանց կապակցությամբ հարուցված դատական գործերը, դատավարությունների ընթացքը եւ այլ հարակից խնդիրներ, որոնք նաեւ սուր վիճաբանությունների առիթ դարձան թուրքական տարբեր օրաթերթերի միջև¹:

Հայոց ցեղասպանության խնդրի հանդեպ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում հատկապես «Ալեմդար» («Դոշակակիր») օրաթերթը: «Ալեմդար» հրատարակվել է Ստամբուլում 1912-1921 թվականներին: Օրաթերթի պատասխանատու խմբագիրն էր Բեֆի Զեւադ Ուլունայը, իսկ տնօրենը՝ Ահմեդ (Փեհլիվան) Քադրին: Հրատարակվել է նաեւ «Թաքվիմլի դագեթե» («Օրացույց-օրաթերթ») եւ «Թեշրիհ» («Մեկնաբանում») անվանումներով: Օրաթերթի 1918-1921 թվականներին տպագրված եզակի համարները պահպանվում են թուրքիայի Ազգային մեծ ժողովի գրադարանում³:

1919 թվականին սույն օրաթերթում տպագրված Հայոց կոտորածներին վերաբերող հոդվածների մեջ առանձնահատուկ հիշատակության է արժանի օրաթերթի գլխավոր խմբագիր Բեֆի Զեւադ Ուլունայի հոդվածաշարը⁴: «Ալեմդար» օրաթերթի գլխավոր խմբագիրը Հայոց տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ հարուցված դատական գործերին անդրադարձող իր առաջնորդողներում հատկապես շեշտում էր երիտթուրքերի դատաքննություններն արագ իրականացնելու եւ հանցագործներին անմիջապես պատժելու անհրաժեշտությունը:

¹ Տես Taner Akçam, İnsan hakları ve Ermeni sorunu, Imge kitabevi yayımları, 2002, s.397.

² Գրիկերը (Գրիգոր Կերկերյան) «Ալեմդար» օրաթերթը բնորոշում է որպես կիսապաշտոն օրաթերթ, Բարձր Դուան եւ սուլթանական պալատի բանբեր: Տես Գրիկեր, Եոզգատի Հայասպանության վավերագրական պատմությունը, Նիու Եորք, 1980, էջ 12:

³ Meydan Larousse Büyük Luğat ve ansiklopedi, birinci cilt, İstanbul, 1985 s.296.

⁴ Բեֆի Զեւադը ծնվել է 1890 թվականին Դամասկոսում: Հայրը՝ Ալի Մուհիբդին փաշան, եղել էր Անկարայի նահանգապետը: Բեֆի Զեւադը 1909 թվականին Գալաթասարայի լիցեյն ավարտելուն պես աշխատանքի է անցնում «Թանին» («Արձագանք») եւ «Իքթամ» («Առաջընթաց») օրաթերթերում: 1912 թվականին հիմնում է «Ալեմդար» օրաթերթը: Իր քաղաքական հայացքների պատճառով իթթիհատականների կողմից աքսորվում է Սինոպ, Չորում եւ Կոնիա: Ստամբուլ վերադառնալուց անմիջապես հետո վերսկսում է «Ալեմդարի» հրատարակումը: Քեմալական շարժման դեմ հոդվածներ գրելու պատճառով 1922 թվականին, այս անգամ քեմալականների կողմից, արտաքսվում է երկրից: 1938 թվականին համաներում ստանալով՝ վերադառնում է թուրքիա: 1953-1968 թվականներին թղթակցել է «Յենի սաբահ» («Նոր առավոտ») եւ «Միլլիյեթ» («Ազգ») օրաթերթերին: Բեֆի Զեւադը նաեւ մի քանի գեղարվեստական ստեղծագործությունների, այդ թվում՝ վեպերի հեղինակ է («Ավերակների մեջ», «Օրացույցով կանխատեսված փոթորիկներ», «Լեռների արքան», «Մեկ ուրիշ աշխարհ» եւ այլն): Տես նշվ. աշխ., on ikinci cilt, İstanbul, 1985, s. 418.

1919 թվականի փետրվարի 14-ին տպագրված «Տեղահանութեան եւ կոտորածների կապակցութեամբ» վերնագրով հոդվածում նա իր մտահոգութիւնն էր արտահայտում այն փաստի կապակցութեամբ, որ Թուրքիան հայոց կոտորածների դատաքննութիւններն իրականացնում էր հարկադրված, եւ որ դատավարութիւնների շարժառիթ էր ծառայել ոչ թէ արդարութեան վերականգնումը, այլ ընդամենը Եվրոպայի առջեւ արդարադատ երեւալու ցանկութիւնը. «Երկիրը կամա թե ակամա մի քայլ կատարեց դեպի արդարադատութիւն: Այն, ցավոք, կոչում ենք հարկադիր քայլ, քանզի, չգիտես թե ինչու, մեր երկրում բոլոր իրավական, տնտեսական եւ հասարակական միջոցառումների համար որեւէ ազդեցիկ շարժիչ ուժի կարիք է զգացվում, այլ կերպ չենք կարողանում»¹: Նույն հոդվածում Բեֆի Աեւազը ընդգծում էր հայոց կոտորածների զանգվածային բնույթը. «Կառավարութիւնը, տեղահանութեան եւ կոտորածների խնդրո կապակցութեամբ, դատարանին հանձնեց երեքից-չորս հոգու: Մի՞թէ խնդիրն այդքանով ավարտվում է,- տարակուսում է Աեւազը, - Ինչպե՞ս կարելի է տեղահանութիւնն ու կոտորածները սահմանափակել նման շրջանակում»²:

«Ալեմդարի» խմբագիրը իր հոդվածներում արագ գործել ու կոչ էր անում հայոց կոտորածները քննող ռազմական արտակարգ ատյանին: Վերոհիշյալ հոդվածում Բեֆի Աեւազը գրում էր. «Ներկայումս ընթացող դատավարութիւնը³ շատ ծանրաքայլ է առաջ դնում... (այս եւ մյուս տեղերում կրճատել ենք Հեղինակի խոսքի՝ թեմային առնչվող, սակայն, ոչ էական մասերը, որոնք, սակայն, չեն ազդեցում Հեղինակի խոսքը -Մ.Ա.) Այդ մարդիկ (իթիհատականները-Մ.Ա.) արտակարգ արագութեամբ գործեցին: Ինչու՞ նույնպիսի արագութիւն չի ցուցաբերվում արդարադատութեան իրականացման դեպքում»:

...Տեղահանութեան եւ կոտորածների խնդրո շրջանակը շատ լայն է. այդ ծավալը լցնենք ոչ թէ ժամանակով, այլ արդարադատութեամբ, արագութեամբ եւ գործողութիւններով»⁴:

«Ալեմդարի» խմբագիրը նույն հարցերին էր անդրադառնում նաեւ 1919 թվականի փետրվարի 20-ին հրատարակված «Ինչպիսի՞ն են եղել ուղեկառքի ձիերը» հոդվածում. «Մահմուդ Հայրեթ փաշայի նախագահութեամբ ռազմական արտակարգ ատյանում ընթացող տեղահանութեան եւ կոտորածների դատաքննութիւնը հետզհետեւ հետաքրքիր փուլ է մտնում: Դատավարութեանը համընթաց՝ կամաց-կամաց բացահայտվում են խնդրի տաղանապահարույց կողմերը: Միայն թե այդ դանդաղ ընթացքը չի համապատասխանում անհապաղ որոշում կայացնելու անհրաժեշտութեանը: Երեկվա դատավարութիւնը թվով յոթերորդն էր: Եթե դատաքննութիւնը շարունակվի նույն ընթացքով, ապա չենք կարծում, թե գործը վերջնական արդյունքի հանգի մեզ ցանկալի ժամանակահատվածում»⁵: Միեւնույն հոդվածում Բեֆի Աեւազը շեշտում էր այն հանգամանքը, որ Յողատի դատավարութեան մեղադրյալներից Յողատի մութասարիֆի տեղակալ, Բողազլույանի կայմակամ Մեհմեդ Քեմալը, ոճրագործ լինելով հանդերձ, ընդամենը մի գործիք էր եղել Հայոց ցեղասպանութեան Հեղինակների՝ գլխավոր պատասխանատուների ձեռքում, իսկ վերջիններս ոչ միայն դեռ չեն պատժվել, այլեւ նույնիսկ չեն էլ կալանավորվել. «Ո՞վ է Քեմալ բեյը. եթե ճշմարտութիւնը որոնելու լինենք, այն բաղկացած կլինի արյունոտ մի կացնից: Արդարադատութիւնը պետք է կարի այդ կացինը գործել տված ձեռքը, իսկ այդ ձեռքերը, այդ ուղեղները դեռ ազատ շրջում են մեր մեջ»⁶: Նույն այդ հոդվածում Աեւազը գրում էր. «Մեր առաջին իսկ հրատարակումներում ընդգծում էինք, որ կառավարութեանը (երիտթուրքերի -Մ.Ա.) պատժելու համար կարիք չկա հետաքննութեան: Ոճրագործութիւնը հայտնի է, պատիժն էլ՝ պատրաստ: Խնդիրը պատժի արագ կիրառման մեջ է»:

¹ Refi Cevad, Tehcir ve taktik münasebetiyle, Alemdar, 14 subat, 1919.

² Refi Cevad, Tehcir ve taktik münasebetiyle, Alemdar, 14 subat, 1919.

³ Խոսքը վերաբերում է Յողատի դատավարութեանը:

⁴ Refi Cevad, նշվ. աշխ.:

⁵ Refi Cevad, Arabanın beygirleri nasıl imiş?, Alemdar, 20 şubat, 1919.

⁶ Նույն տեղում:

...Մահմուդ Եեֆքեթ փաշայի սպանություն¹ Հեղինակների դատաքննությունը սահմանափակվեց մեկ նիստով: Մենք դեռ զբաղված ենք Քեմալի Հանցավորությունը Հաստատող վկաների փնտրությամբ: Հասկացանք, ամբողջ աշխարհն էլ համոզվեց, որ այդ մարդը կատարել է տվյալ ոճիրները: Ուրի՞չ ինչ ենք որոնում: Ինչու՞ խնդրին ժամ առաջ վերջ չենք տալիս: Տեղահանության եւ կոտորածների դեպքերը իթթիհատականների Հեղինակած ամենազաղրելի, մինչեւ այժմ չլսված իրադարձություններն են: Պատգամավորների պալատում մեկը բղավում էր, թե այդ ազգին (Հայերին -Մ.Ա.) կործանել է տալու մինչեւ վերջին շունչը: Նա, մեղքեր գործելուց դեռ չկշտացած, ազատ չըլում է: Եթե այս դատվողները փաստացի մարդասպաններ են, ապա իրական մարդասպաններն այստեղ են. թանձրուկներով լի վայրի ուղեղները գտնվում են մեր շրջապատում: Ինչու՞ են նրանց նորանոր աղետներ նախապատրաստելու Հնարավորություն տալիս,- Հարցնում է մտավորականը եւ ազա շարունակում,- Տեղահանության եւ կոտորածների Հարցը հին չէ, խնդրին անչափ պարզ է. «Միություն եւ առաջադիմություն» ավագակախումբը հրամայեց՝ Հպատակներին ոչնչացրեց: Ոմանց կախեց, ոմանց կոտորեց, ոմանց էլ այրեց: Այս հրամանը Հղացած ուղեղը, տված բերանը, գործադրած ձեռքը՝ բոլորն էլ գտնվում են արդարադատության ձեռքում: Դրա համար մի շարք անիմաստ հարցերի, մանրակրկիտ հետաքննությունների անհրաժեշտություն բոլորովին էլ չկա»²: Բեֆի Ջեւադը, նույն Հոգվածում անդրադառնալով դատարանի՝ խնդիրը ձգձգելու ցանկությունը, գրում էր Հետեւյալը. «Նախանցյալ օրը տեղի ունեցած դատական նիստի ընթացքում ականատես եղանք (դատարանի նախագահի -Մ.Ա.) տեղակալներից մեկի տված տարօրինակ հարցին: Հետաքրքրվում էր, թե ի՞նչ գուշակ, ի՞նչ ձեռք ունենին Քեմալի նստած ուղեկառքի ձիերը: Այդ հարցին պատասխան կտանք մենք.

-Ուղեկառքի ձիերը վիշապի տեսք ունենին, իսկ դրանց գուշակը՝ արյան:

Եթե դատարանը դա չարձանագրի, կարձանագրի պատմությունը»:

«Ալեմդարի» խմբագիրը նույն խնդիրներին էր անդրադառնում նաեւ 1919 թվականի մարտի 28-ի համարում տպագրված «Տեղահանության եւ կոտորածների դատավարությունները» հոդվածում: Բեֆի Ջեւադը, տեղահանության եւ կոտորածների դատաքննությունները շրջան առ շրջան իրականացնելն անարդյունավետ գտնելով, առաջարկում էր խնդրի լուծման իր տարբերակը. «Տեսնում ենք, որ Յոզղատի տեղահանության եւ կոտորածների դատավարությունն ավարտվելու վրա է: Ակսվել է նաեւ Տրապիզոնի տեղահանության եւ կոտորածների դատական գործի քննությունը: Յոզղատի դատը բավականին երկար տեւեց: Կարծում էինք, թե տեղահանության դատավարությունը չափազանց հուզումնալից էր անցնելու, մինչդեռ այդպես չեղավ: Դատավարությունը Սանդըքբուրնում հարբելուց Հետո միմյանց ծեծած երկու Հարբեցողի դատաքննության նման սովորական ընթացք ունեցավ: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ Համաշխարհային պատերազմը մարդկանց վարժեցրել է արյան: Հիրավի, վերջին տարիներին մահվանն այնքան ենք ընտելացել, որ նման որեւէ տեսարանի ականատես լինելիս, էլ առաջվա պես չենք սարսափում... Եթե դատավարություններն այս կերպ շարունակվելու լինեն, ապա անկախ նրանից, թե դատարանի նախագահը որքանով է արագ գործում կամ որքանով է խորանում, թե ինչպիսին են եղել ուղեկառքի ձիերը, շատ Հավանական է, որ տարիներով չկարողանա հաղթահարել իր առջեւ դրված խնդիրը:

Դատավարության՝ Յոզղատի վերաբերող Հատվածն ավարտվելու է, ապա սկսվելու է Տրապիզոնի խնդիրը, այնուհետեւ՝ Դիարբեքի բերք եւ այլն, եւ այլն:

Քանի որ տեղահանություն եւ կոտորածներ եղել են Օսմանյան կայսրության բազմաթիվ վիճակներում, դե՛ պատկերացրեք՝ երբ կավարտվեն դրանք ամբողջությամբ³:

¹ Մահմուդ Եեֆքեթ փաշա-սադրազամ (վարչագետ) երիտթուրքերի ժամանակաշրջանում, սպանվել է 1913 թվականին:

² Refi Cevad, Arabanın beygirleri nasıl imiş?, Alemdar, 20 şubat, 1919.

³ 1919-1920 թվականներին թուրքական ռազմական արտակարգ ատյանները քննել են Հայոց տեղահանությունը եւ կոտորածներին վերաբերող 29 տարբեր դատական գործեր: Տես Taner Akçam, Ermeni tabusu aralanırken diyalogtan başka çözüm var mı?, İstanbul, 2002, s.87-92

Այդ դեպքում անհրաժեշտ է որեւէ բանական, օրինական եւ տրամաբանական ելք գտնել: Այդ ելքը կա: Ավելի ճիշտ, այն ընկալում ենք ոչ թե որպես ելք, այլ միակ օրինական ճանապարհը, որին մինչեւ այժմ էլ պետք է հետեւած լինեինք: Տեղահանութիւններն ու կոտորածները կրում են համընդհանուր բնույթ: Ճիշտ չենք համարում այն որպես քաղհայց ընկալելը:

Եթե ռազմական ատյանը, գործը երկարացնելով, հույս ունի մի ամբողջ շարք գաղտնիքներ բացահայտել, ապա այդ տեսակետը եւս քննադատութեան չի դիմանում, քանզի տեղահանութիւնն ու կոտորածներն այն հանցագործութիւններն են, որոնք եւ հայտնի են, եւ հաստատված, եւ ապացուցված: Այդ իսկ պատճառով առանձին-առանձին հետաքննութիւններն անհրաժեշտ չենք գտնում: Պետք է կազմակերպել մի դատավարութիւն, որը կլինի Հասարակական Հայցի Հիման վրա: Խնդիրը պետք է լուծվի ընդհանուր դատավճռով¹: Բեֆի Ձեւազը շեշտում էր նաեւ կոտորածների խնդրում բոլոր իթթիհատակաների՝ մեղքի բաժին ունենալու հանգամանքը, այդ թիւում եւ նրանց, ովքեր, տեղյակ լինելով հանդերձ, չեն միջամտել: «Ավագակախմից (նկատի ունի «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեանը -Մ.Ա.) շատ քիչ թիւով մարդ ենք ճանաչում, որ տեղահանութեան եւ կոտորածների խնդրում չունենա իր մեղքի բաժինը: Այդ ոճիրները գործողները մեղավոր են, դրանց գործիք եղողներն էլ են մեղավոր, լուութիւն պահպանողները՝ նույնպէս: Տեղահանութիւնը եւ կոտորածները «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան երբեւէ խաղացած ամենահասարակ ողբերգութիւնն էր: Անհնար է երկրի անուսից չտիրել, մարդկութեան անուսից այն չատել: Լուութիւն, սպանիչ կերպով լուութիւն պահպանելը միթե նույնպիսի ոճիր չէ, որպիսին կոտորելն է: Նույնիսկ տեղին չէ հարցնել, թե դրանց դեմ ինչ կարելի էր ձեռնարկել, քանզի որվելի հեշտ կլինեիր հրաժարվել, քան սեփական համոզմունքներին հակառակ գործել: Եթե այդ վճռական, այդ հաստատական քայլը կատարած լինեինք, երկիրն այս օրին չէր հասնի²: Հոգիվածի վերջում Բեֆի Ձեւազը կրկին արագ գործելաժամ էր պահանջում դատարանից եւ մեկ անգամ եւս ընդգծում հանցագործութիւնների՝ ակնհայտ լինելու հանգամանքը. «Եթե ռազմական արտակարգ ատյանը քննի տեղահանութեան եւ կոտորածների խնդրին առնչվող բոլոր մանրամասները, ապա կրկնում ենք՝ տարիներ կապահովեն այս գործի հանգուցալուծման համար:

...Չգիտեմ՝ որքանով է անհրաժեշտ ժամանակ ծախսել արդեն իսկ ապացուցված ոճրագործութիւնների մանրամասն հետաքննութեան վրա»³:

«Ալեմդարի» պատասխանատու խմբագիրը 1919 թվականի ապրիլի 9-ի համարում տպագրված «Ի պատասխան մի պաշտպանութեան» վերնագրով հոդվածում ընդգծում էր Հայոց կոտորածների կանխամտածված բնույթը, մտահոգացողի եւ կատարողի միասնական լինելը. «Ենթագրեւնք՝ որեւէ մեկը հանցագործութիւն է կատարել: Բնականաբար, չենք կարող այդ ոճրագործութիւնը նյութած ուղեղն ու ի կատար ածած ձեռքը միմյանցից բաժանել: Դա ոչ օրենքը թույլ կտա, ոչ էլ բանականութիւնը: Եթե Բեհհեղդին Շաքիրը, ողբերգութիւններ հղացած ուղեղն էր⁴, ապա Քեմալ բեյն ու իր հանցակիցները այդ ուղեղի չարագործութիւնները նախապատրաստող ձեռքերն էին: Օրենքը ձեռքն էլ է կտրում, ուղեղն էլ՝ հանգցնում: Հիմա անդրադառնանք դատարանին: Տվյալ խնդրում դատարանը չկատարեց արտակարգ ատյանի՝ իրեն վերապահված դերը: Տասնինը նիստում դատաքննվեցին երեք մեղադրյալ: Դատավճիռն էլ դեռ չի կայացվել: Այդ դեպքում ի՞նչ իմաստ ունեն ռազմական արտակարգ ատյաններ կազմել: Եթե արագ չէին գործելու, ապա այդ առաջադրանքը նույն հաջողութեամբ սովորական դատարաններն էլ կարող էին կատարել»⁵:

¹ Refi Cevad, Tehcir ve taktik muhakemeleri, Alemdar, 28 mart, 1919.

² Refi Cevad, Tehcir ve taktik muhakemeleri, Alemdar, 28 mart, 1919.

³ Նույն տեղում:

⁴ Փաստորեն, «Ալեմդարի» խմբագիրը տեղյակ էր, որ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան գաղափարախոս Բեհհեղդին Շաքիրն էր հատուկ կամակերպութիւնը հիմնականում բանտերից ազատված հանցագործներով կազմելու գաղափարի հեղինակը: (Տես Մէվլան Ձատէ Բեֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծախքերը եւ իթթիհատի Հայաջինջ ծրագրերը, Պէյրութ, 1968, էջ 113-118):

⁵ Refi Cevad, Bir müdafaa karşısında..., Alemdar, 9 nisan, 1919.

Բեֆի Զեւադը «Ալեմդարի» 1919 թվականի մարտի 23-ի Համարում հրատարակված «Ձեզվահիրը չյան էֆենդու խոսքերը» հոդվածում պատերազմի տարիներին թուրքական դատարանների՝ անմեղ հայերին դատելու եւ դատապարտելու օրինակներ էր բերում. «Երբ գտնվում էինք Չորումում¹, ծանոթացանք մեր հայ հայրենակիցներից մեկի հետ, որը ցմահ բանտարկության դատապարտվելուց հետո աքսորվել էր այնտեղ եւ մի կերպ էր օձիքն ազատել մահից: Պետրոս Փափագյան անունը կրող այդ մարդու մոտ նոտաներ էին հայտնաբերել: Բուրսայի դատարանը, ոչ թե հանցագործության համար պատիժ, այլ պատժի համար հանցագործությունն որոնելով, նոտայի բովանդակությունը որակել էր որպես հայկական քայլերգ: Երբ Պետրոս էֆենդուն դատարանում հարցաքննում էին նոտաների առնչությունը, նույն պահին դրսում գինվորական նվազախումբը հենց այդ երաժշտությունն էր նվագում, սակայն նույնիսկ սույն հանգամանքը չէր օգնել մեր խեղճ հայրենակցին»²:

Նույն հոդվածում մտավորականը նշում էր հայերի՝ Օսմանյան կայսրությունում մատուցած ծառայությունները, արդյունաբերությունը, արվեստին, ընդհանրապես՝ կայսրության զարգացմանը նրանց բերած նպաստը, ընդգծում ցեղասպանության պատճառներից մի քանիսը՝ նախանձը քաղաքակրթված հայ ազգի նկատմամբ, հայերի ինչքը յուրացնելու մտադրությունը. «...Իթիհատականները սարսափելի հարված հասցրեցին արդյունաբերության, ժամանակակից զարգացման մեջ շատ առաջ գնացած այդ ազգին: Անհրաժեշտ էր հագեցնել ավազակախմբի սոված անդամներին: Պահուստային ֆոնդերը, վագոնային կողոպուտները, չարաշահումներն այլևս չէին բավարարում: Անհրաժեշտ էր կողոպուտի միջոցով հագեցնել չեթեի (ավազակախմբի -Մ.Ա.) ստոր խավին: Այդպես էլ վարվեցին, սակայն այդ կողոպուտի շահույթը (հայ -Մ.Ա.) ազգի արյունը, հոգին, ավելի ճիշտ գոյությունն արժեցավ»:

«...Մինչդեռ հայերը այս երկրի երաժշտությանը թուրքերի չափ, գուցե եւ թուրքերից ավելի շատ են ծառայություններ մատուցել»:

Վերադառնանք Բեֆի Զեւադի «Ի պատասխան մի պաշտպանության» հոդվածին: Հոդվածագիրը, անդրադառնալով Յոզղատի տեղահանության եւ կոտորածների դատական գործում գլխավոր մեղադրյալ Մեհմեդ Քեմալի պաշտպանական ճառին, հեղանաքով գրում էր, որ ճառը հուզել էր ներկաներից մի քանիսին, նույնիսկ դատարանին, եւ շեշտում, որ այդ արցունքները ոչ թե դատարանում, այլ ցեղասպանության ժամանակ պիտի թափված լինեին. «Երեկվա մամուլում հրատարակվեց Յոզղատի տեղահանության եւ կոտորածների գործով գլխավոր մեղադրյալ Քեմալի պաշտպանական ճառը: «Ջաման» օրաթերթը այդ պաշտպանական ճառին իր գլխավոր սյունակը հատկացնելուց հետո, չի մոռանում նաեւ հատուկ մի մասում 24 տպատառով արձանագրել թափված արցունքները:

Քեմալ բեյի ոճրագործությունը դատարանի համար հաստատված հանգամանք է: Դատավճիռը դեռեւս չի հաղորդվել: Չգիտենք էլ, թե ինչ դատավճիռ կկայացվի³: Շատ հավանական է, որ վկաների ցուցմունքներում առկա հակասությունների պատճառով Քեմալն ու նրա հանցակիցներն օձիքներն ազատեն փոքրիկ մի պատժով: Կամ էլ այդ պատիժը կարող է մարմնավորվել կախաղանների վրա նոր դիակների տեսքով, կախաղաններ, որոնց ժողովուրդը, արդեն տասը տարի է, ինչ վարժվել է: Դրանից առավել մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ Քեմալ բեյի պաշտպանական ճառը վշտացրեց ունկնդիրներին, միգուցե նաեւ՝ դատարանին:

Համարյա շատ քիչ ժամանակահատվածում մեղադրյալից դատապարտյալի վերածված տվյալ անձնավորության՝ մարդ լինելու հանգամանքն ի նկատի ունե-

¹ Բեֆի Զեւադը պատերազմի տարիներին Չորում էր աքսորվել Իթիհատականների կողմից:

² Refi Cevad, Cevahirciyan efendinin sözleri, Alemdar, 23 mart, 1919.

³ Refi Cevad, Cevahirciyan efendinin sözleri, Alemdar, 23 mart, 1919.

⁴ Նույն տեղում:

⁵ Մեհմեդ Քեմալը, կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ եւ 171-րդ հոդվածները հիման վրա, դատապարտվեց մահվան: (Այդ մասին տես Աւետիս Փափագյան, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Լոս Անճեյես, 2005, էջ235): Մահապատիժն ի կատար ածվեց 1919 թվականի ապրիլի 10-ին Ստամբուլի Սուլթան Բայագետ հրատարակում: (Տես Bilâl Şimşir, Malta sürgünleri, Bilgi yayınları, 1985, s.75)

նալիս, բնականաբար, մենք էլ ենք տխրում: Բացի այդ՝ ընտանիքներ, կործանված օջախներ, շրջված աշխարհ...

Սակայն այդ ոճիրների արդյունքում ստեղծված այսօրվա իրադրությունն ի տես՝ զգում ենք խղճահարուժյան տնքոցները չլսելու անհրաժեշտությունը:

...Քեմալ բեյի պաշտպանական ճառն ունկնդրած ներկաներից շատերն արտասովեցին: Թերեւս դատարանն էլ ինչ-որ չափով զգացվեց: Ինչ վերաբերում է մեզ, մենք այդ վիշտը չզգացինք: Կարթագենի կործանման համար ողբացող բնակչուժյան երեսին ծրագրած Հաննիբալն ասել էր. «Ժամանակին շատ եմ ողբացել»: Մենք նույնպես շատ, այնքան շատ ենք ողբացել, որ այսօր գնդացրի տրաքոցի պես պայթող աղետալի տեսարանների առաջ մեր աչքերը չեն խոնավանում:

Նման աղետալի տեսարանի մեկ ուրիշ անգամ էլ եմ հանդիպել. երբ դուրս էինք գալիս Հավաջից¹, հանդիպեցինք գաղթականների մի քարավանի: Երկանիվ սայլեր լցված այդ խեղճ մարդիկ տեղափոխվում էին ժանդարմների՝ ատրճանակի պես շառաչող մտրակների ուղեկցությամբ:

Մի պատանի, սարսափելի նյարդային ջղաճգուժյունների մեջ ցնցվելով, իրեն սայլից ցած նետեց: Այդ անկումն այնքան անսպասելի եղավ, որ սայլում գտնվող ծնողները չկարողացան պահել իրենց տուժած որդուն:

Ժանդարմը մոտեցավ, մտրակով ուշքի բերեց երեխային եւ սայլը նետեց: Մի փոքր անց մեկ ուրիշ ջղաճգուժյուն նույն անկամբ եւ նույն «դարմանով» ավարտվեց: Այնժամ նայեցի այդ սգավոր քարավանին, որ մոտենում էր՝ փոշու ամպ տարածելով ընդարձակ դաշտերի վրա, եւ այն տղայի հորն ու մորը. չէին լալիս, քանի որ համակերպվել էին վշտին:

...Այս արցունքները պետք է այն ժամանակ թափված լինեին. այդ դեպքում այսօր ոչ այս դատարանը կստեղծվեր, ոչ էլ երկիրն այս վիճակին կհասներ:

Զգացմունքային եմ գրում, քանի որ թե ես, թե նա մարդ ենք²: Պետք է նշել, որ հայոց կոտորածների խնդիրը նաեւ սուր վիճաբանությունների առիթ էր դառնում օսմանյան տարբեր օրաթերթերի միջեւ: Ալեմդարի խմբագրի հոդվածներից տեղեկանում ենք, որ սույն խնդրի առնչությամբ գրավոր վիճաբանությունն էր սկսվել «Հադիսաթի» («Իրադարձություններ») եւ «Ալեմդարի» օրաթերթերի միջեւ: Այդ կապակցությամբ Բեֆի Զեւազը «Ալեմդարի» 1919 թվականի ապրիլի 10-ի համարում տպագրված «Ի՞նչ ենք ասում, ի՞նչ ենք ուզում» հոդվածում գրում էր. «Տեղահանության եւ կոտորածների դատավարությանն առնչվող վերջին զարգացումներից հետո վերսկսվեցին այն վիճաբանությունները, որոնց տեղիք էր տվել «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կործանումը: Նույնիսկ բավականին կրքոտ վիճաբանություն ծավալվեց «Հադիսաթի» եւ մեր օրաթերթի միջեւ: Վիճաբանության ընթացքում Սուլեյման Նազիֆ բեյ³ մեզ մի փոքր անդրադառնալուց հետո, խնդիրը դիտարկել էր կրոնական տեսանկյունից: Երեկվա մեր հոդվածում մեկ տողով պատասխանել էինք «Հադիսաթի»՝ մեզ ուղղված աննշան քննադատությունը⁴:

Այն հանգամանքը, որ երեկ թերթերի մեծ մասն անդրադարձել էր այդ խնդրին, մեզ կրկին հրավիրում է այդ թեմային:

Եթե մինչեւ այժմ չենք կարողացել բացատրել մեր մտքերը, մեկ անգամ էլ դրանք կկրկենք, եւ տեսնելով, որ խնդրին անդրադարձել ենք հիմնավորապես՝ կրոնական մեր իրավացիությունը⁵: Այնուհետեւ «Ալեմդարի» խմբագիրը, կասկածի տակ առնելով կոտորածների՝ փոխադարձ լինելու մասին վարկածը, շեշտում էր, որ հայոց կոտորածները տեսել էր սեփական աչքերով եւ գրում էր որպես սկա-

¹ Հավա-բյուղ Սամսոնի հարավ-արեւմուտքում:

² Refi Cevad, Bir müdafaa karşısında..., Alemdar, 28 mart, 1919.

³ Սուլեյման Նազիֆ (1870-1927) -թուրք գրող, լրագրող եւ պետական գործիչ: Եղել է Բասրայի (1910), Տրապիզոնի (1911), Մոսուլի (1913) եւ Բաղդադի (1914) նահանգապետը: Ստամբուլում թղթակցել է «Հալք» («Ժողովուրդ»), «Իլերի» («Առաջ») եւ «Հադիսաթ» («Իրադարձություններ») օրաթերթերին: (Տես www.diyarbakir.com/kulturvesanat/UNLULER.ASP):

⁴ Բեֆի Զեւազը նախորդ օրը հրապարակված « Ի պատասխան մի պաշտպանության» հոդվածն ավարտում էր Սուլեյման Նազիֆին ուղղված հետեւյալ խոսքերով. «Մահմեդական մեծ կրոնը չի խրախուսում սպանությունը»: (Տես Refi Cevad, Bir müdafaa karşısında..., Alemdar, 28 mart, 1919):

⁵ Refi Cevad, Ne diyoruz? Ne istiyoruz ?, Alemdar, 10 nisan, 1919.

նատես. «Կրկին օրակարգում է տեղահանութեան եւ կոտորածների խնդիրը: Ասվում է՝ այն փոխադարձ է եղել: Մեր առարկութեանը վերաբերում է նաեւ փոխադարձ եղած լինելուն»:

Ասում են, իբր Հայերը բռնարարքներ են գործադրել խաղաղ բնակիչների Հանդեպ: Գրում ենք՝ ասում են, իբր, քանի որ նրանց արածը չենք տեսել մեր սեփական աչքերով: Այնինչ Հայերի Հանդեպ կատարված բռնութեանները տեսել ենք անձամբ: Քանի որ դրանք տեսել ենք մեր սեփական աչքերով, բնականաբար, այդ դեպքերն առավել խորը տպավորութեան են թողել մեր վրա»¹:

Խմբագիրը սույն հոդվածում եւս շեշտում էր ոճագործներին ըստ արժանվույն պատժելու անհրաժեշտութեանը. «Ընդամենը արդարութեան ենք պահանջում մեր հոգվածներով: Արդարութեան ասելով՝ ի նկատի ունենք բռնութեանը Համարժեք պատիժ»²: «...Այսօր քաղաքակիրթ աշխարհն ու մարդկութեանը չեն կարող անտարբեր մնալ պատված աղիքների, հանված աչքերի, ջնջված ուղեղների հանդեպ: Չի կարելի մեծ հայրենասեր համարել այդ ողբերգական տեսարանների հեղինակներին: Միակ բանը, որ պարտավոր ենք անել, մի ողջ ժողովրդի դեպի բնաջնջում տարած մարդասպաններին պատժելն է:

...Մեր ցանկութեանն է, որ դատարանը կոտորածների խնդիրն առավել հիմնավոր ու համակողմանի քննի եւ գործին սկզբունքային մոտեցում ցուցաբերի:

Այնժամ ամբողջ աշխարհին կապացուցենք մեր անկողմնակալութեանը եւ պատվով կատարած կրիսնեք մեզնից հասանելիք»³:

«Ալեմդարի» խմբագիրը օրաթերթի՝ 1919 թվականի ապրիլի 11-ի Համարում հրատարակված «Ծայրահեղութեան արդարութեան մեջ. ձերբակալութեաններ, ազատ արձակումներ» հոդվածում իր տարակուսանքն էր արտահայտում այն փաստի կապակցութեամբ, որ կոտորածների մեղադրանքով ձերբակալված անձանց մեծամասնութեանն ազատ էր արձակվել, եւ ընդժում, որ իր կարծիքով՝ յուրաքանչյուր իթիհատական մեղսակից էր եղել այդ ոճիրներին. «Վերջերս բազմաթիվ կալանավորներ բերվեցին վիլայեթներից: Նրանց շարքերում մեծ էր նաեւ այն անձանց թիվը, որոնք առնչվել էին «Միութեան եւ առաջադիմութեան» կուսակցութեանը: Մեծ զարմանքով տեսանք, որ այդ մարդիկ Հաջորդ օրն իսկ ազատ արձակվեցին: Բնականաբար, այդ ձերբակալութեանները չէին կատարվել որեւէ վիլայեթի պաշտոնյայի անձնական քմահաճույքով: Դրանք, անշուշտ, կատարվել էին՝ ավելի իրավասու պաշտոնյայից ստացված հրահանգի հիման վրա: Այդ ձերբակալված անձանց մեծ մասը Հայտնի է որպէս «Միութեան եւ առաջադիմութեան» կուսակցութեանը հարող: Այդ դեպքում ինչու՞ ազատ արձակվեցին: Այստեղ հարց է ծագում. արդյո՞ք յուրաքանչյուր իթիհատական պետք է կալանավորվի: Այդ հարցին անվարան կերպով հետեւյալ պատասխանն ենք տալու՝ այո, յուրաքանչյուր իթիհատական պետք է ձերբակալվի»⁴: Նույն հոդվածում «Ալեմդարի» խմբագիրը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայոց կոտորածները կրել էին ոչ թե մասնակի, այլ համատարած բնույթ, առաջարկում էր այդ գործով կազմակերպել ընդհանուր դատավարութեան, որը կանցներ Օսմանյան կայսրութեան տարբեր հպատակներից բազմաթիվ հանձնաժողովի հսկողութեան ներքո. «Ըստ էութեան, քանի որ Հանցագործները հիմնականում մեղսակից են եղել միմյանց, ապա առանձին-առանձին դատական պրոցեսների կազմակերպումն ավելորդ հոգս է:

Կարելի է նույն Հանցագործութեան համար մեղավորներին միասին դատել, (Օսմանյան կայսրութեան -Մ.Ա.) տարբեր հպատակներից կազմել հանձնաժողով, եւ հանձնաժողովի «մեղավոր է» կամ թե «մեղավոր չէ» խոսքերից հետո անմիջապէս դատավճիռ կայացնել:

Այդ կերպ լիովին բավարարված կրինի թե եվրոպական եւ թե օսմանյան Հասարակայնութեանը»⁵: Բեֆի Զեւադն իր այս հոդվածն ավարտում էր հետեւյալ խոսքերով. «Եթե ծայրահեղութեանների մեջ ընկնելու լինենք, այդ չափազանցութեանը ցուցաբերենք այս խեղճ հայրենիքը կորստյան մատնած անձանց պատժելու գործում:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Refi Cevad, Ne diyorum? Ne istiyoruz ?, Alemdar, 10 nisan, 1919.

⁴ Refi Cevad, Adalette ifrat! Tevkifler, tahliyeler, Alemdar, 11 nisan, 1919.

⁵ Նույն տեղում:

Եվ թե՛ արագ կերպով»¹:

Այսպիսով, «Ալեմդար» օրաթերթի խմբագիր Բեֆի Զեւադ Ուլունայի հոգովածաշում բերված վկայությունները մեկ անգամ եւս ապացուցում են, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունում հայ ազգի դեմ ուղղված գործողությունները՝ հայաժանջներն ու կոտորածները, կանխամտածվել, նախապատրաստվել եւ հրահանգվել են իթթիհատական կառավարության կողմից, դրանք կրել են ոչ թե տեղական կամ մասնակի, այլ համատարած բնույթ: Բեֆի Զեւադն իր հոգվածներում շեշտում էր երիտթուրքական կառավարության՝ հայ ազգին միջնադարի վերջին շունչը բնաջնջելու մտադրությունը, ընդգծում՝ հայ ազգի կործանումը, մտահոգացողի ու իրականացնողի միասնական լինելը, կարեւորում՝ Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին՝ հեղինակներին, անմիջապես պատժելու անհրաժեշտությունը: Թուրք մտավորականը գրում էր, որ զանգվածային կոտորածներն ապացույցների կարիք չէին զգում. դրանք այն հանցագործություններն էին, որոնք եւ հայտնի էին, եւ ապացուցված, եւ հաստատված: Բեֆի Զեւադն փաստանքով էր գրում, որ հայոց տեղահանությունն ու կոտորածները քննելու եւ դատապարտելու շարժառիթ էր հանդիսացել ոչ թե արդարամտությունը, մի ամբողջ ազգի բնաջնջման ցավը, այլ ընդամենը՝ Եվրոպայի աչքում արդարադատ երեւալու ցանկությունը: «Ալեմդար» օրաթերթի խմբագիրը մատնանշում էր քաղաքակրթված հայ ազգի՝ Օսմանյան կայսրության զարգացմանը բերած նպաստը, Հայոց ցեղասպանության պատճառներից մեկը՝ հայ ժողովրդի ունեցվածքը կողոպտելու եւ յուրացնելու ցանկությունը: Բեֆի Զեւադ Ուլունայը նաեւ կասկածում էր կոտորածների երկկողմանի լինելը, գրում, որ հայ ազգի ողբերգությունը տեսել էր անձամբ: Քանի որ Բեֆի Զեւադը, մտավորական լինելով հանդերձ, նաեւ հայոց կոտորածների անմիջական ականատեսն էր, նրա վկայությունները կրկնակի արժեք են ձեռք բերում: Եվ հենց իր՝ «Ալեմդար» օրաթերթի խմբագիր Բեֆի Զեւադ Ուլունայի խոսքերով ասած՝ եթե անգամ վերոնշյալ վկայությունները չարձանագրվեցին էլ թուրքական ռազմական արտակարգ ատյանի կողմից, դրանք արձանագրեց պատմությունը: Վերը շարադրվածը փաստում է, որ թուրքական մամուլի որոշ օրգաններ, դեռեւս 1919 թվականին անդրադառնալով հայոց զանգվածային կոտորածների խնդրին, անվիճելի էին համարում դրանք՝ որպես իրողություն: Դեռ ավելին, «Ալեմդարը» լայնորեն լուսաբանել է հայոց տեղահանության եւ կոտորածների հարցը եւ գտել, որ արդարացի կլինեք երիտթուրքական ամբողջ կուսակցությունը եւ, մասնավորապես, նրա պարագլուխներին պատասխանատվության ենթարկելը: Այս համատեքստում պատահական չէ «Ալեմդարի» եւ նմանատիպ օրաթերթերի մասնակի վերացումը թուրքական գրադարաններից եւ արխիվներից: Պահպանված հատուկեւստ օրինակները չեն տրամադրվում ուսումնասիրողներին:

Հայ պատմաբանների առաջնահերթ խնդիրն է օսմանյան մամուլի այդ օրինակների հայտնաբերումը եւ հրատարակումը: Մեր հոգվածը մի փորձ է այդ ուղղությամբ:

Մելինե Անումյան

¹ Նույն տեղում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-Ի
2005թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2005 թվականի «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ պետական արխիվ) գործունեությունն ընթացել է Հայաստանի Հանրապետությունում արխիվային գործի զարգացման հաստատված նպատակային ծրագրային առաջադրանքներին համապատասխան՝ ըստ նախանշված ներոհիչյալ հիմնական ուղղությունների.

1. ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի
պահպանության ապահովում

1.1. Պետական արխիվի կառուցվածքային ստորաբաժանումների ու մարզային կառույցների կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացված նպատակասլաց աշխատանքների արդյունքում ապահովվել են ակնհայտ նվաճումներ ինչպես պետպահպանության ներքո գտնվող արխիվային փաստաթղթերի պահպանությունից պայմանների, այնպես էլ դրանց ֆիզիկական-տեխնիկական վիճակի բարելավման ասպարեզում:

1.2. Տարվա ընթացքում ոլորտի աշխատողների կողմից իրականացված ծրագրային աշխատանքների արդյունքում զբաղիորեն բարելավվել են պետական արխիվի մի շարք մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների շենքային պայմանները. 2005-ին նոր շենք-շինություններում են տեղակայվել մեկ մարզային մասնաճյուղ (Արարատ) եւ չորս տարածքային ներկայացուցչություն (Չարենցավան, Արմավիր, Տաշիր եւ Թումանյան), ինչպես նաեւ օրակարգում է դրվել Աբովյանի ներկայացուցչությանը լրացուցիչ սենյակ-տարածք հատկացնելու հարցը, որի լուծումը մոտակա օրերի խնդիր է: Միջոցառումներ են ձեռնարկվում բարելավել Շիրակի մարզային մասնաճյուղի եւ Արմավիրի ու Ստեփանավանի տարածքային ներկայացուցչությունների շենքային պայմանները:

1.3. Արխիվի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված միջոցներով (մոտ 24 միլիոն դրամ) ընթացիկ ու հիմնանորոգումներ են իրականացվել պետական արխիվի Լոռու մասնաճյուղի, ինչպես նաեւ Արմավիրի ու Չարենցավանի ներկայացուցչությունների շենքերում: Բացի այդ, Ապարանի, Ծաղկահանուտի, Սպիտակի, Արարատի (Վեդի), Արմավիրի, Վարդենիսի եւ պետարխիվի որոշ այլ մարզային կառույցների արխիվապահոցները կահավորվել են լրացուցիչ դարակաշարերով ու գույքով եւ հագեցվել համապատասխան պահպանական միջոցներով:

1.4. Արխիվային փաստաթղթերի պահպանության բնագավառում առաջնային խնդիրը հրեհհային անվտանգությունից ապահովումն է: Այդ ուղղությամբ միջոցառումների շրջանակներում 2005թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ

(14 մլն. դրամ) արխիվի գլխավոր մասնաշենքում տեղադրվել է հրդեհային ազդանշանային համակարգ:

1.5. Պետական արխիվի գլխավոր մասնաշենքի շրջակա թաղամասի գազաֆիկացումից հետո սկսվել է լուկալ կաթսայատան կառուցում, որը կավարտվի ընթացիկ ամսվա կեսերին եւ հնարավորութուն կընձեռվի կայուն ջերմութեամբ ապահովել ինչպես աշխատասենյակները, այնպես էլ արխիվապահոցները:

1.6. ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանութեան դրամաշնորհային ծրագրով (30.000 ԱՄՆ դոլար) սկսվել է ստորգետնյա չորս արխիվապահոցների հիմնանորոգումը եւ ժամանակակից տեխնիկայի տեղադրումը, որտեղ նպաստավոր պայմաններում կիրականացվի հանրապետութեան կինոհավաքածուի հետագա պահպանումը:

Հիշյալ դրական տեղաշարժերի ու նվաճումների հետ մեկտեղ ոլորտում դեռեւս անպակաս են մտահոգութեանները: Մտահոգիչ է հատկապես այն հանգամանքը, որ համայնքների սեփականութեան հանդիսացող շենքային վարձակալական վճարները տարեցատարի աճում են, իսկ պետարխիվի մարզային ու տարածքային ստորաբաժանումները հիմնականում այդպիսի շենքերում են տեղավորված, եւ արխիվն այսօր ստիպված է վարձակալութեան համար բավական մեծ գումարներ վճարել:

1.7. Արխիվային փաստաթղթերի ֆիզիկա-տեխնիկական վիճակի բարելավման ուղղութեամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ծրագրավորված ներոհիշյալ միջոցառումները:

1.7.1. Վերականգնվել ու վերանորոգվել է 241.238 թերթ արխիվային փաստաթուղթ (ծր. 195.822թ.), որից 200061 թերթը ընկնում է Ազգային արխիվի կառուցվածքային (պահպանութեան ապահովման բաժին՝ 8000թ., լաբորատորիա՝ 192061թ.), 25955 թերթը՝ մարզային, իսկ 15222 թերթը՝ տարածքային ստորաբաժանումներին: Առաջադրանքի կատարումն ամբողջութեամբ վերցրած ապահովվել է շուրջ 12,3%-ով, ինչը ավելի քան 14,5 հազար թերթով ավելի է 2004 թվականի կատարողականից: Մարզային ստորաբաժանումներից բարձր արդյունքների են հասել Լոռու (10.000թ.) եւ Երևանի (3600թ.) մասնաճյուղերը, իսկ տարածքային ստորաբաժանումներից՝ Մարալիկի, Աշոցքի, Արթիկի (1200-ական թերթ) եւ Ստեփանավանի (1400 թերթ) ներկայացուցչութեանները:

1.7.2. Տարվա ընթացքում իրականացվել է 27182 գործի կարում (ծրագրով՝ 28000գ.), ասել է, թե ծրագրային առաջադրանքը կատարվել է 97%-ով: Ի դեպ, այդ ցուցանիշի 57,5%-ն բաժին է ընկնում Ազգային արխիվի մարզային ու տարածքային ստորաբաժանումներին: Վերջիններից համեմատաբար բարձր արդյունքների են հասել Երևանի (3900գ.), Սյունիքի (1250գ.), Գեղարքունիքի (1600գ.) մասնաճյուղերը եւ Նոյեմբերյանի (553գ.), Գորիսի (470գ.), Տաշիրի (400գ.), Սպիտակի (400գ.), Մեղրիի (278,2%), Ստեփանավանի (325%) եւ մի քանի այլ ներկայացուցչութեանները: Իսկ առաջադրանքը ակնհայտորեն թերակատարվել է Լոռու, Կոտայքի մասնաճյուղերում (համապատասխանաբար՝ 42,3% եւ 59,3%) եւ Արարատի (Վեդի՝ 37,5%), Ճամբարակի (8,1%), Վայքի (30%) ներկայացուցչութեաններում:

1.7.3. Ծրագրված 141.192 գործի փոխարեն հաշվետու ժամանակաշրջանում արկղավորվել է 76.906-ը (այդ թվում՝ պահպանութեան ապահովման եւ ՀՔՓ բաժիններում՝ 69.804գ., մարզային մասնաճյուղերում՝ 3796գ., տարածքային ներկայացուցչութեաններում՝ 3926գ.), ինչը ծրագրային ցուցանիշի 54,4% է կազմում, (արկղեր չլինելու պատճառով) իսկ 2004թ. նույն ցուցանիշից պակաս է 22939-ով: Բացի այդ, հաշվետու տարում կատարվել է 66.483 գործի արկղավորման նախապատրաստում (կապոցավորում):

1.7.4. Տարվա ընթացքում ստուգվել է ապահովագրական ֆոնդի 605951 կադր (ծրագրով՝ 605800 կադր) միկրոպատճենների (ժապավեն) տեխնիկական վիճակը եւ կատարվել հատուկ լուծույթով դրանց պրոֆիլակտիկ-կոնսերվացիոն մշակում, ինչպես նաեւ իրականացվել է հատուկ խցիկներում թղթե հիմքով արխիվային փաստաթղթեր ամփոփող 4021 գործի ախտահանում:

1.8. 2005 թվականի ընթացքում պետարխիվի մարզային մասնաճյուղերին եւ տարածքային ներկայացուցչութեաններին առաջադրված կարեւորագույն խնդիրներից մեկը դրանցում պահպանվող արխիվային ֆոնդերի ու գործերի առկա ծավալների ճշգրտման պահանջն էր: Ի կատարումն ծրագրային այս առաջադրանքի,

Հիշյալ ստորաբաժանումներում անցկացվել է արխիվային գործերի Համալիր ստուգում՝ պահանջվող ամփոփիչ փաստաթղթերի ձևակերպմամբ:

Աշխատանքները լիովին ավարտվել են Համապատասխան ու լիարժեք ամփոփիչ փաստաթղթեր են ներկայացրել 10 մարզային մասնաճյուղերը եւ 27 տարածքային ներկայացուցչությունները: Գործընթացը տրամաբանական ավարտին չեն հասցրել եւ արդյունքների մասին ոչ լրիվ տվյալներ են ներկայացրել Երեւանի քաղաքային մասնաճյուղը ու Թալինի ներկայացուցչությունը, իսկ ոչ մի տվյալ չի ներկայացրել Թումանյանի ներկայացուցչությունը: Արխիվային կինոֆոտոֆոնո փաստաթղթերի ծավալների Հաշվառման Համար Հիմք են ընդունվել Հայաստանի ազգային ֆիլմագրանում Հատուկ Հանձնաժողովի կողմից անցկացված Համալիր ստուգումների արդյունքների մասին 2005-ին կազմված ակտի տվյալները, ինչի համաձայն առկա վիճակով Ազգային արխիվի ենթակայություն կինոֆոտոֆոնո փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղում պահպանվում են 32666 պահպ. միավոր կինո, 216719 պահպ. միավոր ֆոտո եւ 24676 պահպ. միավոր ֆոնո փաստաթղթերը, ինչպես նաեւ 200 պ.մ. տեսաժապավեն (ընդ.՝ 274. 261 պ.մ.): Հավելենք, որ արխիվային կինոֆոտոֆոնո փաստաթղթերի առկա ծավալների մասին բերված տվյալների ճշտությունը փաստելու նպատակով ծրագրվում է դրանց Համալիր ստուգում անցկացնել նաեւ 2006-ի ընթացքում, ինչի արդյունքում վավերացված տվյալները վերջնական, ստույգ ու ելակետային կհամարվեն:

Ըստ ներկայացված Հաշվետու տվյալների 2005թ. Ազգային արխիվի կառուցվածքային եւ մարզային ու տարածքային ստորաբաժանումներում անցկացվել է 4086 արխիվային ֆոնդերի (միայն մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ) եւ 722.771 գործի (ամբողջությամբ վերցրած) առկայություն ու վիճակի ստուգում՝ Համապատասխան ամփոփիչ փաստաթղթերի ձևակերպմամբ Հանդերձ:

1.9. Հաշվետու տարվա ընթացքում բավական մեծ ծավալի նպատակային աշխատանք է կատարվել նաեւ պետական պահպանության ներքո գտնվող արխիվային ֆոնդերի խոշորացման ու միացման, արխիվային ֆոնդերի ստեղծման եւ այդ կապակցությամբ վերաֆոնդավորման, վերահամակարգման ու վերահաշվառման իրականացման ուղղությամբ: Ըստ ի մի բերված տվյալների 2006թ. Հունվարի 1-ի դրությամբ Ազգային արխիվում (մարզային կառույցների հետ միասին) պահպանվում են 5759 ֆոնդ՝ 3.145.941 գործով, իսկ ԿՅՖ փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղում (ԿՅՖ ՓԱՊՄ)՝ 32.666 պ.մ. կինո 216.719 պ.մ. ֆոտո եւ 24676 պ.մ. ֆոնո փաստաթղթեր եւ 200 պ.մ. տեսաժապավեն:

Արխիվապահպաններից բաժիններ (աշխատողներին), ընթերցասարահանոցներ մատակարարվել է 109.980 գործ, 16155 գծագիր, 400 գլանափաթեթ (բյուքս), 187 թերթի լրակազմ:

Սահմանված կարգով իրականացվել են պետպահպանության ներքո առկա փաստաթղթերի պետական Հաշվառման գործընթացը: Ի դեպ, 2006թ. Հունվարի 1-ի դրությամբ պետական արխիվապահպաններում առկա գործերի (պահպանման միավորների) ընդհանուր ծավալն անցնում է 3,5 միլիոնից (3.420.202):

2. Տեղեկատու-որոնողական Համակարգի ստեղծում եւ կատարելագործում

2.1. Հաշվետու ժամանակաշրջանում ոլորտում իրականացվել են արխիվային գործերի ցուցակների կատարելագործման ու վերամշակման նպատակային ծրագրավորված աշխատանքներ: Ընդ որում, տարվա ընթացքում կատարելագործվել են 15.226 գործավարական ու 23.990 անձնակազմին վերաբերող (ազգային արխիվում՝ անձնակազմին վերաբերող 23761գ., մասնաճյուղերում՝ գործավարական 3882գ., ներկայացուցչություններում՝ գործավարական 11344գ., անձնակազմին վերաբերող 293գ.) գործերի եւ վերամշակվել 4964 գործերի (ազգային արխիվում - 4318գ., մասնաճյուղերում - 646գ.) ցուցակներ: Նշված առաջադրանքների գծով բարձր կատարողական ցուցանիշների են հասել ՀԱԱ-ի ՀՔՓ բաժինը (23761գ. եւ 4318գ.), Սյունիքի մասնաճյուղը (Համապատասխանաբար՝ 2462գ. եւ 646գ.) եւ Արմավիրի (3000գ.), Ստեփանավանի (6809գ.) ու Միսիանի (855գ.) ներկայացուցչությունները (վերջին երեքում իրականացվել է միայն գործերի ցուցակների կատարելագործման գործընթացը):

2.2. Գիտատեխնիկական մշակման են ենթարկվել չկարգավորված վիճակում պետպահպանության ընդունված 359.200 թերթ անձնական ծագման փաստաթուղթ, որի արդյունքում ձեռնարկվել են շուրջ 3300 գործ, եւ 20.983 գործավական ու անձնակազմին վերաբերող գործ (Համապատասխանաբար 17717գ. եւ 3266գ.), որոնք ամբողջությամբ սահմանված կարգով ցուցակագրվել ու հաշվառվել եւ մասնակիրներն ՄՓՀ-ում հաստատվել եւ (կամ) հավանություն են ստացել ու Համապատասխան արխիվապահոցներ են հանձնվել, իսկ մասամբ էլ քննարկման եւ (կամ) դրա համար նախապատրաստման փուլում են:

2.3. Ավտոմատացված տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծման եւ վերջինիս տեղեկատվական-որոնողական հնարավորությունների ընդլայնման նպատակով կազմվել է ընդամենը 50.396 համակարգչային քարտ (Հիմնական բաժնում՝ 44838 քարտ, որն ամբողջի շուրջ 80 տոկոսն է կազմում, ՀՔՓ-ում՝ 4488 քարտ, ԵՔՄ-ում՝ 1070 քարտ), համակարգիչ մուտք արվել՝ 98836-ը, որի գերակա մասն ընկնում է Հիմնական տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծման բաժնին:

Այս աշխատանքն արխիվի գործունեության մեջ այսօր առաջնային ուղղություններից մեկն է եւ Հիմնական է դառնալու մոտ ապագայում: Տարբեր միջոցներով ու ճանապարհներով ձեռք բերված համակարգիչները եւ ֆիզիկապես, եւ բարոյապես մաշվել են եւ շտապ կարգով թարմացման կարիք է զգացվում: Այսօր խնդիր է դրված ձեռք բերել 30 հատ համակարգիչ, ինչի համար լրագոր մարմնի (նախարարութայն) աջակցությունն է ակնկալվում:

3. Արխիվային հավաքածուի համալրում, փաստաթղթերի փորձաքննութայն բարձրացում

3.1. Հայաստանի Հանրապետության արխիվային գործի զարգացմանը նպատակաւորված աշխատանքի շնորհիվ էապես աճել է պետպահպանության ներքո գտնվող արխիվային հավաքածուի քանակական կազմը, որը ներկա դրութայնք, ինչպես վերը նշվեց, հասնում է մոտ 3,5 միլիոնի:

3.2. Հաշվետու տարում պետական արխիվը համալրվել է 52.033 գործավարական ու գիտատեխնիկական բնութի եւ անձնակազմին վերաբերող գործերով (Համապատասխանաբար՝ 29.779գ., 323գ., 21.931գ.), որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 15.000-ով, եւ 192.076 թերթ անձնական ծագման փաստաթղթերով, այլ կերպ ասած՝ գործավարական գործերի տարեկան ծրագրային առաջադրանքը կատարվել է 132,4%-ով, իսկ անձնական ծագման փաստաթղթերինը՝ շուրջ 104%-ով:

Ընդ որում, անձնական ծագման փաստաթղթերն ամբողջությամբ, իսկ գործավարական փաստաթղթերի ամբողջական ծավալի 30%-ը պետպահպանության են ընդունվել Ազգային արխիվի համալրման բաժնի մասով: Համալրված գործավարական գործերի շուրջ 70%-ը բաժին է ընկնում մարզային կառույցներին: Ավելացնենք, որ համալրման բնագավառում համեմատաբար բարձր են Երեւանի քաղաքային եւ Շիրակի ու Արարատի մարզային մասնաճյուղերի (Համապատասխանաբար 1187գ., 4200գ., 10.334գ.) եւ Ստեփանավանի (530գ.), Ջարենցավանի (1320գ.), Դիլիջանի (920գ.) ու Մասիսի (600գ.) կատարողական ցուցանիշները:

Ի դեպ, գործավարական բնութի փաստաթղթերի համալրում կատարվել է պետարխիվի ավելի քան մեկուկես տասնյակ համալրման աղբյուր-կազմակերպություններից (ՀՀ նախկին ՆԳՆ (1935-1985թթ.), «Հայէներգո» ԲԲԸ, «Կանազ», «Քար եւ սիլիկատներ» ԳՀՀ, Ֆիզիկուլտիստիտուտ եւ այլն), իսկ անձնական ծագման փաստաթղթերը՝ երկու տասնյակից ավելի նշանավոր Հայ գործիչների (Գուրգեն Մահարի, Էդուարդ Զրբաշյան, Գարեգին Նժդեհ, Գեորգ Զահեդյան, Սեւակ Արզումանյան, Արեգ Լուսինյան, Անահիտ Յիցիկյան եւ ուրիշներ) անձնական արխիվներից:

Արխիվային մասնագետների կողմից համալրման աղբյուր-կազմակերպություններում կարգավորվել է 10198 գործ (այդ թվում 4975-ը՝ մշտական պահպանման, 5223-ը՝ անձնակազմին վերաբերող), իսկ արխիվի ներսում փորձաքննութայնք արժեքավորման են ենթարկվել 48929 արխիվային գործ, ինչի արդյունքում 15594-ն առանձնացվել են ոչնչացման՝ որպես գիտապատմական արժեք չունեցող եւ գործնական նշանակությունը կորցրած փաստաթղթեր ու նյութեր:

Հաշվետու ժամանակաշրջանում պետարխիվի մասնագետների տեսադաշտում են գտնվել նաև լուծարվող եւ կամ սեփականաշնորհվող կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի պահպանության կազմակերպման, աշխատակազմի արխիվների աշխատողներին կազմակերպական-մեթոդական աջակցություն իրականացման, փաստաթղթերի օրինակելի ու անհատական ցանկերի կազմման, Համալրման աղբյուր-կազմակերպությունների շրջանակի սահմանման հիմնախնդիրներն ու դրանցից բխող օրապահանջ հարցերը:

4. Արխիվային Հավաքածուի փաստաթղթերի օգտագործում եւ հրատարակում

4.1. 2005թ. Համակարգի գործունեություն հիմնական ձեռքբերումներից մեկը արխիվի կողմից ժամանակին ու հիմնավոր պատասխաններն են ստացված (այդ թվում՝ արտասահմանից) 11788 հարցումների (թեմատիկ՝ 112, սոցիալ-իրավական բնույթի՝ 11676), պատասխանների գերակշիռ մասը եղել դրական եւ տրվել է 5 օրվա ընթացքում:

4.2. Պետական պահպանության ներքո գտնվող արխիվային փաստաթղթերի ու նյութերի օգտագործմամբ պատրաստվել ու հեռարձակվել են «Այրեր», եւ «Թղթապանակ Համար...» 33 ռադիոհեռուստատեսային հաղորդում ու հրատարակվել 22 լրագրային հոդված:

Արխիվի գործունեություն կարելու ձեռքբերումներից է նաև Համապատասխան միջոցառումներին ակտիվ մասնակցությունը:

Տարվա ընթացքում արխիվը պատրաստել է թեմատիկ ցուցահանդեսներ (11 հատ) 1915թ. Մեծ Եղեռնի 90-ամյակի (այդ թվում՝ Մոսկվայում՝ ՌԻԴ Դաշնություն խորհրդի շենքում, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 60-ամյակի եւ տարվա մի շարք այլ հոբելյանական տարելիցների կապակցությամբ: Արխիվային բազմաքանակ փաստաթղթերի օգտագործմամբ 2005թ. Հայ արխիվագետների ջանքերով կազմակերպվել են ցուցահանդես-ցուցադրություններ նաև «Ես կենդանի եմ եւ դուք կենդանի լինելուց եք» (ի հիշատակ 1920-1930թթ. բռնադատված հոգեւորականների) «Նանսենը եւ Հայաստանը» (նվիրված է Հայ դատի նվիրյալ Ֆրիտյոֆ Նանսենի՝ Հայաստան կատարած այցելության 80-ամյակին) եւ այլ խորագրերով:

4.3. Լույս են ընծայվել «Բանբեր Հայաստանի արխիվների» Հանդեսի 2005թ. երկու համարները, ինչպես նաև «Ազգայնաբանություն» շարքից՝ «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» մատենաշարի հերթական հատորը (գիրք 13) եւ «Լշտակատում», «Ես մեղադրում եմ գործ N... 150000», «Հայ դատի նվիրյալ Ֆրիտյոֆ Նանսեն», «Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը եւ խորհրդային Հայաստանը» ու ժամանակահատված այլ խորագրերով փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուներն ու մի շարք թեմատիկ հավաքածուներ («Թարգմանչի նամականուց», «Հայ ժողովուրդը կամավորական շարժմանը», «Հայոց մեծ ցեղասպանությունը» եւ այլն):

4.4. Տարվա ընթացքում պետարխիվն ունեցել է 379 ուսումնասիրող-օգտվող (այդ թվում՝ Ազգային արխիվ-316, մասնաճյուղեր-12, ներկայացուցչություններ-51, որոնց օգտագործման են տրամադրվել ավելի քան 15800 արխիվային գործ, 16.000 գծագիր, 180 թերթի լրակազ եւ 400 գլանափաթեթ (բյուքս) միկրոժապավեն):

5. Օրենսդրական դաշտի կատարելագործում

2004թ. կեսերին «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո ընդունվեց նաև ՀՀ վարչապետի որոշումը օրենքի կիրակումն ապահովող միջոցառումների մասին: Ի կատարումն սույն որոշման պահանջների, արխիվում տարվա ընթացքում մշակվել եւ ՀՀ կառավարության կամ լիազոր պետական մարմնի կողմից ընդունվել եւ գործողություն մեջ են դրվել Օրենքի հիմնադրույթներից բխող չորս նորմատիվ իրավական ակտեր եւ մեկ տասնյակին մոտ չափորոշիչ-մեթոդական փաստաթղթեր, որոնցով սահմանվում են ՀՀ արխիվային հավաքածուի եւ այլ արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության ու օգտագործման ընթացակարգերը եւ կարգավորվում արխիվային գործի հետ առնչվող իրավահարաբերությունները: Ներկայումս վերը նշված որոշմամբ կանխադրված բոլոր նորմատիվ ակտերն ընդունված են, բացառությամբ

«Պաշտպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը», որի նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարությանը և ներկայումս լրամշակվում է շահագրգիռ նախարարությունների առաջարկությունների հիման վրա: ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված է լրագոր մարմնի կողմից եւս երկու կարգերի սահմանում, որոնք մշակման ընթացքում են եւ շուտով կներկայացվեն նախարարություն:

6. Միջազգային կապերի ոլորտում

Պետական արխիվի գործունեությունը նպատակաուղղված է եղել գլխավորապես Արխիվների միջազգային խորհրդի, վերջինիս «Եվրասիկա» տարածաշրջանային բաժանմունքի, ինչպես նաեւ ըստ անհրաժեշտի այլ միջազգային գիտամշակութային կազմակերպությունների հետ գրադրություն իրականացման (պատասխան նամակների, պաշտպանվող արխիվային տեղեկատվության պատրաստում եւ հասցեատերերին առաքում):

Կնքվել է Ղազախստանի Հանրապետության մշակույթի եւ տեղեկատվական նախարարության եւ ՀՀ տարածքային կառավարան նախարարության միջեւ արխիվային գործի բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր: Շուտով այսպիսի պայմանագիր կկնքվի Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:

Պետարխիվի պաշտոնական պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ մասնակից-պետությունների արխիվային ծառայությունների ղեկավարների Ուկրաինայի Հանրապետության Լվով քաղաքում 2005 թվականի սեպտեմբերի 23-28 տեղի ունեցած խորհրդաժողովի անցկացման աշխատանքներին: Այդ խորհրդաժողովում որոշվեց 2006թ. խորհրդաժողովին անցկացնել երեւանում:

7. Կազմակերպական միջոցառումներ

2003 թվականին սկսված Հանրապետության արխիվային համակարգի վերակառուցումը մոտենում է իր ավարտին: Այդ ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 4-ի որոշմամբ Հայաստանի ազգային ֆիլմադարանը (նախկին կինոֆոտոֆոնո փաստաթղթերի արխիվ) միացվեց արխիվային համակարգին եւ ստեղծվեց պետարխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղը:

Միացման գործընթացի իրականացումից հետո ձեռնարկվեցին շտապ քայլեր աշխատանքի կազմակերպումը եւ, որ առավել կարեւոր է, փաստաթղթերի պաշտպանությունը բարելավելու համար:

1. Ամենից առաջ կատարվեց կառուցվածքային նպատակային փոփոխություն. նախկին 6 հիմնական բաժինների փոխարեն ստեղծվեց 3-ը:

2. Իրականացվեց կադրերի որոշակի համալրում եւ աշխատավարձի հնարավորին բարձրացում- ՀՀ կառավարության որոշմամբ մասնաճյուղի աշխատողների մասնագիտություններն ընդգրկվեցին վնասակար աշխատանքների մասնագիտությունների ցանկում, որի արդյունքում սահմանվում է աշխատավարձի 50 տոկոս հավելավճար, ինչի արդյունքում մասնագետների միջին աշխատավարձը 2005թ. 26 հազար դրամի դիմաց 2006-ին կկազմի 45 հազար դրամ, ասել է, թե աշխատավարձը բարձրացվել է 2 անգամ: Նշենք նաեւ, որ պետական արխիվի մի քանի փորձառու աշխատողներ տեղափոխվել են մասնաճյուղում աշխատելու:

3. Ծրագրվում է 2006թ. ավարտին հասցնել ստորգետնյա պահուցի վերանորոգումը եւ ձեռնարկել կաթսայատուն, իսկ 2007-ին՝ օդակարգավորման համակարգի վերագործարկման իրականացումը:

4. Ընթացիկ 2006թ. մասնաճյուղում կստեղծվի ԿՖՑ փաստաթղթերի վերականգնման լաբորատորիա եւ այն կապահովվի անհրաժեշտ սարքավորումներով:

5. Կիրականացվեց նպատակասլաց աշխատանքներ նաեւ ֆիլմադարանի հանձնման-ընդունման ընթացքում փաստված շուրջ 5700 բացակա պաշտպանման միավորների որոնման ու հայտնաբերման, իսկ չհայտնաբերվելու դեպքում՝ դրանց կորստյան պատճառները պարզելու ուղղությամբ: Այս նկատառումով էլ ֆիլմադարանի 2006թ. աշխատանքային ծրագրով նախատեսված է տարվա ընթացքում անցկացնել արխիվային կինոֆոտոֆոնոփաստաթղթերի առկայություն ու վիճակի համալիր ստուգում:

Ամփոփելով Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքները, կարելի է վստահաբար արձանագրել, որ արտադրական 2005թ. շարունակվել է հանրապետության արտադրության գործի վերընթացը, ինչի վկայություն են տարեկան ծրագրային մի շարք առաջադրանքների գծով ոլորտի աշխատողների նկատելի ձեռքբերումները, կանխագծված մի շարք ցուցանիշների գծով զգալիորեն բարձր կատարողականները (արխիվային փաստաթղթերի վերականգնում ու վերանորոգում՝ 121,3%, գործերի ցուցակների կատարելագործում ու վերամշակում՝ 165,3%, կամզակերպություններից եւ երկու տասնյակից ավելի հայ նշանավոր գործիչների անձնական արխիվներից փաստաթղթերի համալրում՝ համապատասխանաբար 117,7% եւ 124,5%, հարցումների պատասխանում՝ 178,8%, չորս հարյուրին մոտ օգտվող-ուսումնասիրողների սպասարկում ու ընթերցասրահներում նրանց հետազոտական աշխատանքի կազմակերպում եւ այլն): Վստահ ենք, որ հետայսու էլ, ի շնորհիվ ոլորտի աշխատողների նպատակամղված ջանադիր աշխատանքի, կշարունակվի հանրապետության արխիվային գործի կայունացումը, իսկ մոտակա մի քանի տարիների նախաշված ծրագրերի իրականացումը կհանգեցնի ոլորտի զարգացման որակական փոփոխությունների:

**Կազմակերպամեթոդական աշխատանքների
եւ միջազգային կապերի բաժին**

ԼՐԱՏՈՒ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԵԼԵՔՑԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (1931-2005)

Կյանքի 75-րդ տարում վախճանվեց Հայ մտավորականության ավագ սերնդի ճանաչված ներկայացուցիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, լրագրող, Հայաստանի գրողների միության 45 տարվա անդամ Հարություն Ֆելեքյանը:

1953թ. ավարտելով Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ապա՝ նույն համալսարանի ասպիրանտուրան, Հ.Ֆելեքյանն իր ողջ կյանքն ու գործունեությունն անխզելիորեն կապեց պատմագիտության, ապա նաեւ գրականության ու լրագրության հետ՝ մինչեւ իր կյանքի վերջը մնալով այդ ոլորտների հավատարմ մշակն ու նվիրյալ նախանձախնդիրը՝ իր նպատակը բերելով Հայ գրականագիտության ու ժուռնալիստիկայի զարգացման գործում:

Մեծ եւ հարուստ է Հ.Ֆելեքյանի աշխատանքային ուղին, որն սկսվել է 1957 թվականից՝ «Սովետական գրականություն» ամսագրի գրական աշխատող, «Սովետական Հայաստան» օրաթերթի գրականության եւ արվեստի բաժնի վարիչ, «Գրական թերթ»-ի քննադատության բաժնի վարիչ, «Պատմա-բանասիրական» հանդեսի բաժնի վարիչ, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի Հայ մամուլի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, «Բանբեր Երեւանի համալսարանի» հանդեսի պատասխանատու քարտուղար, ապա գլխավոր խմբագրի տեղակալ եւ գլխավոր խմբագիր:

1970-1981թթ. Հ.Ֆելեքյանը եռանդուն ու բեղմնավոր գործունեություն է ծավալել Երեւանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում՝ այդ ընթացքում կրթելով ու լրագրողական իր հարուստ փորձը հաղորդելով մեծաթիվ ուսանողների: Այսօր Հայաստանյան լրագրողական բնագավառի շատ աշխատողներ եւ նրանցից առավել աչքի ընկնող շատ ներկայացուցիչներ Հ.Ֆելեքյանի ուսանողներն են:

1981թ. Հ.Ֆելեքյանը նշանակվում է «Սովետական գրող» հրատարակչությունից տնօրեն, որտեղ նա ծավալում է արգասաբեր ու բեղուն գործունեություն՝ իր գիտելիքներով ու փորձով որոշակի ավանդ ներդնելով հանրապետությունում գրքի տպագրությունը առավել պատշաճ մակարդակի վրա դնելու գործում: Նա հաճախ էր հիշում հրատարակչական աշխատանքի տարիները, հաճույքով ու ջերմորեն պատմում Սերո Խանզադյանի, Համո Սահյանի, Հովհաննես Ծիրազի, Պարույր Աեւակի եւ այլ գրողների հետ իր մտերմիկ կապի ու բարեկամության մասին:

1991թ. Հ.Ֆելեքյանը նշանակվում է ՀՀ կառավարութան անդամներ արխիվ-վային գործի վարչություն պետ, որտեղ նա պաշտոնավարեց 10 տարի եւ իր նպաստը բերեց Հանրապետությունում արխիվային համակարգի զարգացման գործում:

2001թ. նա Հայաստանի ազգային արխիվի տնօրենի խորհրդականն էր: Հ.Ֆելեքյանի գրչին եւ պատկանում բազմաթիվ արժեքավոր գրքեր ու հոգվածներ, որոնք աչքի եւ ընկնում անկողմնակալ սկզբունքայնությամբ եւ ընդգծված յուրօրինակությամբ: Նա կազմել, խմբագրել եւ հրատարակման է ներկայացրել Հ.Շիրազի, Պ.Սեւակի եւ հայ այլ գրողների ստեղծագործություններ, հայերեն թարգմանել Ա.Գերցենի «Եղեղություն եւ խոհեր» գիրքը: Գրչի, գիրքն ու թերթը Հ.Ֆելեքյանից անբաժան եւ եղել նրա ողջ գիտակցական կյանքի ընթացքում:

Հ.Ֆելեքյանը հմուտ ու փորձված, արդարակշիռ եւ զգալուն մարդ էր, ընտանիքի լավ հայր ու կարեկից ընկեր:

Հ.Ֆելեքյանի բարի հիշատակը երկար կմնա բոլոր նրան ճանաչողների հիշողություն մեջ:

Հայաստանի ազգային արխիվ

ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏՁՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (1935-2005)

2005թ. նոյեմբերի 25-ին վախճանվեց արխիվային գործի ճշմարիտ երախտավոր Գառնիկ Մկրտչյանը, ով իր ապրած կյանքի 70 տարիներից 43-ը անմնացորդ կերպով նվիրեց արխիվային գործին: 1962թ. հունվար ամսին ընդունվելով աշխատանքի քրպես արխիվային փաստաթղթեր կարգավորող, Գ(Մկրտչյանը անխզելիորեն կապվեց արխիվի հոտ, իր թրթնող մտքով խորապես հմտացավ գործի մեջ, տարիների անխոնջ աշխատանքի, բարձր պատասխանատվության, կարգապահության ու պարտաճանաչության շնորհիվ արժանացավ գործընկերների հարգանքին, իսկ ղեկավարությունը, ըստ արժանավոյն գնահատելով նրա մասնագիտական գիտելիքներն ու կազմակերպական հատկությունները, 1980թ. նրան վստահեց գիտատեխնիկական փաստաթղթերի ԿՊ արխիվի տնօրենի պաշտոնը, որը նա հաջողությամբ վարեց մինչեւ 2003թ.:

Կյանքի վերջին 3 տարիները նա նույն ջանադրությամբ եւ հետեւողականությամբ էր կատարում գլխավոր արխիվագետի աշխատանքը՝ իր փորձն ու գիտելիքները հաճույքով հաղորդելով երիտասարդներին:

Գ.Մկրտչյանի՝ ազնիվ մարդու, ակտիվ քաղաքացու, լավագույն աշխատողի հիշատակը գեռ երկար կմնա նրա գործընկերների հիշողություն մեջ:

Հայաստանի ազգային արխիվ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Մաղալյան Արտակ	- Փաստաթղթեր Արցախի գործիչների եւ Աբրահամ-Միրզայի 1826թ. հանդիպման հետեւանքների վերաբերյալ	3
Մարտիրոսյան Մարինե	- Փաստաթղթեր Հայ օգնութեան միութեան (ՀՕՄ) պատմութիւնից	20
Հովսեփյան Էմմա	- Պատառիկներ Ավետիք Իսահակյանի նամակագրութիւնից	42
Սահակյան Ռուբեն	- Վանի նահանգապետութեան դատաիրական համակարգի ձեւավորման պատմութիւնից	48
Միրզոյան Արարատ	- Էջեր Արեւմտահայ գործիչների եւ Հայ կամավորների հրամանատարութեան 1915թ. նամակագրութիւնից	66
Ղազիւյան Ալվարդ	- Վավերագրեր Ղրիմ-Դոնյան Հայրենակցական միութեան գործունեութեան մասին (1919թ.)	74
Ավետիսյան Սուրեն	- Մերձավոր Արեւելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի որբախնամ գործունեութիւնը Խորհրդային Հայաստանում	89
Ավետիսյան Մարո	- Մի փաստաթուղթ Կարսի Հայ բնակչութեան կոտորածի մասին	100
Սիմոնյան Ռուբեն	- Ալեքսանդր Թամանյանի պայքարը Պողոս-Պետրոս եկեղեցու պահպանման համար	108
Մանգասարյան Վարդէթեր	- Կոմպոզիտորն ինքն իր մասին (Նիկողայոս Տիգրանյանի ծննդյան 150-ամյակի առթիւ) ..	118
Ղազարեան Վլադիմիր	- Դրոյի նամակը Սիմոն Վրացյանին	129
Գեւորգյան Համլետ	- Հնդկաստանի Հայ դաղթօջախը եւ նրա կայերը Խորհրդային Հայաստանի հետ 1945-1985թթ.	143
Բաղալյան Արմեն		

ՀՈՂՎԱԾՆԵՐ

Օվանեսով Բորիս	- Էջեր Ստավրոպոլ քաղաքի Հայ համայնքի
-----------------------	--------------------------------------

	պատմությունից	173
Ակոսյան Վիկտոր	- Պատիզորսկ քաղաքի հայ առաքելական եկեղեցու ծխական համայնքի համառոտ պատմությունը	187
Դանիելյան Մկրտիչ	- Հայերի մասնակցությունը Մոսկվայի եւ Պետերբուրգի նարոդնիկական կազմակերպություններ գործունեությունը	201
Հարությունյան Ավագ	- Արեւելյան Հայաստանում խաղողագործության արդյունագործացման հարցի մասին 1828-1918թթ.	211
Եղիազարյան Կարինե	- Սարգիս Կուկունյանի խմբի դատավարությունը եւ նրա հետագա ճակատագիրը	217
Ալեքսանյան Հովհաննես	- Հայկական հասարակական-քաղաքագործական կազմակերպությունները Դոնում 1917-1920-ական թթ.	222
Մինասյան Սմբատ	- Սոցիի հայությունը գրությունը եւ Կամավորական բանակը (1918թ. երկրորդ կես-1919թ. սկիզբ)	230
Պետրոսյան Գեղամ	Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության փաստական ճանաչման նկատմամբ	234
Վիրաբյան Հայկ	- Խորհրդային Հայաստանի իշխանությունների տնտեսական քաղաքականությունը եւ ՀԽՍՀ բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները (1920-1930-ական թթ.)	241
Ղազարխեցյան Վլադիմիր	- Զանգեզուր-Ղարաղաղի ինքնապաշտպանության պատմության մեկ դրվագի շուրջ (կոմունիստ Երեմիա Բակունցի մասին)	251

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գրիգորյան Ռաֆիկ	- Էստոնիայի հայ համայնքը	267
Գերոնյան Ալեքսանդր	- Լատվիայի հայ համայնքը	280
Լուրյե Սվետլանա	- Հայերը իմ աչքերով	283
Էքմանեան Բէկի	- Համագրային հայ կրթական եւ մշակութային միություն Սուրբիոյ շրջանային վարչության գործունեությունը Սուրբիոյ տարածքին (1987-1998թթ.)	295

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Ավագ	- Մեծարժեք սկզբնաղբյուրի վերահրատարակումը	308
Անուսյան Մելինե	- Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919թ.)	311

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

- Հաշվետվություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2005թ. գործունեության	319
---	-----

ԼՐԱՏՈՒ

Հարությունյան Ֆելեքյանի հիշատակին (1931-2005)	325
---	-----

С О Д Е Р Ж А Н И Е

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

Магальян Артак	- Документы о последствиях встречи деятелей Арцаха и Аббас-Мирзы в 1826г.	3
Мартirosян Марине	- Документы из истории Армянского союза помощи (АСП)	20
Овсепян Эмма	- Отрывки из переписки Аветика Исаакяна	42
Саакян Рубен	- Из истории формирования судебной правовой системы Вахской губернии	48
Мирзоян Арарат	- Страницы из переписки Западноармянских деятелей и командования армянских добровольцев в 1915г.	66
Газиян Алвард	- Документы о деятельности Крымско-Донского земляческого союза (1919г.)	74
Аветисян Сурен	- Попечительная деятельность сурот Американского комитета помощи на Ближнем Востоке в Советской Армении	89
Аветисян Маро	- Один документ о погромах армянского населения г. Карса	100
Симонян Рубен	- Борьба Александра Таманяна за сохранение церкви Погос-Петроса	108
Мангасарян Вардигер	- Композитор сам о себе (к 150-летию со дня рождения Никогайоса Тиграняна) ...	118
Казахецян Владимир	- Письмо Дро Симону Врацянун	129
Геворгян Гамлет		
Бадалян Армен	- Армянская колония в Индии и его связи с Советской Арменией в 1945-1985гг.	143

СТАТЬИ

Ованесов Борис	- Страницы из истории армянской общи-	
----------------	---------------------------------------	--

	ны города Ставрополь	173
Акопян Виктор	- Краткая история прихода армянской апостольской церкви города Пятигорска	187
Даниелян Мкртич	- Участие армян в деятельности общественных организаций Москвы и Петербурга	201
Арутюнян Аваг	- К вопросу индустриализации виноградарства Восточной Армении в 1828-1918гг.	211
Егиазарян Карине	- Судебный процесс группы Саркиса Кукуняна и его дальнейшая судьба	217
Алексамян Оганес	- Армянские общественно-благотворительные организации Дона с 1917-1920-ые гг.	222
Минасян Смбат	- Положение сочинского армянства и Добровольческая армия (вторая половина 1918г. - начало 1919г.)	230
Петросян Гегам	- Отношение Добровольческой армии Юга России к фактическому признанию Республики Армения	234
Виранян Гайк	- Экономическая политика Советской Армении и изменения социальной структуры АССР (1920-1930 годы)	241
Казахемян Владимир	- Об одном эпизоде из истории Зангезурско-Карабахской самообороны (о коммунисте Еремии Бакунце)	251

СООБЩЕНИЯ

Григорян Рафик	- Армянская диаспора Эстонии	267
Геронян Александр	- Армянская диаспора Латвии	280
Лурье Светлана	- Армяне моими глазами	283
Экманян Беки	- Деятельность Сирийского районного правления Всенародного армянского образовательно-культурного союза в Сирии (1987-1998)	295

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ

Арутюнян Аваг	- Перепубликация ценного первоисточника	308
Анумян Мелине	- Свидетельства в османской газете "Алемдар" (1919г.), подтверждающие Геноцид армян	311

АРХИВНОЕ ДЕЛО

	- Отчет о деятельности ГНО «Национального архива Армении» в 2005г.	319
--	---	-----

ХРОНИКА

- Памяти Арутюна Фелекяна (1931-2005)... 325
- Памяти Гарника Мкртчяна (1935-2005) .. 326

Ի գիտություն հեղինակների եւ ընթերցողների

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտագործնական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության համար:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
Հասցեն՝ Երեւան - 33, Հրաչյա Քոչարի - 5, Հեռ. 225-355, 225-802
Գրանցման վկայականը N 03Ա.060146
Տրված է 17.04.2003թ.
Թողարկման պատասխանատու՝ Արմեն Բաղալյան
Ստորագրված է տպագրության 2006 թ. օգոստոսի 29-ին:
Տպաքանակը՝ 200: Տարածվում է անվճար
Չափսը 70x1001/16 Ծավալը՝ 331 էջ
«Գրիգ տպագրատուն» ՍՊԸ տպարան: Երեւան, Վ. Վաղարշյան 12 «Ա.»